

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ
SCIENTIFIC ARTSAKH
НАУЧНЫЙ АРЦАХ
№ 4(15), 2022

www.scientificartsakh.com

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրոյթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:
«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The journal «**Scientific Artsakh**» is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Supreme Certifying Committee of the Republic of Armenia (SCC RA).

The journal «**Scientific Artsakh**» is posted on www.elibrary.ru website.

Журнал «**Научный Арцах**» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (BAK RA).
Журнал «**Научный Арцах**» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2022

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

Համարը հրատարակության է երաշխավորել
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Աննա ԱՍՏՐՅԱՆ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիխտա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՂԻՉԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գայանե ԵՂԻՉԱՐՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ԶԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ԶԱՎՐՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ԶՅՈՒԿ, մշակութաբանության դոկտոր, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նագիկ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ԴԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մանուկ Աբրահամ ՄԱԼԽԱՅԱՆ, աստվածաբանության դոկտոր, պրոֆեսոր (**Եյու Յորք, ԱՄՆ**)

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Ամիթ ԶԱԲԻՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Եյու Յորք, ԱՄՆ**)

Գուրգեն ՊԵՏՐՈՍՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր (**Եյուրթեբերգ, Գերմանիա**)

Հայկ ՍԱՐԳՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Ռուբեն ՍԱՖՐԱՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Զրիստիան դը ՎԱՐԴԱՎԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Լոնդոն, Մեծ Բրիտանիա**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(15), 2022, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2022, 232 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2022 թ. 4-րդ (15-րդ) համարի տպագրության աջակցել են «Hi-Am» բարեգործական հիմնադրամը (ք.Լոս Անջելես), Սերգեյ Գևորգյանը, Կանադայի հայկական ազգային կոմիտեն, Պասկալ Բանդեկը և Սերգեյ Խեչումովը (ք.Օտտավա, Կանադա), որոնց էլ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

ISSN 2579-2652 (Print)
ISSN 2738-2672 (Online)

© Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում (ԱԵԳՄ), 2018-2022

EDITORIAL COUNCIL

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D. in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN**, Ph.D. in Philology, Associate Professor

Members:

Anna ASATRYAN, Doctor of Arts, Professor

Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain**)

Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor

Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor

David BABAYAN, Doctor of History, Associate Professor

Vahram BALAYAN, Doctor of History, Professor

Amit CHHABRA, Doctor of Law, Professor (**New York, USA**)

Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor

Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor

Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia**)

Julietta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor

Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor

Irina HAYUK, Doctor of Cultural Studies, Associate Professor (**Lviv, Ukraine**)

Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor

Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor

Natalia KOVKEL, Ph.D. in Law, Associate Professor (**Minsk, Belarus**)

Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (**Moscow, Russia**)

Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany**)

Manuk Abraham MALKHASYAN, Doctor of Theology, Professor (**New York, USA**)

Ashot MARKOSYAN, Doctor of Economics, Professor

Edik MINASYAN, Doctor of History, Professor

Karen NERSISYAN, Ph.D. in Economics, Associate Professor

Gurgen PETROSSIAN, Doctor of Law (LL.M.) (**Nuremberg, Germany**)

Ruben SAFRASTYAN, Academician of NAS RA, Doctor of History, Professor

Hayk SARGSYAN, Doctor of Economics, Professor

Christian de VARTAVAN, Doctor of History (**London, Great Britain**)

Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (**Rostov-on-Don, Russia**)

Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor

Gayane YEGHIAZARYAN, Doctor of Philology, Professor

Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor

Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (**Geneva, Switzerland**)

Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (**Olsztyn, Poland**)

Scientific Artsakh, №4(15), 2022, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2022, 232 pages.

The publication of the 4th (15th) issue of the 2022 Journal «Scientific Artsakh» was supported by the «Hi-Am» Charity Foundation (Los Angeles), Serguei Guevorkian, the Armenian National Committee of Canada, Pascal Bandek and Sergey Khechumov (Ottawa, Canada), to whom we express our deep gratitude.

Издается решением учёного совета Ереванского государственного университета.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах».

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Анна АСАТРЯН, доктор искусствоведения, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Кристиан де ВАРДАВАН, доктор исторических наук (Лондон, Великобритания)
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, доктор культурологии, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Гаяне ЕГИАЗАРЯН, доктор филологических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Манук Авраам МАЛХАСЯН, доктор богословия, профессор (Нью-Йорк, США)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Гурген ПЕТРОСЯН, доктор юридических наук (Нюрнберг, Германия)
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Рубен САФРАСЯН, академик НАН РА, доктор исторических наук, профессор
Амит ЧАБРА, доктор юридических наук, профессор (Нью-Йорк, США)

Научный Арцах, №4(15), 2022, Ереван, Издательство «АРЦАХ», 2022, 232 страниц.

Изданию 4-го (15-го) номера 2022 года журнала «Научный Арцах» содействовали благотворительный фонд «Hi-Am» (г.Лос-Анджелес), Сергей Геворкян, Армянский национальный комитет Канады, Паскаль Бандек и Сергей Хечумов (г.Оттава, Канада), которым мы выражаем нашу глубокую благодарность.

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ CONTENTS СОДЕРЖАНИЕ

ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ, ARTSAKH HEROES, ГЕРОИ АРЦАХА

Էդիկ Մինասյան. Լշանավոր ազգային գործիչն ու հրամանատարը. Շահեն Մեղրյան (հայերեն).....	9
Edik Minasyan. The Prominent National Figure and Military Commander: Shahen Meghryan (in Armenian)	
Эдик Минасян. Видный национальный деятель и военачальник: Шаген Мегрян (на армянском)	

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Արման Եղիազարյան, Արա Հովհաննիսյան, Արմինե Զիրոյան. Ադրբեջանի պատմության շարադրման հայեցակարգը (ըստ ադրբեջանական դպրոցական դասագրքերի) (հայերեն).....	26
Arman Yeghiazaryan, Ara Hovhannisyanyan, Armine Chiroyan. The Concept of the History of Azerbaijan (According to School Textbooks) (in Armenian)	
Арман Егиазарян, Ара Оганесян, Армине Чироян. Концепция истории Азербайджана (по школьным учебникам) (на армянском)	

Շաքե Մենկեչյան. Արաբական Միացեալ Էմիրութեան հայ համայնքի ձևաւորումը (հայերեն).....	40
Chake Menkechian. The Formation of the Armenian Community of UAE (in Armenian)	
Шаке Менкечян. Формирование армянской общины ОАЭ (на армянском)	

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Ավետիք Հարությունյան, Սարիամ Գրիգորյան. Արցախահայության հիմնարար իրավունքների խախտումներն Ադրբեջանի կողմից Արցախյան 3-րդ պատերազմի ընթացքում (հայերեն).....	55
Avetik Harutyunyan, Mariam Grigoryan. Violations of the Fundamental Rights of Artsakhi Armenians by Azerbaijan during the 3rd Artsakh War (in Armenian)	
Аветик Арутюнян, Мариам Григорян. Нарушение основополагающих прав армян Арцаха со стороны Азербайджана во время третьей Арцахской войны (на армянском)	

Արման Ասրյան. Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի նկատմամբ իրականացվող էթնիկ զտման քաղաքականությունը 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո (անգլերեն).....	69
Arman Asryan. Azerbaijan's Policy of Ethnic Cleansing against the Armenian Population of Artsakh after the 44-Day War (in English)	
Арман Асрян. Политика этнической чистки Азербайджана в отношении армянского населения Арцаха после 44-дневной войны (на английском)	

Վարապետ Սմբատյան. Արցախում զինծառայողների կողմից կատարված հանցանքների դեպքում ՀՀ և ԱՀ քրեական դատավարության օրենսգրքերի փոխգործակցությունը (հայերեն).....	79
Karapet Smbatyan. The Cooperation Between Criminal Codes of the Republic of Armenia and Republic of Artsakh in Cases of Crimes Servicemen Commit in Artsakh (in Armenian)	

Կարապետ Տմբաթյան. Взаимодействие уголовно-процессуальных кодексов Республики Армения и Республики Арцах в случае преступлений в Арцахе (на армянском)

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

Վարդուհի Պետրոսյան. Լեզվի հարցը միջազգային բանակցություններում (հայերեն).....87

Varduhi Petrosyan. Language Issue in International Negotiations (in Armenian)

Вардуи Петросян. Вопрос языка в международных переговорах (на армянском)

Գուրգեն Սիմոնյան. Նոր աշխարհակարգ. աշխարհաքաղաքական կերպափոխումները զրոքալ ուժերի և միջազգային իրավունքի հարաբերակցության համատեքստում (հայերեն).....96

Gurgen Simonyan. New World Order: the Geopolitical Transformation in Case of the Ratio of Global Forces and International Law (in Armenian)

Гурген Симонян. Новый мировой порядок: геополитические трансформации в контексте соотношения глобальных сил и международного права (на армянском)

Ժաննա Հարությունյան. Թվային հասարակության տեսական հիմքերը և զարգացումը չորրորդ արդյունաբերական հեղափոխության համատեքստում (հայերեն).....104

Zhanna Harutyunyan. Theoretical Foundations and Development of Digital Society in the Context of the Fourth Industrial Revolution (in Armenian)

Жанна Арутюнян. Теоретические основы и развитие цифрового общества в условиях четвертой промышленной революции (на армянском)

ԼԵԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА

Տաթևիկ Ազիզբեկյան. Շարժման բայերը միջին հայերենում (հայերեն).....118

Tatevik Azizbekyan. Verbs of Motion in Middle Armenian (in Armenian)

Татевик Азизбекян. Глаголы движения в средне-армянском языке (на армянском)

Լիանա Ազիզյան. Գրաբարյան հայերենի և լատիներենի ձայնավորական համակարգերի զուգադրական քննություն (հայերեն).....126

Liana Azizyan. A Parallel Examination of Ancient Armenian and Latin Vowel Systems (in Armenian)

Лиана Азизян. Сопоставительный анализ древнеармянской и латинской систем гласных (на армянском)

Աննա Ավետիսյան. Բողոքի իրկուսիվ գործառնությունները հայերեն համացանցային խոսույթում (հայերեն).....135

Anna Avetisyan. Illocutionary Functions of Complaint in Armenian Internet Discourse (in Armenian)

Анна Аветисян. Иллокутивные функции жалобы в армянском интернет-дискурсе (на армянском)

ԼԴՍՈՒԹՅՈՒՆ, JOURNALISM, ЖУРНАЛИСТИКА

- Լիանա Մարտիրոսյան.** Դավադրության միջոցով հայկական քաղաքական դաշտում (Արցախյան հակամարտության օրինակով) (հայերեն).....143
- Liana Martirosyan.** Myth about Conspiracy in Armenian Political Sector (by the Example of the Artsakh Conflict) (in Armenian)
- Лиана Мартиросян.** Миф о заговоре в армянском политическом секторе (на примере Арцахского конфликта) (на армянском)

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

- Նաիրա Համբարձումյան, Սիրանուշ Փարսադանյան.** Սրբուհի Երուսաքը և հայ բարեգործական ընկերությունները (հայերեն).....150
- Naira Hambardzumyan, Siranush Parsadanyan.** Srubhi Tyusab and Armenian Charities (in Armenian)
- Наира Амбарцумян, Сирануш Парсаданян.** Србуи Тюсаб и армянские благотворительные организации
- Գայանե Հովհաննիսյան.** Կանանց կերպարների անվանումների համակարգը գեղարվեստական տեքստերում (Դ. Կ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպերի հիման վրա) (ռուսերեն).....159
- Gayane Hovhannisyan.** Naming System of Female Characters in Literary Texts (Based on the Novels of D.K.Demirchyan «Vardanank» and H.Abovyan «Wounds of Armenia») (in Russian)
- Гаяне Оганнисян.** Система именований женских персонажей в художественных текстах (на материале романов Д.Демирчяна «Вардананк» и Х. Абовяна «Раны Армении») (на русском)

- Մարո Ղուկասյան.** «Լանկա Պոսթանին. Պախրճի Պատուելի Մը». Հակոբ Պարոնյանի նորահայտ մանրապատումը որպես «Մեծապատիվ Մուրացկանները» վիպակի նախահիմք (հայերեն).....167
- Maro Ghukasyan.** The Newly Found Short Story by Hakob Paronyan «The Lanka Postani: an Honourable Predictor» as a Basis for the Novelette «The Honourable Beggars» (in Armenian)
- Маро Гукасян.** «Ланка Постани: чтимый предсказатель»: выявленная миниатюра Акопа Пароняна как первооснова повести «Высокочитимые попрошайки» (на армянском)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ECONOMICS, ЭКОНОМИКА

- Նադեժդա Աֆյան, Հրանուշ Ալեքսանյան.** Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդական մոտեցումներում մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման իրավամեթոդական հիմնահարցերը Հայաստանում (հայերեն).....178
- Nadezhda Afyan, Hranush Aleksanyan.** In Methodological Approaches to Environmental Impact Assessment, Legal and Methodological Issues of Air Impact Assessment in Armenia (in Armenian)
- Надежда Афян, Грануш Алексанян.** В методологических подходах оценки воздействия на окружающую среду правовые и методологические вопросы оценки воздействия на атмосферный воздух в Армении (на армянском)

Եվգենյա Հայրիյան. ՀՀ դրամավարկային քաղաքականության դրսևորումները բարձր գնաճային միջավայրում (հայերեն).....	186
Yevgenya Hayriyan. The Features of Republic Armenia Monetary Policy in a High Inflation Environment (in Armenian)	
Евгения Айриян. Проявления денежно-кредитной политики Республики Армения в условиях высокой инфляции (на армянском)	
Աշոտ Ոսկանյան, Աննա Զարտաշյան. ՀՀ գյուղացիական տնտեսություններում արտադրանքի իրացման խնդիրները և լուծման ուղիները (հայերեն).....	194
Ashot Voskanyan, Anna Kartashyan. Product Realization Problems and Ways of Solution in Rural Households of RA (in Armenian)	
Ашот Восканян, Анна Карташян. Проблемы реализации продукции в крестьянских хозяйствах Республики Армения и пути их решения (на армянском)	
Աննա Մարգարյան. Հայաստանի Հանրապետության ու Իսպանիայի Թագավորության պետություն-մասնավոր գործընկերության օրենսդրությունը և Հայաստանի Հանրապետությունում դրա հիմնախնդիրները (հայերեն).....	204
Anna Margaryan. Puplic-Private Partnership Legislation of the Republic of Armenia and the Kingdom of Spain and its Fundamental Issues in Republic of Armenia (in Armenian)	
Анна Маргарян. Законодательство Республики Армения и Королевства Испания о государственно-частном партнерстве и его основные вопросы в Республики Армения (на армянском)	
Մերի Փանոսյան. ՀՀ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման տնտեսական և սոցիալական դերը ժամանակակից պայմաններում (հայերեն).....	217
Meri Panosyan. The Economic and Social Role of RA Physical Person's Income Taxation in Modern Conditions (in Armenian)	
Мери Паносян. Экономическая и социальная роль подоходного налогообложения физических лиц РА в современных условиях (на армянском)	
«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները	226
The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH»	228
Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»	229

ԱՐՑԱԽԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ, ARTSAKH HEROES, ГЕРОИ АРЦАХА



ՆՇԱՆԱԿՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆ ՈՒ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ. ՇԱՀԵՆ ՄԵՂՐՅԱՆ*

ՀՏԴ 93/94

DOI: 10.52063/25792652-2022.4.15-9

Նվիրվում է Մեծն Շահենի (Շահեն Մեղրյանի) 70-ամյակին

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
eminasyan@ysu.am

«Հայրենիքն է շնորհում մարդուն՝ հպարտանքներից ամենաարդարը,
ցավերից ամենախորը, պաշտամունքներից ամենամախառնը,
մահերից ամենասուրբը»:
Գարեգին Նժդեհ

Հոդվածում ներկայացված է Արցախյան ազատամարտի նշանավոր գործավար, Արցախի հերոս Շահեն Չինավորի Մեղրյանի ազգային-պետական ու ռազմահայրենասիրական գործունեությունը: ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետն ավարտելուց հետո նա վերադարձավ հայրենի գյուղ և աշխատանքի շնորհիվ հասավ տարբեր պաշտոնների: Նա առաջիններից էր, ով հասկացավ, որ առանց մարտական ջոկատների անհնար է պաշտպանել շրջանը, և կազմակերպեց ու ղեկավարեց զինված ջոկատները՝ դառնալով շրջանի ինքնապաշտպանության ղեկավարը: Փաստերի համակողմանի վերլուծությամբ ներկայացված է Շահենի ղեկավարությամբ կազմակերպված հակահարձակումը, որի արդյունքում 1991 թ. սեպտեմբերին ազատագրվեցին Բոզլուխ և Մանաշիղ գյուղերը, մաքրվեց Թոդան աղբբեջանական գյուղը: Տույց են տրված Խորհրդային բանակի և աղբբեջանական օմոնի օգնությամբ Շահումյանի շրջանի գրավումը և թշնամու դեմ անհավասար մարտերը, Շահենի ղեկավարությամբ բնակչության անվնաս դուրսբերումը ռազմական գոտուց: Համապատասխան փաստերի մեկնաբանմամբ հերքվում են Շահենի նկատմամբ մեղադրանքները, որոնց անհիմն լինելը նա ապացուցեց իր հետագա հերոսական գործունեությամբ: Նա չհեռացավ Արցախից, մնաց և շարունակեց պարտիզանական կռիվը հարազատ աշխարհի ազատագրության համար: Ներկայացվում են Շահենի ղեկավարությամբ 1992 թ. վերջերին և 1993 թ. սկզբներին մղված հերոսամարտերի արդյունքում Մարտակերտի մի շարք գյուղերի ազատագրումը և հայրենի Շահումյանի ազատագրման նախապատ-

* Հոդվածը ներկայացվել է 05.12.2022թ., գրախոսվել՝ 21.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

րաստական աշխատանքները: Ցույց է տրվում, թե ինչպես է հայդուկապետը գոհվում Արցախի երկնքում իր մարտական ընկերների հետ: Ընդգծվում է հրամանատարի՝ հայրենի հողում անմահանալու փաստը: Նրա կերպարը սերունդներին հայրենասիրական ոգով դաստիարակելու լավագույն միջոց է:

Հիմնաբառեր՝ Մեծն Շահեն, Արցախի մելիք, Գյուլիստան, Շահումյան, Չինավոր, պահաճոնների գործարան, Հյուսիսային Արցախ, Միութենական մամուլ, պարտիզանական կռիվներ, հատուկ նշանակության ջոկատ, եղերական մահ:

Ներածություն

Արցախի հերոս Շահեն Չինավորի Մեղրյանը շնորհաշատ անհատականություն էր, որի անունը ոսկե տառերով գրվեց 20-րդ դարավերջի արցախյան ազատագրական պատերազմի հերոսական պատմության մեջ: Մերված լինելով Գյուլիստանի մելիքների ազնվականական գերդաստանից, ծնված տոհմիկ գյուղացու ընտանիքում՝ նա դեռևս 1980-ական թթ. վերջերից արցախյան ազատագրական պայքարի մեջ մտավ և տարիների անձնուրաց մաքառումներով նվաճեց ժողովրդի վստահությունն ու հարգանքը:

Բազմաթիվ հուշագիրներ վկայում են, որ Շահեն Մեղրյանն իր բարոյահոգեբանական նկարագրով, պահվածքով ու վարքով շատ էր հիշեցնում Արցախի մելիքներին: «Համակողմանի զարգացած հզոր անհատականություն, հաղորդասեր և տիրական, բայց ո՛չ քմահաճորեն իր կամքը թելադրող, հեշտությամբ էր թափանցում մարդկանց հոգեվիճակի մեջ, բնությունից աչքի էր ընկնում նուրբ դիվանագիտությամբ, միաժամանակ լինելով միանգամայն անկեղծ: Օժտված էր ներհուն խոհականությամբ և աշխույժ խառնվածքով, աննկուն էր, ուներ լավատես բնավորություն, նպատակամետ էր և հույժ գործնական: Բոլոր պարագաներին ինքն էր անում այն ամենն, ինչ ուրիշները հաճույքով այլոց վրա կբարդեին: Այս և այլ հատկանիշների շնորհիվ նա կարճ ժամանակում հայտնվում է համընդհանուր ուշադրության կենտրոնում և իր կամքից անկախ, կարծես ժառանգաբար հանձն է առնում Շահումյանի շրջանի թե՛ ռազմաքաղաքական առաջնորդությունը և թե՛ տնտեսական կյանքի կազմակերպումը», - գրում է Աշոտ Պետրոսյանը իր «Մեծ Շահեն» գրքում (Պետրոսյան 5):

Բնիկ գյուլիստանցի Մեղրյանների գերդաստանի արմատները հասնում են դարերի խորքը: Դեռևս 18-րդ դարում Մելիք Աբովի ղեկավարությամբ այդ տոհմի քաջ հեծյալները մասնակցել են իրենց աշխարհի պաշտպանության մարտերին և հալածել թշնամուն իրենց երկրի սահմաններից շատ հեռու: Աշխատասեր և արի մարդիկ լինելով՝ Մեղրյանները պատվախնդիր և անմնացորդ նվիրված են եղել իրենց հողին ու ջրին:

Պատմությանը հայտի է, որ 18-րդ դարավերջին ճակատագրի ու թշնամիների չարություններից դառնացած Գյուլիստանի Մելիք Աբովն իր ժողովրդի հետ հեռանում է հայրենիքից: Մարդիկ չեն դիմանում շարունակվող թուրքական և այլ ասպատակություններին, դրանց ուղեկցող սովին ու համաճարակին և ստիպված հեռանում են հարազատ վայրերից՝ ապաստան գտնելով օտար աշխարհում՝ Վրաստանում: Գյուլիստանը դատարկվում է: Գյուղից հեռանում է նաև Մեղրին՝ իմաստուն ու քաջ մարդը, որին ճանաչում ու հարգում էր Մելիքը: Ի տարբերություն Մելիք Աբովի՝ նա, հավաքելով իր գերդաստանը, տեղափոխվեց գյուղից քիչ հեռու՝ անտառի խորքը, չհեռացավ իր սիրած բնաշխարհից՝ համոզված լինելով, որ հարազատ անտառները կպաշտպանեն իրենց թշնամիներից:

Ազնվական ծագում ունեցող, հողերի ու անասունների տեր Մեղրին շուրջ տասը տարի ապրեց մեկուսացված, ազատ ու ինքնիշխան՝ ապավինելով իր անտառներին ու լեռներին, իսկ թուրքերը երկար ժամանակ չանհանգստացրին նրան: Մեղրին ապրեց դժվարությամբ, դիմացավ փորձություններին ու չլքեց հայրենիքը: Շուտով Վրաստանում ապաստանած նրա հայրենակիցները վերադարձան, դուրս քշեցին թուրքերին իրենց աշխարհից ու շարունակեցին ապրել: Մեղրին իր որդիների հետ մասնակցեց ազատագրական պատերազմին, վերադարձավ գյուղ և բնակվեց իր հին տանը: Այս քաջ մարդուց սկիզբ առան Մեղրյանները: Նրա Վերդի որդին հոր նման ապրեց Գյուլիստանում՝ բարձր պահելով գերդաստանի անունը, իսկ վերջինիս Պողոս որդին շարունակեց պապի պայքարը հայրենիքը կանգուն պահելու համար: Պողոսի որդի Չինավորը՝ առյուծասիրտ Մեղրիի ծոռը, գերազանցեց իր բոլոր նախորդներին՝ հայ ժողովրդի արցախյան ազատագրական պայքարին տալով Շահեն որդուն, ով իր անկոտորում ու ազատասեր պապի նման կանգնեց հայրենիքի պաշտպանության առաջին շարքերում մինչև վերջ տանելով իր ժողովրդի հերոսական պայքարը: Ահա այս բնիկ գյուլիստանցու ազնվատոհմիկ, բազմանդամ ընտանիքում 1952 թ. հունվարի 3-ին Յուսիսային Արցախի Շահումյանի շրջանի Գյուլիստան գյուղում ծնվեց Շահեն Չինավորի Մեղրյանը:

Շահենի հայրը՝ Չինավորը, և մայրը՝ Մարգուշ հաչատրյանը, ստեղծել էին բազմանդամ ընտանիք՝ 11 երեխա՝ չորս դուստր՝ Էմմա, Իրինա, Ժենյա, Սոնա, և յոթ որդի՝ Արտուշ, Կառլեն, Յուրա, Ալեքսանդր, Շահեն, Պետրոս և Պողոս: Շահենը, լինելով ընտանիքի 9-րդ զավակը, իսկ տղաներից՝ 5-րդը, մեծացել էր աշխատասեր և հոգատար ծնողների սիրո և հարգանքի ջերմագին ընտանեական մթնոլորտում: Շահենի հայրը՝ Չինավոր դային, ոչ միայն Շահենենց ընտանիքի, այլև Մեղրյանների ամբողջ ազգատոհմի Ապան էր: Նա ամբողջ գյուղի հեղինակությունն էր նաև զավառի սահմաններում: Նա եղել էր Թարթառի հովտում ոչխարաբուծական ֆերմայի վարիչ, մեծ հեղինակություն էր վայելում ոչ միայն հայկական, այլև թաթարաբնակ գյուղերում, որը պայմանավորված էր թուրքերի հետ մշտական շփման մեջ լինելու հանգամանքով: Նա ընտանիքում խստապահանջ էր ու ավանդապահ: Շահենը, ընդունելով Ապայի սահմանած ընտանեական խստության անհրաժեշտությունը, երբեք չէր ընդդիմանում նրան կամ առարկում հոր ասածները: Նրա մասին ասում էր. «Մեր Ապան, Մեր Ստայինը անհոգի բռնակալ չէ, այլ կարգապահության մուրճ, որի «հարվածների» տակ կոփվում, պողպատ էին դառնում որդիները, որոնք բնածին ռազմիկներ են և դուստրերը, որոնք բարեհոգի հայուհիներ են, ամենքը միասին հայրենապաշտների բույլ» (Պետրոսյան 87):

Չնայած Շահենի հայրը դպրոց չէր գնացել, սակայն կյանքի ընթացքում հանգամանքների բերումով միշտ դրսևորել էր իր մտքի բնական, հմայիչ զորությունն ու խելացիությունը: Հանրության մեջ բարձր դիրք ու հեղինակություն ունեցող որդիները, և հատկապես Շահենը, Ապայի հետ խորհրդակցելու, նրան բախտորոշ պահերին մշտապես տեսնելու անհրաժեշտություն են զգացել: Շահենը հասակ էր առել հոգատար մոր, «Յերոսուհի մայր» կոչմանն արժանացած Մարգուշ մայրիկի՝ Այայի բարեխնամ հոգածության ներքո: Այան արտակարգ կին էր, հոգատար մայր, ով կարողանում էր ամեն ծանրություն տանել: «Հայաստանից եկող տղաների սնունդը, ճաշը ևս նա էր պատրաստում,- ասում էր Շահենը, երբ նրանք իջևանում էին Գյուլիստանում: Այան էր ամեն ինչ կարգավորում և կարգադրում» (Պետրոսյան 91): Նման հայրենասեր, հոգատար ու աշխատասեր ծնողների դաստիարակության շնորհիվ այս բազմանդամ ընտանիքի զավակներն էլ իրենց արժանի տեղը գրավեցին հասարակական կյանքում, իսկ որդիներից երկուսը՝ Պողոսն ու Պետրոսը, իրենց նվիրեցին հայոց ազատագրական պայքարին: Արցախյան ազատամարտի տարիներին մշտապես եղան Շահենի կողքին:

Ուսումնառության տարիները

1959 թ. Շահենը հաճախեց Գյուլիստանի դպրոցի առաջին դասարան: Ուսման գերազանցիկ էր: Նա առանձնակի հավակնություն ուներ հումանիտար առարկաների, հատկապես Հայոց պատմության ու հայ գրականության հանդեպ: Սիրում էր գեղարվեստական գրականություն և կարդացել էր դպրոցի և գյուղի գրադարանի գրքերը: Աչքի էր ընկել հասարակական աշխատանքներում: Նրա ղեկավարած աշակերտական արտադրական բրիգադը շրջանում ճանաչվել էր լավագույնը, որի համար նրան զբոսաշրջային ուղեգրով ուղարկել էին Մոսկվա: Շահեն Մեղրյանի վրա իր դրական ներգործությունն է ունեցել Հայոց պատմության ուսուցիչ Բենիկ Ղուլյանը, ով այդ տասնամյակներն այն եզակի մտավորականներից էր, ով բարձրագույն կրթություն էր ստացել ոչ թե Ադրբեջանում, այլ Երևանում՝ Մանկավարժական ինստիտուտում: Այնտեղից Բենիկ Ղուլյանը Գյուլիստան էր վերադարձել ազգային արժեքներով, աշակերտներին դաստիարակելու ձգտումով, որն էլ պիտի անխուսափելիորեն իր բարի պտուղները տար: Կարևոր էր նաև Շահենի դասուցել Մեծյում Բալայանի դերը: Շահենի առաջին ուսուցիչը բնաշխարհի սիրահար, անվանի որսորդ էր, որը մանկությունից բաց գրքի նման կարդում էր հայրենի բնությունը, քաջածանոթ էր շրջակա սրբավայրերին, որոնք նրա համար ուխտատեղի էին: Շահենը հենց առաջին դասարանից իր վառ անհատականությամբ, շնորհներով ու բնավորությամբ, հատկապես կարգապահությամբ, ընդունակությամբ, աչքբացությամբ, գերազանց առաջադիմությամբ, ծանոթների, համադասարանցիների, ընկերների ու բարեկամ հարազատների նկատմամբ հոգատարությամբ և ուշադրությամբ գրավել էր ուսուցչի ուշադրությունը: Սիրված մանկավարժը աշակերտների հետ հաճախ լինում էր շրջակա անտառներում, կազմակերպում ուխտագնացություն դեպի հնավայրերն ու սրբավայրերը, որոնց ընթացքում աշակերտները շատ բան էին սովորում ազգային պատմությունից, տոգորվում հայրենապաշտությամբ: Ավարտելով միջնակարգ դպրոցը՝ Շահեն Մեղրյանը 1970 թ. ընդունվում է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետ: Որպես ուսանող՝ Շահեն Մեղրյանը լավագույնն էր, քանզի տաղանդավոր էր, արագորեն ընկալում էր, հեշտությամբ յուրացնում, հիմնալի մտապահում, ոչ թե նույնությամբ պատասխանում բարձր թվանշաններ ստանալու միտումով, այլ իսկապես ճանաչելու, իմանալու նպատակադրումով: Շահենը ուսանողական տարիներին ձեռք բերեց լավագույն ընկերներ, որոնցից էր Երևանաբնակ Կարենը, որի հետ ընկերություն, մտերմությունը սկսվել էր առաջին կուրսից և շարունակվել մինչև Շահենի մահը: Շահենի հավատարիմ ընկերներից էր նաև Գագիկ Բալասանյանը, որը դարձավ նրա կնքահայրը: Այդ ընկերների մասին Շահենը ասում էր «Մեր հարաբերությունները շատ հետաքրքրական էին յուրօրինակ, շատ անկեղծ, և չի եղել մի պահ, մի դեպք, երբ մեզանից մեկը որևէ հարցում վիրավորված կամ անհարմար զգացած լինի» (Պետրոսյան 106): Պատերազմի տարիներին գործի էր դրվել Շահենի շրջապատի ողջ կարողությունը: Կարենը և իրենց շրջապատը ազատագրական պայքարի ելած շահումյանցիներին լուրջ օգնություն են ցուցաբերել: «Ես անկեղծորեն պիտի ասեմ,- ընդգծում է Կարենը,- որ անձամբ իմ ջանքերս, գործերը, որ արել եմ, առավել մեծ չափով կապված են այն հանգամանքի հետ, որ Շահումյանում առաջնորդը եղել է Շահենը: Եթե մեկ ուրիշը լիներ, բնականաբար իմ գործունեությունը խթանող գործոն չէր լինի» (Պետրոսյան 107):

Պատահական չէ, որ ընկերների ջանքերի գնով, երբ Տերյան փողոցում Շահենին բնակարան հատկացրին, կինն ու երեխաները այնտեղ էին, իսկ նա, ուղղաթիռից իջնելով, առաջինը դիմում է իր ընկերներին՝ Կարենին և Գագիկին, և նրանց կանանց հետ առաջին անգամ մտնում են իր բնակարանը:

Շահենը Մեղրյանը 1975 թ. ավարտել է ԵՊՀ-ն ու ուսումնառության տարիներին հիմնավոր գիտելիքներ և մեծ փորձ ձեռք բերած՝ կարող էր ուսումը շարունակել

ասպիրանտուրայում, տեղավորվել պաշտոնի պետական կառույցներում, անվտանգության համակարգում, որը նրան առաջարկվել էր: Այն հնարավորություն կտար նրան արագորեն լուծել իր ընտանիքի ու տնտեսության հարցերը, սակայն նա մերժում է այդ ամենը: Շահենը բարձրաձայն հայտարարեց. «Չէ, ես պետք եմ իմ շրջանին, իմ գյուղին»:

Աշխատանքային գործունեությունը

Համալսարանը ավարտելուց հետո Շահենը վերադարձավ ծննդավայր: Շահունյանում նա աշխատանքի անցավ հանրային տնտեսությունում որպես տնտեսագետ: Սիրում էր իր աշխատանքը, հողը, տնտեսության մարդկանց ու ամեն գնով աշխատում էր օգտակար լինել նրանց: Նրա անձնուրաց, ազգաշահ նպատակադրումով կատարած աշխատանքը աննկատ մնալ չէր կարող: Որպես խոստումնալից ու լուրջ տնտեսագետի՝ նրան հարգում էր Գյուլիստանի և շրջանի ղեկավարությունը, հաշվի էր առնում նրա կարծիքը: Որպես լավ տնտեսագետ՝ նա ճանաչում է գտնում Բաքվում: Այդ տարիներին Շահենը Ադրբեջանի երիտասարդության պատվիրակության կազմում մեկնում է Բուլղարիա, որտեղ էլ Պլովդիվ քաղաքում Անդրանիկ Չորավարի հուշարձանի մոտ, ծածուկ պահելով կիսանդրու ազգային և անվանական պատկանելիությունը, առաջարկում է խմբին նկարվել հուշարձանի մոտ: Երբ պատվիրակությունը վերադառնում է Բաքու, հայտնի է դառնում իրողությունը, որ ադրբեջանցիները նկարահանվել են իրենց ոխերիմ թշնամու արձանի մոտ: Այդ իրողությունն առիթ է դառնում, որպեսզի Բաքվում նրան անվանեն Դաշնակ Շահեն: Աշխատանքի երրորդ տարում նա ամուսնացավ Դարաչինարից Ստեյլայի հետ, ում տեսել ու սիրահարվել էր դեռևս դպրոցական օլիմպիադայի օրերից: Ստեյլան քիմիկոս-ճարտարագետի մասնագիտությամբ աշխատում էր Երևանում: Նրանց պսակադրությունը կատարվում է 1977 թ. արցախյան ծեսով ու ավանդույթներով: Ջերմ սիրո վրա հենված այս նորաստեղծ ընտանիքը ազգին պարզևեց երեք զավակ՝ Լուսինեին, Լիլիթին և Չինավորին: Շահեն Մեղոյանի կինը և զավակները գյուղը չքեցին, տաքուկ անկյուններ չփնտրեցին, կրեցին բոլոր տառապանքները և միայն բռնագաղթի դառը օրերին բոլորի հետ միասին դուրս եկան շրջանից: Շահունյանի կուսշրջկոմը, հաշվի առնելով Շահեն Մեղոյանի արգասաբեր և նվիրական աշխատանքը, կազմակերպական կարողությունը և այլ առաքինություններ, նրան երաշխավորեց որպես շրջանի կոմերիտմիության ատաջին քարտուղար: Այստեղ նա ծանրաբեռնվեց հանրային պարտականություններով: Անսահման նվիրումով Շահենն աշխատեց երիտասարդության հետ: Դպրոցական աղվկոտ, բայց հետաքրքիր կյանք, ազգային մշակույթ, հավաքներ, երգ-տոնահանդեսներ, հանդիպումներ անվանի ու քիչ հայտնի մարդկանց հետ, խանդավառ զեկույցներ երիտասարդական արտադրական բրիգադների առաջադրանքների կատարման մասին և այլն. Շահենը կարողանում է իր գործունեության ծավալներն ու շրջանակները ընդարձակել, կապեր հաստատել նույնիսկ Ուկրաինայի և Ռուսաստանի մի քանի բնակավայրերի հետ, որտեղ կռվել և նահատակվել էին խիզախ հայորդիներ, Խորհրդային Միության հերոսներ գյուլիստանցի գվարդիայի կապիտան Գարեգին Բալայանը և ավագ լեյտենանտ Սերգեյ Օհանյանը: Շահեն Մեղոյանի հրավերով հերոսների ծննդավայրեր այցելեցին Ուկրաինայի Պիտերասլավլ քաղաքի և Դոնի Ռոստովի Մյասնիկյանի շրջանի ներկայացուցիչները, փոխադարձ այցելություններ կազմակերպվեցին հերոսների զոհված վայրերը: Շուտով՝ 1981 թ., Շահենը նոր նշանակում ստացավ, ստանձնեց շրջանի պահածոների գործարանի տնօրենի պաշտոնը: Երիտասարդ, եռանդուն տնօրենը մի քանի տարում փոքրիկ գործարանը դարձրեց սննդափորձարարական

խոշոր կոմբինատ, որի բարձրորակ արտադրանքի մասին շատ շուտով իմացան հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս:

Կոմբինատը առաջնակարգ սարքավորումներ էր ստանում, բարձրացնում էր աշխատանքի արտադրողականությունը: Կոմբինատը գյուղատնտեսական հումք էր ստանում նաև հարևան շրջաններից: Կոմբինատի տնօրենի անձնական հմայքը, օրինականության պահպանումը, հոգատարությունը մարդկանց նկատմամբ մեծապես օգնեցին, որպես նրան հավատան ու վստահեն: Գործընկերները տեղում և հանրապետությունում մեծ հարգանքով էին խոսում նրա մասին: Ադրբեջանցիները նրան անվանում էին «Շահեն Մուսլիմ», «Շահեն ուսուցիչ», ով նրանց մեջ ամենապահանջված մարդն էր (Նանագուլյան 31):

Յոթ տարի անց՝ 1988 թ., նա նշանակվեց շրջանի ագրոարդյունաբերության վարչության պետ մինչև 1991 թ., ապա 1991-1992 թթ. մինչև շրջանի անկումը շրջանի գործկոմի նախագահն էր, կուսըջկոմի առաջին քարտուղարը: Շահեն Մեդրյանի մարտական ուղին սկսվեց 1988 թ.: Այն ժամանակ Շահենը առաջիններից էր, ով զգաց, թե առանց մարտական ջոկատների անհար է պաշտպանել շրջանը, և սկսեց կազմակերպել զինված ջոկատներ: Դարձավ շրջանի ինքնապաշտպանության փաստացի ղեկավարը: Շահեն Մեդրյանը 1988 թ. սկսած, կապ ունենալով Արցախյան շարժման ՀՀ և ԼՂՀ գործիչների հետ, հարկ եղած դեպքում բողոքի հեռագրեր էր ուղարկում ԽՍՀՆ նախագահ Մ. Գորբաչովին և ՌԽՖՍՀ նախագահ Բ. Ելցինին:

1988 թ., երբ հայտնի դարձավ, որ ԼՂԻՄ-ը պահանջում է մարզը միացնել Հայկական ԽՍՀ-ին, նույնպիսի պահանջ առաջադրեցին շահումյանցիները Շահումյանը ԼՂԻՄ-ի հետ միավորելու համար: 1988 թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի 20-րդ գումարման չորրորդ նստաշրջանի պատմական որոշումից հետո՝ մարտին, շահումյանցիների մի փոքրիկ պատվիրակություն (շրջգործկոմի նախագահ Արթուր Սառաջյանը, պահածոների գործարանի տնօրեն Շահեն Մեդրյանը) գաղտնի մեկնեց Ստեփանակերտ, հանդիպումներ ունեցավ մարզի գործիչների հետ (Հենրիկ Պողոսյան, Արկադի Մանուչարով), որոնք խորհուրդ տվեցին Շահումյանի շրջանում և Գետաշենի ենթաշրջանում սպասողական դիրք զբաղել, կրքեր չբորբոքել: Երկրորդ հանդիպումը նույնպես նույն արդյունքն ունեցավ: Պատմաբան Կիմ Ղահրամանյանի բնութագրմամբ՝ ԼՂԻՄ-ում չէին ուզում Շահումյանի հարցով զբաղվել (Ղահրամանյան 51):

Դրանից հետո Շահումյանի հարցով սկսեցին գաղտնի ստորագրություններ հավաքել ԼՂԻՄ-ի հետ միավորվելու համար՝ անկախ նրա հետագա ճակատագրից: Այդ ստորագրությունները Ստեփանակերտ հասցրին Շահեն Մեդրյանը, Արթուր Սառաջյանը և Վալերի Բալայանը, որոնք դրանք ներկայացրին Հենրիկ Պողոսյանին և Մոսկվայի ներկայացուցիչ Արկադի Վոլսկուն:

1988 թ. շրջկենտրոնում ստեղծվեց «Բերդ բարեգործական միությունը», որի նախագահ ընտրվեց Շահեն Մեդրյանը: Նրա ղեկավարությամբ մեծ ջանքեր գործադրվեցին տարբեր կյութերի հրամարակման, թռուցիկների տարածման և այլ միջոցներով՝ կարգավորելու պատմական հուշարձանների պահպանման ու բարելավման գործը, շրջանի ճանապարհների բարեկարգման, միջբնակավայրային կապի աշխուժացման խնդիրներ լուծելու ուղղությամբ: Շրջանում ստեղծված պայթյունավտանգ վիճակը խաթարեց «Բերդ» միության բնականոն աշխատանքը, ուստի նա իր ուժերը կենտրոնացրեց ինքնապաշտպանության հարցի վրա:

Լեռնային Ղարաբաղի պատգամավորների օրինական խնդրանքին Ադրբեջանը հակադրեց բիրտ ուժն ու բռնությունները, 1988 թ. փետրվարին պատասխանեց Մումգայիթյան ջարդերով և նույն թվականի նոյեմբերին Ադրբեջանի ամբողջ տարածքի հայաբնակ վայրերում սկսված զանգվածային ջարդերով: Բնական է, որ բռնություններ պիտի լինեին նաև Շահումյանի շրջանում: Շահենի պատվիրակության՝ Ստեփանակերտ մեկնելուց կարճ ժամանակ անց սկսվեցին ադրբեջանցիների բռնությունները Շահումյանի նկատմամբ: Իրավապահների մի խումբ ներխուժեց

պահածոների գործարան և բռնագրավեց փաստաթղթերը, սակայն նրանց չհաջողվեց տանել դրանք, քանզի գործարանի բանվորները շրջապատեցին նրանց և թույլ չտվեցին դա անել: Շահումյանի շրջանի վիճակը գնալով վատանում էր, Գյուլիստանի գավառի սահմանների երկայնքով աղբբեջանական ավազակային հոծ խմբերը անընդմեջ հարձակումներ էին գործում հայերին պարտադրելով թողնել հայրենի հողն ու հեռանալ:

Շահեն Մեղրյանի զինվորական գործունեությունը. Շահենը՝ հրամանատար

1989 թ. աղբբեջանական հարձակումներից պաշտպանվելու և արժանի հակահարված տալու նպատակով Շահեն Մեղրյանի նախագահությամբ Շահումյանի գյուղերում որոշվեց կազմակերպել ինքնապաշտպանական ջոկատներ: Շուտով նրա նախաձեռնությամբ նման ջոկատներ ստեղծվեցին նաև Գետաշենի ենթաշրջանում և Մարտակերտի շրջանի մի շարք գյուղերում: 1990 թ. նա անդամակցեց ՀԶԴ-ին և կուսակցության ջանքերով ու միջոցներով բացառիկ ունակությամբ կարողացավ բնակչությանը բացատրել, համոզել, որ պատերազմն անխուսափելի է, ուստի պետք է միավորվել, ջոկատներ կազմել և զենք հայթայթել, տիրապետել զենքին և պատրաստ լինել դիմակայելու աղբբեջանական հարձակումներին, մինչև 1990 թ. սեպտեմբերը Շահումյանի բոլոր գյուղերում և շրջկենտրոնում կային մարտական ջոկատներ: Նրա առաջարկությամբ ստեղծվեց ինքնապաշտպանության շրջանային խորհուրդ՝ իր իսկ նախագահությամբ: Շահեն Մեղրյանի առաջարկությամբ 1990 թ. ստեղծվում են նաև շտաբներ, որոնք պետք է գործեին և զբաղվեին Աղբբեջանի ենթակայության տակ գտնվող հայերի ապահովության հարցերով: Շահենը դարձավ շրջանի առաջնորդը բոլորի լուռ համաձայնությամբ: Ժամանակակիցները, բնութագրելով նրան իբրև առաջնորդի, առանձնացնում էին հետևյալ գծերը՝ «Մարդկանց հետ խոսելու, բարեկրթորեն վերաբերվելու, հարցերը համակողմանի պարզաբանելու և համոզելու հիանալի հատկանիշները, արտակարգ մտածելակերպը: Կարողանում էր ամենաբարդ իրավիճակները ճիշտ գնահատել և կողմնորոշվել. լսելով բոլորի կարծիքները ճիշտ որոշում էր կայացնում, որը վերջնական էր և փոփոխման ենթակա չէր» (Պետրոսյան 139): Շահումյանին օգնության եկած Հայաստանի տարբեր շրջանների ջոկատները ևս ընդունում էին Շահեն Մեղրյանի հեղինակությունը:

1989 թ. հուլիսի 26-ին Շահումյան շրջանային խորհրդի նստաշրջանը որոշում ընդունեց շրջանը ԼՂԻՄ-ին վերամիավորելու վերաբերյալ (Արշակյան 93): Աղբբեջանի իշխանությունները նույն օրը Շահումյան են ուղարկում հանրապետության կենտրոնի երկրորդ քարտուղար, հայտնի հայաստյաց Պոլյանիչկոյին: Նա պահանջում է հրաժարվել այդ որոշումից: Շրջանի ակտիվիստների հանդիպման ժամանակ նա հայտարարում է. «Ով չի ուզում ապրել այստեղ կարող է գնալ»: Շահեն Մեղրյանը իր ելույթում պատասխան է տալիս այս դրածոյին՝ ասելով. «Սա մեր հողն է և մենք ենք ապրելու այստեղ, իսկ դուք կարող եք գնալ ուր ուզում եք» (Պետրոսյան 131): Դա արդարացի պահանջ էր. Հյուսիսային Արցախի հայերը ցանկություն են հայտնում իրենց ցեղակիցների հետ ապրելու մեկ ինքնավարության մեջ՝ անկախ նրա առաջիկա կարգավիճակից: Սակայն Աղբբեջանի իշխանությունները օգոստոսի 1-ին մերժեցին հայերի խնդրանքը: 1989 թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ գերագույն խորհուրդն ընդունեց ավելի հրեշավոր որոշում, որով Արցախահայերի ճակատագիրը կրկին հայտնվեց Աղբբեջանի ողորմածությանը: 1989 թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ու Արցախի Ազգային խորհուրդը համատեղ որոշում ընդունեցին Արցախը Մայր Հայաստանի հետ վերամիավորելու մասին: Այդ որոշման 5-րդ կետով արձանագրվում է, որ ՀԽՍՀ գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը պարտավորվում են ներկայացնել Հյուսիսային Արցախի Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության ազգային շահերը»

(«Խորհրդային Հայաստան», թիվ 230, 3 դեկտեմբերի, 1989 թ., տե՛ս նաև «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988-1989)» 234, 235): Այդ որոշումից որոշ ժամանակ անց բռնություններն ավելի սաստկացան Արցախում: Արգելվեց Ազգային խորհրդի գործունեությունը: Աղբրեջանցիներն ուժեղացրին հարձակումները Հայաստանի սահմանների վրա, ընդլայնվեց Արցախի շրջափակումը:

Շահումյանի շրջանի ղեկավարների կալանավորումից՝ 1990 թ. հունվարի 9-ից, պատերազմը մտավ յուրաքանչյուր բնակավայր ու տուն: 1990 թ. հունվարի 9-ին Խանկարի ոստիկանությունը տեղի զինվորականների օժանդակությամբ շրջանի ղեկավարությունն ամբողջությամբ գերի է վերցնում Մարտունաշենի ճանապարհին, երբ նրանք շտապում էին մասնակցելու աղբրեջանցիների կողմից սպանված մարտունաշենցի պահակի հուղարկավորությանը: Քանի որ բարձրաստիճան ռուս սպաներին թուրքերը կաշառել էին, հայերի անվտանգությանը և հուղարկավորմանը մասնակցելուն խոչընդոտներ չստեղծելու ռուսների խոստումը դրժվեց: Հայ պատանդների խուզարկության ժամանակ Շահենն իր մոտ գտնվող ատրճանակը տալիս է ռուս հրամանատարին՝ «Էս էլ ինձնից քեզ կվեր» ասելով: Մեկ ամիս պատանդ պահելուց հետո հայ մարտիկների կողմից ձեռնարկված հանդուգն գործողությունների արդյունքում աղբրեջանցիները ստիպված էին համաձայնվել պատանդների փոխանակմանը: Շահենին ձերբակալելուց հետո չէին փոխանակի, եթե ճանաչեին նրան իբրև Շահումյանի ղեկավար: Աղբրեջանցիները իբրև շրջանի ղեկավար ճանաչում էին Աղաջանյան Վոլոդյային, որն այդ ժամանակ իբրև քաղաքական դեմք այլևս որևէ ազդեցություն չուներ (Պետրոսյան 206-208): Շրջանի ինքնապաշտպանության առաջին գործողությունը տեղի ունեցավ Մանաշիզ գյուղում 1990 թ. հունվարի 12-13-ին: Երբ աղբրեջանցիները փորձեցին գյուղը տեղահանել, շրջանի նորաստեղծ խմբերը հետ շարտեցին նրանց գյուղի սահմաններից: Թշնամին մեծ կորուստներ տվեց այդ մարտում (Պետրոսյան 209-211):

Աղբրեջանի իշխանությունները ուժեղացրին հալածանքները: 1990 թ. հունվարի 15-ին Արցախում, այդ թվում նաև Շահումյանում, մտցվեց արտակարգ դրություն: 1990 թ. օգոստոսի 29-ին Աղբրեջանի կոմկուսի կենտկոմի բյուրոն դադարեցրեց Շահումյանի շրջանի գործունեությունը, շրջկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Աղաջանյանին հեռացրեց կուսակցության շարքերից ազգայնամոլության և անջատվողականության համար: Մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 28-ին, Աղբրեջանի Գերագույն խորհուրդը բեկանեց ընտրությունները և Շահումյանի բոլոր խորհուրդներում դադարեցրեց դրանց գործունեությունը: Բռնությամբ խլվեցին ժողովրդի ընտրյալների լիազորությունները: Տեղերում իշխանությունը հանձնվեց ոստիկանական վարչակազմին: Ստեփանակերտում այն կոչվում էր Կազկոմիտե, իսկ Շահումյանում՝ Կազմբյուրո: Մոսկովյան կառավարողների թելադրանքով Աղբրեջանի իշխանությունների բռնությունները Շահումյանի բնակչության նկատմամբ բարձրակետին հասավ 1991 թ. առաջին օրերին: Հունվարի 14-ին Աղբրեջանի Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Շահումյանի շրջանը միացվեց Կասում-Իսմայլովի շրջանին: Աղբրեջանում այդ օրերին հայտարարեցին, որ այդ իրավունքն ունեն և կարող են հանրապետության ներսում փոխել շրջանների կարգավիճակը: Նրանց նպատակն էր ստիպել հայությանը, որ թողնեն իրենց բնակավայրերն ու հեռանան: Այդ մասին լրագիրը գրել էր՝ հրապարակելով Միխայել Շեվելևի ռեպորտաժը. «Շահումյանի շրջան. պատերազմ՝ աշխատավորների խնդրանքով»: Լրագրողը այդ օրերին Շահումյանում հանդիպել է շատ մարդկանց, աշխատավորների, ինքնապաշտպանության ուժերի ջոկատների տղաների, զինվորականների հետ տեսել, թե ինչպիսի համառությամբ են Շահումյանցիները դիմանում պատերազմի դառնություններին և պաշտպանում իրենց երկրամասը:

Ուշագրավ է հանդիպումը Շահեն Մեղրյանի հետ: Միութենական մամուլն այդ օրերին առաջին անգամ տպագրեց նրա խոսքը: «Այս հողի համար արժե մարտնչել ու

մեռնել»։ Այդպիսին էր Շահենի հավատամքը։ Լրագրողը ավելացրել էր. «Իմ հարցին այսպես է պատասխանել Շահեն Մեղոյանը, որը Շահումյանում ունի անառարկելի հեղինակություն» («Московские новости», 1991 թ., N 5)։

Ղարաչինարից մինչև Գետաշեն ձգվում էր պաշտպանության գիծը Շահեն Մեղոյանի հրամանատարության ներքո։ Թշնամու անընդհատ հարձակումների պայմաններում նրանք պարտավոր էին դիմանալ և իրավունք չունեին նահանջելու։ Շահումյանի ինքնապաշտպանական ջոկատների ընդհանուր հրամանատար Շահեն Մեղոյանին օգնության էին գալիս նաև Հայաստանի տարբեր շրջաններից եկած ջոկատները։ Լրանք գեներալ օգնություն էին բերում Շահումյանի առաջնորդին և կանգնելով նրա կոբին՝ գնում առաջավոր դիրքերը կռվելու, պաշտպանելու Գյուլիստան լեռնաշխարհը։ Շահենը Շահումյանի շրջանի և Գետաշեն-Մարտունաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատարն էր։ 1991 թ., երբ տիրահռչակ «Կուցր» օպերացիայից հետո ընկավ Գետաշեն-Մարտունաշենը, Շահումյանի դրոշմը կտրուկ վատացավ։ 1991 թ. հունիսին ադրբեջանցիները ռուսների օգնությամբ գրավեցին շրջանի 3 գյուղերը՝ Էրքեջը, Բուզլուխն ու Մանաշիդը։ 1991 թ. օգոստոսի 19-21-ին՝ Մոսկվայում պետական հեղաշրջման փորձի ձախողումից հետո, նոր իշխանությունը հրամայեց կանգնեցնել Շահումյանի ավերումը։ 1991 թ. Շահենն իր ջոկատների հետ կազմակերպեց հակահարձակում, որի արդյունքում սեպտեմբերի 11-13-ին ազատագրվեցին Էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ գյուղերը։ Այդ ռազմական գործողությունը առաջինն էր ԼՂՀ-ում, երբ արցախյան ազատամարտիկները կարողացան իրենց ուժերով գրաված տարածքները ազատագրել։ Գլխավոր հրամանատարը մի քիչ ազատ շունչ քաշեց։ 1991 թ. նոյեմբերի 29-ին Շահենի գլխավորությամբ մաքրվեց Թողան ադրբեջանական գյուղը։ Մինչև շրջանի անկումը, շրջանի ամբողջ ճակատով եղել են ընդհարումներ ադրբեջանական ուժերի հետ։

1991 թ. սեպտեմբերի 2-ին, օգտվելով նպաստավոր իրավիճակից, օրինական ճանապարհով բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների ԼՂ-ի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը, արտահայտելով ժողովրդի կամքը, որն ամրագրված է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ-ի ու Շահումյանի շրջանային իշխանության մարմինների 1988-1991 թթ. որոշումներում, հաշվի առնելով ազատության, անկախության, իրավահավասարության և բարիդրացիության նրա ձգտումը, ղեկավարվելով ամբողջ բնակչության շահերով, միջազգային իրավունքի համապատասխան համարելով հայ ժողովրդի միասնության ձգտումը, որոշում է ընդունել ԼՂԻՄ-ի և սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում ԼՂՀ-ի հռչակման մասին հռչակագիրը («Լեռնային Ղարաբաղի հանրապետություն (1991 թ. օգոստոս – 1992 թ. հունվար)», փաստաթղթերի ժողովածու, 91)։

Դա կարևոր իրադարձություն էր առաջին հերթին Շահումյանի համար, քանզի աշխարհից ու յուրայիններից կտրված, թշնամական հարձակումներից արևաքամ եղած շրջանը քաղաքական ու իրավական պաշտպանություն ստացավ։ Հետո պարզվեց, որ այն ավելի շատ բարոյահոգեբանական նշանակություն ուներ։ Հանրապետության տարածքը, որը կազմում էր 5 հազար քառ. կմ, պետք էր պաշտպանել թշնամուց, Հադրուխից մինչև Շահումյան ձգվող սահմանները՝ 208 հազար բնակչությամբ։ Դեկտեմբերի 28-ին տեղի ունեցան Հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունները։ Անկախ պետության առաջին խորհրդարանի անդամներ ընտրվեցին ազատագրական շարժման առավել ակտիվ գործիչները՝ Արթուր Մկրտչյանը, Շահեն Մեղոյանը և ուրիշներ։ 1992 թ. հունվարի 8-ին Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը։ Նախագահի ընտրության երկրորդ օրը, երբ խորհրդարանի քաղաքական հոսանքները դժվարանում էին որոշել, թե ով պետք է ղեկավարի հանրապետությունը, այդ պատասխանատու աշխատանքի համար առաջարկվեց նաև Շահեն Մեղոյանի

թեկնածությունը, ով անհրաժեշտ ձայներ չհավաքեց: Հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց հանրապետության անկախության մասին: Ստեղծվեցին հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինները: Շահումյանի հայտնվելը հանրապետության կազմում շատ քիչ բան փոխեց: Նրա անվտանգությունը կրկին պաշտպանում էին տեղական ուժերն ու Հայաստանի հանրապետությունից եկած ջոկատները: Հարձակումները շարունակում էին ավելի ուժգնությամբ: Շահեն Մեղոյանը շարունակում էր աշխատել, բարելավել շրջանի մարդկանց վիճակը: 1991 թ. վերջերից մեկնեց Մոսկվա, հանդիպեց բարձրաստիճան մարդկանց հետ՝ ուղիներ փնտրելով արցախյան հարցի լուծման համար: Մոսկվայում հստակ պատասխան չստանալով՝ վերադարձավ Շահումյան: 1992 թ. առաջին ամիսներին, երբ հայ ազատամարտիկները ազատագրեցին Խոջալուն, Շահենը իր քաջերով նախապատրաստվում էր ազատագրել Գետաշենը: Ցավոք, օգնության պակասը մեծ վնաս հասցրեց ազատագրված Արցախի ինքնապաշտպանության ուժերին: Նրանք անհրաժեշտ զենք ու զինամթերք չստացան, չնախապատրաստվեցին մեծ ճակատամարտին, որի համար շատ թանկ վճարեցին:

1992 թ. հունիսի 2-ին և 3-ին՝ Արթուր Մկրտչյանի զոհվելուց հետո, ԼՂՀ նախագահական 2-րդ ընտրություններում պայքար էր ընթանում ՀՀԾ-ի և ՀՀԴ-ի միջև: Վերջինս ԼՂՀ նախագահի թեկնածու առաջադրեց Շահեն Մեղոյանին, ով չէր ցանկանում ճակատագրական պահին թողնել Շահումյանը, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարձր պաշտոնը հնարավորություն կտար օգնելու Շահումյանի ինքնապաշտպանությանը՝ համաձայնեց այդ առաջարկին: Նա իր ելույթում շեշտը դրեց ԼՂՀ ռազմական և տնտեսական հզորության վրա՝ կարևորելով ազգային շահը: Ստանալով 33 ձայն, որը մեծ վստահություն էր նրա անձի նկատմամբ, պատգամավորների այդ մասը նրա մեջ տեսնում էր Արցախի իրական առաջնորդին, վստահում էր նրան: սակայն 3 ձայն պակաս էր, այն բավարար չէրավ նրա ընտրվելու համար: 1992 թ. մայիսյան հաղթանակներից՝ Շուշիի և Լաչինի ազատագրումից հետո, հունիսին նախապատրաստվում էր Գետաշենի և Մարտունաշենի ազատագրումը: Շահումյանում Շահեն Մեղոյանի ղեկավարությամբ մանրազնին մշակվում էին Գետաշենի և Մարտունաշենի ազատագրման գրոհային գործողությունները: Ընտրված էին մասնակիցներն ու հրամանատարները, հարձակման ուղղությունները: Սակայն հունիսի 12-ին, երբ վերջին պատրաստություններն էին տեսնում Գետաշենի ազատագրման գործողությունները սկսելու համար, Շահեն Մեղոյանի շտաբը տեղեկություններ ստացավ, որ Գետաշենի ուղղությամբ թշնամու մեծաքանակ շարասյուն է շարժվում տանկերով հանդերձ: Երկրորդ ահազանգը ստացվեց Էրքեջ գյուղից, որ դեպի **Թողան** է բարձրանում տանկերի շարասյուն, քիչ անց նման տեղեկություն ստացվեց նաև Թայիշից: Գանձակում տեղադրված Խորհրդային 4-րդ բանակի 2-րդ դիվիզիան, փաստորեն, անցել էր ադրբեջանցիների տրամադրության տակ: Մինչ այդ Ռուսաստանի Դաշնությունից Ադրբեջանին էին հանձնել հարյուրավոր տանկեր և հետևակի մարտական մեքենաներ, հրանոթային համակարգեր և ականանետեր, «Գրադ» կայաններ, ռազմական ուղղաթիռներ, ռմբակոծիչներ, միզ տեսակի ռազմական ինքնաթիռներ, տանկյակ հազարավոր ինքնաձիգներ, գնդացիներ և այլն: Թշնամին զինուժից բացի ձեռք էր բերել ռազմագետ մասնագետներ, հրամանատարներ և այլն: Նրանց մեջ էին սլավոն օդաչուներն ու դիպուկահարները, հրետանավորները և այլն: Փաստորեն, Շահումյանի դեմ գործում էր խորհրդային բանակը ադրբեջանական Օմոնի հետ միասին: Հունիսի 13-ին հակառակորդը հարձակվեց միաժամանակ Հայ Պարիսի, Էրքեջի և Բուզուլխի վրա: Շահեն Մեղոյանի ղեկավարությամբ ինքնապաշտպանական խորհրդի կարճ խորհրդակցությունից հետո որոշվեց դիմել ինքնապաշտպանության և միաժամանակ ուժերի անհավասարության պայմաններում որքան հնարավոր է բնակչությանը անվնաս դուրս բերել ռազմական գործողությունների գոտուց: Հայաստանի Հանրապետությունից և ԼՂՀ-ից խոստացած օգնությունը, այդ թվում տանկերի

տրամադրումը, այդպես էլ չեղավ: Շուտով սկսվեց նաև Գյուլիստանի մմբակոծությունը: Սուտ 15 հազար մարդ էր հավաքված Գյուլիստանում: Սկսվեց ողջ ժողովրդի տարհանումը: Որոշվեց անտառներով մարդկանց տեղափոխել Մարտակերտի շրջանի գյուղերը: Մի մասը շարժվեց դեպի Մատաղիս, մյուս մասը՝ Հաթերք: Ամենաճանր վիճակը ստեղծվել էր ազատամարտիկների համար: Նրանք թվով երեք հարյուր էին: Կռվել, պաշտպանել էին շրջանի 50 կմ սահմանները, կռվել էին ուժերի գերագույն լարումով, սակայն այդ օրը ստիպված էին թողնել հարազատ աշխարհն ու հեռանալ: Նրանցից շատերն առանց խոսքի քայլում էին բնակիչների հետ, օգնում երեխաներին, ծերունիներին՝ դժվարին, անտառային թեք արահետներով քայլելու: Նրանք հեռացան, որովհետև չէին կարող կռվել ռազմական մեքենայի դեմ գրեթե մերկ ձեռքերով: Մարդիկ ստիպված էին հեռանալ մեքենայով, սայլով, ոտքով, ոտաբութիկ, շատերն առանց հագուստի: Դա մի ամբողջ ժողովրդի ողբերգություն էր: Աղբրեջանցիները մտան Շահումյան, թալանեցին, ավերեցին, սպանեցին կամ գերեվարեցին հիվանդ, զառամյալ մարդկանց, որոնք չէին կարողացել հեռանալ: Նրանք գիտեին, որ թուրքը չէր խնայի իրենց, բայց ուժ չունեին հեռանալու: Եղան մարդիկ, որ իրենց տան շեմին կռվեցին, սպանեցին շատ հրոսակների, իրենք էլ ընկան: Մարդը չէր կարող հաշտվել այն մտքի հետ, որ աղբրեջանցին անարգել պետք է տիրանա իր տանը, ունեցվածքին, երկրին: Այդպիսի քաջերով է կանգուն ազգը, որոնք մեռնելով անգամ ապահովում են ողջերի հարատևությունը (Նանագուլյան 105): Հաթերքի ուղղությամբ ժողովրդի մեջ խուճապ էր առաջացել: Վերջում դուրս եկան զինյալ ջոկատները: Ոչ միայն օգնություն չեղավ, այլև զրահատանկային մեքենաները հանվեցին, զինամթերքի պահեստները պայթեցվեցին: ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից Շահումյանի ջոկատները զինաթափվեցին (Պետրոսյան 387): Շահումյանի շտաբը Շահեն Մեղրյանի գլխավորությամբ որոշում է պայքարը շարունակել պարտիզանական պատերազմի եղանակով: Այդ ահավոր ողբերգության օրերին Շահեն Մեղրյանը չի հեռացավ Արցախից, չմոռացավ Գյուլիստանը: Նա շատ արագ ուշքի եկավ ու սկսեց հավաքել հավատարիմ ու անձևվեր տղաներին՝ հարազատ աշխարհի ազատագրության համար կռիվը շարունակելու: Նրա հետ էին մարտական ընկերները՝ Շահեն Հովսեփյանը, Սերգեյ Զայյանը, Նովիկ Գյուլումյանը, Հակոբ Խիդիրյանը և ուրիշ քաջեր (Նանագուլյան 106): Արցախի իշխանությունները որոշեցին օգնել, դիմեցին բոլոր շահումյանցիներին՝ չի հեռանալ, մնալ ու շարունակել կռիվը թշնամու դեմ: Սակայն օգնությունը քիչ էր: Առաջին օրերին դժվար էր մեծ հարվածից դեռ ուշքի չեկած մարդկանց համոզել, կռվի տանել: Շահենը համառորեն շարունակում էր աշխատել, հավաքել իր քաջերին: Այդ օրերին կրկին փայլատակեց մարդկանց հետ աշխատելու, անհնարինը հնարավոր դարձնելու նրա անուրանալի տաղանդը: Անգամ նախկինում հայրենասիրական շատ ճառեր ասող մարդիկ խուճապահար փախչում էին հայրենիքից, իսկ նա մտածում էր հայրենիքի ազատագրության մասին: Հավաքեց մարտական ջոկատը ու սկսեց նախապատրաստվել ապագա մարտերին: Տեղահան եղավ ու անօթևան մնաց շուրջ 20 հազար մարդ: Դժբախտությունը մտավ բոլորի ավերված տները, ավերեց բոլորի հոգիները, չխնայեց ոչ մեկին: Ինչպես պատահում է մեծ աղետի ժամանակ, դժբախտության մեջ հայտնված, անտուն ու անտեր մնացած մարդիկ ծառս էին լինում աստծո դեմ, բողոքում, անիծում բոլոր նրանց, ովքեր իրենց մահվան դուռն էին հասցրել: Գծուճ ու բանասարկու մարդիկ, որոնց հոգում չարությունն էր շատ, քան բարին, սկսեցին շշնջալ, բարձր հայտարարել, թե ժողովրդի ողբերգության համար մեղավոր են ինքնապաշտպանության ղեկավարները, առաջին հերթին նրանց գլխավոր հրամանատարը: Այդ ահավոր կեղծիքն առաջին անգամ հնչեց Հայաստանի հեռուստատեսությամբ ու խորհրդարանում, որտեղից տեղափոխվեց փողոցները: Սեփական անկարողությունը թաքցնելու, հայկական տարածքները կորցնելու համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով, իշխանություն ունեցող մարդիկ մեղավորներ էին փնտրում: Առանց ամոթի հայտարարվեց, որ Շահումյանը թշնամուն է վաճառել Շահեն Մեղրյանը, թողել

ժողովրդին գնդակների տակ, ուղղաթիռով ընտանիքի հետ հեռացել (Նանագուլյան 107): Սակայն նրանք մոռացել էին, որ Շահեն Մեղոյանի կինն ու երեխաները ևս, բռնագաղթած ժողովրդի հետ կրելով բոլոր տառապանքները, մի կերպ փրկվել էին՝ հասնելով Մատաղիս: Լույսի պես մաքուր, հայրենիքի նվիրյալ, թշնամու դեմ մինչև վերջ հերոսական կռվող Շահեն Մեղոյանին մեղադրելը կատարյալ անհեթեթություն էր:

Շահեն Մեղոյանը ստիպված էր իրեն նետված անմաքուր ձեռնոցը գետնին չթողնել: Նա ընդունեց իշխանությունների մարտահրավերը, ելույթ ունեցավ լրագրողների առաջ ու հայտարարեց, որ անտեղի են Շահումյանի անկման շուրջ տարվող խոսակցությունները: Շահումյանի անկումը ավելի բարձր իշխանությունների ռազմաքաղաքական պարտությունն է: Իշխանությունները ժամանակին գեղք չհասցրին այնտեղ կռվող ջոկատներին, որոնք, ինչպես Արցախի մյուս ջոկատները, միավորված չէին ազգային բանակի մեջ: Նրանք Շահումյանի ու Մարտակերտի անկումից հետո միայն մտածեցին ազգային բանակ ստեղծելու մասին: Թուրքերի հովանավորությամբ ադրբեջանական կանոնավոր բանակի դեմ մեր ջոկատները չէին կարող կռվել: Այս է ամբողջ ճշմարտությունը (Նանագուլյան 107):

Թվում էր, թե Շահենի այսքան պարզ հայտարարություններից հետո Շահումյանի անկման պատճառները ստուգող խորհրդարանական հանձնաժողովը պարտավոր էր շատ արագ ավարտել աշխատանքներն ու ճշմարտությունն ասել ժողովրդին: Ոչինչ չարվեց: Դեռ ավելին, կային իշխանավորներ, որ շատ լավ գիտեին Շահենին, գիտեին նաև այն մասին, թե ինչու խոստացած երեսուն տանկերը տեղ չհասան: Նրանք պարտավոր էին ասել ճշմարտությունը ոչ թե Շահենին պաշտպանելու (ևս դրա կարիքը չուներ), այլ իշխանությունների հեղինակությունը բարձր պահելու և ժողովրդին արդարության ոգով դաստիարակելու համար: Նրանք էլ գերադասեցին լռել, քանի որ այդպես հարմար էր և՛ իրենց, և՛ իշխանություններին (Նանագուլյան 471): Պաշտոնական քարոզչությունը ամբողջ երկրամասի անկման համար մեղադրում էր ինքնապաշտպանության ուժերի հրամանատարին: Առանց փաստարկների: Շահենի ելույթից հետո միայն թերթերը վախվորած գրեցին ճշմարտության մասին: Շահենի եղբրական մահվանից հետո մեր տաղանդավոր գրողները գրեցին լեգենդար հրամանատարի մասին: Ուշացումով ասվեց ամբողջ ճշմարտությունը:

Շահումյանի անկման պատճառների մանրամասն լուսաբանմանը անդրադարձել են Կիմ Ղահրամանյանը (գիրք Ա. և գիրք Բ, Եր., 1999 և «Արցախ. խնդրություններ և անտեսված հարցեր», Եր., 2013, «Հյուսիսային Արցախ. Գոյության պայքար»), Սեդրակ Նանագուլյանը («Շահեն», Եր., 1993), Դեպրիկ Բաղդասարյանը («Դիմակայություն», Եր., 2010) և Աշոտ Պետրոսյանը («Մեծն Շահեն», Եր., 2011): Նրանք բոլորն էլ փաստերով հիմնավորում են, որ Շահեն Մեղոյանը դրանում որևէ մեղք չի ունեցել, և նա դա ապացուցեց թշնամու թիկունքում իր մղած պարտիզանական կռիվներով: Ա. Պետրոսյանը վերը նշված աշխատության մեջ գրում է. «Հիմնվելով Դեպրիկ Բաղդասարյանի «Դիմակայություն» գրքի հրատարակության վրա՝ Կիմ Ղահրամանյանը «Մռավի դղղանջներ»-ի մի հրապարակման մեջ գրում է «Փաստերը վկայում են, որ Շահումյանի կործանումը հանկարծակի ու անսպասելի է եղել միայն ժողովրդի համար, իսկ ՀՀ այն ժամանակվա ղեկավարությունը ծրագրված կերպով, քայլ առ քայլ նախապատրաստել է այդ կործանումը» («Մռավի դղղանջներ», թիվ 2, 2010; Պետրոսյան 470):

Դեպրիկ Բաղդասարյանը այդ հայտարարությունը արել է դեռևս 1993 թ. «Ազատամարտ» շաբաթաթերթի «Շահումյանի պաշտպանությունը և կանխորոշված ողբերգությունը» հրապարակման մեջ (Պետրոսյան 471):

Այդ օրերին սեփական ժողովրդի ողբերգությունից ցնցված, քաղաքականության մեջ մտած անբարոյական մարդկանցից խոցված, տառապանքի ուղիներով Շահեն Մեղոյանը հասավ Երևան և ելույթ ունեցավ հեռուստատեսությամբ: Ասվեց

ճշմարտությունը կատարված իրադարձությունների մասին: Վերջում նա հայտարարեց. «Շահումյանը զավթված է, բայց չի պարտված: Մենք կշարունակենք պատերազմն ու կազատագրենք մեր հայրենիքը» (Նանագուլյան 134-135): Օգոստոսին սկսվեց պարտիզանական կռիվը Շահումյանում: Թշնամու ոտքերի տակ պետք է վառվի մեր հողը, ամեն ինչ կարվի շատ արագ նրանց այնտեղից դուրս շարտելու ու մեր մարդկանց վերադարձը հարազատ օջախները ապահովելու համար: Սրանք էին Շահենի և իր խիզախ տղաների նշանաբանը: Շահումյանի ինքնապաշտպանական ուժերը վերակազմավորելով՝ Շահեն Մեղրյանը օգոստոսին մեր նորագույն պատմության մեջ սկզբնավորեց հայդուկային պայքարը: Հայթերք գյուղում իր շուրջը հավաքելով մի խումբ տղաների (թվով 25 հոգի)՝ նրանց հետ մտավ թշնամու թիկունք: Այդպես սկսվեց հայդուկային շարժումը ԼՂՀ հյուսիսային մասում: Շահենն ու իր ընկերները, ըստ էության, պարտիզանական պայքարը սկսել են 25 հոգով, հետո Շահումյանում գտնվեցին տարբեր ջոկատների («Արաբո», «Տիգրան Մեծ», «Պռոշյանի ջոկատը», «Հոկտեմբերյանի տղաները») մարտիկներ, որոնցից 1993 թ. մարտին ստեղծվեց հատուկ զորամաս, որի հրամանատար նշանակվեց Շահեն Մեղրյանը: Հայդուկների անմիջական օգնությամբ ազատագրվեցին Մարտակերտի մի շարք գյուղեր՝ Հայթերքը, Ակնաբերդը, Մատաղիսը, Տոնաշենը, Դաստագիրը և Սարսանգի ջրամբարը (Նանագուլյան 134-135):

Շահենը, ջոկատը համալրած, պատրաստվում էր թռչել Արցախ, որտեղ նոյեմբերին սկսված հարձակումը Մարտակերտի շրջանում հետաձգվել էր: Այն պետք է սկսվեր ուշ ձմռանը: Արցախում նախապատրաստվող հարձակումը խանգարելու, հայոց ազգային-ազատագրական շարժմանը հարված հասցնելու նպատակով 1993 թ. հունվարին ադրբեջանցիները հարձակվեցին Կրասնոսելսկի շրջանի վրա, շրջապատեցին Արծվաշենը (Նանագուլյան 119-120): Շահենն իր ջոկատով հասավ Կրասնոսելսկ: Առաջին լուրջ ընդհարումներից հետո ադրբեջանցիները հետ շարտվեցին: Վիճակը սահմանի վրա կարգավորվեց:

Հունվարի 15-ը նշանավոր օր էր շահումյանցի ազատամարտիկների համար: Այդ օրը համալրված, ավելի լավ զինված տղաները Շահեն Մեղրյանի գլխավորությամբ թռան հայրենի անտառները: Նրանք հայտնվեցին կրակի առաջին գծում: Սկսվեց ազատագրական պատերազմի նոր շրջափուլը: Նրանք պետք է մասնակցեին Արցախի ազատագրական բանակի հարձակմանը, որի նպատակն էր ազատագրել Մարտակերտն ու Շահումյանը: Փետրվարին սկսվեցին պատերազմական նոր գործողությունները: Առաջին լուրջ մարտերը տեղի ունեցան Սարսանգի ջրամբարի տարածքում: Ջրամբարից վերև գտնվող Հայթերք գյուղում կուտակված թշնամու զորամիավորումները՝ 30 միավոր զինվորական տեխնիկայով, դժվարացնում էին լեռնային գյուղերի ազատագրումը: Շահումյանցիները առաջադրանք ստացան փակել ջրամբարից այդ գյուղեր տանող ճանապարհը, մեկուսացնել այնտեղ եղած թշնամուն, հետո մասնակցել նրանց ոչնչացմանը: Այդպես էլ եղավ: Ազատելով Սարսանգի ջրամբարը՝ ազատամարտիկները հասան Մաղավուզ գյուղին: Ադրբեջանցիները խուճապահար փախչում էին: Մարտի առաջին օրերին թշնամին համալրում ստացավ, փորձեց անցնել հակահարձակման: Մարտի դաշտ նետվեց Գերանբոյի (շահումյանցիների հարևանների) անպարտելի համարվող գումարտակը: Ադրբեջանական հրամանատարությունը մեծ հույսեր էր կապում նորեկների հետ: Շահենի տղաները մասնակցեցին այդ մարտերին: Ադրբեջանական ռազմական գործողությունները նկարահանող կինոլրագրող Նեվգորովը ակամայից ՌԴ հեռուստաալիքներով ցույց տվեց, թե ինչպես հայերը ջարդեցին ադրբեջանցիների փառաբանված զորամիավորումը, որի զինվորները փախան մարտադաշտից՝ թողնելով շատ զոհեր (Նանագուլյան 120): Այդ հաղթանակը Շահենին էր ու հայդուկներինը: Մարտերը շարունակվեցին: Հայ ազատամարտիկները հասան Տոնաշեն: Շահենն իր տղաներով ապրիլին ազատագրեց Գյուլիստանը: Վերջապես կատարվեց նրանց երազանքը: Նրանք գրավեցին դեպի շրջան տանող բոլոր

բարձրունքները: Նա մտավ իր վերաշինած եկեղեցին, մոմ վառեց, աղոթեց աստծո տանը: Մի քանի օր հետո նրանք հասան Վերին Շեն ու Խրիսափորին շատ մոտ գտնվող բարձունքներին: Առաջխաղացումն այդ ուղղությամբ հետաձգվեց ավելի հարմար ժամանակների: Շահումյանի ջոկատը կոմուն էր Արցախի զորամիավորումների հետ մեկ միասնական ծրագրով, ըստ որի՝ Շահումյանի ազատագրման համար մեծ մարտերը կսկսվեն Թալիշի ազատագրումից հետո, երբ ճանապարհ կբացվեր դեպի Ղարաչինար: Ռազմական տեխնիկան կարող էր անցնել միայն այդ ճանապարհով (Նանագուլյան 135):

Շահեն Մեղոյանն իր պարտիզանական ջոկատով փառավոր ուղի էր անցել՝ թշնամուն էական վնաս պատճառելով: 1992 թ. օգոստոսի 28-ին Վարարակն գետի ակունքներում գտնվող աղբբեջանցի թալանչիների վրանային «քաղաքի» ոչնչացումը գործողության ընթացքում ոչնչացվել էր 40 աղբբեջանցի թալանչի: 1992 թ. սեպտեմբերի 20-ին Գյուլիստանի գործողությունը ոչնչացվել էին 11 ավտոմեքենա և 54 աղբբեջանցի զինյալ: 1992 թ. հոկտեմբերի 21-ին Սարսանգ-Յաթերը ճանապարհի վրա ոչնչացվել էր վառելիք փոխադրող չորս բեռնատար, սպանվել էր հակառակորդի 9 զինվոր: 1992 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ոչնչացվել էին աղբբեջանական 4 ուղեկալ, 8 ռազմական մեքենա և մի քանի տասնյակ զինծառայողներ (Պետրոսյան 518-519):

1993 թ. ապրիլի սկզբին ազատագրվեց Բելքաջարը (Բարվաճառը), մարտերը Շահումյանում շարունակվում էին:

Ազատամարտիկները որոշել էին ապրիլի 28-ին շրջկենտրոնի հրապարակում մեծ հանրահավաքին շնորհավորել իրար հայրենիքի ազատագրության առթիվ: Սակայն պատահեց մեծ ողբերգությունը: 1993 թ. ապրիլի 17-ին, երբ այնքան մոտ էր տառապանքով նվաճված հաղթանակը, մարտական մի խումբ ընկերների հետ զոհվեց Գյուլիստանի արծիվը՝ Շահեն Մեղոյանը, զոհվեց ուղղաթիռում, դարանակալ թշնամու արկից, զոհվեց, ինչպես արծիվն է զոհվում հարազատ կապույտ երկնքում:

Շահեն Մեղոյանը վերջին անգամ մեկ ամսից ավելի մտնում է Եղակերի ռազմական հենակետում, քանզի ծրագրված ընդհանուր հարձակումը և դրա համար նախատեսված օգնությունը նորից հետաձգվել էին: Շահենը որոշում է թռչել Երևան՝ տեղում բարձր հրամանատարության և կուսակցական գործիչների հետ լուծելու մի շարք հարցեր: Նրա հետ Երևան պիտի թռչեին մի խումբ ազատամարտիկներ՝ թվով 7 հոգի, ովքեր ամիսներ շարունակ գտնվում էին անտառներում: Շահենը պատրաստվում էր ՀՀ-ից գալուց հետո ազատագրել հարազատ շրջանը: Այդ օրը՝ ապրիլի 17-ին, Շահենը վերջին հանձնարարություններն է տալիս Երևանից՝ բուժումից նոր վերադարձած Սերգեյ Չայանին, պատվիրում է աչալուրջ լինել, պահպանել մարտիկներին: Հրամանատարը սեղվում է շտաբի պետի ձեռքը և գնում դեպի կանգնած երկու ուղղաթիռները: Առաջին ուղղաթիռը երբ օդ է բարձրանում, Ղաստակերտից կրակ է բացում, բայց հաջողությամբ հեռանում է: Շահենը տղաների խմբի հետ տեղավորվում է երկրորդ ուղղաթիռում, որը հինգ օր է բարձրանում, արագացնում է թռիչքը, հռթիռակոծվում է, թշնամու հրթիռը դիպչում է ուղղաթիռին: Այն ծխալով ընկնում է անտառի մեջ ականատեսների աչքի առաջ: Հայրուկապետը զոհվում է Արցախի երկնքում իր մարտական ընկերների հետ՝ անկատար թողնելով կյանքի հիմնական նպատակը՝ Շահումյանի ազատագրումը: Շահեն Մեղոյանն ու իր 7 մարտական ընկերները՝ 17-ամյա Հայկ Մեղոյանը, Արտակ Խաչատրյանը, Գրիգոր Գրիգորյանը, Պողոս Սիմոնյանը, Ռաֆիկ Բադայանը, Արմեն Բազյանը և Ալեքսանդր Մեծունցը, ուղղաթիռի անձնակազմի հրամանատար Ջանբուլադ Մուրադյանը, 2-րդ օդաչու Արամ Գրիգորյանը և բորտմեխանիկ Իոսիֆ Միքայելյանը, հանգչում են կողք կողքի անմահների պանթեոնում՝ Եռաբլուրում: Շահենի զոհվելուց հետո նրա հրամանատարության տակ գտնվող զորամասը 1993թ. հունիսի 15-ին ՀՀ ՊՆ, թիվ 314 հրամանով անվանակոչվեց «Շահեն Մեղոյան» հատուկ նշանակության ջոկատ: Այսպիսով, հայ ժողովուրդը կորցրեց անուրանալի վաստակ ունեցող մեծ

հայրենասերին, ժողովրդական առաջնորդներից մեկին, շահույնացի գորահրամանատարին ու հայրուկապետին, ընտանիքին, ազգին նվիրված մեծ մարդասերին, բարեսիրտ հայի, ում քաջակորով ու խիզախ հոգին թրծվեց արցախյան ազատագրական պատերազմի կրակների մեջ ու անմահացավ հայրենի հողում սերունդներին պատվիրելով թշնամուց ազատագրել իր հայրենի լեռնաշխարհը:

Եզրակացություն

Այսպիսով, Շահեն Չինավորի Մեղոյանը իր հերոսական գործունեությամբ պայացուցեց, որ հայրենիքի նկատմամբ նվիրումը կարելի է իրականացնել ոչ միայն հայրենանվեր աշխատանքով, սեփական հայրենիքի գյուղն ու շրջանը շենացնելով, այլև այդ հողի ու հայրենիքի համար անձնուրաց կռվելով ու մինչև արյան վերջին կաթիլը այն պաշտպանելով: Արցախի հերոս, մեծ հայրենասեր, նշանավոր հրամանատար ու ազգային նվիրյալ գործիչ Շահեն Մեղոյանը իր անձնական կյանքով և հերոսական գործունեությամբ սերունդներին տվեց սեփական պատմական դասը, այն է՝ հիշել, որ հայրենիքը ամենաթանկն է, որի համար զոհվելը ամենապատվաբեր առաքելությունն է: Զաջակորով և խիզախ հրամանատարի պատգամը սերունդներին հայրենի լեռնաշխարհը թշնամուց ազատագրելն էր, որն այսօր էլ մնում է անկատար, ցավոտ և չլուծված հիմնահարց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արշակյան Անդրանիկ, Արցախյան գոյամարտը, Երևան, 2004:
2. «Խորհրդային Հայաստան», թիվ 230, 3 դեկտեմբերի, 1989 :
3. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս – 1992 թ. հունվար)», փաստաթղթերի ժողովածու, Երևան, 2011:
4. «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988-1989)», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2014:
5. Ղահրամանյան Կիմ, Հյուսիսային Արցախ. Գոյության պայքար, Գիրք Բ, Երևան, 1993:
6. «Մռավի դրդանշներ», թիվ 2, 2010:
7. Նանագուլյան Մեղրակ, Շահեն, Երևան, 1993:
8. Պետրոսյան Աշոտ, Մեծ Շահեն, Երևան, 2011:
9. “Московские новости”, 1991 г., N 5.

WORKS CITED

1. Arshakyan Andranik, Arcaxyan goyamarty' [The Artsakh Survival Battle], Yerevan, 2004: (in Armenian)
2. «Khorhrdayin Hayastan», t'iv 230, 3 dektemberi 1989 t'. ["Soviet Armenia", No. 230, December 3, 1989]: (in Armenian)
3. «Ler'nayin Gharabaghi Hanrapetut'yun (1991 t'. o'gostos – 1992 t'. hunvar), p'astat'ght'eri jhoghovac'u ["The Nagorno-Karabakh Republic (August 1991 - January 1992)", collection of documents], Yerevan, 2011: (in Armenian)
4. «Hayut'yan kochern u dimumnery' LGhIM-y' Xorhrdayin Hayastani het miavorelu hamar (1988-1989)», p'astat'ght'eri & nyut'eri jhoghovac'u ["The Armenian Appeals and Applications for the Unification of Nagorno-Karabakh with Soviet Armenia (1988-1989)", collection of documents and materials], Yerevan, 2014: (in Armenian)
5. Ghahramanyan Kim, Hyusisayin Arcax. Goyut'yan payqar, Girq B [Northern Artsakh. The Struggle for Existence, Book II], Yerevan, 1993: (in Armenian)
6. «Mr'avi ghoghanjner», t'iv 2 ["Sound of Mrav", № 2], 2010: (in Armenian)
7. Nanagulyan Sedrak, Shahen, Yerevan, 1993: (in Armenian)

8. Petrosyan Ashot, Mec' Shahe'n [The Great Shahan], Yerevan, 2011: (in Armenian)
9. “Moskovskie novosti” [“The Moscow Times”], 1991, N 5. (in Russian)

THE PROMINENT NATIONAL FIGURE AND MILITARY COMMANDER: SHAHEN MEGHRYAN

*Dedicated to the 70th Anniversary of Shahan the Great
(Shahen Meghryan)*

EDIK MINASYAN

*YSU, Faculty of History, Dean,
Doctor of History, Professor,
Yerevan, the Republic of Armenia*

The article presents the life, state and military patriotic activities of a great patriot, national figure, a prominent figure of the Artsakh Liberation War, a hero of Artsakh Shahan Z. Meghryan.

His character traits inherited from the Melik dynasty of Gulistan are emphasized: a comprehensively developed strong personality, communicative and strong, sincere, honest, with lively temperament and optimistic, caring, very practical, qualities typical to a leader. It was no coincidence that he became the military-political leader and organizer of the economic life of Shahumyan District. He devoted his life to the district and village. After graduating from the Faculty of Economics of YSU, he returned to his native village, started his professional career from the position of an economist and reached to the position of the first secretary of the regional committee, the director of the canning factory, the head of the agro-industry department, the chairman of the executive committee and the first secretary of the party district committee. He was one of the first who understood that it is impossible to defend the district without combat units and organized and led the armed units, becoming the head and leader of the self-defense of the district. A comprehensive analysis of the facts presents the counterattack organized under Shahan's leadership, thanks to which in September of 1991, the villages of Bozlukh and Manashid were liberated and the Azeri village of Todan was cleared. The capture of the Shahumyan District with the help of the Soviet Army and the Azerbaijani OMON (Special Purpose Mobile Unit) and the unequal battles against the enemy, the withdrawal of the population from the military zone without losses under the leadership of Shahan are shown. By interpreting the relevant facts, rumors, and false accusations against Shahan Meghryan are revealed, the groundless and fabricated nature of which he proved with his subsequent heroic activities. Like many others, he did not leave Artsakh in those days, but stayed and continued the partisan battles for the liberation of his native land. The liberation of several Martakert villages because of the heroic battles led by Shahan at the end of 1992 and the beginning of 1993 and his preparations for the liberation of his native Shahumyan are presented. At the end, the death of Shahan in the sky of Artsakh with his brothers in arms is shown. The fact of immortality of the military commander and a great patriot in his native land is emphasized. His image is the best way to educate the generations in a patriotic spirit.

Keywords: *Shahan the Great, Melik of Artsakh, Gulistan, Shahumyan, Zinavor, canning factory, Northern Artsakh, Union press, partisan battles, detachment of special purpose, heroic death.*

ВИДНЫЙ НАЦИОНАЛЬНЫЙ ДЕЯТЕЛЬ И ВОЕНАЧАЛЬНИК: ШАГЕН МЕГРЯН

Посвящается 70-летию Шагена Великого (Шагена Мегряна)

ЭДИК МИНАСЯН

*декан исторического факультета ЕГУ,
доктор исторических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

В статье представлена жизнь, общественно-политическая и военно-патриотическая деятельность великого патриота, национального деятеля, видного участника Арцахской освободительной войны, героя Арцаха Шагена Зинаворовича Мегряна.

Особо выделены черты его характера, унаследованные от династии Меликов Гюлистана: всесторонне развитая сильная личность, коммуникабельная и решительная, искренняя, честная, с живым темпераментом и оптимистичными, заботливыми, очень деятельными качествами, типичными для лидера. Неслучайно он стал военно-политическим руководителем и организатором хозяйственной жизни Шаумяновского района. Всю свою жизнь он посвятил родному району и селу. После окончания экономического факультета ЕГУ вернулся в родное село, начал свою профессиональную деятельность с должности экономиста и дошел до должности первого секретаря обкома, директора консервного завода, зав. отделом агропрома, председателя исполкома и первого секретаря райкома партии. Он одним из первых понял, что оборона района без боевых отрядов невозможна и организовал и возглавил вооруженные отряды, став главой и руководителем самообороны округа. Всесторонний анализ фактов показывает обстоятельства контрнаступления, организованного под руководством Шагена, в результате которого в сентябре 1991 года были освобождены села Бозлух и Манашид и очищено азербайджанское село Тодан. Показаны захват Шаумяновского района с помощью Советской Армии и азербайджанского ОМОНа и неравные бои с противником, вывод населения из военной зоны без потерь под руководством Шагена. Путем раскрытия соответствующих фактов вскрываются слухи и ложные обвинения в адрес Шагена Мегряна, беспочвенность и сфабрикованность которых он доказал своей последующей героической деятельностью. Как и многие другие, он в те дни не покинул Арцах, а остался и продолжил партизанские бои за освобождение родной земли. Представлено освобождение ряда мартакертских сел в результате героических боев под предводительством Шагена в конце 1992-начале 1993 годов и его подготовка к освобождению родного Шаумяна. В финале статьи показано, как Шаген погибает в небе Арцаха со своими братьями по оружию. Подчеркивается факт бессмертия военачальника и великого патриота родной земли. Его образ – лучший способ воспитать поколения в патриотическом духе.

Ключевые слова: *Шаген Великий, Мелик Арцаха, Гюлистан, Шаумян, Зинавор, консервный завод, Северный Арцах, союзная пресса, партизанские бои, отряд особого назначения, героическая гибель.*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

**ԱՂԻՐԵՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇԱՐԱԴՐՄԱՆ ՀԱՅԵՏԱԿԱՐԳԸ
(ԸՍՏ ԱՂԻՐԵՋԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԱԳՐԵՐԻ) * 1**

ՐՏԴ 371.671

DOI: 10.52063/25792652-2022.4.15-26

ԱՐՄԱՆ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր,
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
պատմական գիտությունների դոկտոր,
թ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
armanyeghiazaryan@ysu.am

ԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
Հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու,
թ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
arahovhannisyan@ysu.am

ԱՐՄԻՆԵ ԶԻՐՈՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
Հայոց պատմության ամբիոնի հայցորդ,
թ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
armine.chiroyan@ysu.am

Պատմության դասագրքերը մեծ նշանակություն ունեն մատաղ սերնդի դաստիարակության գործում՝ նրանում ձևավորելով հայրենիքի, ժողովրդի ու նրա պատմության վերաբերյալ աշխարհագրական, ժամանակագրական ու բովանդակային գիտելիքներ: Պատահական չէ, որ մի շարք երկրներում պատմության դասագրքերը, քաղաքական պայմանների թելադրանքով, ձեռք են բերում նաև գաղափարաբանական գործառույթներ՝ փորձելով պատմական գիտելիքից զատ և նույնիսկ նրա փոխարեն նոր սերնդի մեջ սաղմավորել գաղափարաքաղաքական բնույթի պատկերացումներ, որոնք հաճախ ոչ միայն խեղաթյուրում են պատմական իրողությունները, այլ նաև մյուս ժողովուրդների նկատմամբ ձևավորում թշնամական վերաբերմունք:

Հոդվածի նպատակը պատմության ադրբեջանական դպրոցական դասագրքերի քննական վերլուծության հիման վրա Ադրբեջանի պատմության

* Հոդվածը ներկայացվել է 17.12.2022թ., գրախոսվել՝ 22.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A043 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

շարադրման հայեցակարգի լուսաբանումն է: Խնդիր է դրվել բացահայտել «աղբբեջանցիների պատմական տարածքի», նրանց ծագման ու ձևավորման հիմնահարցերի վերաբերյալ, ինչպես նաև հարևան ժողովուրդների տարածքների նկատմամբ հավակնությունների առումով աղբբեջանցի հեղինակների հիմնական մոտեցումները:

Աշխատանքը շարադրելիս կիրառվել է պատմաքննական մեթոդը: Վերջինիս շրջանակներում փորձ է արվել բացահայտելու աղբբեջանական դասագրքերում պատմական սկզբնաղբբյուրների տեղեկությունների հետևողական խեղաթյուրումը և դրա շարժառիթները՝ հընթացս լուսաբանելով ինչպես նշված տեղեկությունների բուն իմաստը, այնպես էլ ներկայացնելով աղբբեջանցի հեղինակների կեղծիքները ի ցույց դնող նորանոր տեղեկություններ:

Հոդվածում բացահայտվում են պատմության աղբբեջանական դասագրքերի հեղինակների կատարած բազմաթիվ նմանատիպ կեղծիքներ, ներկայացվում դրանց հետևանքով առաջացած հակասությունները, ինչպես նաև այդ դասագրքերի հստակ հակահայկական բովանդակությունը:

Հիմնաբառեր՝ պատմության կեղծարարություն, հեղինակներ, դպրոցական դասագրքեր, ժողովուրդ, ազգ, լեզու, կրոն, պետական կազմավորումներ, պատմական տարածք, հակասություններ, հայեցակարգ:

Աղբբեջանական «պատմական» տարածքն ըստ դպրոցական դասագրքերի

Ըստ աղբբեջանցի հեղինակների՝ Աղբբեջանը հին ժամանակներից ի վեր ունեցել է ծավալուն տարածքներ: Դրանց սահմանները հարավում հասել են մինչև Համադան, Ղազվին ու Չենջան՝ ընդգրկելով Իրանի հյուսիսային հատվածը, հյուսիսում՝ մինչև Մեծ Կովկասի լեռնաշղթա և Դերբենտ, արևելքում՝ նրա սահմանները ողողել են Կասպից ծովի ջրերը, արևմուտքում՝ այսպես կոչված Արևելյան Անատոլիայից մինչև Սևանա լճի ավազան՝ ներառելով Երևանը, ինչպես նաև Թիֆլիսը (պատմական Բորչալուի մահալ) և Ուրմիա լճի արևմտյան ափերը (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 61; Мусаева и др. 21): Փաստորեն, նրանք իրենց պատմական տարածք են համարում ներկայիս Իրանի Իսլամական Հանրապետության մի զգալի հատվածը, Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքը՝ համարելով այն «Արևմտյան Աղբբեջան», Վրաստանի արևելյան շրջանները, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության հարավային մի հատված:

Շրջանառվող ամենատարածված քարտեզներից մեկը (տե՛ս նկարը) ներկայացված է Աղբբեջանի 10-րդ դասարանի դպրոցական դասագրքի 32-րդ էջում և վերաբերում է Ք.ա. IV-I դարերին (Алиев Т. и др. 32): Զարտեզի վրա նշված տարածքին տրված է Աղբբեջան անվանումը: Սակայն խնդիրն այն է, որ ո՛չ տվյալ և ո՛չ էլ որևէ այլ պատմափոլում չի եղել Աղբբեջան կամ այլ անվանումով և ներկայացված տարածքն ընդգրկող առանձին պետություն կամ վարչատարածքային միավոր: Ավելին՝ տվյալ ժամանակահատվածում նույնիսկ հենց իրենց՝ ներկայիս աղբբեջանցի հեղինակների «խոստովանությամբ» չի եղել ձևավորված ո՛չ աղբբեջանցի ժողովուրդ և ո՛չ էլ աղբբեջանցի ազգ (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 39): Այդ ժամանակ իրենց իսկ պնդումներով դեռևս չի շրջանառվել նույնիսկ Աղբբեջան անվանումը: Հին աղբբյուրներում Աղբբեջան անվան նախնական տարբերակը հնչել է որպես Ատրպատական՝ կապված դրանից հարավ գտնվող երկրամասի հետ: 7-րդ դարից սկսած՝ արաբական աղբբյուրներում այս տարածքը սկսեց կոչվել Աղբբեջան (Алиев В. и др. 62): Այն իբրև թե վերաբերում էր ինչպես բուն Ատրպատականին (ըստ աղբբեջանցի հեղինակների՝ Հարավային Աղբբեջան), այնպես էլ ներկայիս Աղբբեջանի Հանրապետության հարավային որոշ շրջանների:

Բայց այստեղ ևս աղբբեջանցի հեղինակների պնդումներն իրականությանը չեն համապատասխանում, քանի որ, արաբ հեղինակների վկայությամբ, Աղբբեջան անվանումը վերաբերել է միայն Ատրպատականին, այլ ոչ թե ներկայիս Աղբբեջանի տարածքին: Ատրպատական-Աղբբեջանը ներկայիս Այսրկովկասի տարածքից բաժանվում էր Արաքս գետով (Ibn Khordadbeh 121; Jacut's 183-184): Աղբբեջանցիների ներկայացրած սահմաններում (տե՛ս քարտեզը) Աղբբեջան անվանումով միասնական պետություն երբևէ գոյություն չի ունեցել: Այս մասին չկա որևէ տեղեկություն, ինչը արտացոլված է 19-րդ դարի վերջի և 20-րդ դ. սկզբի հանրագիտարաններում (Брокгаузъ и Ефронъ 212; The Encyclopaedia Britannica 80):

Աղբբեջանցիները կշված ձևով ներկայացնելով իրենց «պատմական» սահմանները՝ իրենց են վերագրում ողջ պատմության ընթացքում այդտեղ տեղի ունեցած գրեթե ցանկացած իրադարձություն: Պատմությունը շարադրելով նման տրամաբանությամբ՝ նրանք միաժամանակ տարածքային նկրտումներ են ցուցաբերում իրենց գրեթե բոլոր հարևանների նկատմամբ: Այստեղ բացառություն է կազմում թերևս միայն Թուրքիայի Հանրապետությունը, որի հետ վերջիններս ունեն հատուկ հարաբերություններ և որտեղ բնակվող ժողովրդի հիմնական հատվածին ամեն կերպ փորձում են նույնացնել իրենց հետ:

Այսպես կոչված աղբբեջանցի ժողովրդի ծագման և ձևավորման խնդրի ներկայացումը աղբբեջանական դպրոցական դասագրքերում

Աղբբեջանցի հեղինակները, կապված այն իրողության հետ, որ «աղբբեջանցի» հասկացությունը հին և միջին դարերում և նոր ժամանակներում երբեք չի օգտագործվել, կիրառում են մի հևարք, որով փորձում են փակել այս «բացը»: Հորինվել է մի թեզ, ըստ որի, սկսվելով հևագույն շրջանում՝ աղբբեջանցի ժողովրդի ձևավորումը ավարտվել է 9-րդ դարում, իսկ ևհա 19-րդ դարի վերջին, կապված աղբբեջանցի ժողովրդի՝ ազգային ինքնության հստակեցման հետ, ի հայտ եկավ աղբբեջանական ազգը: Աղբբեջանական դասագրքերի հեղինակների կարծիքով՝ աղբբեջանցի ժողովրդի կազմավորման գործընթացը սկսվել է դեռևս մեր թվարկությունից առաջ և շարունակվել աքեմենյանների օկուպացիայի ժամանակաշրջանում (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 62): Իբրև թե Ատրպատական և Աղվանք պետությունների ձևավորումը արագացրել է «աղբբեջանական» ժողովրդի կազմավորման գործընթացը, որն ավարտվել է սասանյանների ու արաբների նվաճումների ու իսլամի տարածման ժամանակաշրջանում: Նրանց կարծիքով «աղբբեջանցի ժողովրդի» ձևավորման գործում մեծ դեր են ունեցել թյուրքական այն բազմաթիվ ցեղերը, որոնք հևագույն ժամանակներից բևակվել են, այսպես կոչված, աղբբեջանական երկրում, որը, ինչպես տեսևք, ըստ նրանց, ընդգրկում էր ներկայիս Աղբբեջանի տարածքը և ընդարձակ տարածքներ Հայաստանի Հանրապետությունից, Վրաստանի Հանրապետությունից, Իրանի Իսլամական Հանրապետությունից և Ռուսաստանի Դաշնությունից: Նրանց պնդմամբ այդ տարածքի բնիկ բևակչությունը հիմնականում բաղկացած է եղել թյուրքական ցեղերից (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 61): Հին ժամանակներից բևակվելով այստեղ՝ վերջիններս Աղբբեջանը համարում էին իրենց հայրենիքը: Դրանց թվին են պատկանում օղուզները, որոնց աղբբեջանցիներն իրենց նախնի են համարում (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 61), որոնք հանդիսևնում էին Աղբբեջանի տարածքի հևագույն բևակիչները: Տեղացի ժողովրդի բարեկամ էթևոսները (կիմներներ,

սելջուկներ, սակեր, հոներ, սաբիրներ, խազարներ, իսկիտներ) արդյունքում ևս տեղափոխվել են այստեղ (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 61): Նշված ժողովուրդները կարևոր դերակատարում են ունեցել «ադրբեջանցի ժողովրդի» կազմավորման գործընթացում: Հյուսիսային Ադրբեջանում բնակվել են նաև ուտիներ, լելեր, կասպեր և այլ ժողովուրդներ (Алиев В. и др. 71): Շարունակելով իրենց մտավարժանքները՝ ադրբեջանցի հեղինակներն այնպես են ներկայացնում, թե պատմական տարբեր ժամանակաշրջաններում (աքեմենյանների, սասանյանների, խալիֆայության շրջաններում և այլն) Ադրբեջան տեղափոխված ոչ թյուրքական էթնիկական միավորները ևս մտել են ադրբեջանցի ժողովրդի կազմի մեջ (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 61): Ու քանի որ Սասանյան Իրանի և Արաբական խալիֆայության տիրապետության շրջանում Ատրպատականը և Աղվանքը մտել են այդ տերությունների կազմի մեջ, ադրբեջանցի հեղինակները փորձում են հիմնավորել, որ այս հանգամանքը նշված ցեղերի միավորումը դարձրեց անխուսափելի տարածքային և լեզվական ընդհանուր հիմքերի վրա: Միջնադարում թյուրքական ցեղերի հոսքը շարունակվեց դեպի Ադրբեջան, որտեղ նրանք կողք կողքի ապրում էին տեղացի թուրքերի հետ: Դրանից բացի Ադրբեջան տեղափոխվեցին շատ պարսիկներ և արաբներ, որոնք ենթարկվեցին ձուլման և մոռացան իրենց լեզուն (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 62):

Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Աղվանքում և Ատրպատականում ֆեոդալական հարաբերությունները զարգանում էին միաձև: Սասանյան ղեկավաները Հյուսիսային Ադրբեջանի տարածք էին տեղափոխում իրանալեզու ցեղերի, որի նպատակն էր ավելացնել այստեղ իրենց ազդեցությունը և հենարան ստեղծել, սակայն պարսկալեզու ցեղերը այստեղ ձուլվում էին թյուրքալեզու թյուրքական ցեղերին (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 62): Նրանք ևս իրենց մասնակցությունն էին բերում համընդհանուր էթնոսի կազմավորմանը:

Փաստորեն, ադրբեջանցի հեղինակների պնդումները հիմնվում են այն կեղծ դրույթի վրա, թե իբր ներկայիս Ադրբեջանի տարածքում բնակված բնիկ և եկվոր բոլոր ցեղերն ու ժողովուրդները պատմության ընթացքում միաձուլվել են այդ տարածքում բնակվող թյուրքական ցեղերի հետ, որի արդյունքում ձևավորվել է, այսպես կոչված, ադրբեջանական ժողովուրդը: Իսլամի ընդունումը նրանք համարում են շատ կարևոր շրջադարձ իրենց ժողովրդի կյանքում: Ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրող բազմաթիվ ցեղերի կողմից իսլամ ընդունելու հանգամանքը նպաստեց և արագացրեց ադրբեջանական էթնոսի ձևավորմանը, քանի որ ձևավորվեց կրոնական ընդհանրություն, և մարդիկ համախմբվեցին միևնույն կրոնի շուրջ: Այն ամրապնդեց ինչպես թյուրքական, այնպես էլ մյուս ժողովուրդների միասնությունը Ադրբեջանում: Ընդունելով իսլամ և իսլամական մշակույթի տարրեր՝ նրանք իրենց կյանքը սկսեցին կառուցել դրա հիմքի վրա (Абдуллаева 70; Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 62): Իրենց ազգային արժեքները առավել հարստացան իսլամական մշակույթով, և իսլամի ազդեցությամբ ներկայիս Ադրբեջանի տարածքում ձևավորվեց նոր մշակույթ: Համատեղ պայքարը ընդդեմ ընդհանուր թշնամիների ևս (Սասանյաններ, Բյուզանդիա, քրիստոնեա պետություններ, արաբներ) դրական ազդեցություն ունեցավ ադրբեջանական ժողովրդի կազմավորման գործում (Абдуллаева 70; Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 62):

Փորձ է կատարվում ցույց տալ, թե ադրբեջանաթուրքական լեզվի՝ որպես հաղորդակցման լեզու ձևավորման գործընթացի ավարտով ամրապնդվեցին խալիֆայության կազմի մեջ մտնող ժողովուրդների տնտեսական և մշակութային կապերը, և ստեղծվեցին բոլոր անհրաժեշտ պայմանները միասնական ժողովրդի ձևավորման համար: Արաբական խալիֆայության թուլացումը նպաստեց Ադրբեջանի տարածքում թյուրք-իսլամական էթնոքաղաքական գործնի ուժեղացմանը:

Օղուգաստեղուկյան թյուրքերը շատ արագ ձուլվեցին «հին աղբրեջանական թյուրքերի» հետ, որոնց հետ ունեին ընդհանուր արմատներ և լեզու (Алиева 122): Ըստ աղբրեջանցիների՝ սելջուկների հոսքի արդյունքում օղուգաթյուրքական ցեղերը դարձան Հարավային Կովկասի և Աղբրեջանի հիմնական էթնիկական և քաղաքական գործոնը: 11-րդ դարի կեսերին ստեղծված Սելջուկյան տերությունը մեծ ազդեցություն ունեցավ Աղբրեջանում տեղի ունեցող պատմական գործընթացների վրա: Հարավային Կովկասի մուսուլման բնակչությունը սելջուկ թյուրքերին նայում էր որպես դաշնակցի Բյուզանդիայի և հայ-վրացական ոտնձգություններ դեմ համընդհանուր պայքարի համար (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 62):

«Աղբրեջանցի ժողովրդի» կազմավորման գործում իբրև թե կարևոր դերակատարում ունեցավ Կարա-Կոյունլու ցեղախումբը, որը մեծ դեր ունեցավ նաև Աղբրեջանի պատմության մեջ (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 99): Ցեղի անվանումը, որը կառավարվում էր օղուգական Բահարի ցեղերի կողմից, կապված էր իր տոտեմի՝ «սև ոչխարի» հետ: Պատմական աղբյուրներում իբրև թե նշվում է, որ կարա-կոյունլուները սկսել են տեղափոխվել Աղբրեջան 6-րդ դարից: Այս ցեղի կենտրոնական շրջանը, ուր նրանք ժամանել էին իրենց երկիր թուրք-օղուգական առաջին հոսքերի ժամանակ, տեղակայված էր Վանա լճից հյուսիս (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 100): Ակ-կոյունլուները, լինելով օղուգական թյուրքեր, ըստ աղբրեջանցիների, ապրել են աղբրեջանական հողերում՝ Կովկասյան լեռների և Արաքս գետի միջնամասում: Նրանք ևս կարևոր դերակատարում են ունեցել աղբրեջանական ժողովրդի կազմավորման գործում (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 105): Այս ցեղը, միջնադարում հաստատվելով Աղբրեջանի հարավում, տարածվեց մինչև Տիգրիս և Եփրատ գետերին հարող տարածքներ և «Արևելյան Անատոլիա»: Այնուհետև նրանք հաստատվեցին Դիարբեքիրում (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 105):

Ըստ աղբրեջանական դպրոցական դասագրքերի՝ աղբրեջանական ժողովրդի կազմավորման գործընթացն ավարտվել է 7-9-րդ դդ. (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 39), չնայած որևէ աղբյուրում նման տեղեկություն չկա:

Նշվածից ակնհայտ է, որ աղբրեջանցի հեղինակները փորձել են իրենց պատմությունը «կառուցել» ներկայումս տիրապետած տարածքների, ինչպես նաև այն երկրների ու երկրամասերի հիման վրա, որոնք համարում են իրենցը, ուստի այդ բոլոր հողերի վրա երբևէ բնակված ցեղերին ու ժողովուրդներին կապում են ներկայիս աղբրեջանցիների հետ, հետևաբար նաև՝ յուրացնում նրանց մշակույթը, ինչի ականատես ենք մենք այսօր:

Աղբրեջանցիներն իբրև թե դարձել են հիմնական էթնիկ ուժը պատմական այն սահմաններում, որն արդեն ներկայացրել ենք, և որն իրենցն են համարում: Սակայն պետք է փաստել, որ որոշ հետազոտողների կարծիքով «աղբրեջանցի ժողովրդի» կազմավորման գործընթացն ավարտվել է նշված տարածքներում օղուգների հայտնվելուց հետո: Օղուգները, որոնց աղբրեջանական հեղինակներն իրենց նախնիներն են համարում, և որոնք իբրև թե լուրջ մասնակցություն են ունեցել աղբրեջանցի ժողովրդի կազմավորման գործում, Անդրկովկաս են տեղափոխվել 11-13 դարերում (Агаджанов 6): Առհասարակ թյուրքական ծագում ունեցող նստակյաց բնակչության մասին Կովկասում, Փոքր Ասիայում և Ատրպատականում որևէ տեղեկություն նախքան սելջուկ-թյուրքերի հայտնվելը չկա (Энаяталла 101-102): Գիտնականների մեծամասնության կարծիքով թյուրքերի ներթափանցումը Աղբրեջան-Ատրպատական և Անդրկովկաս չէր կարող տեղի ունենալ 11-րդ դարից շուտ (Энаяталла 104): Սա մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ «աղբրեջանցի ժողովրդի» կազմավորումը չէր կարող ավարտվել 7-9-րդ դարերում: Ակ-կոյունլու և Կարա-Կոյունլու ցեղախմբերը, որոնք ևս օղուգական ծագում ունեին և, ըստ աղբրեջանցի

հեղինակների, նշանակալի դերակատարում էին ունեցել ադրբեջանցի ժողովրդի կազմավորման գործում, բնականաբար նշված տարածքներում ևս հայտնվել էին 11-րդ դարից ոչ շուտ, ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ ադրբեջանական ժողովրդի կազմավորման ավարտը չէր կարող տեղի ունենալ 7-9-րդ դդ.:

«Ադրբեջանցի ազգի» ձևավորման հարցի ներկայացումը դպրոցականներին

Այսպես կոչված ադրբեջանական ազգի ձևավորումը, ըստ ադրբեջանցի հեղինակների, տեղի է ունեցել 19-րդ դարի երկրորդ կեսին նույն պատմական տարածքներում, որոնց արդեն անդրադարձել ենք (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 39): 19-րդ դարի երկրորդ կեսին կապիտալիստական հարաբերությունները կարևոր տեղ էին գրավում Յյուսիսային Ադրբեջանի (խոսքը ներկայիս Ադրբեջանի Հանրապետության մասին է) սոցիալ-տնտեսական կյանքում: Այդհարաբերությունների արագ զարգացումը ընդլայնեց տնտեսական կապերը Յյուսիսային Ադրբեջանի առանձին շրջանների միջև: Ձևավորվեցին սոցիալական նոր խմբեր՝ բուրժուազիա և բանվորներ: Ստեղծվեցին տնտեսական կյանքի միասնության անհրաժեշտ նախադրյալները: Իսկ դա իր հերթին խթան հանդիսացավ հաղթահարելու փակ կենցաղը, ադրբեջանական ժողովրդի վերափոխումը ազգի (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 39):

Ադրբեջանական ազգի ձևավորման գործընթացն իբրև թե ունեցել է իր առանձնահատկությունները: Խոսքն առաջին հերթին վերաբերում է այն հանգամանքին, որ այդ ժամանակահատվածում ադրբեջանցիների «պատմական հայրենիքը» բաժանված է եղել երկու մասի: Յյուսիսային Ադրբեջանի տարածքը հանդիսացել է Ռուսական կայսրության գաղութ, որի տարածքն էլ իր հերթին բաժանված է եղել տարբեր նահանգների (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 39):

Ադրբեջանցիների դպրոցական դասագրքերում նշվում է, որ Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերից հետո Ադրբեջանը կորցրեց իր անկախությունը, իսկ երկիրն ու ժողովուրդը բաժանվեցին (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 8-го класса 182; Мусаева и др. 109): Ադրբեջանցիները նշում են, որ Ադրբեջանը 19-րդ դարում այլևս գոյություն չունեի որպես միասնական պետություն: Տպավորություն է, թե մինչև 19-րդ դարը Ադրբեջանը միասնական անկախ պետություն էր: Դա այն պարագայում, երբ, իրենց իսկ հավաստմամբ, ադրբեջանցիները որպես ազգ ձևավորվել են միայն 19-րդ դարի երկրորդ կեսին, և բնական է, որ առանց ազգ դառնալու նրանք չէին կարող ունենալ ազգային պետություն:

Ադրբեջանական դասագրքերում նշվում է, որ Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից հետո Արաքս գետից հարավ գտնվող ադրբեջանական հողերը մնացին Ղաջարների տիրապետության տակ: Այս ժամանակաշրջանում «Հարավային Ադրբեջանը» իբրև թե համարվում էր պետության կարևորագույն մասը և կառավարվում էր անմիջապես գահաժառանգի կողմից: Իսկ 19-րդ դարի սկզբին Հարավային Ադրբեջանը (իմա՝ Իրանական Ադրբեջան) վերածվեց Ղաջարական պետության 4 գավառներից մեկի (Агаларов и др. 58):

Ադրբեջանցի հեղինակների պնդմամբ՝ Ղաջարական դինաստիայի անկումից հետո իշխանության եկած Ռզա շահը (1925-1941 թթ.) «Հարավային Ադրբեջանում» վարում էր ազգային խտրականության քաղաքականություն, ինչը որոշիչ դեր էր խաղացել նաև նրա գահ բարձրանալու գործում: Նա ձգտում էր պարսիկներին վերածել իշխող ազգի և ոչնչացնել Իրանում գտնվող ադրբեջանցի թուրքերին (Агаларов и др. 136-137): Ադրբեջանցիներին արգելվել էր կրթություն ստանալ, մայրենի լեզվով գրքեր և թերթեր հրատարակել: Դպրոցներում և պետական

հաստատություններում խստիվ արգելված էր թուրքերեն խոսելը: Այլովել էին թուրքերենով գրքեր և ձեռագրեր: Պարսկականացվել էին աշխարհագրական և պատմական տեղանունները, ինչպես նաև թուրքական ազգանունները (Агаларов и др. 136-137):

Ռուսաստանի տիրապետության տակ անցած «Հյուսիսային Ադրբեջանում» ևս, ըստ ադրբեջանցի հեղինակների, ազգային և կրոնական խտրականության քաղաքականություն է վարվել, ոչ մի պաշտոնական փաստաթղթում չի գործածվել «Ադրբեջան» վարչատարածքային անվանումը, պետական հիմնարկներում բոլոր գործերը վարվել են ռուսերեն (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 40):

Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Ցարական կառավարությունը պաշտոնական փաստաթղթերում ադրբեջանցի թուրքերին անվանել է «մուսուլմաններ» կամ «թաթարներ» (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 40): Ադրբեջանցիների իշխանական շրջանակներն այս կերպ փորձում էին մոռացության տակ իրենց պատմական անունը: Նրանք ամեն կերպ խանգարում էին ադրբեջանցի ժողովրդին գիտակցել իր ազգային պատկանելությունը: Նման քաղաքականության արդյունքն այն էր, որ ադրբեջանցիներն ամենից հաճախ իրենց ազգության մասին հարցին պատասխանում էին «ես մուսուլման եմ» (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 41):

Առաջին անգամ «ազգ» հասկացությունն առաջ քաշեց Ս. Ֆ. Ախունդզադեն: Մամուլում և հանրային գիտակցության մեջ սկսվեց գործածվել «ադրբեջանական ազգ» արտահայտությունը (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 40): 1891 թ. Նոյեմբերի 6-ին «Քեշկուկ» թերթում «ադրբեջաներեն» ստորագրված հոդվածում հարց է բարձրացվել՝ «Ի՞նչ ազգ եք դուք», և տրվել է պատասխան՝ «Դուք ադրբեջանցի եք»: Այսպիսով, օրակարգում ընդգրկվել է «ադրբեջանական ազգ» արտահայտությունը: Դրանից հետո հրապարակախոս Ս. Շահթահտինսկին «Կասախյ» թերթում վերջապես պարզաբանել է իրավիճակը՝ Հարավային Կովկասի թուրք-մահմեդական բնակչությանը անվանելով ադրբեջանցիներ, իսկ նրանց լեզուն՝ ադրբեջաներեն (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 40): Ս. Ֆ. Ախունդզադեն և Գ. Չարդաբին իրենց գործունեությամբ ձգտում էին ապահովել, որ ադրբեջանցիներն առաջին հերթին գիտակցեն իրենց թուրքական, իսկ երկրորդ հերթին՝ մուսուլմանական ինքնությունը (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 40):

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ ադրբեջանցիները փորձում են հիմնավորել, թե իրենք որպես ազգ ձևավորվել են 19-րդ դարի վերջերին, երբ իբրև թե կորցրել էին իրենց միասնական պետությունը:

Կրոնները ներկայիս Ադրբեջանի տարածքում և «աղվանների ձուլման» հայեցակարգը ըստ ադրբեջանցի հեղինակների

Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ պատմության տարբեր ժամանակներում ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրող ժողովուրդները հետևել են տարբեր կրոնների: Նրանք եղել են հեթանոս, կրակապաշտ, քրիստոնյա, հետո ընդունել են իսլամ: Հին ժամանակներում Ադրբեջանի որոշ հատվածներում և հատկապես հարավային շրջաններում տարածված էր կրակապաշտությունը: Ըստ «ադրբեջանական աղբյուրների»՝ քրիստոնեությունը ևս տարածված է եղել ադրբեջանցիների շրջանում: Ինչ-որ ժամանակ այն եղել է ադրբեջանա-աղվանական պետություն պետական կրոնը (Мусаева и др. 37-38):

Զանի որ ադրբեջանցի հեղինակները խնդիր ունենին քրիստոնյա Աղվանքի և Արցախ-Ուտիք հայաշխարհի նկատմամբ նկրտումները հիմնավորելու հարցում, նրանք այդ առումով մշակել են մի շինծու հայեցակարգ, ըստ որի՝ I-III դդ. Աղվանքի որոշ

շրջաններում (ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Ներառյալ Արցախը) տարածվեց քրիստոնեական կրոնը, ձևավորվեցին առաջին քրիստոնեական համայնքները: Աղվանից եկեղեցին համարվում է Կովկասի և ամբողջ աշխարհի հնագույն եկեղեցիներից մեկը: Աղվանքի Ուռնայր թագավորը ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, սակայն ըստ ադրբեջանցիների՝ այն չդարձավ բոլորի կրոնը Աղվանքում (Алиев В. и др. 96-97): Հին աղվանները հեթանոս էին ու կռապաշտ: Աղվանքի թագավոր Վաչագան Գ-ն (5-րդ դ. վերջ) քայլեր կատարեց քրիստոնեական կրոնի ամրապնդման համար, բայց ըստ ադրբեջանցիների՝ այս կրոնը Աղվանքում չկարողացավ խոր արմատներ գցել: Նրանց համոզմամբ՝ Արցախում գտնվող Ամարաս համալիրը ունի աղվանական ծագում (Алиев В. и др. 99): Արցախն ու Ուտիքը համարելով Աղվանքի մաս՝ ադրբեջանցիներն այստեղ գտնվող քրիստոնեական համալիրները ևս վերագրում էին վերջիններիս, ինչը, հետևելով ադրբեջանցիների պատմության շարադրման տրամաբանությանը, շատ օրինաչափ է:

Ադրբեջանի դպրոցական դասագրքերում շարադրված է Արցախի վերաբերյալ ամբողջությամբ շինծու հետևյալ հայեցակարգը: Հայ առաքելական եկեղեցին, օգտագործելով իրեն պաշտպանող խալիֆայության քաղաքական հովանավորությունը սկսած 8-րդ դարից, ճնշումներ է գործադրել աղվանից եկեղեցու նկատմամբ: Նախ՝ աղվաներեն գրված կրոնական և պատմական բովանդակության բոլոր փաստաթղթերը մեծ աղավաղմամբ ու կեղծմամբ թարգմանվել են հայերեն, որից հետո սկսվել է բնակչության գրիգորականացման գործընթացը, և այս կերպ՝ տեղի քրիստոնյա աղվանների աստիճանական հայացումը: Քրիստոնյա բնակչության մեծամասնությունը, որպեսզի պահպանի իր աղվանական ինքնությունը, ընդունելով իսլամական կրոնը, խառնվել է ադրբեջանական ժողովրդին (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 8-го класса 192): Ղարաբաղի լեռնային հատվածում բնակվող աղվանական բնակչությունը նախընտրել է պահպանել իր կրոնական համոզմունքները և ենթարկվել է ճնշումների Հայ գրիգորյանական եկեղեցու կողմից: Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում բնակվող աղվան բնակչության հայացման գործընթացը ավարտվել է Ռուսաստանի կողմից Հարավային Կովկասը գրավելուց հետո, երբ ստեղծվել են պայմաններ տարբեր երկրներից տվյալ տարածքում հայերին վերաբնակեցնելու համար, և երբ 1836 թ. վերացվել է Աղվանքի կաթողիկոսությունը, իսկ աղվանից եկեղեցիները սկսել են ենթարկվել Էջմիածնին (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 8-го класса 193): Այս ամենը կատարվել է Ցարական Ռուսաստանի նպատակաուղղված քաղաքականության արդյունքում:

Կարող ենք արձանագրել, որ, ըստ ադրբեջանցի հեղինակների, մինչիսլամական շրջանում Ադրբեջանում դավանել են զրադաշտականություն, քրիստոնեություն և կռապաշտություն: Արաբական արշավանքներից հետո՝ 7-8-րդ դարերում, Ադրբեջանում վերացան հեթանոսությունն ու կրակապաշտությունը: Իսլամի ընդունումն ամրապնդել է ինչպես թյուրքական, այնպես էլ մյուս ժողովուրդների միասնությունը: Ընդունելով իսլամ և իսլամական մշակույթի տարրեր՝ նրանք իրենց կյանքը սկսել են կառուցել դրա հիմքի վրա:

Ադրբեջանցի հեղինակների կողմից պատմական իրողությունների այսօրինակ խեղաթյուրմանը անդրադարձել է Բ. Հարությունյանը: Նա նախ հստակեցրել է «Աղվանից եկեղեցու» Եռությունը: Այդ անվանումը առաջացել է պատմական անցքերի պատճառով, երբ Հայոց եկեղեցու թեմերը Առանի մարզպանության ստեղծումից հետո՝ 5-րդ դարում, հոգևոր-վարչական առումով ստիպված էին մտնել Նոր կառույցի մեջ: Չնայած Աղվանից անվանմանը՝ այն պարզապես Հայոց եկեղեցու մի մասն էր, և եթե տվյալ կաթողիկոսությունը հատուկ անջատողական ձգտումներ էր հանդես բերում, ապա դրանք անմիջապես սաստվում էին Հայոց եկեղեցու կողմից: Գտնվելով օտար տիրապետությունների լծի տակ՝ Հայոց եկեղեցին ծանր ժամանակաշրջաններ է ապրել: Մի պահ հայ կաթողիկոսությունների թիվը հասել է 6-ի: Դրա արդյունքն են

Կիլիկիայի, Ադթամարի կաթողիկոսությունների հանդես գալը, բայց սա ամենևին չի նշանակում, որ դրանք օտար տարրերի եկեղեցիներ են (Հարությունյան 46):

Ինչ վերաբերում է Կուրի և Արաքսի միջագետքում գտնվող Հայոց Արևելից կողմանց աշխարհների (Արցախն ու Ուտիքը) ազգաբնակչությանը, ապա այն ի սկզբանե հայկական ու հայախոս է եղել: Ադրբեջանցիները, ներկայացնելով աղվանից պետության մեջ ընդգրկված տարածքները, խեղաթյուրում են պատմական փաստերը՝ նշելով, որ ներկայիս Արցախի տարածքը մաս էր կազմում Աղվանից պետության: Սրա մասին են վկայում բազմաթիվ օտար հեղինակների հաղորդումները: Նրանց հաղորդմամբ՝ Մեծ Հայքի և Աղվանքի սահմանն անցել է Կուր գետով (Pliny 25, Ptolemaei 1), ուստի դրանից հարավ ընկած երկրներն ու երկրամասերը Աղվանքի մաս համարելը հակասում է պատմական իրողություններին:

Ադրբեջանցի հեղինակները նշում են նաև, որ աղվանների մի մասն իրենց աղվանական ինքնությունը պահպանելու և հայկական ազդեցությունից խուսափելու համար ընդունում էր այլ կրոն, դառնում այլադավան և խառնվում այլ ժողովրդների, ինչն անտրամաբանական է. ինչպե՞ս կարելի է պահպանել սեփական ինքնությունը՝ կրոնափոխ լինելով և խառնվելով այլ ժողովրդի:

Այսպես կոչված ադրբեջանական լեզվի ծագման և կիրառության խնդրի ներկայացումը ադրբեջանական դասագրքերում

Ըստ խնդրո առարկա դասագրքերի հեղինակների՝ Աղվանքում բնակվող 26 ցեղերից յուրաքանչյուրն ուներ իր լեզուն, բայց, այնուամենայնիվ, ընդհանուր լեզուն թուրքերենն էր, քանի որ թուրքական ցեղերը առաջատար ուժ էին այնտեղ (Алиев В. и др. 116): Մաննայի թագավորների անունները ևս իբրև թե վերծանվում են որպես թուրքական բառեր (Алиев В. и др. 54): Օրինակ՝ «Ազա» անունը նրանք վերագրում են «աղա»-ին (թուրքերեն՝ ավազ եղբայր): Ըստ ադրբեջանցի հեղինակների՝ դա վկայում է, որ Մաննայի լեզվի հիմքում ընկած է եղել հին թուրքերենը: Նրանց կարծիքով իսլամի ընդունումը դրականորեն անդրադարձավ միասնական ադրբեջանական ժողովրդի կազմավորման և ադրբեջանաթյուրքական լեզվի վրա:

Հետաքրքրական է, որ ադրբեջանցիները ադրբեջանական գրականության ամենահին և ինքնատիպ ստեղծագործություն են համարում «Զիթաբի-Դեդե Գորգուդ» էպոսը (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 71-72): Այն գրվել է արաբատառ թուրքերենով: Ըստ նրանց՝ էպոսը ադրբեջանական լեզվի հնության վկայությունն է, որը համարվում է թուրք ժողովրդի համընդհանուր ստեղծագործությունը: Ըստ նրանց՝ էպոսը տարածվել է 7-9-րդ դդ. ամբողջ երկրում: Միաժամանակ նշվում է, որ ադրբեջանական լեզուն արտահայտությունը սկսվել է օգտագործվել միայն 13-րդ դարում (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 96):

Ադրբեջանցի հեղինակների պնդմամբ՝ 13-րդ դարում, երբ սկսեց օգտագործվել «ադրբեջաներեն լեզու» արտահայտությունը, ստեղծվեցին համապատասխան բառարաններ: Այդ բառարաններում բացատրվում էին տարբեր ադրբեջանական բառեր և հասկացություններ: Արդյունքում սկսվեցին գործեր ստեղծվել իբրև թե ադրբեջաներեն քերականությամբ (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 7-го класса 96): 16-րդ դարից սկսած՝ ադրբեջանաթյուրքական լեզուն Սեֆյանների տերությունում բարձրացավ պետական մակարդակի (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 8-го класса 35): Սեֆյանների վարած իմաստուն քաղաքականության արդյունքում պարսկերեն գրելու ավանդույթը իր տեղը զիջեց ադրբեջաներենին: Սեֆյան պետությունը, ադրբեջաներեն լեզուն 16-րդ դարում դարձնելով պետական լեզու, հնարավորություն ստեղծեց այն առավել զարգացնելու: Փաստորեն, ըստ ադրբեջանցիների՝ Սեֆյան Իրանն ադրբեջանական պետություն էր, որի պետական լեզուն էր ադրբեջաներենը:

Չնայած այն հանգամանքին, որ տվյալ ժամանակահատվածում պետության մեջ իշխանության գլուխ էին անցել թյուրքական ծագում ունեցող ցեղերը, այնուամենայնիվ պետության էությունը պարսկական էր, քանի որ պետության հիմքում ընկած էր ոչ թե ազգային բնույթը, այլ շիա դավանանքը: Բացի այդ, դրզըլբաշական ցեղերի շրջանում միասնական ժողովրդի մտածելակերպ և հոգեկերտվածք գոյություն չուներ (Հարությունյան 35):

Ըստ աղբրեջանցիների համոզման՝ 1918 թ. մայիսին՝ Աղբրեջանի՝ անկախությունն ձեռք բերելուց հետո, ազգային պետականաշինության ոլորտում ամենակարևոր քայլերից մեկը հանդիսացավ թուրքերենի՝ Աղբրեջանի պետական լեզու հռչակելը (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 97): Հետաքրքրական է, որ չնայած այն հանգամանքին, որ «աղբրեջաներեն լեզու» արտահայտությունը իբրև թե սկսել է օգտագործվել 13-րդ դարից, վերջիններս 1918 թ. ձևավորված աղբրեջանական պետության պետական լեզու են հռչակում թուրքերենը՝ հաճախ օգտագործելով նաև «աղբրեջանաթուրքական լեզու» արտահայտությունը:

1937 թ. ընդունվեց Աղբրեջանական ԽՍՀ երկրորդ սահմանադրությունը, որտեղ աղբրեջաներեն լեզվի և ժողովրդի անունը «թուրքերենից» դարձավ «աղբրեջաներեն» (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 130): Հատկանշական է, որ Աղբրեջանի անկախ հանրապետության գոյության պայմաններում 1918-1920 թթ., Աղբրեջանի պետական լեզու էր համարվում թուրքերենը, իսկ Աղբրեջանի Խորհրդային Միության մեջ գտնվելու ընթացքում այս հանրապետության պետական լեզուն սկսեց համարվել աղբրեջաներենը (Махмудлу и др., История Азербайджана, учебник для 9-го класса 130):

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ ըստ աղբրեջանցիների՝ թեև 13-րդ դարից օգտագործվել է «աղբրեջաներեն լեզու արտահայտությունը», այնուամենայնիվ այն մինչև 1937 թ. հիմնականում կոչվել է «թուրքերեն»: Աղբրեջանական դասագրքերում հաճախ օգտագործվող «աղբրեջանաթուրքական լեզու» արտահայտությունը ամեն կերպ աղբրեջանցիներին թուրքերի, իսկ լեզուն՝ թուրքերենի հետ նույնացնելու ցանկության հետևանք է: Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել այն տրամաբանությամբ, որ աղբրեջանցիները ամեն կերպ ձգտում են ամրապնդել թյուրքական ինքնության գիտակցումն իրենց հանրության շրջանում:



«Պատմական» Աղբրեջանի քարտեզը՝ ըստ աղբրեջանական դպրոցական դասագրքերի

Եզրակացություն

Ադրբեջանի պատմության դասագրքերում մենք ականատես ենք բացարձակ հայատյացության, քանի որ ադրբեջանցիները իրենց պատմության ողջ շարադրման ընթացքում ամեն կերպ ձգտում են մերժել ամեն հայկականը՝ այս ճանապարհին կանգ չառնելով ոչ մի կեղծիքի առաջ: Եզրակացության վառ վկայություններն են հողվածում բերված օրինակները, որտեղ առկա «պնդումները» հիմնավորումներ չունեն, և կամ մի «պնդումը» հակասում է մյուսին: Ուսումնասիրելով Ադրբեջանի դպրոցական պատմության դասագրքերը՝ կարող ենք արձանագրել, որ վերջիններս, իրենց «պատմական հայրենիքի» սահմանները գծելով «նախանշված» սահմաններում, իրենց են վերագրում պատմության ընթացքում այստեղ տեղի ունեցած գրեթե բոլոր իրադարձությունները: Միևնույն ժամանակ, այդ տարածքները համարելով իրենցը՝ ադրբեջանցի հեղինակները գրեթե անթաքույց տարածքային նկրտումներ են դրսևորում բոլոր հարևան պետությունների նկատմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան, Բաբկեն. «Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն». *Վեմ համահայկական հանդես*, Բ (Ը) տարի, թիվ 4 (32), հոկտեմբեր-դեկտեմբեր 2010, էջ 24-57:
2. Агаджанов, Сергей. *Очерки истории огузов и туркмен в Средней Азии IX-XIII вв.* Ашхабад, 1969.
3. Агаларов, Первиз, и др. *История Азербайджана, учебник для 11-го класса общеобразовательных школ.* Баку, 2018, https://www.e-derslik.edu.az/player/index3.php?book_id=273#books/273/units/unit-1/page3.xhtml.
4. Алиев, Вели, и др. *История Азербайджана 6 (учебник по предмету История Азербайджана для 6-го класса общеобразовательных школ).* Баку, 2017, https://e-derslik.edu.az/player/index3.php?book_id=248#books/248/units/unit-1/page3.xhtml.
5. Алиев, Таваккул, и др. *История Азербайджана, учебник для 10-го класса общеобразовательных школ.* Баку, 2017, https://www.e-derslik.edu.az/player/index3.php?book_id=232#books/232/units/unit-1/page3.xhtml.
6. Брокгауз, Арнольд и Ефронь Илья. *Энциклопедический словарь.* под. ред. Андреевского, томъ 1, А-Алтай, С.-Петербургъ, 1890, <https://runivers.ru/bookreader/book10132/#page/220/mode/1up>.
7. *История Азербайджана с древнейших времен до начала XX века.* под ред. Иггар Алиева, Баку, 1995, https://www.ederslik.edu.az/player/index3.php?book_id=484#books/484/units/unit1/page3.xhtml.
8. *История Азербайджана (с древнейших времен до первых десятилетий XXI века).* учебник для вузов, под ред. Мехмана Абдуллаева, Баку, 2016.
9. Махмудлу, Ягуб, и др. *История Азербайджана, учебник для 7-го класса общеобразовательных школ.* Баку, 2014, https://www.e-derslik.edu.az/player/index3.php?book_id=63#books/63/units/unit-1/page1.xhtml.
10. ---. *История Азербайджана, учебник для 9-го класса общеобразовательных школ.* Баку, 2016, https://www.e-derslik.edu.az/player/index3.php?book_id=484#books/484/units/unit-1/page3.xhtml.
11. ---. *История Азербайджана, учебник для 8-го класса общеобразовательных школ.* Баку, 2019, https://www.e-derslik.edu.az/player/index3.php?book_id=389#books/389/units/unit-1/page3.xhtml.
12. Мусаева, Офелия, и др. *История Азербайджана, отечество, 5-й класс, методическое пособие для учителя.* Баку, 2016,

<https://www.trims.edu.az/noduploads/book/quot-istoriya-azerbajdzhana-quot-azarbaycan-tarixi-fanni-uzra-5-ci-sinif-ucun-metodik-vasait.pdf>.

13. Энаятолла, Реза. *Азербайджан и Арран: Атурпатакан и Кавказская Албания* (издание третье). Ереван, 2020.

14. Pliny. *Natural History*. London, 1950.

15. *The Encyclopaedia Britannica*. New York, Eleventh Edition, Volume III, Azerbaijan.

16. "The Six Voyages of John Baptista Tavernier, a Noble Man of France Now Living, Through Turkey into Persia, and the East-Indies, finished in the Year 1670". made English by J.P, London, 1678.

17. Claudii, Ptolemaei. *E codicibus recognovit, prolegomenis, annotatione indicibus tabulis instruxit carolus Muellerus*. voluminis Primi, Book V, Parisiis, 1901.

18. Ibn Khordadbeh. *Kitáb al-masâlik wa'l-mamâlik*.-BGA. editio II, p. VI, Lugd. Bat., 1967.

19. *Jacut's Geographisches Wörterbuch aus den Handschriften zu Berlin, St. Petersburg und Paris herausgegeben*. von Ferdinand Wüstenfeld. Leipzig, 1924.

20. "Les Six Voyages de Jean Baptiste Tavernier, écuyer baron d'Aubonne, qu'il a fait en Turquie, en Perse, et aux Indes". t. 1, Paris, 1679.

WORKS CITED

1. Agadzhanov C. G., *Ocherki istorii oguzov i turkmen v Srednej Azii IX-XIII vv.*, Ashhabad, [Essays on the History of the Oguzes and Turkmens in Central Asia in the 9th-13th Centuries, Ashgabat] 1969. (In Russian)

2. Agalarov P., Guliev N., Hatamov R., Babaev F., Gasymov Je., Gusejnov Je., Dzhabbarov H., Bahramova S., Gusejnov A., *Istorija Azerbajdzhana, uchebnik dlja 11-go klassa obshheobrazovatel'nih shkol*, Baku, [History of Azerbaijan, textbook for the 11th grade of secondary schools, Baku] 2018. (In Russian)

3. Aliev T., Agalarov P., Guliev N., Gasymov Je., Babaev F., Gusejnov Je., Asadov K., Mamedov R., *Istorija Azerbajdzhana, uchebnik dlja 10-go klassa obshheobrazovatel'nih shkol*, Baku, [History of Azerbaijan, Textbook for the 10th grade of Secondary Schools, Baku] 2017. (In Russian)

4. Aliev V., Babaev I., Dzhaferov I., Mamedova A., *Istorija Azerbajdzhana 6 (ucebnik po predmetu Istorija Azerbajdzhana dlja 6-go klassa obshheobrazovatel'nyh shkol)*, Baku, [History of Azerbaijan 6 (textbook on the Subject History of Azerbaijan for the 6th grade of Secondary Schools), Baku] 2017. (In Russian)

5. Brokgauz' A. (Lejpszig'), Efron' A., (S.-Peterburg'), *Jenciklopedicheskij slovar'*, pod red. Andreevskago, tom' 1, A-Altaj, S.-Peterburg', [Encyclopedic Dictionary, under. ed. Andreevsky, St. Petersburg] 1890. (In Russian)

6. Harut'yunyan B., *Petakan makardaki bard'racvac' keghc'ararut'yun, «Vem» hamahaykakan handes, B (Y') tari, t'iv 4 (32), hoktember-dektember*, Erevan, [State-level counterfeiting, Yerevan] 2010. (In Armenian)

7. *Istorija Azerbajdzhana (s drevnejshih vremen do pervyh desjatiletij XXI veka)*, uchebnik dlja vuzov, pod red. M. Abdullaeva, Baku, [History of Azerbaijan (from Ancient Times to the First Decades of the 21st century), textbook for universities, ed. M. Abdullayeva, Baku] 2016. (In Russian)

8. *Istorija Azerbajdzhana s drevnejshih vremen do nachalo XX veka*, pod red. I. Alieva, Baku, [History of Azerbaijan from Ancient times to the Beginning of the 20th century, ed. I. Alieva, Baku] 1995. (In Russian)

9. Jenajatolla R., Azerbajdzhan i Arran: Aturpatakan i Kavkazskaja Albanija (izdanie tret'e), Erevan, [Azerbaijan and Arran: Aturpatakan and Caucasian Albania (third edition), Yerevan] 2020. (In Russian)

10. Mahmudlu Ja., Agaev S., Hub'jarov B., Alishova H., Gusejnova L., Bahramova S., Istorija Azerbajdzhana, uchebnik dlja 7-go klassa obshheobrazovatel'nih shkol, Baku, [History of Azerbaijan, textbook for the 7th grade of secondary schools, Baku] 2014. (In Russian)

11. Mahmudlu Ja., Aliev G., Gusejnova L., Alishova H., Dzhabbarov H., Musaeva Je., Bahramova S., Istorija Azerbajdzhana, uchebnik dlja 8-go klassa obshheobrazovatel'nih shkol, Baku, [History of Azerbaijan, textbook for the 8th grade of secondary schools, Baku] 2019. (In Russian)

12. Mahmudlu Ja., Aliev G., Abdullaev G., Gusejnova L., Dzhabbarov H., Istorija Azerbajdzhana, uchebnik dlja 9-go klassa obshheobrazovatel'nih shkol, Baku, [History of Azerbaijan, textbook for the 9th grade of secondary schools, Baku]. (In Russian)

13. Musaeva O., Gusejnova L., Dzhabbarov H., Istorija Azerbajdzhana, otechestvo, 5-j klass, metodicheskoe posobie dlja uchitelja, Baku, [History of Azerbaijan, fatherland, 5th grade, teacher's guide, Baku,] 2012. (In Russian)

THE CONCEPT OF THE HISTORY OF AZERBAIJAN (ACCORDING TO SCHOOL TEXTBOOKS)

ARMAN YEGHIAZARYAN

*Yerevan State University, Chair of the History of Armenia,
Editorial Board of Journal «Scientific Artsakh», Doctor of Sciences, Professor;
Yerevan, the Republic of Armenia*

ARA HOVHANNISYAN

*Yerevan State University, Chair of the History of Armenia,
Associate Professor; Ph.D. in History
Yerevan, the Republic of Armenia*

ARMINE CHIROYAN

*Yerevan State University, Chair of the History of Armenia, Ph.D. Student
Yerevan, the Republic of Armenia*

History textbooks are of great importance in the education of the younger generation, forming geographical, chronological and substantive knowledge about the homeland, people and its history. It is no coincidence that history textbooks in a number of countries, dictated by political conditions, also acquire ideological functions, trying to instill in the new generation ideas of an ideological and political nature in addition to historical knowledge and even instead of them, which often not only distort historical realities, but also form a hostile attitude towards other peoples.

The purpose of the article is to present the concept of the history of Azerbaijan on the basis of a critical analysis of Azerbaijani school history textbooks. The task was set to identify the main approaches of Azerbaijani authors to the issues of the "historical territory of Azerbaijanis", their origin and formation, as well as claims to the territory of neighboring peoples.

The work uses the historical-critical method. As part of the latter, an attempt was made to identify the consistent distortion of information from historical sources in Azerbaijani textbooks, and its motives, while highlighting both the true meaning of the

mentioned information and presenting new information demonstrating the falsifications of Azerbaijani authors.

The article reveals a lot of such falsifications, presents the contradictions caused by them in Azerbaijani textbooks, as well as their clearly anti-Armenian content.

Key words: *falsification of history, authors, school textbooks, people, nation, language, religion, historical territory, states contradictions, concept.*

КОНЦЕПЦИЯ ИСТОРИИ АЗЕРБАЙДЖАНА (ПО ШКОЛЬНЫМ УЧЕБНИКАМ)

АРМАН ЕГИАЗАРЯН

*профессор кафедры истории Армении Ереванского государственного университета, член редколлегии журнала «Научный Арцах»,
доктор исторических наук,
г. Ереван, Республика Армения*

АРА ОГАНЕСЯН

*доцент кафедры истории Армении Ереванского государственного университета, кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

АРМИНЕ ЧИРОЯН

*соискатель кафедры истории Армении
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Учебники истории имеют большое значение в воспитании подрастающего поколения, формируя географические, хронологические и предметные знания о родине, народе и его истории. Не случайно учебники истории в ряде стран, продиктованные политическими условиями, приобретают и идеологические функции, пытаясь привить новому поколению идеи идейно-политического характера в дополнение к историческим знаниям и даже вместо них, что зачастую не только искажает исторические реалии, но и формирует враждебное отношение к другим народам.

Цель статьи – представить концепцию истории Азербайджана на основе критического анализа азербайджанских школьных учебников по истории. Была поставлена задача выявить основные подходы азербайджанских авторов к вопросам «исторической территории азербайджанцев», их происхождения и формирования, а также притязаний на территории соседних народов.

В работе использован историко-критический метод. В рамках последнего была предпринята попытка выявить последовательное искажение сведений из исторических источников в азербайджанских учебниках и его мотивы, при этом выделив как истинный смысл упомянутых сведений, так и представив новые сведения, демонстрирующие фальсификации азербайджанских авторов.

В статье раскрывается множество таких фальсификаций, представлены противоречия, вызванные ими в азербайджанских учебниках, а также их явно антиармянское содержание.

Ключевые слова: *фальсификация истории, авторы, школьные учебники, народ, нация, язык, религия, государственные образования, историческая территория, противоречия концепция.*

ԱՐԱՐԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԵՄԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՒԱԴՐՈՒՄԸ*

ՀՏԴ 93/94:342.7

DOI: 10.52063/25792652-2022.4.15-40

ՇԱՔԵ ՄԵՆԿԵԶՅԱԼ

Երևանի պետական համալսարանի
Հայոց Պատմության ամբիոնի ասպիրանտ,
ք. Դուբայ, Արաբական Միացեալ Եմիրություններ
radioayk@gmail.com

Սոյն յօդուածի նպատակը Արաբական Միացեալ Եմիրութեանց (ԱՄԵ) Ազգային Փոքրամասնութիւններու եւ Զրիստոնեաներու համար նախատեսուած իրաւունքներն ու սահմանափակումները ուսումնասիրելն է:

Խնդիր դրուած է լուսաբանել ԱՄԵ-ի տարածքին առաջին հայերու ժամանումի, հոն գտնուելու մանրամասնութիւններու: Անդրադարձ կատարուեր է նաեւ ԱՄԵ-ի առաջին հայերու մասնագիտութիւններուն:

Աշխատութիւնը գրուած է օրէնսդրական, պատմական եւ վաւերագրական փաստերու համակցուած ուսումնասիրութեամբ:

Կատարուած պատմական ուսումնասիրութեան շնորհիւ կարելի է հաստատել, որ հայերու ներկայութիւնը այդ երկրի մէջ եղած է 13-րդ դարու սկիզբէն: Հայերը ԱՄԵ-ի մէջ հիմնադրած են բնակավայր եւ կոչած են այն Տուղա կամ Ճուլֆար: Այն այժմ կը գտնուի Ռաս Ալ Խայմա Եմիրութեան մէջ: Այդ պատմական իրողութիւնը կը հաստատէ Շարժայի Կառավարիչ Շէյխ դոկտոր Սուլթան Պին Սոհամմետ ալ-Բասիմի իր «Սարտ ալ-Չաթ» խորագրեալ գիրքին մէջ:

Հայ համայնքի ձեւաւորման եւ կազմակերպչական, պատմական քայլերը կը հաստատեն, որ անցնող չորս տասնամեակներ առաջ ԱՄԵ հասած հայութեան հիմնական հեռանկարը գլխաւորաբար եղած է հայապահպանումը եւ շնորհիւ տեղի հայութեան ճիգերուն այսօր ԱՄԵ-ի հայ համայնքը կը գոյատևէ իրենց կառուցած եւ հիմնադրուած եկեղեցիներով:

Հիմնաբառեր՝ ԱՄԵ, Պարսից ծոց, Թրուշըլ Սթէյթս, Ճուլֆար, Ռաս ալ Խայմա, Հիւսիսային Եմիրութիւն (Շարժա-Տուկայ), Ապու Տապի, Հանդուրժողականութիւն, Հայ Համայնք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արաբական Միացեալ Եմիրութիւններու (ԱՄԵ) հիմնադրումը

ԱՄԵ-ը կը գտնուի Արաբական թերակղզիի հարաւ-արեւելեան մասը: ԱՄԵ-ը հարաւէն եւ արեւմուտքէն սահմանակից է Սեուտական Արաբիային, հարաւ-արեւելքէն՝ Օմանին: Հիւսիսէն ԱՄԵ-ի ափերը կ'ողողեն Պարսից, իսկ արեւելքէն Օմանի եւ Պարսից ծոցերը:

Վաղ տարիներ: Արաբական Միացեալ Եմիրութիւնները (ԱՄԵ) ձեւաւորուած է Արաբական թերակղզիի վրայ (sheikhdoms) «շէյքոյմս» ցեղային շէյխութիւններու

* Հոդվածը ներկայացվել է 20.11.2022թ., գրախոսվել՝ 21.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

խումբէ, որոնք կը գտնուէին Պարսից ծոցի հարաւային եւ Օմանի ծոցի հիւսիս-արեւմտեան ափերու երկայնքին (Federal Research Division 1):

Պատմականօրէն այն տարածքը, որ այժմ Արաբական Միացեալ Եմիրութիւններն է, բրիտանացիներու կողմէ յայտնի էր որպէս «**Ծովահէններու Ափ**» (Albaharna 25), որովհետեւ Բրիտանական Արեւելեան Յնդկական ընկերութեան նաւերը ամէն առիթով կ'ենթարկուէին յարձակումի եւ թալանի քառասիւմի ցեղին կողմէ: «Քառասիւմ»-ը (Քասիւմ եզակի, Քառասիւմ յոգնակի) ծովագնացներու տոհմ էին, որ հիմնուած էր «Ռաս ալ-Խայմա» շրջանին մէջ: «Քառասիւմ»-ը «ալ-Պուսայիտ»-ներու գլխաւոր հակառակորդներն էին, որոնք հիմնուած էին Օմանի մէջ, եւ ովքեր Նոյնպէս կը ձգտէին իրենց վերահսկողութիւնը հաստատել Արաբիայի այս հատուածին վրայ:

Ափամերձ ցեղային շեխութիւնները յայտնի կը դառնան որպէս «Թրուշըլլ սթէյթս» կամ «Թրուշըլլ քօսթ» (Trucial States or Trucial Coast) եւ կամ որպէս «Թրուշըլլ Օման» (Trucial Oman), այսինքն՝ Պաշտպանուած պետութիւններ, Խաղաղ ափեր, Պաշտպանուած Օման անուանումով: Հետագային վերանուանուելով «Թրուշըլլ սթէյթս», այսինքն՝ Պաշտպանուած պետութիւններ, եւ այս եզրը գործածութեան մէջ մնաց մինչեւ Բրիտանիայէն անկախութիւնը՝ մինչեւ Արաբական Միացեալ Եմիրութիւններու ձեւաւորումը 1971 թուականի դեկտեմբերին (Crown Prince Court Emirate of Abu Dhabi 1):

Արտաքին գերատեսչութիւնը, որը կը կառավարէր Պաշտպանուած պետութիւններու յարաբերութիւնները միաժամանակ յանձնառու էր պաշտպանել «Թրուշըլլ սթէյթս» պետութիւնները: 1968 թուականի յունուարին Արտաքին գերատեսչութեան պետնախարար Կորոնուի Ռոպըրթսը շրջայց կը կատարէ Ծոցի մէջ տեղեկացնելու համար Պաշտպանուած պետութիւններու «Թրուշըլլ սթէյթս» ղեկավարներուն, որ **բրիտանացիները պիտի դադրեցնեն պաշտպանական պայմանագիրները** եւ դուրս պիտի բերեն իրենց ռազմական ներկայութիւնը մինչեւ 1971 թ. (Bradshaw, T. 122):

1971 թուականի Դեկտեմբեր 2-ին եօթ Եմիրութիւններէն վեցը (Ապու Տապի, Տուպայ, Շարժա, Աճման, Ֆուճէյրա եւ Ում ալ-Զուէյն) միաւորուեցան, իսկ Ռաս ալ-Խայմա Եմիրութիւնը դաշնութեան միացաւ **1972** թուականի փետրուար 10-ին¹: Այս նորաստեղծ դաշնային պետութիւնը պաշտօնապէս յայտնի դարձաւ որպէս *Տաուպաթ Էլ-Իմարաթ Էլ-Արապիա Էլ Մուլթախիտա* կամ Արաբական Միացեալ Եմիրութիւններ (ԱՄԷ): Ժամանակաւոր սահմանադրութիւնը, որ հիմնուած էր Պարսից ծոցի ինը պետութիւններու նախկին սահմանադրութեան նախագիծի փոփոխուած տարբերակին վրայ, պաշտօնապէս ընդունուեցաւ (UAE National Library and Archives):

Ազգային փոքրամասնութիւններու իրաւունքները ԱՄԷ-ի մէջ

ԱՄԷ-ի հայկական համայնքի իրաւունքներու ու կարգավիճակի տեսանկիւնէն յոյժ կարեւոր է երկրի սահմանադրութեան մէջ առկայ ազգային ու կրօնական փոքրամասնութիւններու նախատեսումները ուսումնասիրելը:

ԱՄԷ-ի սահմանադրութիւնը կը նշէ, որ **իսլամը երկրի պաշտօնական կրօնն է**: Այն կ'երաշխաւոր է պաշտամունքի ազատութիւնը այնքան ատեն, որ չի հակասէր հանրային քաղաքականութեանը կամ բարոյականութեանը: Այնուամենայնիւ, կան որոշ սահմանափակումներ (օրինակ՝ իսլամներու մէջ քրիստոնէութիւնը տարածելու փորձերը անթոյլատրելի են) (UAE 2021 International Religious Freedom Report1):

¹ The UAE consists of seven emirates and was founded on 2 December 1971 as a federation. Six of the seven emirates (Abu Dhabi, Dubai, Sharjah, Ajman, Umm Al Quwain and Fujairah) combined on that date. The seventh, Ras al Khaimah, joined the federation on 10 February 1972. https://en.wikipedia.org/wiki/History_of_the_United_Arab_Emirates

ԱՄԷ-ի սահմանադրութիւնը կը նշէ, որ բոլոր մարդիկ հաւասար են օրէնքի առջեւ եւ կ'արգիլէ **խտրականութիւնը** կրօնական համոզմունքներու հիման վրայ: Օրէնքը կ'արգիլէ հայիոյանքն ու դաւանափոխութիւնը ոչ իսլամներուն կողմէն (Office of International Religious Freedom, 2020 Report on International Religious Freedom: UAE 1), (CONSTITUE - United Arab Emirates of 1971, Article 25):

Կառավարութիւնը կը ճանչնայ քրիստոնէական դաւանանքներու, հողատարածքի արտօնութիւններ կամ թոյլտուութիւններ տալով եկեղեցիներ կառուցելու եւ շահագործելու միջոցաւ (Bureau of Democracy, Human Rights and Labor, International Religious Freedom Report for 2011 UAE Section II. Status of Government Respect for Religious Freedom 2, Government Practices 4-6):

(ԱՄԷ-ն կը թոյլատրէ կրօնի ազատութիւն տարբեր կրօններու բոլոր բնակիչներու եւ «expatriate» արտագաղթածներուն համար: Ինչպէս նաեւ տարբեր կրօններու, ազգութիւններու եւ դաւանանքներու համար՝ կրօնական ծեսերու եւ պաշտամունքի ազատութեան: Ինչպէս նաեւ իրենց սեփական պաշտամունքի վայրերու կառուցումն ու շահագործումը, ինչպիսիք են եկեղեցիները եւ մեծ տարածքներու մէջ պաշտամունքի համար վայրեր յատկացնելը: Նաեւ անվճար հողեր յատկացնել աղօթատեղիներու համար եւ իւրաքանչիւր էմիրութեան մէջ մեծ թիւով եկեղեցիներ յատկացնել, որպէսզի մարդիկ կարողանան ազատօրէն պաշտամունք կատարեն»):

ԱՄԷ-ի սահմանադրութեան յօդուած 14-ը կը սահմանէ, որ հաւասարութիւնը, հասարակական արդարութիւնը, անվտանգութիւնը եւ բոլոր քաղաքացիներու համար հաւասար հնարաւորութիւնները պէտք է ըլլան հասարակութեան հիմնասիւնները (CONSTITUTE - United Arab Emirates of 1971 (rev. 2009) Article 14):

Ոչ մահմետական կրօնական խումբերու ճանաչման եւ կարգաւորման համար Գլխաւոր մարմնի արտօնագրման կամ գրանցման պահանջներ չկան: Կառավարութիւնը կը հետեւի հանդուրժողականութեան քաղաքականութեանը ոչ մահմետական կրօնական խումբերու նկատմամբ եւ գործնականօրէն շատ քիչ կը միջամտէ անոնց կրօնական գործունէութեանը: Գործնականօրէն կառավարութիւնը կը ձգտի քաղաքացիներուն կրթել ծայրայեղական միտումներէն կամ գաղափարախօսութիւններէն խուսափելու համար (UAE 2021 International Religious Freedom Report, Executive Summary 2):

Ազգային փոքրամասնութիւնների իրաւունքներէն ելնելով՝ ԱՄԷի մէջ բոլոր փոքրամասնութիւնները ըստ իրենց կրօնքի անունով կը կոչուին եւ այս իմաստով, զոր օրինակ, Քրիստոնէական համայնք կամ ըստ ազգութեան, զոր օրինակ՝ հնդիկ համայնք Indian community: Հայ համայնքի մասին արաբական լրատուութեան մէջ կը նշուի որպէս քրիստոնէայ հայերը (مسيحيون أرمن)¹: Սակայն, հայ համայնքին պաշտօնական ճանաչում ապահովելու եւ կեդրոն ունենալու հարցը՝ երկրի ընձեռած օրէնքներու շրջագիծին մէջ արտօնագիրը, կը սահմանուի որպէս հայկական համայնքը հայկական եկեղեցու:

Քրիստոնէաներու համար նախատեսուած իրաւունքներն ու սահմանափակումները

Երկիրն ունի կաթոլիկ, արեւելեան եւ արեւելեան ուղղափառ ու բողոքական եկեղեցիներ (MEC – Middle East Concern – UAE):

ԱՄԷ-ի կառավարութիւնը լաւապէս տեղեակ է քրիստոնէական դաւանանքներու մասին: Քրիստոնէաները ազատ են աղօթելու եւ կրելու կրօնական զգեստ (Bureau of

¹ مسيحيون أرمن: نعيش على أرض المحبة والسلام (masihyoun arman: naeesh ala ard el-mahabbe wal-salam). Արաբերէն՝ (Հայ քրիստոնէաներ: Կապրիւք սիրոյ եւ խաղաղութեան հողի վրայ), <https://aztagarabic.com/archives/27178>, 19 մայիս 2019, (in Arabic).

Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom, UAE, Section II. Status of Religious Freedom):

Թեև քրիստոնեայ կանայք կարող են ազատորեն ամուսնանալ մահմետական տղամարդկանց հետ, սակայն մահմետական կանանց եւ ոչ մահմետական տղամարդկանց միջեւ ամուսնությունը արգիլուած է (Leeman, Alex B., Introduction 1), (UAE Information and services Social affairs, Marriage):

Թոյլատրուած է կրօնական նիւթերու ներմուծումը եւ վաճառքը, սակայն, մահմետականներու շրջանի մէջ քրիստոնեութիւն տարածելու փորձերն անթոյլատրելի են: Ըստ ոչ մահմետական կրօնական առաջնորդներու՝ մաքսային մարմինները հազուադէպ կասկածի տակ կը դնեն կրօնական նիւթը, ինչպէս՝ Աստուածաշունչն ու շարականը երկիր մուտք գործելը, բացառութեամբ այն դէպքերուն, երբ նիւթերը տպագրուել են արաբերէնով (Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom - UAE):

Կրօնական խումբերը բացահայտորեն կը գովազդեն կրօնական գործառնոյթները մամուլի մէջ, ինչպիսիք են տօնակատարութիւնները, յիշատակի տօն արարողութիւնները, կրօնական համաժողովները, երգչախմբային համերգները եւ դրամահաւաքի միջոցառումները (UAE 2021 International Religious Freedom Report, Government Practices 16, 20):

Իսլամէ դաւանափոխ լինելը անթոյլատրելի է (Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom - UAE): Հակառակ որ, 2015-ի ուսումնասիրութիւնը կը գնահատէ, որ **մօտաւորապէս 200 քրիստոնեայ հաւատացեալներ մահմետական ծագում ունին**, թեւ ոչ բոլորը պարտադիր ԱՄԷ-ի քաղաքացիներ են (Miller, Duane Alexander, Johnstone, Patrick. article 10): Նշենք, որ պետական դպրոցները չունին քրիստոնեական կրօնական կրթութիւն կամ դասապահեր:

Քրիստոնեական համայնքին հանդէպ իր գնահատելի աջակցութիւնը կը ցուցաբերէ իշխանութիւնը: Եմիրութիւններու ղեկավարները **անվճար հող կը նուիրաբերեն եկեղեցիներու կառուցման համար եւ կը հրաժարին ջուրի եւ ելեկտրականութեան ծախսերը գանձելէ**: Նորակառոյց եկեղեցիներու բացման արարողութիւններուն յաճախ ներկայ կ'ըլլան իշխանական ընտանիքներու անդամները: Չոր օրինակ՝ 2007 թ. դեկտեմբեր 25-ին Նախագահի կրօնական հարցերով խորհրդական ալ-Սայետ Ալի ալ-Հաշեմին կը մասնակցի Սուրբծննդեան Անգլիկան եկեղեցւոյ տօնակատարութիւններուն (Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom UAE, Section II. Status of Religious Freedom, Restrictions on Religious Freedom):

Կառավարութիւնը **թոյլ չի տար եկեղեցիներուն իրենց տարածքի** արտաքին մասին խաչեր տեղադրել կամ գանգակատան աշտարակներ կանգնեցնել (Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom UAE, Section II. Status of Religious Freedom, Restrictions on Religious Freedom): Այնուամենայնիւ, այս սահմանափակումը միշտ չէ, որ կը կիրառուի, եւ որոշ եկեղեցիներ իրենց շէնքերուն վրայ խաչաձեւ ձեւաւորումներ կը ցուցադրեն, ինչպէս՝ հինգ զարդարուած ոսկի խաչեր կան ռուս ուղղափառ եկեղեցւոյ երկնագոյն կապոյտ գմբէթներու վրայ, որ կառուցուած է 3000 հաւատացեալներու համար Տուպայի հիւսիսը գտնուող Շարժա Եմիրութեան մէջ (Russian Orthodox Church):

Երբեմն յատուկ առիթներու հաւատացեալներու խումներամ բազմութիւնը կը ստիպէ կարգ մը եկեղեցիներ պատարագները մատուցել եկեղեցւոյ կից բաց բակերուն մէջ:

Այնուամենայնիւ, եկեղեցական համալիրներներէն ներս կառավարութիւնը միջամտութիւն չի կատարեր: Եկեղեցիները կարող են ընդունիլ կրօնափոխները բոլոր կրօններէն, բացառութեամբ իսլամի, քանի որ կառավարութիւնը չի ճանչնար

կամ չի թողաորեր կրօնափոխութիւնը՝ իսլամ կրօնէն մէկ այլ կրօնի (2008 Report on International Religious Freedom - UAE):

Թէեւ քրիստոնէաները կը ներկայացնեն ոչ մահմետական բնակչութեան փոքրամասնութիւնը, անոնց ժամերգութեան եւ պաշտամունքին համար նախատեսուած յարմարութիւնները անելի շատ են, քան ոչ մահմետական համայնքներուն տրուած հնարաւորութիւններն, քանի որ իսլամը քրիստոնէաներուն կը համարէ «*people of the book*» (LEEMAN, ALEX B. 756) (Jews, Christians), այսինքն՝ «Գիրքի Մարդիկ» են Հրեաները եւ Քրիստոնէաները, հետեւաբար կառավարութիւնը բարեհաճօրէն կը վերաբերուի այդ պաշտամունքի ժողովներուն, երբ կը քննարկէ պաշտամունքի կառոյցներու համար տրամադրուելիք հողային յատկացումները:

Նոյնմբեր 2021-ի յայտարարուած Օրէնքի համաձայն՝ ոչ մահմետական զոյգերու ամուսնալուծութիւնը կարող է տրուիլ առաջին լուծման ժամանակ առանց «Ընտանիքի Առաջնորդութեան» բաժանմունքին ներկայանալու անհրաժեշտութեան, եւ բաժանուող զոյգերը այլեւ չեն պահանջուիր պարտադիր հաշտութեան նիստեր անցնել (Non-Muslim expats hail new family law, 16):

Օրէնքի համաձայն՝ երեխաներու ինսամակալութիւնը հաւասարապէս կը բաշխուի ծնողներու միջեւ երեխայի հոգեբանական առողջութիւնը պահպանելու եւ երեխայի վրայ ամուսնալուծութեան հետեւանքները նուազեցնելու համար (Non-Muslim expats hail new family law):

Խտրականութեան դէմ օրէնքը կը ներառէ կրօնական խտրականութեան արգելքները եւ կը քրեականացնէ այն գործողութիւնները, որոնք կառավարութիւնը կը մեկնաբանէ, որպէս կրօնական ատելութիւն հրահրող կամ կրօններուն վիրաւորող: Իսլամը վիրաւորողը կը տուգանուի 500,000 տիրիամով (136,000 տոլար): (UAE 2021 International Religious Freedom Report, 9):

Այսպիսով՝ ԱՄԷ-ը մի քանի առումներով դարձած է հանդուրժողականութիւնը մարմնաւորելու իւրօրինակ մոտել, որոնցմէ առաջինը պաշտամունքի վայրերու եւ մեծ տարածքներու յատկացումն է, եւ իւրաքանչիւր եմիրութեան մէջ մեծ թիւով եկեղեցիներ յատկացուած են, որպէսզի մարդիկ կարողանան ազատ պաշտամունք կատարել: Այսինքն՝ ԱՄԷ-ի մէջ հանդուրժողականութիւնը կարգախօս չէ, այլ իրականացուած գործողութիւններ, որ պետութիւնը լրջօրէն կը կատարէ եւ կը շրջանցէ զարգացած աշխարհի շատ մը երկիրներ:

Փաստօրէն, ԱՄԷ-ի սահմանադրութիւնը, թէեւ իսլամը երկրի հիմնական կրօն կը հռչակէ իսլամը, բայց բոլոր քաղաքացիներուն համար, անկախ կրօնէն ու ազգութիւնէն, հաւասարութեան սկզբունք կը դնէ: Եւ այս հիմքին տակ ազգային ու կրօնական փոքրամասնութիւնները կը ստանան որոշակի իրաւունքներ իրենց ներքին կեանքը վարելու համար:

Տեղեկութիւններ ԱՄԷ-ի տարածքին հայերու գտնուելու մասին

Միջին դարերուն հայերու տարածումը տարբեր երկիրներու մէջ մեծապէս նպաստեր է նաեւ այն, որ սկսած 15-րդ դարէն հայ վաճառականները Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ ընթացող առեւտուրի հիմնական կազմակերպիչներէն էին: Անոնց գործունէութեան շառաւիղը կ'երկարէր Հնդկաստանէն եւ Պարսկաստանէն մինչեւ Փորթուկալ եւ Ֆրանսա եւ այլն (Հայ Սփյուռք հանրագիտարան 7):

Բոլոր այդ վայրերուն մէջ վաճառականները հիմներ են վաճառականական ընկերութիւններ ու տուներ, որոնց հիման վրայ երբեմն ձեւաւորուէր են հայկական նոր համայնքներ:

16-17-րդ դարերուն Միջերկրական ծովին մէջ առեւտուրի զարգացումին զուգահեռ անելցեր է նաեւ **հայ նաւատերերուն թիւը**: Բնականաբար, հայերուն

պատկանող նաւերուն թիւը այնքան մեծ չէր, որ ամբողջովին բաւարարեր արտահանուող ապրանքներու փոխադրման մեծ պահանջը (Baibourtian5):

Վստահելի աղբիւրներէն յայտնի է, որ մինչ անգլիացիներուն Յնդկաստան գալը Յնդկաստանի ներքին եւ արտաքին առեւտուրի մէկ մասը կը գտնուէր հնդիկներու, **իրանահայերու** եւ ասիացի այլ վաճառականներու ձեռքը (Baibourtian 13):

Յնդկաստան տանող ծովային ճանապարհի յայտնաբերումէն անմիջապէս յետոյ ցամաքային առեւտուրի մեծ մասը տեղափոխուած է Պարսից ծոց, Կարմիր ծով եւ Յնդկական ովկիանոս, եւ այդ պատճառով Լեւանթի ասիական նաւահանգիստները եւ ցամաքային առեւտուրը, որ կը կատարուէր Մերձաւոր Արեւելքով, կը կորսնցնէ իր ունեցած նախկին կարեւորութիւնը, որուն հետեւեալքով Պարսից ծոցի կարեւորութիւնն ու նշանակութիւնը զգալիօրէն կը մեծնայ՝ որպէս Արեւելքն ու Արեւմուտքը կապող միջազգային առեւտրային ուղի:

Զաւիագանց լայն էին հայ խոճաներու ծովային առեւտուրի աշխարհագրական սահմանները: Անոնց, անշուշտ, կը հետաքրքրէր նաեւ Պարսից ծոցի աւազանի երկիրներու հարստութիւններն ու առեւտրական հնարաւորութիւնները: Այդ կողմերուն կային մեծ քանակութեամբ մարգարիտի, գորշ համփարի, գմրուխտի, կարմիր հակինթի, շափիւղայի եւ թանկարժեք այլ քարերու հանքեր: Տեղեկութիւններ կան, որ այդ հանքերը կապալով շահագործողներուն մէջ նաեւ եղեր են մեծ թիւով իրանահայեր (Բայբուրդյան 22):

Այսպիսով, Սպահան-Շիրագ-Լար-Պանտար Աբաս քարաւանային երթուղին կը դառնայ բանուկ առեւտրային ճանապարհ, որով երկրի կեդրոնական շրջանները կը կապուին **Պարսից ծոցին** հետ: Սպահանը եւ անոր արուարձանը՝ հայկական Նոր Ջուղա բնակավայրը, կը դառնայ Իրանի կարեւորագոյն միջազգային առեւտուրի կեդրոնը (Baibourtian 14): Ատոր կը նպաստեն նաեւ բազում հայկական գաղթավայրերը, որոնք կը գտնուէին տարանցիկ առեւտուրի կարեւորագոյն հանգրուաններու մէջ: Սիւեյնոյն ժամանակ, Իրանի հայ վաճառականները կը դառնան Պարսից ծոցի եւ Լեւանթի (արեւելեան երկիրներ) առեւտրային կեդրոններու միջեւ հիմնական կապը (Հովհաննիսյան56):

Փաստերը ցոյց կու տան, որ Իրանի հայ առեւտրականները Պարսից ծոցի եւ Արեւմտեան Յնդկական ովկիանոսի մէջ առեւտուր կատարելու համար մեծաւ մասամբ օգտագործէր են բրիտանական նաւատորմի ծառայութիւններէն, թեպէտեւ անոնք ունէին նաեւ իրենց նաւերը (Baibourtian 14):

Հետաքրքիր է, որ պետականութեան բացակայութեան եւ ազգային դրօշի չունենալու պատճառով **հայ նաւատերերը** ստեղծէր են իրենց կարմիր, դեղին եւ կարմիր գոյներով դրօշը, որու վրայ դրուագատապուած էր գառնուկը (Baibourtian 14):

Վերոյիշեալ համառօտ պատմութիւնը գրելու նպատակը այն է, որ բաւարար թուականներով, վիճակագրութիւններով ու տեղակագրական եւ պատմական ծանօթագրութիւններով ունենանք ԱՄԷ-ի տարածքին հայերու գտնուելու մասին:

Ջուղայի (Ճուլֆար) եւ Ռաս ալ-Խայմա Եմիրութեան միջեւ կապը: Ռաս ալ-Խայմա (արաբերէն կը նշանակէ «Վրանի գագաթ կամ գլուխ»)՝ կը գտնուի ԱՄԷ -ի հիւսիսային մասին մէջ՝ սահմանակից Օմանի Մուսանտամ արտագաւառին՝ Շարժայի ծայրամասը, **պատմականօրէն յայտնի էր, որպէս ճուլֆար (Ջուլֆա-Ջուղա)**, որ **հայկական անուն է եւ հիմնադրուէր է 13-րդ դարու սկիզբը հայերու կողմէ**, որոնք փախուստ տուած էին Պարսկաստանէն մոնղոլներու արշաւանքի ժամանակ (The city of Ras al-Khaimah was founded by Armenians):

«Ճուլֆար» անունն ալ փոխարինուած Սպահանի Ճուլֆար (Ջուլֆա) անունէն: Այս մասին Շարժայի Եմիրութեան Կառավարիչ դոկտոր Սուլթան Պին Մոհամմետ ալ-Զասիմի նշած է իր «Սարտ Էլ-Չաթ» (سرد الذات) խորագրեալ գիրքին մէջ: Ան նաեւ կրթական մարմիններուն խնդրած է համապատասխանաբար փոխել դասագիրքերը

(The city of Ras al-Khaimah was founded by Armenians): Յայտարարութիւնը հրապարակուել է անոր անձնական կայքէջի մէջ (արաբերէն): Այստեղ, կը մեջբերեն թարգմանութիւնը.

«Դպրոցական գիրքերու մէջ տեղեկութիւններու ուղղումի խնդրանք»:

«ԱՄԷ Գերագոյն խորհուրդի անդամ եւ Շարժայի էմիրութեանց կառավարիչ Նորին վսեմութիւն Սուլթան պըն Մուհամմատ ալ-Քասիմին հաստատած է, որ Շարժայի, Ումմ ալ-Քուէյնի եւ Ռաս ալ-Խայմայի անունները նշուած են Պտղոմիոսի քարտէսներուն եւ գիրքին մէջ, ինչ որ ցոյց կու տայ, որ կասկած կայ, թէ արդե՞՞ք այդ անունները սկզբնապէս յիշատակուած են գիրքին մէջ, թէ՞ ավելցուցուած են Ապպասեան ժամանակաշրջանին Պտղոմիոսի գիրքին արաբերէնի թարգմանութենէն ետք»:

«Ան ըսած է, որ պրպտումներ եւ ուսումնասիրութիւններ կատարած է Պտղոմիոսի քարտէսներու առնչութեամբ եւ պարզած է, որ Արաբական թերակղզին խաչի եւ կիսալուսինի տեսք ունի, այդ մէկը կը վկայէ, որ այդ մէկը իրականացած է իսլամական ժամանակաշրջանէն առաջ»:

«Նորին վսեմութիւնը, ճուլֆարի վերաբերեալ իր տուած գրոյցի ընթացքին երեկ Շարժայի ռատիոյի եւ հեռուստատեսութեան իր ուղիղ հեռարձակման ծրագրի հետ ըսած է՝ «1959 թուականին ես Սպահան այցելեցի եւ տեսայ Սպահանն ու ճուլֆարը (Զուլա) միացնող քանի մը կամուրջներ եւ մեծ եկեղեցի մը, եւ ոսկեայ գմբէթ մը, եւ մոնոլիթական ցեղերէն մէկը այդ տարածքը գրաւած է Իրանի մէջ, որու հետեւանքով հայ քրիստոնէաները մոնոլիթներէն փախուստ կու տան՝ Պարսկաստանէն կը փախին դէպի ճուլֆար կոչուող վայրը, որ այժմ կը գտնուի Ռաս ալ-Խայմայի մէջ եւ որ հիմնադրուած է հայերու կողմէն»:

«Նորին վսեմութիւնը ավելցուցած է. «Ռաս ալ-Խայմայ-ի մէջ կայ տարածք մը, որ կը կոչուի «Աւազաթումբեր» (սէնտ տիունգ), որը պատմական կամ հին ճուլֆարն է, որ կը գտնուի «Ալ Մուայրիտ»ի եւ «Ալմաթաֆ»ի միջեւ, այս մէկը նշած եմ «Սարտ ալ-Չաթ» (سرد الذات) (Sard Al That) գիրքին մէջ (Սարտ ալ-Չաթ) գիրքը, 2009, 22): <https://sheikhdrsultan.ae/Portal/en/official-positions/historical-works.aspx#page=4>, եւ ճուլֆար անունը փոխարինուած է Սպահանի ճուլֆար անունէն, որ կը գտնուէր 14-րդ դարէն առաջ Սպահանի «Չայենտերուտ» կոչուող գետին վրայ»:

«Նորին վսեմութիւնը հաստատած է, որ ճուլֆար անունը արաբական անուն չէ այլ հայկական անուն է: Ան ավելցուցած է՝ «1947-ին, մ.թ. (մեր թուականին), երբ Շեյխ Սուլթան պին Սալէմ կառավարիչը, Աստուած ողորմի հոգւոյն, որ կը կառավարէր Ռաս ալ-Խայման, սաստիկ փոթորիկ մը կը հարուածէ այդ տարածքը եւ ի յայտ կու գան ավազաթումբերու մակերեսներուն տակ կառուցուած տունները, եւ մարդիկ կը խուժեն այնտեղ՝ ոսկի եւ հագուստ վերցնելու»:

«Ան շարունակելով ըսած է՝ «Շեյխ Սաքր պին Սոհամմատ ալ-Քասիմիի պաշտօնավարման ժամանակ իրաքեան պեղումներու առաքելութիւնը եկաւ պեղումներ կատարելու «Միլէյիայ»ի եւ «ճուլֆար»ի մէջ, արտահանուեցան որոշ յուշարձաններ, որոշուեցաւ այդ յուշարձաններու տարիքը եւ հաստատեցին որեւէ եկեղեցիներու հետք չկայ, բայց գտած են մզկիթներու վերաբերող հետքեր»:

«Ան ավելցուցեր է ըսելով՝ «Երբ Զորմուզները հասան Ճարուն կղզի (Ճարուն անունով կը կոչուէր իսլամ շրջանին, անգլերէն՝ Ժարուն), որ ներկայիս Զորմուզի միջանցքն է, անոնք նուաճեցին «ճուլֆար»ը, ծովափը եւ «Պահրէյն»ը, եւ իրենց համար պետութիւն հիմնեցին: Անոնք կը պատկանին Մուհամմետ Ալտերմաքիի տոհմին եւ անոնք ծագումով պելուշ արաբներն են»:

Փաստօրէն, հայերը թէեւ հիմնադրած են վայրը եւ կոչած են (Զուլա) ճուլֆար հայկական անունով, որ այժմ կը գտնուի Ռաս ալ-Խայմայի մէջ, բայց իրենց տուններէն ներս քրիստոնէական յուշարձաններ չեն եղած եւ կամ սրբատեղիներ կառուցած չեն: Այնուամենայնիւ, հայու անունը պատմութեան մէջ կը յիշատակուի Պարսից ծոցի եւ ԱՄԷ էմիրութեանց մէջ:

Հայ համայնքի ձևավորումը ԱՄԷ-ի մեջ

Ծոցի երկիրներուն մեջ հայկական համայնքներու ձևավորումը սկսած է Ի Դարու երկրորդ կեսին: 1950-ական թուականներուն, երբ կը սկսի քարիւղի արդիւնաբերութիւնը, հատուկէնտ հայեր կ'աշխատին քարիւղի ընկերութիւններուն մէջ:

Շարժա-Տուպայի մեջ հաստատուած առաջին հայերը ու հայ համայնքի ձևավորումը սկիզբ առած են սփիւռքի եւ յատկապէս միջին արեւելքի գաղթածախներէն՝ Սուրիա, Լիբանան, Իրան, Իրաք, ինչպէս նաեւ Ռումանիա, եւ ընդհանրապէս արական սեռի պատկանող անհատներու՝ ամուրի երիտասարդ տարրեր աշխատանքի որոնելու բերումով:

Տեղին է նշել, որ 1940-ին Շարժայի մեջ «Արքայական Օդուժը» կը հիմնէ իր բազան՝ զօրանցը, որ այժմ Սուրբ Մարթին եկեղեցւոյ տարածքն է: Զօրանցի բազայի մէկ մասին մեջ կառուցուած էր աղօթավայր-եկեղեցի մը բողոքական ու կաթոլիկ օդուժի զինուորներու համար, եւ կար նաեւ գերեզմանատուն մը, ուր թաղուած էր 17 տարեկան առաջին հայը՝ իրաքահայ Սիմոնի (անգլիացիներուն մօտ Սայմըն անունով ճանչցուած) որդին, որ իր ընտանիքին հետ կը ծառայէր այդ զօրանցին մէջ: 1971-ին ամբողջովին կը քանդուի «Արքայական Օդուժը» բազան՝ զօրանցը, եւ որուն հետեւանքով ալ թաղուած երիտասարդին հետքն անգամ չկայ:

Այդ թուականներէն ի վեր եւ մինչեւ օրս հայերը, չունենալով իրենց սեփական գերեզմանատունը, կը թաղուին Շարժայի, Տուպայի, ալ-Այնի եւ Ապու Տապիի քրիստոնեաներու գերեզմանատան մէջ:

1960ական թուականներուն Իրանէն, Սուրիայէն, Լիբանանէն եւ անլիք քիչ թիւով Յորդանանէն ու Իրաքէն հայ երիտասարդներ գործի բերումով կը հաստատուին Շարժա-Տուպայի մէջ. ընդհանուր 7-10 հայ ընտանիք կ'ապրէր 1960-ականներու աւարտին: Երկրի բնիկ արաբ ժողովուրդը եւ այլ ազգի բնակիչները գրեթէ չէին զիտեր հայերու մասին: Սակայն, մեծ թիւով կային Սուրիացի, Պաղեստինցի, Լիբանանցի արաբներ, որոնք ծանօթ էին հայուն աշխատասիրութեան, վարպետ արհեստաւորի, պատուաւոր մարդու համբաւին: Միջնորդի դեր ունեցած են հայերը ծանօթացնելու տեղացի արաբին, որ շուտով հայը կը ճանչնար միեւնոյն այդ յատկանիշներով: Այսպիսով, **1960**-ական թուականներուն արդէն հայ-արաբական բարեկամութեան շրջագիծը կ'ընդարձակուի՝ ընդգրկելով Արաբական Միացեալ Եմիրութիւնները, յատկապէս Շարժան ու Տուպայը:

1960-ականներուն հաւաքական կեանք չկար, բայց հայերը զիրար փնտռած ու գործի դժուարութեան պարագային իրարու ձեռք մեկնած են: Արհեստաւոր հայ երիտասարդ տղոց հաւաքավայր մըն էր Տուպայի պարսկական ճաշարանը, իսկ Կիրակի օրերուն հայերը իրենց հոգեւոր սնունդին համար ներկայ կը գտնուէին կաթոլիկ հնդիկներուն եկեղեցական արարողութիւններուն:

Այդ տասնամեակին, երբ տակաւին հայկական կազմակերպուած կեանք գոյութիւն չունէր, եւ տրուած ըլլալով, որ մշակութային միջավայրը արաբական էր, հայերը ոչ միայն օտարութիւն չեն զգացած այս նոր երկրին մէջ, այլ եւ անձնական բարեկամութիւն հաստատած են տեղացի շէյխերուն հետ շնորհիւ իրենց աշխատասիրութեան եւ արդար աշխատանքի, ձեռներեցութեան՝ դառնալով նոյնիսկ Եմիրութեան օրուան շէյխին լուսանկարիչը:

1970-ական թուականներու կիսուն մօտաւորապէս 100 հայեր կ'ապրէին Շարժա-Տուպայի եւ Ապու Տապի մէջ:

Դեկտ. 1971-ին կը կազմուի ԱՄԷ: Երկիրը կ'անկախանայ ու կը դառնայ ինքնիշխան: Տնտեսապէս արագօրէն կը սկսի բարգաւաճիլ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմը, Իրանի յեղափոխութիւնը, Ծոցի երկիրներուն մէջ հինգ տարի աշխատելու պայմանով զինուորական ծառայութեան փոխարէն դրամական ճշդուած փոխարժէք վճարելու՝ սուրիական կառավարութեան

օրէնքը, քարիւղի պաշարով հարուստ, գործի լայն կարելիութիւններ ընձեռող ԱՄԷ կը բերէն մեծ թիւով հայեր (Արաբական Միացեալ Եմիրութեանց հայ գաղութի պատմութիւն):

Նորեկները՝ ընդհանրապէս բոլորն ալ երիտասարդներ եւ ուսեալ, որոշ տարր մըն ալ ունենալով իրենց մէջ, իրենց ինքնութիւնը պահպանելու զօրաւոր բնագրով ծննդավայր հայահոծ գաղութներէն իրենց հետ կը բերեն կազմակերպուելու եւ հաւաքական կեանքով ապրելու ավանդութիւններ, ոմանք միութենական աշխատանքի անձնական որոշ փորձառութիւն եւ, կամայ թէ ակամայ, ազդեցութիւնը **1970-ական թուականներուն համազգային զարթօնքի ու Հայ Դատի պայքարով պայմանաւորուած համահայկական միասնականութեան մթնոլորտին: Այս դրական տուեալները կը նպաստեն, որ գաղութը կազմաւորուի ու կազմակերպուի առանց հատուածական բաժանումներու տեղի տալու: Այս մէկը իւրայատուկ օրինակ մըն է Սփիւռքի գաղութներու պատմութեան մէջ¹:**

1975-1980 տարիներուն Լիբանանէն, Իրանէն եւ Սուրիայէն տեղի կ'ունենայ հայերու առաջին մեծաթիւ ներհոսքը եւ անոնց թիւը կը հասնի շուրջ 500-ի:

Հիւսիսային Եմիրութեանց (Շարժա,Տուպայ, Աճման, Ում Էլ-Քուէյն, Ռաս Էլ-Խայմա, Ֆուճէյրա) մէջ, ինչպէս անցեալին, ներկայիս ալ հայերը կեդրոնացած են եւ մեծ թիւ կը կազմեն միայն Շարժա-Տուպայի մէջ: Այս երկու Եմիրութիւններէն դուրս, միւսներուն մէջ հայ ընտանիքներուն պատկերը հետեւեալն է. Աճման՝ 3-4 ընտանիք, Ում Էլ Քուէյն՝ 1-2 ընտանիք, Ռաս Էլ Խայմա՝ 4-5 ընտանիք: ԱՄԷ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Արամ Բհայ. Տէյիրմէնճեան ընդհանրապէս տօնական առիթներով կ'այցելէ «Ռաս Էլ Խայմա» եւ տնօրինեք կը կատարէ:

Հայերը թեւ կեդրոնացած են Շարժայի եւ Տուպայի մէջ, բայց համախումբ չեն ապրիր: Անոնց բնակարանները ցրուած են լայն տարածութեան վրայ: Ներկայիս միայն հինգ շէնքի մէջ երեքական հայ ընտանիք կ'ապրի:

Վերջին տարիներուն արագ թափով կ'անելնայ հայերուն թիւը Տուպայի մէջ: Այս մէկը պայմանաւորուած է այդ Եմիրութեան կեանքի գերարդիականացումով: **25 տարի առաջ** հայերուն երեք քառորդը կը բնակէր Շարժայի մէջ: Ներկայիս իրականութիւնը նոյնը չէ: Յատկապէս վերջին 15 տարիներուն փոխուած է պատկերը: Հայաստանէն եւ Միջին Արեւելքի գաղութներէն տեղի ունեցած է հայերու երկու նոր հոսք: Հայաստանէն եկողները երկու խումբի են, անոնք, որոնք ընտանիքով կու գան ու կը հաստատուին երկար ժամանակի համար, եւ անոնք, որոնք գործարարներ են եւ կարճատեւ մը մնալէ ետք կը վերադառնան Հայաստան: **Վերջին տարիներուն Լիբանանէն եւ Սուրիայէն եկած մասնագէտ երիտասարդ մարդուծը ընդհանրապէս գործի կ'անցնի արդիական արհեստագիտութեան,** յատկապէս զանգուածային լրատուամիջոցներու (մաս մետիայի) ասպարեզներուն մէջ: Շատ քիչ թիւով կան նաեւ Միջին Արեւելքի ծագումով եւրոպայի քաղաքացի, գանատացի, ամերիկացի պաշտօնէյի հայ երիտասարդներ տարբեր մարզերու մէջ: Այսպիսիներուն թիւը շատ քիչ է եւ կը մնան շատ կարճատեւ մը: Կու գան պայմանագրութեամբ եւ ժամանակը վերջանալէ ետք, կը վերադառնան (Հարութոյնլյան եւ Փաշայան 38):

Շարժա-Տուպայի մէջ հաստատուած առաջին հայերու մասնագիտութիւնը եղած է տարբեր ուղղութիւններով: Տի.Փի.Սի. («Տուպայ փեթրոլիւմ քըմբէնի»), Տի.Սի.Սի. («Տուպայ քոնթրաքթինք քըմբէնի») եւ «Մատըրքաթ» ընկերութիւններուն մէջ՝ իբրեւ երկրաչափ, ատաղձագործ,

¹ Մանկասարեան Շ., Չրոյց - Գաղութը կազմաւորումի մասին: Նախկին ԱՄԷ Ազգ. վարչութեան ատենապետ Նշան Պասմաճեանի հետ: Սա հեռախօսային զրոյց է:

2.Մանկասարեան Շ., Չրոյց - «Ռաս Էլ Խայմա» եւ տնօրինեքի մասին: ԱՄԷ Հիւսիսային Եմիրութեանց հոգեւոր հովիւ Արժ. Արամ Բհահանայ Տէյիրմէնճեանի հետ: Սա հեռախօսային զրոյց է:

երկաթագործ վերակացու եւ տնօրէն: Օրինակի համար, Տի.Սի.Սի. ընկերութեան տնօրէնը Ռումանահայ Էր: **1962-ին** «Մատըրքաթ»-ի մէջ աշխատող հայ աստղծագործներէն մէկը Թաւրիզէն Էր (Հարությունայան և Փաշայան 24-25):

Արիեստագործութեան ասպարեզին մէջ եղած են արիեստաւորներ՝ ինքնաշարժ նորոգող, ինքնաշարժի ներկարար, լուսանկարիչ, կապալառու, սափրիչ եւ այլն: Անոնց թիւը մեծ չէր. հազիւ 20-30 հոգի էին:

Նշենք ըստ մասնագիտութիւններու հայ գործատերերուն, որոնք հիմնած են իրենց սեփական ընկերութիւնները, օրինակ՝ Գործատեր Լիբանանահայ Փիեռ Լեւոն Զեօւեանը **1965-ին** կը հիմնէ իր սեփական «Փոլիմար» ընկերութիւնը: Այդ տարիներուն կը շահի Շարժայի շէյխերուն բարեկամութիւնն ու վստահութիւնը: Անոնք իրեն կը նուիրեն մեծ հողակտոր մը, որուն վրայ կը կառուցէ իր առաջին գործատեղին: Այսօր՝ 58 տարիներ անց, կանգուն է եւ հանգուցեայի որդին՝ բարերար Արա Փիեռ Զեօւեանը:

Բազմաազգագրական դիմագիծ ունեցող երկրին մէջ 1970-ականներու կեսերուն հայկական շրջապատին մէջ հանրածանօթ անուններն էին Շարժայի դրամատան հիմնադիր տնօրէն (այժմ հանգուցեայ) ԱՄԷ Ազգային Վարչութեան Ատենապետ անդամ Տիգրան Թաշճեան, իրանահայ (այժմ հանգուցեայ) բժիշկ Ռաֆֆի ու Սաթիկ Գամբուրեաններու ընտանիքը (Սաթիկ Գամբուրեան ներկայիս Երեւանաբնակ):

Մամուլին մէջ աշխատող առաջին հայերը (այժմ հանգուցեայներ՝ Շաւարշ եւ Կարպիս Պաղտոյեան եղբայրներ): Դամասկահայ-սուրիահայ Շաւարշ Պաղտոյեան 1971-ին լուսանկարչական խանութը կը բանայ Շարժայի մէջ:

Իրանահայ երկաթագործ Հայկազ Թամրազեան Շարժայի մէջ հիմնած է «Երեւան Սթիլ» անունով ընկերութիւնը **1976-ին**, որ միւսչէւ օրերս բանուկ է:

Լիբանանահայ երկաթագործ Ճոն Վահանեան **1976-ին** հիմնած է «Ճոնսոնքօ» անունով իր ընկերութիւնը, որ 40 տարի է ի վեր կը գործէ¹:

Շաւարշ Պաղտոյեան ծառայած է հայկական միօրեայ վարժարանին մէջ՝ որպէս երաժշտութեան դասատու (1980-1981 թթ.):

Կարպիս Պաղտոյեան, որ ժամանակ մը եղած է Սուրիոյ նախագահ Հաֆէզ ալ-Ասատի լուսանկարիչը, Շարժայի մէջ 1981-1989 տարիներուն եղած է «ալ-Պայան», ապա «Կալֆ կիւլ» թերթերուն լուսանկարիչը:

ԱՄԷ-ի մէջ հայկական մնայուն հայ համայնքի ձեւաւորման մասին կը խօսի այն իրողութիւնը, որ Ապու Տապիի եւ Տուպայի քրիստոնեաներու գերեզմանատուներուն 1973 թուականէն սկսած հայ հոգեւորականներու կողմէ կատարուած են հայ ննջեցեայներու պարբերական թաղումներ՝ 42 հայ ննջեցեայներու գերեզմաններ (Մանկասարեան Շ., Չրոյց):

Արաբական ծոցի երկիրներու **2000 թուականի տուեայներով** Տուպայի մէջ միայն կ'ապրէին շատ մը հայաստանցի հայեր: Անոնք ազգային կեանքի մէջ գրեթէ ներկայ չեն: Ազգային վարչութիւնը աշխատանք կը տանի, որ զանոնք ներգրաւէ ազգային-եկեղեցական կեանքին մէջ (Մանկասարեան Շ., Չրոյց):

Յամենայն դէպս, 2009-2011 թուականներուն Էմիրութեանց մէջ ապրող հայերու թիւը չորս հազարէն անելի է եւ, վերոյիշեալէն զատ, կը խօսուի շուրջ 2000 (երկու հազար) հայաստանցիներու մասին, որոնք կ'ապրին Շարժայի եւ կամ յատկապէս Տուպայի մէջ: Անոնք, հազուադէպ բացառութեամբ, կապ չեն պահեր հայ համայնքին հետ²:

¹ Վահանեան, Ճոն սեփականատեր-հիմնադիր տնօրէն, Կայքէջի յղումը՝ <https://johnsoncogroup.com/index.php> հաստատութեան (Անգլերէն):

² Կորին Արք. Պապեանի հետ՝ Բուէլթի մէջ իր ինը տարուան (2002-2011) նուիրական աշխատանքին մասին, Վանայ ձայն»-ի հարցազրոյցը, <https://archive.aztagdaily.com/archives/50922>, Ազդակ Օրաթերթ, գաղութային, 3 փետրուար 2012:

Այսօր, ԱՄԷ մեջ ապրող հայերու ընդհանուր թիվը մօտաւոր հաշուարկներով կը գնահատուի 9000-10000:

Ապու Տապիի մեջ հաստատուած առաջին հայերը տասնեակ տարիներու ընթացքին, հայ երիտասարդներ եւ ընտանիքներ իրենց գործերուն բարելաման հետամուտ, ժամանեցին Ապու Տապի (Ապու Տապիի հայ գաղութի մասին) եւ հակառակ պանդուխտութեան եւ հայկական ակադեմիական միջավայրի չզոյութեան, անոնք յանձն առին ամէն տեսակի զոհողութիւն՝ բարեկեցիկ կեանք մը ապահովելու հեռանկարով: Ի տարբերութիւն այլ երկիրներու, ԱՄԷ եկողները բոլորն ալ նպատակ ունէին քանի մը տարի աշխատելէ ետք վերադառնալ իրենց ծննդավայրը: Շնորհիւ այս հիւրընկալ երկրի բարենպաստ պայմաններուն եւ այդ օրերուն նախագահ (այժմ հանգուցեալ) Շէյխ Չայետ պին Սուլթան ալ-Նահիանին՝ Ապու Տապի ժամանակաւոր կերպով եկող հայերը մնացին իրենց ակնկալածէն անելի երկար ժամանակ, ինչ որ մեծ յաջողութիւն արձանագրեց եւ հիմքը դրաւ Ապու Տապիի հայ գաղութին:

1976-ին խումբ մը երիտասարդներ արդէն ստեղծած էին գաղութային կեանքի կորիզ մը **Ապու Տապիի մեջ՝** բաղկացած յանձինս Ճարտարապետ Պերճ Աբրահամեանի, Զրաչ Արզումանեանի, Ապու Տապիի Կիրակնօրեայ դպրոցի տեսուչ-հիմնադիր՝ Վարդան Ինկիլիզեանի, Ճարտարապետ Կարօ Սատրգճեանի եւ երկրաչափ Գրիգոր Ճերեճեանի (Ապու Տապիի հայ գաղութի մասին):

Հակառակ անոր, որ **ԱՄԷ քաղաքացիութիւն ստանալ կարելի չէ**, ԱՄԷ-ի հայերը պետութեան կողմէն կը համարուին որպէս Հայկական եկեղեցի-**հայկական համայնքի** (ալ-Քնիսէ ալ-Արմէնիէ լիւ-ճելիէ ալ-Էրմէնիէ – الكنيسة الارمنية للجالية الارمنية արաբերէնի բառացի թարգմանութիւնը) անդամ: Գործելով պատմական ազգային սահմանադրութեան ծիրէն ներս՝ ԱՄԷ համայնքը ներկայացուած է եւ կը ղեկավարուի հոգեւոր-կրօնական իշխանութեան կողմէն, որը նաեւ պետութեան մօտ համայնքի ներկայացուցիչն է (Արաբական Միացեալ Էմիրութիւններ):

ԱՄԷ-ի սահմանադրութիւնը կը նշէ, որ **իսլամը երկրի պաշտօնական կրօնն է**: Այն կ'երաշխաւոր է պաշտամունքի ազատութիւնը այնքան ստեն, որ չի հակասեր հանրային քաղաքականութեանը կամ բարոյականութեանը: Այնուամենայնիւ, կան որոշ սահմանափակումներ (օրինակ՝ իսլամներու մեջ քրիստոնէութիւնը տարածելու փորձերը անթոյլատրելի են) (2020 Report on International Religious Freedom: UAE, Executive Summary):

ԱՄԷ-ի սահմանադրութիւնը կը նշէ, որ բոլոր մարդիկ հաւասար են օրէնքի առաջ եւ կ'արգիլէ **խտրականութիւնը** կրօնական համոզմունքներու հիման վրայ: Օրէնքը կ'արգիլէ հայիոյանքն ու դաւանափոխութիւնը ոչ իսլամներուն կողմէն:

Եզրակացուքիւն

Կատարուած ուսումնասիրութեան արդիւնքներու հիման վրայ կարելի է հաստատել, որ Արաբական Միացեալ Էմիրութիւններու (ԱՄԷ)-ի Ազգային փոքրամասնութիւններու իրաւունքներու հիման վրայ եւ ըստ ԱՄԷ-ի սահմանադրութեան ԱՄԷ-ի մեջ գործեն օրէնքներ, որոնց նպատակն է արգիլել խտրականութիւնն ու ատելութիւնը, որոնք կարող են արտայայտուիլ ըստ դասակարգերու, ցեղային, կրօնական կամ էթնիկական ծագման հիման վրայ: Աւելին, օրէնքներ կան նաեւ, որոնք կը պաշտպանեն կանանց իրաւունքները եւ հաւասար վարձատրութիւնը:

ԱՄԷ սահմանադրութիւնը կը պաշտպանէ քաղաքացիական ազատութիւնները՝ ներառեալ խօսքի եւ մամուլի ազատութիւնը, խաղաղ հաւաքներն ու միաւորումները, ինչպէս նաեւ կրօնական համոզմունքներու կիրառումը:

Հարկ է նշել, որ այս բոլոր ազատութիւններու կողքին կան նաեւ սահմանափակումներ, զոր օրինակ՝ կ'արգիլէ քրիստոնէայ անհատի ամուսնութիւնը իսլամ կնոջ հետ, սակայն կ'ողջունէ իսլամ դաւանանք ընդունող անհատը (LEEMAN,

ALEX B. 756): Խօսքի ազատության սահմանումին մեջ ամենօրեայ պետական կամ այլ դպրոցներու մեջ արգիլուած է քրիստոնեական կրօնի դասաւանդումը: Ի վերջոյ, ԱՄԷ Իսլամ երկիր է: Այսուհանդերձ, ԱՄԷ-ն հանդուրժողականութեան, խաղաղութեան, անվտանգութեան եւ բազմամշակութայնութեան արժեքներու օրինակելի միջավայր է:

Պատմութիւնը ցոյց կու տայ, որ 16-րդ դարու սկիզբէն հայերը գործի բերումով բնակած են Ծոցի երկիրներուն մէջ, հայ վաճառականներ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ տեղի ունեցած առեւտուրի հիմնական կազմակերպիչներն էին: ԱՄԷ-ի գաղութի պատմական տուեալներով՝ դէպի Արաբական Միացեալ Էմիրութիւններ մեծաթիւ գաղթը սկսած է 1975-էն:

Անցեալին այդքան դիւրին չէ եղած աշխատիլ եւ ապրիլ տաք եւ խոնավ անապատին մէջ, սակայն երկրին տնտեսական կայուն վիճակը, ազատ մթնոլորտը եւ միջազգային ներդրումները ապահոված են գործի անվտանգութիւն եւ հետեւաբար աւելի հանգիստ կենցաղային պայմաններ: Այնուամենայնիւ, հայերու հոսքը դէպի Էմիրութիւններ աւելցած է տարուէ տարի:

1974-1980-ին կայք հաստատած հայ համայնքի ձեւաւորման ու կազմակերպչական կեանքին մէջ գործօս դեր ունեցած են հայ երիտասարդները, որոնք, հայապահպանումի մտահոգութիւնը իբրեւ առաքելութիւն նկատելով, համայնքը կազմակերպելու գործնական քայլեր ստանձնած են: Հայերը, ինչպէս անցեալին, այսօր ալ կեդրոնացած են Շարժա-Տուկայ Էմիրութիւններուն մէջ:

Հայ համայնքը բացառութիւն կը կազմէ բաղդատելով այլ քրիստոնիայ համայնքներու հետ, որոնց մեծ մասը իրենց ծառայութիւնները կը մատուցէ այլ համայնքներու եկեղեցապատկան շէնքերու մէջ: ԱՄԷ-ի հայ գաղութի հիմնադրման թուական ընդունուած է 1980 թուականը: 42 տարիներ բոլորած ԱՄԷ համայնքը համեմատաբար փոքր քրիստոնեական համայնք է՝ մօտաւոր հաշուարկներով իր տասը հազար անդամներով, որոնք ժամանած են սփիւռքի գանազան երկիրներէն, ինչպէս նաեւ Հայաստանէն: Հայութիւնը հիմնած է երկու եկեղեցի՝ մէկը Ապու Տապի Էմիրութեան մէջ, իսկ միւսը՝ Շարժա Էմիրութեան մէջ:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Ապու Տապիի հայ գաղութի մասին - Համառօտ ակնարկ, Կարգ Օծման Սրբոց Նահատակաց եկեղեցոյ, Ապու Տապի, 12 դեկտեմբեր 2014, էջ 8:
2. Արաբական Միացեալ Էմիրութիւններ, <http://diaspora.gov.am/hy/pages/41/uae>:
3. Արաբական Միացեալ Էմիրութեանց Հայ գաղութի պատմութիւն, <https://emahay.com>:
4. Բայբուրդյան Վահան, Իրանական Մետաքսի համար Պայքարի ազդեցութիւնը Մերձաւոր ու Միջին Արեւելքի Միջազգային Յարաբերութիւնների վրայ եւ Հայ Առեւտրական Կապիտալը (XVII դարասկիզբ), Պատմաբանասիրական Հանդես, 2019, 2 (211), Երեւան 2019:
5. Հարությունյան, Լիլիթ, Փաշայան, Արաքս, Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. Արդի հիմնախնդիրներ, ՀՀ Սփիւռքի Նախարարութիւն, Երեւան, 2012, էջ 24-25, 38:
6. Հովհաննիսյան, Սմբատ Խ., Հայ առեւտրական կապիտալ իբրեւ «Աշխարհ-տնտեսություն» և արդյունաբերական դարաշրջանի մարտահրավերները, «ՎԷՄ» համահայկական հանդես Թ (ԺԵ) տարի, 2017, թիվ 1 (57), հունվար-մարտ <http://www.yso.am/files/ARMENIAN-TRADE.pdf>, էջ 56,.
7. Albaharna, Hussain M. The Legal Status of the Arabian Gulf States, Relations with The Trucial Sheikhdoms, N.Y, 1968.

8. Baibourtian Vahan, Participation of Iranian Armenians in the World Trade in the 17th Century, Paris, 2007, p. 43-48: Paragraph 13, <https://books.openedition.org/editionsms/11334?lang=en>.
9. Baibourtian Vahan, Participation of Iranian Armenians in the World Trade in the 17th Century, Paris, 2007, p. 43-48: Paragraph 14, <https://books.openedition.org/editionsms/11334?lang=en>.
10. Baibourtian Vahan, Participation of Iranian Armenians in the World Trade in the 17th Century, Paris, 2007, p. 43-48: Paragraph 5, <https://books.openedition.org/editionsms/11334?lang=en>.
11. Bradshaw, Tancred, The End of Empire in the Gulf: From Trucial States to United Arab Emirates, UK 2020.
12. Bureau of Democracy, International Religious Freedom Report for 2011, United States Department of State, Executive Summary, Section II. Status of Government Respect for Religious Freedom. Government Practices. <https://2009-2017.state.gov/documents/organization/193123.pdf>.
13. Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom - United Arab Emirates, Section II. Status of Religious Freedom Legal/Policy Framework, 19 September 2008. <https://www.refworld.org/docid/48d5cbf3c.html>, <https://2001-2009.state.gov/g/drl/rls/irf/2008/108495.htm>. Christianity in the United Arab Emirates, https://en.wikipedia.org/wiki/Christianity_in_the_United_Arab_Emirates.
14. Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom - United Arab Emirates Section II. Status of Religious Freedom, Restrictions on Religious Freedom.
15. Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom – UAE, Restrictions on Religious Freedom.
16. Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom - United Arab Emirates, Section II. Status of Religious Freedom, Restrictions on Religious Freedom, (Those with land grants are not charged rental payments. The Emirate of Sharjah also waives utility payments for religious buildings).
17. Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom - United Arab Emirates, Section II. Status of Religious Freedom, Restrictions on Religious Freedom, (The Government does not permit churches to display crosses on the outside of their premises or to erect bell towers).
18. Bureau of Democracy, Human Rights and Labor, 2008 Report on International Religious Freedom - UAE, Section II. Status of Religious Freedom, Restrictions on Religious Freedom.
19. CONSTITUTE, United Arab Emirates of 1971 (rev. 2009) Article 14.
20. Crown Prince Court Emirate of Abu Dhabi, History of the UAE, 2022.
21. Doctor Sheikh Sultan al-Qasimi's (Sard al-zat) entitled book published in Arabic in the year 2009. <https://sheikhdrsultan.ae/Portal/en/official-positions/historical-works.aspx#page=4>.
22. Federal Research Division – United States Library of Congress, Country Profile: United Arab Emirates, July 2007.
23. LEEMAN, ALEX B, Interfaith Marriage in Islam: An Examination of the Legal Theory Behind the Traditional and Reformist Positions, https://ilj.law.indiana.edu/articles/84/84_2_Leeman.pdf.
24. MEC – Middle East Concern – UAE, <https://meconcern.org/countries/united-arab-emirates/>.
25. Miller, Duane Alexander, Johnstone, Patrick, Interdisciplinary Journal of Research on Religion (2015). Believers in Christ from a Muslim Background: Volume 11, 2015, Article 10, https://www.academia.edu/16338087/Believers_in_Christ_from_a_Muslim_Background_A_Global_Census.

26. Non-Muslim expats hail new family law, <https://www.khaleejtimes.com/uae/uae-non-muslim-expats-hail-new-family-law>, 8 Nov 2021. Al Khaleej Newspaper.
27. Office of International Religious Freedom, 2020 Report on International Religious Freedom: United Arab Emirates, Executive Summary, <https://www.state.gov/reports/2020-report-on-international-religious-freedom/united-arab-emirates/>.
28. Russian Orthodox Church is a community gateway in Sharjah, <https://www.rus-church.ae/about/>.
29. The city of Ras al-Khaimah was founded by Armenians, <https://www.peopleofar.com/2014/11/11/the-city-of-ras-al-khaimah-was-founded-by-armenians> طلب المسؤولين عن الكتب المدرسية بتصحيح المعلومة (Talaba al-mas'oulin an-al kutub bitashiha al-ma'aloume), արարերէնով՝ (ան դասագիրքերու պատասխանատուներէն պահանջեց ուղղել տեղեկատուութիւնը), (He demanded that those in charge of the textbooks to correct the information), www.sheikhdrsultan.ae.
30. UAE 2020 Report on International Religious Freedom, <https://www.state.gov/reports/2020-report-on-international-religious-freedom/united-arab-emirates/>.
31. UAE 2021 International Religious Freedom Report, Executive Summary. <https://www.state.gov/wp-content/uploads/2022/04/UNITED-ARAB-EMIRATES-2021-INTERNATIONAL-RELIGIOUS-FREEDOM-REPORT.pdf>.
32. UAE 2021 International religious freedom report, Section II. Status of Government Respect for Religious Freedom, Legal Framework (Punishment may include up to life imprisonment and fines from 500,000 dirhams to one).
33. UAE Executive Summary, <https://2009-2017.state.gov/documents/organization/193123.pdf>. (in English).
34. UAE National Library and Archives, The Formation of the Federation, Abu Dhabi, 1968.

WORKS CITED

1. Abu Dhabiyi hay qaghouti masin – hamarod agnarg, gark odzman srpots nahadagats yegeghetsvo, Abu Dhabi, 12 tegdemper 2014, ech 8 [About the Armenian colony of Abu Dhabi - Summary Review, Order of the Holy Martyrs Church, Abu Dhabi], (in Armenian).
2. Arapagan miyatsyal emirutyunner [United Arab Emirates], <http://diaspora.gov.am/hy/pages/41/uae>. (in Armenian).
3. Arapagan miyatsyal emirutyants hay qaghuti badmutyun [History of the Armenian colony of the United Arab Emirates] <https://emahay.com>: (in Armenian).
4. Baibourtian Vahan, Iranagan medaksi hamar baykari aztetsutyun mertsavor ov michin arevelki michazkayin haraperutyunneri vra yev hay arevdragan gabidal (17 tarasgizp), Badmapanasiragan hantes, 2019, 2 (211), HH KAA 'kidutyun', [The Impact of the Struggle for Iranian Silk on the International Relations of the Near and Middle East and Armenian Commercial Capital (early XVII century)] http://www.academhistory.am/images/Patmabanasirakan_handes/2018-3/2019-2.pdf. Yerevan 2019, (in Armenian).
5. Harutunyan, Lilit, Pashayan, Araks, dzotsi arapagan yergneri hay hamaynkner arti himnakhntirner, HH speurki nakhararutyun [The Armenian communities of the Arab countries of the Gulf. Current issues], Yerevan, 2012, ech 24-25,38. (in Armenian).
6. Hovhannisyan, Smpad Kh., Hay arevdragan gabidaլ iprev 'ashkharh-dndesutyun' yev artunaperagan tarashrchanı mardahraverner, [Armenian commercial capital as "World-economy" and the challenges of the industrial age] 'Vem' hamahaygagan hantes 9 (15) dari, 2017 no. 1 (57), hunvar-mard, ech 56, <http://www.yasu.am/files/ARMENIAN-TRADE.pdf>. (in Armenian).

THE FORMATION OF THE ARMENIAN COMMUNITY OF UAE

ՇԱԿԵ ՄԵՆԿԵՇԻԱՆ

*Yerevan State University, Faculty of History, Ph.D. Student,
Dubai, the United Arab Emirates*

This article discusses the rights and restrictions provided for the National Minorities and Christians in the United Arab Emirates (UAE). It also covers information about the appearance of the first Armenians in the UAE, details of their stay there and the professions of the first Armenians in the UAE.

This work was written with a comprehensive study of legislative, historical and documentary facts.

The conducted historical research confirms that the presence of Armenians in this country was recorded at the beginning of the 13th century. Armenians founded a settlement in the UAE and named it Jughha or Julfar, which is now located in the Emirate of Ras Al Khaimah. This historical fact is confirmed by Sheikh Dr Sultan Bin Mohammed Al Qasimi, the sovereign Ruler of the Emirate of Sharjah in his book entitled "Sard al-zat".

The formation and organizational historical steps of the Armenian community confirm that the main perspective of the Armenians who arrived in the UAE four decades ago has mainly been the preservation of Armenians and thanks to their enormous efforts, today the Armenian Community of the UAE survives with the churches which are built and founded by them.

Keywords: *United Arab Emirates, UAE, Persian Gulf, Trucial States, Julfar, Ras Al Khaimah, Northern Emirate (Sharjah-Dubai), Abu Dhabi, Tolerance, Armenian Community.*

ФОРМИРОВАНИЕ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ ОАЭ

ՇԱԿԵ ՄԵՆԿԵՇԻԱՆ

*аспирант исторического факультета
Ереванского государственного университета,
г. Дубай, Объединенные Арабские Эмираты*

Целью данной статьи является рассмотрение прав и ограничений, предусмотренных для национальных меньшинств и христиан в Объединенных Арабских Эмиратах (ОАЭ).

Поставлена задача осветить подробности прибытия первых армян на территорию ОАЭ, их пребывания здесь. В работе также дются некоторые факты о профессиях и роде деятельности первых армян в ОАЭ.

Работа написана на основе комплексного изучения законодательных, исторических и документальных фактов.

Благодаря проведенным историческим исследованиям можно утверждать, что присутствие армян в этой стране датируется началом 13 века. Армяне основали поселение в ОАЭ и назвали его Джуга или Джулфар. Сейчас оно находится в эмирате Рас-Аль-Хайма. Этот исторический факт подтверждает шейх д-р Султан бин Мохаммед аль-Касими, губернатор Шарджа в своей книге под названием «Сарт аз-Зат».

Становление и организационные, исторические шаги армянской общины подтверждают, что четыре десятилетия назад главной задачей армян, прибывших в ОАЭ, было в основном сохранение национальной идентичности, и благодаря усилиям местных армян сегодня армянская община в ОАЭ существует и консолидируется благодаря деятельности основанных ими церквей.

Ключевые слова: *Объединенные Арабские Эмираты, ОАЭ, Персидский залив, Джульфар, Рас-Аль-Хайма, Северный Эмират (Шарджа-Дубай), Абу-Даби, толерантность, армянская община.*



**ԱՐՑԱԽԱՅԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԽԱԽՏՈՒՄՆԵՐՆ ԱՐԻԲԵՋԱՆԻ ԿՈՐՄԻՑ
ԱՐՑԱԽՅԱՆ 3-ՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ * 1**

ՐՏԴ 343.4 (479.24)

DOI: 10.52063/25792652-2022.4.15-55

ԱՎԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) հիմնադիր նախագահ,
«Արցախ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն,
«Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր,
ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան,
«AVE JUS» փաստաբանական գրասենյակի հիմնադիր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
avetiq.hh@gmail.com

ՄԱՐԻԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արցախի Հանրապետության նախագահի օգնական,
Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի դասախոս,
Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ,
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն
mariamgrigoryan93@yandex.ru

2020 թվականի սեպտեմբերի 27-ի Ադրբեջանի սանձազերծած պատերազմական գործողություններն ամբողջությամբ զուգորդվում էին միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական նորմերի և սկզբունքների խախտումներով: Այդ խախտումներն առաջացնում էին մարդուն պատկանող հիմնարար իրավունքների և ազատությունների խախտումներ և ոտնահարումներ: Հողվածի նպատակն է հետազոտել և վեր հանել Արցախյան երրորդ պատերազմում մարդուն պատկանող հիմնարար իրավունքների և ազատությունների խախտումները: Այդ նպատակով ուսումնասիրվել են միջազգային և ներպետական համապատասխան իրավական ակտեր, տեսական գրականություն, տարաբնույթ հեղինակավոր զեկույցներ, ինչպես նաև մարդուն պատկանող իրավունքների և ազատությունների խախտումների կոնկրետ դեպքեր: Մասնավորապես խախտվել են այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են կյանքի

* Հողվածը ներկայացվել է 13.12.2022թ., գրախոսվել՝ 16.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

¹ Հետազոտությունն իրականացվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ՝ SCS20-009 գիտական թեմայի շրջանակներում:

իրավունքը, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, կրթության իրավունքը, առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքը և այլն:

Յետազոտության իրականացման ընթացքում հեղինակների կողմից կիրառվել են ինչպես համագիտական (անալիզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (համեմատական-իրավական) սկզբունքներ:

Յետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Ադրբեջանի սանձագերծած պատերազմական գործողությունների ընթացքում կոպտորեն խախտվել են արցախահայության հիմնարար իրավունքները, և Ադրբեջանը իր իրագործած ռազմական հանցագործությունների համար պետք է ենթարկվի պատասխանատվության՝ միջազգային քրեական իրավունքի նորմերին համապատասխան:

Հիմնաբառեր՝ Արցախի Յանրապետություն, արցախյան 3-րդ պատերազմ, Ադրբեջան, մարդու հիմնարար իրավունքներ և ազատություններ, խախտումներ, պատերազմ, միջազգային իրավունք:

Նախաբան

2020 թվականի սեպտեմբերի 27-ի Ադրբեջանի սանձագերծած և Թուրքիայի ու վարձկանների անմիջական ակտիվ մասնակցությամբ պատերազմը կոպտորեն խախտել է միջազգային իրավունքը, միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքները: Իր ագրեսիվ գործողություններում Ադրբեջանը չէր հետևում *ius in bello* կանոններին՝ պատերազմի ժամանակ գործող վարքականոններին կամ պատերազմի իրավունքին: Չինված հակամարտությունների ժամանակ մարդու իրավունքների զանգվածային խախտումները մարդու իրավունքների, միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի, հիմնական միջազգային սկզբունքների, մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային ու ներպետական փաստաթղթերի և 1949 թ. ժնևի կոնվենցիաների և դրանց լրացուցիչ արձանագրությունների կոպտագույն խախտում են:

Հարկ է նշել, որ Ադրբեջանը հանդիսանում է 1966 թ. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի, 1966 թ. Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի, 1965 թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, 1979 թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, 1984 թ. Խոշտանգումների և այլ դաժան, անարդարացի կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ կոնվենցիայի, 1989 թ. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի, 1949 թ. Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին ժնևի կոնվենցիայի, 1949 թ. Ծովում զինված ուժերի կողմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին ժնևի կոնվենցիայի, 1949 թ. Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին ժնևի կոնվենցիայի, 1949 թ. Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության մասին ժնևի կոնվենցիայի մասնակից (Общий базовый документ, являющийся составной частью докладов государств-участников Азербайджан, 2022): Ադրբեջանը, ի տարբերություն Հայաստանի, չի հանդիսանում 1977 թ. ժնևի կոնվենցիաներին կից I և II լրացուցիչ արձանագրությունների մասնակից: Մինչդեռ Արցախի Յանրապետությունը, դեռևս չլինելով միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, վաղորոք հայտարարել է իր պատրաստակամությունը՝ բարեխղճորեն կատարել ինչպես մարդու իրավունքների

միջազգային իրավունքի, այնպես էլ միջազգային մարդասիրական իրավունքի վերաբերյալ ժնկյան կոնվենցիաների և սովորութային նորմերի պահանջները¹:

Հետաքրքրական փաստ է, որ Ադրբեջանը սաև հանդիսանում է 1954 թ. Չինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիայի կողմ, սակայն բազմաթիվ են պատերազմի ժամանակ և մինչ օրս Ադրբեջանի կողմից բռնազավթված Արցախի Հանրապետության տարածքներում հայկական մշակութային արժեքների ոչնչացման դեպքերը, որոնք հաճախ տարածվում են սոցիալական ցանցերով և ներկայացվում որպես հերոսություն: Մշակութային արժեքների ոչնչացման դեպքերը ներկայացված են ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ «Արցախի հայկական մշակութային ժառանգություն: Վանդալիզմի դեպքեր և Ադրբեջանի կողմից ոչնչացման սպառնալիքներ» (Լեռնային Ղարաբաղ) վերտառությամբ 2021 թ. հունվարի 26-ի միջանկյալ գեկուցում²:

Ինչպես 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ն ընկած ժամանահատվածում տեղի ունեցած պատերազմի ընթացքում, այնպես էլ դրանից հետո, մինչ օրս Ադրբեջանի ապօրինությունները հանգեցրել են մարդու իրավունքների մեծածավալ խախտումների: Հատկապես խախտվել են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված մարդու մի շարք հիմնարար իրավունքներ, որոնց հիմնական մասին կանդիդատնանք ստորև:

¹ Արցախի Հանրապետության կողմից միակողմանի վավերացված (միացված) միջազգային պայմանագրերի ցանկ՝

ա) Գաղութային երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիր (ԼՀՀ ԳԽ նախագահության 23.11.1992 թ. N ՆԽ-0131-1 որոշում ԼՀՀ Գերագույն խորհրդի 23.11.1994 թ. N ԹՆ-0098-1 որոշում),

բ) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ԼՀՀ ԳԽ նախագահության 23.11.1992 թ. N ՆԽ-0131-1 որոշում, ԼՀՀ Գերագույն խորհրդի 23.11.1994 թ. N ԹՆ-0098-1 որոշում),

գ) Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր և դրան կից ֆակուլտատիվ արձանագրությունը (ԼՀՀ ԳԽ նախագահության 23.11.1992 թ. N ՆԽ-0131-1 որոշում, ԼՀՀ Գերագույն խորհրդի 23.11.1994 թ. N ԹՆ-0098-1 որոշում),

դ) 1949 թ. օգոստոսի 12-ի ժնկյան համաձայնագրերը և դրանց 1977 թ. սեպտեմբերի 26-ի լրացուցիչ արձանագրությունները (ԼՀՀ Գերագույն խորհրդի նախագահության 26.01.1993թ. N ՆԽ-0161-1 որոշում, ԼՀՀ Գերագույն խորհրդի 23.11.1994 թ. N ԹՆ-0097-1 որոշում),

ե) Եվրոպական մշակութային կոնվենցիա («Եվրոպական մշակութային կոնվենցիան վավերացնելու մասին» ԼՀՀ 2014 թվականի հոկտեմբերի 29-ի ՀՕ-39-Ն օրենքը), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան վավերացնելու մասին» ԼՀՀ 2015 թվականի ապրիլի 20-ի ՀՕ-12-Ն օրենքը),

զ) Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր («Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը վավերացնելու մասին» ԼՀՀ 2015 թվականի ապրիլի 20-ի ՀՕ-13-Ն օրենքը),

է) Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիա («Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան վավերացնելու մասին» ԼՀՀ 2015 թվականի ապրիլի 20-ի ՀՕ-14-Ն օրենքը),

ը) Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիա («Հնագիտական ժառանգության պահպանության մասին եվրոպական կոնվենցիան վավերացնելու մասին» ԼՀՀ 2015 թվականի ապրիլի 20-ի ՀՕ-15-Ն օրենքը):

² AD HOC PUBLIC REPORT THE ARMENIAN CULTURAL HERITAGE IN ARTSAKH (NAGORNO-KARABAKH): CASES OF VANDALISM AND AT RISK OF DESTRUCTION BY AZERBAIJAN, <https://artsakhombuds.am/hy/document/792>, 20.06.2022.

Կյանքի իրավունք (հոդված 24), Ֆիզիկական և հոգեկան անձեռնխելիության իրավունք (հոդված 25)

Կյանքի իրավունքը մարդու ապրելու իրավունքն է, որը ծագում է ծննդյան պահից և դադարում է մահվամբ: Առանց կյանքի իրավունքի լիարժեք ապահովման և երաշխավորման մյուս իրավունքները կրում են երկրորդական նշանակություն: Կյանքի իրավունքի վերաբերյալ դրույթներ են ամրագրված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Կյանքի իրավունքի վերաբերյալ դրույթ ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և անձի անձեռնխելիության իրավունք:

Իսկ Զաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածը սահմանում է՝ «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի անօտարելի իրավունք: Այդ իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի կամայականորեն զրկել կյանքից»:

Կյանքի իրավունքի վերաբերյալ նույնաբովանդակ հոդված է պարունակում նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածը. «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»:

Պետությունն անվերապահորեն պարտավոր է պաշտպանել իր իրավասության ներքո գտնվող մարդկանց կյանքը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձի մահը վրա է հասնում պատերազմական գործողությունների հետևանքով, ինչը կարգավորվում է միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով:

Ադրբեջանական ուժերի կողմից կյանքի իրավունքի խախտումների, խոշտանգումների և վատ վերաբերմունքի բազում դեպքեր են արձանագրվել, որոնք համակարգային բնույթ են ունեցել պատերազմի ընթացքում և դրանից հետո: Պատերազմի ընթացքում եղել են ռազմագերիների և քաղաքացիական անձանց ապօրինի սպանության 80-ից ավելի դեպքերի փաստեր: Ավելին, ադրբեջանական կողմը չի տարբերակել քաղաքացիական անձանց և կոմբատանտներին, ինչի մասին են վկայում առանց տարբերակման հարձակումները, որոնք խախտում էին միջազգային մարդասիրական իրավունքի պարտավորությունները: Օրինակ՝ մեծ բեկորայնության պայթուցիկների կիրառման դեպքեր, այդ թվում՝ Ադրբեջանի կողմից բազմաթիվ բնակելի շենքերի և քաղաքացիական ենթակառուցվածքների ռմբակոծման դեպքեր: Չոհեբին, հաճախ՝ տարեց անձանց, ողջ-ողջ գլխատել են, խեղել կամ խոշտանգել: Այս մասին ավելի մանրամասն ներկայացված է ԱՅ մարդու իրավունքների պաշտպանի միջանկյալ և ընդհանուր զեկույցներում (Միջանկյալ զեկույց ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ (թարմացված առ 27 սեպտեմբերի 2021 թ.):

Մանրամասն ծանոթանալով վերոհիշյալ 80 քաղաքացիական անձանց սպանության հանգամանքներին ու Ադրբեջանի զինված հրոսակների դրսևորած դաժանություններին՝ տպավորություն է ստեղծվում՝ կարծես ոչ թե 21-րդ դարում է այս ամենը տեղի ունենում, երբ մարդու իրավունքների վերաբերյալ ընդունվել են բազմաթիվ միջազգային ակտեր, այլ նախնադարյան հասարակարգում: Ընդ որում, նման բնույթի ռազմական հանցագործությունների կատարումը ներկայացվում է որպես հերոսություն՝ հաճախ արժանանալով իրենց երկրի ռազմաքաղաքական ղեկավարության խրախուսման, և նման հանցագործները, որոնք հաճախ նույնականացվում են, պատասխանատվության չեն ենթարկվում, հետևաբար անպատժելիությունը նոր ու ավելի դաժան հանցագործությունների է հանգեցնում (այստեղ բավական է հիշատակել տխրահռչակ Ռամիլ Սաֆարովին, որը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղություն» ծրագրի շրջանակում 2004 թ. փետրվարին 19-ի գիշերը թաքուն մտել էր Գուրգեն Մարգարյանի սենյակ և կացնահարել քնած հայ սպային: 2006 թ. ապրիլին Սաֆարովը Բուդապեշտի

դատարանի կողմից ցմահ ազատազրկման էր դատապարտվել՝ 30 տարի առանց ներման իրավունքի: Հունգարական դատարանը բազմիցս հայտարարել էր Սաֆարովի՝ հայրենիքին արտահանձնելու անհնարինություն մասին, սակայն 2012 թ. օգոստոսի 31-ին Սաֆարովին արտահանձնեցին Ադրբեջանին, որտեղ մարդասպանին նախագահ Ալիևն անմիջապես ներում շնորհեց, զինվորական բարձր կոչում տվեց և միանվագ վճարեց 8 տարվա աշխատավարձը (<https://armenpress.am/arm/news/915733/axe-murderer-ramil-safarov-promoted-to-higher-military-rank.html>): Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման հղումը՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-202524>):

Պետք է նշել, որ Ադրբեջանի զինված ուժերը մի քանի անգամ թիրախավորել են Արցախում աշխատող լրագրողներին, ինչի հետևանքով մասնավորապես ծանր վիրավորվել են 7 լրագրողներ, և սպանվել է լրագրողներին ուղեկցող մեկ անձ: Լրագրողների նկատմամբ թիրախավորված և նպատակային հարձակումներն ապացուցվում են այն հանգամանքով, որ հարձակումների պահին լրագրողները կրել են հատուկ համազգեստ և տարբերանշաններ, ինչպես նաև ունեցել են տեսախցիկներ: Լրագրողական մեքենաները, որոնք ռմբակոծության տակ են հայտնվել, նույնպես ունեցել են «PRESS» տարբերանշանը: Ավելին՝ լրագրողները թիրախավորվել են ոչ թե ռազմական գործողությունների կիզակետերում, այլ քաղաքացիական բնակավայրերում իրենց մասնագիտական պարտականությունները իրականացնելու ժամանակ (Արտահերթ զեկույց՝ Արցախում (Լեռնային Ղարաբաղ) ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների նկատմամբ Ադրբեջանի հարձակումների մասին):

Խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելք (հոդված 26)

Մարդու իրավունքների միջազգային պաշտպանության գաղափարին հասցված հարվածներից մեկը մարդասիրական իրավունքի խախտումն էր՝ կապված խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի հետ: Ըստ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 1-ին հոդվածի՝ «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրդմամբ կամ համաձայնությամբ: Սա չի ներառում այն ցավն ու տառապանքը, որոնք բխում են օրինական պատժամիջոցներից միայն կամ հատուկ են դրանց:

Մարդու իրավունքների միջազգային ամրապնդման առաջին ձեռքբերումներից մեկը խոշտանգումներից զերծ լինելու իրավունքի ճանաչումն էր և այլ խոշտանգումների կիրառման արգելքը նույնիսկ ռազմական բախումների ժամանակ: Հաագայի 1899 և 1907 թթ., 1864 և 1949 թվականների Ժնևի կոնվենցիաները, 1984 թվականի խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան, խոշտանգումն արգելող մարդասիրական իրավունքի Նորմերը ճանաչվում են որպես jus cogens կամ պարտադիր:

Այսպիսով, խոշտանգումները, ինչպես նաև դրանց հավասարեցված այլ գործողությունները, որոնք մարդուն պատճառում են ֆիզիկական կամ բարոյական տառապանք, չեն կարող արդարացվել որևէ հանգամանքով, լինի դա պատերազմ, թե

պատերազմի սպառնալիք, քանի որ դրանք մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են: Այնուամենայնիվ, ծավալվող «ահաբեկչության դեմ պատերազմի» համատեքստում պետությունները սկսեցին անտեսել այս կանոնը՝ օգտագործելով դատարանում հարկադրանքի տակ ձեռք բերված ապացույցները: Խոշտանգումների նոր ու բարդ ձևեր են ի հայտ եկել, ինչպիսիք են սթրեսը, մեկուսացումը, զգայունությունից զրկելը, «խեղդվելու սիմուլյացիան» և այլն (Kyzneceva 98)

Մասնավորապես հայաթափ են արվել 193 բնիկ հայկական համայնքներ: 44-օրյա պատերազմի ընթացքում ադրբեջանական կողմը նպատակային միջոցներ է ձեռնարկել սեփական տներում հազարավոր քաղաքացիական անձանց բնակվելն անհնար դարձնելու համար՝ առանց տարբերակման ռմբակոծման, քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման և վախի մթնոլորտ ստեղծելու: Պատանդ և ռազմագերի են վերցվել քաղաքացիական անձինք և կոմբատանտներ, ովքեր սպանվել են, խոշտանգվել կամ ենթարկվել այլ կտտանքների (Մարդու իրավունքների խախտումներն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում: Փաստահավաք գեկույց):

Կրթության իրավունք (հոդված 38)

Կրթությունը անձի ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որն ուղղված է գիտելիքներ ձեռք բերելուն և ապագա սերունդներին փոխանցելուն: Կրթությունը պետության շահերից ելնող գործընթաց է, որը նպաստում է պետության առաջընթացին և զարգացմանը:

Կրթության իրավունքը մարդու իրավունքն է՝ ստանալու որոշակի գիտելիքներ, մշակութային դաստիարակություն և մասնագիտական կողմնորոշում ժամանակակից հասարակության բնականոն կենսագործունեության համար: Այս իրավադրույթի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ Արցախի Հանրապետությունում ապահովվում է կրթության իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից:

Կրթության իրավունքը մարդու կարևորագույն իրավունքներից մեկն է, այն ամրագրված է մի շարք միջազգային-իրավական փաստաթղթերում: Դրանք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Կրթության բնագավառում խտրականության դեմ պայքարի կոնվենցիան (1960 թ.), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966 թ.), Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին կոնվենցիան (1968 թ.), Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասն կոնվենցիան (1997 թ.), ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 1-ին արձանագրության 2-րդ հոդվածի և Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 14-րդ հոդվածի դրույթներով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 2-րդ հոդվածն ամբողջովին նվիրված է կրթության իրավունքին: Մասնավորապես՝ այդ հոդվածն ամրագրում է տարրական կրթության պարտադիր լինելը, իսկ տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հավասարապես մատչելի լինի բոլորի համար՝ ըստ յուրաքանչյուրի ընդունակությունների: Ըստ այդմ, լինելով մարդու հիմնարար իրավունքներից մեկը՝ միջազգային իրավունքը ամրագրեց պետության պարտավորությունը՝ կրթություն տրամադրելու իր քաղաքացիներին: Բոլորի համար կրթության իրավունքը վերահաստատվել է ոչ միայն բազմաթիվ համընդհանուր, այլև տարածաշրջանային փաստաթղթերով, որոնք որոշակի առանձնահատկություններով ներառված են բազմաթիվ ազգային սահմանադրություններում և օրենքներում: Կրթության իրավունքը ամրագրվում և պաշտպանվում է նաև ԱՀ

Սահմանադրությամբ: Մասնավորապես Սահմանադրության 38-րդ հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Յուրաքանչյուրին պատկանող այս իրավունքի խախտման դեպքեր եղել են 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո:

Արցախի մարդու իրավունքների պաշտպանի պատրաստած՝ երեխաների իրավունքների խախտման վերաբերյալ արտահերթ զեկույցում (Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է երեխաների իրավունքների խախտման վերաբերյալ արտահերթ զեկույց) նշված է, որ ագրեսիայի առաջին օրից ադրբեջանական զինված ուժերը Արցախի մոտ 170 համայնքներում դիտավորյալ և ոչ խտրական հարվածների են ենթարկել քաղաքացիական նշանակության օբյեկտներ, բնակելի շինություններ, ենթակառուցվածքներ, որի հետևանքով թիրախավորվել է քաղաքացիական բնակչությունը, այդ թվում՝ երեխաներ, կանայք ու տարեցներ: Թշնամին դիտավորյալ հարձակումների է ենթարկել կրթության համար նախատեսված շինությունները՝ դպրոցներ, մշակութային կենտրոններ, մանկապարտեզներ, համալսարաններ և այլ կրթական հաստատություններ: Արցախում ադրբեջանական ագրեսիայի հետևանքով վնասվել է 71 դպրոց, 14 մանկապարտեզ՝ չհաշված ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող՝ ԱԶ համայնքների դպրոցներն ու մանկապարտեզները, որոնց զգալի մասի վիճակի վերաբերյալ տեղեկություններ չկան: Կրթության իրավունքից Արցախում զրկվել է 24,000 դպրոցական, 4,000 նախադպրոցական տարիքի երեխա: Արցախում պատերազմի ժամանակ կրթության իրավունքից զրկվել են նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներ: Ագրեսոր Ադրբեջանի տիրապետության տակ հայտնված տարածքում Շուշիում, գործում էին համալսարան ու քոլեջ: Այսօր այդ համալսարանում, քոլեջում սովորող ուսանողները ստիպված իրենց դասապրոցները կազմակերպում են Ստեփանակերտում, և նրանց համար նախատեսված շենքային պայմանները բավարար չեն: Կրթության իրավունքի խախտումները շարունակվում են ցայսօր: Ադրբեջանի զինված ուժերի պարբերական սադրանքները և գազատարի վնասման հետևանքները վերացնելու անհնարինությունը պատճառ են, որ Ստեփանակերտում և Արցախի սահմանամերձ գյուղերում դադարեցվի կրթական գործընթացը:

Սեփականության իրավունք (հոդված 60)

Արցախի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածը, հենվելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17-րդ հոդվածի և Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական դաշնագրի թիվ 1 արձանագրության առաջին հոդվածի վրա, հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Սահմանադրությունը զարգացրել է սեփականության իրավունքի բովանդակությունը՝ այն առավել համահունչ դարձնելով Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 17-րդ հոդվածի և ՄԻԵԿ 1-ին արձանագրության 1-ին հոդվածի դրույթներին:

Արցախի Հանրապետության Սահմանադրությունը չի թվարկում Հանրապետությունում թույլատրվող սեփականության ձևերը: Դրա փոխարեն ԱԶ քաղաքացիական օրենսգրքում սահմանված են սեփականության հասկացությունը և ձևերը: Ըստ օրենսգրքի 163-րդ հոդվածի՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Արցախյան վերջին պատերազմում համատարած են սեփականության իրավունքի խախտման դեպքերը: Շատերը գրկված են Ադրբեջանի հսկողության տակ անցած համայնքներում գտնվող իրենց տներում բնակվելու հնարավորությունից, որոնք արցախահայերը կառուցել են դեռևս սկսած այն ժամանակից, երբ Ադրբեջանը որպես պետություն չէր ստեղծվել, իսկ վերջինս արհեստականորեն ստեղծվել է 1918 թվականին: Մոլեգնող հայատյացության պատճառով այդ մարդկանց վերադարձը սեփական տներ հնարավոր չէ: Ի հավելումս, շատ ընտանիքներ ստիպված են եղել փախչել տներից՝ հնարավորություն չունենալով վերցնելու իրենց հետ արժեքավոր իրերը:

Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունք (հոդված 84)

Առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է: Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածը պարտավորեցնում է անդամ պետություններին՝ ճանաչել յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան առողջության հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը: Իր հերթին, ԱԶ Սահմանադրության 84-րդ հոդվածը ևս ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Չինված հակամարտությունների ժամանակ ամենից հաճախ խախտվում են մարդու հիմնարար իրավունքները, և շատ մարդիկ չեն ստանում տարրական բժշկական օգնություն, չնայած այն հանգամանքին, որ 1949 թվականի Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ կետում ասվում է. «Վիրավորներին և հիվանդներին կվերցնեն և օգնություն կցուցաբերեն»: Բացի այդ, այն անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին, ներառյալ զինված ուժերի կազմից այն անձինք, որոնք զենքը վար են դրել, ինչպես նաև նրանք, ովքեր դադարել են պատերազմական գործողություններին մասնակցելուց հիվանդության, վիրավորվելու, բռնվելու կամ ցանկացած այլ պատճառով, պետք է բոլոր հանգամանքներում օգտվեն մարդասիրական վերաբերմունքից առանց որևէ խտրականության՝ ռասայի, մաշկի գույնի, կրոնի կամ հավատի, սեռի, ծագման կամ գույքային դրության և ցանկացած համանման այլ չափանիշների պատճառներով:

Շուրջ 40 միլիոն զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին 1949 թ. կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ Ընդհարման մեջ գտնվող այն կողմը, որի իշխանության տակ կհայտնվեն նրանք, նրանց համար կապահովի մարդասիրական վերաբերմունք և ինամբ առանց այնպիսի խտրականության, ինչպիսիք են սեռը, ռասան, ազգությունը, կրոնը, քաղաքական համոզմունքները կամ մյուս համանման չափանիշները: Խստիվ արգելվում է ոտնձգությունը նրանց կյանքի և անձի հանդեպ, և մասնավորապես արգելվում է նրանց վերջ տալ կամ կոտորել, ենթարկել խոշտանգումների, նրանց վրա կատարել կենսաբանական փորձեր, միտումնավոր կերպով թողնել առանց բուժօգնության և խնամքի, կանխամտածված կերպով պայմաններ ստեղծել նրանց վարակման համար:

Բուժօգնություն ցուցաբերելու հերթականության մեջ առաջնահերթություն թույլատրվում է միայն անհետաձգելի բնույթի բժշկական պատճառներով:

Ինչ վերաբերում է ռազմական գործողություններին, ապա բոլոր ժամանակներում և հատկապես մարտից հետո կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցները վիրավորներին և հիվանդներին գտնելու և վերցնելու և նրանց կողոպուտից և դաժան վերաբերմունքից պաշտպանելու համար: Արգելվում է սպանել կամ բնաջնջել վիրավորներին, հիվանդներին, նավաբեկվածներին, դիտավորյալ թողնել առանց բժշկական օգնության կամ խնամքի, դիտավորյալ պայմաններ ստեղծել

Նրանց վարակվելու համար, այդ անձանց ենթարկել ֆիզիկական վնասվածքի, բժշկական կամ գիտական փորձերի, հեռացման, նույնիսկ նրանց համաձայնությամբ: Նշված անձինք իրավունք ունեն հրաժարվել ցանկացած վիրահատությունից: Վիրավորներին կամ հիվանդներին հակառակորդին թողնելու հարկադրված կողմը, որքանով դա թույլ են տալիս ռազմական պայմանները, պետք է նրանց հետ թողնի իր բժշկական անձնակազմի և սարքավորումների մի մասը նրանց խնամքին աջակցելու համար: Հակառակորդի իշխանության տակ հայտնվելով՝ վիրավորները, հիվանդները և նավաբեկյալները համարվում են ռազմագերիներ, և նրանց նկատմամբ կիրառվում են ռազմագերիների վերաբերյալ միջազգային իրավունքի կանոնները (Проблемы соблюдения прав человека в условиях вооруженных конфликтов):

Օրինակներ կան, ըստ որոնց՝ պատերազմի ընթացքում հարյուրավոր հայերի պատճառվել են ֆիզիկական վնասվածքներ և հոգեկան տառապանք: Ավելին, Ադրբեյջանի հարձակումների հետևանքով կաթվածահար էին եղել ԶՈՎԻԴ-19 համավարակի դեմ պայքարող առողջապահական ծառայությունները, անհնար էր դարձել սոցիալական հեռավորության կանոնների պահպանումը, քանի որ մարդիկ ռմբակոծություններից պաշտպանվում էին գերբեռնված ապաստարաններում:

Պատերազմի հետևանքով կան ընտանիքի բաժանման, երեխաների կրթական գործընթացի ընդհատումների, կյանքի պայմանների վատթարացման և տնտեսական դժվարությունների բազմաթիվ դեպքեր (Մարդու իրավունքների խախտումներն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում: Փաստահավաք գեկույց 10):

Հատկապես մեր ժամանակներում զինված հակամարտությունների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանությունն ունի համընդհանուր կարևորություն, որն էականորեն կապված է ոչ միայն մեր շահերի, այլև մեզ շրջապատող մարդկանց և ողջ համաշխարհային հասարակության վրա:

Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք (հոդված 40)

Արցախի Հանրապետության Սահմանադրության 40-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը ամրագրում են Արցախի Հանրապետությունից դուրս գալու և մուտք գործելու անձի իրավունքը: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասում ամրագրում է ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման հիմքերը, որոնք ուղղակիորեն բխում են ՄԻԵԿ դրույթներից, միևնույն ժամանակ հստակ սահմանելով, որ քաղաքացու՝ Արցախի Հանրապետություն մուտք գործելու իրավունքը սահմանափակման ենթակա չէ: Ազատ տեղաշարժվելու իրավունքը ամրագրող սահմանադրական դրույթը համահունչ է ՄԻԵԿ 4-րդ արձանագրության 2-րդ և 3-րդ հոդվածների դրույթներին:

1. Ստացվում է այնպես, որ ելնելով տարբեր պատճառներից՝ մարդը ստիպված է լինում տեղաշարժվել և բնակավայր ընտրել: Այդպիսի պատճառներ են այլ վայրում աշխատանքի անցնելը կամ ուսումնառող գործընթացը կազմակերպելը և այլն:

2. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը մարդկությանը հայտնի է նախնադարից, երբ որոշակի պայմաններից ելնելով նախնադարյան մարդիկ տեղափոխվում էին տեղից տեղ:

3. Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը մարդուն պատկանող անձնական իրավունքներից և ազատություններից մեկն է: Մեկնաբանվող իրավունքը հռչակված է մարդու իրավունքների վերաբերյալ գոյություն ունեցող գրեթե բոլոր միջազգային իրավական փաստաթղթերում: Օրինակ՝ 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածում և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 4-րդ արձանագրության 2-րդ հոդվածում:

Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը մարդուն պատկանող բնական, անօտարելի իրավունք է, որն իր մեջ ներառում է տվյալ երկրի

տարածքում ազատ տեղաշարժելու, ինչպես նաև որևէ վայրում ժամանակավորապես կամ մշտապես, առանց որևէ արգելքի բնակության վայր ընտրելը և բնակվելն այնտեղ: Ըստ ԱԶ քաղաքացիական օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի՝ բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է:

Պատերազմի ընթացքում ու դրանից հետո արցախահայրությունը բախվել էր նաև ազատ տեղաշարժելու ու բնակավայր ընտրելու իրավունքի բազմաթիվ խախտումների: Մեր հայրենակիցները պարտադրված թողել էին իրեն մշտական բնակավայրերը և հարկադրված բնակություն հաստատել այլ վայրերում:

Ըստ միջազգային իրավունքի՝ տեղահանված անձանց՝ տեղահանումը պայմանավորող պատճառների վերացումից անմիջապես հետո անվտանգության պայմաններում իրենց տներ կամ մշտական բնակության վայրեր կամավոր վերադառնալու իրավունքը համարվում է միջազգային սովորության իրավունքի կանոն, որը կիրառելի է ցանկացած տիպի տարածքների նկատմամբ: Ինչ վերաբերում է գրավյալ տարածքներին, ապա պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին ժնևի 12.08.1949 թ. կոնվենցիայի 49-րդ հոդվածը սահմանում է հետևյալը՝ արգելվում են որևէ դրոպապատճառով պաշտպանության ենթակա անձանց զանգվածային կամ անհատական տեղափոխումները, ինչպես նաև բռնագաղթը գրավյալ տարածքից գրաված տերության կամ ցանկացած այլ պետության տարածք՝ անկախ այն բանից, դրանք գրավյալ են, թե ոչ:

1949 թվականի ժնևի առաջին կոնվենցիայի 50-րդ, երկրորդ կոնվենցիայի 51-րդ և չորրորդ կոնվենցիայի 147-րդ հոդվածների համաձայն՝ գույքի ապօրինի, կամայական և լայնածավալ ոչնչացումը և յուրացումը, որը պայմանավորված չէ ռազմական անհրաժեշտությամբ, հանդիսանում է լուրջ խախտում: Ժնևի 1949 թվականի չորրորդ կոնվենցիայի 53-րդ հոդվածի համաձայն՝ մասնավոր անձանց կամ պետության, համայնքների, հասարակական կամ կոոպերատիվ կազմակերպությունների անհատական կամ կոլեկտիվ սեփականություն հանդիսացող շարժական կամ անշարժ գույքի ամեն տեսակ ոչնչացումը գրավող տերության կողմից, որը չի բխում ռազմական գործողությունների բացարձակ անհրաժեշտությունից, արգելվում է:

Տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունք (հոդված 58)

Արցախի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորվում է Սահմանադրությամբ, ԱԶ քաղաքացիական օրենսգրքով և այլ իրավական ակտերով: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը մարդու սահմանադրական իրավունքներից մեկն է:

Ինչպես նշվեց, Արցախի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորվում է Սահմանադրությամբ, ԱԶ քաղաքացիական օրենսգրքով և այլ իրավական ակտերով: Սահմանադրությունը նախատեսում է միայն հիմնարար նորմեր, իսկ ձեռնարկատիրական գործունեության հետ կապված հարաբերությունները հիմնականում կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ: Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը կարգավորում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերությունները: Պետք է նշել, որ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորող ձեռնարկատիրական հարաբերությունների կարգավորման համար կիրառվում են նաև այլ իրավունքի ճյուղերի նորմեր (օրինակ՝ վարչական, ֆինանսական և այլն):

Ադրբեջանի սանձագերծած պատերազմի հետևանքով առաջացավ նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրագործման անհնարինություն: Առաջացավ այնպիսի մի իրավիճակ, երբ արցախցին Ադրբեջանի կողմից բռնազավթված տարածքներում այլևս չէր կարող աշխատեցնել իր

ձեռնարկությունը, զբաղվել գյուղատնտեսությամբ: Առկա իրավիճակը առաջացրեց բազմաթիվ մարդկանց սոցիալական խնդիրներ, որոնք իրենց ապրուստը հոգում էին ձեռնարկատիրական կամ գյուղատնտեսական գործունեության միջոցով:

Պատերազմի հասցրած տնտեսական վնասները հիմնականում դրսևորվեցին Արցախի Հանրապետության տարածքի մեծ մասի զավթմամբ, որի հետևանքով հակառակորդին անցան նաև այդ տարածքներում գտնվող ինչպես բնական ռեսուրսները, այնպես էլ արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքները: Այդ պաշարներից հատկապես կարևորվում են ինչպես ընդերքի, այնպես էլ հողային պաշարները, որոնք ներառում են գյուղատնտեսական, բնակավայրերի, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, հատուկ պահպանվող տարածքների, անտառային, ջրային և պահուստային նպատակային նշանակության հողատարածքները, ինչպես նաև դրանց վրա գտնվող անշարժ ու շարժական գույքը: Օրինակ՝ 2020 թ. պատերազմի հետևանքով Արցախում էներգետիկ ենթակառուցվածքները ահռելի վնասներ են կրել: Մասնավորապես, Արցախում գործող 36 հէկ-երից 30-ն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ (Արցախի 36 հէկ-երից 30-ն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ):

Եզրակացություն

Ադրբեջանի կողմից վերոնշյալ իրավունքների խախտումները պատերազմական հանցագործություններ են՝ ագրեսիա, որի արգելքն ամրագրված է Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 5-րդ հոդվածով: Ըստ որի՝ Ղատարանի իրավագործությունը սահմանափակվում է միջազգային ողջ հանրությանը մասնագող առավել ծանր հանցագործություններով: Սույն Կանոնադրության համաձայն. Ղատարանին ընդդատյա են հետևյալ հանցագործությունները. ա) ցեղասպանության հանցագործություն. բ) մարդկության դեմ ուղղված հանցագործություններ. գ) պատերազմական հանցագործություններ. դ) ագրեսիայի հանցագործություն¹:

Ցավալին այն է, որ ո՛չ Հայաստանի Հանրապետությունը, ո՛չ Արցախի Հանրապետությունը, ո՛չ էլ Ադրբեջանի Հանրապետությունը չեն միացել Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտին, ուստի Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու մասին չի կարող խոսք լինել:

Կարծում ենք, որ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական մեխանիզմների ներդրումը, ինչպես նաև ներպետական և միջազգային մակարդակներում միջազգային քրեական իրավունքի հին նորմերի կատարելագործումը և նոր նորմերի մշակումը կօգնեն լուծել միջազգային վեճերն ու հակամարտությունները: Չինված հակամարտությունների ժամանակ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մեխանիզմի գործունեության առաջին տարրերից է լինելու անհատի իրավունքների և շահերի դեմ ուղղված հանցագործությունների հետապնդման և իրավական հիմք ստեղծելու միջազգային քրեական դատարանի գործունեությունը:

Որպես հիմնախնդրի լուծման տարբերակ՝ կարող են ծառայել Նյունբերգի և Տոկիոյի զինվորական տրիբունալների նախադեպերը, որոնք ստեղծվել էին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

¹http://library.cmsa.am/media/docs/%D5%80%D5%BC%D5%B8%D5%B4%D5%AB_%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D6%84%D6%80%D5%A5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%AF%D5%A1%D5%B6%D5%B8%D5%B6%D5%A1%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արտահերթ զեկույց՝ Արցախում (Լեռնային Ղարաբաղ) ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների սկստմամբ Ադրբեջանի հարձակումների մասին, <https://www.artsakhombuds.am/hy/document/783>:

2. Արցախի 36 հէկ-երից 30-ն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ, <https://hetq.am/hy/article/125303>

3. Մարդու իրավունքների խախտումներն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում: Փաստահավաք զեկույց, Երևան 2022, էջ 8 <https://www.osf.am/wp-content/uploads/2021/12/%D5%93%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A1%D6%84-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%AB-%D5%BD%D5%A5%D5%B2%D5%B4%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80.pdf>

4. Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է երեխաների իրավունքների խախտման վերաբերյալ արտահերթ զեկույց, 12.10.2020, <https://artsakhombuds.am/hy/news/480>

5. Միջանկյալ զեկույց ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ (թարմացված առ 27 սեպտեմբերի 2021 թ.), <https://www.artsakhombuds.am/hy/document/785>, GENERAL REPORT <https://www.artsakhombuds.am/hy/general-report>:

6. Кузнецова, И. А. *Проблемы нарушения прав человека в контексте антитеррористических операций* / И.А. Кузнецова // Весник БДУ, 2014, №3, стр. 98, <https://elib.bsu.by/bitstream/123456789/122335/1/97-100.pdf>

7. Дмитрий Татаринов, *Проблемы соблюдения прав человека в условиях вооруженных конфликтов*, <https://articlekz.com/article/6928>

8. Общий базовый документ, являющийся составной частью докладов государств-участников Азербайджан, <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=FhOD6sgggzAhFXD9F%2FeKaFMm83LbFY75RhkIFGrig%2B5GGx9Opx7ktshkPSIa81LZURmjrJvU XeUFkO8KZI2aoJYZVh%2FNooRNEDFDsvQmwwBT9kHda3w6on3JnSyibYxG>, 22.06.2022.

9. AD HOC PUBLIC REPORT THE ARMENIAN CULTURAL HERITAGE IN ARTSAKH (NAGORNO-KARABAKH): CASES OF VANDALISM AND AT RISK OF DESTRUCTION BY AZERBAIJAN, <https://artsakhombuds.am/hy/document/792>, 20.06.2022.

WORKS CITED

1. Artahert' zekuyc` Arcaxum (Ler'nayin Gharabagh) r'azmakan gorc'oghut'yunnery' lusabanogh Iragroghneri nkatmamb Adrbejani hard'akumneri masin, [Extraordinary Report on Azerbaijan's Attacks on Journalists Covering Military Operations in Artsakh (Nagorno-Karabakh)] <https://www.artsakhombuds.am/hy/document/783>: (in Armenian)

2. Arcaxi 36 he'k-eric 30-n ancel e' Adrbejani verahskoghut'yan tak [30 of the 36 Hydroelectric Power Plants of Artsakh Came under the Control of Azerbaijan], <https://hetq.am/hy/article/125303> (in Armenian)

3. Mardu iravunqneri xaxtumnern Arcaxyan 44-o'rya paterazmi y'nt'acqum: P'astahavaq zekuyc [Human Rights Violations during the 44-day Artsakh War.], Erevan 2022, e'j 8 <https://www.osf.am/wp-content/uploads/2021/12/%D5%93%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BE%D5%A1%D6%84-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%D5%AB-%D5%BD%D5%A5%D5%B2%D5%B4%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80.pdf>

[%D5%BD%D5%A5%D5%B2%D5%B4%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80.pdf](#) (in Armenian)

4. Mardu iravunqneri pashtpany' hraparakel e' erexaneri iravunqneri xaxtman veraberyal artahert' zekuyc [The Human Rights Defender Published an Extraordinary Report on Violations of Children's Rights], 12.10.2020, <https://artsakhombuds.am/hy/news/480> (in Armenian)

5. Mijankyal zekuyc adrbejanakan zinvac' ujheri koghmic Arcaxi qaghaqaciakan and'anc spanut'yan depqeri veraberyal (t'armacvac' ar' 27 septembri 2021t'.) [Interim Report on the Killing of Civilians in Artsakh by the Azerbaijani Armed Forces (Updated on September 27, 2021)], <https://www.artsakhombuds.am/hy/document/785>, GENERAL REPORT <https://www.artsakhombuds.am/hy/general-report> (in Armenian)

6. Kuznecova, I. A. Problemy narusheniya prav cheloveka v kontekste antiterroristicheskikh operacij [Problems of Human Rights Violations in the Context of Anti-Terrorist Operations]/ I.A. Kuznecova // Vesnik BDU, 2014, №3, e'j 98, <https://elib.bsu.by/bitstream/123456789/122335/1/97-100.pdf> (in Russian)

7. Dmitrij Tatarinov, Problemy sobljudenija prav cheloveka v uslovijah vooruzhennyh konfliktov [Issues of Human Rights Respect in Armed Conflicts], <https://articlekz.com/article/6928> (in Russian)

8. Obshhij bazovyj dokument, javljajushhijja sostavnoj chast'ju dokladov gosudarstv-uchastnikov Azerbajdzhan, <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=FhOD6sgggzAhFXD9F%2FeKaFMm83LbFY75RhkIFGrig%2B5GGx9Opx7ktskPSla81LZURmjrJvUXeUFkO8KZI2aoJYZVh%2FNooRNEDFDsvQmwwBT9kHda3w6on3JnSYibYxG>, 22.06.2022.

VIOLATIONS OF THE FUNDAMENTAL RIGHTS OF ARTSAKHI ARMENIANS BY AZERBAIJAN DURING THE 3RD ARTSAKH WAR

AVETIK HARUTYUNYAN

*Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), Chairman-Founder;
«Artsakh» Research Institute, Director;
Journal «Scientific Artsakh», Editor-in-Chief;
Chamber of Advocates of the Republic of Armenia, Advocate;
«AVE JUS» Law Firm, Founder;
Ph.D. in Law, Associate Professor,
Stepanakert, the Republic of Artsakh*

MARIAM GRIGORYAN

*Assistant to the President of the Republic of Artsakh;
Mesrop Mashtots University, lecturer;
Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA), Member;
Stepanakert, the Republic of Artsakh*

The military actions unleashed by Azerbaijan on September 27, 2020 were completely accompanied by violations of the basic norms and principles of international law and international humanitarian law. These violations led to contraventions and infringements of fundamental human rights and freedoms. The purpose of the article is to investigate and identify violations of fundamental human rights and freedoms in the Third Artsakh War. To this end, relevant international and domestic legal acts, theoretical literature, various authoritative reports, as well as specific cases of violations of human rights and freedoms were studied. In particular, such rights as the right to life, the right to

physical and mental integrity, the right to education, the right to health protection and medical care, etc. were violated.

In the course of the study, the authors used both general educational (analysis, the principle of historicism) and special (comparative legal) principles.

As a result of the study, we came to the conclusion that during the military actions unleashed by Azerbaijan, the fundamental rights of the Armenians of Artsakh were grossly violated, and Azerbaijan should be held accountable for the war crimes committed by it in accordance with the norms of international criminal law.

Keywords: *Republic of Artsakh, 3rd Artsakh war, Azerbaijan, fundamental human rights and freedoms, violations, war, international law.*

НАРУШЕНИЕ ОСНОВОПОЛАГАЮЩИХ ПРАВ АРМЯН АРЦАХА СО СТОРОНЫ АЗЕРБАЙДЖАНА ВО ВРЕМЯ ТРЕТЬЕЙ АРЦАХСКОЙ ВОЙНЫ

АВЕТИК АРУТЮНЯН

председатель и учредитель Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),

*директор научно-исследовательского института «Арцах»,
главный редактор журнала «Научный Арцах»,
адвокат Палаты адвокатов Республики Армения,
учредитель юридической фирмы «AVE JUS»,
кандидат юридических наук, доцент,
г. Степанакерт, Республика Арцах*

МАРИАМ ГРИГОРЯН

*помощник президента Республики Арцах,
член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
преподаватель Университета Месроп Маштоц,
г. Степанакерт, Республика Арцах*

Военные действия, развязанные Азербайджаном 27 сентября 2020 года, целиком и полностью сопровождались нарушениями основных норм и принципов международного права и международного гуманитарного права. Это привели к тому, что были грубейшим образом нарушены основополагающие права и свободы человека. Целью статьи является выявить и исследовать нарушения основных прав и свобод человека в ходе Третьей Арцахской войны. Для достижения поставленной цели были изучены соответствующие международные и конкретные государственные правовые акты, теоретическая литература, различные компетентные доклады, а также конкретные случаи нарушения прав и свобод человека. Так, в частности, были нарушены такие права, как право на жизнь, право на физическую и психическую неприкосновенность, право на образование, право на охрану здоровья и медицинское обслуживание и т.д.

В ходе исследования авторы придерживались общенаучных (анализ, принцип историчности), так и специальных (сравнительно-правовые) принципов.

В результате исследования мы пришли к выводу о том, что в ходе развязанных Азербайджаном военных действий были грубо нарушены основные права армян Арцаха и Азербайджан должен быть привлечен к ответственности за совершенные им военные преступления в соответствии с нормами международного уголовного права.

Ключевые слова: *Республика Арцах, 3-я арцахская война, Азербайджан, основные права и свободы человека, нарушения, война, международное право.*

AZERBAIJAN'S POLICY OF ETHNIC CLEANSING AGAINST THE ARMENIAN POPULATION OF ARTSAKH AFTER THE 44-DAY WAR*

UDC 341.4

DOI: 10.52063/25792652-2022.4.15-69

ARMAN ASRYAN

Artsakh State University,
Department of History and Law, Lecturer;
Master of Laws in Human Rights and Civil Liberties,
Stepanakert, the Republic of Artsakh
arman17asryan@gmail.com

Ethnic cleansing as a phenomenon, despite its new name, is not new in the history of mankind at all. Among different nations, Armenians also have been the victim of this horrific crime and, unfortunately, have to face it till today.

This article intends to present the terrorist criminal actions of Azerbaijan carried out continuously and widely against the people of Artsakh after the 2020 44-day war, as well as to provide the goals of these actions and their legal qualification within the framework of international law.

The work was done by means of historical research, analysis of norms of international law, court rulings, and scientific doctrines, as well as research and comparison of factual circumstances relevant to this article.

In the end, it has been concluded that the crimes committed by Azerbaijan against the people of Artsakh are not isolated, local incidents, but a continuation of a systematic and widespread deliberate state policy planned and carried out for decades, having the goal of achieving the final depopulation of Artsakh.

Keywords: Artsakh, Nagorno-Karabakh, Azerbaijan, ethnic cleansing, international crime, elements of the crime, terror, forcible transfer of population.

1. Introduction

The history of humanity is full of bloody and cruel pages. Only in the 20th century, mankind endured two world wars, the cold war, and extreme ideological regimes. The century was riddled with the most heinous atrocities, among which are the Armenian Genocide, Stalin's Gulags, the Holocaust, The Rape of Nanking, the Cambodian Genocide. The last decade of the century was marked by Rwanda's Genocide and the horrific crimes committed during the Yugoslav wars. It was at the time of those wars that the term "ethnic cleansing" circulated for the first time. Initially, it was a term from journalistic and military rather than legal vocabulary. Later it was used in the resolutions of the United Nations Security Council and became a legal concept. Resolution 771 qualifies the practice of "ethnic cleansing" as a violation of international humanitarian law (S.C. Res. 771, 1992). Resolution 819 provides individual responsibility in respect of the practice of "ethnic cleansing" (S.C. Res. 819, 1993). By resolution 827 the Security Council decided to establish an international tribunal for the prosecution of persons responsible for serious violations of international humanitarian law (including the practice of "ethnic cleansing") committed in the territory of the former Yugoslavia (S.C. Res. 827, 1993). However ethnic cleansing was not included in the Statute of the International

* Հոդվածը ներկայացվել է 30.09.2022թ., գրախոսվել՝ 23.11.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Criminal Tribunal for the Former Yugoslavia (ICTY) as a crime and the perpetrators were charged only under crimes defined by the Statute. Similarly, the International Criminal Court doesn't have jurisdiction to prosecute ethnic cleansing, since it is not included in the Rome Statute as a crime.

As a general understanding, ethnic cleansing is "the attempt to create ethnically homogeneous geographic areas through the deportation or forcible displacement of persons belonging to particular ethnic groups" (Andreopoulos 2021).

The concept of ethnic cleansing has generated a lot of debates. Some scholars consider that "ethnic cleansing" is a new name for an old crime and argue that people experienced this practice throughout history. Some scholars voice objections to its use considering it a dangerous euphemism for genocide. Others consider that ethnic cleansing is not precisely defined as an international crime. However, "ethnic cleansing" is commonly used in diplomacy and public international law and is commonly recognized as a practice in violation of international law. And even though there is no international tribunal that has jurisdiction over the crime of ethnic cleansing, the acts that constitute the policy of ethnic cleansing can be qualified as crimes against humanity, war crimes, or genocide (arguably). For example, after the international condemnation of alleged ethnic cleansing in Rohingya, the ICC ruled that it has jurisdiction to investigate the displacement of hundreds of thousands of Rohingya people as a possible crime against humanity. One of the UN fact-finding missions concluded that those atrocities amounted to "genocidal intent." Another one qualified them as alleged war crimes (Menzies 2018).

Unfortunately, there are still ongoing policies of ethnic cleansing in the world. It has been more than a century since Azerbaijan started its systematic attempts to forcefully remove the indigenous ethnic Armenian population from Artsakh. This paper is aimed to discuss whether Azerbaijan's criminal policy circumscribed by the period from November 9, 2020, till today, amounts to ethnic cleansing.

2. Historical Background

Artsakh (internationally known as Nagorno Karabakh) is a mountainous region in the South Caucasus mainly populated by ethnic Armenians. For centuries the region was part of the Armenian kingdom. After the fall of the kingdom, Artsakh was concurred by Persians, and later by Russians. In 1917 the Russian Empire collapsed and three Caucasian nations: Armenians, Georgians, and Azeris declared their independence by the formation of nation States. The Republic of Azerbaijan with the support of the Turkish army claimed Armenian-inhabited Artsakh. But attempts of Azerbaijan to take control over the region were met with resistance by the Armenian population. In the following years, the Red Army of Soviet Russia took control over the region and on July 5, 1921, decided on "the necessity of establishing peace between Muslims and Armenians" to give Nagorno Karabakh to the Azerbaijani SSR, granting it wide regional autonomy. At that time 94% of the population of the region was Armenian (Blakemore 2020).

For about 70 years of the existence of the Soviet Union, the Armenian population of Artsakh was the object of discrimination and gross human rights violations by Azerbaijani authorities (Nagorno Karabakh: 1921-1988). As a result of the criminal State policy, in 1979, the Armenian population of the region decreased to 75.9% (University of Maryland 2004). For instance, a much higher proportion of Armenians from Nagorno-Karabakh were drafted to WW2 than others in the Azerbaijani SSR. In the 1950s, the capital investments per capita in NKAO were ten times less than the average indicator of Azerbaijan (Nagorno Karabakh: 1921-1988). Armenian, as a language, had practically been ousted from official use - a fact that was reflected even in the Azerbaijan SSR law "On NKAO" (law on the Nagorno Karabakh Autonomous Oblast) where there was not a single mention of the word "Armenian" (*Id.*).

In order to protect the ethnic identity and prevent the further decrease of the Armenian population, on February 13, 1988, tens of thousands of Armenians started a mass demonstration in Stepanakert (current capital of the Republic of Artsakh), demanding NKAO's reunification with the Armenian SSR (*Id.*). Azerbaijani SSR, in response to the peaceful movement, organized pogroms of the Armenian population in Azerbaijani big cities such as Sumgait, Baku, and Kirovabad (*Id.*). Further, from April to August 1991, the Special Forces of the Azerbaijani Interior Ministry (known as OMON), launched "Koltso" (Ring) operation on the deportation of the Armenian population of Artsakh. The conflict moved to its military phase. To organize self-defense, Armenians formed voluntary military units that later became the basis for the regular army.

On September 2, 1991, a joint session of deputies of all levels of NKAO and the Shahumyan region proclaimed the independence of the Nagorno Karabakh Republic (NKR) as an expression of "the will of the people... and its desire for freedom, independence, equality, and good neighborliness" (Proclamation of the Nagorno Karabakh Republic). By the end of the war in 1994, the territory of NKAO and the adjacent seven regions were under the control of NKR.

In September 2020 Azerbaijan, with the support of Turkey and mercenary groups launched full-scale aggression against the Republic of Artsakh. The bloody 44-day war ended on November 10. Armenia, Azerbaijan, and Russia have issued a ceasefire declaration brokered by the Russian Federation. Under the declaration, Azerbaijan now controls in full the seven adjacent regions to Nagorno-Karabakh and holds a part of the former NKAO itself. The rest is patrolled by a Russian peacekeeping force but still governed by local authorities of the Republic of Artsakh. As a result of the aggression, Azerbaijan's military forces have been located in the immediate vicinity of the villages of Artsakh. Since that time those forces deliberately and systematically have been terrorizing and pressuring the Armenian population of Artsakh intending to compel them to abandon their homes.

3. Definition of the Crime of Ethnic Cleansing

Even though the UN Security Council uses the term "ethnic cleansing" in its several resolutions, none of them defines it. Nevertheless, by Resolution 780 the Security Council established a Commission of Experts and assigned to provide a report "on the evidence of grave breaches of the Geneva Conventions and other violations of international humanitarian law committed in the territory of the former Yugoslavia" (S.C. Res. 780, 1992). The Commission defined ethnic cleansing as "a purposeful policy designed by one ethnic or religious group to remove by violent and terror-inspiring means the civilian population of another ethnic or religious group from certain geographic areas" (Final Rep. of the Commn of Experts, 1992).

Andrew Bell-Fialkoff defines ethnic cleansing "as the expulsion of an undesirable population from a given territory due to religious or ethnic discrimination, political, strategic or ideological considerations, or a combination of these" (Bell-Fialkof 2004).

"Ethnic cleansing may be equated with the systematic purge of the civilian population based on ethnic criteria, with the view to forcing it to abandon the territories where it lives" (Pegorier 2010). This means that for the action to be qualified as ethnic cleansing, a systematic or widespread element is required. The ILC in its work of the 48th session interpreted the term "systematic" as "an act committed pursuant to a preconceived plan or policy" (Int'l L. Comm'n, 1996). It also can be defined as "thoroughly organized and following a regular pattern on the basis of a common policy involving substantial public or private resources" (Roberts 2017). Christopher Roberts states that for the violation to be demonstrated as widespread or systematic, "one cannot simply pick

violations at random; rather, one must show that a common situation exists linking the violations and evidence one presents" (*Id.* p. 19).

The Commission of Experts established by Resolution 780 of the UN Security Council defining ethnic cleansing uses the phrase "purposeful policy" (Final Rep. of the Comm'n of Experts, 1992). It can be implied from the term "purposeful" that the crime must be committed with intent or knowledge. The Rome Statute provides that "a person has intent where: (a) In relation to conduct, that person means to engage in the conduct; (b) In relation to a consequence, that person means to cause that consequence or is aware that it will occur in the ordinary course of events." The Statute defines "Knowledge" as "awareness that a circumstance exists, or a consequence will occur in the ordinary course of events" (Rome Statute 1998).

The Commission of Reporters further provides the acts by which ethnic cleansing can be carried out (*actus reus*). According to the report ethnic cleansing can be committed by "murder, torture, arbitrary arrest and detention, extra-judicial executions, rape and sexual assaults, confinement of civilian population in ghetto areas, forcible removal, displacement and deportation of the civilian population, deliberate military attacks or threats of attacks on civilians and civilian areas, and wanton destruction of property" (Final Rep. of the Comm'n of Experts 1992). For example, in the Plavšić and Krajišnik cases, the ICTY Trial Chamber stated that "the Bosnian Serb leadership initiated and implemented a course of conduct which included the creation of impossible conditions of life, involving persecution and terror tactics, that would have the effect of encouraging non-Serbs to leave those areas; the deportation of those who were reluctant to leave; and the liquidation of others" (Pegorier 2010).

4. Azerbaijan's Policy of Ethnic Cleansing: Analysis Element of Mens Rea and the Contextual Element of State Policy

It can be proved that Azerbaijan's actions are part of purposeful State policy from the statements of Azerbaijani government officials. These statements serve as self-incriminations. For example, in an interview with the Azerbaijani media, president Ilham Aliyev mentions with dissatisfaction that "the Russian peacekeeping force is creating obstacles for the outflow of Armenians from the territory of Artsakh and is using various means to keep the Armenians in Artsakh" (Horizon Weekly 2022).

In December of 2020, Azerbaijan's State-owned postage stamp company began the production of a commemorative stamp depicting Nagorno-Karabakh being chemically "disinfected." The Universal Postal Union declined to register it, noting that it contradicted the provisions of the Union Convention and Code of Conduct (ICJ, *Arm. v Az.*, 2021). Former Deputy Prime Minister of Azerbaijan, Hajibala Abutalybov, explicitly acknowledged that Azerbaijan's goal is "the complete elimination of Armenians" (*Id.*) Former presidential candidate and Modern Musavat Party leader, Hafiz Hajiyev stated that "there should be no Armenian left in Azerbaijan" (*Id.*) The spokesperson of the Ministry of Defense stated that Armenians "have no right to live in this region" (*Id.*)

Element of Actus Reus

Murder and torture: The Prosecutor's office of Artsakh reported that after the trilateral declaration of November 9, 2020, until 01.01.2022, Azerbaijani armed forces located in the vicinity of the Armenian villages and cities committed 69 crimes: a total of 5 cases of murder (3 cases of civilian murder), 28 cases of attempted murder (19 of which were directed against the military), 1 case of a terrorist act, 4 cases of torture, 1 case of a death threat, 1 case of kidnapping. 3 civilians and 10 servicemen were killed, 77 (50 servicemen) were attempted to be killed, 37 people (28 servicemen) were wounded to

varying degrees, 8 were physically assaulted and 2 were threatened with death (Prosecutor's Office of Artsakh, 2022).

Forcible removal, displacement, and deportation of the civilian population: On 24 March 2022, the Azerbaijani Armed Forces have violated the line of contact in the direction of Parukh village in the Askeran region. They entered the village from different sides forming a chain. The head of the village stated that “We quickly evacuated people. There were roads. We passed through them.” Women and children were also evacuated from the nearby Khramort village following the Azerbaijani advance.

Deliberate military attacks or threats of attacks on civilians and civilian areas: From March 7 to 12, 2022, the Azerbaijani armed forces used a 60 mm grenade launcher, and a total of 57 shells were fired at various villages of Artsakh (Azerbaijani side used a 60 mm grenade launcher, 2022). The ceasefire regime has been and is continuously violated by firearms targeting residential houses and other civilian infrastructures in all directions (Azatutyun, 2021).

Wanton destruction of property and cultural heritage: Azerbaijani forces have destructed and continue to destruct Armenian historical-cultural heritage in places that are under Azerbaijan's control after the November 10 ceasefire. They destructed memorials, tombstones, cross-stones, crosses, churches, monuments, and statues of Armenian heroes (HRD of Artsakh, 2021).

On February 3, the Azerbaijani Minister of Culture Anar Karimov announced that “A working group of specialists in Albanian history and architecture has been set up to remove the fictitious traces written by Armenians on Albanian religious temples” (Isayev 2022).

Persecution and terror tactics: the Azerbaijani side, by using loudspeakers near Armenian villages, “calls on” the civilians of the community to leave the village under the threat of force. So-called “calls and exhortations” are videotaped and spread on social networks by channels that were used for spreading Azerbaijani propaganda during and after the 44-day war (Calls and exhortations, 2022).

Azeris also find the phone numbers of the people of Artsakh, call them, and urge them to sell their apartments. The main idea conveyed by them is that in any case Artsakh will be surrendered (Tert, 2021).

Moreover, Azerbaijan has been disrupting the operation of the main gas pipeline for several weeks, creating a humanitarian catastrophe. About 120,000 residents were deprived of heating and hot water. Because of the lack of heating classes at schools were suspended. Most health organizations, hospitals, and maternity hospitals were deprived of proper heating (Azerbaijani side used a 60 mm grenade launcher, 2022).

5. Relationship of Ethnic Cleansing to Crimes for which there are International Criminal Tribunals with Jurisdiction

However, there is no judicial organ that has jurisdiction to prosecute and punish “ethnic cleansing” as an independent crime, nor is there a precise definition and classification of the exact acts and contextual elements of those acts to be qualified as ethnic cleansing. What is clear is that the practice of ethnic cleansing violates international law and those carrying out such practice must be held accountable. The issue that arises is how the court can hold an individual accountable for the crime over which it doesn't have jurisdiction, as it will be contrary to the well-known principle of legality.

The principle of legality, also known as *nullum crimen sine lege* (no crime or punishment without law) provides that “a person shall not be criminally responsible..., unless the conduct in question constitutes, at the time it takes place, a crime within the jurisdiction of the Court. The definition of a crime shall be strictly construed and shall not

be extended by analogy. In case of ambiguity, the definition shall be interpreted in favor of the person being investigated, prosecuted, or convicted” (Rome Statute, 1998).

Some scholars argue that even though ethnic cleansing was considered by the drafters of the Rome Statute, it was not included in it because of its apparent closeness to genocide (Pegorier 2010). Moreover, while referring to war crimes and crimes against humanity, the drafters of the Statute defined that the goal of the ICC is to punish those charged with committing monstrous acts, including ethnic cleansing. It means that for the drafters of the Rome Statute ethnic cleansing is not an independent crime but can perhaps constitute an element or indication of the commission of other crimes, such as genocide, a crime against humanity, or a war crime (*Id.*).

Ethnic cleansing and Genocide

The ICJ in the “Case concerning the application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide” referring to ethnic cleansing found that “neither the intent, as a matter of policy, to render an area 'ethnically homogeneous', nor the operations that may be carried out to implement such policy, can as such be designated as genocide: the intent that characterizes genocide is "to destroy in whole or in part" a particular group, and deportation and displacement of a group, even if effected by force, is not necessarily equivalent to the destruction of that group, nor is such destruction an automatic consequence of the displacement.” It further states that “this is not to say that acts described as “ethnic cleansing” may never constitute genocide... Whether a particular operation described as “ethnic cleansing” amounts to genocide depends on the presence or absence of acts listed in Article II of the Genocide Convention, and of the intent to destroy the group as such” (ICJ, *Bosn. & Herz. V. Serb. & Montenegro*, 2007). For example, if a state is committing against an ethnic group within its jurisdiction acts that fall within Article II of the Genocide Convention (killing them, preventing them from giving birth, etc.), the fact that the state also ethnically cleanses that group can support an inference that the state is committing the Article II acts with genocidal intent – that is, with the goal of destroying that group “in part” within its jurisdiction (and ethnically cleansing the other part).

Ethnic Cleansing and War Crimes

The Rome Statute in the Article 8 defines war crimes as “Grave breaches of the Geneva Conventions of 12 August 1949” and “other serious violations of the laws and customs applicable in international armed conflict, within the established framework of international law” (Rome Statute, 1998). Among those crimes are: 8(2(a (iv))) extensive destruction and appropriation of property, not justified by military necessity and carried out unlawfully and wantonly; 8(2(b(viii))) the transfer, directly or indirectly, by the Occupying Power of parts of its own civilian population into the territory it occupies, or the deportation or transfer of all or parts of the population of the occupied territory within or outside this territory. Both seem to correspond to the concept of ethnic cleansing, at least on territory that is considered occupied under international law (*Id.*). It means that in some cases ethnic cleansing on occupied territory might be qualified as a war crime.

On the other hand, the contextual element of war crimes requires that “the conduct took place in the context of and was associated with an international/non-international armed conflict” (UN office on Genocide prevention and the R2P): While for the ethnic cleansing the existence of armed conflict is not a necessary element.

Ethnic Cleansing and Crimes against Humanity

The Rome Statute in Article 7 provides that “crimes against humanity” mean any act “when committed as part of a widespread or systematic attack directed against any civilian population, with knowledge of the attack” (Rome Statute, 1998). Among those acts are murder, extermination, deportation or ***forcible transfer of population***, persecution against any identifiable group or collectivity on political, racial, national,

ethnic, cultural, religious, gender... or other grounds that are universally recognized as impermissible under international law (emphases added) (*Id.*).

Ethnic cleansing seems to share most of the elements defining crimes against humanity and has been classified as such in several works of scholars and some of the ICTY judgments. For example, in the *Nikolić* the Trial Chamber indicated that: “the implementation of that discriminatory policy, commonly referred to as ethnic cleansing, over the region of Vlasenica alone, seems to have been so widespread as to fall within the Tribunal’s jurisdiction under Article 5 (Pegorier 2010). The ICC in the case of the Prosecutor v. Omar Hassan Ahmad Al Bashir states that it is the majorities’ view that the practice of ethnic cleansing usually amounts to the crime against humanity of persecution (Prosecutor v. Al Bashir, 2009).

In sum, even though ethnic cleansing is not involved in the Statute of any international tribunal, it doesn’t mean that those who committed acts constituting ethnic cleansing cannot be punished by such tribunals. For instance, in the situation of Darfur, which has been widely qualified as ethnic cleansing (Human Rights Watch, 2004), the ICC investigations focus on allegations of genocide, war crimes, and crimes against humanity (Situation in Darfur, Sudan).

6. Conclusion

The fact that Azerbaijan wants to establish an ethnically homogenous geographic area is not unfamiliar to Armenians, nor is Artsakh the only region where Azerbaijan exercised and is exercising its criminal policy of ethnic cleansing. In 2002, in an interview with the Azerbaijani media, Heydar Aliyev, referring to the times of the Soviet Union, stated: “At the same time, I tried to change the demographics there... We sent Azerbaijanis from the adjacent regions, not to Baku, but there [Nagorno-Karabakh Autonomous Oblast] ... By these and other measures, I tried to have more Azerbaijanis in Nagorno-Karabakh, and reduce the number of Armenians” (Gegham Stepanyan, 2022). In Nakhichevan (another region under Azerbaijan SSR), the policy of ethnic cleansing led to the Armenian population decreasing from 40% to 2% in a few decades (Nagorno Karabakh: 1921-1988).

Considering the intent of the Azerbaijani government to force Armenians to leave the region, the systematic and widespread criminal activities of Azerbaijan and knowledge of what consequences will such actions have, it can be concluded that Azerbaijan is committing ethnic cleansing of the Armenian population of Artsakh.

WORKS CITED

1. Andreopoulos, George. Ethnic Cleansing. *Encyclopedia Britannica*, 6 Dec. 2021, <https://www.britannica.com/topic/ethnic-cleansing>. Accessed: 11 Oct. 2022.
2. Azatutyun. The Azerbaijani Side Fired in the Direction of Armenian Peaceful Settlements near Shushi. Artsakh Human Rights Defender. 25 Aug 2021, <https://www.azatutyun.am/a/31428000.html> Accessed: 11 Oct. 2022.
3. Bell-Fialkof, Andrew. A Brief History of Ethnic Cleansing. 2004, <http://enc3310zine.pbworks.com/f/9308115873.pdf>
4. Blakemore, Erin. How the Nagorno-Karabakh Conflict has been Shaped by Past Empires. *National Geographic*, 15 Oct. 2020, <https://www.nationalgeographic.com/history/article/how-nagorno-karabakh-conflict-shaped-by-past-empires>. Accessed: 11 Oct. 2022.
5. First Channel News. “Calls and Exhortations” by Azerbaijanis to Armenian Population in Khramort, Askeran, are Directly Intended to Intimidate Population: Artsakh’s Ombudsman. 26 Feb. 2022, <https://www.1lurer.am/en/2022/02/26/%E2%80%9CCalls->

[and-exhortations%E2%80%9D-by-Azerbaijanis-to-Armenian-population-through-loudspeakers-in-Khramort-co/670837](#). Accessed: 11 Oct. 2022.

6. First Channel News. From March 7 to 12 Azerbaijani Side Used a 60 mm Grenade launcher, a Total of 57 shells were Fired: Artsakh Ombudsman. 18 Mar. 2022, <https://www.1lurer.am/en/2022/03/18/From-March-7-to-12-Azerbaijani-side-used-a-60-mm-grenade-launcher-a-total-of-57-shells-were-fired-A/684459>. Accessed: 11 Oct. 2022.

7. Gegham Stepanian. In an Interview with Azerbaijani media, the Azerbaijani Leader Expressed Dissatisfaction. Facebook, 19 Jan. 2022, <https://www.facebook.com/gegham.stepanian/posts/4472915539504492>. Accessed: 11 Oct. 2022.

8. Horizon Weekly. Artsakh Ombudsman Urges not to Give in to Azerbaijani Manipulations. 20 Jan. 2022, <https://horizonweekly.ca/en/artsakh-ombudsman-urges-not-to-give-in-to-azerbaijani-manipulations/>. Accessed: 11 Oct. 2022.

9. HRD OF Artsakh. Ad Hoc Public Report: The Armenian Cultural Heritage in Artsakh (Nagorno-Karabakh); Cases of Vandalism and at Risk of Destruction by Azerbaijan. 26 Jan. 2021, <https://artsakhombuds.am/en/document/792>

10. Human Rights Watch. Darfur Destroyed, Ethnic Cleansing by Government and Militia Forces in Western Sudan, 6 May 2004, <https://www.hrw.org/report/2004/05/06/darfur-destroyed/ethnic-cleansing-government-and-militia-forces-western-sudan>. Accessed: 11 Oct. 2022.

11. ICC. Situation in Darfur, Sudan. Available online <https://www.icc-cpi.int/darfur>. Accessed: 11 Oct. 2022.

12. ICC-02/05-01/09. Prosecutor v. Al Bashir: Warrant of Arrest, 4 Mar. 2009, 145, https://www.icc-cpi.int/CourtRecords/CR2009_01517.PDF

13. ICJ. Application Instituting Proceedings and Request for Provisional Measures (Arm. v. Azer.). 16 Sep. 2021, 50, <https://www.icj-cij.org/public/files/case-related/180/180-20210916-APP-01-00-EN.pdf>

14. ICJ. Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, (Bosn. & Herz. V. Serb. & Montenegro), 2007, 190, <https://www.icj-cij.org/public/files/case-related/91/091-20070226-JUD-01-00-EN.pdf>

15. ICTY. <https://www.icty.org/>. Accessed: 9 Apr. 2022.

16. Isayev, Heydar. "Azerbaijan Announces Plans to Erase Armenian Traces from Churches." *Eurasianet*, 4 Feb. 2022, <https://eurasianet.org/azerbaijan-announces-plans-to-erase-armenian-traces-from-churches#:~:text=Azerbaijan's%20government%20has%20announced%20that,the%2020%20war%20with%20Armenia>. Accessed: 11 Oct. 2022.

17. Mediamax. Azerbaijan fired at Houses in Martuni region. 11 Feb. 2022, <https://mediamax.am/am/news/karabakh/46327/> Accessed: 11 Oct. 2022.

18. Menzies, Robert. Rohingya and the ICC – The Rights of the Rohingya? *Genocide Alert*, 26 Nov. 2018, <https://www.genocide-alert.de/rohingya-and-the-icc-the-rights-of-the-rohingya/>. Accessed: 11 Oct. 2022.

19. MFA of Artsakh. Nagorno Karabakh: 1921-1988. <http://www.nkr.am/en/karabakh-in-soviet-period>. Accessed: 11 Oct. 2022.

20. NKRUSA. Proclamation of the Nagorno Karabakh Republic. http://www.nkrusa.org/nk_conflict/declaration_independence.shtml. Accessed: 11 Oct. 2022.

21. Pégrier, Clotilde. The Legal Qualification of Ethnic Cleansing. 17 Dec. 2010, p 173, <https://ore.exeter.ac.uk/repository/bitstream/handle/10036/3091/PegorierC.pdf?isAllowed=y&sequence=1>

22. Prosecutor's Office of Artsakh. Information about Azerbaijan's criminal activities from Nov. 9, 2021 to Jan 1, 2022. <https://prosecutor.nk.am/%d5%bf%d5%a5%d5%b2%d5%a5%d5%af%d5%a1%d5%bf%d5%be%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6-2020-%d5%a9%d5%be%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%b6%d5%b8%d5%b5%d5%a5%d5%b4%d5%a2%d5%a5/>. Accessed: 11 Oct. 2022.

23. Roberts, Christopher. On the Definition of Crimes Against Humanity and Other Widespread or Systematic Human Rights Violations. 2017, p. 21, <https://scholarship.law.upenn.edu/cgi/viewcontent.cgi?article=1202&context=jlasc>

24. S.C. Res. 771, 2. 13 Aug. 1992, <https://digitallibrary.un.org/record/148182?ln=en>

25. S.C. Res. 780, 2. 6 Oct. 1992, <https://digitallibrary.un.org/record/151310?ln=en>.

26. S.C. Res. 819, 7 16. Apr. 1993, <https://digitallibrary.un.org/record/164939?ln=en>

27. S.C. Res. 827, 2. 25 May 1993, <https://digitallibrary.un.org/record/166567?ln=en>

28. Tert. Azeris call Artsakh People and Offer to Sell Apartments. The Main Idea Conveyed by them is that in any Case Artsakh will be Surrendered: Tigran Abrahamyan. 25 Jun. 2021, <https://www.tert.am/am/news/2021/06/25/Tigran-abrahamyan/3650201>. Accessed: 11 Oct. 2022.

29. U.N. Doc. A/51/10. Int'l L. Comm'n, Rep. on the work of Its Forty-Eight Session. 1994, p. 14, https://legal.un.org/ilc/documentation/english/reports/a_51_10.pdf

30. U.N. Doc. S/1994/674. Final Rep. of the Comm'n of Experts Established Pursuant to S. C. Res. 780 (1992). 1994, p. 33, https://www.icty.org/x/file/About/OTP/un_commission_of_experts_report1994_en.pdf.

31. UN Doc. A/CONF.183/9. Rome Statute of the International Criminal Court. Adopted by the United Nations Diplomatic Conference of Plenipotentiaries on the Establishment of an International Criminal Court. 17 Jul. 1998, Art. 30(3), <https://www.icc-cpi.int/sites/default/files/RS-Eng.pdf>

32. UN office on Genocide Prevention and the R2P. War Crimes. <https://www.un.org/en/genocideprevention/war-crimes.shtml#:~:text=War%20crimes%20contain%20two%20main,act%20and%20the%20contextual%20element>. Accessed 11 Oct. 2022.

33. University of Maryland Center for International Development and Conflict Management. Minorities at Risk: Assessment of Armenians in Azerbaijan. 2004, <http://www.mar.umd.edu/assessment.asp?groupId=37301>. Accessed: 11 Oct. 2022.

ԱՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԷԹՆԻԿ ՉՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 2020 Թ. 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՅԵՏՈ

ԱՐՄԱՆ ԱՍՐՅԱՆ

*Արցախի պետական համալսարանի
պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս,
«Մարդու իրավունքներ և քաղաքացիական ազատություններ»
մասնագիտության մագիստրոս,
ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն*

Էթնիկ զտումը որպես երևույթ, չնայած նոր անվանմանը, մարդկության պատմության մեջ ամենևին էլ նոր չէ: Բազմաթիվ ազգերի շարքում հայ ժողովուրդը ևս տարբեր ժամանակներում զոհ է դարձել այս սարսափելի ռմբազործությանը և, ցավոք, այսօր էլ ստիպված է առերեսվել դրան:

Հողվածի խնդիրն է ներկայացնել 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի նկատմամբ շարունակաբար և համատարած կերպով իրականացվող ահաբեկչական հանցավոր գործողություններն ու դրանց նպատակները և միջազգային իրավունքի շրջանակներում տալ այդ գործողությունների իրավական որակումը:

Աշխատանքի շարադրումը կատարվել է պատմական հետազոտությունների, միջազգային իրավունքի նորմերի վերլուծության, դատական վճիռների և գիտական դոկտրինների, ինչպես նաև սույն հոդվածի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության և դրանց համադրման եղանակներով:

Հետազոտության արդյունքում եզրահանգում է արվել, որ Արցախի ժողովրդի նկատմամբ իրականացվող ադրբեջանական հանցագործությունները ոչ թե առանձին, լուրջ միջադեպեր են, այլ պետական մակարդակով ծրագրված և տասնամյակներով իրականացվող սիստեմատիկ և համատարած դիտավորյալ քաղաքականության շարունակություն, որի նպատակն է հասնել Արցախի վերջնական հայաթափմանը:

Հիմնաբառեր՝ Արցախ, Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Էթնիկ զտում, միջազգային հանցագործություն, հանցագործության տարրեր, ահաբեկում, բնակչության բռնի տեղահանում:

ПОЛИТИКА ЭТНИЧЕСКОЙ ЧИСТКИ АЗЕРБАЙДЖАНА В ОТНОШЕНИИ АРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ АРЦАХА ПОСЛЕ 44-ДНЕВНОЙ ВОЙНЫ

АРМАН АСРЯН

*преподаватель факультета истории и права
Арцахского государственного университета,
магистр права в области прав человека и гражданских свобод,
г. Степанакерт, Республика Арцах*

Этническая чистка как явление, несмотря на свое новое название, вовсе не ново в истории человечества. Наряду с некоторыми народами, армяне также стали жертвой этого ужасного преступления и, к сожалению, вынуждены сталкиваться с ним и по сей день.

Данная статья преследует цель представить широкомасштабные террористические и преступные действия Азербайджана, последовательно проводимые против населения Арцаха после 44-дневной войны 2020 года, а также раскрыть цель данных действий и их правовую оценку в рамках международного права.

Данная работа выполнена с использованием метода исторического исследования, анализа норм международного права, судебных решений и научных доктрин, а также методом исследования и сопоставления фактических обстоятельств, имеющих непосредственное отношение к данной статье.

В заключении статьи был сделан вывод о том, что преступления, совершаемые Азербайджаном против населения Арцаха, не являются отдельными и локальными инцидентами, а продолжением систематической, широкомасштабной и преднамеренной государственной политики, планируемой и проводимой десятилетиями и преследующей цель окончательной депопуляции Арцаха.

Ключевые слова: Арцах, Нагорный Карабах, Азербайджан, этническая чистка, международное преступление, элементы преступления, террор, насильственное перемещение населения.

**ԱՐՑԱԽՈՒՄ ԶԻՆՃԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ
ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ԴԵՊՐՈՒՄ ՀՅ ԵՎ ԱՅ ԶՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ***

ՀՏԴ 344

DOI: 10.52063/25792652-2022.4.15-79

ԿԱՐԱՊԵՏ ՍՄԲԱՏՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության դատախազության թիվ 2 կայազորի
գինվորական դատախազության դատախազ,
ք. Մարտակերտ, Արցախի Հանրապետություն
karapetsmbatyan96@gmail.com*

ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունված քրեական դատավարության նոր օրենսգիրքն ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին: Միևնույն ժամանակ, Արցախի Հանրապետությունում շարունակում է գործել 2008 թվականին ընդունված ԼՂՀ քրեական դատավարության օրենսգիրքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտնի չէ, թե երբ է Արցախում ընդունվելու նոր քրեական դատավարության օրենսգիրք, որը կհամապատասխանի ՀՀ-ում կիրառվող քրեադատավարական օրենսդրությանը, և որը կլուծի գինձառայողների կողմից կատարված հանցանքերի դեպքում պրակտիկայում գոյություն ունեցող խնդիրները, այժմեական ենք համարում անդրադառնալ ներկայում առաջացած խնդիրներից որոշներին և նպատակ ենք հետապնդում ցույց տալ պրակտիկայում դրանց հաղթահարման մի շարք եղանակներ և կանխել իրավակիրառողների կողմից քրեադատավարական նորմերի սխալ կիրարկումը:

Աշխատանքի խնդիրն է հնարավորինս մանրամասն ներկայացնել գինձառայողների կողմից կատարվող հանցանքների դեպքում առաջացող իրավական փակուղիները, ցույց տալ դրանցից բխող բացասական հետևանքները ԱՀ համապատասխան մարմինների կողմից քրեական գործ հարուցելու, մեղադրյալ ներգրավելու, քննչական գործողություններ կատարելու, խափանման միջոցներ ընտրելու և քրեական գործը ՀՀ իրավասու մարմիններին փոխանցելու իրավիճակներում:

Աշխատանքը շարադրված է արդիական խնդիրների ներկայացման և իրավահամեմատական վերլուծության հիման վրա:

Կարծում ենք՝ հաջողվել է ներկայացնել ՀՀ և ԱՀ քրեական դատավարության օրենսգրքերի փոխգործակցության հետ կապված արդիական խնդիրները: Կարծում ենք նաև, որ մինչև Արցախում նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը պետք է առաջնորդվել հողվածում նշված կանոններով:

Հիմնաբառեր՝ գինձառայողներ, ԱՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՀ քրեական սժադատավարության օրենսգիրք, մեղադրյալ ներգրավել, քննչական գործողություն, խափանման միջոց, ապացույցների թույլատրելիություն:

* Հողվածը ներկայացվել է 30.09.2022թ., գրախոսվել՝ 18.11.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը առաջ է բերել մի շարք խնդիրներ Արցախում զինծառայողների կողմից հանցանքների կատարման դեպքերով քրեադատավարական նորմերի կիրառման հարցում: Բանն այն է, որ Նախկին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերը մեծ մասամբ համընկնում էին ԱՀ քրեական դատավարության օրենսգրքի նորմերին, ինչի շնորհիվ զինծառայողների կողմից կատարված հանցանքների քննության ընթացքում դրանց կիրառման որևէ խնդիր չէր առաջանում, երբ քրեական գործն ըստ ենթակայության Արցախից փոխանցվում էր ՀՀ իրավասու մարմիններին: Իսկ այժմ խնդիրներ առաջանում են, ընդ որում՝ դրանք բազմաթիվ են և լուրջ: Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությամբ փորձել ենք ներկայացնել խնդիրներից որոշները և դրանց լուծման՝ մեր կողմից առաջարկվող տարբերակները:

Առկա խնդիրները

Սույն թվականի հուլիսի 1-ից ՀՀ-ում գործում է նոր քրեական դատավարության օրենսգրքը, որն իր մեջ ներառում է բազմաթիվ նոր ինստիտուտներ, կարգավորումներ: Մասնավորապես, փոխվել են վարույթի հանրային մասնակիցների որոշ լիազորություններ, ավելացել կամ փոխփոխվել են որոշ խափանման միջոցներ և դատավարական ակտեր: Այս ամենի պատճառով ԱՀ և ՀՀ քրեադատավարական նորմերի փոխգործակցության շրջանակները նեղացել են, և առաջացել են դժվարիտարաբան իրավիճակներ: Խոսքը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ Արցախից քրեական գործն ըստ ենթակայության փոխանցվում է ՀՀ համապատասխան մարմիններին: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի (Արցախ) և հարակից տարածքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելով՝ Հայաստանը պարտավորություն է ստանձնում ապահովել այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի I բաժնում¹ (ՄԻԵԴ վճիռը Մուրադյանն ընդդեմ Հայաստանի գործով, կետ 126), անհրաժեշտություն է առաջանում հատուկ անդրադառնալ ԱՀ հետաքննչական և քննչական մարմինների ընդունած որոշումների և կատարած գործողությունների օրինականությանը: Այժմ փորձենք հերթով անդրադառնալ առաջացող խնդիրներին և ներկայացնենք դրանց լուծման մեր տարբերակները:

Պրակտիկայում հուլիսի 1-ից հետո հանդիպում են դեպքեր, երբ անձը, հանդիսանալով զինծառայող, գործմասի տարածքից դուրս կատարում է ոչ զինվորական հանցագործություն կամ կատարում է հանցագործություն՝ հետագայում ձեռք բերելով զինծառայողի կարգավիճակ: Արցախի հետաքննության մարմինները իրենց օրենսդրության համաձայն հարուցում են քրեական գործ, ձեռք են բերում ապացույցներ, գործը փոխանցում են քննչական մարմիններին, որոնք էլ իրենց հերթին անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում են կայացնում, խափանման միջոց ընտրում, կատարում անհրաժեշտ քննչական գործողություններ: Նախկինում քրեադատավարական նորմերի կիրառման հարցում խնդիրներ չէին առաջանում, և ՀՀ քննչական մարմինները, ստանալով քրեական գործը, պարզապես ԱՀ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով որակվել էր արարքը, համապատասխանեցնում էին ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածին: Իսկ ներկայում առաջանում են հետևյալ խնդիրները՝ 1) ԱՀ քրեական դատավարության օրենսգրքի հիման վրա քրեական գործ հարուցելու մասին որոշում է կայացնում նաև հետաքննիչը այն դեպքում, երբ հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության նոր (գործող) օրենսգրքը նման որոշման տեսակ չի

¹ ՄԻԵԴ վճիռը Մուրադյանն ընդդեմ Հայաստանի գործով, կետ 126:

Նախատեսում: Դրա փոխարեն օրենսգիրքը նախատեսում է քննիչի կողմից քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կազմելու հնարավորություն, այսինքն՝ նոր կարգավորումներով փոխվել են և՛ կայացնող մարմինը, և՛ համապատասխան փաստաթղթի ձևը: 2) Բացի այդ, ԱՅ քրեական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է տալիս քննչական մարմիններին կայացնել մեղադրյալ ներգրավելու մասին որոշում այն դեպքում, երբ ՀՀ քրեական դատավարության նոր (գործող) օրենսգիրքը այդպիսի որոշման փոխարեն նախատեսում է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու իրավունք, այն էլ՝ միայն դատախազի համար: Փաստորեն, նմանատիպ խնդիր առկա է նաև այս դեպքում, փոխվել են որոշման անվանումը և այն կայացնող դատավարական սուբյեկտը: 3) Հաջորդիվ, խնդրահարույց է, երբ ընտրվում է ստորագրություն չհեռանալու մասին, խափանման միջոց կամ այլ փաստաթուղթ ճանաչելու մասին որոշում է կայացվում այն պարագայում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում դրա փոխարեն նախատեսված են բացակայելու արգելք խափանման միջոցը և արտավարության փաստաթուղթ ճանաչելու մասին որոշման կայացումը:

Նշված բոլոր դեպքերում հակասություն է առաջանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ժամանակի մեջ գործողության կանոնի հետ, որի համաձայն՝ քրեական վարույթի ընթացքում կիրառվում է սույն օրենսգրքի այն դրույթը, որը գործում է համապատասխան վարության գործողության կատարման կամ դատավարական ակտի կայացման ժամանակ:

Ի թիվս այլնի, ձեռք բերված ապացույցների թույլատրելիության մասով նույնպես կարող են առաջանալ խնդիրներ, մասնավորապես այն դեպքերում, երբ ԱՅ քննչական և հետաքննչական մարմինները տեղյակ լինելով, որ անձը հանդիսանում է զինծառայող, քրեական գործը չեն փոխանցում ՀՀ իրավասու մարմիններին՝ դրանով իսկ թույլ տալով քննչական ենթակայության խախտումներ: Բացի այդ հանդիպում են դեպքեր, երբ հուլիսի 1-ից հետո ԱՅ քննչական մարմինների կողմից կատարված որոշ քննչական գործողությունների համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով պահանջում են ավելի բարդ ընթացակարգ, օրինակ՝ դատական թույլտվության առկայության պահանջ: Խնդրահարույց են նաև այն իրավիճակները, երբ ապացույցը ձեռք է բերվում այն քննչական գործողության կատարմամբ, որի անվանումը և կատարման կարգը կամ սուբյեկտը որոշակի փոփոխություններ են կրել ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքով:

Խնդիրների լուծումները

Առաջին հերթին պետք է անդրադառնալ ԱՅ հետաքննության մարմնի և ԱՅ քննչական կոմիտեի քննիչի կողմից կայացվող՝ քրեական գործ հարուցելու և մեղադրյալ ներգրավելու մասին որոշումներին: Եթե դիտարկենք այն տարբերակը, որ ԱՅ հետաքննության մարմինները հուլիսի 1-ից հետո իրավունք չունեն զինծառայողներին վերագրվող հանցանքերով քրեական գործ հարուցել, իսկ քննիչը՝ մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնել, ապա ստացվում է, որ հուլիսի 1-ից հետո ընդունված այս որոշումների փոխարեն պետք է կազմվի վարույթ նախաձեռնելու մասին նոր արձանագրություն, և ընդունվի քրեական հետապնդում հարուցելու նոր որոշում, իսկ մինչ այդ ընդունված որոշումները պետք է վերացվեն: Սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝ հսկող դատախազին վերապահված իրավունքը չի վերաբերում ԱՅ քննիչի և հետաքննիչի կողմից կայացրած որոշումներին, ուստի այս դեպքում անհնար է դառնում քրեական գործ հարուցելու կամ մեղադրյալ ներգրավելու որոշումների վերացումը: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասում նշված կարգավորումը, համաձայն որի՝ քրեական վարույթի ընթացքում կիրառվում է օրենսգրքի այն դրույթը, որը գործում է համապատասխան վարության գործողության կատարման կամ դատավարական ակտի կայացման ժամանակ,

վերաբերում է ՀՀ քրեական վարույթի մասնակիցներին: Իսկ մեր ներկայացրած իրավիճակներում ԱՀ քննչական և հետաքննչական մարմինները գործում են համաձայն ԱՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթների: ԱՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված է, որ հետաքննության մարմինն իրավունք ունի քրեական գործ հարուցելու (52-րդ հոդվածի, 1-ին մասի 3-րդ կետ), քննիչն էլ մեղադրյալ ներգրավելու մասին որոշում կայացնելու (50-րդ հոդվածի 4-րդ մասի 14-րդ կետ), ուստի նրանց կողմից օրենքի որևէ խախտում չի կատարվում, և նրանք գործում են համաձայն ԱՀ օրենսդրության: Բացի այդ, վերջիններիս կողմից ընդունված որոշումների արդյունքում անձի սահմանադրական իրավունքների ոտնահարում, ինչպես նաև ՀՀ քրեական վարույթի սկզբունքների խախտում ևս տեղի չեն ունենում: Հարկ ենք համարում ընդգծել, որ պրակտիկայում մեղադրյալ ներգրավելու մասին որոշման փոխարեն քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելու պատճառը ոչ թե մինչ այդ ապօրինի կայացված որոշումն է, այլ արարքը ԱՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի փոխարեն ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով որակման անհրաժեշտությունը, և իրականում տեղի է ունենում մեղադրանքի փոփոխություն և ոչ՝ առաջին անգամ մեղադրանքի ձևակերպում:

Ձեռքբերված ապացույցների թույլատրելիության հետ կապված պետք է նշել հետևյալը: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ապացույցի թույլատրելիությունը որոշվում է այն ձեռք բերելու պահին գործող օրենքով, իսկ մեր դեպքում խնդիրներ առաջանում են, երբ (որոնք պրակտիկայից վերցված դեպքեր են) ապացույցներ ձեռք են բերվում հուլիսի 1-ից հետո: Այսպես, ԱՀ քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում ի թիվս այլիք ընդունվում է նաև հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին որոշում: ԱՀ հետաքննության մարմինները, հաշվի չառնելով, որ հանցանքի մասին հաղորդումները ըստ ենթակայության պետք է ուղարկվեն ՀՀ իրավասու մարմին, որոշում են կայացնում քրեական գործ հարուցելու մասին, իսկ դրանից հետո ԱՀ քննչական մարմինները ձեռք են բերում մի շարք ապացույցներ: Իսկ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել տվյալ քրեական վարույթն իրականացնելու, համապատասխան ապացուցողական կամ վարութային այլ գործողություն կատարելու իրավասությունն չունեցող անձի կողմից: Նույն հոդվածի 2-րդ մասում նշված է, որ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքով ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

Որպես վերոնշյալ խնդրի լուծում՝ նախատեսում ենք հետևյալը: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի 6-րդ մասում նշված է, որ եթե քրեական վարույթ նախաձեռնած քննիչը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, իրավասու չէ նախաքննություն կատարելու, ապա իրավիճակից թելադրվող անհրաժեշտ բոլոր վարութային գործողությունները կատարելուց հետո նա քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրությունն ուղարկում է հսկող դատախազին՝ դրան կցելով վարույթի բոլոր նյութերը: Այս դրույթն ապահովում է նոր սկսված նախաքննության օպերատիվությունը և արդյունավետությունը, ինչպես նաև բացառում է քննչական մարմինների միջև վարույթի ենթակայության կապակցությամբ հնարավոր քաջքուկները: Միաժամանակ, օրենսգրքում առկա այս հատուկ կանոնն ինքնին չեզոքացնում է վարութային գործողությունները ոչ պատշաճ սուբյեկտի կողմից կատարելու, հետևաբար և ձեռք բերված ապացույցներն անթույլատրելի ճանաչելու վերաբերյալ բոլոր մտավախությունները (Ղուկասյան և

ուրիշներ 277), և կարծում ենք, որ այս դրույթը վերաբերելի է նաև հետևյալ իրավիճակներին, և ԱՅ քննչական և հետաքննչական մարմինների (հետաքննության փուլում) կատարած քննչական գործողությունները միտված են լինում նախաքննության համակողմանիության, դրա բնականոն ընթացքի, քննչական գործողություններն օրենքով սահմանված կարգով ու ժամանակին կատարելու ապահովմանը: Որպես օրինակ կարող ենք ներկայացնել հետևյալ իրավիճակները: Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջների կամ երթևեկության կանոնների խախտման հետևանքով վթարների դեպքում, երբ մարդու առողջությանը պատճառվում է ծանր կամ միջին ծանրության վնաս կամ մահ, անմիջապես պետք է կատարվեն մի շարք գործողություններ՝ դեպքի վայրի զննություն, նմուշների ստացում և այլն: Իսկ մարդու առողջության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը պարզելու նպատակով: Նշված գործողություններն անհապաղ չկատարելը հանգեցնելու է հանցագործության հետքերի և հետևանքների կորստի և, մեծ հավանականությամբ, քրեական վարույթի ավարտի: Ուստի, մինչև ՀՀ իրավասու մարմիններին քրեական գործը փոխանցելը պետք է կատարվեն նշված գործողությունները: Սակայն, մեր կարծիքով, սա չպետք է վերաբերի այն իրավիճակներին, երբ արդեն հետաքննության փուլի ավարտից հետո՝ նախաքննության փուլում, ԱՅ քննչական կոմիտեի քննիչը որոշ քննչական գործողությունների կատարում հանձնարարի հետաքննության մարմնին: Հաշվի առնելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն ապացուցողական գործողություններ (խոսքը չի վերաբերում գաղտնի քննչական գործողություններին) կատարում է միայն քննիչը, տվյալ դեպքում քրեական գործը ստանալիս քննչական գործողությամբ ստացված տվյալը չի կարող օգտագործվել որպես ապացույց, և ՀՀ քննչական կոմիտեի քննիչի կողմից, ըստ հնարավորության, քննչական գործողությունը պետք է կատարվի նորից: Բացի այդ, ի տարբերություն մյուս քննչական գործողությունների, որոնց անվանումները և կատարման կարգը ընդհանուր առմամբ համընկնում են, այլ փաստաթուղթ ճանաչելու մասին որոշման պարագայում (որի կայացումն ըստ էության որևէ անձի իրավունքները չի սահմանափակում) ՀՀ քննչական կոմիտեի քննիչը պետք է դրա փոխարեն արտավարության փաստաթուղթ ճանաչելու մասին որոշում կայացնի, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին այդ որոշումը կայացնելուց առաջ պարտադիր նախատեսվում է նաև այդ փաստաթղթերը զննելու պարտավորություն:

Հետաքրքիր է իրավիճակն այն դեպքում, երբ ԱՅ քննչական մարմինների կողմից հուլիսի 1-ից հետո կատարված են լինում քննչական գործողություններ, որոնց կատարման համար նոր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը պահանջում է դատարանի թույլտվություն, օրինակ՝ թվային խուզարկությունների դեպքում: Նման իրավիճակներ կարող են լինել, երբ որոնվում են համակարգիչներում առկա տեսագրությունները կամ այլ տեղեկատվություն, և վարույթի համար նշանակություն ունեցող տվյալները վերցվում են այլ կրիչի վրա պատճենելու եղանակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապացույցների թույլատրելիությունը որոշվում է այն ձեռք բերելու պահին գործող օրենքով, կարող ենք հավաստել, որ դրանք անթույլատրելի ապացույցներ են համարվելու, ուստի քննչական մարմինները ստիպված են նման դեպքերում նույն տեղեկատվությունը ձեռք բերելու համար նախ դիմել դատարան, ստանալ համապատասխան թույլտվությունը, ապա նոր կատարել քննչական գործողությունները: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ քրեական վարույթի նյութերում մինչ այդ առկա կրիչի տվյալները չեն կարող օգտագործվել:

Ինչ վերաբերում է ընտրված խափանման միջոցների փոփոխությանը, ցանկանում ենք անդրադառնալ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցին: Այսպես, ըստ էության, և՛ ստորագրություն չհեռանալու մասին, և՛

բացակայելու արգելք խափանման միջոցների նպատակը վարույթն իրականացնող մարմնի հրավերով մեղադրյալի ներկայանալն ապահովելը և խուսափելու միջոցով քրեական վարույթին խոչընդոտելը կանխելն է: Ուստի անհրաժեշտ չէ փոփոխել խափանման միջոցը: Պարզապես պետք է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհապաղ որոշումն ուղարկել սահմանային վերահսկողություն և իրականացնող լիազոր մարմին:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում եզրահանգել ենք, որ Արցախում զինծառայողների կողմից կատարված հանցանքների պարագայում ԱՀ հետաքննության մարմնի կողմից քրեական գործ հարուցելու, իսկ ԱՀ քննչական կոմիտեի քննիչի կողմից մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելու դեպքում, եթե հետագայում քրեական գործն ըստ ենթակայության ՀՀ իրավասու մարմիններին է փոխանցվում, օրենսդրական կամ քրեադատավարական սկզբունքների որևէ խախտում տեղի չի ունենում: Վերլուծել ենք մինչև քրեական գործն ըստ ենթակայության փոխանցելը ապացուցողական գործողությունների կատարման հնարավորությունները և, միևնույն ժամանակ, ձեռք բերված ապացույցների մասով եզրահանգել ենք, որ քրեական գործերն ըստ ենթակայության փոխանցվելու դեպքում այլ փաստաթուղթ ճանաչելու մասին որոշումը պետք է փոխարինվի արտավարության փաստաթուղթ ճանաչելու վերաբերյալ որոշմամբ:

Ուսումնասիրության արդյունքում նաև եզրահանգել ենք, որ ԱՀ քննչական մարմինների կողմից առանց համապատասխան դատական թույլտվության կատարված քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալները չեն կարող քրեական վարույթի շրջանակներում օգտագործվել որպես ապացույց, եթե տվյալ քննչական գործողությունների կատարման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը պահանջում է դատական թույլտվության պարտադիր պահանջ: Իսկ ստորագրություն չհեռնալու մասին ընտրված խափանման միջոցի կիրառման դեպքում եկել ենք այն հետևության, որ այն բացակայելու արգելք խափանման միջոցով փոխարինելու կարիք չկա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՀ Ազգային ժողով. «ԱՀ քրեական դատավարության օրենսգրք».
<http://arlexis.am/DocumentView.aspx?docid=25694>:
2. ՀՀ Ազգային ժողով. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրք».
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=166538>:
3. Ղուկասյան, Հրայր և ուրիշներ. «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց».
Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022 թ.
4. Մարդու իրավունքների եվրոպական դատարան. *Գանձատ թիվ 11275/07, Սորասբուրգ 24 նոյեմբերի 2016թ. Մուրադյանն ընդդեմ Հայաստանի գործով*.
https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_8947388325861_CASE_OF_MU_RADYAN_v_ARMENIA_ARM.pdf:

WORKS CITED

1. AH Azgayin jhoghov. «AH qreakan datavarut'yan o'rensgirq»: [The Parliament of the Republic of Artsakh. «*The Criminal Proceeding Code of The Republic of Artsakh*»] (in Armenian)

2. HH Azgayin jhoghov. «HH qreakan datavarut'yan o'rensgirq»: [The Parliament of the Republic of Armenia. «*The Criminal Proceeding Code of The Republic of Armenia*»] (in Armenian)

3. Ghukasyan Hrayr ev urishner (and others). «HH qreakan datavarut'yan nor o'rensgri hayecakargayin luc'umneri, norararakan motecumneri ev himnakan institutneri meknabanman gorc'nakan ughecuyc». Evropayi xorhurd, hulis, 2022 t'.: [A Practical Guide of Conceptual Solutions, Innovative Approaches and Main Institutes on the New Criminal Proceeding Code of the Republic of Armenia] 2022 (in Armenian)

4. Mardu iravunqeri evropakan dataran. Gangat t'iv 11275/07, Strasburg 24 noyemberi 2016t'. Muradyann y'nddem Hayastani gorc'ov. [European Court of Human Rights, application no. 11275/07, Strasbourg, Case of Muradyan vs Armenia, 24 November 2016]

THE COOPERATION BETWEEN CRIMINAL CODES OF THE REPUBLIC OF ARMENIA AND REPUBLIC OF ARTSAKH IN CASES OF CRIMES SERVICEMEN COMMIT IN ARTSAKH

KARAPET SMBATYAN

*The Republic of Armenia,
Military Prosecutor's office, Garrison N2, prosecutor,
Martakert, the Republic of Artsakh*

As we know The Parliament of the Republic of Armenia adopted the new Criminal Proceeding Code in July 2022. Meanwhile the Criminal Proceeding code adopted in 2008 still operates in the Republic of Artsakh. Considering that it is unknown when the aforementioned code, which would correspond to the code in force in Armenia and which will solve the problems that exist in practice in the case of crimes committed by military personnel will be adopted in the Republic of Artsakh we consider it relevant to address some of the problems that have arisen at the present time, and we aim to show in practice a number of ways to overcome them and prevent the incorrect application of criminal procedural norms by law enforcement officers

The task of the work is to present in as much detail as possible the legal deadlocks that arise in the case of crimes committed by military personnel, to show the negative consequences arising from them in situations of initiation of a criminal case by the relevant authorities of the Republic of Artsakh, involvement of the accused, investigative actions, selection of preventive measures and transfer of the criminal case to the competent authorities of the Republic of Armenia.

The work is written on the basis of presentation of current issues and legal comparative analysis.

We think that we have managed to present the current issues related to the interaction of the criminal procedure codes of the Republic of Armenia and the Republic of Artsakh. We also believe that until the adoption of the new criminal procedure agenda in Artsakh, we should be guided by the rules mentioned in the article.

Key words: *servicemen, The Criminal Proceeding Code of The Republic of Armenia, The Criminal Proceeding Code of The Republic of Artsakh, charge as an accused, investigative action, preventive measure, admissibility of evidence.*

ВЗАИМОДЕЙСТВИЕ УГОЛОВНО-ПРОЦЕДУАЛЬНЫХ КОДЕКСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И РЕСПУБЛИКИ АРЦАХ В СЛУЧАЕ ПРЕСТУПЛЕНИЙ В АРЦАХЕ

КАРАПЕТ СМБАТЯАН

*Прокурор военной прокуратуры второго горнизона Республики Армения,
г. Мартакерт, Республика Арцах*

Как известно, новый уголовно-процесуальный кодекс, принятый национальным собранием Республики Армения, вошёл в силу 1 июля 2022 года. В то же время в республике Арцах продолжает действовать уголовно-процесуальный кодекс НКР, принятый в 2008 году.

Учитывая, что неизвестно, когда в республике Арцах будет принят вышеупомянутый кодекс, который бы соответствовал кодексу, действующему в Армении и тем самым прояснял существующие в практике проблемы в составе преступления совершенных со стороны военнослужащих, считаем своевременным обратить внимание на некоторые выявленные проблемы с целью показать на практике ряд способов их преодоления и предотвратить неверное оперирование уголовно-процесуальными нормами со стороны носителей правопорядка.

Задачей исследования является по возможности подробно дать представление о возникших юридических тупиках в расследовании преступлений, совершенных со стороны военнослужащих, указывая на негативные последствия, вытекающие из следующих ситуаций: при возбуждении уголовного дела со стороны соответствующих органов АР, при привлечении виновного, в процессе следственного расследования, при выборе меры пресечения и при передаче уголовного дела компетентным органам республики Армения.

Работа изложена на основе прояснения первостепенных проблем и анализа сравнительного правоведения.

Представляется, что нам удалось представить приоритетные проблемы взаимодействия уголовно-процесуальный кодексов Республики Армения и Республики Арцаха и, по нашему мнению, возможно руководствоваться указанными правилами до принятия в Арцахе нового кодекса.

Ключевые слова: *военнослужащие, Уголовно-процесуальный кодекс Республики Армения, Уголовно-процесуальный кодекс Республики Арцах, привлечь в качестве обвиняемого, следственное действие, мера пресечения, допустимость доказательств.*

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ,
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**



ԼԵԶԿԻ ՀԱՐՅԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ 327

DOI: 10.52063/25792652-2022.4.15-87

ՎԱՐԴՈՒՅԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի
Դիվանագիտական ծառայության և
մասնագիտական հաղորդակցման ամբիոն,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
petrosiv@yahoo.fr

Այս հոդվածում խոսվում է միջազգային լեզվի կարգավիճակի և միջազգային բանակցություններում այս կամ այն լեզվի՝ մշտական միջազգային լեզվի կարգավիճակ ունենալու հարցի մասին:

Հոդվածի նպատակն է ցույց տալ, որ որևէ մեկ առանձին լեզու երբևէ բացահայտ կերպով չի ճանաչվել որպես միջազգային լեզու: Ըստ Էոլթյան, այս կամ այն լեզվի կիրառման հարցը բանակցություններում գործնականում կարգավորվել է կողմերի համաձայնությամբ:

Միջնադարից սկսած՝ բավականին երկար ժամանակ Արևմուտքում լատիներենը եղել է միջազգային բանակցությունների, երկրների միջև հաղորդակցման, միջազգային պայմանագրերի և պետական փաստաթղթերի ձևակերպման լեզու:

Հոդվածում անդրադարձ է կատարվում այն օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներին, որոնց պատճառով լատիներենին փոխարինելու եկավ ֆրանսերենը:

Ըստ Էոլթյան, ֆրանսերենի կիրառումը միջազգային բանակցություններում պայմանավորված է եղել ոչ թե նրա ռազմական հաղթանակներով, ինչպես հաճախ կարծել են, այլ տվյալ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և լեզվամշակութային գործոններով:

Թեմայի համաժամանակյա և տարածամանակյա ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ որևէ լեզու երբևէ չի ունեցել և չի կարող ունենալ միջազգային լեզվի մշտական կարգավիճակ, և նրա գործածությունը բանակցող կողմերի կողմից մշտապես պայմանավորված կլինի տվյալ ժամանակաշրջանի՝ վերը նշված գործոններով:

Հիմնաբառեր՝ միջազգային լեզու, միջազգային բանակցություններ, ֆրանսերեն լեզու, կարիերային դիվանագիտություն, բանակցությունների լեզու, բանակցային կողմեր, միջազգային լեզվի կարգավիճակ:

* Հոդվածը ներկայացվել է 14.11.2022թ., գրախոսվել՝ 16.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Ներծուրթուն

Տեսականորեն՝ միջազգային իրավունքում երբեք դիվանագիտության միջազգային լեզվի հարց չի դրվել, և այդ մասին որևէ գրավոր դրույթ չկա: Գործնականում պետությունների միջև պայմանագրի կնքման պահին օգտագործվող լեզուն հանդես է գալիս որպես դիվանագիտական լեզու:

Ֆրանսերեն լեզվի կիրառումը ևս երբևէ չի դիտարկվել որպես միջազգային լեզվի պաշտոնական ճանաչում: Դիվանագիտության մեջ այն ընդունվել է միայն կողմերի պարզ համաձայնությամբ: Շատ կարևոր և հետաքրքրական է նկատել, որ ֆրանսերենի կիրառումը դիվանագիտության և այլ ոլորտներում երբևէ *Ֆրանսիայի քաղաքական կամ ռազմական գերակայությամբ պայմանավորված չի եղել*: Հաճախ մարդիկ կարծել են, թե միջազգային բանակցություններում աշխատանքային լեզուն ֆրանսերենն է եղել, որովհետև ֆրանսիան երկար ժամանակ ստորագրվող պայմանագրերի ուժեղ կողմ է հանդիսացել:

Իսկ ինչպե՞ս է դա տեղի ունեցել, ինչպե՞ս է ֆրանսերենը կիրառվել որպես միջազգային բանակցությունների լեզու:

Երկար ժամանակ Արևմուտքում պայմանագրերի, ինչպես նաև բոլոր պետական փաստաթղթերի և լուրջ աշխատությունների լեզուն եղել է լատիներենը: Միջնադարից սկսած՝ լատիներենն է սպասարկել միջազգային հարաբերությունների ոլորտը, ինչպես երկրների միջև հաղորդակցման, այնպես էլ օտար երկրից ժամանած դեսպաններին ներկայացնելու, բանակցությունների, պայմանագրերի խմբագրման և այլ նպատակներով:

Լատիներենի օգտագործումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով:

1. Նախ՝ գործնական հանգամանքների մասին: Լատիներենը հոգևորականների լեզուն էր, իսկ դիվանագիտական առաքելության անձնակազմը կազմված էր հիմնականում հոգևորականներից, եպիսկոպոսներից ու կարդինալներից և ոչ թե աշխարհիկ մարդկանցից: Նրանք լատիներեն խոսում և գրում էին ավելի լավ, քան իրենց մայրենի լեզվով:

2. Երկրորդ կարևոր հանգամանքն այն էր, որ լատիներենը մեռած լեզու էր, այսինքն՝ այլևս որևէ մեկ կոնկրետ երկրի լեզուն չէր, և այս առումով նրա գործածումը ոչ մի անհարմարություն չէր առաջացնում բանակցող կողմերի համար, և նրա շատ քարացած արտահայտությունների և դարձվածքների իմաստը հայտնի էր բոլորին. բանակցողները գիտեին, որ իրենք այնպես կներկայացվեն, որ սխալ մեկնաբանությունների տեղիք չեն տա:

Կային նաև լատիներենը որպես դիվանագիտության լեզու կիրառելու պատմական այլ պատճառներ:

Ռոմանագերմանական Սրբազան կայսրությունը (Sacrum Imperium Romanum-ը) զբաղեցնում էր Եվրոպայի մեծ մասը՝ բացի Ֆրանսիայից և Անգլիայից, Հռոմեական կայսրության իրավահաջորդն էր և Սրբազան կայսրությունը լատիներենը համարում էր իր պաշտոնական լեզուն: Մինչև Կարլոս V-ի մահը ցանկացած պայմանագիր կնքելու համար Սուրբ կայսրությունը հանդես էր գալիս որպես գործընկեր կամ հակառակորդ, և այս հանգամանքը ևս պայմանավորում էր լատիներենի գերակայությունը: Կարլոս V-ն ասում էր. «Ես սովորեցի լատիներեն Պապի հետ խոսելու համար, իսպաներեն սովորեցի՝ մորս հետ խոսելու համար, անգլերեն՝ հորաքրոջս, գերմաներեն՝ ընկերներիս և ֆրանսերեն՝ ինքս ինձ հետ խոսելու համար» («French: why was it adopted as a diplomatic language throughout Europe?»):

Լատիներենի գործածության քաղաքական դրդապատճառը ստիպեց մարդկանց նկատել, որ լատիներեն խոսելով՝ նրանք դրանով ընդունում են Գերմանական կայսրության գերակայությունը: Եվ եթե կամաց-կամաց սկսեցին հրաժարվել լատիներենից, պատճառներից մեկն էլ այն էր, որ Կայսրությունն ուզում էր

պարտադրել լատիներենը որպես պայմանագրերի լեզու, մինչդեռ Ֆրանսիան ֆրանսերենի կիրառությունը գերակայության խնդիր չէր դարձնում:

Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ եվրոպական մյուս լեզուները XV-XVI դարերում դեռ չէին հասել ճշգրտության և վերահսկողության այնպիսի մակարդակի, որպեսզի կարողանային բավարարել պայմանագիր կնքելու համար պահանջվող մակարդակը և խուսափեին երկիմաստությունից և թյուրիմացությունից, որոնք կհանգարեին կողմերի միջև լիակատար փոխըմբռնմանը: XVII դարից սկսած բոլոր այն հանգամանքները, որոնք նախկինում նպաստում էին լատիներենի զարգացմանը և կիրառմանը, այժմ արդեն սկսում են նպաստել նրա աստիճանական ետադիմությանն ու ֆրանսերենի առաջխաղացմանը:

Նախ քննարկենք խնդիրը լեզվական տեսակետից.

Եվրոպայում Վերածննդի մեծ շարժման հետ զուգընթաց լատիներենի ազդեցությունն ուժեղացավ: Միջնադարում լատիներենը դեռևս բավականին կենսունակ լեզու էր. այն կարելի էր կիրառել գործերում, բանակցություններում, լատիներենով կարելի էր գրուցել, կատակել, վիճել և նույնիսկ հայիոյել:

Վերածնունդը վնասեց լատիներենին նրանով, որ վերադարձ կատարվեց դեպի դասական լատիներենը, դեպի քարացած և մաքրագրած կամ զտած լատիներենը, որն այլևս չէր կարող բավարարել նոր պահանջներին, ինչպես մշակութային, այնպես էլ՝ գործնական առումով: Վերականգնելով նրա մաքուր վիճակը՝ նրան կտրեցին կենդանի աշխարհից: XVII դարում արդեն կային իրավաբանական, տնտեսական, քաղաքական շատ նոր հասկացություններ, որոնք այլևս չէին կարող արտահայտվել լատիներենով (Zink, *Moyen français (XIVe et XVe siècles), Que sais-je?* 36): Կային նաև այլ հանգամանքներ ևս, որոնք խոչընդոտում էին լատիներենի գործածությանը: Օրինակ՝ տպագրությունը, որը խրախուսում էր ժողովրդախոսակցական լեզուն, որովհետև հրատարակիչները ցանկանում էին գործ ունենալ ավելի լայն հանրության հետ: Մյուս խոչընդոտող հանգամանքը Լյուբերի բողոքական ռեֆորմն էր (1530), քանի որ Ռեֆորմիստների համար լատիներենը Հռոմի լեզուն էր, այլ կերպ ասած՝ պապի և նրա կողմնակիցների լեզուն: Թեև հոգևորականները և կրթված խավը շարունակում էին խոսել լատիներեն, սակայն այդ կրթված, զարգացած մարդիկ տարբեր ծագում ունեին և ի վերջո, խոսելով նույն լատիներեն լեզվով, իրար չէին հասկանում, քանի որ նրանց մայրենի լեզվի շեշտադրությունն այնպես էր փոխել լատիներենը, որ նրանք այլևս իրար չէին հասկանում:

Կա մի պատմական փաստ, որ Ֆրանսիայի թագավոր Կառլոս IX-ը, որը հիանալի տիրապետում էր լատիներենին, 1573 թ. ընդունում է լեռ դեսպանների (նրա եղբայրը՝ ապագա Հենրի III-ը, Լեհաստանի թագավորն էր): Դեսպանները լատիներենով գեղեցիկ ճառ արտասանեցին Կառլոս IX-ի համար, սակայն թագավորն ափսոսանքով հայտարարեց, որ չի կարող պատասխանել, քանի որ լեռերեն չի հասկանում. լեռական շեշտադրությունն այնպես էր փոխել լատիներենը, որ անհասկանալի էր դարձել թագավորի համար: Մյուս կողմից՝ դիվանագիտական անձնակազմի մեջ ևս փոփոխություններ կատարվեցին:

Հոգևորականներն աստիճանաբար դուրս մղվեցին դիվանագիտության ոլորտից և փոխարինվեցին կարիերային դիվանագետներով: Դիվանագետների դերը ստանձնեցին զինվորականները: Սակայն հայտնի է, որ զինվորականները փայլուն կրթություն չէին ստանում: Նրանք իրենց մասնագիտական գործունեությունն սկսում էին 16 տարեկան հասակում, երբեմն նույնիսկ ավելի երիտասարդ տարիքում, և ժամանակ չէին ունենում լատիներեն սովորելու համար և տիրապետում էին միայն իրենց մայրենի լեզվին:

Ինչպես տեսանք, ոչ միայն լեզվական, այլ նաև պատմական հանգամանքները դեմ էին լատիներենին: Ավստրիայի արքունիքը, մեղմ ասած, չէր առաջադիմում, բայց ինչքան կորցնում էր հզորությունը, այնքան փորձում էր տպավորություն ստեղծել իր հզորության մասին՝ մասնավորապես պահանջելով լատիներենի դիրքերի

ամրապնդում: 1648 թ. Վեստֆալի պայմանագրի կնքման ժամանակ Սրբազան կայսրության դեսպաններն ընդգծեցին այն փաստը, որ լատիներենը Կայսրության լեզուն է, Կայսրության առավելությունը, և դա շատ վատ դերակատարություն ունեցավ, վատ ընդունվեց մյուս լիազոր դեսպանների կողմից, ովքեր մինչ այդ կարծում էին, թե լատիներենը չեզոք լեզու է: Այդ լեզուն, որ կրթված մարդկանց համընդհանուր մշակութային ժառանգության մաս էր կազմում մինչ այդ, հանկարծ ազգային նշանակություն էր ստանում: Դեսպանություններն սկսեցին աստիճանաբար հրաժարվել լատիներենից, քանի որ այն օգտագործելով կարծես թե ակամա՝ ընդունում էին Ավստրիական արքունական տան գերակայությունը: Ժամանակն էր ընտրել մեկ այլ լեզու:

Կար երկու ճանապարհ՝

1. Կամ յուրաքանչյուրը պետք է խոսեր իր մայրենի լեզվով, և այս դեպքում կարելի էր խուսափել մասնակիցների համար զգայուն կամ խոցելի լեզվական անհարմարությունից, բայց այս դեպքում անհրաժեշտ էր թարգմանիչների ներկայությունը: Սակայն հայտնի է, որ Հին ռեժիմի դիվանագիտությունը ոչ մի ընդհանուր բան չունի այսօրվա հրապարակային դիվանագիտության հետ (որը թերևս այդպիսին է միայն արտաքուստ): Բանակցությունների գաղտնիությունը ամենակարևոր բանն էր, իսկ թարգմանիչների միջամտությունը կավելացներ մարդկանց թիվը և դրանով իսկ գաղտնի բանակցությունների արտահոսքի վտանգը:

2. Մյուս ճանապարհն ազգային լեզուներից մեկը որպես հաղորդակցման լեզու ընտրելն էր: Այս դեպքում բանակցություններն ավելի արագ կընթանային և հատկապես հնարավոր կլիներ խուսափել բազմալեզու տեքստերից, որոնք կարող էին տարբեր մեկնաբանությունների և վերլուծությունների տեղիք տալ, քանի որ յուրաքանչյուր կողմ կցանկանար իր օգտին այն մեկնաբանել:

Կարևոր է նշել, որ Ֆրանսերենի ընտրությունը՝ որպես դիվանագիտության լեզու, ամենևին պայմանավորված չէր նրա քաղաքական հզորությամբ, ինչպես ընդունված է կարծել:

Այդուհանդերձ այդ ընտրությունը սոսկ տվյալ պահի լեզվական իրավիճակի արդյունք չէր: Այն պայմանավորված էր նախ այն հանգամանքով, որ Ֆրանսերենը Եվրոպայի քաղաքական վերնախավի լեզուն էր՝ ազնվականության, առևտրական դասի և մտավորականության լեզուն: Ֆրանսերենի ընտրության հարցում պակաս կարևոր չէր նաև այն հանգամանքը, որ եվրոպական մյուս լեզուները XV-XVI դարերում դեռևս չէին հասել ճշգրտության և հստակության այն մակարդակին, որն ուներ Ֆրանսերենը, որպեսզի կարողանային բավարարել պայմանագիր կնքելու համար պահանջվող պայմանները և խուսափելի երկիմաստությունից և թյուրիմացությունից: Հանգամանք, որն այնքան կարևոր է կողմերի լիակատար փոխըմբռնման համար:

Դիտարկենք XVII դարի կարևոր պայմանագրերը՝ 1648 թ. Վեստֆալի պայմանագիր. Սրբազան կայսրությունը պարտված է, Ֆրանսիան հաղթանակ է տարել, բայց բնագիր պայմանագիրը լատիներեն է:

1678 թ. Նիմեգի պայմանագիր. Ֆրանսիան իր հզորության գագաթնակետին էր. Լյուդովիկոս XIV-ը հաղթական պատերազմներ էր տարել, բայց այստեղ նույնպես բանակցությունների լեզուն լատիներենն էր: Նիմեգի պայմանագիրը կազմված էր մի քանի մասից. Պայմանագիր Յոլանդիայի և Ֆրանսիայի միջև՝ ֆրանսերեն լեզվով, մեկ այլ պայմանագիր Ֆրանսիայի և Իսպանիայի միջև, որը երկլեզու էր, և վերջապես՝ պայմանագիր Ֆրանսիայի և Կայսրության միջև, այսինքն՝ հաղթողի և պարտվողի միջև, որը գրված էր լատիներեն, այսինքն՝ պարտված կողմի լեզվով:

Եվ հակառակը, 1714 թ. Ռաստատի պայմանագիրը համընկնում է Լյուդովիկոս XIV-ի կառավարման ավարտի հետ, և որտեղ Ֆրանսիան ռազմական ծանր պարտություն է կրում, առաջին անգամ պայմանագիրը գրվում է ֆրանսերեն և ոչ թե լատիներեն: Ֆրանսիայի լիազոր ներկայացուցիչը Մարշալ Վիլարն էր, որը լատիներեն

չգիտեր: Կայսրության կողմից բանակցում էր արքայազն Էծեն Սավուլայացին՝ Ավստրիական կայսրության հայտնի գեներալը, որը, լինելով Սավուլայայից, շատ լավ ֆրանսերեն գիտեր, ահա թե ինչու Ռաստատի պայմանագիրը կնքվեց ֆրանսերեն լեզվով:

Սակայն ֆրանսերենը որպես դիվանագիտության լեզու ընդունելն ունի ավելի խորը պատճառներ, քան այս առանձին դեպքը: Եվրոպական բոլոր դիվանագետները գիտեին ֆրանսերեն, ինչպես միջնադարում բոլորը գիտեին լատիներեն: Ռաստատում ֆրանսերենի օգտագործումը ուղեկցվում էր մի ծանոթագրությամբ, համաձայն որի՝ հստակեցվում էր, որ դա արվում էր բացառության կարգով, և այն չի կարող նախադեպ հանդիսանալ հետագա մյուս պայմանագրերի համար:

Սակայն ֆրանսերենի օգտագործումը, որ արվել էր պատահական կերպով, կրկնվեց հետագայում, և ամեն անգամ ավելացվում էր այդ հատուկ ծանոթագրությունն այն մասին, որ ֆրանսերենի ընտրությունը պաշտոնապես չի կատարվել, սակայն ամեն անգամ պայմանագրերը նորից կնքվում էին ֆրանսերեն լեզվով:

Եվ միայն 50 տարի անց՝ 1763 թ., Փարիզի պայմանագրում է, որ այլևս ընտրված լեզվի մասին այդպիսի գրություն չի ավելացվում պայմանագրի ներքևում, և պայմանագրի լեզուն մնում է ֆրանսերենը:

1763 թ. Ֆրանսիան դարձյալ պարտություն է կրում և Փարիզի պայմանագրով կորցնում Հնդկաստանի իր գաղութային կայսրությունը, այդուհանդերձ բանակցությունները տարվում են ֆրանսերեն: Այս լեզվական իրավիճակը, որը չգրված օրենք էր, տևում է մինչև 1919 թ. Վերսալի պայմանագիրը:

Այժմ արդեն դիվանագետներն աշխարհիկ կրթված մարդիկ են, և ֆրանսերենն իրենց հոգեհարազատ է: Բացի այդ, դիվանագիտական հանդիպումները սոսկ խիստ փորձագետների հավաքներ չեն, իգական սեռի ներկայությունն այստեղ ավելի հաճախադեպ է դառնում:

Դիվանագետների կանայք ուղեկցում են իրենց ամուսիններին: Այդ բարձրաշխարհիկ կանայք իրար հետ խոսում են ֆրանսերեն, և բնականաբար նրանց մոտ և նրանց ներկայությամբ բոլորը խոսում են ֆրանսերեն, և հյուրասրահից գիտածողովի դահլիճ տեղափոխվելով՝ նրանք շարունակում են խոսել նույն լեզվով: Կանանց դերակատարությունն այդ հարցում խիստ վճռորոշ է. ֆրանսերենը նաև նորաձևության լեզուն է. օժանելիքի, կեղծամների լեզուն նույնպես ֆրանսերենն էր, կանայք ֆրանսերեն էին խոսում նաև, որպեսզի տևային աշխատողները չհասկանային իրենց:

Կային նաև այլ պատճառներ՝ ոչ պատմական և ոչ աշխարհիկ: Ֆրանսերենի ընտրության համար կային նաև տեխնիկական բնույթի պատճառներ, որոնք կապված են ֆրանսերեն լեզվի որոշ հատկանիշների հետ: Այնպիսի հատկանիշներ, որ ֆրանսերենը մշտապես կարևորում է հստակություն, ճշգրտություն, կայունություն: Հստակությունը Պասկալից սկսած մշտապես եղել է ֆրանսիացի հեղինակների մտահոգության առարկան, ովքեր հրաժարվում են լատիներենի բազմադարյան ոճից և անցնում ֆրանսերենին, որն ուներ հավաք ոճ, կարճ նախադասություններ, հաստատուն շարակարգ (ենթակա, ստորոգյալ, լրացում), որն ապահովում է մեծ հստակություն և հասկանալիություն: Ինչպես ասում էր Վոլտերի աշակերտ, գրող, հրապարակախոս Ռիվառոլը՝ այն, ինչ հստակ չէ, ֆրանսերեն չէ:

Ճշգրտությունը բառապաշարի հեղինակներն էին ապահովում: XVI դարից ի վեր լեզվաբաններն ու բառագետները փորձում էին կայունացնել ֆրանսերենը: Ֆրանսիացի բանաստեղծ և թարգմանիչ, ֆրանսիական պոեզիայում կլասիցիզմի հիմնադիր Մալերբեն ու Ֆրանսիական ակադեմիայի հիմնադիր անդամ Վոժլան ջանում էին վերացնել բոլոր համարժեքներն ու հոմանիշները, իսկ դիվանագիտության մեջ այդ ճշգրտությունը մեծ առավելություն էր:

Ավելին, ֆրանսերենը այդ ժամանակաշրջանում միակ հաստատուն լեզուն էր, մի հանգամանք, որը մի քանի դար անց նույնիսկ խոչընդոտ էր հանդիսանալու նրա տարածման համար: Ֆրանսիական Ակադեմիան և այլ հաստատություններ վերահսկում էին լեզուն, և նրանց որոշումները հարգվում և կիրառվում էին:

Դա շատ նկատելի է, քանի որ, Հիասքանչ դարաշրջանի (19-րդ դարավերջից մինչև 1914 թվականն ընկած ժամանակաշրջանի պատմական անվանումը) լեզուն հիմա էլ հասկանալի է ժամանակակից ֆրանսիացիների համար:

Զանի որ ֆրանսերենի զարգացումը սահմանափակ էր և վերահսկվում էր, միջազգային մակարդակում դա երաշխիք էր այն առումով, որ ֆրանսերեն ձևակերպումները չէին փոխի իրենց իմաստները և այլ իմաստ չէին ձեռք բերի մի քանի տարի անց:

Այն փաստը, որ Վերսալի պայմանագիրը ֆրանսերեն չէր, Ֆրանսիայում շատ ծանր տարան: Պատճառները շատ էին ու նաև պրագմատիկ բնույթի: Առաջին անգամ էր, որ պայմանագրին մասնակցում էին ոչ եվրոպական երկրներ՝ Ճապոնիան և հատկապես Միացյալ Նահանգները, որոնք միջազգային թատերաբեմ էին մտնում: Ամերիկյան դիվանագետները եվրոպական քաղաքականության մեջ մտնելու պահից ի վեր հրաժարվեցին անգլերենից բացի այլ լեզվով խոսելուց: 1783 թ. Վաշինգտոնյան արձանագրությունը ամրագրեց այդ կետը: Վերսալի պայմանագրի կնքման բանակցային սեղանի շուրջ իրավիճակն այսպիսին էր՝ Ամերիկայի Նախագահ Վիլյամ Քոլիդեյն չէր խոսում ֆրանսերեն, Անգլիայի վարչապետ Լորդ Ջորջը վատ էր խոսում ֆրանսերեն, Ֆրանսիայի ներկայացուցիչ Զլեմանսոն շատ լավ խոսում էր անգլերեն, և վերջապես իտալացի Նախարար Սոնինոն հավասարապես խոսում էր թե՛ անգլերեն, թե՛ ֆրանսերեն:

Ուստի նույն գործնական հարմարավետության նկատառումներից ելնելով՝ ինչպես դարեր առաջ ընտրվեց ֆրանսերենը որպես հաղորդակցման լեզու, այժմ էլ որպես այդպիսին ընտրվեց անգլերենը՝ Վիլյամ և Լորդ Ջորջի լեզուն: Սա առաջացրեց Ֆրանսիայի հանրապետության Նախագահի, ֆրանսիական Ակադեմիայի և հասարակության դժգոհությունը, սակայն այդ դժգոհությունը ոչ մի հետևանք չունեցավ, և այդ նորարարությունը ծանր հետևանքներ ունեցավ ֆրանսերենի հետագա ճակատագրի վրա:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945 թ. Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսում, որն առաջին մեծ միջազգային կոնֆերանսն էր, օգտագործվեց 5 լեզու՝ ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, իսպաներեն և չինարեն: Սրանք պաշտոնական լեզուներ էին, և սա նշանակում էր, որ բոլոր փաստաթղթերը պետք է հրապարակվեին հինգ լեզուներով: Բայց պետք էր ընտրել մեկ աշխատանքային բանակցային լեզու. նորից դրվում էր բանավոր և գրավոր խոսքի տարբերակումը, և պետք է նշել, որ թարգմանչական ծառայություններն այդ ժամանակ այնքան կատարելագործված չէին, ինչպես այժմ:

Միացյալ Նահանգներն առաջարկում էր անգլերենը՝ որպես ամենատարածված լեզու, որպես բիզնեսի և տնտեսագիտության լեզու, իսկ մյուս պատվիրակություններն անհանգստանում էին, որ անգլերենի ընտրությունը կարող էր ապահովել առաջատար դիրք անգլո-սաքսոնների համար, և ջանքեր թափեցին ընդդիմանալու անգլերենի՝ որպես միակ լեզվի դեմ: Նրանք կանգնեցին Ֆրանսիայի ներկայացուցչի՝ Ժորժ Բիդոյի կողքին՝ արտահայտվելով ֆրանսերենի ընդունման օգտին: Անգլերենի դեմ քվեարկել էին լատինական Ամերիկայի, Մերձավոր Արևելքի երկրները և ԽՍՀՄ-ը: Ֆրանսերենն ընդունվեց մեկ ձայնի առավելությամբ:

1962 թ. 105 պատվիրակությունից 35-ը խոսում էր ֆրանսերեն, իսկ 1966 թ.՝ 112 պատվիրակությունից՝ 43-ը: Եվ ստացվում էր, որ ՄԱԿ-ի լիազումար նիստում ֆրանսերեն և անգլերեն լեզուները չէին թարգմանվում:

Անվտանգության խորհրդում իզրաել-պաղեստինյան հակամարտության մասին 242 բանաձևի առիթով շատ պատվիրակներ ափսոսում էին անգլերենի

ընտրության համար, քանի որ անգլերեն տեքստում նշվում էր, որ «Israel must withdraw from occupied territories», որը կարող էր նշանակել «se retirer des territoires occupés»՝ դուրս գալ գրավյալ տարածքներից, կամ «se retirer de territoires occupés»՝ դուրս գալ որոշ գրավյալ տարածքներից (Кузнецов 35):

Տարբերությունը շատ մեծ էր, քանի որ եթե մեկնաբանվի որպես *des*, ապա կնշանակեր դուրս գալ կամ ետ քաշվել բոլոր տարածքներից, իսկ եթե հասկացվի *de*, ապա կթարգմանվի դուրս գալ որոշ տարածքներից, և այդ դեպքում կարելի կլիներ կիրառել այդ բանաձևը: Հասկանալի է, որ այս տարբերությունների պատճառով, որոնք հանդես են գալիս մեկ կամ մյուս կողմի օգտին, կարող էր շատ թանաք հոսել կամ, ցավոք սրտի, արյուն թափվել: Դրա համար հարկ էր դիմել ֆրանսերեն տարբերակին:

Նշենք, որ պապերը՝ Պողոս վեցերորդը, Հովհաննես-Պողոս երկրորդը, ՄԱԿ-ում խոսել են ֆրանսերեն: Վատիկանի հայտագրերը նույնպես ֆրանսերեն են: Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության նախագահ Սենգորն ասում էր. «Ֆրանսերենը բարեկրթության և ազնվության համաշխարհային նշանակություն ունի, և նա մեզ նվիրում է իր վերացական բառերը, որոնք այնքան հազվագյուտ են մեր լեզուներում»:

Ֆրանսերեն լեզվի մասին բազմաթիվ հիացական ձևակերպումներ են արվել, սակայն ուզում եմ մեջբերել Անատոլ Ֆրանսի կողմից ֆրանսերեն լեզվին տրված բնորոշումը, որն ավելի շուտ սիրո խոստովանություն է հիշեցնում. «Ֆրանսերենը նման է մի կնոջ, որն այնքան գեղեցիկ է, այնքան հպարտ, այնքան համեստ, այնքան համարձակ, հուզական, սիրառատ, առաքինի, ազնվական, հարազատ, խելթ և իմաստուն, որ մենք նրան սիրում ենք ամբողջ հոգով և երբեք չենք տրվում նրան դավաճանելու գայթակղությանը» (“Citations français”):

Այսօր, անշուշտ, նկատելի է անգլերենի դիրքերի ամրապնդում միջազգային բանակցություններում, բայց ժամանակի հետ իրավիճակը կարող է փոխվել հոգուտ, օրինակ, չինարենի կամ մեկ այլ լեզվի. ժամանակը ցույց կտա:

Եզրակացություն

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ որևէ լեզու երբևէ չի ունեցել և չի կարող ունենալ միջազգային լեզվի մշտական կարգավիճակ, և նրա գործածությունը բանակցող կողմերի կողմից միշտ պայմանավորված կլինի տվյալ ժամանակաշրջանի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և լեզվամշակութային գործոններով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Batany, Jean. *Français médiéval*. Bordas, Paris, 1972.
2. Bruneau, Charles. *Petite histoire de la langue française, (Des origines à la Révolution)*. librairie Armand Colin, Paris, 1958.
3. ---. *Petite histoire de la langue française, (De la Révolution à nos jours)*. librairie Armand Colin, Paris, 1970.
4. Brunot, Ferdinand. *Histoire de la langue française*. Paris, 1966.
5. Zink, Gaston. *L'ancien français, (XIe-XIIIe siècle), Que sais-je?*. Presses Universitaires de France, Paris, 1987.
6. ---. *Moyen français (XIVe et XVe siècles), Que sais-je?*. Presses Universitaires de France, Paris, 1990.
7. Кузнецов, Дмитрий. *Арабо-израильский конфликт: История и современность. Очерк событий. Документы и материалы: учебное пособие*. Изд-во БГПУ, Благовещенск, 2006.
8. “Citations français”. *Le figaro*,

<http://eveve.lefigaro.fr/citations/mot.php?mot=fran%C3%A7ais>.

Accessed:

13.11.2022.

9. “Français: pourquoi fut-il adopté comme langue diplomatique dans toute l'Europe?”. *Le Petit Parisien*, 31.01.2018, <http://www.france-pittoresque.com/spip.php?article5685>. Accessed: 13.11.2022.

WORKS CITED

1. Batany, Jean. *Français médiéval*. Bordas, Paris. [*Medieval French*. Bordas, Paris] 1972. (In French)
2. Bruneau, Charles. *Petite histoire de la langue française, (Des origines à la Révolution)*. Librairie Armand Colin, Paris. [*Short History of the French Language, (Origins to the Revolution)*. Armand Colin bookstore, Paris] 1958. (In French)
3. ---. *Petite histoire de la langue française, (De la Révolution à nos jours)*. Librairie Armand Colin, Paris. [*Short history of the French language, (From the Revolution to the Present Day)*. Armand Colin bookstore, Paris] 1970. (In French)
4. Brunot, Ferdinand. *Histoire de la langue française*. Paris. [*History of the French Language*. Paris] 1966. (In French)
5. Kuznecov, Dmitrij. *Arabo-izrail'skij konflikt: Istorija i sovremennost'. Oчерk sobytij. Dokumenty i materialy: uchebnoe posobie*. Izd-vo BGPU, Blagoveshhensk. [*Arab-Israeli Conflict: History and Modernity. Essay on Events. Documents and Materials: Study guide*. BSPU Publishing, Blagoveshchensk] 2006. (In Russian)
6. Zink, Gaston. *L'ancien français, (XIe-XIIIe siècle), Que sais-je?*. Presses Universitaires de France, Paris. [*Old French, (11th-13th century), What do I know?*, French University Press, Paris] 1987. (In French)
7. ---. *Moyen français (XIVe et XVe siècles), Que sais-je?*. Presses Universitaires de France, Paris. [*Middle French (14th and 15th centuries), What do I know?*, French University Press] 1990. (In French)
8. “Citations français”. *Le figaro*. [“French quotes”. *Le figaro*, <http://eveve.lefigaro.fr/citations/mot.php?mot=fran%C3%A7ais>. Accessed: 13.11.2022].
9. “Français: pourquoi fut-il adopté comme langue diplomatique dans toute l'Europe?”. *Le Petit Parisien*, 31.01.2018. [“French: Why was it Adopted as a Diplomatic Language throughout Europe?”. *Le Petit Parisien*, 31.01.2018, <http://www.france-pittoresque.com/spip.php?article5685>. Accessed: 13.11.2022]. (In French)

LANGUAGE ISSUE IN INTERNATIONAL NEGOTIATIONS

VARDUHI PETROSYAN

*Yerevan State University, Faculty of International Relations,
Department of Diplomatic Service and Communication,
Ph. D. in Philology, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

This article discusses the status of international language and the issue of having a language of permanent international language at international negotiations.

No single language has ever been explicitly recognized as an international language. In essence, the issue of using a particular language has been practically resolved by the consent of the parties.

The use of French in international negotiations was also related to military-political, socio-economic and linguistic-cultural factors of the period rather than with its military victories.

Thus, we can conclude that no language has ever existed and can not have a permanent resident of the international language and its use by the negotiating parties will always be based on the above-mentioned factors.

Keywords: *international language, international negotiations, french language, career diplomacy, language of negotiations, negotiations, status of the international language.*

ВОПРОС ЯЗЫКА В МЕЖДУНАРОДНЫХ ПЕРЕГОВОРАХ

ВАРДУИ ПЕТРОСЯН

*кафедра дипломатической службы и профессиональной коммуникации
факультета международных отношений
Ереванского государственного университета,
кандидат филологических наук, доцент,
г. Ереван, Республика Армения*

В данной статье обсуждаются вопросы международного языка и проблема статуса постоянного международного языка в международных переговорах.

Ни один язык не был однозначно признан международным языком. По сути, вопрос использования конкретного языка был практически разрешен с согласия сторон.

Использование французского языка в международных переговорах также было связано с военно-политическими, социально-экономическими и культурно-языковыми факторами этого периода, а не с его военными победами.

Таким образом, мы можем заключить, что ни один язык никогда не имел и не может иметь постоянного статуса международного языка, и его использование сторонами переговоров всегда будет основываться на вышеупомянутых факторах.

Ключевые слова: *международный язык, международные переговоры, французский язык, карьерная дипломатия, язык переговоров, переговоры, статус международного языка.*

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳ. ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԳԼՈՐԱԼ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ*

ՀՏԴ 327

DOI: 10.52063/25792652-2022.4.15-96

ԳՈՒՐԳԵՆ ՄԻՍՈՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքագիտության բաժնի ավագ գիտաշխատող, քաղաքագիտության թեկնածու, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն gurgensimonyan4@gmail.com

Ազգերի ազդեցության տիրույթների ընդլայնման համար մղվող մրցապայքարը շարունակում է մնալ արդիական, և դա ի հեճուկս այն հանգամանքի, որ 20-րդ դարում մարդկությունը այդ մրցապայքարի հետևանքով անցել է երկու համաշխարհային պատերազմների առաջացրած աղետների միջով, այնուհետև կանգնել է միջուկային առճակատման սպառնալիք ենթադրող ճգնաժամի առջև:

Յուրաքանչյուր աշխարհացունց իրողությունից հետո հաղթանակ տոնած դաշինքները սկիզբ են դրել այդօրեական աշխարհակարգին՝ սահմանելով միջազգային հարաբերությունները կանոնակարգող իրավակարգն ու համակարգերը: Բայց ամեն անգամ իրենց հաղթանակով աշխարհի կարգը սահմանողները ակամա սերմանել են նոր ընդդիմամարտությունների նախադրյալներ:

Սույն հոդվածի նպատակը աշխարհակարգի կերպափոխման հարացույցում պետության անվտանգային քաղաքականության իրականացման վրա ազդող գործոնների վերհանումն է, որոնք հնարավորություն կտան ազգ-պետություններին կողմնորոշվել և հավասարաբեք պատասխանել արտաքին և ներքին մարտահրավերներին:

Կիրառելով վերլուծության պատմահամեմատական, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները՝ հատուկ ընդգծել ենք պրոակտիվ միջազգային հարաբերությունների կառուցակարգման երկու գործիք՝ պարտադրանք և կոնսենսուս, որոնց գործադրումը հնարավորություն է ընձեռում ապահովել միջազգային իրավունքի լիակատար կիրարկումը:

Ժամանակի նոր հնարավորությունները օգտագործելով՝ մրցունակ ազգերը կարողացել են ոտքի կանգնել և իրականացնել տեխնոլոգիական թռիչք՝ ստեղծելով հատուկ միջոցներ, ռազմավարական տեխնոլոգիաներ, որոնց վրա հենվելով՝ կրկին վիճարկել են գործող աշխարհակարգը՝ իրենց իրավունք վերապահելով աշխարհին ահաբեկել իրենց իսկ տիրապետման տակ գտնվող հատուկ միջոցներով, որպես *Ultima ratio regum* (լատ. Արքաների վերջին պատճառաբանություն):

Հիմնաբառեր՝ Նոր աշխարհակարգ, տեղեկատվական հասարակարգ, գլոբալ ուժ, միջազգային իրավունք, պատերազմ, ինքնիշխանություն, ժողովրդավարություն, բռնապետություն, բևեռներ, միջուկային շանտաժ:

* Հոդվածը ներկայացվել է 06.12.2022թ., գրախոսվել՝ 25.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Նախաբան

Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից ի վեր աշխարհաքաղաքական սուր ընդդիմամարտությունը տարերայնորեն և գերարագ կերպափոխում է համաշխարհային ավանդական ձևաչափը՝ լարման տակ դնելով Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված, այնուհետև հարահոս մետամորֆոզի ենթարկված գլոբալ անվտանգային համակարգը:

Եթե մինչ 2022 թ. տարածաշրջանային ռազմական բախումները դիտվում էին իբրև հին հիմնախնդիրներից բխող վերահսկելի ռազմական ընհարումներ՝ դժվար շոշափելի ակնարկով, որ միջազգային իրավունքի վրա հիմնված միջազգային հարաբերությունները փլուզվում են, ապա 2022-ին Ռուսաստանի ներխուժումը Ուկրաինայի միջազգայնորեն ճանաչված տարածքներ ակնառու դարձրեց, որ աշխարհը կանգնել է նոր «քաոսի» շեմին:

21-րդ դարում գերբնակեցման և գերարդիական տեխնոլոգիաների առկայության պայմաններում համաշխարհային քաոսը աշխարհը կզցի անսահադեպ հումանիտար աղետի հորձանուտ, որի հետևանքները անկանխատեսելի ծավալների վնաս կարող են հասցնել Երկիր մոլորակի կենսոլորտին: Ուստի աներկբա է, որ վերոնշյալ իրողությունից խուսափելու նպատակով աշխարհին անհրաժեշտ են միջազգային հարաբերությունները կանոնակարգող նոր հավասարակշռիչներ, այն է՝ «նոր աշխարհակարգ», որը հիմնված կլինի արդարության ընկալման ունիվերսալ, միասնական արժեքաբանական չափորոշիչների վրա:

Նոր աշխարհակարգի հաստատումը հնարավոր է բացառապես պատերազմում տարած լիակատար հաղթանակի վերջնարդյունքում, երբ վիճարկող կողմը կկորցնի այն վիճարկելու բոլոր հնարավորությունները և կիրաժարվի բիրտ ուժով իր կամքը պարտադրելու քաղաքականությունից: Նկատի ունենալով վերոգրյալը՝ անգն աչքով դիտարկելի է, որ աշխարհն այսօր գտնվում է խաղաղություն-պատերազմ-խաղաղություն հարացույցի ամենավտանգավոր կետի վրա, որից անցումը հնարավորինս անցնում իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել բարդ համակարգերին հատուկ «առաջացող վարքաբանությունը» (անգլ. **emergent behaviour**), որի ուսումնասիրման շրջանակում ծագել և զարգանում է «կառավարվող քաոսի տեսությունը» (Britannica, Complexity scientific theory):

«Նոր աշխարհակարգ», աշխարհաքաղաքական կերպափոխումները

«Աշխարհակարգ» գիտաբանի ծագումնաբանությունը ուսումնասիրելիս հաճախ ենք հանդիպում տարամետ մեկնությունների: Այն լայնորեն կիրառվում է ինչպես ակադեմիական գիտության շրջանակում, այնպես էլ իրական քաղաքականության (գերմ. **realpolitik**) և «դավադրությունների տեսության» (անգլ. **conspiracy**) մեջ: ԱՄՆ նախկին պետքարտուղար Յենրի Զիսինջերը 2014-ին լույս ընծայված իր համանուն գրքում «Աշխարհակարգը» (անգլ. **World Order**) նկարագրում է որպես արժեհամակարգ՝ հիմնված մարդու հիմնարար իրավունքների և քաղաքացիական հասարակության կայացման վրա, ի պաշտպանություն որի հանդես է եկել միաբևեռ աշխարհի առաջամարտիկը՝ ԱՄՆ-ն: Սակայն այսօր նշված համակարգում ի հայտ են եկել խնդիրներ: Ըստ Զիսինջերի՝ արևմտյան աշխարհից անդին գտնվող երկրները, որոնք նվազագույն մասնակցություն են ունեցել միջազգային արդի իրավունքի մշակման գործընթացին, կասկածի տակ են դնում տվյալ կանոնների արդյունավետությունը իրենց ընթացիկ մեկնություններում և հստակ դրսևորում են պատրաստակամություն՝ ջանքեր գործադրելու դրանք փոխարինելու ուղղությամբ: Համակարգերին բնորոշ այդ ֆենոմենը միջազգային հարաբերությունների համատեքստում Զիսինջերն անվանում է «**քաոս**», որը սպառնում է միջազգային հանրությանը զանգվածային ոչնչացման սպառազինության

տարածմամբ, պետությունների ապակենտրոնացմամբ, շրջակա միջավայրի հանդեպ գիշատիչ վերաբերմունքի հետևանքներով, ցեղասպան քաղաքականության իրականացմամբ և Նոր տեխնոլոգիաների սրընթաց ներդրմամբ (Kissinger 9):

Սա նշանակում է, որ բազմազան աշխարհում, պայմանավորված տարբեր քաղաքակրթությունների կոզնիտիվ հատկանիշներով, միևնույն իրողությունների վերաբերյալ կարող են լինել բազմակի մոտեցումներ և վերաբերմունքներ:

Վերոգրյալից ակնհայտ է, որ համընդհանուր միջազգային իրավունքի տեսքով «ունիվերսալ արդարության» բացակայությունը հանգեցնելու է հարափոփոխ ժամանակի ընթացքում ծագող և գերիշխանությունն նվաճած «ինքնատիպ արդարության» կողմից գործող իրավակարգի վիճարկման:

Ի հեճուկս վերոգրյալ մոտեցման՝ Ռուսաստանի ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայի պաշտոնական կայքում առկա դիվանագիտական բառարանում «Աշխարհակարգ» նույնացվում է «Կանոնների վրա հիմնված կարգին» (անգլ. **Rules-Based Order**), ինչն արդեն իսկ այն դարձնում է ընտրովի և վիճելի հասկացություն, քանի որ կանոնները չեն մեկնաբանվում իբրև համամարդկային օբյեկտիվ Նորմեր, այլ՝ ուժեղի կողմից մնացյալին պարտադրվող սկզբունքներ, որոնց պաշտպանությունը սպասարկելու է բացառապես այդ սկզբունքները ստեղծած, սատարող և պարտադրող կողմի շահերը: Ըստ այդ աղբյուրի՝ «Աշխարհակարգ» գիտաբառը լայնորեն սկսել է կիրառել 2016-ից: ԱՄՆ-ն և իր դաշնակիցները ձգտում են փոխարինել և հակադրել «կարգ, որը հիմնված է կանոնների վրա» սկզբունքը միջազգային իրավակարգին (անգլ. **rule of law**) (միջազգային կարգին, որը հիմնված է միջազգային իրավունքի (անգլ. **international law**) վրա) (Дипломатическая академия МИД России):

«Միջազգային իրավունք» գիտաբառը առաջին անգամ շրջանառության մեջ է դրել անգլիացի իրավաբան, ազատականության տեսության հիմնադիրներից մեկը՝ Ջերեմի Բենթամը (1748-1832), ով այդ տերմինը բնութագրում էր իբրև **իրավունքի համակարգ, որը կառավարում է պետությունների/ազգերի միջև փոխհարաբերությունները**, այն այլ կերպ նաև անվանում են ազգերի իրավունք (անգլ. **Law of nations**), ազգերի միջև իրավունք (անգլ. **law among nations**), միջպետական իրավունք (անգլ. **Inter-state law**) (Brian-Vincent Ikejiaku):

Միջազգային իրավունքի զարգացման հիմքը ընդունված է համարել Երեսնամյա պատերազմը ամփոփող, 1648 թ. հոկտեմբերի 24-ին Վեսթֆալիայում կնքված Սրբազան Հռոմեական Կայսրության և Ֆրանսիայի Թագավորության ու Նրանց դաշնակիցների միջև հաշտության պայմանագիրը, որով հիմք դրվեց վեսթֆալյան աշխարհակարգին: Այդ պայմանագրի որոշ կետեր այս կամ այն կերպ շարունակում են արտացոլված լինել արդի աշխարհակարգում: Օրինակ՝ «յուրաքանչյուր կողմ պետք է ուղարկի կամ իր տիրույթներում զորակոչի այնքան մարդ, որքան կհամարի անհրաժեշտ իր իսկ անվտանգության ապահովման համար» (Treaty of Westphalia) սկզբունքը ինքնապաշտպանության դիմելու անօտարելի իրավունքի մասին է, որն ամրագրված է նաև 1945 թ. Սան Ֆրանցիսկոյի կոնֆերանսում հաստատված Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 51-րդ հոդվածում. «Սույն կանոնադրությունը ոչ մի կերպ չի նսեմացնում անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության դիմելու անօտարելի իրավունքը, եթե տեղի կունենա զինված հարձակում Միավորված ազգերի կազմակերպության անդամի վրա, մինչև Անվտանգության խորհրդի կողմից կձեռնարկվեն միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ միջոցառումներ...» (UN Charter):

Աշխարհացունց իրողություններից հետո հաստատված միջազգային իրավունքի համահավասար և համապարտադիր Նորմերը կիրարկելու համար միջազգային իրավունքի լիակատար սուբյեկտների գործիքակազմում սովորաբար կա երկու լծակ՝ **պարտադրանք** և **կոնսենսուս**:

Պարտադրանքն իրենից ներկայացնում է անհաղթահարելի ուժ (անգլ. **force majeure**) ռազմավարական զսպում (անգլ. **strategic deterrence**) իրականացնելու

նպատակով, որի ճնշման ներքո կրկին կապահովվի ուժերի հավասարակշռություն միջազգային ասպարեզում:

Կոնսենսուսի կարելի է հասնել իրավաքաղաքական կապերի հաստատման, այն է՝ միջազգային կազմակերպություններին անդամակցելու և միջազգային պայմանագրերը վավերացնելու միջոցով: Վերջինս իր բնույթով իրավիճակային է, քանի որ այն կարող է գործել միայն խաղաղության դաշնագրերի, միջազգային իրավակարգերը հաստատող հռչակագրերի վավերացմանը համընթաց ժամանակահատվածում, երբ ուժերի դասավորվածքը և հարաբերակցությունը բեկումնային կերպափոխումների չեն ենթարկվել: Այս լծակը ամենից անկայունն է, քանի որ ուժերի հավասարակշռության դույզն-ինչ խախտման պարագայում թռիչքային զարգացում ապահոված և առկա իրողությունները ոչ շահեկան գնահատող կողմը կարող է դադարեցնել իր անդամակցությունները միջազգային տարբեր կազմակերպություններում և դաշինքներում, ինչպես նաև հետ կանչել իր վավերացումները առկա աշխարհակարգը վիճարկելու նպատակով:

Վերոնշյալ երկու լծակների կիրառմամբ պայմանավորված՝ տվյալ աշխարհակարգի ծիրում գործառնվող միջազգային հարաբերությունների էվոլյուցիան կարող է ընթանալ միաբևեռ (անգլ. **unipolar**), երկբևեռ (անգլ. **bipolar**) և բազմաբևեռ (անգլ. **multipolar**) ոչ կանոնակարգված հարացույցով:

Ի հեճուկս միաբևեռ աշխարհակարգի՝ երկբևեռ աշխարհակարգում գրեթե անհնարին է միջազգային իրավունքների կենսունակության, կիրարկման ապահովումը առանց ռազմավարական զսպման հատուկ միջոցների:

Իսկ բազմաբևեռ աշխարհակարգի ի հայտ գալու պարագայում անհրաժեշտ կլինի բազմակիացված գործիքակազմ համաշխարհային բևեռ ներկայացնողի արժեշտահային ծիրում հայտնված դաշնակիցների ուժերի համախմբման և ռազմավարական զսպման միջոցների դիվերսիֆիկացման եղանակով:

Գլոբալ ուժերի և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրը

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկիզբ դրվեց Յալթա-պոտսդամյան աշխարհակարգին, երբ Յալթայի (1945 թ. փետրվարի 4-11-ը), այնուհետև Պոտսդամի (1945 թ. հուլիսի 17-ից մինչև օգոստոսի 2-ը) կոնֆերանսներում Մեծ եռյակի առաջնորդները պայմանավորվեցին աշխարհի ֆիզիկական քարտեզի և խաղաղության պայմանների շուրջ: Սակայն այդ աշխարհակարգը արագ վերածվեց երկբևեռ աշխարհակարգի, քանի որ ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը արագ առաջ անցան մյուսներից՝ ձևավորելով հավասարակշռություն ռազմավարական զսպման հայեցակարգերի վրա:

1946 թ. ԱՄՆ Միսսուրի նահանգի Ֆուլտոն քաղաքում Մեծ Բրիտանիայի վարչապետ Վինսթոն Չերչիլի (1874-1965) հայտնի ճառից հետո մեկնարկեց «Սառը պատերազմը» (անգլ. «**Cold war**»): Չերչիլն այս ճառի ընթացքում առաջ քաշեց «**երկաթե վարագույր**» հասկացությունը՝ ԽՍՀՄ-ը բնութագրելով որպես «չարիքի կայսրություն» (The Sinews of Peace ('Iron Curtain Speech')): ԱՄՆ-ԽՍՀՄ ընդդիմամարտությամբ պայմանավորված՝ Յալթա-պոտսդամյան աշխարհակարգի կենսունակությունը երաշխավորվեց, և նոր համաշխարհային պատերազմ սկսելու ռիսկերը նվազեցին, երբ երկբևեռ աշխարհակարգի երկու առանցքային դերակատարներին հասու եղան միջուկային տեխնոլոգիաները, որով պայմանավորված՝ աշխարհը հավասարակշռվեց «Փոխադարձ երաշխավորված ոչնչացման» ռազմավարությամբ (անգլ. **mutual assured destruction**) (mutual assured destruction): Սառը պատերազմը տևեց 43 տարի: Հաճախ սառը պատերազմի ավարտ են համարում 1989 թ. դեկտեմբերի 1-2-ը՝ Մայթայում ԱՄՆ և ԽՍՀՄ նախագահներ Ջորջ Բուշ ավագի և Միխայիլ Գորբաչովի հանդիպումը (1989: Malta summit ends Cold War), սակայն երկբևեռ աշխարհակարգը լիակատար փլուզվեց և իր տեղը զիջեց միաբևեռին միայն 1991 թ. ստորագրված «Բելյովեժյան համաձայնագրով»:

1991 թ. դեկտեմբերի 8-ին Ռուսաստանի և Ուկրաինայի նախագահներ Բորիս Ելցինը (1931-2007) և Լեոնիդ Կրավչուկը (1934-2022), ինչպես նաև Բելառուսի գերագույն խորհրդի նախագահ Ստանիսլավ Շուշկևիչը Բելովեժյան թավուտներում գտնվող «Վիսկուլի» նախագահական ստավայրում ստորագրեցին Միության 1922 թ. պայմանագրի չեղարկումը, որով ԽՍՀՄ-ի փոխարեն հռչակվեց Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ձևավորումը (The Belavezha accords signed): Ըստ Էության, այդ համաձայնագրով նախկին երկբևեռ աշխարհակարգի կողմերից մեկը՝ ԽՍՀՄ-ը, դադարեց գոյություն ունենալ, այն փաստացի լուծարվեց, որով հիմք դրվեց միաբևեռ աշխարհակարգին:

XXI դարի մեկնարկից ի վեր ԱՄՆ-ի անգերագանցելի և անվիճարկելի դիրքերը սկսեցին տեղի տալ: 2000-ականներից սկսած սրընթաց աճ սկսեցին գրանցել Չինաստանը, այնուհետև Ռուսաստանի Դաշնությունը և այլն, թեպետ և բազմաբևեռ աշխարհի հայեցակարգի շրջանակում մոտ ապագայում դժվար թե ձևավորվի 4 կամ 5 հավասարազոր դերակատարներով աշխարհակարգ (Zakaria 85):

2007 թ. Մյունխենի՝ «Անվտանգության քաղաքականության հարցերի վերաբերյալ» կոնֆերանսում Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը իր հայտնի ելույթով վերջնականապես կասկածի տակ դրեց և քննադատեց միաբևեռ աշխարհակարգը և հայտարարեց, որ բազմաբևեռ աշխարհակարգի տրամաբանությամբ Ռուսաստանը վերադառնում է միջազգային ասպարեզ (Speech and the Following Discussion at the Munich Conference on Security Policy):

Միաբևեռ աշխարհակարգի փլուզմամբ պայմանավորված՝ աշխարհում սկսվեցին հարահոս ընթացող տարածաշրջանային ընդդիմամարտություններ: Միջազգային իրավունքի հիմնարար նորմերի կիրարկումը խոչընդոտող քաղաքականությունը և արդարության շուրջ քաղաքակրթական առանձնահատկություններով պայմանավորված տարածայնությունները կասկածի տակ դրեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հաստատված աշխարհակարգը և աշխարհը նետեցին հարահոս և զուգահեռ ընթացող քաղաքատնտեսական ճգնաժամերի հորձանուտ:

Այժմ ծավալվող ընդդիմամարտությունների ֆոնին ավելի ու ավելի շատ պետություններ մեծացնում են իրենց երկրների ՉՈՒ հատկացվող բյուջեները, վարում են զինվելու և բանակը զանգվածային դարձնելու պետական քաղաքականություն: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ձևավորված աշխարհակարգի չգոյության համար մեկ ցուցիչն այն է, որ, միջազգային գործուն լծակների անհուսալիությամբ պայմանավորված, աշխարհը միտվում է ազգային իրավունքների պաշտպանության համար հղում կատարել ոչ թե միջազգային իրավունքներին և դրանց պաշտպանությանը կոչված տերության ներուժին, այլ բացառապես իրենց ազգային ներուժին :

Եզրակացություն

Ամփոփելով ուսումնասիրությունը՝ փաստեք, որ այսօր ընթանում ենք նոր աշխարհակարգի ձևավորմանը նախորդող ընդդիմամարտության ժամանակահատվածով, քանի որ բազմաբևեռ աշխարհի նորահայտ կամ վերարժևորում ապրած հին և նոր դերակատարները առաջ են մղում «արդարության» ընկալման իրենց մոտեցումները՝ վիճարկելով այն աշխարհակարգը, որի իրողությունը ընդունել են պարտվածի կամ թույլի դիրքերից:

Ընդհանրացնելով կարող ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումները, որոնք հանդես են գալիս որպես առկա մեծ փոխակերպումների ինքնատիպ համախտանիշներ.

- Միջազգային օրենքների, մարդու հիմնարար իրավունքների քայքայման շարժընթաց,
- Արժեքաբանական հիմքով նոր դաշինքների կայացման քաղաքականություն,

- Չինված ուժերի արդիականացման և սպառազինման ծախսերի ավելացում, մարտունակ զանգվածային բանակների կայացման քաղաքականություն,
- Ազդեցության գոտիների վիճարկման քաղաքականություն, աշխարհի ֆիզիկական քարտեզի շուրջ և ինքնիշխանության դեմ ծագած վեճեր,
- Ռազմավարական զսպման իրականացման գործուն միջոցների և մեխանիզմների հայտնաբերման և կիրարկման անհրաժեշտություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Дипломатическая академия МИД России. Новый дипломатический словарь. Мировой порядок, основанный на правилах (“Rules-Based Order”), 08.10.2021, <http://diplomaticdictionary.com/dictionary/мировой-порядок-основанный-на-правилах-rules-based-order/> 20.12.2022
2. 1989: Malta summit ends Cold War. BBC home http://news.bbc.co.uk/onthisday/hi/dates/stories/december/3/newsid_4119000/4119950.stm Available: 19.12.2022.
3. Brian-Vincent Ikejiaku. *International Law is Western Made Global Law: The Perception of Third-World Category* 21.03.2014 https://brill.com/view/journals/ajls/6/2-3/article-p337_9.xml?language=en#FN1 Available: 24.12.2022
4. Britannica, *Complexity scientific theory*, By John L.Casti, 13.01.2013, <https://www.britannica.com/science/complexity-scientific-theory> Available: 19.12.2022
5. International Churchill Society. The Sinews of Peace (‘Iron Curtain Speech’) <https://winstonchurchill.org/resources/speeches/1946-1963-elder-statesman/the-sinews-of-peace/> Available: 25.12.2022
6. Jung, C., Adler, G. and Hull, R. 1970. *Collected Works of C.G. Jung*, Volume 10: Civilization in Transition. Princeton: Princeton University Press. <https://doi.org/10.1515/9781400850976>
7. Kissinger H. *World Order. Reflections on the Character of Nations and the Course of History*. USA, LLC, Penguin Press, 2014, 432 p.
8. Mutual assured destruction. Military science. Britannica <https://www.britannica.com/topic/mutual-assured-destruction> Available: 25.12.2022
9. Speech and the Following Discussion at the Munich Conference on Security Policy 10.01.2007 <http://en.kremlin.ru/events/president/transcripts/copy/24034> Available: 25.12.2022.
10. The Belavezha accords signed. Boris Yeltsin. Presidential Library. 2010 <https://www.prlib.ru/en/history/619792> Available: 25.12.2022
11. Treaty of Westphalia. *The Avalon Project: Documents in Law, History and Diplomacy*. Lillian Goldman Law Library Yale Law School. 2008, https://avalon.law.yale.edu/17th_century/westphal.asp Available: 25.12.2022
12. UN Charter. United Nations. <https://www.un.org/en/about-us/un-charter/chapter-7> Available: 25.12.2022.
13. Zakaria Fareed. *The Post-American World*. New York London: W.W. Northon & Company. 2008, 304 p.

WORKS CITED

1. Diplomaticheskaya akademiya MID Rossii. Noviy diplomaticheskyy slovar. Mirovoy poryadok, osnovanniy na pravilakh (“Rules-Based Order”) [Diplomatic Academy of the Russian Ministry of Foreign Affairs. A New Dictionary of Diplomacy (“Rules-Based Order”)], 08.10.2021, <http://diplomaticdictionary.com/dictionary/мировой-порядок-основанный-на-правилах-rules-based-order/> 20.12.2022

NEW WORLD ORDER: THE GEOPOLITICAL TRANSFORMATION IN CASE OF THE RATIO OF GLOBAL FORCES AND INTERNATIONAL LAW

GURGEN SIMONYAN

*National Academy of Sciences, the Institute of Philosophy, Sociology and Law,
Political Science Department, Senior Researcher,
Ph.D. in Political Science,
Yerevan, the Republic of Armenia*

The struggle for the expansion of the Nation's influence zones continues to remain an urgent problem of international relations and this is due to the circumstances that in the 20th century, as a result of these conflicts, humanity was forced to go through the trials caused by two world wars and faced the crisis of the threat of nuclear war.

After each Worldwide event, the victorious unions laid the foundation for today's world order, defining the legal order and systems governing international relations. But each time, with their victory, those establishing the world order unwittingly sowed the prerequisites for new opposition clashes.

The purpose of this article is to identify the factors influencing the implementation of the state's security policy in the paradigm of the transformation of the world order, which will be real chance for nation-states to orient themselves and respond equally to external and internal challenges.

Applying historical-comparative, inductive and deductive approaches to research, we emphasize two main tools for structuring proactive international relations - coercion and consensus the use of which makes it possible to ensure the full application of international law.

Using the new opportunities of the time, competitive nations were able to stand on their feet and make a technological leap by creating special means, strategic technologies, relying on which they again challenged the current world order, reserving the right to terrorize the world with special means at their disposal, as *Ultima ratio regum* (lat. The Last Arguments of the Kings).

Keywords: *new world order, information society, global forces, International law, war, sovereignty, democracy, dictatorship, poles, nuclear blackmail.*

НОВЫЙ МИРОВОЙ ПОРЯДОК: ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ТРАНСФОРМАЦИИ В КОНТЕКСТЕ СООТНОШЕНИЯ ГЛОБАЛЬНЫХ СИЛ И МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

ГУРГЕН СИМОНЯН

*старший научный сотрудник Института философии,
социологии и права Национальной Академии Наук
Республики Армения,
кандидат политических наук,
г. Ереван, Республика Армения*

Борьба за расширение зон влияния нации продолжает оставаться актуальной проблемой международных отношений это вопреки тем обстоятельствам, что в 20-м веке человечество вследствие подобных конфликтов было вынуждено пройти через испытания, вызванные двумя мировыми войнами, и встало перед кризисом угрозы ядерной войны.

После каждого события, сотрясающего мир, победители и их союзники устанавливали новый мировой порядок, учреждая новый правопорядок и системы, координирующие международные отношения. Но каждый раз учредители нового мирового порядка своей победой волей-неволейсеяли семена новых конфликтов. Пользуясь статусом победителя, они оспаривали историческую национальную справедливость побежденных и продвигали политику утверждения своей «справедливости».

Целью данной статьи является изучение факторов, влияющих на политику безопасности государства в парадигме трансформации мирового порядка, которые создадут возможности для наций-государств сориентироваться и соразмерно отвечать внешним и внутренним вызовам.

Применяя сравнительно-исторический, индуктивный и дедуктивный методы анализа, мы выделили два инструмента конструирования проактивных международных отношений: принуждение и консенсус, применение которых даёт возможность обеспечить полноценную имплементацию международного права.

Пользуясь новыми возможностями, конкурентоспособные нации смогли встать на ноги и обеспечить технологический скачок, создавая специальные средства, стратегические технологии, благодаря которым получили возможность оспаривать действующий мировой порядок, сохраняя за собой «право» находящимися под их контролем специальными средствами в качестве *Ultima ratio regum* (лат. «Последний довод королей») угрожать миру.

Ключевые слова: *новый мировой порядок, информационное общество, глобальные силы, международное право, война, суверенитет, демократия, диктатура, полюса, ядерный шантаж.*

**ԹՎԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՉՈՐՐՈՐԴ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ***

ՀԴՏ 321+316.3

DOI: 10.52063/25792652-2022.4.15-104

ԺԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի
փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի
քաղաքագիտության բաժնի հայցորդ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
zhanna.harutyunyan@edu.isec.am

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում նկարագրելու ժամանակակից գլոբալ հասարակության, այդ թվում՝ հայ հասարակության փոխակերպվող էությունը՝ կիրառելով փաստաթղթերի վերլուծության կաբինետային հետազոտության մեթոդաբանությունը: Հայաստանում, ի պատասխան էլեկտրոնային կառավարման գլոբալ օրակարգի, հասարակական կյանքի թվայնացման միտումների, ինչպես նաև «թվային հասարակության» հիմնական սահմանումների՝ նեղ և լայն իմաստներով դուրսբերմամբ հնարավոր կլինի մեկնաբանել թե՛ գլոբալ, թե՛ լոկալ հասարակություններում արմատական փոխակերպման էությունը և հիմնական միտումները:

Վերջին ժամանակաշրջանում չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը փոխակերպում է հասարակության կառուցվածքը, դրա հիմնական տարրերը և վերջիններիս միջև փոխհարաբերությունները: Մարդկության զարգացման նոր փուլում միաձուլվում են ֆիզիկական, կենսաբանական և թվային աշխարհները՝ միավորելով առցանց և անցանց տիրույթները: Փոխանակման արժեքային միավոր են դառնում անհատների թվային տվյալները:

Այսպիսով, թվային նոր իրականությունը քաղաքական առաջնորդներին, որոշումներ կայացնողներին ու քաղաքականություն մշակողներին հնարավորություն է ընձեռում օգտագործելու տեխնոլոգիաները ներառական ու մարդակենտրոն ապագա ստեղծելու համար: Հանրային ծառայությունների մատուցումն ու քաղաքականության մշակումն էլեկտրոնային կամ թվային միջոցներով հնարավոր է դառնում էլեկտրոնային կառավարման՝ որպես թվայնացված կառավարման ձևի միջոցով: Հիմքում ունենալով մեծ տվյալների վերլուծությունը, փաստերի վրա հիմնված և իրական ժամանակում գեներացված մոդելները՝ էլեկտրոնային կառավարումը մեծացնում է հանրային քաղաքականության մշակման արդյունավետությունը և հանրային ծառայությունների մատուցման արագությունն ու որակը: Թվային տվյալից տեղեկույթ սինթեզելու, իսկ վերջինից գիտելիք ստանալու և դրանով ղեկավարելու մոդելը հեռանկարային է, որն էլ ընկած պիտի լինի թվային հասարակության հիմքում:

* Հոդվածը ներկայացվել է 30.11.2022թ., գրախոսվել՝ 12.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Հիմնաբառեր՝ թվային հասարակություն, ցանցային հասարակություն, չորրորդ արդյունաբերական հեղափոխություն, թվային տեխնոլոգիաներ, մեծ տվյալներ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, իրերի համացանց, էլեկտրոնային կառավարում, թվի փոխափոխություն, այլութագորասականություն:

Ներածություն

Վերջին երեսուն տարիների ընթացքում տեխնոլոգիաներն արագորեն ներթափանցեցին հասարակական կյանք՝ իրենց մեջ ներառելով հասարակության բոլոր ենթահամակարգերը: Դրանք աննկատելիորեն դարձան անհատի, քաղաքացու կենցաղի ու գործունեության անբաժանելի մասը և փոխարինելու եկան մարդկային գործունեության, անհատների միջև հաղորդակցման հին ձևերին: Օժանդակ միջոցներ լինելուց զատ, այսօր դրանք հավակնում են պլանավորելու ու ղեկավարելու հասարակական կյանքի բոլոր ոլորտները:

Հասարակությունը չորրորդ արդյունաբերական հեղափոխության (Shwab 2015)¹ ֆոնի վրա փոխակերպվում է՝ դառնալով ոչ միայն ցանցային կամ պարզապես տեղեկատվական, այլև թվային: Թվային հասարակությունն իր մեջ ներառում է թե՛ ցանցային, թե՛ տեղեկատվական (Մեքսիկոյան 112) հասարակության բնութագրիչները, սակայն այստեղ էական և կողմորոշիչ է դառնում հասարակական կյանքի բոլոր ոլորտների թվայնացումը. թվային լուծումները կենսական նշանակություն են ստանում՝ ազդարարելով մարդկային էվոլյուցիայի հաջորդ փուլը:

Ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի (*World Economic Forum*) *հիմնադիր նախագահ և գործադիր տնօրեն* Կլաուս Շվաբի՝ Նոր աշխարհում անհատները շարժվում են թվային՝ առցանց (*online*) տիրույթի և անցանց (*offline*) իրականության միջև՝ օգտագործելով կապակցված տեխնոլոգիաներ՝ հնարավորություն տալով կառավարելու իրենց կյանքը (Min et al. 90-95): Համաշխարհային տնտեսական ֆորումի նախաբանում նշվում է, որ «մարդկային զարգացման այս նոր փուլում միաձուլվում են ֆիզիկական, թվային և կենսաբանական աշխարհները՝ ստեղծելով ինչպես խոստումնալից, այնպես էլ վտանգավոր ապագա: Այս հեղափոխության արագությունը, լայնությունը և խորությունը ստիպում են վերանայել երկրների զարգացումը, կազմակերպությունների արժեքաստեղծ եղանակը, անգամ մարդ լինելու իմաստն ու նշանակությունը: Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունն ավելին է, քան պարզապես տեխնոլոգիայի վրա հիմնված փոփոխությունը: Այն հնարավորություն է ընձեռնում օժանդակելու բոլորին՝ ներառյալ առաջնորդներին, քաղաքականություն մշակողներին և ցանկացած եկամտային խմբերի ու ազգային պատկանելիության մարդկանց, օգտագործել տեխնոլոգիաները՝ ստեղծելու ներառական, մարդակենտրոն ապագա» (*World Economic Forum*):

Հայաստանի Հանրապետությունը վերջին 5 տարիներին արագ անցում է կատարում հասարակության բոլոր ոլորտների թվայնացմանը, որին էականորեն աջակցում են հիմնականում միջազգային ծրագրերը և ներդրումները: ՀՀ-ում մինչ օրս թվայնացվել են և արդեն իսկ գործում են մի քանի տասնյակ պետական կառավարման համակարգեր, որոնք իրենց զարգացման և զորեղացման ճանապարհին են: 2019 թվականին ստեղծված Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թիրախային նպատակներից է երկրի թվային փոխակերպման օրակարգի մշակումը, իրականացումը և արդյունքների գնահատումը: Նշված

¹ «Չորրորդ արդյունաբերական հեղափոխություն» եզրույթն առաջին անգամ կիրառել է Համաշխարհային տնտեսական ֆորումի հիմնադիր նախագահ և գործադիր տնօրեն Կլաուս Շվաբը 2015 թ.:

օրակարգը հիմնվում է հետևյալ հիմնական բնագավառների վրա՝ 1) թվային կառավարում, 2) թվային տնտեսություն, 3) թվային հասարակություն, 4) թվային ենթակառուցվածքներ¹:

Տեխնոլոգիաները, առհասարակ, իրենց եռությամբ չեզոք են. դրանք հասարակական կյանքի կանոնակարգման գործիք են և որոշումներ կայացնողներին կարող են մեծապես օգնել քաղաքականությունների մշակման գործընթացում՝ ապահովելու հասարակության լայն շերտերի բարեկեցությունը հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Թվային հասարակության տեսական նախադրյալները

«Թվի» կարևորության մասին խոսվում էր դեռևս մ. թ. ա VI-V դարերում: Թվի՝ որպես կյանքի սկիզբ լինելու գաղափարն ընկած էր այլութագորասականության հիմքում: Ուսմունքի հետևորդները բոլոր սկզբունքները տեսնում էին թվերում. անգամ կրակի, ջրի, հողի սկզբնավորումը, ըստ նրանց, պայմանավորված էր թվով: Արիստոտելի կողմից այլութագորասականության հիմնական մտքի մեկնության համաձայն՝ ամբողջ իրականությունը կարծես թվերի արտացոլումն է, հետևաբար թվերի տարրերը պետք է լինեն իրերի տարրեր, և ամբողջ տիեզերքը կլինի ներդաշնակ՝ ամփոփված թվերի մեջ: Թվային օրինաչափությունների միանշանակությունն ավելի էր խորանում հատկապես այն ժամանակ, երբ բացահայտվում էին թվային համաչափության մի շարք ֆենոմեններ, այն է՝ օր-ամիս-տարի պարբերականությունը, եղանակները, կենդանի օրգանիզմների ինկուբացիոն շրջանները, կենսաբանական զարգացման փուլերը, որոնք կարգավորվում են թվային օրենքներով (Քեռե և Արտիսերի 28): Ըստ ուսմունքի հետևորդների՝ թվից է սկիզբ առնում ոչ միայն ֆիզիկական՝ շոշափելի, այլև զգայական աշխարհը՝ հոգին և աստվածայինը (Աֆոնասին և Ժր. 314): Պյուլթագորասականները մարդու հոգու մաքրումը տեսնում էին գիտության միջոցով, իսկ այլութագորասական «գիտությունը» համարվում էր որպես վերջնարդյունքի հասնելու միջոց: Ուսմունքի հետևորդներն այնպիսի կյանքի կողմնակից էին, որն անվանել էին "bios theoretikos" — «տեսական կյանք», այն է՝ ճշմարտության և բարիքի որոնումներում անցկացվող կյանք, ճանաչողության ուղի, որն էլ բարձրագույն մաքրագործումն է՝ աստվածայինի հետ միավորումը:

Թվի և դրա տարրերի՝ բոլոր իրերի սկիզբը լինելու մոտեցումը հանգեցրեց այլութագորասականների կողմից տիեզերքի հիմնարար նկարագրությանը: Այսպես, եթե թիվը «կարգ» է (սահմանափակ տարրերի համապատասխանեցումը անսահման տարրերի հետ), ապա ամեն ինչ «կարգ» է: Հին հունարենում կարգը «կոսմոս» է, փաստորեն, ըստ այլութագորասականության, տիեզերքն ինքնին «կարգ» է, ենթադրում է կանոնավոր վիճակ², այն շնչավոր է, սֆերիկ և խելացի (*smart*) ((Աֆոնասին և Ժր. 206):

Այսպիսով, մաթեմատիկական օրինաչափությունների՝ ամեն ինչի հիմքում ընկած լինելու գաղափարը նշանավորեց արևմտյան մշակույթի հոգևոր զարգացման հիմնարար փուլը՝ հիմնովին փոխելով գիտական գիտելիքի զարգացման միտումները, մարդկային միտքը վճռական քայլ կատարեց դեպի առաջընթաց, իսկ աշխարհը, որտեղ մինչ այդ գերիշխում էին անկանխատեսելի կույր ուժերը, մնաց անցյալում. թիվն առաջացրեց կարգուկանոն, ռացիոնալություն և ճշմարտություն: Ինչպես

¹ «Եվրոպական միությունը թվային օրակարգի համար» նախաձեռնության պաշտոնական կայք // "EU4Digital Initiative/ Armenia" <https://eufordigital.eu/hy/countries/armenia/>

² Ըստ այս ուղղության՝ «երկինքը, երկիրը, աստվածները և մարդիկ ենթարկվում են որոշակի կարգի», դրա համար էլ այլութագորականները այդ ամենն ընդգրկող տարածքն անվանեցին կոսմոս՝ «կարգ»:

պնդում էր այլուբազորասական Ֆիլոլաուսը՝ «թիվը մի օր կսպանի կեղծիքը» (Peale и Антицерн 31-32): Այսօր էլ թերևս ակնհայտ են թվային տեխնոլոգիաների միջոցով ռացիոնալացման, արդարության, օբյեկտիվության հաստատման, կարգի պահպանման միտումները հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Ավելի ուշ այս ուսմունքը վերածնունդ ապրեց Նեոայլուբազորասականության համատեքստում՝ արտացոլվելով անտիկ շրջանից մինչև մերօրյա փիլիսոփայական մտքերում (Moor & Bynum 2002): Ավելին, այն իր պրակտիկ նշանակությունը ստացավ ճշգրիտ գիտություններում՝ խթանելով տեխնոլոգիական առաջընթացը:

Թվային հասարակության ժամանակակից ըմբռումը և սահմանումները

Արդի սոցիալական տեսությունները զարգացած աշխարհի հասարակությունները բնութագրում են որպես ցանցային, որտեղ էլ շրջանառվում և տարածվում է տեղեկույթը: Շատ սոցիալական տեսաբանների է ոգեշնչում սոցիալական ցանցերի զարգացման նոր ուղիների ի հայտ գալն արդի տեխնոլոգիական զարգացումների համատեքստում, և նրանք կենտրոնանում են այն բանի վրա, թե ինչպես են արդի տեխնոլոգիաները ձևավորում և վերափոխում սոցիալական կյանքը: 2000-ականների սոցիալական մտքի պոստմոդեռնիզմի ազդեցիկ տեսաբան Մանուել Կաստելսը (Castells 2000(a), 2000(b), 2012) իր աշխատություններում անդրադառնում է «ցանցային հասարակություն» հասկացությանը՝ ցանցը դնելով ժամանակակից հասարակությունների կառուցվածքի և ուժային հարաբերությունների հիմքում (Castells 2012): Կաստելսի նկարագրած «տեղեկատվական դարաշրջանում» (Castells 1997, 2000(c), 2000(b)) արդյունաբերական գործընթացները փոխարինվում են էլեկտրոնային հաղորդակցմամբ, որոնց վրա ազդում են նոր տեղեկատվական տեխնոլոգիաները (Casells 2009): Իշխանությունն այժմ բազմաչափ է և տեղակայված համաշխարհային ֆինանսական, քաղաքական, ռազմական, անվտանգային, տեղեկատվական, քրեական և մուլտիմեդիայի ցանցերում, որոնք էլ իրենց հերթին սահմանում են հասարակական նորմերը, արժեքներն ու վարքի կանոնները: Կաստելսը պնդում է, որ տնտեսական արտադրողականության բանալին այսուհետ թվային միջնորդությամբ տեղեկույթն է: Գիտելիքների վրա հիմնված տեղեկատվական տեխնոլոգիաներն արտադրում են ավելի շատ գիտելիք և տեղեկույթ՝ նպաստելով նոր տեղեկութահենք գլոբալ տնտեսության զարգացմանը, որի ենթակառուցվածքները մեծապես փոխկապակցված են թվային և այլ ցանցային տեխնոլոգիաներն ու պրակտիկական օգտագործելու միջոցով: Ըստ Կաստելսի՝ այնպիսի թվային տեխնոլոգիաները, ինչպիսիք են, օրինակ, սոցիալական մեդիան, մեծ դեր ու նշանակություն ունեն նոր սոցիալական կառուցվածքի, համաշխարհային տնտեսության և նոր վիրտուալ մշակույթի ստեղծման գործում (Castells 2012):

Աշխարհի մասին անհատի ճանաչողության նոր եղանակները, տեղեկույթի ստեղծման ու փոխանակման նոր ձևերը, թվային տվյալների առևտրային նպատակներով օգտագործումը ուշադրության են արժանացել Ա. Մակքենզիի (Mackenzie 2005), Դ. Բիրի (Beer 2013), Մ. Ֆիլթերսթոունի (Featherstone 2009), Մ. Սավաթի և Ռ. Բարրոուսի (Savage & Burrows 2007), Ս. Լաշի (Lash 2007) և մի շարք այլ սոցիալական մտածողների կողմից: Նրանք պնդում են, որ թվային տեխնոլոգիաները փոխել են տնտեսական «արժեքի» արտադրության և բաշխման, ինչպես նաև ապրանքների իմաստավորման եղանակները, իսկ գիտելիքը փոխակերպվել է այս գործընթացների արդյունքում:

Մարդաբաններ Դ. Միլլերը և Զ. Գորստը պնդում են, որ թվային տեխնոլոգիաները այլ նյութական մշակութային արտեֆակտերի պես «դառնում են մեզ մարդ դարձնողի բաղկացուցիչ մասը» (Miller & Horst 2012): Դրանք նաև շատ բան են պատմում սոցիալական իրականության նոր մոդելի մասին. աշխարհի ու

հասարակության մասին անհատների պատկերացումները ևս միջնորդավորված են թվային լուծումներով:

Նեղ իմաստով թվային հասարակությունն այն հասարակությունն է, որը փոխառել է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը (Muwani et al. 2022) և որդեգրել վերջինիս կարևորությունը հասարակական կենսագործունեության բոլոր ոլորտներում: Այն սահմանվում է որպես մի հասարակություն, որտեղ ամեն ինչ աշխատում է թվային տեխնոլոգիաներով, և որտեղ ոչ թղթային՝ էլեկտրոնային միջոցներն ընդունված են որպես նորմ (Jamil & Almunawar 2021): Թվային հասարակությունը տեղեկատվական հասարակության էվոլյուցիան է, որը պայմանավորված է թվային տեխնոլոգիաների և թվային մեդիայի ինտենսիվ օգտագործմամբ: Այս տիպի հասարակությունում համացանցը կենտրոնական տեղեկատվական գործիք է, իսկ դրա ապակենտրոնացված ցանցերը կազմում են համագործակցային ուսուցման հասանելիության և փոխանցման միություն (Budea 2021):

Լայն իմաստով՝ թվային հասարակությունը սահմանվում է որպես ժամանակակից, առաջադեմ հասարակություն, որը ձևավորվել է բոլոր ոլորտներում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ընդունման և ինտեգրման արդյունքում, և որին աջակցում են հեռահաղորդակցման և անլար կապի առաջադեմ համակարգերն ու լուծումները (Lokshina et al. 2019, 2020): Թվային հասարակությունը պատկանում է հասարակությունների այն տիպին, որտեղ թվային տեխնոլոգիաները լայնորեն օգտագործվում են անհատական, համայնքային և սոցիալական մարտահրավերներին արծազանքելու համար (Bobrowicz-Campos & Armanda 2020): Այս տիպի հասարակությունում տեխնոլոգիաները մարդկային կյանքի անբաժան մասն են: Այստեղ բիզնես վարելու ձևերն ու սովորույթները հիմնված են թվային տեխնոլոգիաների վրա (Eksili 2022): Թվային հասարակությունը հիմնականում նշանավորվում է թվային տեխնոլոգիաների մենաշնորհով և դրանց բաշխմամբ (Lisdero 2021): Վերջապես, այն մարդկության պատմության թվային դարաշրջանին համապատասխանող հասարակությունն է, որը մեծապես (եթե ոչ ամբողջովին) կախված է տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներից, որտեղ տեղեկույթի ստեղծումը, բաշխումը, օգտագործումը, ինտեգրումը և շահարկումը դառնում են հիմնական տնտեսական, քաղաքական և մշակութային գործունեությունը (Muchnik-Rozanov & Tsybulsky 2020):

Թվային հասարակության հիմքում ընկած են թվային տվյալները: Վերջիններս կողմավորված օբյեկտներ են, որոնք ձայնագրվում և փոխանցվում են թվային մեդիա տեխնոլոգիաների միջոցով: Թվային տեղեկույթը փոխանցվում է թվային սիմվոլների ոչ շարունակական հաջորդականությամբ¹: Հատկանշական է, որ թվային տվյալները ոչ թե պարզապես ինքնաբերաբար ստեղծված թվային տեխնոլոգիաների միավորներ են, այլ մարդու կենսագործունեության արդյունք:

Ցանցային տեխնոլոգիաների հետ փոխկապակցված անհատների թվայնացված տվյալները հավաքվում են ինքնաբերաբար և արխիվացվում՝ ստեղծելով տվյալների հսկայական բազաներ, որոնք այժմ հաճախ կոչվում են «մեծ տվյալներ»: Վերջիններս տեխնոլոգիաների միջոցով հավաքագրվող տվյալներից զատ ներառում են նաև օգտատերերի կողմից համացանցում միտումնավոր վերբեռնվող բովանդակությունն ու տեղեկատվությունը՝ այսպիսով ապահովելով սոցիալական մեդիա հարթակներում իրենց մասնակցությունը, դերի ու կարգավիճակի ամրագրումը:

Բանական մարդն արդի ժամանակաշրջանում իր առօրյա գործունեությունը կապում է համացանցի, թվային սարքերի ու համակարգերի հետ, որտեղ նա ամեն օր կամա թե ակամա փոխանակվում է իր իսկ թվային տվյալներով, որոնք էլ, իրենց հերթին, չնայած հեշտացնելով և առավել հարմարավետ դարձնելով մարդկանց

¹ Հաճախ դրանք «0» և «1» են:

կյանքը, ստեղծում են նոր մարտահրավերներ: Իրերի համացանցն արդեն իսկ իրականություն է, որտեղ անհատը տրամադրում է իր անձնական, այդ թվում՝ իրեն շրջապատող միջավայրի տվյալները տեխնոլոգիաներին որոշակի այլ արտոնություններից, ռեսուրսներից ու բարիքներից օգտվելու համար: Ստացվում է, որ այսօր փոխանակման արժեքային միավորը դառնում է անհատների թվային տվյալը, և քանի որ այդ անհատներն այս կամ այն չափով թվային տեխնոլոգիաներ օգտագործողներ են, ապա առավել քան արդիական է դառնում թվային հասարակությունում անհատին բնութագրելու համար «օգտատեր»¹ հասկացության կիրառումը:

Թվային տեխնոլոգիաներն իրենց մեջ ներառում են թե՛ թվային ծրագրակազմը (*software*)², թե՛ տեխնիկական ապահովումը (*hardware*)³, ինչպես նաև դրանց աջակցող ենթակառուցվածքները: Համակարգչային թվային ծրագրակազմը և թվային սարքավորանքն ակտիվորեն ձևավորում են անհատական ու խմբային ինքնություն, մոդելավորում ու առավել կանխատեսելի դարձնում հասարակական վարքը, մարմնավորում ու վերափոխում սոցիալական կյանքն ու սոցիալական հարաբերությունները, փոխարինում սոցիալական ինստիտուտների դասական մոդելները, ուղեկցում կամ աջակցում սոցիալ-քաղաքական գործընթացներին:

Համակարգչային ալգորիթմներն աստիճանաբար ավելի են կարևորվում թվային և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտատերերի մասին տվյալների հավաքագրման, դրանց տեսակավորման ու իմաստավորման, դրանց շնորհիվ օգտատիրոջ ապագա վարքագծի վերաբերյալ կանխատեսումներ կատարելու համար: Հասարակագիտական ուսմունքներում ալգորիթմների ուսումնասիրությունը կարևորվում է ոչ միայն թվային հասարակության մեջ դրանց ավելի արժեքավոր դերի առումով, այլև դրանց սոցիալ-մշակութային ու քաղաքական դիտակետերով (Lupton 11):

Թվայինացված տեղեկատվական տեխնոլոգիաները բազմանշանակ կիրառություն ունեն քաղաքական ոլորտում: Ճիշտ օգտագործման դեպքում դրանք մեծապես օժանդակում են քաղաքական գործընթացներին՝ մեծացնելով վերջիններիս թափանցիկությունը, տեղեկատվության տարածումը, ընտրական իրավունքի ապահովումը: Բացի այդ, թվայինացված տեղեկատվական տեխնոլոգիաները նաև վերահսկողության գործիք են, որոնք իշխանությունները կարող են կիրառել և արդեն իսկ օգտագործում են հետևելու, լրտեսելու իրենց քաղաքացիներին և վերահսկելու նրանց հասանելիությունը մեդիա տիրույթին: Տեխնոլոգիան մեծացնում է իշխանությունների հնարավորությունները՝ պայքարելու հանցավորության ու ահաբեկչության դեմ, բայց նաև տալիս է նրանց պատերազմներ հրահրելու հնարավորություններ՝ ստեղծելով արդի շրջանում տեխնոլոգիաների ամենահակասական կիրառումը: Թերևս քաղաքականությունն ու իշխանությունները ամենից մեծ ներուժն ու, միևնույն ժամանակ, ամենամեծ ռիսկերն են առաջացնում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման համատեքստում (Gray 290): Էլեկտրոնային կառավարումը (*e-government*)՝ որպես թվայինացված կառավարման ձև, հնարավոր է դարձնում հանրային ծառայությունների մատուցումն ու քաղաքականության մշակումն Էլեկտրոնային կամ թվային միջոցներով (Jamil & Almunawar 2021): Հիմքում ունենալով մեծ տվյալների վերլուծությունը՝ փաստերի վրա

¹ «Օգտատեր» — իր ունեցածից օգտվող (տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976): Թվային հասարակությունում անհատի ունեցածն իր իսկ տվյալներն են, որն էլ նա թերևս կարող է տնօրինել:

² Համակարգչային կողավորման ծրագրերն են, որոնք տալիս են հրահանգներ, թե ինչպես պետք է աշխատեն համակարգիչները:

³ Ֆիզիկական սարքավորանքն է՝ համակարգչային սարքեր, ապարատներ, որոնք միասին աշխատում են՝ օգտագործելով թվային կողավորումը:

հիմնված և իրական ժամանակում (*real-time*) գեներացված մոդելները՝ Էլեկտրոնային կառավարումը մեծացնում է հանրային քաղաքականության մշակման արդյունավետությունը և հանրային ծառայությունների մատուցման արագությունն ու որակը:

2019 թ. ՀՀ-ում ստեղծվեց բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, որը, առաջնորդվելով ՀՀ կառավարության սահմանած առաջնահերթություններով, նախատեսում է իրականացնել ՀՀ կառավարության, տնտեսության և հասարակության թվային փոխակերպումը (թվայնացումը): Փոխակերպումը, ասել է թե թվայնացումը, պլանավորված է իրականացնել ՀՀ պետական կառավարման համակարգում՝ նորարարական տեխնոլոգիաների, կիրառական տեխնոլոգիաների, սովյալների քաղաքականության, Էլեկտրոնային ծառայությունների և Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական ստանդարտների և թվայնացված միջավայրի ստեղծման, ինչպես նաև տնտեսության մասնավոր հատվածում թվային տեխնոլոգիաների կիրառմանը նպաստող նախաձեռնությունների և հասարակության կողմից Էլեկտրոնային գործիքների օգտագործումը խթանող ծրագրերի մշակման և իրականացման միջոցով¹:

ՀՀ կառավարության կողմից ստանձնած երկրի ամբողջական զարգացումը թիրախավորող և բոլոր սոցիալ-տնտեսական բնագավառներն ընդգրկող զարգացման համապարփակ պլանը կառուցված է երեք հիմնական ռազմավարական հենասյուների վրա՝ 1) պետական կառավարում, 2) տնտեսություն, 3) հասարակություն:

Հայաստանի Հանրապետության թվայնացման ջանքերին ներկայումս տեսանելի օժանդակություն է ցուցաբերվում: Մասնավորապես մեծ հետաքրքրություն է ցուցաբերում Եվրոպական Միությունն (ԵՄ) իր Արևելյան գործընկերության շրջանակներում: Դիմակայուն թվային փոխակերպմանն աջակցությունն Արևելյան գործընկերության համար հստակ կերպով սահմանված է որպես 2020 թվականից հետո ժամանակահատվածի առանցքային գերակայություն:

«Եվրոպական միությունը թվային օրակարգի համար» (EU4Digital) նախաձեռնությունն աջակցում է Հայաստանում թվային բարեփոխումների օրակարգին՝ իր մի շարք գործողություններով նպաստելով թվային տնտեսության և հասարակության առանցքային ոլորտների զարգացմանը՝ ԵՄ նորմերին և փորձին համապատասխան: Ըստ սույն նախաձեռնության պաշտոնական կայքի՝ «EU4Digital»-ը հիմնվում է Էլեկտրոնային կառավարման և թվայնացման ոլորտում Հայաստանի հետ Եվրամիության համագործակցության երկարամյա պատմության ու ԵՄ-Հայաստան համագործակցության հետագա ամրապնդման վրա՝ կենտրոնանալով հեռահաղորդակցության կարգավորումների, վստահության և անվտանգության, Էլեկտրոնային առևտրի, ՏՀՏ նորարարության, Էլեկտրոնային առողջապահության և Էլեկտրոնային հմտությունների ուղղությամբ:

«ԵՄ-ն Հայաստանին. աջակցություն էլ. Կառավարմանը» (2017-2020 թթ.) եռամյա ծրագրի նպատակն էր ստեղծել պետական փոխգործելիության հարթակ՝ ՀՀ պետական կառավարման բոլոր կառույցների միջև պարզեցված և ստանդարտացված կապի հնարավորություն: Ծրագիրը հիմնավորվում էր թափանցիկության բարձրացման, հանրային վերահսկողության և Էլեկտրոնային կառավարման ծառայությունների կանխատեսելիության, ինչպես նաև պետական մարմինների, տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ժամանակի և ծախսերի ինսայդության հնարավորությունով:

Այսպիսով, ՀՀ-ում մինչ օրս թվայնացվել են և արդեն իսկ գործում են հասարակության կենսագործունեության ապահովման համար կարևորագույն մի

¹ Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025, https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/02/183_1.pdf

շարք էլեկտրոնային համակարգեր ու հարթակներ: Դրանք են՝ ՀՀ էլեկտրոնային կառավարման (e-Gov) հարթակը, պետական վճարումների էլեկտրոնային համակարգը (e-payments), հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման էլեկտրոնային համակարգը (file-online.taxservice.am), քաղաքացիական կացության ակտերի գրանցման միասնական էլեկտրոնային համակարգը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգը, իրավաբանական անձանց պետական գրանցման էլեկտրոնային համակարգը (e-register), իրավական տեղեկատվության համակարգը (arlis), էլեկտրոնային նոտարական համակարգը (e-notary), էլեկտրոնային քրեակատարողական համակարգը (e-penitentiary), դատական տեղեկատվական համակարգը (datalex), էլեկտրոնային ապոստիլի համակարգը (e-apostille), իրավական ակտերի նախագծերի թափանցիկության հեշտ քննարկումը հնարավոր դարձնող միասնական հարթակը (e-draft), կառավարությանը դիմումներ, բողոքներ կամ առաջարկություններ ներկայացնելու համար նախատեսված էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը (e-request), առողջապահական տվյալների կառավարման միասնական էլեկտրոնային համակարգը (armed.am), կրթության կառավարման տեղեկատվական համակարգը (emis.am), «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության առցանց հարթակը (roadpolice.am) և այլն: Վերոնշյալ հարթակների օր օրի կատարելագործումը փաստում է Հայաստանում հասարակական բոլոր ոլորտների թվայնացման օրակարգի անդամնալիությունը: Այս հարթակներում գեներացվում են ՀՀ քաղաքացիների կյանքի բոլոր ոլորտների անձնական տվյալների թվայնացված մեծածավալ պաշարներ: Այդ պարագայում էական է դառնում պետական մարմինների՝ այդ պաշարներից գրագետ և նպատակային օգտվելու կարողությունների ու հմտությունների զարգացումը, ինչպես նաև կառավարության քաղաքական կամքի գործնականում ուղղված ՀՀ քաղաքացու կյանքի որակի բարելավմանը:

Իրերի համացանցը թվային հասարակության հայեցակարգի նյութականացման հիմքում

Արդի իրականությունում կարծես ամեն ինչ բաժանված լինի թվայինի և ոչ թվայինի, և հասարակական կյանքի բոլոր ոլորտների թվայնացման միտումներն անխուսափելի են դարձնում ողջ հասարակության թվայնացումը՝ անհատի կյանքից մինչև գլոբալ կառուցվածքներ: Տեխնոլոգիական առաջընթացը փորձում է թվայնացնել ու առցանց ձևով իրար հետ կապել ամենքին և ամեն ինչ, այդ թվում՝ անշունչ իրերն ու առարկաները, որոնք, ինքնատիպ նույնականացմամբ միացված լինելով համացանցին, կարող են միմյանց հետ փոխանակվել տվյալներով, տեղեկություններ փոխանցել շրջակա միջավայրի և իրենց օգտատերերի մասին. խոսքն «իրերի համացանցի» (Internet of Things — IoT) մասին է (Hasan 2022)¹: Վերջինս չորրորդ տեխնոլոգիական հեղափոխության ցուցիչներից է: Այն պայմանավորված է սենսորային ցանցերի, շարժական սարքերի, անլար կապի, ցանցային և ամպային տեխնոլոգիաների կարողությունների առաջընթացով և ծախսարդյունավետության զուգակցմամբ (Bahga & Madiseti 20): Եթե ոչ հեռավոր անցյալում բջջային հեռախոսներն ու ցանցային համակարգիչներն էին կատարում տվյալների փոխանակման ու հաղորդակցման ապահովման գործառույթը, ապա արդեն նոր տեխնոլոգիական հեղափոխությունը թույլ է տալիս իրար հետ կապել առօրյա կենցաղային իրերը՝ թերմոստատներից, ականջակալներից, ոռոգման պոմպերից ու սենսորներից սկսած, մինչև անհատի կողմից օգտագործվող աջակցող

¹ 2021 թվականի դրությամբ շուրջ 12,2 միլիարդ ակտիվ կետ է արձանագրվել իրերի համացանցում:

միջոցները, էլեկտրական մեքենաների շարժիչի կառավարման սխեմաներն ու «խելացի տները»¹:

Իրերի համացանցը² սահմանվում է որպես ինքնակարգավորվող հնարավորություններով դինամիկ գլոբալ ցանցի ենթակառուցվածք: Այն հիմնված է ստանդարտ և փոխգործունակ հաղորդակցման արձանագրությունների վրա, որտեղ ֆիզիկական և վիրտուալ «իրերն» ունեն ինքնություն, ֆիզիկական հատկանիշներ, վիրտուալ տիրույթում նույնականացված են, օգտագործում են խելացի հաշվողական միջոցներ, անխափան կերպով ինտեգրված են տեղեկատվական ցանցին, հաճախ փոխանցում են տվյալներ՝ կապված իրենց օգտատերերի և նրանց շրջակա միջավայրի հետ (Ian 2012): Իրերի համացանցի սարքերն ու համակարգերը «խելացի» են, կարող են դինամիկ կերպով հարմարվել փոփոխվող իրավիճակներին և գործել՝ ելնելով իրենց աշխատանքային պայմաններից, օգտագործման իրավիճակներից կամ առկա միջավայրից: Տեղեկատվական ցանցում ինտեգրումն օգնում է իրերի համացանցի սարքերին դառնալ ավելի «խելացի»՝ ելնելով առանձին սարքերի կոլեկտիվ բնականությունից և ենթակառուցվածքների հետ համագործակցության մեջ մտնելով: Իրերի համացանցի սարքերը սովորաբար ունեն ինքնակարգավորման հնարավորություն, ինչն էլ թույլ է տալիս մեծ թվով սարքերի աշխատել միասին որոշակի նույնականություն ապահովելու համար: Ինքնուրույն կատարելով ցանցային կարգավորումները և ստանալով ծրագրային ապահովման վերջին թարմացումները՝ իրերի համացանցի սարքերը նվազագույնի են հասցնում մարդկային գործոնն ու օգտատիրոջ կողմից ձեռքով միջամտությունները:

Իրերի համացանցի հիմքում ընկած են մեծ տվյալները, որոնք բնութագրվում են իրենց ծավալով, գեներացման արագությամբ ու բազմազանությամբ: Իրերի համացանցը հնարավոր է դարձնում ենթակառուցվածքների ծախսարդյունավետ վերահսկողության, հասարակական կարգի և անվտանգության ապահովումը, ինչպես նաև կրիտիկական նշանակության ենթակառուցվածքների³ մշտադիտարկումը և արտակարգ իրավիճակներում արագ արձագանքումը (Bahga & Madiseti 51-52) :

Մեծ տվյալներն արժևորվում են ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային ձեռնարկությունների կողմից՝ ամենատարբեր նպատակների իրականացման համար: Այս տվյալների առկայությունը բազմաթիվ հարցեր է առաջացնում այն մասին, թե ինչպես են դրանք օգտագործվում և ինչ հետևանքներ կունենան ինչպես միկրոմակարդակում՝ քաղաքացիների անձնական տվյալների պաշտպանության, գաղտնիության, անվտանգության, վերահսկողության համատեքստում, այնպես էլ մակրոմակարդակում՝ տնտեսական, քաղաքական, մշակութային, անվտանգային տեղական և գլոբալ զարգացումների համատեքստում:

¹ Իրերի համացանցի ծրագրային հավելվածները ներառում են բավականին լայնամասշտաբ միավորներ՝ տներ, քաղաքներ, շրջակա միջավայր, Էներգետիկ համակարգեր, առևտուր, լոգիստիկա, արտադրություն, գյուղատնտեսություն, առողջապահություն և այլն: Իրերի համացանցի սարքերի թվին են դասվում այն բոլոր տնային պարագաները, սմարթֆոններն ու համակարգիչները, էլեկտրոնային կրիչները, մեքենաները, Էներգետիկ համակարգերը, առևտրի կետերի վճարման համակարգերը, գրասենյակային թվային սարքավորումները, արդյունաբերական մեքենաները, առողջապահական համակարգերը, աջակցող միջոցները, վերահսկման տեսախցիկները և այլ սարքերը, որոնք միացված են համացանցին և կարող են միմյանց միջև փոխանակվել տվյալներով:

² Համացանցն իր ձևավորման սկզբնական շրջանում մի տեխնոլոգիա էր, որը նախատեսված էր տվյալների հաղորդակցման ցանցեր ստեղծելու նպատակով առանձին համակարգիչների միջև *ռեսուրսների* փոխանակման համար (այստեղից էլ տերմինը): Այն նախկինում օգտագործվում էր հիմնականում զինվորականների, համալսարանների և տեղեկատվական տեխնոլոգիաների փորձագետների ու Էնտուզիաստների կողմից:

³ Գազատարներ, ջրատարներ, էլեկտրակայաններ, հանրային տրանսպորտ և այլն:

Իրերի համացանցի նպատակը պարզապես իրերն ու անշունչ առարկաները միմյանց միացնելը և համացանցի հետ կապելը չէ: Այն թույլ է տալիս այդ «իրերին հաղորդակցվել» իրար հետ և տվյալներ փոխանակել, սա ենթադրում է ոչ միայն շրջակա միջավայրի մասին չեզոք տվյալների տրամադրում, այլև իրենց օգտատերերի անձնական տվյալների փոխանակում: «Տվյալն» ինքնին չունի հստակ իմաստ, հետևաբար նաև արժեք, քանի դեռ դրան չի տրվել որոշակի համատեքստ՝ դարձնելով այն արժեքավոր տեղեկույթ: Իրերի համացանցի ծրագրային հավելվածները դուրս են բերում և տեղեկույթ ստեղծում ավելի ցածր մակարդակի հում և չմշակված տվյալներից՝ զտելով, գործառնելով, դասակարգելով, խտացնելով և համատեքստայնացնելով տվյալները (տե՛ս Գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հասարակական կյանքի ռացիոնալ կանոնակարգման մոդելը

Տեղեկույթից դուրս է բերվում գիտելիք, որն էլ գործի է դրվում որոշակի նպատակների հասնելու համար: Հասարակական կյանքի ռացիոնալ կանոնակարգման համար լայն հնարավորություն է բացում «տվյալից գեներացվող տեղեկույթ և տեղեկույթից ձեռք բերվող գիտելիք» մոդելը. այն հնարավոր է դարձնում «տեղեկացվածություն — կանխատեսում — պլանավորում» շղթան, որը կենսական նշանակություն ունի հասարակական-քաղաքական գործընթացների համատեքստում:

Եզրակացություն

Այսպիսով, արդի շրջանում մարդկային հասարակությունը թևակոխում է իր Էվոյուցիոն զարգացման մի նոր փուլ՝ անցում կատարելով անցանց, շրջափելի իրականությունից դեպի առցանց, վիրտուալ իրականություն: Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը սոսկ տեխնոլոգիայի վրա հիմնված փոխակերպում չէ, այն առաջարկում է միանգամայն նոր, առավել ռացիոնալ, օբյեկտիվ, ավելի լավ կանոնակարգված, վերահսկելի հասարակության մոդել, որտեղ հասարակության ելակետային միավորը անհատի թվայնացված տվյալն է: Ողջ հասարակության մասշտաբով գեներացվող մեծ տվյալները իրական ժամանակում ի վիճակի են առաջարկելու հասարակության կամ դրա ենթակառուցվածքների զարգացման համար լավագույն օպտիմալ լուծումները:

Թվային հասարակության մոդելը հնարավորություն է ընձեռում քաղաքական առաջնորդներին, քաղաքականություն մշակողներին և որոշումներ կայացնողներին՝ օգտագործելու տեխնոլոգիաները փաստերի վրա հիմնված և գիտելիքահենք կառավարում իրականացնելու համար, որից կշահի հասարակությունն իր բոլոր ենթակառուցվածքներով: Վերջիններս միմյանց հետ շղթայական կապի մեջ են և իրար հետ մշտապես փոխանակում են թվային տվյալներ՝ դրանցից սինթեզելով հիմնավոր

տեղեկույթ, ավելին՝ գիտելիք: Օբյեկտիվ գիտելիքահենք կառավարումը լավագույնս կարող է բավարարել հասարակության կարիքները ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ պլանավորման հեռանկարներում:

Հայ հասարակությունը, զլոբալ միտումներին համահունչ, թևակոխում է զարգացման նոր՝ թվային փուլ: Թվայնացման օրակարգի բարեհաջող իրականացման համար առանցքային են տվյալների ազգային պահոցի ստեղծումը և դրա անխափան շահագործումը: Գեներացվող մեծ տվյալների իրական ժամանակում մշակումը և վերլուծությունը չափելի, հետևաբար նաև կանխատեսելի ու կառավարելի կդարձնեն պետության սոցիալ-տնտեսական դիսամիկ զարգացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025. Երևան, 2021. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/02/183_1.pdf
2. [Սերոնյան, Վիկտորիա.](#) «Տեղեկատվական հասարակության փոխակերպման հիմնախնդիրները Հայաստանում». *Գիտական Արցախ*, №2 (13), 2022, էջ 112-120:
3. Афонасин, Евгений и др. Пифагорейская традиция. Санкт-Петербург: РХГА, 2013. (747 с.).
4. Реале, Джованни, Антисери, Дарио. Западная философия от истоков до наших дней. №1, Античность, — ТОО ТК Санкт Петербург, «Петрополис», 1997. (336 с.).
5. Bahga Arshdeep, Madiseti Vijay. *Internet of Things: A Hands-On-Approach*. 2014. P. 20.
6. Beer, David, *Popular Culture and New Media: The Politics of Circulation*. Houndmills: Palgrave Macmillan, 2013.
7. Bobrowicz-Campos, Elzbieta and Armanda P. M. Matos. "Ageing and Health in the Digital Society: Challenges and Opportunities." *Exploring the Role of ICTs in Healthy Aging*, edited by David Mendes, et al., IGI Global, 2020, pp. 34-55. <https://doi.org/10.4018/978-1-7998-1937-0.ch003>
8. Budea, Alexandra María Sandulescu. "An Approximation in the Study of Communication Research: Digital Evolution and the Study of This Subject in Spanish Academic Journals." *Improving University Reputation Through Academic Digital Branding*, edited by Ariana Daniela Del Pino and Nuria Lloret Romero, IGI Global, 2021, pp. 284-300. <https://doi.org/10.4018/978-1-7998-4930-8.ch016>
9. Castells, Manuel, (2009) *Communication Power*, New York, Oxford University Press.
10. Castells, Manuel, (2000 a) Materials for an exploratory theory of the network society. *British Journal of Sociology*, 51 (1), 5 – 24.
11. Castells, Manuel, (2000 b) *The Rise of the Network Society*. Vol. 1. Malden, MA: Blackwell.
12. Castells, Manuel, (2000 c) *End of Millennium*, 2nd edn., Oxford: Blackwell (first edition 1998).
13. Castells, Manuel, (2012) *Networks of Outrage and Hope: Social Movements in the Internet Age*. New York: Wiley.
14. Castells, Manuel, *The Power of Identity* 2nd edn, Oxford: Blackwell (first edition 1997).
15. Eksili, Nisa. "Human Resources Management: Challenges in the Digital Society." *Increasing Supply Chain Performance in Digital Society*, edited by Ramona Diana Leon, et al., IGI Global, 2022, pp. 262-277. <https://doi.org/10.4018/978-1-7998-9715-6.ch013>
16. "EU4Armenia: e-Gov Actions", 14.03.2018, https://www.eas.europa.eu/node/41316_en (accessed 05 September 2022)

17. “EU4Digital Initiative/ Armenia” <https://eufordigital.eu/hy/countries/armenia/> (accessed 05 September 2022)
18. Featherstone, Mike, Ubiquitous media: an introduction. Theory, Culture & Society, 26 (2 / 3), 2009, pp. 1 – 22.
19. Forth Industrial Revolution, *World Economic Forum*, <https://www.weforum.org/focus/fourth-industrial-revolution> (accessed 05 September 2022).
20. Gray, Stuart. Information Technology in a Global Society, 2012. p. 290.
21. Hasan, Mohammad, “State of IoT 2022: Number of connected IoT devices growing 18% to 14.4 billion globally”, accessed 18 May 2022, <https://iot-analytics.com/>
22. Ian G. Smith. The Internet of Things, New Horizon, IERC – Internet of Things European Research Cluster, 2012.
23. Jamil, Mohammad Izzuddin Mohammed and Mohammad Nabil Almunawar. "Importance of Digital Literacy and Hindrance Brought About by Digital Divide." Encyclopedia of Information Science and Technology, Fifth Edition, edited by Mehdi Khosrow-Pour D.B.A., IGI Global, 2021, pp. 1683-1698. <https://doi.org/10.4018/978-1-7998-3479-3.ch116> <https://www.igi-global.com/chapter/importance-of-digital-literacy-and-hindrance-brought-about-by-digital-divide/260298>
24. Lash, Scott. Power after hegemony: cultural studies in mutation? Theory, Culture & Society, 24 (3), 2007, pp. 55 – 78.
25. Lisdero, Pedro. "Metamorphosis of Labour in Digital Societies: Platform Workers (Deliveries) and the Pandemic." Socio-Economic Effects and Recovery Efforts for the Rental Industry: Post-COVID-19 Strategies, edited by Maximiliano Korstanje, IGI Global, 2021, pp. 194-216. <https://doi.org/10.4018/978-1-7998-7287-0.ch011>.
26. Lokshina, Izabella V., et al. "Evaluation of Strategic Opportunities and Resulting Business Models for SMEs: Employing IoT in Their Data-Driven Ecosystems." *Knowledge Management, Innovation, and Entrepreneurship in a Changing World*, edited by Murray Eugene Jennex, IGI Global, 2020, pp. 148-186. <https://doi.org/10.4018/978-1-7998-2355-1.ch007>
27. Lokshina, Izabella V. et al. "Internet of Things and Big Data-Driven Data Analysis Services for Third Parties: Business Models, New Ventures, and Potential Horizons." *Strategic Innovations and Interdisciplinary Perspectives in Telecommunications and Networking*, edited by Natarajan Meghanathan, IGI Global, 2019, pp. 256-289. <https://doi.org/10.4018/978-1-5225-8188-8.ch014>
28. Lupton, Deborah, *Digital Sociology*, Routledge, New York, 2015, pp. 11.
29. Mackenzie, Adrian. The performativity of code: software and cultures of circulation. *Theory, Culture & Society*, 22 (1), 2005, pp. 71 – 92.
30. Miller, Daniel and Horst, Heather. The Digital and the Human: a Prospectus for Digital Anthropology. In H. Horstand D. Miller (eds) *Digital Anthropology*. London: Berg, (2012), pp. 3 – 35.
31. Min Xu, Jeanne M. David, Suk Hi Kim. “The Fourth Industrial Revolution: Opportunities and Challenges”. *International Journal of Financial Research* Vol. 9, No. 2; 2018. PP 90-95.
32. Moor, James, Bynum, Terrell Ward Cyberphilosophy: The Intersection of Philosophy and Computing. *Oxford: Blackwell*, 2002, p. 320.
33. Muchnik-Rozanov, Yulia and Dina Tsybulsky. "Linguistic Analysis of Science Teachers' Narratives Using AntConc Software." *Advancing Educational Research with Emerging Technology*, edited by Eugene Kennedy and Yufeng Qian, *IGI Global*, 2020, pp. 211-230. <https://doi.org/10.4018/978-1-7998-1173-2.ch010>
34. Muwani, Tendai Shelton, et al. "Clusters for Transformation in Marginalized Areas." *Digital Transformation for Promoting Inclusiveness in Marginalized Communities*,

edited by Munyaradzi Zhou, et al., IGI Global, 2022, pp. 185-199.
<https://doi.org/10.4018/978-1-6684-3901-2.ch009>

35. Savage Mike, Burrows Roger. The Coming Crisis of Empirical Sociology. *Sociology*, 41 (5), 2007, pp. 885 – 899.

36. Schwab, Klaus. The Fourth Industrial Revolution, by Klaus Schwab (2015), (accessed 05 September 2022) <https://www.weforum.org/about/the-fourth-industrial-revolution-by-klaus-schwab>.

37. World Economic Forum. Forth Industrial Revolution <https://www.weforum.org/focus/fourth-industrial-revolution>, (accessed 05 September 2022).

WORKS CITED

1. Hayastani t'vaynacman r'azmavarut'yun 2021-2025, [Digitalization Strategy of Armenia. Yerevan] 2021 (in Armenian) https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/02/183_1.pdf

2. Melqonyan, Viktoria. «Teghekatvakan hasarakut'yan p'oxakerpman himnaxndirnyer' Hayastanum». *Gitakan Arcax*, №2(13), 2022, e'j 112-120: [The Issues of Transformation of Informative Society in Armenia. Yerevan] 2022. (In Armenian)

3. Afonasin E., Afonasin A., Shhetnikov A., Pifagorejskaja tradicija [Pythagorean Tradition]. Sankt-Peterburg: RHGA, 2013. (747 s.) (in Russian)

4. Reale Dzh., Antiseri D., Zapadnaja filosofija ot istokov do nashih dnei. [Eastern Philosophy from Antient Times to Nowadays] №1, *Antichnost'*, — TOO TK Sankt Peterburg, "Petropolis", 1997. (336 s.) (in Russian)

THEORETICAL FOUNDATIONS AND DEVELOPMENT OF DIGITAL SOCIETY IN THE CONTEXT OF THE FOURTH INDUSTRIAL REVOLUTION

ZHANNA HARUTYUNYAN

*National Academy of Science of the Republic of Armenia, Institute of Philosophy,
Sociology and Law, Department of Political Science,
Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this article is to describe the transformative essence of modern global society, including Armenian society, the trends of digitization, and the e-government agenda in Armenia, revealing the main definitions of "digital society" in narrow and broad senses, using the methodology of desk research on the analysis of documents.

Currently, the Forth Industrial Revolution has transformed the structure of society, its main infrastructures and elements, and the relationships between them. In a new phase of human development, the physical, biological, and digital worlds are merging, unifying the online and offline domains. Digital data of individuals become the unit of value for exchange. The new digital reality enables political leaders, decision-makers, and policymakers to use technology for creating an inclusive and human-centered future. The provision of public services and policy development through electronic or digital methods becomes possible through e-governance as a form of digitized governance. Based on big data analysis, and evidence-based and real-time generated models, e-governance increases the efficiency of public policy making, as well as the velocity and quality of public service delivery. The model of synthesizing information from digital data,

obtaining knowledge from that information, and leading society through this approach, is a prospective model, which should lie in the basis of the digital society.

Keywords: *digital society, network society, fourth industrial revolution, digital technology, big data, information and communication technology, internet of things, e-government, philosophy of numbers, Pythagoreanism.*

ТЕОРЕТИЧЕСКИЕ ОСНОВЫ И РАЗВИТИЕ ЦИФРОВОГО ОБЩЕСТВА В УСЛОВИЯХ ЧЕТВЕРТОЙ ПРОМЫШЛЕННОЙ РЕВОЛЮЦИИ

ЖАННА АРУТЮНЯН

*соискатель кафедры политологии
Института философии, социологии и права
Национальной академии наук Республики Армения,
г. Ереван, Республика Армения*

В данной статье предпринята попытка описать трансформирующийся характер современного глобального общества, тенденции цифровизации и повестку электронного правительства в Армении, раскрывая при этом основные определения «цифрового общества» в узком и широком смысле. В последнее время четвертая промышленная революция изменила структуру общества, его основные элементы и отношения между ними. На новом этапе человеческого развития физический, биологический и цифровой миры сливаются, объединяя онлайн- и оффлайн- сферы. Цифровые данные индивидов становятся единицей стоимости обмена. Новая цифровая реальность позволяет политическим лидерам и деятелям, а также лицам, принимающим решения, использовать технологии для создания инклюзивного и человекоцентричного будущего. Предоставление государственных услуг и разработка политики с помощью электронных или цифровых средств стало возможным благодаря электронному управлению как форме цифрового управления. Электронное управление, которое основано на анализе больших данных и на достоверных моделях, сгенерированных в режиме реального времени, повышает эффективность разработки государственной политики, а также скорость и качество предоставления государственных услуг. Модель синтеза информации из цифровых данных, получения достоверных знаний из них и управления ими обществом является перспективной. Данная модель является наилучшей в управлении современным обществом.

Ключевые слова: *цифровое общество, сетевое общество, четвертая промышленная революция, цифровые технологии, большие данные, информационно-коммуникационные технологии, интернет вещей, электронное управление, философия числа, пифагореизм.*

ՇԱՐԺՄԱՆ ԲԱՅԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ*

ՀՏԴ 801.8

DOI: 10.52063/25792652-2022.4.15-118

ՏԱԹԵՎԻԿ ԱԶԻՉԲԵԿՅԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հայցորդ,
ք. Գյումրի, Հայաստանի Հանրապետություն
tatevbekyan@mail.ru

Սույն հոդվածում նպատակ ենք հետապնդում ներկայացնել բայական բառապաշարում ամենաբազմանդամ խմբերից մեկի՝ շարժման բայերի սահմանները, առանձնահատկությունները, դրսևորած կապակցական հնարավորությունները միջին հայերենի համաժամանակյա լեզվավիճակի շրջանակներում:

Առաջադիր նպատակին հասնելու համար մեր առջև խնդիր ենք դրել կազմել միջին հայերենի շարժման բայերի բառացանկը և նկատի ունենալով միջինհայերենյան բնագրերի ընձեռած հնարավորությունները՝ բացահայտել քննվող իմաստային խմբի բայերի բառիմաստի և շարահյուսական-կապակցական փոխայայմանավորվածությունները:

Առաջնորդվել ենք համաժամանակյա նկարագրության, համալիր հետազոտության, վերլուծության և համադրության մեթոդներով:

Միջին հայերենի շարժման բայերի քննությունից ակնհայտ է դառնում, որ իմաստային այս խմբի բայական միավորների համար ընդհանուրը տարածության մեջ տեղափոխություն (աղարկել, հեռենալ, մանրաքայլել, սղալ, քայլել), անորոշ ուղղվածությամբ շարժման իմաստ (խալտալ, թալտալ, ճոճկըտալ, թալթալի, շրջմրջիլ) կամ առարկայի դիրքի այլևայլ փոփոխություններ արտահայտելն է (արձկնալ/արձականալ, բլիլ, ընգնել/ընգնիլ/ընկնալ/ընկնիլ, խօսարհանալ, կնկզիլ):

Իմաստային այս խմբում ընդգրկված բայերը հիմնականում չեզոք սեռի են, սակավաթիվ շարժման բայեր են ներգործական սեռի (թալտել, թափահրել, շարժել, քսել և այլն), որոնց խնդրառությունը դրսևորվում է կրող խնդիր ստանալով, իսկ չեզոք սեռի շարժման բայերը միջին հայերենում կապակցելիության տեսանկյունից միօրինակ չեն. քննության ենթակա բայերի մի ստվար մաս, պայմանավորված իրենց արտահայտած նրբիմաստներով, կապակցվում է խնդիրների, իսկ սակավաթիվ բայեր էլ՝ միայն պարագաների հետ:

Հիմնաբառեր՝ իմաստային խումբ, առաջնային իմաստ, մենիմաստ, արժույթ, խնդրառություն, տեղի պարագա, միջին հայերեն:

* Հոդվածը ներկայացվել է 19.10.2022թ., գրախոսվել՝ 06.11.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Նախաբան

Շարժման բայերի վերաբերյալ որևէ համալիր հետազոտություն չկա. տերմինի հիշատակման կամ իմաստային խմբի կապակցական հնարավորությունների բացահայտման հանդիպում ենք շարահյուսագիտության մեջ՝ խնդրառության հետ կապված (Abrahamyan 41, 126, 208, 608):

Բայերի խմբավորումն ըստ ներխոսքիմասային իմաստների առհասարակ հայ լեզվաբանների ուսումնասիրության առարկա չի եղել, և քննվող բայերը հիմնականում բնորոշվել են շարահյուսական տեսանկյունից՝ նկատի ունենալով կապակցական ընդհանրություններն ու լրացման բնույթը, ինչպես նշում է Յ. Հարությունյանը, լեզվաբանները «քննելով նախադասության անդամները, խնդիրները, ինչպես նաև հոլովների շարահյուսական կիրառություններն ու բառակապակցությունները՝ ուշադրության կենտրոնում պահել են նախադասության անդամը, հոլովը, ապա թվարկել են այն բայերը (իմաստային խումբ), որոնք կարող են առնել այս կամ այն խնդիրը, այս կամ այն հոլովը, հաճախ էլ թվարկվում են այս կամ այն բայեր, առանց նրանց ընդհանուր իմաստը նշելու» (Harutyunyan 16): Հարցը մանրազնին ուսումնասիրված է ռուսագիտության մեջ (Bondarko 190, 263), սակայն ռուսերենի շարժման բայերը համարժեք չեն հայերենի նույն խմբի բայերին ո՛չ ընդհանուր իմաստի, ո՛չ էլ դրանց կազմում առանձնացվող ենթահարացույցների տեսանկյունից¹:

Շարժման բայերի իմաստահարացուցային դասակարգումն ու արժույթը

Վերոնշյալ բայերն ուսումնասիրել ենք իբրև բառաիմաստային խումբ՝ հիմքում ունենալով դասակարգման իմաստային չափանիշը՝ բառարանային բացատրությունը: Խմբավորումը կատարել ենք՝ նկատի առնելով միասնականացնող բառային հետևյալ իմաստը. «շարժում ցուցնող բայերը՝ մեկու մը կամ բանի մը երթալ, գալ, մօտենալ, խրկել, կանչել և այլն ցուցնեն» (Ayty'nean 159): Շարժման բայերի բառացանկը կազմել ենք ըստ Ռ. Ղազարյանի և Յ. Ավետիսյանի հայտնի բառարանի [Ghazaryan, Avetisyan]:

Իմաստահարացուցային դասակարգումը կատարելիս մեզ համար ելակետը առանձնացված բայերի առաջնային հիմնական իմաստն է, տվյալ դեպքում գործը դյուրին է դառնում նրանով, որ իմաստային այս խմբի բայերը միջին հայերենում հիմնականում մեկիմաստ են, իսկ մի քանի բազմիմաստ բայերի մեկից ավելի իմաստները հաճախ նույն ընդհանուր առանցքային իմաստի դրսևորումներն են՝ համանշային երանգներով (*ելնել, ըղորդել, թապլիլ, իջնել, ցածնալ*), առանձնացված խմբի սակավաթիվ բայեր արտահայտում են մեկից ավելի իրարից տարբեր իմաստներ (*ծռիլ, ճորալ, պարաւորիլ, վերնալ*) և այս իմաստային խմբում ընդգրկվել են իրենց առաջնային իմաստի հաշվառմամբ:

Նկատի ունենալով շարժման բնույթն ու ուղղվածությունը՝ շարժման բայերի կազմում առանձնացրել ենք հետևյալ ենթահարացույցները՝

1. բայեր, որոնք ցույց են տալիս *տեղափոխություն տարածության մեջ*՝ իր երկու ուղղվածությամբ՝ ոչ շարժուն վիճակից շարժում և շարժման վիճակից դադար (*աղարկել, այնցնել, արշաւանալ, արտաքայլել, բիսալ, գորգգալ, դարձցնել, դիպենալ, դիպնիլ/դիպնուլ, ելնել, երթել/երթիլ, գաթկել, թապլել, թափահարել, թռնուլ, ժամնել, ժղիլ, իջնել/իջնուլ, կալօպել/կալօփել, կոչել, հեռենալ, հրոսանալ, դորդիլ, ճապղիլ, ճոռալ, մանրաքայլել, մօտեւորնալ, մտնալ/մտնել/մտնիլ/մտնուլ, յղրկել, յեշվել, շարժակլիլ, շարժկլիլ, պորթկտալ, պոսել, պորտքալ, պարաւորիլ, սղալ, ստեզրել,*

¹ Ռուսերենում առանձնացվում են ուղղություն ցույց տվող տասնչորս զույգ բայեր (глаголы движения), որոնք խմբավորվում են երկու ենթահարացույցներում՝ մեկ ուղղությամբ մեկանգամյա գործողության բայեր՝ *идти, ехать, лететь, плыть* (однонаправленные), և տարբեր ուղղություններով մի քանի անգամ կատարվող գործողության բայեր՝ *ходить, ездить, летать, плавать*, (разнонаправленные):

վերնալ, ցաթելել, ցածնալ, ուղղիլ, փախել, փախչենալ, փաղչիլ, փթրիլ, փոթորակիլ, քալել, քոչել, քսել:

2. Անորոշ ուղղվածության իմաստ արտահայտող շարժման բայեր (թաայլիլ, ժոճտալ, խալլտալ, ճորալ, ճոճալ, շորորալ, տարաշրջել, տեգերիլ), այս ենթախմբի բայերի մեծ մասը բազմապատկական (թաայլտիլ, թաալալտիլ, ճոճկըտալ, վազվզտել, թաալալտիլ) կամ կրկնավոր բայեր են (թռուռալ, թռվոալ, թանթանջիլ, թայթիլ, ծոմոիլ, կաթկաթել/կաթկթալ, կաթկթել, շրջմիջիլ, վազվզել): Լեզվական երկու միջոցն էլ հիմնականում գալիս են բարբառներից և արտահայտում են տարբեր ուղղություններով մի քանի անգամ կատարվող գործողության իմաստ:

3. Առարկայի դիրքի այլևայլ փոփոխություններ արտահայտող շարժման բայեր (արձկնալ/արձականալ, գճիլ, բլչիլ, թախթփֆիլ, թաիրիլ, ժաժիլ, ըղղվիլ, ընգնել/ընգնիլ/ընկնալ/ընկնիլ, թիկնիլ, թեւել, խօնարհանալ, ծոմոիլ, կնկզիլ, ճապկտիլ, շրջմիջիլ, ցածանալ, քթաիրել/քթաիրիլ):

Շարժման բայերի բառացանկում ընդգրկել ենք շարժման համադրական կազմությամբ բայերն ու վերլուծական կազմությամբ որոշ բայեր: Համամիտ լինելով այն տեսակետին, որ «հարադրավոր բայերի իմաստը պայմանավորվում է և՛ անվանական, և՛ բայական բաղադրիչներով, և չկա որոշակի օրինաչափություն, նպատակահարմար չէ համադրական կազմությունների հետ կողք կողքի քննել հարադրավոր բայերը» (Harutyunyan 17): Նկատենք որ մեզ հետաքրքրում են ոչ թե շարժման բայ-բաղադրիչ ունեցող անվանական հարադրություններն առհասարակ, այլ ուղղակի նշանակություն ունեցող այն հարադրությունները, որոնց մեջ բայական բաղադրիչը պահում է իր բուն նշանակությունը՝ պահանջելով դրան համապատասխան տեղի կամ տարածական իմաստ արտահայտող հարադիր:

Բերենք ասվածը հաստատող բնագրային օրինակներ՝

Թուրքաց հեծելն առաջ եկան,
գկարմունճն առին ու կանգնեցան,
Երբ Լիպարիտն ի յետ դարձաւ,

Նա չար հեծելն ի դեմ ելան (ՄՅԲ, Էջ 179):

Բերված օրինակից ակնհայտ է դառնում, որ այս հարադրությունները կազմվում են շարժման բայ+տարածական նշանակությամբ հարադիր կաղապարով, ընդ որում հարադրային արժեքով հանդես են գալիս տեղի տարատեսակ հարաբերություններ ցույց տվող առաջ, յետ, դեմ/դիմաց/դեմիկ, դուրս, ետ/եստ, ի շուրջ/շուռ/ժուռ, մեջ, ի վայր, ի վեր և այլ հարադիրներ, ինչպես՝

Ես ալ ի դեմիկն ելայ.

– Ո՞ր կերթաս, քո ժամն է հարամ (Հ., Էջ 43):

Կամ

Սրտիս մեջն ի ժուռ եկար,

Ի՛նչնելու ճարակ չի գտար (ԳժՏ, Էջ 65):

Կամ

Անդադար ի շուրջ գալուս.

Ող որմ և ի շ ա տ լ ալուս՝

Քունն է հատեր աչերուս (ԿԵ, Էջ 162):

Բնագրային օրինակները փաստում են, որ քննվող տիպի բարդության բաղադրիչների միջև շարահյուսական կապն ուժեղ արտահայտված է և շարահյուսական մակարդակում դրսևորվում է որպես ստորոգյալի (ելայ, եկար, գալուս) և տեղի պարագայի (ի դեմիկն, ի ժուռ, ի շուրջ) կապակցություն:

Միջինհայերենյան բնագրերում լայն կիրառություն ունեն նաև շարժում արտահայտող բայերով բաղադրված զուգաբայական հարադրությունները, և մենք, նկատի ունենալով մեր կողմից ուսումնասիրված բնագրերում հաճախադեպ կիրառությամբ զուգաբայերի բաղադրիչների միջև եղած իմաստային կապերը, առանձնացրել ենք հետևյալ կաղապարները՝

1. կազմություններ, որոնց առաջին բաղադրիչն արտահայտում է տեղափոխության, շարժման գաղափար առհասարակ, իսկ երկրորդ բաղադրիչով մասնավորեցվում է շարժման ուղղվածությունը, ինչպես՝ Վաղուց գնացած եարո՛ւկ, *Ել եկու*, խիստ են կարոտցեր (ԳԺՏ, էջ 225), Ուստի Լազորն զայս վճիռն չընդունեց եւ *ելաւ գնաց* (Կ-Պ, էջ 263), *-Գամ, կանգնիմ* ի քո դիմաց, Լամ, որ իմ հուրըն զքեզ այրե (ԳԺՏ, էջ 65):

2. կազմություններ, որոնց բաղադրիչներից առաջինն արտահայտում է շարժման գաղափարն ընդհանուր բնույթով, իսկ երկրորդն արտահայտում է շարժման նպատակը կամ հետևանքը, ինչպես՝ Լուկ պլպուլն ուրախացաւ ՚ւ *ելաւ, բազմաւ* ի վերայ վարդին... (ԿԵ էջ 142), Եւ նա աներկիւղ *երթեալ հասաներ* ի գաւառն Բասենու (ԹՍ, էջ 34): ...նա *երթեալ պաշարեաց* գՈւռհա, եւ առ զնա... (ՎԱ, էջ 53):

3. կազմություններ, որոնց բաղադրիչ բայերն արտահայտում են հոմանշային կամ հականշային իմաստներ՝ ինչպես՝ Երես՝ լի գունով ծաղկուկն թուխ աչեր ու կամար ուկը, *Ար-ե՛կ*, աչերուս իմ լոյս: (ԿԵ, 162), Յարաւ քամին քե *տանի, բերի*... (ԳԺՏ, էջ 287): Միջին հայերենում ինչքան սովորական է *արի՛* և *ե՛կ* բայաձևերի միացությունից առաջացած *արիե՛կ*, ապա *արե՛կ* հրամայականի ձևը, նույնքան էլ սովորական են դրանով բաղադրված զուգաբայերի գործածությունները, ինչպես՝ *Արեկ նիստ* ի բարձիս վեր, ու ձեռքդ տար ու զիմ սիրտն տես... (ՆԲ, էջ 282), *Արեկ մտնուկն* ի պաղչանին, Ի մեծամեծքն յուղարկեցին... (ԹՏ, էջ 260):

Ընդունված է կարծել, որ զուգադրական բայերը կազմվում են բացառապես երկու կից բայերի հարադրությամբ [Margaryan 296], այնինչ՝ միջինհայերենյան բնագրային որոշ կիրառություններում զուգադրական բայերը կարող են գատվել նախադասության այլ անդամներով՝ *Երթաս* անգուման *Նըստիս*, Չի գիտես քո աշըխ են ես (Կ. Ե. էջ 161), *Ելայ*, ես ի քեզ *եկի*, Զեզ հիսնե կարօս գիտեի... (ԳԺՏ, էջ 65):

Ընդ որում՝ միջին հայերենում հաճախադեպ են և՛ *դիմավոր բայ + դիմավոր բայ* կաղապարով կազմված՝ ...ամենքեան համանգամայն որ հերիսան լինայ տաք տաք *վազեն* ՚ւ *երթան* ի հերիսան (Մինաս Թոխաթեցի, էջ 317), և՛ *անցյալ դերբայ+դիմավոր բայ* կաղապարով բաղադրված զուգաբայերը, ինչպես՝ Եւ ապայ *ելեալ գնաց* ի ծովեզերն. և *նստեալ* ի նաւ, և *գնաց* ի Բիւզանդիայ... (Զ-Ա, էջ 91):

Շարժման բայերի շարակարգային դասակարգումը հանգում է այդ բայերի արժույթայնության բացահայտմանը: Շարժման բայախմբի միավորների մեծ մասը չեզոք սեռի է, այս իմաստային խմբում ընդգրկված սակավաթիվ բայեր են ներգործական սեռի (*թապլել, թափահրել, շարժել, քսել* և այլն), որոնց խնդրառությունը բնականաբար դրսևորվում է կրող խնդիր ստանալով, ինչպես՝ Վեցն ի Նոցունց *շարժեն գաչսն* (Գր., էջ 89):

Կապակցելիության տեսանկյունից շարժման բայերը պարտադիր ենթակաառու են: Այս բայախմբի տարբեր միավորներ, պայմանավորված իրենց կրթմաստներով, (նույնիսկ մինևույն ենթահարացույցի մեջ մտնող բայերն իմաստային որոշ տարբերություններ են հանդես բերում), դրսևորում են կապակցելիության զանազան հնարավորություններ: Այսպես՝ տրականով խնդիր են առնում հանգման հարաբերությունն արտահայտող շարժման բայերը, բացառականով՝ ելման հարաբերությունն արտահայտողները, իսկ անորոշ ուղղվածության իմաստ ունեցող շարժման բայերն առհասարակ խնդրառու չեն, վերջիններս կապակցվում են միայն պարագաների հետ:

Ասվածը նկատի ունենալով՝ շարժման չեզոք սեռի բայերի կազմում առանձնացրել ենք՝

1. *Շարժման խնդրառու բայեր*, որոնք բայիմաստի պահանջով կարող են առնել որևէ բնության խնդիր լրացում՝ արտահայտված հետևյալ մասնակաղապարներով՝

ա) Սեռական-տրական հիլովով դրված գոյական, դերանուն, փոխանունաբար գործածված այլ խոսքի մաս+շարժման բայ՝

Գոյական` Բըլբուլն Էր Նստել Վարդուն... (ՅՄԺԵ, Էջ 59):

Ան պաղծին *պատին* թառեցա.

Էրնէկ կու տայի ան մարդուն... (ՅՄԺԵ, Էջ 110):

Դերանուն` Գետինն ընդ երկինքն ասաց.

— Իմ Տէրն *ինձ* խոնարհեցաւ (ՅՄԺԵ, Էջ 118):

բ) բացառական հոլովով դրված գոյական, դերանուն, փոխանունաբար գործածված այլ խոսքի մաս+շարժման բայ`

Բաժակդ, որ ի ներս ցած` Զրիստոսի *կողէն* Է բխած, Եօթն տակ երկինք եմ ես, Լոյսն, արեւն *յիսնէ* կելանի (ՅՄԺԵ, Էջ 119):

2. *Շարժման խնդրառութայամբ արժութագուրկ բայեր*, որոնք միջինհայերենյան լեզվական աղբյուրներում բաժանվում են երկու խմբի` ա) բայեր, որոնք խնդրառու չեն (հիմնականում նկատի ունենք անորոշ ուղղվածության իմաստ արտահայտող բայերը) և բ) բայեր, որոնք, խնդրառու չլինելով հանդերձ, պարագաառու են: Հարկ է նշել, որ այդ բայերի պահանջով դրվող պարագա լրացումն արտահայտում է գործողության կատարման տեղի քերականական իմաստ` տարբեր նրբիմաստներով, որը միջին հայերենում կարող է արտահայտվել`

Մակբայով` Երբ մուտն ընկներ` հոն պառկեյանք... (ՅՄԺԵ, Էջ 94), ...և հանապազ անհանգստութեամբ շրջի աստ և անդ` որ ունելով զհանգիստ (ՀՀՄԱԲ, Էջ 515):

Բուն տեղի պարագա լրացումը միջին հայերենում արտահայտվում է առավելապես նախդիրով սակավ դեպքերում` աննախդիր հայցականով`

Թռչին *ի* բարձր *սարերն* Ու քաղեն զկիւթ ի ծաղկուն (Հ., Էջ 948), Յետոյ գեմ անտէր թողին ու մտան *հողն* և *ի զնտան* (ՀԱԳ, 67):

Ելման տեղի պարագան միջին հայերենում արտահայտվում է գոյականի բացառական հոլովով, ինչպես` սիրտն ծակեցաւ եւ տարի մի շունչ ելաներ *ի սրտէն* եւ ապա զղջմամբ աւանդեաց զհոգին: (ԹՄ, Էջ 15) կամ *բացառական հոլով+ ի վար* կապակցութեամբ, ինչպես` եւ կամ ի բարձր *տեղաց ի վար* վազէ, եւ կամ ծանր իրք վերցնէ, անկից լինի: (ԱԱՕԲ, Էջ 300)

Ուղևորման տեղի պարագան միջին հայերենում արտահայտվում է *ի նախդիր + գոյականի հայցական հոլով* կապակցութեամբ` Արծիւն երթար *յերկինս*, և հարին զնա նետիւ... (ՀՀՄԱԲ, Էջ 466):

Անցման տեղի պարագան միջին հայերենում արտահայտվում է գոյականի գործիական հոլովով, ինչպես` Խարիպս որ *ճամբով* կ'երթայ ես անոր ճամբէկ պիտէի... (ԳԺՏ, Էջ 208)

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունը բերում է մի շարք հետևությունների.

1. շարժման բայերը միջին հայերենում հիմնականում մենիմաստ են, իսկ մի քանի բազմիմաստ բայերի մեկից ավելի իմաստները նույն ընդհանուր առանցքային իմաստի դրսևորումներն են` համանշային երանգներով,
2. շարժման բայախմբի միավորների մեծ մասը միջին հայերենում չեզոք սեռի է, այս իմաստային խմբում ընդգրկված սակավաթիվ բայեր են ներգործական սեռի, որոնց խնդրառությունը բնականաբար դրսևորվում է կրող խնդիր ստանալով,
3. միջին հայերենի շարժման չեզոք սեռի բայերի կազմում առանձնացվում են խնդրառու և խնդրառութայամբ արժութագուրկ բայեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան, Աշոտ. *Բայը ժամանակակից հայերենում*. Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1962:

2. Այտընեան, Արսեն. *Զննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*. Վիեննա, Մխիթարեանց տպարան, 1866:

3. Հարությունյան, Յենրիկ. *Քայերի իմաստային դասդասման հիմունքները*, http://ysu.am/files/07H_Harutyunyan.pdf, հասանելի է՝ 08.07.2022:
4. Հարությունյան, Յենրիկ. *Կառավարումը ժամանակակից հայերենում*. Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1983:
5. Ղազարյան, Ռուբեն և Ավետիսյան, Յենրիկ. *Միջին հայերենի բառարան*. Երևան, 2009:
6. Մարգարյան, Ալեքսանդր. *Հայերենի հարադիր քայերը*. Երևան, «Միտք» հրատ., 1966:
7. Ջահուկյան, Գևորգ *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*. Երևան, 1974:
8. Զոսյան, Վաղարշակ. *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները*, Երևան, 1975:
9. Бондарко. Буланин. *Русский глагол.*– Л.: Просвещение, 1967. *Грамматика современного русского литературного языка*: под ред. Шведовой. – М.: Наука. 1982, т. 1.
10. Муравьева. *Глаголы движения в русском языке*. 10-е изд. М.: Русский язык, 2006.

WORKS CITED

1. Abrahamyan, Ashot. Bayy' jhamanakacic hayerenum, Erevan, Haykakan SSR' GA hrat., [Verb in Modern Armenian] 1962. (in Armenian)
2. Ayty'nean, Arsen. Qnnakan qerakanut'iun ashxarhabar kam ardi hayere'n lezui, Vie'hna, Mxit'areanc tparan [Exam Grammar of Worldly or Modern Armenian Language] 1866. (in Armenian)
3. Ghazaryan, Ruben, Avetisyan, Henrik. Mijin hayereni bar'aran, Erevan [Dictionary of Middle Armenian] 2009. (in Armenian)
4. Harutyunyan, Henrik, Bayeri imastayin dasdasman himunqner', http://ysu.am/files/07H_Harutyunyan.pdf, [Basics of Semantic Classification of Verbs] Available: 08.07.2022: (in Armenian)
5. Harutyunyan, Henrik. Kar'avarumy' jhamanakacic hayerenum, Erevan, Erevani hamalsarani hrat., [Nominative in Modern Armenian Yerevan] 1983. (in Armenian)
6. Jahukyan, Gevorg. Jhamanakacic hayereni tesut'yan himunqner, Erevan [Basics of Modern Armenian Theory.] 1974. (in Armenian)
7. Margaryan, Aleqsandr. Hayereni haradir bayery, Erevan, «Mitq» hrat. [Necessary Verbs in Armenian] 1966. (in Armenian)
8. Qosyan, Vagarshak. Jhamanakacic hayereni bar'akapakcut'yunnery'. Erevan [Idioms of Modern Armenian. Yerevan] 1975. (in Armenian)
9. Bondarko. Bulanin. Russkij glagol.–L.: Prosveshhenie [Russian verb. - L.: Enlightenment] 1967. Grammatika sovremennogo russkogo literaturnogo jazyka pod red. Shvedovoj.– M.: Nauka [Grammar of the Modern Russian Literary Language], 1982. (in Russian)
10. Murav'eva. Glagoly dvizhenija v russkom jazyke. – 10-e izd. M.: Russkij jazyk [Verbs of Motion in Russian] 2006. (in Russian)

Համառոտագրություններ

ԱՍՕԲ – Ամիրտովյաթ, Ամասիացի. *Օգուտ բժշկութեան*, Երևան, 1940:

<https://digilib.aul.am/book/57/%D5%95%D5%A3%D5%B8%D6%82%D5%BF%20%D4%B2%D5%AA%D5%B7%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%A5%D5%A1%D5%B6>

- ԳԺՏ- *Գուսանական ժողովրդական տաղեր*, խմբագրությամբ՝ Ս. Աբեղյանի, «Արմֆան» հրատ., Յերևան, 1940:
- Գր.-Գիգորիս, *Քննությունն քննության մարդոյ և նորին ցաւոց*, Աշխատասիրությամբ Ա. Կծոյանի, Երևան, 1962:
- Զ-Ա- *Չաքարիա Ազուլեցու օրագրությունը*. հ. II, 91:
- ԹՄ-Թովմա Մեծովեցի, *Պատմութիւն Լանկեամուրայ և յաջորդաց իւրոց*, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչիկյանի, 1999:
- ԹՏ-Թորոս Տարոնացի, Միջին հայերենի ուղեցույց քրեստոմատիա:
- ՅԱԳ –XII-XIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Ընտիր նմուշներ, կազմեց՝ Ս. Սկոյան, Երևան, 1938:
- ԿԵ- Կոստանդին Երզնկացի, *Տաղեր*, Երևան, 1962:
- Կ-Պ-Կամենեց Պողոսյկի հայկական դատարանի արձանագրություններ:
- Յ. – Մնացականյան, Ասատուր. *Հայրեններ*, Երևան, 1995:
- ՅՄԺԵ- Մնացականյան, Ասատուր. *Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր*, Երևան, 1956:
- Մ-Թ-Մինաս Թոխաթեցի, *Տաղեր* (Ն. Ակիսյան, Յինգ պանդուխտ տաղասացներ), Վիեննա, 1921, 317:
- ՄՅԶ-Մարգարիտներ հայ քնարերգության, *Յովհաննես Թլկուրանցի*, հ. 1-ին, «Հայաստան» հրատ., Երևան, 1971:
- ՆԶ-Նահապետ Զուչակ, Միջին հայերենի ուղեցույց քրեստոմատիա:
- ՎԱ-Վարդան Արևելցի, *Պատմութիւն* <https://digilib.aua>. հասանելի է՝ 15.10.2022:
- ՎԱԱ - Վարդան Այգեցի, *Ժողովածոյ առակաց Վարդանայ* https://hycatholic.ru/pro/biblioteca/%D5%8E%D4%B1%D5%90%D4%B4%D4%B1%D5%86_%D4%B1%D5%85%D4%B3%D4%B5%D4%BF%D5%91%D4%BB_%D4%BA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B5_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81_%D5%8E%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B5.pdf. հասանելի է՝ 15.10.2022:

VERBS OF MOTION IN MIDDLE ARMENIAN

TATEVIK AZIZBEKYAN

*Shirak state university after M. Nalbandyan, Ph.D. Student,
Gyumry, the Republic of Armenia*

The given article aims to present one of the numerous groups of the verb lexis – the limits, abilities for coordination of verbs of motion in Middle Armenian in the sphere of linguistic synchronicity.

In order to reach the goal set, we planned to make a list of verbs of motion of the Middle Armenian language and, taking into account the opportunities provided by the Middle Armenian originals, to find out the mutual dependence between the meaning and syntactical relationships of the verbs within the studied semantic group.

In our research, we were guided by the methods of simultaneous description, complex research, analysis and combination.

As a result of studying the verbs of motion in Middle Armenian, it becomes quite obvious that the main aim of the verbs of this semantic group is to denote the movement in space (աղարկել – to send, հեռնալ – to leave, մանրաքայլել – to trot, սղալ – to slide, քալել – to walk), the movement in an indefinite direction (խալլտալ – to flutter, թալլտիլ – to tumble, ճոճկըտալ – to swing, թալթիլ - , շրջմրջիլ – to twirl), or any change of the position or location of the subject (արձկնալ/արձականալ – to set free, բլչիլ – to crash, ընգնել/ընգնիլ/ընկնալ/ընկնիլ – to fall, խօսարհանալ – to bow, կնկզիլ – to bend).

The words included in this semantic group are chiefly verbs in the Active Voice. Several verbs make a group of the Passive Voice (this voice is active, but can turn into passive) (*թափալել* – to throw, *թափախրել* – to brandish, *շարժել* – to move, *քսել* – to rub, etc.) which can be displayed in the ability to take a direct object. The Active verbs of motion in Middle Armenian are not homogeneous from the point of view of their coordination: most of the words, due to the nuances in their meanings, take objects, the minority takes adverbials. For example, transitive motion verbs take objects in the Dative Case, and the verbs meaning indefinite direction of movement are used with adverbials only.

Keywords: *semantic group, primary meaning, monosemantic, value, request, adverbial of place, middle armenian.*

ГЛАГОЛЫ ДВИЖЕНИЯ В СРЕДНЕ-АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ТАТЕВИК АЗИЗБЕКЯН

*аспирант Ширакского государственного университета имени М. Налбандяна,
г. Гюмри, Республика Армения*

Данная статья имеет целью представить одну из наиболее многочисленных групп глагольной лексики – границы, особенности, возможности согласования глаголов движения в средне-армянском языке в сфере языковой синхронности.

Для достижения поставленной цели мы определили следующую задачу: составить список глаголов движения средне-армянского языка и, принимая во внимание возможности, предоставляемые средне-армянскими рукописями, выяснить взаимозависимость между значением и синтаксической связью глаголов исследуемой смысловой группы.

Мы руководствовались методами синхронного описания, комплексного исследования, анализа и комбинации.

В результате изучения глаголов движения средне-армянского языка становится очевидным, что главным для глагольных единиц данной смысловой группы является обозначение передвижения в пространстве (*աղարկել* - *отправлять*, *հեռնւալ* - *отдаляться*, *մալրաւալել* - *семенить*, *սլալ* - *скользить*, *քալել* – *шагать*), движения в неопределенном направлении (*խալալ* - *трепыхаться*, *թափախրել* - *кувыркаться*, *ծոկոկալ* - *раскачиваться*, *շրջաւրջել* - *вертеться*), либо какое-либо изменение положения предмета (*արձակալ/արձակաւնալ*-отпускать, *բխել*-рушиться, *ընկնել /ընկնի/ ընկնալ/ ընկնի* - падать, *խօւարհաւալ* - кланяться, *կնկոխել* -наклоняться).

Входящие в данную смысловую группу слова – являются в основном глаголами действительного залога. Немногие глаголы движения относятся к пассивному залогу (данный залог активный, но может стать пассивным) (*թափալել* - *бросать*, *թափախրել* - *размахивать*, *շարժել* - *двигать*, *քսել* – *тереть* и т.д.), что может проявляться в способности иметь при себе прямое дополнение. Глаголы движения действительного залога в средне-армянском с точки зрения сочетаемости неоднородные: большая часть изучаемых слов, в силу своих смысловых нюансов, требует после себя дополнения, малая же часть – обстоятельства. Так, например, глаголы движения со значением переходности принимают дополнения в дательном падеже, а глаголы движения значения неопределенности направления употребляются только с обстоятельствами.

Ключевые слова: *смысловая группа, первичное значение, однозначный, ценность, запрос, обстоятельство места, средне-армянский язык.*

ԳՐԱԲԱՐՅԱՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԼԱՏԻՆԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՉՈՒԳԱԴՐԱԿԱՆ ԸՆՆՈՒԹՅՈՒՆ*

ՀՏԴ 81:1

DOI: 10.52063/25792652-2022.4.15-126

ԼԻԱՆԱ ԱՁԻՉՅԱՆ

Երևանի պետական համալսարանի Հայ բանասիրության ֆակուլտետի
Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
aliana.96@mail.ru

Յոդվածում զուգադրական մոտեցումով ուսումնասիրվել են գրաբարի և լատիներենի ձայնավորական համակարգերը: Համաժամանակյա հայեցակետով վեր են հանվել ցեղակից (հնդեվրոպական) երկու լեզուների պատմության դասական փուլում նրանց ձայնավորական համակարգերի միջև դեռևս պահպանված ծագումնաբանական ընդհանրությունները և ինքնուրույն զարգացման արդյունքում առաջացած յուրահատկությունները: Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել գրաբարյան հայերենի և լատիներենի ձայնավորական համակարգերը և գտնել նրանց միջև առկա նմանություններն ու տարբերությունները:

Աշխատանքի խնդիրն է մասնավորապես անդրադառնալ գրաբարի և լատիներենի այն ձայնավոր հնչույթներին, որոնց հնչույթաբանական (հնչույթային) արժեքների վերաբերյալ լեզվաբանության մեջ առկա են տարակարծություններ:

Յոդվածը շարադրված է ձայնավոր հնչույթների զուգադրական քննության և համեմատությունների մեթոդների կիրառման միջոցով:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դառնում, որ հայերենագիտության մեջ տարակարծություններ կան է (ē) և ու (u) ձայնավորների հնչույթաբանական (հնչույթային) արժեքների վերաբերյալ. դրանք եղել են պարզ ձայնավոր, թե՛ երկբարբառ: Ի տարբերություն գրաբարի՝ լատիներենն ունեցել է երկար և կարճ ձայնավորներ, որոնք հակադրվել են միմյանց հնչույթային նվազագույն զույգերում: Թե՛ գրաբարի և թե՛ լատիներենի հնչույթները ենթարկվել են հնչունափոխության: Գրաբարում այն եղել է շեշտից զրկվելու պատճառով, իսկ լատիներենում ձայնավորները հետևել են հնչունափոխության որոշակի օրենքների՝ երկար ձայնավորների կրճատումը, հերթագայությունը, միաձուլումը, ձայնավորների համաբանությունը (անալոգիա), զեղչումը (սինկոպա):

Հիմնաբառեր՝ հնչույթ, ձայնավոր հնչույթ, գրաբարյան հայերեն, լատիներեն, հնչույթային զույգեր, Է. Աղայան, Մ. Նիդերման:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմահամեմատական հայերենագիտության մեջ, այդ թվում՝ գրաբարի քերականություններում և բուհական ձեռնարկներում, հին հայերենի ձայնավորական կազմի վերաբերյալ միասնական տեսակետ չկա: Տարակարծությունները վերաբերում են մասնավորապես է (ē)-ի և ու (u)-ի հնչույթաբանական (հնչույթային) արժեքներին.

* Յոդվածը ներկայացվել է 01.12.2022թ., գրախոսվել՝ 22.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

դրանք եղել են պարզ ձայնավոր, երկբարբա՞ռ, թե՞ երկբարբառակերպ, եթե եղել են պարզ ձայնավոր, ապա կա՞րճ, թե՞ երկար: Մյուս հին ձայնավորների առնչությամբ տարածայնություններ չեն եղել, բոլոր ուսումնասիրողներն էլ ընդունել են, որ *ա* (*a*), *ե* (*e*), *ի* (*i*), *ո* (*o*), *ը* (*ə*) հնչույթները պարզ և կարճ ձայնավորներ էին:


Հին հայերենի ձայնավորները ձևավորվել են միայն բերանի խոռոչում, քթի խոռոչը չի մասնակցել դրանց ձևավորմանը, հետևաբար մենք չենք ունեցել ռնգային ձայնավորներ: Ձայնավորների ձևավորմանը մասնակցում են լեզուն և շրթունքները, և, ըստ այդմ, ունենք երեք տարբերակիչ հատկանիշ:

Գրաբարի ձայնավորները լեզվաբանների մեծ մասի կողմից դասակարգվում են ըստ ձևավորման տեղի, լեզվի բարձրացման աստիճանի և շրթունքների մասնակցության: Ըստ ձևավորման տեղի՝ գրաբարի ձայնավորները բաժանվում են առաջնալեզվայինների՝ *ե* (*e*), *ի* (*i*), միջնալեզվայինների՝ *ը* (*ə*), և հետնալեզվայինների՝ *ա* (*a*), *ու* (*u*), *ո* (*o*) (Туманян 24-27): Ձևավորման տեղի հատկանիշով Գ. Ջահուկյանը առանձնացնում է երկու տեսակի՝ առաջնային (*i*, *e*) և ոչ առաջնային (*u*, *o*, *a*, *ə*) ձայնավորներ: Ըստ լեզվի բարձրացման՝ առանձնացվում են բարձր (*u*, *i*), միջին (*e*, *o*, *ə*) և ցածր (*a*) ձայնավորներ: Ըստ շրթունքների մասնակցության դասակարգումը ենթադրում է, որ ձայնավորները կարող են լինել շրթայնացած (*o*, *u*) և ոչ շրթայնացած (*i*, *e*, *a*, *ə*) (Джаукян 19):

Լատիներենում նույնպես ձայնավորները դասակարգվում են ըստ լեզվի դիրքի: Ըստ հորիզոնական առանցքի՝ լատիներենի ձայնավորները բաժանվում են.

1. առաջնային կամ քմային ձայնավորների, երբ լեզուն շարժվում է առաջ՝ դեպի քիմքը (*i*, *e*),
2. կենտրոնական, երբ լեզուն մնում է կենտրոնական դիրքում (*a*),
3. ետին կամ ետնաքմային, լեզուն շարժվում է ետ՝ դեպի կոկորդը (*u*, *o*):

Մ. Նիդերմանը լատիներենի ձայնավորները, լեզվի դիրքով պայմանավորված, ներկայացրել է հետևյալ աղյուսակի տեսքով (Нидерман 17).



Y ձայնավորը աղյուսակում չի արտացոլվել, քանի որ այն լատիներենում հայտնվել է փոխառյալ բառերի հետ միասին և հանդիպում է միայն այդ բառերում: Սակայն որոշ հեղինակներ այն նույնպես դիտարկում են որպես լատիներենի ձայնավոր: Լ. Վիննիչուկը նույնիսկ դիտարկում է այս հնչունի երկու երկար և կարճ տարբերակներ (Винничук 20):

Ըստ ուղղահայաց առանցքի՝ լատիներենի ձայնավորները լինում են.

1. բարձր (*i*, *u*)
2. միջին (*e*, *o*)
3. ցածր (*a*):

Բարձր ձայնավորները համարվում են նաև փակ, քանի որ երբ լեզուն բարձրանում է դեպի վեր, օդի հոսանքը դուրս է մղվում առավել փոքր տարածությունից: Նույն ձևով ցածր ձայնավորները համարվում են բաց, քանի որ բերանի խոռոչը ձայնավորի ձևավորման պահին առավել բաց դիրքում է գտնվում:

Լատիներենի ձայնավորական համակարգը

Հին հնդեվրոպական լեզուների մեծ մասը, այդ թվում դասական լատիներենը, տարբերակում էին երկար և կարճ ձայնավորներ (Աղայան 98-99)¹: Այս ձայնավորները գրավոր խոսքում տարբերվել են միայն երկու նշանների միջոցով. երկար ձայնավորների դեպքում կիրառվում է ~ նշանը, ինչպես՝ ā, իսկ կարճ ձայնավորների դեպքում ~ նշանը, ինչպես՝ a: Դասական լատիներենում երկար և կարճ ձայնավորները ունեցել են մի շարք տարբերություններ (Ярхо и Лободы): Տարբերել են.

ա) բառային իմաստներ (հմմտ. *liber* «գիրք»- *liber* «ազատ», *dīcō* «ասում եմ»- *dīcō* «նվիրում եմ», *malīm* «խնձոր»- *malīm* «դժբախտություն»).

բ) քերականական իմաստներ (հմմտ. *vēnit-գալիս E*, իսկ *vēnit-ելել E*).

գ) երբեմն որոշել են շեշտի տեղը բառի մեջ (հմմտ. *me' dīcus, fortū' na*) (Винничук 20)²:

Լատիներենում քանակական տարբերությունները՝ երկար կամ կարճ լինելը, կատարում են իմաստատարբերակիչ դեր և ունեն հնչույթաբանական (հնչույթային) արժեք: Հետևաբար լատիներենն ունի ոչ թե հինգ, այլ տասը ձայնավոր, քանի որ մեկ ձայնավորն իրենից ներկայացնում է երկու հնչույթ՝ երկար (*/ī/, /ē/, /ō/, /ū/, /ā/*) և կարճ (*/i/, /ẽ/, /õ/, /ũ/, /ã/*):

Դասական լատիներենի ձայնավորների քանակական տարբերությունները ժամանակի ընթացքում աստիճանաբար թուլանում և վերանում են: Երկար և կարճ ձայնավորների հետ կապված փոփոխությունները հաճախ բացատրվում են նրանով, որ լատինախոս տարածքներում բնակություն հաստատած նոր ազգերի լեզվում չկային երկար և կարճ ձայնավորներ, հետևաբար նրանց համար դժվարություններ էին առաջանում այսպիսի ձայնավորներ արտաբերելիս: Բացի այդ, լատիներենի ձայնավորները ենթարկվել են հնչյունափոխության տարբեր օրենքների, ինչպես՝ երկար ձայնավորների կրճատումը տարբեր դիրքերում, ձայնավորների հերթագայությունը, միաձուլումը, ձայնավորների գեղջումը (սինկոպա), համաբանությունը (անալոգիա) (Нидерман 27-80, Cser 114-121, Тронский 95-69):

Ա. Քսերը լատիներենում առանձնացնում է երեք ձայնավորներ: Դրանք «ձայնավոր + ո» (բառամիջում) և «ձայնավոր + ո» (բառավերջում) կապակցություններն էին (հմմտ. *dens* «ատամ», *palam* «բացահայտ»): Ուղային ձայնավորները նույնպես նվազագույն զույգեր են կազմել մյուս ձայնավորների հետ (հմմտ. *dens* «ատամ»- *dēs* «դու տալիս ես», *puella* «աղջիկ» – *puellam* (հայց. հլ., եզ. թ.)) (Cser 35):

¹ Գրաբարյան հայերենի ձայնավորները չունեն իրենց երկար և կարճ տարբերակները: Սակայն, ըստ Է. Աղայանի, որոշ դիրքերում գրաբարյան ձայնավորները նույնպես ունեն երկար արտաբերություն: Այս առումով է. Աղայանը առաջարկում է *ih* և *uolh* տերմինները, որոնք գործածվել են դեռևս հին քերականություններում: *Lh* են այն ձայնավորները, որոնք շեշտի տակ առավել երկար են արտասանվում, իսկ *uolh*՝ այն ձայնավորները, որոնք ավելի կարճ են արտասանվում: Ամեն դեպքում դրանք իմաստատարբերակիչ դեր չեն կատարել, ինչպես լատիներենում, և հետևաբար չի կարելի այդպիսի դեպքերը ներկայացնել որպես հնչույթային տարբերակներ:

² Լատիներենում շեշտը պայմանավորված է նախավերջին վանկի երկար կամ կարճ լինելով (երկար ձայնավոր պարունակող բաց վանկը համարվում է երկար, իսկ կարճ ձայնավոր պարունակողը՝ կարճ): Շեշտը դրվում է վերջից հաշված երկրորդ կամ երրորդ վանկի վրա. ա) բազմավանկ բառերում շեշտը դրվում է վերջից երկրորդ վանկի վրա, եթե այն երկար է, բ) եթե վերջից երկրորդ վանկը կարճ է, ապա շեշտը դրվում է վերջից երրորդ վանկի վրա:

Գրաբարի ձայնավորական համակարգը

Գրաբարում մենք ունենք հինգ ձայնավոր, որոնց հետ կապված հայերենագիտության մեջ տարակարծություններ չկան: Դրանք են՝ *ա* [a], *ի* [i], *ե* [e], *ո* [o], *ը* [ə]: Երկու ձայնավորների՝ *ե* [e]-ի և *ու* [u]-ի մասին արտահայտվել են տարբեր կարծիքներ՝: Ու [u]-ն կիրառվել է որպես պարզ ձայնավոր, և Մաշտոցը հունարենի նմանողությամբ (ս) ձայնավորը արտահայտել է երկու գրաֆիկական նշաններով: Այս տեսակետն արտահայտել են Յ. Յյուրբշմանը, Յ. Աճառյանը, Մ. Աբեղյանը և Է. Աղայանը (Յյուրբշման 67, Աճառյան 307-308, Աբեղյան 714, Աղայան 95): Ըստ մեկ այլ տեսակետի՝ գրաբարյան ու-ն եղել է երկբարբառ՝ [ou] արտասանությամբ (Աբրահամյան 4): Ու [u]-ի պարզ ձայնավոր լինելու փաստը կարող ենք տեսնել հետևյալ օրինակներում:

1. Եթե ու [u]-ն լիներ երկբարբառ, ապա այն նույնպես որոշ երկբարբառների պես հնչյունափոխության արդյունքում պետք է վերածվեր ինչ-որ պարզ ձայնավորի: Մինչդեռ շեշտից զրկվելիս ու [u]-ն կամ սղվել է, կամ վերածվել գաղտնավանկ *ը* [ə]-ի, ինչը բնորոշ է պարզ ձայնավորներին (հմմտ. *գլուխ-գլխոյ, ջուր-ջրոյ*) (Միանսեան 6, Առաքելեան 15, Աբրահամյան 13): Վ. Պետրոսյանը կարծում է, որ ու-ն լիարժեք պարզ չէ, այլ երկբարբառակերպ է, ինչպես *աւ, եւ, իւ, ոյ, այ*-ը: Հնչյութային գործառնությունից բացի ու-ն կատարել է նաև ձևաբանական գործառնությո: Լինելով ու արտաքին հոլովման ենթարկվող բառերի եզակի սեռական/տրական և գործիական հոլովների ցուցիչ՝ ու-ն համարժեք է դառնում *աւ, իւ* վերջավորություններին (Պետրոսյան 50-51): Ա. Աբրահամյանն էլ ու-ն պայմանականորեն անվանում է երկբարբառային ձայնավոր² (Աբրահամյան 5):

2. Փոխառյալ բառերում լատիներենի ս-ին համապատասխանում է հայերենի ու [u] ձայնավորը (հմմտ. լատիներեն *Julius* – հայերեն *Յուլիոս*, լատիներեն *lux*– հայերեն *լույս*): Սակայն այս անցումները միանշանակ չեն, քանի որ կան փոխառյալ բառեր, որոնցում լատ. *u > ի*. ու անցումը չի պահպանվել: Վ. Պետրոսյանը, օրինակ, ներկայացնում է հունարեն-հայերեն հետևյալ անցումները՝ *ou-ու, ou-ո, ou-ուո, ou-ի, y-ու, eu-ու* (հմմտ. *kourlús- գուռայ «սափրիչ», boubalon- բոբալոն «գոմեշ», ailouros- եղուորս «կատու», lingourion- լինգիրոն «քար», smyrna, smyrra- զմուռս, mousíon- միսիոն «մոզայիկա», periudeutés- պերետուստ «հոգևոր տեսուչ») (Պետրոսյան 49):*

3. Ինչպես պարզ ձայնավորների մեծ մասը, ու [u]-ն հակադրվում է մյուս բոլոր ձայնավորներին և կազմում հնչյութային զույգեր: Բառակազմում ու-ն [u] հակադրվում է *ա* (a), *ե* (e), *ի* (i), *ո* (o), *ը* (ə) ձայնավորներին.

ու (u)/ա (a) ուխտ (երդում) -ախտ (հիվանդություն)

ու (u)/ե (e) ուս -ես

ու (u)/ի (i) լուանալ -լիանալ

ու (u)/ո (o) ուստ (որտեղից լինելը) -ոստ (ծառի ճյուղ)

ու (u)/ը (ə) ունդ (ուտելի ընդդեմ) -ընդ (նախդիր)

Բառամիջում ու [u] ձայնավորը նույնպես իմաստատարբերակիչ դեր է կատարում հակադրվելով հետևյալ ձայնավորներին.

ու (u)/ա (a) հում -համ

ու (u)/ե (e) գութ (կարեկցանք) -գեթ

ու (u)/ի (i) դուր (հյուսնի գործիք) -դիր (դնել)

ու (u)/ո (o) տուն -տոն (տոնախմբություն)

¹ Ա. Մելի պնդմամբ (ս) ձայնավորը հայերենում արտահայտվել է ու կապակցության միջոցով հունարեն օս ձայնավորի նմանողությամբ (Meillet 16):

² Ըստ Նրա ու-ն նախապես եղել է երկբարբառ, սակայն Նրա բաղադրիչները՝ ո-ն և լ-ն, այնքան սերտ արտասանություն են ունեցել, որ ժամանակի ընթացքում միաձուլվել և վերածվել են պարզ ձայնավորի:

ու (ս)/ը (ə) լուծել - լծել

Ու [ս] ձայնավորը բառավերջում հակադրվում է ա [a], ի [i] ձայնավորներին:

ու (ս)/ ա (a) դու - դա

ու (ս)/ի (i) առու - առի (առնել)

Ինչ վերաբերում է *Է* (ē) ձայնավորին, ապա, մեր կարծիքով, ինչ-որ շրջանում այն ունեցել է երկբարբառային բնույթ, այնուհետև վերածվել է պարզ ձայնավորի: Որպես պարզ ձայնավոր՝ *Է* [e]-ն սկսել է կիրառվել ետդասական շրջանում, երբ գրավոր աղբյուրներում հանդիպում են *ե* և *Է* հնչույթների զուգահեռ կիրառությունները միևնույն բառերում (հմմտ. *եթԷ/եթե*) (Մուրադյան 28):

Յ. Աճառյանի ակոմամբ՝ հին հայերենը չի ունեցել (e) հնչույթի բազմաթիվ տարբերակներ, ինչպես շատ լեզուներ: (E)-ն արտացոլվել է երկու տառերի միջոցով՝ *ե* և *Է*, սակայն թե որն է եղել նրանց տարբերությունը, այնքան էլ հստակ չէ: Հավանաբար *ե*-ն բաց è եր, իսկ *Է*-ն՝ փակ é (Աճառյան 117-118): Ժամանակակից գրական հայերենում (e)-ի այս տարբերակները չկան, ունենք միայն միջին երանգի (e): Ըստ մեկ այլ տեսակետի՝ գրաբարյան *Է* [e]-ն ծագել է հնդեվրոպական *ei* կամ *oi* երկբարբառներից և փոխարինել է «ե+յ» կապակցությանը (Աբրահամյան 4): Արդեն 12-րդ դարից սկսած այս տարբերությունները *ե* և *Է* հնչույթների միջև չեն նկատվում: Կարծիք կա, որ որոշ պարզ ձայնավորներ, այդ թվում նաև *ե*-ն, վերածվել են երկհնչյունների: Ըստ այդմ *ե* ձայնավորը վերածվել է (ye) երկհնչյունի¹ (Մուրադյան 103-105):

Իսկ ինչո՞վ է պայմանավորված *Է* [e]-ի երկբարբառային բնույթը:

1. Շեշտից գրկվելիս *Է* [e]-ն, ի տարբերություն մյուս պարզ ձայնավորների, փոխվել է *ի* [i]-ի (Առաքելեան 13, Աբրահամյան 12):

սէր- սիրոյ (ե>ի)

2. *Է* (e)-ի երկբարբառային բնույթը ապացուցելու նպատակով հաճախ համեմատվում են *ա* և *ե* խոնարհման բայերը սահմանական եղանակի ներկա ժամանակի հարացույցում: Հմմտ.

Ա խոնարհում

կարդամ *կարդամք*

կարդաս *կարդայք*

կարդայ *կարդան*

Ե խոնարհում

գրեմ *գրեմք*

գրես *գրեք*

գրե *գրեն*

Ինչպես տեսնում ենք օրինակներից, *ա* խոնարհման բայերի եզ. 3-րդ և հոգն. 2-րդ դեմքերի վերջավորության *այ* երկբարբառի փոխարեն *ե* խոնարհման բայերի դեպքում առկա է *Է*:

¹ Հայերենի պատմական զարգացման ընթացքում կարելի է նկատել նաև մի հետաքրքիր երևույթ՝ պարզ ձայնավորների երկբարբառացումը որոշ դիրքերում: Խոսքը վերաբերում է մասնավորապես *ե* (e) և *ո* (o) ձայնավորներին: Մաշտոցյան այբուբենի ստեղծման ժամանակ և գրաբարյան հայերենի գրեթե ողջ ընթացքում այս երկու ձայնավորները եղել են միարժեք, այսինքն՝ տառերից յուրաքանչյուրն արտահայտել է մեկ հնչույթ՝ *ե* = [e] և *ո* = [o]: Ժամանակի ընթացքում, պայմանավորված որոշ փոփոխություններով, *ե*-ն և *ո*-ն ձեռք են բերել երկբարբառային բնույթ, մասնավորապես *ե*-ն հնչել է նաև որպես [ye], իսկ *ո*-ն՝ [vo]: Յ. Մուրադյանը նշում է, որ *ո*-ի և *ե*-ի այսպիսի փոփոխությունները սկսվել են ձայնավորների ավելի նեղ արտասանության միտումով: *Ո*-ն ստացել է *ու* (ս) ձայնավորի թույլ երանգ և շեշտի տակ ստացել սօ երկբարբառի արժեք: *Ե*-ն էլ, իր հերթին, ստացել է *իե* երկբարբառի արժեք: Այս տարբերակները, նախ, հանդես են եկել շեշտակիր վանկերում, այնուհետև տարածվել նաև անշեշտ վանկերի վրա (Մուրադյան 93-105):

Նշված հանգամանքները հիմք են տալիս ասելու, որ գրաբարյան *է* (e)-ն ունեցել է երկբարբառային բնույթ (Աղայան 140, Մուրադյան 26-29):

Հետաքրքիր է նաև *ը* (ə) ձայնավորի հարցը: Այն մյուս ձայնավորների համեմատությամբ ավելի թույլ է, բառերի մեծ մասում հնչում է, սակայն գրավոր խոսքում չի արտացոլվում: Սա որոշ լեզվաբանների մտածել է տվել, որ այդպիսի ձայնավոր գոյություն չունի լեզվում: Այդպիսի ձայնավոր, իհարկե, կա: Սա ապացուցելու համար պարզապես կարող ենք դիտարկել հնչույթաբանական այն զույգերը, որոնք *ը*-ն [ə] կազմում է՝ այլ ձայնավորների հետ հակադրվելով: Օրինակ, *անունդ* (*անսերս*)-*անուն(ը)դ* (*այդ* *անունը*), այս զույգերում ակնհայտորեն երևում է *ը* [ə]-ի իմաստատարբերակիչ դերը, և հետևաբար հաստատվում նրա հնչույթ լինելու փաստը: *Ը* [ə]-ն բառավերջում չի հանդիպում, իսկ բառամիջում՝ ըստ անհրաժեշտության:

Բառասկզբում *ը* (ə) ձայնավորը հակադրվում է *ա* (a), *ո* (o), *ու* (u) ձայնավորներին: Հմմտ.

ը (ə) / *ա* (a) *ընդ* (*նախդիր*) - *անդ* (*մշակելի հող*)

ը (ə) / *ո* (o) *ըստ* (*նախդիր*) - *ոստ* (*ծյուղ, ընծյուղ*)

ը (ə) / *ու* (u) *ընդ* (*նախդիր*) - *ունդ* (*ուտելի ընդերդեն*)

Միակ փոփոխությունը, որին ենթարկվել է գրաբարի *ը* (ə)-ն, տվելն է (հմմտ. *ման(ը)ր*- *մանրութիւն*):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, լատիներենում նշվում է հինգ ձայնավոր, սակայն հաշվի առնելով 1) այն փաստը, որ այս հինգ ձայնավորներն էլ ունեն իրենց երկար և կարճ տարբերակները, 2) այն փաստը, որ թե՛ երկար և թե՛ կարճ ձայնավորները կատարել են իմաստատարբերակիչ դեր, թույլ է տալիս վստահորեն ասելու, որ լատիներենն ուներ 10 ձայնավոր հնչույթ՝ *ī*, *ī̄*, *īē*, *īě*, *īō*, *īđ*, *īū*, *īŭ*, *īā*, *īǎ*: Այս շարքում չենք նշում *y* ձայնավորը, քանի որ այն լատիներենում հայտնվել է փոխառյալ բառերի հետ միասին: Գրաբարում հստակորեն տարբերակվում է վեց ձայնավոր հնչույթ՝ *ա* (a), *ե* (e), *ի* (i), *ո* (o), *ը* (ə), *ու* (u): Ինչ վերաբերում է *է* (e)-ին, պիտի կարծել, որ գոնե գրաբարում այս հնչույթը ունեցել է երկբարբառային բնույթ:

Ինչպես կարելի է նկատել, գրաբարի և լատիներենի ձայնավորների միջև առկա են հետևյալ տարբերությունները. 1) հայերենի ձայնավորները չունեն իրենց երկար և կարճ տարբերակները, 2) լատիներենը չունի *ը* [ə] հնչույթը, 3) գրաբարի և լատիներենի հնչույթների համար ընդհանուր է այն, որ նրանք ենթարկվել են հնչունափոխության: Գրաբարում այն եղել է շեշտից զրկվելու պատճառով, իսկ լատիներենում ձայնավորները հետևել են հնչունափոխության որոշակի օրենքների՝ երկար ձայնավորների կրճատումը, հերթագայությունը, միաձուլումը, ձայնավորների համաբանությունը (անալոգիա), զեղչումը (սինկոպա):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան, Մանուկ. *Երկեր 2*, Երևան, 1974:
2. Աբրահամյան, Աշոտ. *Գրաբարի ձեռնարկ*. Երևան, 1976:
3. Աղայան, Էդուարդ. *Գրաբարի քերականություն*. Երևան, 1964:
4. Աճառյան, Հրաչյա. *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI*. Երևան, 1971:
5. Աճառյան, Հրաչյա. *Հայոց գրեր*. Վիեննա, 1928:
6. Առաքելյան, Վարազ. *Գրաբարի քերականություն*. Երևան, 2010:
7. Հյուբշման, Հայկրիի. *Հայագիտական ուսումնասիրություններ*. Երևան, 2004:

8. Մուրադյան, Հովհաննես. *Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1*, Երևան, 1982:
9. Պետրոսյան, Վարդան. *Հին հայերենի ձայնավորական համակարգի ծագումը և հնչարանական արժեքայնությունը*. «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», Երևան, 2017:
10. Винничук, Лидия. *Латинский язык*. Москва, 1985.
11. Джаукян, Геворг. *Сравнительная грамматика армянского языка*. Ереван, 1982.
12. Нидерман, Макс. *Историческая фонетика латинского языка*. Москва, 1949.
13. Тронский, Иосиф. *Очерки из истории латинского языка*. Москва, 1953.
14. Туманян, Этери. *Древнеармянский язык*, Москва, 1971.
15. Ярхо, Виктор и др., *Латинский язык*. Москва, 1983.
16. Cser, Andras. *The Phonology of Classical Latin*. Willey Blackwell, 2020.
17. Meillet, Antoine. *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*. Vienne, 1903.

WORKS CITED

1. Abeghyan, Manuk. Erker Z, Erevan, [Works 6, Yerevan] 1974. (In Armenian)
2. Abrahamyan, Ashot. Grabari d'er'nark. Erevan, [Textbook of Ancient Armenian, Yerevan] 1976. (In Armenian)
3. Aghayan, E'duard. Grabari qerakanut'yun. Erevan, [Ancient Armenian Grammar, Yerevan] 1964. (In Armenian)
4. Ar'aquelean, Varag. Grabari qerakanut'yun. Erevan, [Ancient Armenian Grammar, Yerevan] 2010. (In Armenian)
5. Atwar'yan, Hrachya. Hayoc grer. Vienna, [Armenian letters, Vienna] 1928. (In Armenian)
6. Atwar'yan, Hrachya. Liakatar qerakanut'yun hayoc lezvi, h. VI. Erevan, [Complete grammar of the Armenian language VI, Yerevan] 1971. (In Armenian)
7. Dzhaukjan, Gevork. Sravnitel'naja grammatika armjanskogo jazyka. Erevan, [Comparative grammar of the Armenian language] 1982. (In Russian)
8. Hyubshman, Haynrix. Hayagitakan usumnasirut'yunner. Erevan, [Armenian Studies, Yerevan] 2004. (In Armenian)
9. Jarho, Viktor i dr., Latinskij jazyk. Moskva, [The Latin language, Moscow] 1983. (In Russian)
10. Meillet, Antoine. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, [Outline of a Comparative Grammar of Classical Armenian, Vienna] 1903. (In French)
11. Muradyan, Hovhannes. Hayoc lezvi patmakan qerakanut'yun, h. 1, Erevan, [Historical Grammar of the Armenian Language, Yerevan] 1982. (In Armenian)
12. Niderman, Maks. Istoricheskaja fonetika latinskogo jazyka. Moskva, [Historical phonetics of the Latin language, Moscow] 1949. (In Russian)
13. Petrosyan, Vardan. Hin hayereni d'aynavorakan hamakargi c'agumy' ev hinchabanakan arjheqaynut'yuny'. "Banber Erevani hamalsarani. Hayagitut'yun", Erevan, [The Origin of the Vowel System of Old Armenian and its Phonemic Value, Yerevan] 2017. (In Armenian)
14. Tronskij, Iosif. Ocherki iz istorii latinskogo jazyka. Moskva, [Essays on the History of the Latin Language, Moscow] 1953. (In Russian)

15. Tumanjan, Jeteri. Drevnearmjanskij jazyk, Moskva, [The Ancient Armenian Language, Moscow] 1971. (In Russian)

16. Vinnichuk, Lidija. Latinskij jazyk. Moskva, [The Latin Language, Moscow] 1985. (In Russian)

A PARALLEL EXAMINATION OF ANCIENT ARMENIAN AND LATIN VOWEL SYSTEMS

LIANA AZIZYAN

*Yerevan State University, Faculty of Armenian Philology,
Chair of General Linguistics, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The given article studies the vowel systems of Ancient Armenian and Latin with a comparative approach. Using the synchronic approach, the etymological commonalities still preserved between the phonetic systems of the two related (Indo-European) languages in the classical stage of their history and the peculiarities resulting from their independent development are highlighted.

This work is aimed at studying the vowel systems of the Ancient Armenian and Latin languages and identifying the similarities and differences between them.

The aim of the work is to study the vowel phonemes of the Ancient Armenian and Latin languages, the phonological meanings of which are controversial in linguistics.

The study is carried out by using a parallel examination of vowel phonemes and comparative study methods.

According to the study results, in Armenology there are disagreements about the phonological values of Է (ē) and ու (u) vowels; whether they were simple vowels or diphthongs. Unlike Ancient Armenian, Latin had long and short vowels that opposed each other and formed distinctive oppositions. Both Ancient Armenian and Latin vowels had undergone sound changes. In Ancient Armenian it was due to reduction of vowels, and in Latin the vowels underwent certain laws of sound change: reduction of long vowels, alternation, coalescence, vowel analogy, syncope.

Key words: *phoneme, vowel, Ancient Armenian, Latin, phonological opposition, E. Aghayan, M. Niderman.*

СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ДРЕВНЕАРМЯНСКОЙ И ЛАТИНСКОЙ СИСТЕМ ГЛАСНЫХ

ЛИАНА АЗИЗЯН

*аспирант кафедры общего языкознания
факультета армянской филологии
Ереванского государственного университета,
г.Ереван, Республика Армения*

В данной статье на основе сравнительного подхода изучается система гласных древнеармянского и латинского языков. Используя синхронический подход мы выделяем этимологические общности, сохранившиеся между фонетическими системами двух родственных (индоевропейских) языков на классическом этапе их истории, и особенности, возникшие в результате их независимого развития.

Данная работа направлена на изучение систем гласных армянского габара и латинского языка и выявление сходства и различия между ними.

Целью работы является обращение к гласным фонемам древнеармянского и латинского языков, фонологическое значение которых в лингвистике является спорным.

Работа изложена с применением сравнительного изучения гласных фонем и применения методов сопоставительного изучения.

Согласно результатам исследования, в арменоведении существуют разногласия по поводу фонологических значений гласных Է (ē) и ու (u) – были ли они простыми гласными или дифтонгами. В отличие от древнеармянского языка, в латинском языке были долгие и краткие гласные, которые противопоставлялись минимальным парам фонем. Фонетическим изменениям подверглись как древнеармянские, так и латинские звуки. В древнеармянском языке это было связано с отсутствием ударения, а в латинском языке гласные следовали определенным правилам изменения звука, – сокращению долгих гласных, чередованию, слиянию, аналогии гласных, синкопе.

Ключевые слова: *фонема, гласный, древнеармянский язык, латинский язык, фонологическая оппозиция, Э. Агаян, М. Нидерман.*

ԲՈՂՈՔԻ ԻԼՈԿՈՒՏԻԿ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ*

ՀՏԴ 81`42

DOI: 10.52063/25792652-2022.4.15-135

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Վ. Բոյունովի անվան պետական համալսարանի ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի անգլերենի ամբիոնի ասպիրանտ, դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
annaavetisyan987@gmail.com

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել բողոքի խոսքային ակտը և դրա առկայացման լեզվական միջոցները հայերեն համացանցային խոսույթում: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ աշխատանքում առաջադրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են խոսքային ակտի ըմբռնումների համակողմանի վերլուծությունը, խոսքային ակտի դասակարգումների ներկայացումը և բողոք պարունակող առցանց հրապարակումների և մեկնաբանությունների ուսումնասիրությունը:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է համացանցում հասանելի և մեր առօրյայում առանձնահատուկ տեղ զբաղեցնող բողոք-հրապարակումների և մեկնաբանությունների մեծ քանակությամբ և դրանց ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

Լեզվաբանական վերլուծության մեթոդների ընտրությունը պայմանավորված է հետազոտության նյութի բնույթով և նպատակով: Տեսական դրույթների մեկնաբանությունը իրականացվել է լեզվաբանական նկարագրական վերլուծության միջոցով, իսկ օրինակների վերլուծությունը կատարվել է բաղադրիչների վերլուծության մեթոդի հիման վրա:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ համացանցային խոսույթում հասցեագրողը ներկայացնում է իր բողոքը ներակա հանդիմանելու, դժգոհելու, հեգնելու, ինչպես նաև կատակելու գործառույթներն իրականացնելու նպատակով: Այդ իլոկուտիվ գործառույթները պայմանավորված են հասցեագրողի նպատակադրվածությամբ և հասցեատիրոջ վրա ներազդելու ցանկությամբ: Մի շարք լեզվական միջոցներ, որոնք հասցեագրողի հուզական վիճակի արտահայտման հիմնական ցուցիչներն են, նպաստում են այդ գործառույթների արդյունավետ իրականացմանը: Դրանք ձևավորում են հասցեագրողի և հասցեատիրոջ միջև ինչպես տարհամաձայնություն, այնպես էլ համերաշխություն:

Հիմնաբառեր՝ բողոք, խոսքային ակտ, համացանցային խոսույթ, հանդիմանություն, մեղադրանք, դժգոհություն, սպառնալիք:

Ներածություն

Հաղորդակցության արդյունավետ ըմբռնման լավագույն միջոցներից են խոսքային ակտերը, որոնք հասցեագրողը կիրառում է իր մտադրությունները արտահայտելու համար: Խոսքային ակտերը պահանջում են ոչ միայն լեզվի

* Հոդվածը ներկայացվել է 06.12.2022թ., գրախոսվել՝ 10.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

իմացություն, այլև տվյալ մշակույթում այդ լեզվի պատշաճ կիրառում (What is a Speech Act):

Խոսքային ակտերի տեսությունն առաջին անգամ մշակել է Ջ. Օսթինը, իսկ հետագայում այն զարգացրել է Ջ. Սըրլը:

- Ջ. Օսթինը տարբերակում է խոսքային ակտերի երեք կարգ.
 - Լոկուտիվ՝ հասցեագրողը պարզապես արտաբերում է նախադասությունը:
 - Իլլոկուտիվ՝ հասցեատերը ընկալում է նախադասությունը համապատասխան ձևով:
 - Պերլոկուտիվ՝ նախադասությունը ներագրում է հասցեատիրոջ վրա (Austin 108-109):

Ջ. Օսթինը առանձնահատուկ ուշադրության է արժանացնում իլլոկուտիվ կարգին և նշում, որ այն խոսողի հաղորդակցական նպատակն է որոշակի համատեքստում, օրինակ՝ բողոքելը, հրամայելը, զգուշացնելը և այլն (Austin 108-109):

Հետագայում Ջ. Սըրլը, զուգահեռներ անցկացնելով Ջ. Օսթինի խոսքային ակտերի վերոնշյալ դասակարգման հետ, առաջադրում է իր դասակարգումը: Դրանք են՝

- Հաստատական՝ հասցեագրողը ինչ-որ բան է հաղորդում:
- Հրահանգային՝ հասցեագրողը ստիպում է հասցեատիրոջը ինչ-որ գործողություն կատարել:
- Ստիպողական՝ հասցեագրողը ինքն է ինչ-որ գործողություն կատարում:
- Հայտարարական՝ հասցեագրողը հայտարարությամբ փոփոխություններ է կատարում:
- Հուզական՝ հասցեագրողը արտահայտում է իր հույզերը (Searle 10-15):

Վերոբերյալ դասակարգման մեջ առանցքային տեղ է զբաղեցնում խոսքային ակտերի հուզական տեսակը, որն արտացոլում է խոսողի հոգեկան վիճակը և հույզերը տվյալ խնդրի շուրջ (Searle 10-15):


Ա. Թրոսբորգը կարծում է, որ բողոքը պատկանում է խոսքային ակտերի հուզական տեսակին, քանի որ պարունակում է այնպիսի բարոյական դատողություններ, որոնք արտահայտում են խոսողի հուզական վիճակը և վերաբերմունքը: Այլ կերպ ասած, Թրոսբորգը բողոքը սահմանում է որպես իլլոկուտիվ ակտ, որը հնարավորություն է տալիս բողոքողին իր բացասական վերաբերմունքն արտահայտելու միջոցով իրավիճակի ամբողջ պատասխանատվությունն ուղղակի կամ անուղղակի եղանակով փոխանցել դիմացինին (Trosborg 311-336):

Ջ. Լիչը պնդում է, որ բողոքի հակասական բնույթը կարող է առաջացնել խոսողի և լսողի միջև համերաշխության սոցիալական նպատակի խաթարում (Leech 210-211):

Ա. Թրոսբորգը նշում է, որ բողոքը կարող է ունենալ ակնհայտության տարբեր մակարդակներ՝ սկսած ակնարկներից և աննշան անհամաձայնություններից, մինչև արտակա մարտահրավերներ (Trosborg 311-336):

Ակնհայտության սանդղակը կարող է որոշվել հետևյալ չափանիշներով. պրոպոզիցիայի բովանդակություն (բողոքի առարկա) (անգլ.՝ complainable), բողոքող (անգլ.՝ complainer), մեղադրյալ (անգլ.՝ accused, complaine) (Trosborg 311-336): (Եկար 1)

Նկար 1



Գործոնները, որոնք կարող են սահմանել բողոքի ակնհայտության մակարդակը, հետևյալն են.

- Բողոքի առարկան ուղղակիորեն արտահայտված է կամ արտահայտված չէ պրոպոզիցիային բովանդակությունում:
- Պրոպոզիցիային բովանդակության վերաբերյալ բողոքողի բացասական գնահատումը ներակա և արտակա է արտահայտված:
- Մեղադրյալի անմիջական ներգրավվածությունը ներակա և արտակա է արտահայտված:
- Մեղադրյալի վարքագծի վերաբերյալ բողոքողի բացասական գնահատումը ներակա և արտակա է արտահայտված:
- Մեղադրյալի անձի վերաբերյալ բողոքողի բացասական գնահատումը ներակա և արտակա է արտահայտված (Trosborg 311-336):

Հաշվի առնելով վերոբերյալը՝ Ա. Թրոսբորգը ներկայացնում է բողոքների համապարփակ դասակարգում, որը բաղկացած է չորս ռազմավարությունից և ութ ենթառազմավարությունից (Աղյուսակ 1) (Trosborg 337-372):

Աղյուսակ 1

Ոչ բացահայտ հանդիմանություն	Ակնարկներ	Բողոքողը չի հիշատակում բողոքի առարկան և ուղղակիորեն չի նշում, որ ինչ-որ բան վիրավորական է
Դժգոհության	Վրդովմունք	Բողոքողը արտահայտում է հակակրանք, դժգոհություն և վրդովմունք որոշակի հարցի շուրջ
	Վատ հետևանքներ	
Մեղադրանք	Անուղղակի	Բողոքողը ոչ միայն մատնանշում է մեղադրյալին, այլև ուղղակիորեն կամ անուղղակիորեն մեղադրում է նրան
	Ուղղակի	
Մեղադրանք /Կշտամբանք	Ձևափոխված մեղադրանք	Բողոքողը ենթադրում է, որ մեղադրյալը պատահանատու է զանցանքի համար և ակնարկում է զանցանքի համար առաջադրված մեղադրանք կամ ուղղակիորեն մեղադրում է նրան իր կատարած արարքի համար
	Արտակա մեղադրանք (վարքագիծ)	
	Արտակա մեղադրանք (անձ)	

Ըստ Է. Օլստայնի և Լ. Վայնբախի՝ բողոքի խոսքային ակտը կարող է ընդգրկել հինգ տարբեր օրինաչափություններ, որոնք տարբերվում են հասցեատիրոջ նկատմամբ իրենց խստության աստիճանով: Այդ օրինաչափությունները ներկայացված են Աղյուսակ 2-ում (Olstain and Weinbach 108-122)՝

Աղյուսակ 2

Կշտամբանքի մակարդակից ցածր	Չհիշատակել բողոքի առարկան կամ չլեկտրոնանալ հասցեատիրոջ խոսքի վրա
Վրդովմունքի կամ դժգոհության արտահայտում	Ակնհայտորեն չհիշատակել բողոքի առարկան, բայց արտահայտել ընդհանուր անհանգստություն ինդրի շուրջ


Բացահայտ բողոք	Բացահայտ անդրադառնալ բողոքի առարկային՝ միտում ունենալով հասցեատիրոջը վարկաբեկել, բայց չպատժել
Մեղադրանք ու նախազգուշացում	Վարկաբեկել հասցեատիրոջը և ակնարկել հավանական պատժամիջոցների մասին
Անմիջական սպառնալիք	Բացահայտ հարձակվել հասցեատիրոջ վրա

Այսպիսով, հետազոտության նպատակից ելնելով՝ ուսումնասիրվել են բողոքի իրկուտիվ գործառույթները հայերեն համացանցային խոսույթում՝ միաժամանակ ընդգծելով այն լեզվական միջոցները, որոնց միջոցով հասցեագրողը իրականացնում է իր մտադրությունները: Համացանցում բողոքի մեծ թիվը մեծամասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ այն հանրության առօրյայի անբաժանելի մասն է: Հետազոտության շրջանակներում ընտրվել են **Facebook** (www.facebook.com 06.12.2022) սոցիալական ցանցում հասանելի բողոք-հրապարակումները և մենաբանությունները, որոնք ընդգրկում են բողոքի խոսքային ակտին բնորոշ առանձնահատկությունները: Բոլոր հրապարակումները դասակարգված են մեր կողմից առաջարկված բողոքի հետևյալ գործառույթներով.

- Ոչ բացահայտ հանդիմանություն
- Դժգոհություն կամ վրդովմունք
- Հեգնանք
- Կատակ
- Ոչ բացահայտ հանդիմանություն

Բողոք-հրապարակումը կամ մեկնաբանությունը կարող է ունենալ ոչ բացահայտ հանդիմանելու նպատակ: Վերջերս եվրատեսիլյան տոմսերի առցանց գնման ժամանակ տեղի էր ունեցել տեխնիկական խնդիր, որը բողոքի մեծ ալիք էր բարձրացրել: Բողոքները ներկայացնելիս հասցեագրողները կիրառելի էին մի շարք լեզվական միջոցներ, որոնցից մի օրինակ ներկայացված է նկար 2-ում (<https://shorturl.at/qKSW6> 06.12.2022):

Նկար 2




Վերոբերյալ հրապարակման մեջ հասցեատերը իր բացասական կարծիքն է հայտնում անմիջապես պրոպոզիցիայի բովանդակության վերաբերյալ, որը պարունակում է դժգոհություն և վրդովմունք ստեղծված իրավիճակի հանդեպ: Այն բացահայտ բողոքի օրինակ է, քանի որ հստակ նշվում է բողոքի առարկան: Որպես իմաստային բաղադրիչ է դիտարկվում հենց բողոքը: Ինչ վերաբերում է լեզվական միջոցներին, ապա հասցեագրողը հեգնաբար կիրառել է **ֆոկլոզ** օտարաբանությունը՝ շեշտելու ստեղծված իրավիճակի վերաբերյալ իր դժգոհությունը և բարկությունը: Ընդ որում, հասցեագրողը կարծես թե դիտավորյալ կիրառել է **ֆոկլոզ** բառի ոչ ճիշտ ուղղագրությունը, որպեսզի գրավի հասցեատիրոջ ուշադրությունը և կրկին շեշտի իր վրդովմունքը: Իսկ հրապարակման երկրորդ մասում ժխտական նախադասության միջոցով հասցեագրողը պարզաբանում է իրավիճակի մանրամասները:

➤ **Դժգոհություն կամ վրդովմունք**


Բողոքի մեկ այլ գործառույթ է դժգոհության կամ վրդովմունքի արտահայտումը: Վերջինիս ուշագրավ օրինակ է ներկայացված նկար 3-ում, որը պայմանավորված է եղել ֆուտբոլի աշխարհի առաջնության խաղերի հեռարձակումով: Հասցեագրողը իր բացասական կարծիքն է արտահայտում հասցեատիրոջ վարքագծի վերաբերյալ և մեղադրում նրան իր կատարած արարքի համար: Մեկնաբանությունը ընդգրկում է հեռուստոկան հարց (*ինչի կայքը չեք պատրաստել*) հասցեատիրոջը կշտամբելու և իր վրդովմունքը արտահայտելու համար (<https://shorturl.at/qKSW6> 06.12.2022):

Նկար 3



Համացանցում հասանելի մեկնաբանություններից առանձնացրել ենք նաև այնպիսի օրինակ (նկար 4), որտեղ հասցեագրողը բացասական գնահատական արտահայտում է ստեղծված իրավիճակի վերաբերյալ միայն հարցադրումների միջոցով: Նման կերպ նա փորձում է կշտամբել հասցեատիրոջը և քննադատել վերջինիս չմտածված արարքը (<https://shorturl.at/aepxZ> 06.12.2022):


Նկար 4



➤ **Հեգնակ**

Եվրատեսիլյան տոմսերի առցանց ձեռքբերման հետ կապված մեկ այլ բողոք է ներկայացված նկար 5-ում: Բողոքի առարկան ուղղակիորեն արտահայտված չէ, որը թույլ է տալիս ենթադրել, որ որպես ռազմավարություն կրկին ընտրված է ոչ բացահայտ հանդիմանությունը: Ակնարկների միջոցով հեղինակը փորձել է կիրառել կշտամբանքի մակարդակից ցածր գործառույթը: Նշված բողոք-հրապարակման հիմնական նպատակը հեգնելն է, որը հստակ արտացոլվում է կիրառված Էմոջի միջոցով: Մեկնաբանությունը ներկայացված է հրամայական եղանակի բայաձևով, որը կարծես հորդոր է հաղորդում բողոքին (<https://shorturl.at/vUX14> 06.12.2022):


Նկար 5



Մեկ այլ հեգնական բողոք-հրապարակման օրինակ բերված է նկար 6-ում, որտեղ հասցեագրողը իր վրդովմունքը և զայրույթն է արտահայտում *մի քիչ շատ չի*

հռետորական հարցի և չէ՞ լուրջ արտահայտության միջոցով (<https://shorturl.at/yKLV8> 06.12.2022):


Նկար 6



➤ **Կատակ**

Ջետաքրքրական է նաև այն օրինակը (նկար 7), որտեղ բողոքը ներկայացվել է հումորի միջոցով: Հասցեագրողը, բողոքի առարկան հստակ մատնանշելով, իր ոչ բացահայտ հանդիմանությունն է արտահայտում իրավիճակի վերաբերյալ: *Ուշ են քնում և ուշանում են* կառույցները լեզվական խաղի պատկեր են ստեղծում (<https://shorturl.at/dnqzZ> 06.12.2022):

Նկար 7



Եզրակացություն

Ամփոփելով կատարած հետազոտությունը՝ կարող ենք եզրակացնել, որ հայերեն համացանցային խոսույթում բողոքների հիմնական գործառնությունն են ոչ բացահայտ հանդիմանությունը, դժգոհությունը կամ վրդովմունքը, հեգնանքը, ինչպես նաև կատակը: Յուրաքանչյուր գործառնության իրականացման համար հասցեագրողը կիրառում է լեզվական տարբեր միջոցներ: Այդ լեզվական միջոցներից մեծամասամբ գերիշխում են հռետորական հարցերը և հրամայական եղանակի բայաձևերը, որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ հասցեագրողը առանց հասցեատիրոջ պատասխանը ստանալու փորձում է անուղղակի կերպով ազդել նրա վրա: Նման լեզվական միջոցները պարզապես գործիք են հասցեագրողի մտադրության անհապաղ իրականացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Austin, John. *How to do things with words*. Oxford University Press, New York, 1962, 108-109:
2. Leech, Geoffrey. *Principles of pragmatics*, Longman, London, 1983:
3. Olstain, Elite, and Weinbach, Liora , "Interlanguage Features of the Speech Act of Complaining". *Interlanguage Pragmatics*, Gabriele Kasper & Shoshana Blum-Kulka (Ed.), Oxford University Press, 1993, pp. 108-122:
4. Searle, John. "A Classification of Illocutionary acts". *Language in Society*, vol. 5, no. 1, Apr. 1976, pp. 1-23:

5. Trosborg, Anna. *Interlanguage pragmatics: Requests, complaints, and apologies*, Mouton de Gruyter, Berlin, New York 1995:
6. "What is a Speech Act?." *The Center for Advanced Research on Language Acquisition (CARLA)*, <https://carla.umn.edu/speechacts/definition.html>, Accessed: 06 December 2022:
7. Facebook, www.facebook.com, Accessed: 06 December 2022:
8. Facebook, <https://shorturl.at/qKSW6>, Accessed: 06 December 2022:
9. Facebook, <https://shorturl.at/aepxZ>, Accessed: 06 December 2022:
10. Facebook, <https://shorturl.at/vUX14>, Accessed: 06 December 2022:
11. Facebook, <https://shorturl.at/yKLV8>, Accessed: 06 December 2022:
12. Facebook, <https://shorturl.at/dnqsZ>, Accessed: 06 December 2022:

ILLOCUTIONARY FUNCTIONS OF COMPLAINT IN ARMENIAN INTERNET DISCOURSE

ANNA AVETISYAN

*Brusov State University, Russian and Foreign Languages Faculty,
English Chair, Ph.D Student, Lecturer
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to study the speech act of complaint and its linguistic means in the Armenian Internet discourse. In the research, not only is comprehensive analysis of speech acts carried out but also classifications of those speech acts are set forth.

The topicality of this research is determined by the large number of complaints available on the Internet, which play a crucial role in our everyday life.

The choice of linguistic methods is conditioned by the nature and purpose of the research. The theoretical interpretation was carried out through linguistic descriptive analysis, and the practical research was conducted based on the method of component analysis.

As a result of the research, we came to the conclusion that in the Internet discourse, the addresser makes his complaint to perform the functions of implicit reprimand, complaint, irony and joking. Those functions are determined by the addresser's intention and desire to influence the addressee. A number of linguistic means contribute to the effective implementation of these functions. They establish both disagreement and solidarity between the addresser and the addressee.

Keywords: *complaint, speech act, Internet discourse, reprimand, accusation, disapproval, threat.*

ИЛЛОКУТИВНЫЕ ФУНКЦИИ ЖАЛОБЫ В АРМЯНСКОМ ИНТЕРНЕТ-ДИСКУРСЕ

АННА АВЕТИСЯН

*аспирант, преподаватель кафедры английского языка
факультета русского и иностранных языков
государственного университета имени В. Брюсова,
г.Ереван, Республика Армения*

Целью статьи является изучение речевого акта жалобы и актуализация его языковых средств в армянском интернет-дискурсе. Преследуя цели данного исследования, проводятся комплексный анализ восприятия речевых актов, классификация данных речевых актов, а также анализ публикаций содержащих подобные жалобы.

Актуальность данного исследования определяется большим количеством публикаций, имеющих жалобный характер, и комментариев, имеющих в Интернет пространстве и занимающих особое место в повседневной жизни, а также необходимостью их изучения.

Выбор лингвистических методов обусловлен характером и целью исследуемого материала. Интерпретация теоретических положений осуществлялась посредством лингвистического описательного анализа, а эмпирическое исследование осуществлялось на основе метода компонентного анализа.

В результате исследования мы пришли к выводу о том, что в интернет-дискурсе адресант выражает свою жалобу с целью проявления имплицитного упрека, недовольства, иронии, а также шутки. Эти иллокутивные функции определяются намерением и желанием адресанта воздействовать на адресата. Ряд языковых средств, являющихся основными показателями выражения эмоционального состояния адресанта, способствуют эффективной реализации этих функций. Они формируют как несогласие, так и солидарность между адресантом и адресатом.

Ключевые слова: *жалоба, речевой акт, интернет-дискурс, выговор, обвинение, неодобрение, угроза.*



**ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՖՃ ԶԱՅՎԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ
(ԱՐՑԱԽՅԱՆ ԶԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ) ***

ՅՏԴ 070

DOI: 10.52063/25792652-2022.4.15-143

ԼԻԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի
Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
martirosanliana413@gmail.com

Սույն հոդվածը նպատակ է հետապնդում Արցախյան հակամարտության օրինակով բացահայտել դավադրության միջի էությունը և դրա ազդեցությունը քաղաքական ընտրություններում:

Աշխատանքի խնդիրն է բացահայտել այն մանիպուլյացիոն տեխնոլոգիաները և գործիքները, որոնք կիրառվում են իշխանության հասնելու համար:

Աշխատանքը շարադրված է պատմաքննական վերլուծության և փաստերի համեմատության մեթոդների միջոցով:

Ամփոփելով սույն հոդվածը՝ կարող ենք պնդել՝ դավադրության միջոց գործիք է, որը, ազդելով հանրության գիտակցության վրա, նրան զցում է տեղեկատվական թակարդը, կառավարում սոցիալական վարքագիծը և մղում որոշակի գործողությունների: Այս միջերը քաղաքականության մեջ օգտագործվում են որպես հասարակության և սուբյեկտի հաղորդակցման ձև:

Դրանց օգտագործումը կարևորվում է հասարակության սոցիոմշակութային ճգնաժամերի ընթացքում, երբ մարդն ունի կողմնորոշվելու և ընտրություն կատարելու խնդիր:

Հետազոտությունից պարզ դարձավ, որ այսօր դավադրության միջոց շարունակում է լինել ամենից հաճախ կիրառվող քաղաքական տեխնոլոգիան Հայաստանի Հանրապետությունում: Դրա վառ օրինակն է Արցախյան հակամարտությունը, որը որպես մանիպուլյացիոն գործիք հաճախ օգտագործվում է քաղաքական ուժերի կողմից իշխանության հասնելու համար: Դրանք տարածվում են շնորհիվ ժամանակակից հաղորդակցային տեխնոլոգիաների և զանգվածային լրատվամիջոցների:

Հիմնաբառեր՝ միջ, քաղաքական միջավայր, քաղաքացիական հասարակություն, սոցիալ-հոգեբանական միջավայր, դավադրության միջ, ՉԼՄ-ներ, Արցախյան հակամարտություն, անվտանգություն:

* Հոդվածը ներկայացվել է 15.11.2022թ., գրախոսվել՝ 15.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Նախաբան

Ժամանակակից միջերի ստեղծման և տարածման նպաստավոր ոլորտներից մեկը քաղաքականությունն է: Քաղաքական միջավայրի իշխանական գիտնական կարևորագույն բաղադրիչներից մեկն է, առանց որի վերջիններս չեն կարող մրցունակ մնալ քաղաքական պայքարում և հասնել ցանկալի արդյունքի (Հովհաննիսյան 134): Քաղաքական միջերի արդիականությունը պայմանավորված է հենց քաղաքականության արդիականությամբ: Վերջինս ձգտում է հասնել մարդկային հույզերի և վարքագծի կառավարմանը, իսկ միջերը կարող են հաջողությամբ սքողել տարբեր քաղաքական քայլերի իրական նպատակները, ստեղծել կեղծ ապահովության մթնոլորտ, շահել հանրույթի վստահությունը և նրան մղել որոշակի քայլերի: Միջերը, ունենալով խոր արմատներ, այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը: Դրանց ստեղծումն ու տարածումը առավել ակտիվանում է երկրի համար բախտորոշ իրավիճակներում պատերազմների, հեղափոխությունների և հեղաշրջումների ժամանակ, ընտրությունների նախաշեմին, նախընտրական քարոզարշավների ողջ ընթացքում, ընդ որում սա կատարվում է ոչ միայն առանձին պետությունների ներսում, այլև համաշխարհային գործընթացների պայմաններում: Միջականացման ենթարկվում են ինչպես երևույթները, այնպես էլ մարդիկ: Միջերն ազդում են մարդու հույզերի, զգացմունքների վրա: Դրանք կարող են պարունակել իրականության տարրեր, սակայն աղճատված են, հաճախ ուռճացված և չափազանցված: Դրանք ձևավորվում են մանիպուլյացիոն տարբեր գործիքների օգտագործմամբ: Միջերի զարգացման ամենից տարածված սոցիալ-հոգեբանական միջավայրը ՉԼՄ-ներն են, քանզի նորությունների ընտրությունը, դրանց հաղորդումն ու մեկնաբանությունները որոշակի վերաբերմունք են ձևավորում եղելությունների նկատմամբ:

Վերջին տասնամյակում հետազոտողները նախանշել են մի շարք ընդհանրական մեխանիզմներ, որոնց միջոցով կարելի է կանխատեսել միջերի զարգացումը, սակայն դրանք, որքան էլ լինեն մշակված ու մեկնաբանված, հաճախ դուրս են գալիս կանխատեսելիության սահմաններից: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է ֆրանսիացի հետազոտող Ռ. Ժիրարդեի դասակարգումը, ըստ որի՝ միջերը կարելի է բաժանել չորս մեծ խմբի՝ Դավադրություն, Ոսկե դար, Հերոս-փրկիչ և Միասնականություն (Жирарде 47-54): Հորվածում փորձել ենք տեղայնացնել դավադրության միջը՝ մեր երկրում տեղի ունեցած մի շարք կարևոր քաղաքական գործընթացներ մեկնաբանելով և վերլուծելով հենց այս դիտանկյունից:

Դավադրության միջի Եռությունը

Ըստ Ռ. Ժիրարդեի դասակարգման՝ դավադրության միջը քաղաքական միջի կայացման առաջին փուլն է. այն առաջադրում է ժողովրդի ենթադրյալ թշնամիների մասին պատկերացումներ, որոնք լեցուն են անվտանգային սպառնալիքներով (Դեմիրճյան 53): Վերջինս չի բացառում իրական թշնամիների լինելիությունը, առկա իրական վտանգը, սակայն ընդգծում է՝ ինչպես են «այդ թշնամիների» մասին պատմությունները դառնում մանիպուլյատիվ գործիքներ իշխող կամ ընդդիմադիր քաղաքական ուժերի ձեռքին: Այլ խոսքով՝ դրանք փաստերի յուրօրինակ մեկնաբանություններ են, որոնք հետապնդում են «թաքնված» նպատակներ: Վերջիններս հանդես են գալիս նաև որպես «օբյեկտիվ» բացատրություններ հասարակության մեջ առկա ճգնաժամերի, սոցիալական անհավասարության, ֆինանսական դժվարությունների և այլ արտավոր երևույթների համար: Հավելենք, որ դավադրության միջի շահարկումը կարող է ենթադրել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամիների վկայակոչում:

Դավադրության միջերը կարող են լինել երկարաժամկետ և կարճաժամկետ, ըստ իրականացման ձևի՝ նախապես պլանավորված կամ էլ իմպրովիզացիոն: Օժվտած լինելով «ժամանակ խնայելու» գործառնոյթով՝ դավադրության միջը կոչված է իրականացնելու արոյունավետ քաղաքական հաղորդակցում հանրոյթի լայն շերտերի հետ՝ ապահովելով քաղաքացիական խաղաղոյթուն և կայունոյթուն, նաև՝ տվյալ երկրում իշխանական ինստիտունտների և նրա առաջատարների գործունեոյթունը լեգիտիմացնելու:

Դավադիր ուժի կամ թշնամու կերպարում կարող են հանդես գալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ուժերը:

Արցախյան հակամարտոյթունը՝ որպես դավադրության միջի դրսևորման օրինակ

Վերոնշյալ գործընթացներից գերծ չի մնացել նաև Հայաստանը, որտեղ հատկապես անկախոյթան շրջանում մեծ կիրառոյթուն են գտել քաղաքական դավադրոյթան միջերը: Այդ ժամանակահատվածում միջերի ստեղծման անհրաժեշտոյթունը բացատրելի էր, քանի որ այն բեկումնային էր ժողովրդի համար. ԽՍՀՄ-ի կազմից դուրս եկած հայ ժողովուրդը ընտրել էր ժողովրդավար հանրապետոյթուն կառուցելու ուղին: Մարդիկ համակված էին սեփականը պաշտպանելու և նորը կառուցելու ձգտումով, սպասվում էր նոր զարթոնք: Ամեն ինչ արվում էր երկիրը վերակառուցելու և անկախանալու համար: Սակայն ազատոյթունը չէր կանխատեսել այն բոլոր բարդոյթունների և զրկանքների վտանգը, որին ստիպված եղավ բախվել հայ ժողովուրդը (Սարգսյան 204): Մի կողմից առկա էին սոցիալ-տնտեսական խոր ճգնաժամ, հասունացող պատերազմի վտանգ և տարածքային ամբողջականոյթան պահպանման մտահոգոյթուն, մյուս կողմից՝ իշխանոյթան գալու և երկրի դեկը իրենց ձեռքը վերցնելու խնդիր: Նման խոցելի իրավիճակներով էլ բացատրվում է միջերի կիրառման բազմազանոյթունը: Երկրում իշխանոյթուն հաստատելու և սոցիալական ծանր պայմանները արդարացնելու համար անհրաժեշտ էին դավադրոյթան միջեր, պետք էր թշնամու կերպար, ում դեմ պայքարի համար էլ պետք է ծնվեր հերոս-փրկիչը՝ բերելով խոստացված զարթոնքն ու ազատոյթունը: Այս պարագայում ժողովրդի թշնամին արտաքին էր՝ ի դեմս Ադրբեջանի և Թուրքիայի, որոնք սպառնում էին երկրի անվտանգոյթանը և տարածքային ամբողջականոյթանը: Արցախյան հակամարտոյթան սպառնալիքի մեկնաբանոյթունը «դավադրոյթան միջի» կենդանի օրինակ է: Բավական է հպանցիկ հայացք գցել ՀՀ քաղաքական պատմոյթանը՝ 1988 թվականից առ այսօր, և կարող ենք ընդգծել, որ գրեթե բոլոր քաղաքական ուժերի քաղաքական ծրագրերը կառուցված են եղել Արցախյան հակամարտոյթան հենքի վրա: Բոլոր քաղաքական խոստումներն անցել են դրա հղանցքով՝ հավելյալ ընդգծելով, որ իրենց քաղաքական նպատակները խաչվում են պետոյթան ազգային և անվտանգային հիմնախնդիրներին: Միջը, խորացնելով իր արմատները, զարգանում էր՝ իր հետ տանելով այն գաղափարը, որ միայն տվյալ քաղաքական ուժը կարող է ապահովել երկրի անվտանգոյթունը, և ամեն տեսակի ընդվզում կարող է հանգեցնել պետոյթան արմատական խարխլմանը:

Այսպիսով, Հայաստանում տարիներ շարունակ իշխող է եղել այն տեսակետը, որ երկրի ներսում հնարավոր իշխանափոխոյթունը հղի է պետականոյթան կորստի վտանգով: Անվտանգոյթան միջը լուծում էր նաև այլ խնդիր՝ արդարացնել երկրում առկա սոցիալական ծանր պայմանները և խորացող ճգնաժամերը: Ստեղծված միջն իսկապես ծանրակշիռ էր, քանզի անվտանգոյթան կարևորոյթունը միշտ էլ մղվել է առաջին պլան հասարակոյթունների պահանջմունքների ուսումնասիրոյթան ժամանակ: Եվս մեկ անգամ ընդգծենք, որ պատերազմի սպառնալիքը միշտ էլ եղել է, սակայն հաճախ ուռճացվել և ապակողավորվել է՝ դառնալով գործիք իշխանոյթան

ձգտողների ձեռքին: Պատահական չէ, որ 1990-ական թվականներից երկրի իշխանական վերնախավում մեծ հեղինակություն էին վայելում «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, որոնք համարվում էին անվտանգության երաշխավորները կամ ժողովրդական զարթոնքի ապահովողները: Այս ամենն իր արտացոլումն էր գտնում վերջիններիս կուսակցությունների քաղաքական կարգախոսներում՝ «Հաղթանակ, կայունություն, առաջընթաց», «Կառուցենք և պաշտպանենք», «Անվտանգ Հայաստան», «Փրկենք մեր հայրենիքը», «Մենք ենք ձեր անվտանգության երաշխավորը» և այլն: Արտաքին թշնամու նախանշումը քաղաքական ուժերին հնարավորություն էր տալիս հանդես գալու հերոս-փրկչի կերպարում, և քանի որ մարդկային գիտակցության մեջ միախառնված են իրականը և միֆականը, դրանք, որպես կանոն, հանգեցնում էին ցանկալի արդյունքի: Թշնամու դեմ պայքարի առասպելը ազգային առաջնորդության հիմքում է ի սկզբանե, քանի որ առանց հաղթանակի չկա նաև երկրի, հասարակության, սոցիումի վերածնունդ (Ասրիյան, Մելքոնյան 77):

Դավադրության միֆի ձևավորողներից մեկն էլ եղել է սպարապետ Վազգեն Սարգսյանը, որ 1996 թվականին Օպերայի հրապարակում հնչած ելույթի ժամանակ հիշեցրեց անվտանգության խնդիրների առաջմղման կարևորությունը և տնտեսական վատ պայմանները փորձեց արդարացնել պատերազմով և Արցախի հարցով: Այդ ժամանակ արված հայտնի արտահայտությունը՝ «8 շրջան երշիկի դիմաց», դարձավ թևավոր խոսք և սկսեց շահարկվել քաղաքական շրջանակներում («Վազգեն Սարգսյանը «ցուրտ ու մուլթ» տարիների մասին, 1996թ.» 00:34-00-53): Իհարկե, «երշիկ» բառը խորհրդանշական էր և զուգորդվում էր տնտեսական առաջընթացի երկրորդ պլան մղվելու հետ: Նմանատիպ արտահայտությունները հետագայում լայն տարածում գտան ընդդիմադիր այլ ուժերի քաղաքական ելույթներում (Աշոտ Մանուչարյան): Գրեթե նույն ազդեցությունն ունեցավ նաև ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի՝ 1997-ի սեպտեմբերի 26-ին «Ա1+» հեռուստաընկերությամբ հեռարձակվող հարցազրույցում Սերգո Երիցյանին ուղղված հայտնի արտահայտությունը, որ «Հայաստանը պետություն չի դառնա, լավ չես ապրի, Սերգեյ ջան, մինչև Ղարաբաղի հարցը չլուծվի» («Ավանատեսի հուշերը. ընտրությունները Հայաստանում 1990-2013» 01:23:41-01:23:41): Սոցիալական քարոզչությունը այս ժամանակահատվածում արվում էր միայն պատերազմի անունից՝ լույս և զազ չկա, հաց չկա, քանզի պետությունը պատերազմի մեջ է: Քաղաքական թատերաբեմը լեցուն էր նման օրինակներով:

Արցախի անվտանգության միֆի շահարկումը չկորցրեց արդիականությունը նույնիսկ տարիներ անց, երբ Հայաստանի Հանրապետությունը թևակոխել էր զարգացման այլ փուլ: Այն միշտ էլ եղել է քաղաքական առաջնորդների գինանոցի ծանր հրետանին: Մասնավորապես անվտանգության միֆի ազդեցությանը դիմեց ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը, երբ 2018 թվականին «Շանթ» հեռուստաընկերությանը տված հարցազրույցի ժամանակ ասաց, որ դրժում է իր՝ այլևս քաղաքականությամբ չզբաղվելու խոստումը, քանի որ կրկին կա պատերազմի սպառնալիք («Վարչապետ Սերժ Սարգսյանի բացառիկ հարցազրույցը «Շանթ» հեռուստաընկերությանը» 00:12:38-00:18:00): Այս արտահայտությունը, որը նախկինում կարող էր նրան հերոս դարձնել, սկսեց գործել հակառակ ուղղությամբ՝ կերտելով հակահերոսի կերպար: Գոյություն ունեցող միֆը իրականություն է այն մարդու համար, ով հավատում է դրան: Սակայն նոր միֆերի ստեղծման ֆոնին հին միֆերը դառնում են հեքիաթ և կորցնում իրենց ազդեցությունը, ինչին ականատես եղանք այդ հարցազրույցին հաջորդած իշխանավորության ժամանակ: Առաջացել էր նոր միֆ ստեղծելու պահանջ, կային հին միֆերը արմատախիլ անելու լուրջ նախադրյալներ: Սոցիալական պայմանները մարդկանց դուրս էին բերել փողոց, քանզի հին միֆերը, սպառնելով իրենց, չէին կարողանում արդարացնել նախկին ռեժիմի քայլերը: Ահա այս պայմաններում էլ խորտակվեց հին միֆը՝ իր տեղը զիջելով նորին: Հայաստանյան

իրականության մեջ հակահերոսի կերպարը մշտապես առկա էր բոլոր քաղաքական, հատկապես ընտրական գործընթացներում: Նախկինում թշնամին սովորաբար արտաքին էր (Ադրբեջան, Թուրքիա), սակայն 2018-ին տեղի ունեցած իշխանափոխությունը ցույց տվեց, որ հանրույթը կարող է ստեղծել նաև ներքին հակահերոս և պայքարել նրա դեմ: Հարկ ենք համարում նշել, որ թե՛ միջերը ստեղծողները, թե՛ դրանք քողագերծողները գործում են նույն սկզբունքով, քանզի նոր միջերը ծնվում են հին միջերի դեմ պայքարի արդյունքում:

Դավադրության միջի բազում դրսևորումներ կարելի էր գտնել նաև 2020 թվականին տեղի ունեցած 44-օրյա պատերազմից հետո:

Եզրակացություն

Սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքում արձանագրենք՝ քաղաքական ճգնաժամերի պայմաններում, երբ մարդիկ համախմբող խորհրդանիշների պահանջ են զգում, քաղաքական ուժերը գործի են դնում իրենց ողջ զինանոցը հանրույթի համար կարևոր թեմաների շահարկման միջոցով: Այս ճանապարհին նրանք կարող են օգտագործել թույլատրելի և անթույլատրելի, արդարացված կամ չարդարացված բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնք հետապնդում են որոշակի նպատակներ՝ շահել ժողովրդի վստահությունը, կառավարել հանրային գիտակցությունը, ուղղորդել նրա վարքագիծը և, իհարկե, մղել որոշակի գործողությունների: Ընդգծենք, որ ներքին կամ արտաքին թշնամիների մասին բարձրաձայնումները կարող են ունենալ միևնույն ազդեցությունը, պարզապես պետք է ճիշտ գնահատել իրավիճակը և օգտագործել համապատասխան ինֆորմացիոն զենքեր: Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե միջերի դարաշրջանը վաղուց անցյալում է, սակայն նախկին և մերօրյա քաղաքական փորձը մեզ հակառակն է ապացուցում: Միջերը, լինելով քաղաքական պայքարի կարևորագույն միջոցներից մեկը, օգտագործվում են բացառապես իշխանության գալու, ստեղծված հաճախ ոչ ցանկալի իրավիճակները մեկնաբանելու և արդարացնելու նպատակով: Քաղաքացիական հասարակության ձևավորումը, արդիական տեղեկատվական տեխնոլոգիաների առատությունը, ինֆորմացիոն աղբյուրների բազմազանությունը ավելի են ընդլայնել դրանց տարածման առանցքը՝ տալով նորովի զարգանալու և մատուցվելու մեծ հնարավորություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դեմիրճյան, Մովսես. «Միջը ժամանակակից Հայաստանի քաղաքական համակարգում». *Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Զաղաքագիտություն, թիվ 2 (32)*, Երևան, 2020, էջ 51-59:

2. Հովհաննիսյան, Վլադիմիր. «Զաղաքական միջերը որպես տեղեկատվական պատերազմների միջոց». *21-րդ դար տեղեկատվական-վերլուծական հանդես, թիվ 3*, Երևան, 2008, էջ 123-136:

3. Մելքոնյան, Նվարդ, Ասրիյան, Էլինա. «Հայաստանյան «թավշյա» հեղափոխության միջերը», *Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն», թիվ 3 (27)*, Երևան, 2018, էջ 74-83:

4. Սարգսյան, Չարուհի, «Հին և նոր միջերի պայքարը 1990-ականների առաջին կեսի Հայաստանյան մամուլում», *Ժուռնալիստիկա և հաղորդակցություն. Տեսության և պատմության հարցեր թիվ 13*, Երևան, 2018, էջ 204-213 :

5. Жирарде, Рауль, «*Политические мифы и мифологии. Политическая наука*». Теоретико-методологические и историко-культурные исследования. Москва., 1996, стр. 47-54:

6. Լևոն, Տեր-Պետրոսյան. «Ականատեսի հուշերը. Ընտրությունները Հայաստանում 1990-2013». *YouTube*, 19 փետրվար 2021, https://www.youtube.com/watch?v=joV_Y6oLtHk
7. Վազգեն, Սարգսյան. «Վազգեն Սարգսյանը «ցուրտ ու մութ տարիների մասին, 1996». *YouTube*, 22 հոկտեմբեր 2020, <https://www.youtube.com/watch?v=dyzhHX4WL3s>
8. Սերժ, Սարգսյան. «Վարչապետ Սերժ Սարգսյանի բացառիկ հարցազրույցը «Շանթ» հեռուստաընկերությանը». *YouTube*, 19 ապրիլ 2018, <https://www.youtube.com/watch?v=oxR7ZIM8mcl&t=1s>

WORKS CITED

1. Demirtsyan, Movses. Mify' jhamanakacic Hayastani qaghaghakan hamakargum, [Myth in the Modern Political System of Armenia] 2020. (In Armenian).
2. Girardet, Raul. Politicheskije mify I mifologii. Politicheskaya nauka, [Political Myths and Mythologies. Political Science] 1996. (In Russian)
3. Hovhannisyan, Vladimir. Qaghaqakan mifery' vorpes teghekatvakan paterazmneri mijoc, [Political Myths as Means of Information War] 2008. (In Armenian).
4. Levon, Ter-Petrosyan. "Akanatesi hushery'. Y'ntrut'yunnery' Hayastanum 1990-2013". *YouTube*, 19 փետրվար 2021, [Memoirs of an Eyewitness. Elections in Armenia 1990-2013] 2021 (In Armenian). https://www.youtube.com/watch?v=joV_Y6oLtHk
5. Melqonyan, Nvard, Asriyan, E'lina. Hayastanyan tavshya heghap'oxut'yan mifer y', [The Myths of Armenian «Velvet» Revolution] 2018. (In Armenian)
6. Sargsyan, Zaruhi. Hin & nor miferi payqary' 1990-akanneri arajin kesi Hayastanyan mamulum, [Mythical Struggle of the Old and New in the Ppress in the Early 1990s] 2018. (In Armenian)
7. Serjh, Sargsyan. "Varchapet Serjh Sargsyani bacar'ik harcazruycy' «Shant'» her'ustay'nkerut'yany". *YouTube*, 19 april 2018, [Prime Minister Serzh Sargsyan's Exclusive Interview to Shant TV] 2018 (In Armenian). <https://www.youtube.com/watch?v=oxR7ZIM8mcl&t=1s>
8. Vazgen, Sargsyan. Vazgen Sargsyany' «curt u mut'tarineri masin, 1996». *YouTube*, 22 hoktember 2020, ["Vazgen Sargsyan about the "Cold and Dark Years, 1996"] 2020 (In Armenian), <https://www.youtube.com/watch?v=dyzhHX4WL3s>

MYTH ABOUT CONSPIRACY IN ARMENIAN POLITICAL SECTOR (BY THE EXAMPLE OF THE ARTSAKH CONFLICT)

LIANA MARTIROSYAN

*Yerevan State University, Faculty of Journalism,
Chair of Communication and New Media, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of this article is to use the example of the Karabakh conflict to reveal the essence of the conspiracy myth and its influence in political elections.

The task of the work is to identify manipulative technologies and tools that are used to achieve power.

The work was written using the methods of historical analysis and comparison of facts.

Summing up this article, we can argue that the conspiracy myth is a tool that, by influencing the public consciousness, traps them in an information trap, controls social behavior and pushes them to certain actions. These myths are used in politics as a form of communication between society and a political subject.

Their use becomes important during the socio-cultural crises of society, when a person has a problem of orientation and choice.

It became clear from the research that today the myth of conspiracy continues to be the most frequently used political technology in the Republic of Armenia. A striking example of this is the Karabakh conflict, which is often used by political forces as a tool of manipulation to gain power. They are widely used due to modern communication technologies and mass media.

Keywords: *Myth, political environment, civil society, socio-psychological environment, conspiracy myth, media, Karabakh conflict, security.*

МИФ О ЗАГОВОРЕ В АРМЯНСКОМ ПОЛИТИЧЕСКОМ СЕКТОРЕ (НА ПРИМЕРЕ АРЦАХСКОГО КОНФЛИКТА)

ЛИАНА МАРТИРОСЯН

*аспирант кафедры новых медиа и коммуникаций факультета журналистики
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Цель данной статьи – с помощью примера Карабахского конфликта выявить суть мифа заговора и его влияние в политических выборах.

Задачей работы является выявление манипулятивных технологий и инструментов, которые используются для достижения власти.

В ходе работы были использованы и методы исторического анализа и сравнительный метод.

В итоге проведенной работы что мы можем утверждать, что миф о заговоре – это инструмент, который, воздействуя на общественное сознание, заманивает его в информационную ловушку, управляет социальным поведением и подталкивает к определенным действиям. Эти мифы используются в политике как форма коммуникации между обществом и субъектом.

Их использование становится значимым во время социокультурных кризисов общества, когда у личности возникает проблема ориентации и выбора.

Из исследования стало ясно, что на сегодняшний день миф о заговоре продолжает оставаться наиболее часто используемой политической технологией в Республике Армения. Ярким примером этому является Карабахский конфликт, который часто используется политическими силами как инструмент манипуляции для получения власти. Они распространяются благодаря современным коммуникационным технологиям и СМИ.

Ключевые слова: *миф, политическая среда, гражданское общество, социально-психологическая среда, миф о заговоре, СМИ, Карабахский конфликт, безопасность.*

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ



ՍՐԲՈՒՅԻ ՏՅՈՒՄԱՐԸ ԵՎ

ՀԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *¹

ՀՏԴ 821.19(091):364

DOI: 10.52063/25792652-2022.4.15-150

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
nairahambardzumyan@yahoo.com

ՍԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱՆՅԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող,
«Գիտական Արցախ» պարբերականի հայերենի պատասխանատու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
parsadanyansiranush@gmail.com

Սրբուհի Տյուսաբը հայ առաջին վիպասանուհին է: Նրա ստեղծագործության և գործունեության առանցքը կանանց ազատագրության հիմնախնդիրներն էին՝ սոցիալ-տնտեսական, բարեգործական, իրավական, կրթական, քաղաքական և ազգային գիտակցությունը, դրանց դրսևորումները և պաշտպանությունը: Ուսումնասիրության նպատակը «Սրբուհի Տյուսաբը և հայ բարեգործական ընկերությունները» բազմաշերտ նյութի գիտական համակարգումն է, ինչը կարևոր է հայ գրականության պատմության ընթացքի և զարգացման տեսանկյունից: Ուսումնասիրության խնդիրը փաստական և վավերագրական նյութերի հիման վրա Սրբուհի Տյուսաբի հասարակական, բարեգործական և հովանավորչական գործունեության վրա լույս սփռելն է:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է ուսումնասիրվող նյութի միջգիտակարգայնությամբ. այն վերլուծվել է պատմության, գրականագիտության և փոխտփայության միջև փոխադարձ կապերի և առնչությունների համատեքստում՝ կենսագրական, պատմահամեմատական և ֆենոմենոլոգիական մեթոդների կիրառմամբ: Մասնակցելով Կ. Պոլսում հիմնադրված բարեգործական ընկերությունների գործունեությանը և ներգրավվելով որպես գործուն անդամ և ատենապետ՝ Տյուսաբը կազմակերպում էր հանգանակություններ, ներկայացումներ, ցուցահանդեսներ՝ դրանցով նպաստելով ազգի առաջադիմությանը, զարգացմանը, բարեգործական ընկերությունների՝ ճգնաժամային

* Հոդվածը ներկայացվել է 20.10.2022թ., գրախոսվել՝ 21.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

իրավիճակներից դուրսբերմանը: «Սրբուհի Տյուսաբը և հայ բարեգործական ընկերությունները» թեման ուսումնասիրվում է առաջին անգամ: Այն կարևոր է և արդիական ոչ միայն միջգիտակարգայնության, այլև հայագիտության մեջ կանանց հիմնախնդիրների վերլուծության տեսանկյունից:

Հիմնաբառեր՝ Սրբուհի Տյուսաբ, բարեգործական ընկերություններ, Կ. Պոլիս, Պոլ Տյուսաբ, Նազլը Վահան, Հայր Եփրեմ Պողոսեան վարդապետ, օսմանյան կայսրություն:

Նախաբան

1859 թվականին Օրթապյուղի Հռիփսիմյան վարժարանի հիմնադրմանը զուգահեռ տեղի հայ կանայք վարժարանի կարիքները հոգալու նպատակով հիմնում են «Խնամակալուհի Տիկնայք»¹ ընկերությունը, որը, ըստ Վիեննայի Մխիթարյան միաբանության Հայր Եփրեմ վարդապետ Պողոսյանի (Պողոսեան 189-190), ունեցել է տարբեր անվանումներ՝ «Տիկնայց Խնամակալութիւն», «Խնամակալ Տիկնայք» («Մուսայք Մասեաց» 79) կամ «Խնամակալուհի Տիկնայք» («Մասիս» 811):

Հայր Եփրեմ Պողոսյանը «Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու» (Պողոսեան 189-190) եռագրության առաջին հատորում գրում է, թե 1859 թվականին հայոց պատվավոր տիկնայք, Սրբուհի Վահանյանի մոր՝ Նազլը Վահանի² գլխավորությամբ, ստեղծել են «Խնամակալուհի տիկնայք» միությունը, իսկ 1864 թվականին, Նույն տիկնայք հիմնադրել են «Աղքատախնամ Տիկնանց Ընկերությունը» (Համբարձումյան 35-43): Սրբուհին եղել է այս ընկերության օգնական ատենադպիրը և աջակցել է մորը, մասնակցել է տարբեր միջոցառումների կազմակերպմանը և դրանցից մեկի ժամանակ հանդես է եկել ճառով: Այդ տարիներին է, որ նրա մեջ ձևավորվում է համարձակ և սկզբունքային մտավորականը, որի լավագույն հավաստումը հետևյալ դեպքն է. 1865 թվականին Չմյուռնիայում տպագրվող «Ծաղիկ» («Ծաղիկ» 107) հանդեսի խմբագիր Գրիգոր Չիլիսկիրյանը ամբաստանվել է և հալածանքների ենթարկվել «Ժեռն-ժաններու պարահանդեսը»³ ֆեյխտոնը տպագրելու համար, որում ներկայացվում էին գլյուռնահայ բարձրատոհմիկ քաղքենի երիտասարդության վարքագիծն ու վայելքները՝ իբրև *պատվավոր քաղաքացիների անհատական և ընտանեկան պատիվը նվաստացնող* (Խառատյան 81), և բանտարկվում է⁴:

Մատթեոս Մամուրյանի (Վրույր) ուշադրությունը այդ ընթացքում գրավում է մի *գեղանի և աշխույժ օրհորդ*՝ Սրբուհի Վահանյանը, ով գայրույթով դատապարտում էր Չիլիսկիրյանի հակառակորդներին՝ «Գեղադեմ օրհորդին այս պարզ ու իմաստալից խորհրդածությունները լսելով՝ գետնե գետին անցա, մերթ կզմայլեի անոր

¹ «Խնամակալուհի Տիկնայք» ընկերության ներկայացուցիչները 1864 թվականին հիմնում են նաև Օրթապյուղի «Աղքատախնամ Ընկերութիւն Տիկնանց»-ը:

² Ժամանակակիցները, տարբեր առիթներով, համակրանքով են խոսել Նազլը Վահանի հանրային գործունեության մասին: Մասնավորապես Ա. Արփիարյանը (Հրազդան) Նազլը Վահանի մահվան առիթով գրած ջրոնիկներում նրա դագաղի վրա գրված պատկերը համարում է «Պոյսո հայոց հանրային վշտին» արտահայտությունները: Մեկ այլ առիթով Արփիարյանը խոսում է Սրբուհի Տյուսաբի մոր ազնիվ սրտի ու ոգու մասին:

³ Ալբերտ Խառատյանի կարծիքով՝ ֆեյխտոնի հեղինակը ինքը՝ Գրիգոր Չիլիսկիրյանն էր, ով գրում էր. «Մեր ձեռքը գրիչն էր, իսկ անոնց ձեռքը՝ բռնություն» («Ծաղիկ» 107): Չիլիսկիրյանը «Ծաղիկ»-ը տեղափոխեց Կ. Պոլիս և 109-րդ համարից ակսած տպագրեց այստեղ:

⁴ Մատթեոս Մամուրյանը գրում է, թե ֆեյխտոնում այնպիսի բան գրված չէր, որի համար պատժի ենթարկեին Չիլիսկիրյանին, ինչը ենթադրվում էր դրանից երեք ամիս առաջ գործողության մեջ մտած մամուլի օրենքով, այլ դա արել է Չմյուռնիայի երևելիների ժողովը, որը իրավասություններ չունեի դատելու («Մասիս» 2):

անկեղծության և հզամիռի կանայքը պաշտպանելու և երիտասարդությունը դատապարտելու երկսայրի լեզվին վրա, մերթ կարտմտեի, որ նորաբույս կույս մը մեզնե ավելի ազատամիտ՝ մեզի կանացի բնության վրա դաս տալու կհանդգնի...» (Մամուրյան 56), - գրում է նա:

Սրբուհի Վահանյանից՝ Սրբուհի Տյուսաբ

1869 (կամ 1870) թվականին Սրբուհին այն ժամանակվա հայ կանանց համար բավականին ուշ՝ երեսուն տարեկանում, ամուսնանում է երաժշտության ուսուցիչ, խմբավար, երաժշտագետ, Տյուսաբի բնութագրումով՝ *ամուսիններուն լավագույնի*, ֆրանսիացի դաշնակահար Պոլ Տյուսաբի¹ հետ, ով սուլթանական արքունիքի երաժշտախմբի ղեկավարն էր: Ժամանակակիցների կողմից Պոլ Տյուսաբը հիշատակվում է *բեյ* կամ *փաշա* տիտղոսներով: Սրբուհի Վահանյանը *Տյուսաբ* ազգանունով սկսում է ստորագրել 1871 թվականից՝ ամուսնությունից հետո: Ամուսինը և նոր ձեռք բերված ամուսնական և ծնողական պարտականությունները ոչ միայն չեն խանգարել Սրբուհուն՝ զբաղվելու հասարակական գործունեությամբ, այլև Պոլ Տյուսաբը ամեն կերպ օգնել է, որպեսզի նա կայանա որպես վիպասանուհի՝ «հոգվույս պետքը հասկցած, քաջալերած և կերպով մի Սորս ընթացքը շարունակած ըլլալուն համար» (Շարուրյան 32, Տյուսաբ (ա) 3): Բացի մորից Սրբուհին նաեւ ամուսնու՝ իր երաժշտության ուսուցիչ, ֆրանսիացի դաշնակահար Պոլ Տյուսաբի հետ էր մշակութային միջավայր ապահովում: 1870-ական թվականներին Սրբուհի Տյուսաբը զբաղվում է իր զավակների՝ Դորիի (Դորոթեա) և Էդգարի (Էթեն) դաստիարակությամբ:

Այդ տարիներին նրանց տուն այցելում և նրանց տանը հավաքվում էին Պոլսի հայ և եվրոպացի մտավորականները ու արվեստագետները, ազատական հայացքների տեր հանրային գործիչներ և գրուցում ու քննարկում էին գրական ու հասարակական տարբեր հարցերի շուրջ: Այդ հավաքատեղին եվրոպական ոճի սալոն էր հիշեցնում: Շփվելով հասարակական տարբեր խավերի հետ, շատ լավ ճանաչելով հասարակության հոգեբանությունը և խնդիրները՝ որպես մտածող, նրբամիտ ստեղծագործող Տյուսաբը չէր կարող աննկատ թողնել այն երևույթները, որոնք խոչընդոտում էին հասարակության զարգացմանն ու առողջացմանը՝ «Իր «սալոն»ը ֆրանսիական գրական սալոններու համբաւը կը վայելէր, որ կը հաւաքուէին հայ թէ ֆրանսացի մտաւորականներ, գրական հարցերու եւ այլ խնդիրներու շուրջ խօսելու եւ վիճելու համար» (Թեօթեյան 20):

Գրական-հասարակական գործունեությունը

1869 թվականին Սրբուհի Տյուսաբը մեկնում է Փարիզ, ծանոթանում և կապեր հաստատում ֆրանսիացի հայտնի խմբագիր և հրապարակախոս Ժյուլիետա Ադանի, կոմպոզիտորներ Շառլ Գուևոյի, Ամարուազ Թոմայի (Շարուրյան 210) և այլոց հետ: 1879 թվականի մայիսի 1-ին Կ. Պոլսում, Օրթագյուղի Զոփոսիմյան վարժարանի

¹ Պոլ Տյուսաբը ծնվել է 1840 թվականին: Ըստ որոշ այլ աղբյուրների՝ 1834 թվականին. «Ճննդյան թուականը նշուած է 1840, իսկ մահուան թուականը՝ 1922, որ կը համապատասխանէ Ֆերիզիդի Լատին Կաթողիկէ գերեզմանատան արձանագրութեան, ուր կը կարդանք թէ Փոլ Տիւսաբի յուղարկաւորութիւնը եւ թաղումը տեղի ունեցած է 28 Օգոստոս 1922ին: Փոլ Տիւսաբի յուղարկաւորութեան առթիւ Բերայի Սանթա Մարիա Տրաբերիս եկեղեցւոյ մահատոմարին մէջ կը նշուի թէ Փոլ Տիւսաբ մեռաւ 88 տարու: Ուրեմն իր ծննդեան թուականն ալ պետք է ըլլայ 1834» (Սարըասլան 3): Բնակվել է Բեյոլյու թաղամասի, Ժուռնալ փողոցում, դաշնակահար Ֆուրլանիի տանը: Մահացել է 88 տարեկանում, 1922 թվականին: Նա արքունական նվագախմբի ղեկավարն էր և Աբդուլ Յամիդին ձեռնարկած «Կայսերական Զայեդգի» հեղինակը:

սանուհիների և հովանավորյալ մի քանի կանանց նախաձեռնությամբ, հայ աղջիկների կրթության և դաստիարակության գործին նպաստելու և վարժուհիներ պատրաստելու նպատակով ստեղծվում է «*Դպրոցատեր Տիկնանց Ընկերությունը*» (Համբարձումյան 35-43), որը սկզբում կոչվում էր «Դպրոցատեր Հայուհեաց Ընկերություն»։ Ընկերության հիմնադիրներն էին տիկին Նազը Վահանը, Սրբուհի Տյուսաբը, տիկին Թագուհի Պալտազարյանը, օրհորդ Նուրիկ Սիմոնյանը և Չապել Ասատուրը։ Սրբուհի Տյուսաբը և նրա մայրը՝ Նազը Վահանը, մեծապես աջակցել են նաև կազմակերպական աշխատանքներին¹։ Ընկերության պատվավոր նախագահն էր Կոնստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանը, ապա՝ պատրիարք Հարություն Վեհապետյանը, պատվավոր անդամներն էին Հովհաննես Այվազովսկին, Գրիգոր Զիլինկիրյանը, Սրբուհի Տյուսաբը և ուրիշներ։

1879 թվականի նոյեմբերի 5-ին բացվում է «Դպրոցատեր Տիկնանց Ընկերության» վարժարանը, որը 1880 թվականի վերջին ուներ արդեն երեսուհինգ աշակերտուհի։ Վարժարանը գործում է մինչ օրս։ Ընկերության կողմից բացված «*Դպրոցատեր*» վարժարանի կրթական ծրագիրը նախատեսում էր երկու տարվա նախապատրաստական և հինգ տարվա նախակրթական դասընթաց։ 1882 թվականին ընկերությունը Կ. Պոլսում կազմակերպում է առաջին հայկական գեղարվեստական ցուցահանդեսը Հովհաննես Այվազովսկու մասնակցությամբ²։

Սրբուհի Տյուսաբը հասարակական կյանք լիարժեքորեն մուտք գործեց 1880-ական թվականներին։ 1880 թվականի մայիսից Տյուսաբը «*Դպրոցատեր Հայուհյաց*» բարեգործական ընկերության գործուն անդամներից էր, Ընդհանուր ժողովի ատենապետը և փորձում էր հայթայթել ընկերության համար անհրաժեշտ միջոցները։ Կազմակերպել է նաև հանգանակություններ, ներկայացումներ, ցուցահանդեսներ։ Սրբուհի Տյուսաբին հաջողվել է ընկերությունը դուրս բերել ճգնաժամից և զարգացման հունի մեջ դնել։ Ժամանակակիցները նրան համարում էին *Դպրոցասիրաց հոգին* (Զիլինկիրյան 125), իսկ նրա՝ իբրև ընկերության ատենապետուհու հրաժարականը հավասար էր ընկերության լուծարմանը։ 1882 թվականի հուլիսի 25-ին ամուսնու՝ Պոլ Տյուսաբի հետ ներկա է եղել Արծրունյան վարժարանի սաների մրցանակաբաշխության հանդեսին և տեսնելով վարժարանի անմխիթար վիճակը՝ հանդեսից հետո հազար հինգ հարյուր դուրոշ է հանգանակել։

1880 թվականին Տյուսաբը հրատարակում է «*Աշխարհաբառ հայ լեզուն*» փոքրիկ, տասնհինգ էջանոց գրքույկը (Տյուսաբ (բ) 15), որը, ըստ էության, մեկ հոդվածի արժեք ունի, և որում արձագանքելով գրապայքարին՝ պաշտպանում էր աշխարհաբարի շահերը։ Գրքույկի վաճառքից ստացված ամբողջ հասույթը տրամադրում է ընկերությանը։ Տյուսաբի ժամանակակիցները թեպետ նրան անվանում էին *ազգասեր*, սակայն ինքն առավել համեստ էր՝ ասելով, թե պարզապես

¹ Ընկերության միջոցները ստեղծվում էին անդամավճարներից, նվիրատվություններից։ Ընկերությանն անդամագրվել կարող էին չափափաս կանայք և օրհորդները, եթե ընդհանուր ժողովի անդամների մեծամասնությունը տալիս էր իր համաձայնությունը։ Անդամակցության ամսական անդամավճարը մեկ դուրուշն էր։ Ընկերությանը կարող էին անդամակցել նաև տղամարդիկ, սակայն նրանք քվեարկության իրավունք չունեին։ Հիմնադրման պահին ընկերությունն ունեցել է 37, իսկ տարեվերջին՝ 380 անդամ (Պողոսեան, էջ 250)։

² Ըստ ականատեսների վկայության՝ Սրբուհի Տյուսաբը այնքան էր տարված ընկերության համար ֆինանսական միջոցներ հայթայթելու հարցերով, որ ցուցահանդեսներից մեկի ժամանակ հաջողում է վաճառել Հովհաննես Այվազովսկու կտավներից և ողջ հասույթը փոխանցում է ընկերության ֆոնդին։ Ֆինանսական միջոցներ հայթայթելու նպատակով ընկերությունը ժամանակ առ ժամանակ կազմակերպել է նաև բարեգործական պարահանդեսներ։ «*Դպրոցատեր Հայուհեաց ընկերությունը*» ուներ նաև կանոնադրություն՝ բաղկացած երեսուներեք հոդվածից։ Ընկերության բարձրագույն մարմինը՝ Ընդհանուր ժողովն էր, գլխավոր ատենադպիրը՝ տիկին Աննա Չայանը, իսկ Գործադիր ժողովի ղեկավարը՝ օրհորդ Թագուհի Պալտազարյանը։

հայուհի մ' է, ով դույզն-ինչ աշխատում է հոգուտ ազգի, ինչպես աշխատում են մյուս հայուհիները: Չափազանց զուսպ այս ինքնազնահատականը ընդվզումի և հիացումի զգացումներ է առաջացնում, քանի որ Տյուսաբի անկեղծությունը ստիպում է հարգել նրան ու նաև պարտավորեցնում է, քանի որ նրա շնորհիվ մեծ առաջընթաց էր ապրում նաև *հայ կինը*:

Սրբուհի Տյուսաբը կազմակերպում էր գրական-մշակութային միջոցառումներ, երեկոյթներ, ճաշկերույթներ, ցուցահանդեսներ, երաժշտական, թատերական ներկայացումներ, մտավոր և կյուլթական օգնություն էր ցուցաբերում դպրոցներին, Գալֆայան որբանոցին, ուսուցիչներին, աշակերտներին: «Իր հոգին գթութեամբ լեցուն էր իր սեռին նկատմամբ, գրեց անոր համար, խօսեցաւ անոր համար, գործեց անոր համար, «Դպրոցասեր Տիկնանց» գլուխը անցնելով: Կնոջ տխուր վիճակը իր մտքի լլկանքն էր: Կը տառապէր տեսնելով աղքատ կինը, լքեալ կինը, խաբուած կինը, ինկած կինը» (Սիպիլ 3):

1880-ական թվականներին ծանր իրավիճակում էին հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Դպրոցների և կրթական-լուսավորական ընկերությունների հիմնադրումը դառնում էր առաջնակարգ նշանակություն: Դրանք այն եզակի ապաստարաններից էին, որոնցում այս կամ այն կերպ կարող էին ինքնուրույն գոյություն ունենալ հայոց լեզուն և հայ մշակույթը: Այդ փաստը գիտակցում էին հայ մտավորականության ներկայացուցիչները, և բնավ պատահական չէ, որ նրանցից շատերը՝ Յակոբ Պարոնյանը, Գրիգոր Չոհրապը, Արփիար Արփիարյանը, Մատթեոս Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը, գլխավորում էին լուսավորական ընկերությունների և կրթական հաստատությունների աշխատանքները: 1880 թվականին Տյուսաբը նույնպես ամբողջովին ներգրավվել էր հասարակական գործունեության մեջ:

1882 թվականի «Արեւելեան մամուլի» 6-րդ համարում տպագրվում է Սրբուհի Տյուսաբի «Հայ ընկերությունը» (Տյուսաբ (գ) 244-251) հրապարակախոսական հինգ հոդվածներից վերջինը: Այն գրված է Գրիգոր Չիլինկիրյանի խնդրանքով և հստակեցնում է Տյուսաբի հայացքը կրթական-լուսավորական ընկերությունների մասին: Հոդվածից առաջ տպագրվել է Չիլինկիրյանի նամակ-խնդրանքը (Տյուսաբ (գ) 241-244), որը հեղինակը խնդրել է տպագրել «Արեւելեան մամուլի» խմբագրին՝ «Ազնիւ Մամուրեան, Տիկին Սրբուհի Տիւսաբ՝ խնդրանացս համեմատ՝ բարեհաճեր է ազգային ընկերութեանց վրայ իր կարծիքը յայտնելու նամակածն յօդուածի մը մէջ, և արտօնութիւն տուեր է ինձ հարատարակութեան յանձնելու զայն՝ եթէ յարմար դատեմ, կամ պատռելու յարմար համարիմ: <...> Անհնարինը ֆրանսերէն չէ, կ'ըսէ գաղիացին: Ահա գաղափար մ' որ կրնայ ազգերու ճակատագիրը յեղաշրջել, թե՛ մէն մի անհատի կենաց անողորքել կանոններուն մին ըլլայ: Հրէից համար հնարինը Հայոց համար անհնարին համարիլ մեր ազգային արժանապատուութեան զգացումը վիրաւորել է, և ահա ինձ ուղղուած յօդուածին կորովամիտ հեղինակն իրաւունք ունի իր առաջարկութեան գործադրութիւնը հնարին կարծելու և ընկերութեանց ծանր ուշադրութիւնը այս կետին վրայ հրաւիրելու: Ինչ որ մարդկային է՝ հնարին է, և ինչ որ հնարին է՝ գործադրելի է, եթէ գործելու յանձնառու անհատական կամքեր միանան: <...> Տաղանդաւոր արմենուհի մ' այսօր կը կատարէ այս պարտքը՝ գրելով ընտիր յօդուած մը գոր քեզ կը դրկեմ՝ որպէս զի հաճիս Արեւելեան Մամուլ սեզ Էջերը անոր նուիրելու: Գր. Չիլինկիրեան» (Տյուսաբ (գ) 243-244):

«Հայ ընկերությունը» հոդվածում Տյուսաբը փորձում էր պատասխանել հարցին, թե ինչպե՞ս է հնարավոր զարգացնել հայ ընկերությունների աշխատանքը, որոնք զուրկ էին կյուլթական միջոցներից և ենթարկվում էին հալածանքների, թեև տարիներ շարունակ բազում ընկերություններ են ծնվում ու անհետանում, և չնայած *զանազան արգելից և դժվարությամբ*, դրանց գործը չի կորչում, քանի որ «հառաջադիմական սկզբունքն երբեք չմեռնիր և լուսավորության շենքերու փլատակաց ներքև ուր նույնիսկ մահ կը մակաբերվի, կյանք կա» (Տյուսաբ (գ) 245):

1880 թվականի սեպտեմբերին Տյուսաբը պատրիարք Ներսես Վարժապետյանին առաջարկել էր յուրաքանչյուր ընտանիքից ըստ կարողության գանձել որոշակի տուրք, որով հնարավոր կլիներ Կ.Պոլսում բացել մի կենտրոնական վարժարան՝ «տեղացի և պանդուխտ հայ աղջիկներին ուսում տալու համար» («Մասիս» 2): «Հայ ընկերությունը» հողվածում Տյուսաբը կրկնում է այն՝ «...Եթե ամեն Հայե տարեկան տուրք մ'առնվի, մեծ և որոշ հասույթ մի կը գոյանա, որով մեր ընկերությանց վիճակը կ'ապահովի, գործող անձանց եռանդը կարծարծի՝ երբ անոնք ստույգ սիջոցներ կը տեսնեն» (Տյուսաբ (գ) 250): Եվ այդ ամենը մի նպատակով՝ *դպրոցները բազմացնելը, լույս ծավալվի ամենուրեք*: Այդ առաջարկը թեև չիրագործվեց, սակայն Տյուսաբը դրանից չիրաժարվեց: Ավելին, այն հավանության արժանացավ բոլորի կողմից: Չմյուռնիայում այս հանգամանքին արձագանքեց Գր. Չիլինկիրյանը՝ ցանկություն հայտնելով, որ Տյուսաբի գաղափարները «ամեն հայաբնակ երկիրներու մեջ հռչակվեին և տարածվեին այն ամեն գրագետներու և խմբագիրներու կողմեն, որք իրենց գրիչը միայն դրամ շահելու համար չեն շարժեր» (Տյուսաբ (գ) 245): Այս գաղափար-առաջարկը թեև գործնական կիրառում չգտավ, սակայն եղել և մնում է Տյուսաբի *լուսավորական ծրագրի կարևորագույն և հանգուցային կետը*:

1880-ական թվականներին սուլթանական կայսրության պատմության մեջ սկսվել էին սարսափներով լի ժամանակներ: Հայության վիճակը ծանր էր: Գավառներում մոլեզնում էր սովը, մարդիկ գաղթում էին: Համիդյան բռնապետությունը խեղդում էր ամեն տեսակ ազատ խոսք և գաղափար: Փակվել էր հայոց թատրոնը, արգելվել էին հայոց թագավորների և զորավարների նկարների, ազգային երգարանների տպագրությունը, հայրենասիրական բանաստեղծությունների արտասանությունը: Ամեն ինչ ենթարկվում էր գրաքննության:

Սրբուհի Տյուսաբի ոչ միայն գեղարվեստական, այլև հրապարակախոսական գործունեությունը սկսվում է 1880-1882 թվականների Կ. Պոլսի և Չմյուռնիայի մամուլում տպագրած հոդվածներից: 1887 թվականից հետո քրոնիկական գլխացավերի պատճառով դադարել է զբաղվել գրական գործունեությամբ, սակայն շարունակել է հանգանակություններ կատարել «*Դպրոցասեր Տիկնանց*» ընկերության և *Երզնկայի դպրոցի* օգտին, օժանդակել է *Գալֆայան որբանոցին*, այցելել մի շարք դպրոցներ: Նրա շնորհիվ Հովհաննես Այվազովսկու նկարներից մեկը դրվում է Միացյալ ընկերության աճուրդի:

Սրբուհի Տյուսաբը 1887-1889 թվականներին ստանձնել էր նաև *Ասիական ընկերության* լսարանի հովանավորությունը: Այստեղ կարդացվում էին զանազան բանախոսություններ՝ հօգուտ այդ ընկերության, կազմակերպվում էին գրական-երաժշտական հանդեսներ: Բացի ֆրանսիացի նշանավոր գործիչներից Սրբուհի Տյուսաբը մտերմություն է ունեցել տարբեր հայ մտավորականների հետ՝ Պետրոս Աղամյան, Գևորգ Ապտուլլահյան, Գրիգոր Չիլինկիրյան և այլք:

Եզրակացություն

Սրբուհի Տյուսաբը ստեղծագործել է հազիվ տասը տարի, սակայն այդ տասնամյակը կարևոր է հայ գրականության պատմության զարգացման օրինաչափությունների տեսանկյունից: Տյուսաբի ստեղծագործության առանցքը կանանց ազատագրության հիմնախնդիրներն էին՝ սոցիալ-տնտեսական, իրավական, կրթական, քաղաքական և ազգային գիտակցությունը, դրանց դրսևորումները և պաշտպանությունը: Տյուսաբը փորձում էր հիմնավորել նաև ազատագրության կարևոր նախապայմանը՝ աշխատանքի գաղափարը, որը անկախություն կապահովեր կնոջ համար:

19-րդ դարավերջի հայ մշակույթի պատմության բացառիկ երևույթներից էր Սրբուհի Տյուսաբը, ով կարողացավ ներդաշնակել կնոջ կարևորագույն սոցիալական

դերը՝ լինելով առաջին հայ վիպասանուհին և հասարակական գործիչը: Ուսումնասիրելով Տյուսաբ-մտավորականի կյանքը, գրական և հասարակական գործունեությանը՝ հավաստիանում ենք, որ առաջին հայ արձակագրուհու, հրապարակախոսի, մտավորականի և հասարակական գործչի մտավոր կարողությունները և կյանքը սովորական չէին: Ուշագրավ է, որ հայ գրականության և մշակույթի պատմությունների մեջ Սրբուհի Տյուսաբը կարողացավ ներդաշնակել կնոջ բոլոր դերակատարումները՝ *ընտանեկան, մտավորական, գրողական, սոցիալ-հասարակական*:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թեօլեօլեան, Գոհար. «Կիներու հերկը մեր գրականութեան մեջ. Սրբուհի Տյուսաբ». «Հայ սիրտ», պարբերաբերթ հայ օգնութեան միութեան, Բոստոն, 1964, թիւ 1:
2. Խառնաշայն, Ալբերտ. *Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908)*. ՀԽՍՀ ԳԱ Պատմ. ինստ, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1989:
3. «Ծաղիկ». Չմյուռնիա, 1865, թիւ 107:
4. Համբարձումյան, Նաիրա. Կ. Պոլիսի հայոց բարեգործական ընկերությունների և վարժարանների դերակատարությունը կանանց ազատագրության գործընթացներում 19-րդ դարի երկրորդ կեսին». «Գիտական Արցախ» Երևան, 2021, թիւ 4(11):
5. «Մասիս». Կ. Պոլիս, 1865, 27 մարտի:
6. «Մասիս». Կ. Պոլիս, 1867, թիւ 811:
7. «Մասիս». Կ. Պոլիս, 1880, թիւ 2712:
8. Մամուրյան, Մատթեոս. *Հայկական Նամակակի*. Չմյուռնիա, 1872:
9. «Մուսայր Մասեաց». Կ. Պոլիս, թիւ 1858:
10. Շարուրյան, Ալբերտ. *Սրբուհի Տյուսաբ. կյանքը և ստեղծագունծությունը*. Երևան, 1963:
11. Չիլինկիրյան, Գրիգոր. *Ուղեորութիւնն ի Կոստանդնուպոլիս*. Չմյուռնիա, 1883:
12. Պողոսեան, Հայր Եփրեմ Վարդապետ. *Պատմութիւնն հայ մշակութային ընկերութիւններու*. Կ. Ա, Մխիթարեան տպարան, Վիեննա, 1957:
13. Սարըապան, Ինգա. «Սրբուհի Տյուսաբին հետքերուն վրայ». «Մարմարա», 2006, 29 սեպտեմբերի:
14. Սիպիլ. «Այդ տաղանդաւոր կինը՝ Սրբուհի Տյուսաբ». «Մարմարա», Կ. Պոլիս, 2006, 27 սեպտեմբերի:
15. Տյուսաբ, Սրբուհի. *(ա) Երկեր*. Երևան, 1953:
16. Տյուսաբ, Սրբուհի. *(բ) Աշխարհաբար հայ լեզուն*. Կ. Պոլիս, 1880:
17. Տյուսաբ, Սրբուհի. *(գ) «Հայ ընկերութիւնը»*. «Արևելյան մամուլ», Չմյուռնիա, 1882, թիւ 6:

WORKS CITED

1. T'e'o'leo'lean Gohar, «Kineru herky' mer grakanutean mej. Srбуhi Tyusab» [Ploughing of Women in our Literature. Srбуhi Tusab], «Hay Sirt»: parberat'ert' Hay Ognutean miutean, Boston, 1964, no 1. (In Western Armenian)
2. Xaratyan, Albert, Arevmtahay parberakan mamuly' ev graqnadatumyuny' Osmanyan Turqiayum (1857-1908) [Western Armenian Periodical Press and Sensorship in Ottoman Turkey (1857-1908)], HXSH GA Patm. inst, Erevan, HXSH GA hrat., 1989:
3. «Caxik», Zmyurnia, 1865, no 107. (In Armenian)
4. Hambardzumyan, Naira, «K. Polsi hayoc baregorc'akan y'nkerut'yunneri ev varjharanneri derakatarut'yuny' kananc azatagrut'yan gorc'y'nt'acnerum 19-rd dari erkrotd

kesin», «Gitakan Artsakh» ["The Role of Armenian Charitable Societies and Schools in Constantinople in the Processes of Women's Emansipation in the Second half of the 19th century"], Yerevan, 2021, no 4(11). (In Armenian)

5. «Masis», 1865, Constantinople, 27 March. (In Armenian)
6. «Masis», 1867, Constantinople, no 811. (In Armenian)
7. «Masis», 1880, Constantinople, no 2712. (In Armenian)
8. Mamurean, Matteos, Haykakan namakani (Armenian Letters), Zmyurnia, 1872. (In Armenian)
9. «Musayq Maseac», Constantinople, no 1858 (In Western Armenian).
10. Sharuryan, Albert, Srбуhi Tyusab. Kyanqy ev steghcagorcut'yuny' [Srбуhi Tyusab: Life and Work], Yerevan, 1963 (In Eastern Armenian).
11. Chilinkirian, Grigor, Oughevorout'yun i Kostandnupolis [Travel to Constantinople], Zmyurnia, 1883 (In Western Armenian).
12. Poghosean, F. Eprem V., Patmut'iun hay mshakout'ayin y'nkerout'iunnerou [History of Armenian Cultural Societies], Vienna, vol. A, 1957 (In Western Armenian).
13. Saryaslan, Inga, «Srбуhi Tyusabin hetqerun vray» [On the Footsteps of Srбуhi Tyusab], «Marmara», 2006 (In Western Armenian).
14. Sipil, «Ayd taghandawor kiny` Srбуhi Tyusab» [That Talented Woman, Srбуhi Tusab], «Marmara», Constantinople, 2006 (In Western Armenian).
15. Tyusab Srбуhi, (a) Yerker [Works], Yerevan, 1953 (In Western Armenian).
16. Tyusab Srбуhi, (b) «Ashxarhabar hay lezun» [The New Armenian language], Constantinople, 1880 (In Western Armenian).
17. Tyusab Srбуhi, (g) «Hay y'nkerut'iwnq» [Armenian Organizations], «Arevelean Mamul», Zmyurnia, 1882, no 6 (In Western Armenian).

SRBUHI TYUSAB AND ARMENIAN CHARITIES

NAIRA HAMBARDZUMYAN

*Academy of Sciences of Republic of Armenia, Institute of Literature after Manuk Abeghian, Ph.D. in Philology, Associate Professor
Yerevan, the Republic of Armenia*

SIRANUSH PARSADANYAN

*Academy of Sciences of Republic of Armenia, Institute of Literature after Manuk Abeghian, Junior Research Fellow, Journal «Scientific Artsakh»,
Responsible for Armenian,
Yerevan, the Republic of Armenia*

Srбуhi Tyusab is the first Armenian woman-novelist. The core of her work and activity was the issues of women's emancipation: socio-economic, charitable, legal, educational, political, and national consciousness, their manifestations and protection. The *aim* of the study is the scientific systemization of the multi-layered material "Srбуhi Tyusab and Armenian Charities", which is important from the angle of the development and course of the history of the Armenian literature. The *problem* of the study is to shed light on Srбуhi Tyusab's social, charitable and sponsorship activities based on factual and documentary materials. The *actuality* of the study lies in its interdisciplinarity, according to which the material was analyzed in the context of mutual connections between literary studies, history and philosophy. *Biographical, historical-comparative and phenomenological methods were used.* Participating in the activities of charities founded in Constantinople, being involved as an active member and chairwoman, Tyusab organized fundraisers, performances, and exhibitions, thus contributing to the progress

and development of the nation and the recovery of charities from crisis. This kind of study has been attempted for the first time. It is important and actual not only in terms of interdisciplinarity, but also in terms of the analysis of women's issues in Armenian Studies.

Keywords: *Srbuhi Tyusab, Charities, Constantinople, Pol Tyusab, Nazl Vahan, Father Yeprem Boghosyan, Ottoman Empire.*

СРБУИ ТЮСАБ И АРМЯНСКИЕ БЛАГОТВОРИТЕЛЬНЫЕ ОРГАНИЗАЦИИ

НАИРА АМБАРЦУМЯН

*старший научный сотрудник
Института литературы имени Манука Абеяна
Академии Наук Республики Армения,
кандидат филологических наук, доцент
г. Ереван, Республика Армения*

СИРАНУШ ПАРСАДАНЯН

*младший научный сотрудник Института литературы имени
Манука Абеяна, Академии Наук Республики Армения,
Ответственный за армянский язык журнала «Научный Арцах»,
г. Ереван, Республика Армения*

Србуи Тюсаб – первая армянская женщина-романист. Основу ее творчества и деятельности составляют проблемы женской эмансипации: социально-экономические, благотворительные, правовые, образовательные, политические и связанные с проявлением и защитой национального сознания. *Цель* исследования – научная систематизация многоуровневого материала «Србуи Тюсаб и армянские благотворительные организации», что является важным с точки зрения изучения хода и развития истории армянской литературы. *Задачи* исследования – на основе фактических и документальных материалов раскрыть социальную, благотворительную и спонсорскую деятельность Србуи Тюсаб. Актуальность исследования обусловлена междисциплинарным характером изучаемого материала, который был проанализирован в контексте взаимосвязей и взаимоотношений между такими дисциплинами, как история, литературоведение и философия. Использовались биографический, историко-сравнительный и феноменологический методы.

Выводы: участвуя в качестве активного члена и председателя в деятельности благотворительных организаций, основанных в Константинополе, Тюсаб организовывала сбор пожертвований, спектакли, выставки, тем самым способствуя национальному прогрессу и выводу благотворительных организаций из кризисной ситуации. В таком контексте анализ ее деятельности проводится впервые. Это важно и актуально не только с точки зрения междисциплинарности, но и с точки зрения анализа женского вопроса в арменоведении.

Ключевые слова: *Србуи Тюсаб, благотворительные организации, Константинополь, Пол Тюсаб, Назлу Ваган, архимандрит отец Епрем Погосян, Османская империя.*

СИСТЕМА ИМЕНОВАНИЙ ЖЕНСКИХ ПЕРСОНАЖЕЙ В ХУДОЖЕСТВЕННЫХ ТЕКСТАХ (НА МАТЕРИАЛЕ РОМАНОВ Д.ДЕМИРЧЯНА «ВАРДАНАНК» И Х. АБОВЯНА «РАНЫ АРМЕНИИ») *

УДК 811.161.1

DOI: 10.52063/25792652-2022.4.15-159

ГАЯНЕ ОГАННИСЯН

преподаватель кафедры языков Армянского
государственного экономического университета (АГЭУ),
кандидат филологических наук,
г.Ереван, Республика Армения
gayaneoga@mail.ru

Данная статья посвящена системе именований женских персонажей в романе Д. Демирчяна «Вардананк» и Х. Абовяна «Раны Армении». К числу основных задач исследования относятся: выявление характера функционирования женских антропонимических единиц и изучение особенностей их репрезентации в исследуемых романах. Женская антропонимическая система романов включает в себя определенные модели и формулы именования. Наиболее частотными в исследуемых романах оказались одночленные и вариативные формы двучленных формул, включающие в себя «апеллятивные идентификаторы». Трехчленных формул в текстах не отмечено. Зафиксированные безантропонимные женские номинации несут в контексте как номинативное, так и оценочно-характерологическое свойство. Они характеризуют действующее лицо такими средствами номинации, к которым относятся лексика, указывающая на половозрастную и социальный статус персонажей, кровное и некровное родство, внешние и внутренние черты персонажа и т.д. Применение описательного, структурно-семантического, исторического и стилистического методов дало возможность сделать вывод, что система женских имен в романе Д. К. Демирчяна «Вардананк» и Х. Абовяна «Раны Армении» характеризуется исторически сложившимся составом антропонимов, традициями и нормами употребления, общезыковыми и стилистическими особенностями.

Ключевые слова: антропоним, апеллятив, безантропонимные номинации, модель именования, номен, номинация, формула именования.

Введение

Фиксация системы именований и место, которое занимают в художественной литературе личные имена, композиционно и идейно весьма значимо. Особенно это касается исторических романов, авторы которых использовали подлинные документы, повествуя о далеком прошлом народа.

* Հոդվածը ներկայացվել է 09.11.2022թ., գրախոսվել՝ 16.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

В армянской историографии упомянуты имена царей, князей, их великие и малые подвиги, личная и общественная жизнь, однако сохранилось мало сведений о жизни армянских женщин, их роли в семье и обществе. Позднее формирование женской антропонимической системы и определенная зависимость от мужских имен объясняется их пассивной ролью в обществе, следовательно, и в исторических романах женские имена упоминаются весьма редко.

Основная часть

С целью изучения особенностей репрезентации женских именовании в художественном тексте нами были проанализированы романы Д. Демирчяна «Вардананк» и Х. Абовяна «Раны Армении». В целом в нашем распоряжении оказалось свыше 350 номинативных знаков, при этом только 40 представлены женскими именами, из которых 32 зафиксированы в романе Д. Демирчяна «Вардананк», а 8 – в романе Х. Абовяна «Раны Армении».

Формулы именовании армянских женщин являются подтверждением первичной системы именовании по имени главы семьи и обусловлены их социальным положением в обществе. Определенными знаками именовании армянской женщины в древние времена в сочетании с именем отца служили компоненты *духт* и *ануш*. «В некоторых армянских сложных личных именах в качестве второго составного элемента выступают частицы – *уи* (*uhi*), *духт* (*duxt*), *ануш* (*anous*), имеющие персидское происхождение и означающие «дочь, девочка». Например, Амазаспуи, Тигрануи, Ормиздухт, Вараздухт, Хосровануш и т.д.» (Налбандян 38). Антропонимические компоненты *-духт* и *-ануш* функционируют в основном в художественной литературе, *-ануш* употребляется в реальной антропонимике как в качестве самостоятельного личного имени, так и в качестве составного компонента сложных имен: *Вардануш*, *Айкануш*. Суффикс *-уи* стал антропонимическим суффиксом и грамматическим показателем женского рода в армянских именовании (армянские женские имена могут иметь финали не только на гласный, но и на согласный), который может присоединиться либо к аппелятиву (*Србуи*, *Дихуи*), либо к основе мужского имени (*Тигрануи*, *Амазаспуи* и т.д.).

Большинство женских персонажей, особенно представители знатных семей, в романе «Вардананк» именуется следующими формулами: *номен + имя мужа (жена Нершапуха Арцруни, жена Ашуши)* и *номен + имя сына (мать Гадишо, мать Артака, старая мать Ашуши)*, обозначающие близкие родственные связи с другими поименованными персонажами и именовании персонажей, обозначенные посредством лексики со значением кровного и некровного родства. В тексте: «*Мать Артака* расстроилась: как ее сын, нахарар, берет в жены дочь простого сепуха?!». «Разве спасался кто-нибудь из рук персов? — с плачем отозвалась *жена Ашуши*» (Демирчян 486,514).

Современная *двучленная формула* именовании женских персонажей единожды зафиксирована только в романе «Вардананк», представленная по модели: *личное имя+ фамилия*: Ашхен Хорхоруни (супруга Гадишо Хорхоруни). В тексте: «Княгиня *Ашхен Хорхоруни* обратилась к гостям с просьбой провести с нею первые осенние месяцы» (Демирчян 511).

В анализируемых романах самыми частотными представлены *одночленные формулы* женских наименований. *Личным именем* в его полной или сокращенной формах Д. Демирчян и Х. Абовян называют:

а) представителей знатных семей в неофициальной обстановке: *Шушаник* – княгиня, дочь Вардана Мамиконяна, Анаит - дочь сепуха Гедеона Рштуни, *Астхик* – младшая дочь сепуха Гедеона Рштуни, *Арамаида* – младшая сестра Михрнерсэ, Вараздухт - племянница Варазвагана (Демирчян 382, 50, 158, 218, 31) и т.д. В

тексте: «Она казалась старше *Анаит* и *Астхик*. Ее гордая осанка говорила о том, что она знает свое значение в доме» (Демирчян 169).

б) представителей низшего сословия: *Магтах* - жена Ваража, конюха, *Парихан* – крестьянка, *Србуи* - крестьянка-рштуинька, *Цахик* – молодая крестьянка (Демирчян 77, 200, 272, 398, 721), *Назлу* – жена Агаси и т.д. В тексте: «Порою, когда вскрикивал он вдруг —«Назлу!» или называл имена родителей,— горы и ущелья вторили ему, горько рыдая» [Абовян 186]. «— Счастливо оставаться, *Мариам*, Сого, *Цахик!*.. Счастливых дней вам дождаться». (Демирчян 721).

в) слуг и служанок, придворных: *Дзвик* – служанка княгини Парандзем, *Диштрия* - служанка Хориши, *Югабер* – прислужница Дестрик Мамиконян и т.д. (Демирчян 31, 204, 374). В тексте: «Но *Югабер*, как видно, всю ночь бодрствовавшая у постели больной, уже заснула в уголке» (Демирчян 466).

г) мифологических героев, библейских персонажей, святых: *Астхик* – богиня любви и красоты, *Сатеник* - героиня эпического сказания, *Шамирам* и т.д. (Демирчян 84, 529, 275), *Шамирам* (миф.) – ассирийская царица, *Мария* (библ.) (Абовян 97, 284) и т.д. В тексте: «Это *Шамирам*, птенчик мой: она уронила свои бусы в море, хочет их отыскать...» (Демирчян 544).

Гипокористической однословной формой имени в романе «Вардананк» именуется женщина княжеского рода *Вараздухт*. В тексте: «От взгляда *Вараздухт* на Васака веяло теплом. Его настроение поднялось». - Знаешь ли, *Духт*, - сказал он, садясь в свое кресло, - если и на этот раз наше дело завершится успехом, всегда все будет удаваться нам» (Демирчян 40).

В романе «Раны Армении» отмечается единичная опосредованная женская номинация с указанием на имя отца, оформленная с суффиксом *-енц* со значением принадлежности: *Атоенц* (арм. Աթոյնց). При передаче на русский язык наименование *Атоенц* дополняется русским суффиксом *-ова* и устаревшей, просторечной формой апеллатива *девка*: *Атоянцева* (рус.). В тексте: «-Эй! Да не разрушится ваш дом, - на село напали, разгромили, *девку Атоянцову* схватили,...» (Абовян 83). «- Sn , ձեր տո՛ւնը չքան՞վի, գեղը կոխեցին, տարան. Աթոյնց աղքիկը քաշեցին» (Абовян 35).

В исторических романах, особенно в романе «Вардананк», в именовании персонажей практически всегда имеется указание на социальное положение лица. В духовной и дворянской среде, как отмечает Т. Аветисян, поиски идентификаторов личности идут по направлению подчеркивания родственного и социального статуса личности в обществе, тогда как для трудящихся – связанные с родом занятия личности (Аветисян 13-14).

Личными именами в сочетании с апеллативами типа «*госпожа*», «*княгиня*», «*ориорд*» Д. Демирчян называет представителей аристократических семей: *княгиня Аршалуйс*, *госпожа Шушаник*, *ориорд Анаит*, *ориорд Олимпия* и т.д., в том числе в сочетании с фамилией: *княгиня Хорхоруни*, либо в сочетании с именем и фамилией: *княгиня Ашхен Хорхоруни* и т.д. В тексте: «...я отправлю их в имение: скажу, что старуха знахарка будет лечить *ориорд Анаит* целебными травами» (Демирчян 185). Изменения социального статуса (замужество) дочери Гедеона Рштуни, *Анаит*, отмечено в конце романа вводом апеллатива *княгиня* вместо девичьего *ориорд*. В тексте: «Сепух Гедеон уехал со всей семьей или только с *княгиней Анаит?*» (Демирчян 595).

В формулах женских именовании низшего сословия используются препозитивные апеллативы семейно-родственной терминологии. Здесь имеет место не кровное родство, а в большей части уважительное отношение к собеседнику, либо просто обращение христианина к христианину, например,

сестрица Мариам, бабушка Сарахатун. В тексте: «Терпи, *сестрица Мариам!* Господь возложил на князей грех, а на крестьян страдания» (Демирчян 614).

Х.Абовян вводит в ткань романа женские именованья с постпозитивным компонентом «джан». Они придают не только эмоциональность и особую тональность повествованию, сюжетным линиям произведения, но и репрезентируют женские образы, передают отношение автора к ним и показывают взаимоотношения персонажей. Примечательно, что С. Шервинский при передаче на русский язык оформляет эти номинации посредством дефиса: *Вардигер-джан, Рипсимэ-джан, Такуи-джан*. В оригинале вышеупомянутые антропонимы фиксируются без дефиса. В тексте: «Такуи-джан, что же это? На свадьбе твоей что ли пляшу? Где ж жених? Почему поп нейдет?» (Абовян 76). «Թա՛գուհի շա՛ն, էս ի՛նչ ա, քո հարսանիքի պարն եմ գալիս. փեսեն ո՛րն ա, տերտերն ընչի՞ համար չի՞ գալիս» (Абовян 60).

В исследуемых романах отсутствуют отчества, следовательно, и трехчленная модель именования, поскольку она «своим составом, оформлением отдельных компонентов и их порядком восходит к исторической ситуации первых десятилетий XIX в.» (Аветисян 12).

Безантропонимные номинации составляют неотъемлемую часть именований героев в романах Д.Демирчяна «Вардананк» и Х. Абовяна «Раны Армении». При этом в романе «Вардананк» наблюдается преобладание безантропонимных номинаций женских персонажей над поименованными, что обусловлено пассивным положением женщины в обществе.

Прагматика именований исследуемых романов характеризуется наличием безантропонимных номинаций, функционирующих в тексте в роли «заменителей имен собственных». Иными словами используются «апеллятивные идентификаторы, содержащие сведения о коммуникативно значимых качествах их носителей» (Липихина 9). «Идентификаторами» в данном случае выступают апеллятивы, которые называют действующее лицо по социальной роли, национальности, характеру кровнородственных отношений, возрастной, внешней и внутренней характеристике и т.д.

В исследуемых романах в женских безантропонимных именованиях можно выделить следующие тематические группы, представленные одно- и двухсловными номинациями:

1) наименования персонажей, обозначенные посредством лексики со значением *кровного и некровного родства: жена, супруга, мать мельника, мать раненого, молодая жена, супруга хозяина, свекровь, сноха*. Данные апеллятивы, входящие в систему именования персонажей, показывают родственные связи с другими поименованными персонажами. В тексте: «Когда они подошли ближе, Артак узнал *мать мельника*. Ее молодая спутница держала в руках какой-то сверток» (Демирчян 474).

2) лексика, номинирующая возрастную и внешнюю характеристику. Используются апеллятивные сочетания, указывающие на половозрастной статус персонажей, внешние и внутренние черты персонажа: *девушка, женщина, пожилая крестьянка, сердобольная хозяйка, почтенная расторопная старушка, пожилая женщина, старая крестьянка, старуха*. В тексте: «— Потух очаг наш, Аракэл! — запричитала *старая крестьянка*....» (Демирчян 23).

3) наименования персонажей, обозначенные посредством сословно-социальной лексики: *служанка, старая служанка*. В тексте: «— От мира были, за мир умерли... — промолвила *старая служанка* и, осенив себя крестом, вышла» (Демирчян 707). Эта группа апеллятивов в функции имен собственных немногочисленна в женских, но достаточно многообразна в мужских именованиях,

особенно в романе Д. Демирчяна «Вардананк», что объясняется исторической тематикой произведения. В романе четко прослеживается характерное для описываемой эпохи социально-классовое разделение людей.

В процессе реализации в тексте безантропонимные номинации приобретают новые оценочные значения, «что вызвано наличием коннотативных сем в составе лексического значения апеллятива» (Бондаренко 29). «Апеллятивная лексика, входя в систему именований, позволяет дать оценку и характеристику персонажам. Функцию идентификации какого-либо героя произведения художественной литературы и номинативную функцию может выполнять разнообразный набор слов и словосочетаний» (Фролов, Сазонова 246). В результате сквозь призму авторского мировосприятия складывается особое художественное восприятие антропонимических заменителей. В составе безантропонимных именований могут быть описательные определения, словосочетания, образующие вместе с апеллятивом сложную систему номинаций персонажей.

Интересным дополнением в галерее безантропонимных номинаций в переводном тексте романа «Вардананк» являются такие эмоционально-оценочные номинации, как *Старшая госпожа*, *Старшая мать*, *Великая госпожа-княгиня*, *Великая госпожа*, *Великая мать*, *Мать-госпожа* (в оригинале - *Մեծ Տիկիկո*), оформленные в романе с прописной буквы. В тексте с особым чувством гордости и нежности этими апеллятивными сочетаниями представляется мать главного героя Вардана, имя которой на протяжении всего романа остается неизвестным. Подобные нарицательные именования, выступая как индивидуализирующие и характеризующие персонажа номинации, в тексте наполняются глубоким семантическим содержанием и создают впечатление значимости и весомости данного персонажа в сюжетной линии произведения. В тексте: «*Старшая госпожа* была душой рода Мамиконянов, его совестью. Она была матерью полководца, которого почитали как святого даже в самых отдаленных уделах страны. Матери такого человека можно было говорить только правду...». «С вооруженными людьми говорила мать, *Великая мать*, как бы мать всей страны посылала на бой своих любимых сыновей...» (Демирчян 318, 686). Ее невероятная внутренняя сила вдохновляла сторонников Вардана, ее нестерпимые страдания были устремлены к защите родины. В ней Демирчян воплотил образ Родины-матери. В тексте: «Ничего, *Великая госпожа-княгиня!* — отозвалась Хандут. — Стране гибели нет! ... Топчут нас и топчут, а мы все живы!». «— Опора нашего дома — *Старшая мать!*.. — задумчиво проговорил Зохран, оживление которого пропало после слов *Старшей госпожи*». «— Зачем умирать тебе, *Мать-госпожа?* — обратился к ней азарапет. — Еще увидишь страну Армянскую освобожденной!» (Демирчян 426, 340, 471). Контаминация опорных компонентов *госпожа*, *княгиня*, *мать* и прилагательных *высокая*, *старшая*, *великая* усиливает образ носителя, отражает позитивное отношение автора к персонажу, является средством воздействия на реципиента, что приводит к особому стилистическому эффекту.

Заключение

Таким образом, исследуя систему именований персонажей, можно отметить, что отбор женских антропонимов в романе Д. Демирчяна «Вардананк» и Х. Абовяна «Раны Армении» детерминирован авторами в соответствии с жанром и идейно-тематическим содержанием произведений. В исследуемых романах авторами используются одночленные и двучленные формулы именований женских персонажей, трехчленных формул в текстах не выявлено. В системе именований женских персонажей зафиксированы также безантропонимные номинации, выполняющие характеризующую и коммуникативно-стилистическую функцию.

Актуализация лингвистических, национально-культурных и оценочных компонентов женских номинаций является важным средством в реализации творческих замыслов авторов исследуемых романов и в представлении общей картины описываемых событий.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Արովյան, Խաչատուր. *Վերք Հայաստանի*. Ողբ Հայրենասիրի Պատմական լից. Երևան, 1955. 299 էջ.
2. Абовян, Хачатур. *Раны Армении*. Скорбь патриота. Ист. роман в 3-х ч. Пер. с арм. С. Шервинского. Ред., предисл. и примеч. П. Акопяна. Ереван, 1977. 320 с.
3. Аветисян, Тигран. *Система армянских антропонимов*. Автореф. дис... канд. филол. наук: 10.02.02. Ереван, 1987. 45 с.
4. Бондаренко, Татьяна. *Функции безантропонимных номинаций в романе Достоевского «Братья Карамазовы» // Духовная культура русской словесности: Материалы 29 научно-практ. конф. Тюмень, 24 мая 2006 г. В 2 ч. Ч. 2. Тюмень, 2007, стр. 29-31.*
5. Демирчян, Дереник. *Вардананк*. Ист. роман в 2-х книгах. Пер. с арм. А. Тадеосян, послесл. В.Налбандяна. Ереван, 1985. 736 с.
6. Липихина, Елена. *Структура и функции поэтонимов в художественных текстах для детей (на материале произведений А. М. Волкова, Н. Н. Носова, С. Я. Маршака, К. И. Чуковского)* Автореф. дис....канд. филол. наук: 10.02.01. Тюмень, 2003. 22 с.
7. Налбандян, Георгий. *Армянские имена иранского происхождения (культурно-историческое, этимологическое исследование)*. Тбилиси, 1971. 53 с.
8. Фролов Николай, Сазонова Милетта. *Апеллятивная лексика как средство номинации // Вестник Тюменского государственного университета. Тюмень, 2010, № 1, стр. 245-249.*

WORKS CITED

1. Abovyan, Hachatur. Rany Armenii. Skorb' patriota. Ist. roman v 3-h ch. Per. s arm. S. SHervinskogo. Red., predisl. i primech. P. Akopyana. [Wounds of Armenia. Yerevan]. 1977. (in Russian).
2. Abovyan, Hachatur. Rany Armenii. Skorb' patriota. Ist. roman. [Wounds of Armenia. Yerevan]. 1955. (in Armenian).
3. Avetisyan, Tigran. Sistema armyanskih antroponimov. Avtoref. dis... kand. filol. nauk: 10.02.02. [The system of Armenian anthroponyms. Yerevan] 1987. (in Russian).
4. Bondarenko, Tat'yana. Funkcii bezantropnimnyh nominacij v romane Dostoevskogo «Brat'ya Karamazovy» // Duhovnaya kul'tura ruskoj slovesnosti: Materialy 29 nauchn.-praktich.konf.. Tyumen', 24 maya 2006 g. V 2 ch. CH. 2. [Functions of Non-anthroponymous nominations in Dostoevsky's novel The Brothers Karamazov. Tyumen]. 2007. S. 29-31. (in Russian).
5. Demirchyan, Derenik. Vardanank. Ist. roman v 2-h knigah. Per. s arm. A. Tadeosyan, poslesl. V. Nalbandyana. [Vardanank. Yerevan]. 1985. (in Russian).
6. Frolov Nikolaj, Sazonova Miletta. Apellyativnaya leksika kak sredstvo nominacii // Vestnik Tyumenskogo gosudarstvennogo universiteta. [Appellative vocabulary as a means of nomination. Tyumen]. 2010, № 1. S. 245-249. (in Russian).
7. Lipihina, Elena. Struktura i funkcii poetonimov v hudozhestvennyh tekstah dlya detej (na materiale proizvedenij A.M.Volkova, N.N.Nosova, S.YA.Marshaka, K.I.CHukovskogo)

Avtoref. dis....kand. filol. nauk: 10.02.01. [Structure and functions of poetonyms in literary texts for children (based on the works of A.M.Volkov, N.N.Nosov, S.Ya.Marshak, K.I.Chukovsky. Tyumen]. 2003. (in Russian).

8. Nalbandyan, Georgij. Armyanskie imena iranskogo proiskhozhdeniya (kul'turno-istoricheskoe, etimologicheskoe issledovanie). [Armenian names of Iranian origin (cultural-historical, etymological research). Tbilisi]. 1971. (in Russian).

**ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐՈՒՄ (Դ. Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ «ՎԱՐՊԱՆԱՆՔ»
և Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՊԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՅԱՆՆԻՍԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ)

լեզուների ամբիոնի դասախոս,

բանասիրական գիտությունների թեկնածու,

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Սույն հոդվածը նվիրված է Դ. Կ. Դեմիրճյանի «Վարդանանք» և Խ. Արովյանի «Վերք Հայաստանի» վեպերում կանանց կերպարների անձնանունների համակարգին: Ի թիվս այլ հարցերի՝ ուսումնասիրության հիմնական նպատակներից է կանանց անձնանունների գործառնության բնույթի և ուսումնասիրվող վեպերում դրանց ներկայացման առանձնահատկությունների բացահայտումը: Վերք նշված վեպերի կանանց անձնանունների համակարգը ներառում է անվանակոչման որոշակի մոդելներ և բանաձևեր: Ուսումնասիրվող վեպերում առավել հաճախակի են անունների միաբաղադրիչ և տարբերակային երկբաղադրիչ անձնանունների ձևերը: Տեքստերում եռաբաղադրիչ կաղապարներ արձանագրված չեն: Կանանց անձնանունները տվյալ կոնտեքստում ունեն ինչպես անվանողական, այնպես էլ գնահատողական-բնութագրական արժեք: Դրանք բնորոշում են գործող կերպարներին անվանողական այնպիսի միջոցներով, ինչպիսին կերպարների սեռային-տարիքային ու սոցիալական դիրքը, արյունակցական և ոչ արյունակցական կապը, արտաքին ու ներքին որակները և այլ հատկանիշներ մատնանշող բառապաշարն է:

Նկարագրական, կառուցվածքային-իմաստաբանական, պատմական և ոճաբանական մեթոդների կիրառումը թույլ տվեց եզրակացնել, որ կանանց անձնանունների համակարգին բնորոշ են պատմականորեն ձևավորված անձնանունների կազմը, ավանդույթներն ու կիրառման Նորմերը, լեզվական և ոճական ընդհանուր առանձնահատկությունները:

Հիմնաբառեր՝ *անձնանուն, հասարակ անուն, անվանակարգ, անվանակոչման մոդել, անվանում, անվանակոչման բանաձև:*

**NAMING SYSTEM OF FEMALE CHARACTERS IN LITERARY TEXTS
(BASED ON THE NOVELS OF D.K.DEMIRCHYAN «VARDANANK» AND
H.ABOVYAN «WOUNDS OF ARMENIA»)**

GAYANE HOVHANNISYAN

Armenian State University of Economics (ASUE), Lecturer;

Ph.D in Philology,

Yerevan, the Republic of Armenia

The paper is devoted to the naming system of female characters in the novel «Vardanank» by D.K.Demirchyan and «Wounds of Armenia» by H.Abovyan. Among the main tasks of the study are the detection of the female anthroponymic units and their functions as well as the peculiarities of their representation in the novel under the research. The female anthroponymic system of novels includes certain models and naming formulas. The single-term naming models and variable forms of binomial formulas, including "appellative identifiers", turns out to be the most frequent in the studied novels. There are no three-term formulas in the texts. The fixed non-anthroponymous female nominations bear both nominative and evaluative-characterological properties in the context. They characterize the character by such means of nomination, which include vocabulary indicating the gender, age and social status of the characters, blood and non-blood kinship, external and internal traits of the character, etc. The use of descriptive, historical and stylistic methods enables us to conclude that the system of female names is characterized by the historically formed composition of anthroponyms, traditions and norms of use, general linguistic and stylistic features.

Keywords: *anthroponym, appellative, non-anthroponymous nominations, naming model, nomen, nomination, naming formula.*

**«ԼԱՆԿԱ ՊՕՍԹԱՆԻՆ. ՊԱԽԸԾԻ ՊԱՏՈՒԵԼԻ ՄԸ».
ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ
«ՄԵԾԱՊԱՏԻՎ ՍՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ»
ՎԻՊԱԿԻ ՆԱԽԱՅԻՄԷ***

ՀՏԴ 82.09

DOI: 10.52063/25792652-2022.4.15-167

ՄԱՐՈ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտ,
Հայաստանի Հանրապետության Նախագահի
աշխատակազմի ավագ մասնագետ,
ք. Աշտարակ, Հայաստանի Հանրապետություն
maroghukasyan.mq.mq@gmail.com

Հոդվածում առաջին անգամ վերլուծության է ենթարկվում Հակոբ Պարոնյանի «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» նորահայտ մանրապատումը, որը տարիներ շարունակ մնացել է Կ. Պոլսի «Թատրոն» երգիծաթերթի էջերում (մասնավորապես՝ 1874 թվականի 73-րդ, 74-րդ, 75-րդ, 77-րդ, 79-րդ և 1875 թվականի 84-րդ համարներում) և չի վերագրվել հանճարեղ երգիծաբանին:

Հոդվածի նպատակն է գրականագիտական քննության միջոցով ցույց տալ, որ մանրապատումը որոշակիորեն հիմք է ծառայել «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի ստեղծման համար:

Հոդվածի նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ նորահայտ մանրապատումի բովանդակային վերլուծություն, մանրապատումի և վիպակի ընդհանուր գծերի վերհանում (գաղափարական, կերպարային, դիպաշարային): Հետազոտության համար կիրառվել է համեմատական մեթոդը՝ զուգադրված տեքստաբանական վերլուծության հետ:

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությանը՝ «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի նախահիմքն է. երկու գործում էլ Պարոնյանը ստեղծել է մեծապատիվ մուրացկանների կերպարներ, որոնք իրենց նվաստ գոյությունը պահպանելու և ապրուստի միջոց հայթայթելու համար դիմում են ստի և կեղծիքի՝ հանդիպելով տգետ և դյուրահավատ աղաների: Ժամանակի ընթացքում երգիծաբանը հղկել է մանրապատումի գաղափարը, հարստացրել կերպարներով, ընդլայնել դիպաշարը՝ գրելով կատարյալ երգիծավիպակ:

Հիմնաբառեր՝ Հակոբ Պարոնյան, «Թատրոն» երգիծաթերթ, «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը», «Մեծապատիվ մուրացկանները», նորահայտ մանրապատում, երգիծաբան, խոսքի և դրության կոմիզմ, «Դուն» ծածկանուն, երգիծանք:

* Հոդվածը ներկայացվել է 25.10.2022թ., գրախոսվել՝ 12.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հակոբ Պարոնյանի գրականությունը հետազոտության աներևակայելի մեծ շտեմարան է. երբ թվում է, թե նրա վերաբերյալ արդեն ամեն ինչ ասված և բացահայտված է, թերթում ես երգիծաբանի խմբագրության շրջանում լույս տեսած Կ. Պոլսի «Մեղու» և «Թատրոն» երգիծաթերթերի համարներն ու առերեսվում միտքը պայծառացնող հայտնությունների: Գրողի՝ խոսքի և դրույթի կոմիզիկ կատարելության հասնելու մղումը, կամա թե ակամա, ստիպում էր նրան մի թեմայի շուրջ շարունակաբար խորհել, նյութն անվերջ հղկել, ու չնայած Մ. Պասաճյանի այն տեսակետին, թե «արուեստի քիչ մշակող է Պարոնեան» (Բազմավեպ թիվ 6, 275), պետք է փաստել, որ երգիծաբանն աշխատել է մի նյութի վրա բավականին երկար, այլ հարց է, որ որոշ դեպքերում նախնական տարբերակը վերջնական, հղկված տարբերակից այնքան է տարբերվում, որ միայն խորագրին դիտողականությամբ է հնարավոր դառնում գտնել ընդհանուր կապը: Ասվածը մասնավորապես վերագրելի է Հակոբ Պարոնյանի «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» նորահայտ մանրապատումին, որը, տարիներ շարունակ մնալով Կ. Պոլսի «Թատրոն» երգիծաթերթի էջերում, չի համարվել Պարոնյանի գրչի ծնունդ և դուրս է մնացել երգիծաբանի գործերի հետազոտական տիրույթից: Մանրապատումի քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն հիմք է ծառայել երգիծաբանի հանճարեղ գործերից մեկի՝ «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի ստեղծման համար. երկու դեպքում էլ գործ ունենք մեծապատիվ մուրացկանների հետ, որոնք փորձում են դրամ կորզել աղաներից իրենց նվաստ գոյությունը պահպանելու համար: Այլ կերպ ասած՝ «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը եղել է վիպակի մտահղացման նախնական դրսևորումը փոքր կտավի վրա:

Պարոնյանի երգիծանքն այնքան ինքնաբերական և անմիջական է, որ վերլուծելիս խորթ է թվում այնպիսի գրականագիտական հասկացության գործածումը, ինչպիսին «մտահղացումն» է, քանի որ այն ենթադրում է ստեղծագործական ընթացքի որոշակի կանխամտածվածություն: Ահա ինչ է գրում ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանը. «Ստեղծագործական աշխատանքը սովորաբար սկսվում է ապագա երկի մտահղացումից, որը ծնվում է կյանքը դիտելու, նրա մասին խորհելու ընթացքում: Մտահղացումն արդեն գրողի աշխարհայացքի, գեղարվեստական սկզբունքների և կենսափորձի արդյունքն է, այն իր մեջ պարունակում է ապագա երկի նյութն ու գաղափարը, նրա զարգացման պլանը՝ հիմնական գծերով» (Ջրբաշյան 149): Ռուս տեսաբան Վիկտոր Պախոմովն էլ իր «Գրքարվեստ» գրքի առաջին հատորում, խոսելով առհասարակ մտահղացման մասին, նկատում է. «Մտահղացման պահը ստեղծագործական որոնումների, կերպարների կանխազգացման և կանխատեսման պահն է՝ հրաշալի հղացմամբ, սքանչելի իրենց անավարտ կատարելությամբ» (Пахомов 27):

Ստեղծագործական որոնումների նման մի պահի ծնունդն է Հակոբ Պարոնյանի «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը: Այն հատվածաբար լույս է տեսել Կ. Պոլսի «Թատրոն» երգիծաթերթում 1874 թվականի 73-րդ, 74-րդ, 75-րդ, 77-րդ, 79-րդ և 1875 թվականի 84-րդ համարներում: Միայն 1875 թվականի 84-րդ համարն է լույս տեսել «*Դուև*» ծածկանունով, մյուսներն անստորագիր են: Ուշարժան է, որ 84-րդ համարի շարադրանքի սկզբում իբրև նախորդ համար նշվում է 82-րդը, սակայն մեզ հասանելի 82-րդ համարում այդ վերնագրով մանրապատում չկա: Ըստ ամենայնի, սա թերթի տպագրական վրիպակներից է:

«Լանկա Պօսթանին. պախըճի պատուելի մը» նորահայտ մանրապատումը և «Մեծապատիվ մուրացկանները» վիպակը. գուգահեռներ

«Լանկա Պօսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը Պարոնյանի որևէ ժողովածուում երբևէ չի ընդգրկվել, այն չի վերագրվել երգիծաբանին: Պրոֆեսոր Ալբերտ Մակարյանի մանրախույզ բացահայտումներով անառարկելի փաստ է դառնում այլևս, որ «Դուև» ծածկանունով (ինչպես նաև մյուս դերանուն-ծածկանուններով) գրված մանրապատումներն ու երկերը Պարոնյանի հեղինակածն են, հետևաբար սույն հոդվածում այս հարցին չենք անդրադառնա (Մակարյան 227-240):

Որպես նորահայտ գործ, որը Պարոնյանի որևէ հատորում երբևէ չի ներառվել, հարկ ենք համարում մանրամասն ներկայացնել պատումի բովանդակությունը՝ գուգահեռաբար ընդգծելով «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի հետ ունեցած առնչությունները, որոնք այս երկու գործերի միջև առկա կապի մասին եզրահանգման հիմք դարձան:

Փորձենք հասկանալ նախ վերնագիրը. Լանկա Պօսթանին Մարմարա ծովի ափին գտնվող նավահանգիստ է, որի տարածքում էլ ծավալվում են նկարագրվող դեպքերը: Վերնագրի երկրորդ բաղադրիչ մասի «պախըճի» բառը թուրքերեն է և նշանակում է գուշակ, կախարհ, հետևաբար՝ մի պատվելի գուշակ: Հատկանշական է, որ «պատուելի» բառի բառարանային բացատրության մեջ «հարգելի, պատվարժան, ուսուցչի հարգական դիմելածև» իմաստներից բացի նշվում է, որ Արևմտահայաստանում այն գործածվում է նաև որպես հայ կաթոլիկ կրոնավորի մակդիր: Դժվար է ասել՝ արդյոք Պարոնյանն այսպիսով արտահայտել է իր՝ մեզ արդեն հայտնի դիրքորոշումը հոգևորականության նկատմամբ, թե՛ նկատի է ունեցել ուսուցչություն անելու ընթացքում կերպարին ուղղված դիմելածևը, որի մասին գրում է պատումի հենց սկզբում նրան ներկայացնելիս. «Այս ավեր անձը եթաունամեայ բարեպաշտ և ջերմեանդ ոմն է: Անունը մեծիմաստ պատուելի է, զի ժամանակաւ դասատուութեան ամենափափուկ պաշտօն ալ կատարած է: Ամեն գիշեր երազ կը տեսնէ, յերագի՝ սրբոց պատկերաց կանթեղներուն միշտ ձեթ կը լեցնէ: Աստուած ընդունելի արասցէ, մեծիմաստ պատուելիին որպիսի սրբազան երազներուն արժանաւոր հանդիսացած ըլլալուն ըսելիք մը չունիմք» (Թատրոն, թիվ 73): Հետագա շարադրանքը հիմք է տալիս ենթադրելու, որ հեղինակը գուցէ երկուսն էլ փորձել է արտահայտել. ուսուցչության ընթացքում «պատուելի» հռչակված մեկը և հոգևորից հեռու, հոգևոր Էությունք ներկայացող անձ, որը շատ բնորոշ էր Պարոնյանի ժամանակի հոգևորական դասին և ենթարկվել է նրա գրչի հարվածներին:

Չնայած մանրապատումի վերնագիրը հայտնում է, որ խոսքը մեծապատիվ և հարգարժան մեկի մասին է լինելու, սակայն չունի այնպիսի ազդու ներգործություն, ինչպիսին ունի «Մեծապատիվ մուրացկանները», որն առավել քան խոսուն է և պարունակում է գալիք տեքստի կողք: Կայուն կապակցություն դարձած այս օքսիմորոնը վաղուց արդեն իր կիրառությունն ունի մեր խոսքում: Նկատենք, սակայն, որ երկու վերնագրերում առկա է նույն արմատը՝ պատիվ (պատվելի, մեծապատիվ):

«Լանկա Պօսթանին. պախըճի պատուելի մը»-ի պատվելի գուշակը տարատեսակ կանխատեսումներ է անում և գումար կորզում մարդկանցից՝ ներկայացնելով իրեն իբրև ի վերուստ օժտված մեկը. գուշակություններ է անում նաև բորսայի թվերի աճի ու նվազման վերաբերյալ, գանձեր է գտնում գանազան վայրերում և «ահա այս գանձագտութեան շնորհիւն այս անգամ զգեստները վերանորոգած և անցեալ տարուանէ աւելի պատկառելի դէմք մ'առած է» (Թատրոն, թիվ 73): Ուսուցչի «պաշտօնը» զբաղեցրած յոթանասունամյա ավերորը ստիպված է կեղծ գուշակություններ անել և հոգալ իր ապրուստը: Իր «մարգարեական շնորհքով» նա արդեն հասցրել է մի քանի տարի առաջ Բերայում մեծ տուն կործանել, որից հետո այլևս այն կողմերում չի երևում, այլ շրջում է Լանկայում և Կալաթայում:

Պատվելի գուշակը մեծապատիվ մուրացկանների պես (բանաստեղծ, թերթի խմբագիր, միջնորդ կին, բժիշկ, ուսուցիչ, լուսանկարիչ և այլք) իր գոյությունը քարշ տալու և առօրեական կարիքները հոգալու համար է դիմում կեղծիքի և փող շորթելու հնարքներ մոզոնում: Նա այդ քայլին չի գնում վաշխառուական մղումներից ելնելով, որքան էլ որ դա արդարացման եզրեր չունի և չի էլ արդարացվում Պարոնյանի կողմից: Նա արցունքախառն աչքերով է մտրակում այս անընդունելի իրողությունը. չէ՞ որ ինքն էլ մտավորականության ներկայացուցիչ էր, որը, սակայն, հանուն կյուրական բարիքների երբեք չփոխեց բարոյական իր նկարագիրը. «Իսկ մենք, որ ներկայացած չենք Աբխտղոմ աղային, կը հրատարակենք սույն գործն՝ ոչ այնքան մեղադրելու նպատակով ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն և այլն, որքան ներկայացնելու համար ապագա սերնդյան ժամանակիս գրական մարդոց ողբալի կացությունն և գրականության մասին ազգային մեծատուններու սարսափելի անտարբերությունը» (Պարոնյան Յ. 3, 101):

Պարոնյանը պատումի հեղինակային խոսքում ամեն անգամ մի նոր մակդիր է գործածում բնութագրելու համար պատվելիին՝ թաքուցյալ հեգնանքով ավելի շեշտելով այդ բառերի և նրա էության խիստ անհամապատասխանությունը՝ *մեծիմաստ պատուելի, երկնամերձ պատուելի, գանձագիւտ պատուելի, պերճիմաստ պատուելի, մարգարե պատուելի, հրաշագործ պատուելի, հրեշտակացեալ, վերացեալ պատուելի*: Նա իբր առանց որևէ ակնկալիքի գուշակություններ է անում և շարունակ խաբում իրեն հավատացողներին: Չավեշտի, հեգնանքի տարրերով է հագեցած հետևյալ հատվածը. «Մարգարե պատուելին այս մարդածին թղթոց շնորհիւն յառաջ գալիք շահէն ամենևին ակնկալութիւն մը չունի, զի իր բարեպաշտական և ամենամաքուր սրտով կը կամենայ որ ամենայն շահ և օգուտ իրեն հաւատացելոցն ըլլայ, և ինքը մի միայն ՚ի շնորհաբաշխել լուսածին թղթոց մէկ մէկ լիրա իբր նուէր կընդունի» (Թատրոն, թիվ 73):

Կայաթայում սկսում է հաճախել մի բարեպաշտի խանութ և պատմում է իր գիշերային երազներն ու հրաշագործությունները: Խանութի տերը հարցնում է նրան, թե հնարավո՞ր է արդյոք, որ Լանկայի իր տանը թաքնված գանձեր լինեն, քանի որ տունը հինավուրց է, որին ի պատասխան գուշակն ասում է. «–Ես այդ ամենակարևոր գործոյն համար շատոնց ի վեր ձեր յարգութեանը գաղտնապես պիտի ըսէի սակայն յարմարաւոր առիթ մը չեղաւ: Եվ քանի որ ձեր յարգութիւնըն այսօր այսպիսի հաւանական հարցում մը կընէ նէ՛ այդ հարցումը ձեր յարգութեանն ընել տուողը մի միայն վերին նախախնամութիւնն է, և ասոր ալ ապացոյց երեք անգամ իրարու վրայ տեսած սքանչելի երազս է» (Թատրոն, թիվ 74): Այսպես, ահա, մոլորեցնում է Էֆենտիին, թե իբր ճերմակ մորուքով ամենափառավոր սուրբը, որը կամ Գրիգոր Նարեկացին էր, կամ Գրիգոր Լուսավորիչը, հայտնվել է իրեն և ասել աղայի տան մեջ գտնվող գանձի մասին: Երբ աղան հարցնում է, թե ինչ է անհրաժեշտ գանձը գտնելու համար, պատվելին պատասխանում է, որ մեծ ծախսեր է պետք անել «հըրեշտակաց դասը հրակիրելու», «քառասունն օր տիւ ու գիշեր ծոմապահութիւն և աղօթք ընելու», խունկ ծխելու «ի հրաւեր և յընդունելութիւն երկնային լուսաւոր մարմնոց»: Աղան ասում է, որ, թեպետ հիմա անհրաժեշտ գումարը չունի, պատվելին անհոգ լինի. պատվելիի օգնականը, որը հիշատակվում է «Պարոն...» ձևով, համապատասխան գործարքներից կհայթայթի հարկ եղած գումարը և կհանձնի նրան: «Պարոն...»-ը, օգտագործելով առիթը, փորձում է իր հերթին գումար կորզել. մաս է պահանջում «ելնելիք ահագին գանձէն» պայմանով, որ մարդ չիմանա: Այս հատվածում է, որ երկխոսության մեջ ներթափանցում է հեղինակային խոսքը՝ որպես արտադիպաշարային տարր՝ «(Բաց ՚ի Թատրոնէն)» նշվում է փակագծում: Հիշենք, որ «Մեծապատիվ մուրացկաններ»-ում նույնպես կան *արտադիպաշարային տարրեր* (անդրադարձը իր ստեղծագործական ուղղության ընտրությանը, գրական կյուրի բովանդակությանը, կերպավորմանը և այլն) (Կեանքը եւ վեպի ընդգրկումները. ազդեցութիւններ եւ զարգացման ուղենիշներ 73-84):

Ո՛վ է Թատրոնը, եթե ոչ Պարոնյանն ինքը, որի աչքից ոչ մի մոլություն, ոչ մի արատավոր երևույթ չէր վրիպում, որքան էլ թաքնված և անտեսանելի լիներ: Մ. Պասմաճյանը գրում է. «Մոլութիւնները կը գտնէ – և այդ բանին համար ուղիղ խղճմտանքի տէր մարդու գերազանց հոտառութիւն մ'ունի – և երբ գտած է գայլ, ինք փոխանակ անոր դէմ կռուելու, անոր վրայ կը ծիծաղի միայն: Եւ իր ծիծաղին մէջ չենք գտներ ատելութեան կամ անգթութեան այն տիտուր ու կարծր արտայայտութիւնը, և ըսածիս շօշափելի ապացոյց մը կրնայ համարուիլ այն հանգամանքը որ Պարոնեան երբէք թշնամիներ չէ ունեցած. այդ ծիծաղը քիչ մ'աւելի խաճնող կը դառնայ երբ հեղինակը իւր գիւտին կատարեալ գիտակցութիւնն ունի, և կ'ուզէ ըսածը դիմացինին զգացնել» (Բազմավէպ թիւ 7, 313-314): Թատրոնն իբրև կերպար մուտք է գործում պատումի մէջ որպէս Պարոնյան երգիծաբան, որպէս անաչառութեան ձայն, որն ամենուրեք հետապնդելու է պատվելի մուրացկաններին: Թատրոնը հաջորդ անգամ հիշատակվում է, երբ պատվելիի օգնականը գալիս է տեսնելու, թե արդյոք գուշակը գտե՞լ է գանձը, և բերում է աղայի տված 2000 լիրան, որից 300 լիրան արդէն հասցրել է ծախսել և խոստովանում է. «–Ճանըմ պատուելի, հրամանացդ բան մը պիտի ըսեմ խոստովանաբար, և այս ըսելիքս ալ Թատրոնէն գատ մարդ չիյտէ:

Հրամանացդ... աղային կողմէն ինչպէս որ իրիկունէ գիտէք 2000 հատ լիրա բերի վասն ծախուց անուշահոտ նիւթոց, բայց ինծի 300 լիրայի չափ գումար մը սա միջոցիս շատ պէտք եղաւ, ժամանակս ալ խիստ նեղ է ուրիշ տեղէ մը առնելու համար: Ուստի՝ քանի որ դուք ալ այս ծախքը մէկէն 'ի մէկ չի պիտի ընէք և միևնույն քառասուն օր հետզհետէ պիտի լրացընէք նե՛՛ ձեզի 1700 լիրա տամ տե՛՛ կարելի է նոյն մնացած 300 լիրան մէկ ամիսէ մը ձեզի կուտամ: Հրամանքնիդ եթէ... աղան կարելի է տեսնելու ըլլաք նե՛՛ 2000 լիրա ասի ըսէք» (Թատրոն, թիվ 77): Վերջինս գումար է յուրացնում ինչպէս պատվելիից, այնպէս էլ աղայից: Պատվելիի հետ համաձայնութեան է գալիս, որ թույլ չի տա աղան այցելի նրան և տեսնի, թե ինչպէս է աղոթքներով ու ծումապահութեամբ գանձը դուրս բերելու, քանզի դա իցէ թե խանգարելու է գործի ընթացքին: Գուշակի պատճառաբանությունն առավել քան զավեշտայի և ստահող է. «–Չէ է է է՛, իշտէ տեսա՛ր մի, ատ չեղաւ, որովհետև, ես այն երկնային մարմնաց հրաւերին միջոցին լուսեղէն անձ մը կըլլամ և կանմահանամ, ուստի՛ այն դրախտային վայրին լուսեղէն շրջանին մէջ, թէ և մաքուր մաքրասիրտ, բայց մարմնաւոր անձի մը ներկայութիւնը լուսեղէն մարմինները շուտով կը փախցնէ և գանձը աւելի խորն իջեցնելու պատճառ կըլլայ» (Թատրոն, թիվ 77): Չորս ամիս հետո աղային է ներկայանում գուշակը և հայտնում, որ իր բոլոր ջանքերը զուր անցան, քանի որ աղան շտապել է և այդպիսով ջուրը զցել իր ամբողջ չարչարանքը. «աճէլ եղած գործին» (շտապողական գործի) մեջ սատանան է մտնում և խանգարում: Գուշակը պատմում է իր գործադրած ջանքերի մասին, որը միմիայն ծիծաղ է առաջացնում. «Ի՛նչ հասկցար, որ ամբողջ չորս ամիս է, ծումապահութենէն ստամոքսս թուփսալ դարձաւ, բերանս անդադար աղօթիւք չորացաւ և այն անուշահոտ ծանրածին նիւթերուն գրեթէ մեծ մասը զուր տեղը բուրուեցան, քանզի հրամանքդ մտքդ աճել է անցուցեր, մէկէն ի մէկ երկնային անմահ մարմինները աներևոյթ եղան մաքուր աղօթարանիս բուրաստանէն և սատանան տնկուեցաւ, թէպէտ և վննտեցի և հալածեցի գարշելին բայց ի՛նչ օգուտ գործը խանգարուեցաւ: Հրեշտակաց բնակարան ըսելն իքէն սատանայից հանգստարան դարձաւ» (Թատրոն, թիվ 79): Հաջորդում է աղայի արձագանքը, թե պէտք էր սատանային ծեծել և ոսկորները կոտրել: Մարդկային անգիտությունը, միամտությունն ու դյուրահավատությունը նրա զրկանքների պատճառ են դառնում: Գուշակը նրան համոզում է, որ միայն վարդայուղով (կիւլ եաղի) կարելի է ազատվել սատանաներից, այլ յուրերով նրանց վրա ներգործել հնարավոր չէ: Աղան ձեռնամուխ է լինում թանկարժեք յուրը գտնելուն: Պատվելիի խնդրանքով նա այս մասին որևէ մեկին չպէտք է պատմեր՝ «չէ նէ բոլոր զահմէթնիս և ծախքերնիս պօշը կերթայ» (Թատրոն, թիվ 79) (հակառակ դեպքում իրենց բոլոր ջանքերն ու ծախսերը ապարդյուն կլինեն): Պարզվում է, սակայն, որ աղան գաղտնիք պահել չգիտի

և այս մասին պատմում է բոլոր այն մարդկանց, որոնց դիմում է վարդայուղ գնելու անհրաժեշտ գումարը խնդրելու համար: Եվ, ահա, այս մարդիկ ասում են նրան, որ խաբբվել է: Գուշակը, բնավ չընկրկելով, գործի ձախողման ամբողջ մեղքը բարդում է աղայի վրա, որը շատերին պատմեց եղելությունը և հեռացրեց իրենից հաջողությունը:

Մեծապատիվ մուրացկանները ևս չեն ցանկանում, որ աղաներն այլ անձանց պատմեն իրենց հետ ունեցած գրույցը, որպեսզի չբացահայտվի իրենց նսեմացած արժանապատվությունը. թերթի խմբագիրն ասում է Աբիսողոմ աղային. «—Ինձ հետ ձեր այս ունեցած տեսակցությունն այ ուրիշի մի գրուցեք, վասնզի տեսակ մը բախտախնդիր, չվառական անձեր կան, որք բանդագուշական կենսագրություններ կը գրեն և իմ անձնականությունս կը խծբծեն» (Պարոնյան Յ. 3, 13): Այս տողերում հեղինակն ակնարկում է ինքն իրեն. ո՞վ էր «բանդագուշական կենսագրություններ» գրողը, եթե ոչ Պարոնյանը, ով իր գործունեությամբ դեմ էր խմբագիրների այսօրինակ վարքագծին: Ինչպես մանրապատումում ակնարկվում է Թատրոնը, այնպես էլ «Մեծապատիվ մուրացկանները» վիպակում Պարոնյանը:

Ամենավերջում կրկին հիշատակվում է Թատրոնը. գուշակն ասում է. «Ասիկայ անանկ բան մըն է քի Թատրոնը իմացածին պես՝ գործը մեռաւ ըսել է» (Թատրոն, թիվ 84):

Այդպիսին է Թատրոնը՝ ի դեմս Հակոբ Պարոնյանի. ամեն տեսակ պարսավելի երևույթի դեմ անզիջում պայքարող, սրատես և անվախ: Այս մանրապատումում, ինչպես և «Թատրոն» երգիծաթերթում առհասարակ, անձնավորված է Թատրոնը՝ նրանից զգուշանում, երկյուղում են կերպարները, սակայն երբեք չեն չարանում նրա դեմ գիտակցելով հանդերձ, որ գաղտնի որևէ անագնիվ արարք գործելը չի վրիպելու նրա աչքից: Պարոնյանի հայացքից իսկապես ոչինչ դուրս չէր մնում. տեսնում էր մարդկային հարաբերությունների խոցերը, իրականության մոլախոտերը, պատկերում դրանք «կյանքն ինչպես որ է» սկզբունքով և արթնության ու ապաշխարության ահագանգ հնչեցնում իր գրով: Մատթեսու Մամուրյանը՝ նույն ինքը Շահնուրը, երգիծաբանի մահվան կապակցությամբ գրած իր խոսքում ասում է. «Իր գրիչը մերթ մտրակ մ'եր որ կ'արիւներ ընկերային թագուն վերքեր, մերթ մահակ մ'որ կ'ջախջախեր ամպածրար գըլուխներ, մերթ սուր մ'որ հայուրեան մարմնոյն փտած մասերն կ'ջարդեր, միշտ ուղղութեան և ճշմարտութեան քարոզ երևելով, և բարոյական հիւանդութեանց սպեղանի մը ցոյց տալով» (Արեւելեան մամուլ 279):

Թատրոնի հիշատակությունը բնորոշ է Պարոնյանի շատ հրապարակախոսական հոդվածներին, ակնարկներին: Սա ևս մեկ ապացույց, որ մանրապատումը Պարոնյանի ձեռագիրն է կրում: Այսպես, «Լա պել էլեն» հոդվածում կարդում ենք. «Ընթերցո՞ղ, քեզի նոր խոսք մը ըսե՞մ, այսինքն անանկ խոսք մը, որ մինչև հիմա ո՛չ ըսված ըլլա և ո՛չ ալ լսված»:

—Ըսե՛, **Թատրոն**, ըսե՛, ուրախությամբ մտիկ կ'ընենք, որովհետև նոր խոսքերու կարոտ մնացած ենք:

—Շատ աղէկ, ընթերցո՞ղ, շնորհակալ եմ, որ իմ նոր խոսքս լսելու պատիվն պիտի ընեք ինձ: Իմ ըսելիք նոր խոսքս սա է, որ թատրոնը բարոյական դպրոց մ'է» (Պարոնյան Յ. 9, 170): Թեպետ այստեղ խոսքը թատրոնի՝ իբրև ներկայացման բարոյական ներգործող ուժի մասին է, սակայն ինքնին հասկանալի է, որ բառախաղով ակնարկվում է նաև «Թատրոն» երգիծաթերթի բարոյական դպրոց լինելը:

«Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումի սյուժեին ծանոթանալով՝ ուրվագծվում է զուգահեռների այն շղթան, որն առկա է նրա և «Մեծապատիվ մուրացկանները» երգիծավիպակի միջև:

Ե՛վ «Մեծապատիվ մուրացկաններ»-ում, և՛ այստեղ կան ինչպես շատ երկխոսություններ, այնպես էլ հեղինակային խոսք՝ արտադիպաշարային տարրերով, թեպետ եթե առաջինում ընթերցողի հետ բացահայտորեն գրույց է սկսում Պարոնյանն ինքը՝ իբրև հեղինակ, ապա մանրապատումում, հրապարակախոսական հնարք կիրառելով, գլխավորապես ներկայանում է որպես «Թատրոն»:

ինչպես մեծապատիվ մուրացկանները (բացառությամբ մի քանիսի՝ Աբիսողոմ աղա, միջնորդ կին Շուշանիկ, թաղականի գործերով զբաղված Մանուկ աղա, պատկերահան Դերենիկ), այս մանրապատումի կերպարները ևս անուն չունեն (պախըճի պատուելի մը, աղա, Պարոն...), որով ընդգծվում է նրանց տիպականությունը: Մանրապատումը չունի իրադարձությունների և կերպարների այն առատությունը, որն ունի վիպակը. սա ժանրային առումով միանգամայն պատճառաբանված է:

«Լանկա Պօսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը գերծ է կերպարաստեղծման այն արտահայտչականությունից, կոմիզմից և գաղափարական ողբերգականությունից, որն ունի վիպակը:

Երկու գործում էլ մեծապատիվ մուրացկաններն ասես իրենք հավատում են իրենց ասածին՝ ընդունելով աղաների տգիտության հետևանքով ստեղծված իրականությունը (գուշակը աղոթքներով և ծոմապահությամբ գանձը գտնելը ստանձնելով, բանաստեղծը՝ երկու ոսկիով մուսայի գալն արագացնելով): Թե՛ «Մեծապատիվ մուրացկաններ»-ի, թե՛ «Լանկա Պօսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումի աղային բնորոշ են տգիտությունը և դյուրահավատությունը: Համեմատենք Աբիսողոմ աղայի խոսքերը մուսայի վերաբերյալ և մանրապատումի աղայի խոսքը սատանային վնդեղու մասին.

«–Ո՛վ է ուրեմն սա գետնին տակն անցնելու մարդը... ուսկի՞ց պիտի գա... ըսե՛, որ ճանքա մը մտմտանք ու բերել տանք... Եթե մեկ երկու ոսկի տանք, այս շաբաթ կուգա՛»:

–Այո՛, երկու ոսկի տալուդ պես գործը կը դյուրանա, և մուսաս այս շաբաթ վազելով կուգա,– պատասխանեց անմուսա բանաստեղծը *ոսկի* բառը լսելուն պես:

–Գրե՛ ուրեմն իրեն, իմ կողմես ալ հատուկ բարևներ ըրե՛ և ըսե՛, որ Աբիսողոմ աղան քեզ տեսնել կ'ուզե՛» (Պարոնյան Յ. 3, 36): («Մեծապատիվ մուրացկանները»)

«–Պատուելի, պարե՛ աղեկ մը թող ծեծե՛իր, ոսկորները կօտրտե՛իր որ մեյ մըն ալ չիգար» (Թատրոն, թիվ 79): («Լանկա Պօսթանին. պախըճի պատուելի մը»)

Եթե վիպակում Աբիսողոմ աղան մեծապատիվ մուրացկանների կողմից մինչև վերջ («բուրդ ու բապուճ փախավ մայրաքաղաքես») (Պարոնյան Յ. 3, 101) ենթարկվում է հետապնդման, ապա մանրապատումի աղան, լսելով շրջապատի մարդկանց հորդորները, թե խաբվել է, փոքր-ինչ շրջահայաց է դառնում: Վերջինս այնքան հարստություն չունի, որքան Աբիսողոմ աղան. «–Պատուելի, ստակին համար պետք եղաւ որ... ին ըսեմ, ան ալ ...ին ըսեր է հիմայ ելեր կըսեն կոր քի՛՝ քեզի խաբեր են, աճապա կիւլ եաղիսիզ բան մը չե՛ս կրնար ընել պատուելի: Թող ըլլայ տե քիչ մը երկար ու դժուար ըլլայ ի՛նչ ընենք բան մը քի՛՝ ստակ առնելու ուրիշ տեղ մը չունիմ» (Թատրոն, թիվ 84):

Եզրակացություն

Ամփոփելով ասվածը՝ կարելի է փաստել, որ «Լանկա Պօսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը հիմք է դարձել «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի ստեղծման համար, թեպետ գեղարվեստականությամբ, խոսքի և դրության կոմիզմի սրությամբ անհամեմատելիորեն զիջում է վիպակին, որի կատարյալ շարադրանքում մեծ ցանկության դեպքում անգամ մեկ ավելորդ բառ կամ ձևակերպում գտնել հնարավոր չէ:

Այսպես ահա, 1874-75 թվականներին հղացած փոքր կտավի երկը դառնում է հինգ տարի հետո գրված անթերի երգիծավիպակի հիմք: «Մեծապատիվ մուրացկանները» առաջին անգամ լույս տեսավ «Լույս»-ի 1880 և 1881 թվականների համարներում՝ արակ առ արակ: Առանձին գրքով առաջին հրատարակությունը 1887

թվականին է եղել (Պարոնյան Յ. 3, 401): Տարիների խմորումից հետո միայն ստեղծագործական կատարելության ճանապարհին երգիծաբանը գտավ իր ասելիքն արտահայտելու գեղարվեստական ճիշտ ձևը և բովանդակությունը՝ փոքր կտավից անցում կատարելով համեմատաբար ավելի ընդգրկուն պատկերի, ստեղծելով ավելի շատ կերպարներ՝ այդպիսով հարստացնելով դիպաշարը և ասելիքը:

Մտահղացումից մինչև գաղափարի իրագործում երկար ճանապարհ է: Հակոբ Պարոնյանն անցել է այդ ճանապարհն այնքան աննկատ, որ մինչ օրս գգոցներում է մնացել «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը, մանրապատում, որում շատ ավելի լսելի է հրապարակախոս, քան երգիծաբան Պարոնյանի ձայնը, սակայն հենց առաջինը հասունացրեց և ծնունդ տվեց երգիծաբան Պարոնյանին:

Տարիների փորձը, մտահորիզոնի, աշխարհայացքի ընդլայնումը, աշխարհաճանաչությունն օգնում են գրողին տեսնել և պատկերել ավելին, իսկ համաշխարհային գրականությանը ծանոթ լինելը՝ նպաստում գրի կատարելագործմանը: Ռուս գրաքննադատ Յուրի Վեսելովսկին, խոսելով Պարոնյանի ստեղծագործության, մասնավորապես՝ «Մեծապատիվ մուրացկանները» վիպակի վրա Մոլիերի գրականության ազդեցության մասին, ընդգծում է. «Անկախ այս ամենից՝ Պարոնյանն օժտված էր երգիծելու բնատուր տաղանդով՝ զուգակցված մեծ դիտողականության և մշակութային առաջատար հայացքների հետ» (Веселовский 63):

Երգիծաբանի համար միայն բնատուր տաղանդը դեռ բավական չէ. անհրաժեշտ է նաև, որ գրողը զգա ընթերցողին: Պարոնյանը զգում, տեսնում էր իր ընթերցողներին, լսում նրանց ձայնը, ինչպես մենք ենք այսօր դարերի հեռավորությունից լսում նրա բարձր ծիծաղը՝ արցունքով լցված աչքերով: Արսեն Տերտերյանը գրում է. «Իր խոշոր երգիծական տաղանդի հետ միասին Պարոնյանը նաև գրել գիտեր, նրա մեջ ձևի զգացմունքն էլ շատ շեշտված էր և *ամեն նոր նյութի համար նոր ձև որոնելու հակումը* առկա էր. նա ևս գիտեր կենտրոնացնել նյութը և ընթերցողին կամ հանդիսատեսին լարված պահել: Նա ոչ միայն ուսումնասիրել էր գրական պրիոմները — դա սուկ նրա պոետիկայի մի մասն էր — այլև դրանց ազդեցությունը ընթերցողի վրա» (Տերտերյան 378):

Ընթերցողի վրա ազդելու համար է, որ «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումի ոչ այնքան ներգործուն կերպարները և իրավիճակները, հասունանալով գրողի գրչի ներքո, անհրաժեշտ սրություն, կոմիզմ և միաժամանակ դրամատիզմ ստացան: «Պատուելի պախըճի մը»-ն, «Պարոն...»-ը նույն մեծապատիվ մուրացկաններն են. ստում են, կեղծում հանուն նյութական չնչին բարեկեցության: Ուրիշ է նրանց կերպավորած Պարոնյանը:

Ամեն նյութի համար համապատասխան ձև ընտրել գիտեր և այդ ամենը հիմնավորել, ինչպես անում է «Մեծապատիվ մուրացկաններ»-ի դեպքում. «Կը խոստովանիմ, որ եթե սույն նյութը Օվրատիոս առներ, երգիծանք մը կը շիներ, և եթե Մոլիեր ձեռք անցուներ, կատակերգություն մը կը հորիներ. բայց մենք, որ ապրելու պետք ունինք, ստիպված ենք ժամանակին հարմարի, շատ անգամ բանթալոնեն բաճկոն և երգիծանքեն վեպ շինելով» (Պարոնյան Յ. 3, 83):

«Բանթալոնեն բաճկոն և երգիծանքեն վեպ» դառնալու ճանապարհին «Լանկա Պոսթանին. պախըճի պատուելի մը» մանրապատումը մի ինքնատիպ ելակետ է՝ երգիծանքի անգերագանցելի ուղին սկսելուց առաջ դույզն-ինչ դադար առնելու, անելիքները եզրագծելու և ապա նորից ճամփա ընկնելու, ճանապարհ, որը կանխորոշեց բացառիկ երգիծաբանի անմահության ուղին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Արեւելեան մամուլ*. ամսաթերթ ազգային և քաղաքական, 21-րդ տարի, 1891, Յունիս, Չմիւռնիս, Տպագրութիւն Մամուլեան, 288 էջ:

2. «*Բազմավեպ*» *հանդիսարան*. ամսագիր, Վենետիկ, Սուրբ Ղազար, տարի ԾԸ (1900), Յուլիս, թիվ 6:
3. «*Բազմավեպ*» *հանդիսարան*. ամսագիր, Վենետիկ, Սուրբ Ղազար, տարի ԾԸ (1900), Յուլիս, թիվ 7:
4. *Թատրոն*, Կ. Պոլիս, 1874, թիվ 73, դեկտեմբերի 24:
5. *Թատրոն*, Կ. Պոլիս, 1874, թիվ 74, դեկտեմբերի 25:
6. *Թատրոն*, Կ. Պոլիս, 1874, թիվ 77, դեկտեմբերի 28:
7. *Թատրոն*, Կ. Պոլիս, 1874, թիվ 79, դեկտեմբերի 31:
8. *Թատրոն*, Կ. Պոլիս, 1875, թիվ 84, հունվարի 10:
9. *Կեանքը եւ վեպի ընդգրկումները. ազդեցություններ եւ զարգացման ուղենիշներ* (միջազգային գիտաժողովի նիւթեր). Երևան, 2022:
10. Մակարյան, Ալբերտ. *Կրկին Պարոնյանի հետ*. Երևան, Անտարես, 2018, 312 էջ:
11. Պարոնյան, Հակոբ. *Երկերի ժողովածու տասը հատորով, Հատոր 3*. Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1964, 423 էջ:
12. Պարոնյան, Հակոբ. *Երկերի ժողովածու տասը հատորով, Հատոր 9*. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975, 392 էջ:
13. Ջրբաշյան, Էդվարդ. *Գրականության տեսություն, 5-րդ վերամշակված և լրացված հրատարակություն*. Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1980, 496 էջ:
14. Տերտերյան, Արսեն. *Հայ կլասիկներ*. Երևան, Պետական համալսարանի հրատարակչություն, 1944, 907 էջ:
15. Пахомов, Виктор. *Книжное искусство, книга первая «Замысел оформления»*. Москва, Государственное издательство «Искусство», 1961, 424 с.
16. Веселовский, Юрий. *Очерки армянской литературы и жизни*. Армавирь, Типография М.С. Мурадова, 1906, 133 с.

WORKS CITED

1. *Arewelian mamul*, amsat'ert' azgayin ev qaghaqakan, 21-rd tari, 1891, Yunis, Zmiw'n'ia, Tpagrut'iwn Mamurean, 288 e'. [Eastern Press, Smyrna]. (In Armenian)
2. «*Bazmave'p*» handisaran, amsagir, Venetik, Surb Ghazar, tari C'Y' (1900), Yunis, t'iw 6. [Bazmavep, Venice]. (In Armenian)
3. «*Bazmave'p*» handisaran, amsagir, Venetik, Surb Ghazar, tari C'Y' (1900), Yulis, t'iw 7. [Bazmavep, Venice]. (In Armenian)
4. Jrbashyan, E'dvard. *Grakanut'yan tesut'yun*, 5-rd veramshakvac' ev Iracvac' hratarakut'yun. Erevan 1980. [Theory of Literature, Yerevan]. (In Armenian)
5. *Keanqy' ew ve'pi y'ndgrkumneri'. azdecut'iwnner ev zargacman ughenishner* (mijazgayin gitajhoghovi niwt'er). Erevan, 2022. [Life and the scope of the novel: Consequences and Milestones of Development, Yerevan]. (In Armenian)
6. Makaryan, Albert. *Krkin Paronyani het*. Erevan, 2018. [Again with Paronyan, Yerevan]. (In Armenian)
7. Pahomov, Viktor. *Knizhnoe iskusstvo, kniga pervaja «Zamysel oformlenija»*. Moskva 1961. [Book art, Volume 1, Moscu]. (In Russian)
8. Paronyan, Hakob. *Erkeri jhoghovac'u tasy' hatorov*, Hator 3. Erevan, 1964. [Hakob Paronyan, Collected Works in Ten Volumes, Volume 3, Yerevan]. (In Armenian)
9. Paronyan, Hakob. *Erkeri jhoghovac'u tasy' hatorov*, Hator 9. Erevan, 1975. [Hakob Paronyan, Collected Works in Ten Volumes, Volume 9, Yerevan]. (In Armenian)
10. *T'atron*, K. Polis, 1874, t'iv 73, dektemberi 24. [Theatre, Constantinople]. (In Armenian)

11. *T'atron*, K. Polis, 1874, t'iv 74, dektemberi 25. [Theatre, Constantinople]. (In Armenian)
12. *T'atron*, K. Polis, 1874, t'iv 77, dektemberi 28. [Theatre, Constantinople]. (In Armenian)
13. *T'atron*, K. Polis, 1874, t'iv 79, dektemberi 31. [Theatre, Constantinople]. (In Armenian)
14. *T'atron*, K. Polis, 1875, t'iv 84, hownvari 10. [Theatre, Constantinople]. (In Armenian)
15. Terteryan, Arsen. *Hay klasikner*. Erevan, 1944. [Armenian classics, Yerevan]. (In Armenian)
16. Veselovskij, Jurij. *Ocherki armjanskoj literatury i zhizni*. Armavir# 1906. [Essays on Armenian Literature, Armavir]. (In Russian)

THE NEWLY FOUND SHORT STORY BY HAKOB PARONYAN «THE LANKA POSTANI: AN HONOURABLE PREDICTOR» AS A BASIS FOR THE NOVELETTE «THE HONOURABLE BEGGARS»

MARO GHUKASYAN

*Research Institute of Ancient Manuscripts named after Mesrop Mashtots,
Matenadaran, Ph.D. Student;
The Office of the President of Armenia, Senior specialist;
Ashtarak, the Republic of Armenia*

In the article, for the first time, the newly found short story - “The Lanka Postani: An Honourable Predictor” by Hakob Paronyan - is analyzed, which remained on the pages of the satirical newspaper “Tatron” (“Theatre”) of Constantinople (particularly in the 73, 74, 75, 77 and 79 issues of the 1874 and the 84th issue of the 1875) and its copyright was never assigned to the brilliant satirist. In parallel, the similarities (ideological, figurative, narrative) that are specific to the short story and satirical novelette “The Honourable Beggars” are presented: in both works, Paronyan created characters of *honourable beggars* who, meeting with illiterate and gullible merchants, resort to lies and forgery in order to preserve their miserable existence and obtain the means of survival. Factually, “The Lanka Postani: An Honourable Predictor” has become the basis of “The Honourable Beggars”. Over time, the satirist improved the idea of the short story, enriched it with characters and expanded the plot, creating a perfect satirical novelette.

Keywords: *Hakob Paronyan, satirical newspaper “Tatron” (“Theatre”), “The Lanka Postani: An Honourable Predictor”, “The Honourable Beggars”, newly found short story, satirist, verbal and situational comism, pen name “Dun” (“You”), satire.*

**«ЛАНКА ПОСТАНИ: ЧТИМЫЙ ПРЕДСКАЗАТЕЛЬ»: ВЫЯВЛЕННАЯ
МИНИАТЮРА АКОПА ПАРОНЯНА КАК ПЕРВООСНОВА ПОВЕСТИ
«ВЫСОКОЧТИМЫЕ ПОПРОШАЙКИ»**

МАРО ГУКАСЯН

*аспирантка научно-исследовательского института
древних рукописей имени Месропа Маштоца, Матенадаран,
старший специалист аппарата Президента Республики Армения,
г. Аштарак, Республика Армения*

В статье впервые анализируется выявленная нами миниатюра Акопа Пароняна «Ланка Постани: чтимый предсказатель», которая была опубликована в константинопольской сатирической газете «Татрон» («Театр») (в частности, в №№ 73, 74, 75, 77, 79 за 1874 г. и в № 84 за 1875 г.) и авторство которой не приписывалось гениальному сатирику.

Выявлены также общие идейные, образные, сюжетные черты, характерные для миниатюры и сатирической повести «Высокочтимые попрошайки»: в обоих произведениях Паронян создал образы *высокочтимых попрошаек*, которые, встретившись с неграмотными и доверчивыми хозяевами, прибегают ко лжи и мошенничеству, дабы поддержать свое жалкое существование и добыть средства на пропитание. По сути, «Ланка Постани: чтимый предсказатель» стала первоосновой для повести «Высокочтимые попрошайки». Со временем сатирик усовершенствовал идею миниатюры, обогатил ее образами, расширил сюжет, создав полноценную сатирическую повесть.

Ключевые слова: *Акоп Паронян, сатирическая газета «Татрон» («Театр»), «Ланка Постани: чтимый предсказатель», «Высокочтимые попрошайки», выявленная миниатюра, сатирик, словесный и ситуационный комизм, псевдоним «Дун» («Ты»), сатира.*



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՈՒՄ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՐԻ ԿՐԱ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՄԵԹՈԴԱԿԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ***

ՀՏԴ 338.4

DOI: 10.52063/25792652-2022.4.15-178

ՆԱԴԵԺԴԱ ԱՖՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«Բևօգտագործման տնտեսագիտություն» ամբիոնի դասախոս,
տնտեսագիտական գիտությունների թեկնածու,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
nafyan@rambler.ru

ՀՐԱՆՈՒՇ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի
«Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում»
ամբիոնի մագիստրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
nanoaleks8@gmail.com

Հոդվածի նպատակն է ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) մեթոդական մոտեցումներում մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատման օրենսդրական դաշտը և մեթոդական կարգավորման հիմնահարցերի վերլուծականը: Նպատակից բխող խնդիրներն են. ուսումնասիրել, համեմատական տարբերակել և վերլուծել Հայաստանում մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատման մեթոդական մոտեցումների և օրենսդրաիրավական դաշտի հիմնահարցերը, այնուհետև վեր հանել և առաջադրել դրանց կատարելագործման և համակարգման ուղիները՝ համադրելով շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորությունների հետ: Հոդվածում օգտագործվել է վիճակագրական երկրորդային տվյալների և իրավական ակտերի համեմատական, համադրման վերլուծական մեթոդը:

Արդյունքում կատարվել է եզրահանգում, որ տնտեսական գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության իրականացման արդյունավետության բարձրացման համար, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական եզրակացությունների հիմնավորումների հավաստիության բարձրացման համար, միաժամանակ նաև բնապահպանական բազմաթիվ միջազգային պարտավորություններից բխող պահանջների կատարման

* Հոդվածը ներկայացվել է 21.11.2022թ., գրախոսվել՝ 15.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

համար հրատապ են շրջակա միջավայրի, մասնավորապես մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատման մեթոդական մոտեցումների վերանայումը, մշակումը, կատարելագործումը և համակարգումը: Իսկ համակարգված միասնական մեթոդական մոտեցումների մշակման տեսանկյունից հրատապ ենք համարում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված տնտեսական մեխանիզմների գործիքակազմի և մշտադիտարկումների տվյալների բազայի արդիականացումը:

Հիմնաբառեր՝ շրջակա միջավայր, մթնոլորտային օդ, բացասական ազդեցություն, գնահատում, փորձաքննություն, մեթոդական մոտեցում, կայուն զարգացում:

Նախաբան

Խորհրդային տնտեսվարման ժամանակաշրջանից ժառանգած և ընթացքում կամայականորեն վերափոխված շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության գնահատման մեթոդական մոտեցումների կիրառման արդյունքում ի հայտ են եկել անհամատեղելիություններ շրջակա միջավայրի, մասնավորապես մթնոլորտային օդի պահպանության ոլորտում միջազգային պարտավորությունների և ազգային իրավաստենսդրական դաշտի կարգավորումների միջև: Այսինքն, ազգային իրավաստենսդրական կարգավորումների հետևանքով մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության հետևանքնով առաջացած վնասի դիմաց վճարվող բնապահպանական հարկային մուտքերը չեն բավարարում բնապահպանության ոլորտում բնապահպանական միջոցառումներ կատարելու համար: Իսկ այս խնդիրները կարգավորելու համար, անշուշտ, անհրաժեշտություն է առաջանում մշակել առաջնային աղտոտմանը ենթարկվող՝ մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության էկոլոգիական և տնտեսական գնահատման միասնական մեթոդական մոտեցումներ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ժամանակակից համակարգը, ունենալով զարգացման որոշակի պատմական փորձ, ներկայումս կայուն զարգացման ենթատեքստում դարձել է զարգացած և նոր անկախ զարգացող պետությունների շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման կամ նվազեցման առավել ազդեցիկ գործիքներից մեկը:

Մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման իրավական դաշտի վերլուծություն

Հայաստանում նախագծային, ինչպես նաև հիմնադրութային փաստաթղթերում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացը ձևավորվել է դեռևս 1995 թ.-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի ընդունումով (այժմ գործում է 2014 թ. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը), որի մշակման համար հիմք են ծառայել 85/337/ԵՅԸ, 97/11/ԵԸ, 2003/35 ԵԸ և 2001/42/ԵԸ դիրեկտիվները, ինչպես նաև Հայաստանի միջազգային պարտավորությունները՝ Եսպոյի կոնվենցիայի վավերացմամբ (1997թ.) և Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման (SEA) Կիևի արձանագրության ստորագրմամբ (2011թ.) (Environmental pollution and product charges in Armenia 8, 11-12):

ՇՄԱԳ գնահատման գործընթացի բաղադրիչային մաս է կազմում մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատումը, որի գնահատման մեթոդական մոտեցումների իրավական հիմքերը հիմնականում ամրագրված են

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում, «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» կառավարության որոշման մեջ, «Մթնոլորտային օդն աղտոտող կյուբերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» կառավարության որոշման, «Սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների/չափաքանակների նախագծերի կազմի ու բովանդակության» ուղեցույցի, ՕՈԴ-86 «Ձեռնարկությունների կողմից մթնոլորտ արտանետվող վնասակար կյուբերի խտությունների հաշվարկի մեթոդիկա» 5-րդ բաժնում: Այսինքն, այս բոլոր իրավական նորմերի գերակշիռ մասն արդիական չէ և պահանջում է իրավական դաշտի վերանայում, մասնավորապես «Անշարժ աղբյուրներից վնասակար կյուբերի արտանետումների ցրման հաշվարկի համակարգչային ծրագրերը սահմանելու մասին» հրամանի պահանջով, քանի որ, համաձայն հրամանում նշված համակարգչային ծրագրերի, գործարկման համար պահանջվում են նոր հաշվարկային ցուցանիշներ, որոնք դեռևս իրավական դաշտում կանոնակարգված չեն:

Մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման մեթոդական մոտեցումների, գործիքակազմի, մեթոդաբանության միջազգային արդյունավետ փորձի վերաբերյալ թեմատիկ և կանոնակարգված ուսումնասիրությունները սակավաթիվ են և համակարգված չեն միասնական մեթոդական ուղեցույցում, սակայն այս թեմայի իրավական դաշտի տեսական հիմքերը կարելի է շոշափել հետևյալ տիպային մեթոդիկայում և ուսումնասիրություններում:

1. Методика определения предотвращенного экологического ущерба, временная типовая методика определения экономической эффективности осуществления природоохранных мероприятий и оценки экономического ущерба, причиняемого народному хозяйству загрязнением окружающей среды, РФ, 1999,

2. Environmental pollution and product charges in Armenia: assessment of reform progress and directions for further improvement, OECD, 2004,

3. Сборник методик по расчёту выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Ленинград Гидрометеиздат 1986,

4. ГОСТ 17.2.3.02 -78 «Охрана природы. Атмосфера. Правила установления допустимых выбросов вредных веществ промышленными предприятиями».

Վերոնշյալ մասնագիտական ուսումնասիրությունների և իրավանորմատիվային փաստաթղթերի համեմատական վերլուծության արդյունքում ակնհայտ է, որ դրանք հին են, հետևաբար կարևորվում է Հայաստանի ՇՄԱԳ գործընթացի մեթոդական մոտեցումների վերանայման, կատարելագործման և միասնականացման խնդիրների լուծման անհրաժեշտությունը, որն էլ, իր հերթին, ժամանակակից բնապահպանության ռազմավարության գերակա ուղիներից մեկն է: Շրջակա միջավայրի կառավարման միջոցառումների ցանկի համապատասխան արդիական հարցերից է մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատման մեթոդական մոտեցումների կատարելագործումը և գործնական առաջարկությունների մշակումը: Ներկայումս Հայաստանում մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատմանը վերաբերող նորմատիվաիրավական ակտերը հիմնականում արտահայտվում են բնապահպանական փորձաքննության և քաղաքաշինության մասին իրավական դրույթներից բխող նորմատիվներում: Եվ պարբերաբար դրանք կամ նույնականացվում են, կամ նսեմացնում շրջակա միջավայրի որակական հատկանիշները: Սակայն, ի համեմատ միջազգային փորձի (օրինակ՝ ՌԴ-ի, ԵՄ երկրների), մշակված չեն հատուկ կարգեր, ուղեցույցներ, որոնք կապված են բուն մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման միասնական մեթոդիկայի հետ: Ազգային փորձագիտական պրակտիկայում օգտագործվող

Նորմատիվային փաստաթղթերը, մշտադիտարկումների իրականացումները, գնահատման մեթոդական մոտեցումները հնացած են և չեն կարող ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության լիարժեք գնահատում, ինչպես նաև բնապահպանական փորձաքննության լիարժեք իրականացում, հատկապես անդրսահմանային ազդեցության և ռազմավարական գնահատման գործընթացներում: Մեթոդաբանական մոտեցումների համար իրավական միասնական ուղեցույցների բացակայության արդյունքում ՇՄԱԳ-ի մեթոդաբանական մոտեցումների ընտրությունը կատարվում է կամայականորեն՝ հաշվի չառնելով մի շարք իրավական նորմեր և ինստիտուցիոնալ գործիքներ, իսկ այդ կամայականությունը զսպելու համար բացակայում են վարչական պատասխանատվության լծակները (Environmental pollution and product charges in Armenia 19-20):

Մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատման մեթոդական մոտեցումների թերացումներից առաջացած տնտեսական հետևանքները

Կարելի է փաստել, որ մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցությունից առաջացած վնասի չնչին մասն է փոխհատուցվում, իսկ բնապահպանության համար կատարված ընթացիկ ծախսերը շատ ավելի քիչ են, քան բնապահպանական հարկերը, հետևաբար նշանակում է, որ Էկոլոգիական վնասի և տնտեսական վնասի գնահատման միջև գոյություն ունի հստակ անհամադրելիություն, ինչն էլ, իր հերթին, պայմանավորված է բացասական ազդեցության արդյունքում առաջացած վնասի Էկոլոգիական և տնտեսական գնահատումների իրավական և մեթոդական մոտեցումներում առկա թերացումների հետ (Grid emission factor for the electricity system of the Republic of Armenia for 2016 3): Այդ թերացումները ձևավորում են այս ոլորտներում գնահատման մեթոդական մոտեցումների կիրառելիության թերացումներ, որոնք վերաբերում են՝

- անշարժ, շարժական աղբյուրներից արտանետումների նորմավորման համակարգի և գնահատման մեթոդական մոտեցումների վաղեմությանը (գործում է խորհրդային ժամանակաշրջանից և համաձայնեցված չէ միջազգային նորմատիվային համակարգին),
- արտանետման սահմանային չափաքանակների սահմանման թույլտվություններին, երբ ՇՄԱԳ կամ ՍԹԱ նախագծային փաստաթղթերում իրականացվում է վնասակար նյութերի արտանետման գնահատում (շատ հաշվետվություններում անտեսվում է ջերմոցային գազերի և կայուն օրգանական աղտոտիչների հաշվառումը), ապա հետո իրականացվում է դրանց կոմոլյատիվ ազդեցության և Էկոլոգիական վնասի տնտեսական գնահատում (այն իր մեջ պետք է ներառի բնապահպանական միջոցառումների իրականացման ծախսերը և տարածքի անթրոպոգեն ազդեցության ծանրաբեռնվածության սահմանափակումներ), սակայն հիմնականում իրականացվում է վնասակար նյութերի ցրման հաշվարկ, արտանետման խողովակի բարձրության հաշվարկ, արտանետումների որակական և քանակական գնահատման միասնական մեթոդական համակարգին, որոնք համաձայնեցված չեն ԵՄ և ԵԱՏՄ անդամ երկրներում գործող համակարգերի հետ, բացի այդ թերի է հիմնային տվյալային կամ մշտադիտարկումների տեղեկատվական բազան:

Մթնոլորտային օդի վրա ազդեցության առկա մեթոդական մոտեցումների կատարելագործումը և դրա միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը բխում է շրջակա միջավայրի կառավարման ռազմավարական միջոցառումներից (Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարություն 2018):

Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակը բնութագրվում է մի շարք վիճակագրական տվյալների հիման վրա, որոնք ուսումնասիրելով՝ կարելի է եզրակացնել, որ շարժական և անշարժ աղբյուրներից օդային ավազան արտանետած վնասակար նյութերից առաջացած վնասի հատուցման ընդհանուր գումարը 2018-2021 թվականների ցուցանիշներով կազմել է վնասի համար սահմանված վարչական տույժի ընդհանուր գումարի 1,06 %-ը, իսկ մթնոլորտային օդի պահպանության համար կատարված բնապահպանության ընթացիկ ծախսերը, ի համեմատ անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի դիմաց բնապահպանական հարկերի, կազմել են 0,24 % (ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, տարեկան հաշվետվություններ, Շրջակա միջավայրի նախարարություն, Վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ, Ժամանակային շարքեր, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն, ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն, ՀՀ Վիճակագրական կոմիտե, շրջակա միջավայր և բնական պաշարներ, բնապահպանական հարկեր. մլն. դրամ, վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ):

Եզրակացություն

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, ինչպես նաև հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու անհրաժեշտությունը, մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման ոլորտում մշտադիտարկումների տվյալները համակարգելու, արդյունավետ գնահատում իրականացնելու կարևորությունը՝ անհրաժեշտություն է առաջանում մշակել և գործածության մեջ դնել միասնական մեթոդական մոտեցումներ՝ հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները ու միջազգային առաջավոր փորձը:

Մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատման միասնական մեթոդական մոտեցումների մշակումը և ներդրումը պետք է կողմնորոշված լինեն նորմատիվային փաստաթղթերի վերանայմանը, դրանց ամբողջականության մշակմանը, տևտեսական մեխանիզմների գործիքակազմի և մշտադիտարկումների տվյալների բազայի հստակեցմանը, ինչպես նաև կադրային, գիտակրթական, տեղեկատվական գերակա ուղիների որակավորման բարձրացման իրագործմանը:

Այս կապակցությամբ առավել արդիականացվում են մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության ցուցանիշների և չափանիշների, մշտադիտարկման տվյալների բազաների, գնահատման միասնական մեթոդական մոտեցումների մշակումն ու ստեղծումը: Նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. զարգացման արդի պայմաններում մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատման գործընթացի առաջնային խնդիրների գիտական վերլուծություն և գնահատում,

2. մթնոլորտային օդի վրա ազդեցության գնահատման ընթացակարգի միջազգային առաջատար և ազգային փորձի, մասնավորապես իրավանորմատիվային դաշտի ուսումնասիրում,

3. մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության որակական գնահատման մեթոդական մոտեցումների ուսումնասիրում և կատարելագործման ուղիների մշակում՝ հաշվի առնելով ազգային և միջազգային պարտավորությունները,

4. մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության հետևանքով առաջացած վնասի տնտեսական գնահատում, միջազգային մեթոդական մոտեցումների ուսումնասիրում և ազգային մեթոդական մոտեցումներում դրանց տեղայնացման նպատակահարմարության որոշում և դրանց գիտականորեն հիմնավորում,

5. ՇՄԱԳ գործընթացում ներդնելու նպատակով մթնոլորտային օդի վրա բացասական ազդեցության գնահատման, ինչպես նաև վնասի տնտեսական գնահատման միասնական մեթոդական մոտեցումների ուղեցույցների մշակում:

Տնտեսական գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության հետևանքով առաջացած վնասի որակական և տնտեսական գնահատումների արդյունքում կարելի է եզրակացնել տվյալ երկրի կայուն զարգացման տեսակը, էկոլոգիական անվտանգության ապահովման մակարդակը և նույնիսկ իրավական պատասխանատվության հակակոռուպցիոն մակարդակը:

Ենթադրվում է, որ միայն այս դեպքում է հնարավոր մշակել և ստեղծել մթնոլորտային օդի և ջրային պաշարների վրա բացասական ազդեցության գնահատման մեթոդական մոտեցումների միասնական համակարգ, բարձրացնել ընդունվող բնապահպանական, տնտեսական որոշումների էկոլոգիական գործոնի դերը, նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը և ապահովել բնակչության էկոանվտանգությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության 2018 թ. մարտի 22-ի նիստի N 11 արձանագրային որոշում, Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման ռազմավարություն:

2. ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, տարեկան հաշվետվություններ, 2019, 2020, 2021 թթ., <https://www.ecoinspect.am/hy/reports>, 16.12.22:

3. Վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ, ժամանակային շարքեր, *Շրջակա միջավայրի նախարարություն*, 2015-2020 թթ., <http://env.am/shrjaka-mijavayr/artanetumner>, 16.12.22:

4. ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն, ՀՀ *Շրջակա միջավայրի նախարարություն*, 1999-2017 թթ., <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/termocayin-gazer>, 16.12.22:

5. Շրջակա միջավայր և բնական պաշարներ, բնապահպանական հարկեր. մլն. դրամ, վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ, ՀՀ *Վիճակագրական կոմիտե*, Շրջակա միջավայրի նախարարություն, 2018-2021 թթ.: https://armstat.am/file/article/eco_booklet_2019.pdf, 16.12.22, <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/artanetumner>, 16.12.22:

6. Framework Convention on Climate Change, Grid emission factor for the electricity system of the Republic of Armenia for 2016, *United Nations*, <http://env.am/storage/files/reportgef2016.pdf> 16.12.22:

7. Environmental pollution and product charges in Armenia: assessment of reform progress and directions for further improvement, *OECD*, 2004, <https://www.oecd.org/countries/armenia/34500203.pdf> 16.12.22:

WORKS CITED

1. HH kar'avarut'yan 2018 t'. marti 22-i nisti N 11 ard'anagrayin oroshum, Shrjaka mijavayri pahpanut'yan ev bnakan r'esursneri o'gtagorc'man kar'avarman r'azmavarut'yun [Strategy of protection of environment and control of natural resources], 2018. (in Armenian)

2. HH bnaphpanut'yan ev y'nderqi teschakan marmin, tarekan hashvetvut'yunner, [RA environmental protection and subsoil inspection, annual reports] 2019, 2020, 2021t't' (in Armenian)

3. Shrjaka mijavayri naxararut'yun, Vnasakar nyut'eri artanetumy' mt'nolort, jhamanakayin sharqer [Ministry of Environment, Emission of Harmful Substances into the Atmosphere] 2015-2020t't., <http://env.am/shrjaka-mijavayr/artanetumner> (in Armenian)

4. HH Shrjaka mijavayri naxararut'yun, HH jermocayin gazeri azgayin kadastr hashvetvut'yun, [RA Ministry of Environment, RA National Greenhouse Gas Cadastre Report] 1999-2017t't' (in Armenian)

5. HH Vitwakagrakan komite, shrjaka mijavayr ev bnakan pasharner, bnaphpanakan harker. mln. dram, vnasakar nyut'eri artanetumy' mt'nolort, y'ndameny', haz. t, [RA Statistical Committee, Environment and Natural Resources, Environmental Taxes. Million. Drams, Emission of Harmful Substances into the Atmosphere, Total] 2019, 2020, 2021t't'. (in Armenian)

IN METHODOLOGICAL APPROACHES TO ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT, LEGAL AND METHODOLOGICAL ISSUES OF AIR IMPACT ASSESSMENT IN ARMENIA

NADEZHDA AFYAN

*Armenian State University of Economics,
Chair of Environmental Economics, Lecturer,
Ph.D. in Economics,
Yerevan, the Republic of Armenia*

HRANUSH ALEKSANYAN

*National Polytechnic University of Armenia,
Department of Mining and Mineral Extraction, Master student,
Yerevan, the Republic of Armenia*

The purpose of the article is to present the legislative framework for assessing the negative impact on the atmospheric air in the methodological approaches of environmental impact assessment (EIA) and analytical issues of methodological regulation. To achieve the goal, the following tasks were set: to study, compare and analyze the issues of methodological approaches and the legislative framework for assessing the negative impact on the atmospheric air in Armenia, then to identify and propose ways to improve and harmonize them, combining them with international obligations adopted in the field of environmental protection. The analytical method of comparing and combining statistical secondary data and legal acts is used in the article.

As a result, it was concluded that in order to increase the efficiency of the assessment and examination of economic activities on the environment, as well as to increase the reliability of the justifications for the conclusions of the examination of the environmental impact assessment, at the same time, it is urgent to fulfill the requirements arising from many international environmental obligations, in particular, revision, development, improvement and harmonization of methodological approaches to assessing the negative impact on the atmospheric air. And ensuring the modernization of the toolkit of economic mechanisms aimed at protecting the environment, and the monitoring database in systemic unified methodological approaches.

Keywords: *environment, atmospheric air, negative impact, assessment, expertise, methodological approach, sustainable development.*

В МЕТОДОЛОГИЧЕСКИХ ПОДХОДАХ ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ПРАВОВЫЕ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА АТМОСФЕРНЫЙ ВОЗДУХ В АРМЕНИИ

НАДЕЖДА АФЯН

*лектор кафедры экономики природопользования
Армянского государственного экономического университета,
кандидат экономических наук,
г. Ереван, Республика Армения*

ГРАНУШ АЛЕКСАНЯН

*магистрант кафедры горное дело и добыча полезных ископаемых
Национального политехнического университета Армении,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи – представить законодательную базу оценки негативного воздействия на атмосферный воздух в методических подходах оценки воздействия на окружающую среду (ОВОС) и аналитические вопросы методического регулирования. Для достижения цели поставлены следующие задачи: изучить, сравнить и проанализировать вопросы методологических подходов и законодательной базы по оценке негативного воздействия на атмосферный воздух в Армении, затем выделить и предложить пути их совершенствования и согласования, сочетая их с международными обязательствами, принятыми в области охраны окружающей среды. В статье использован аналитический метод сопоставления и объединения статистических вторичных данных и правовых актов.

В результате сделан вывод о том, что в целях повышения эффективности оценки и экспертизы хозяйственной деятельности на окружающую среду, а также повышения достоверности обоснований выводов экспертизы оценки воздействия на окружающую среду необходимо безотлагательно начать выполнять требования, вытекающие из многих международных экологических обязательств, в частности, пересмотр, разработку, совершенствование и согласование методических подходов к оценке негативного воздействия на атмосферный воздух, а также обеспечение модернизации инструментария экономических механизмов, направленных на охрану окружающей среды, и базы данных мониторинга в системных единых методологических подходах.

Ключевые слова: *окружающая среда, атмосферный воздух, негативное воздействие, оценка, экспертиза, методический подход, устойчивое развитие.*

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԲԱՐՁՐ ԳՆԱՃԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ*

ՀՏԴ 336

DOI: 10.52063/25792652-2022.4.15-186

ԵՎԳԵՆՅԱ ՀԱՅՐԻՅԱՆ

Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման (ԱԵԳՄՄ) անդամ, Արցախի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ք. Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն evgenyahayriyan@mail.ru

Հոդվածի նպատակն է ներկայացնել դրամավարկային քաղաքականության դրսևորման առանձնահատկությունները բարձր գնաճային միջավայրի պայմաններում: Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ներկայացնել դրամավարկային քաղաքականության ներկայիս միտումները, վերլուծության ենթարկել ՀՀ դրամավարկային քաղաքականության գործիքների և դրամավարկային ցուցանիշների վարքագիծը 2015-2022 թթ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են ընդհանուր գիտական (համակարգային վերլուծություն, համադրում, վերլուծում, ինդուկցիա, դեդուկցիա և ստուգում՝ հետևելով մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկային և միտումներին), ինչպես նաև հատուկ գիտական (համեմատական-վերլուծական, նորմատիվ տրամաբանական) մեթոդներ:

Դրամավարկային քաղաքականության արդյունավետ իրականացմամբ է պայմանավորված տնտեսությունում գնաճի կառավարման գործընթացի արդյունավետությունը: Ներկայիս պայմաններում ՀՀ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության՝ գնաճի վրա ազդեցության մեխանիզմները շատ հաճախ արդյունավետ չեն գործում, ինչն էլ թուլացնում է ՀՀ ԿԲ կողմից վարվող գնաճի նպատակադրման ռազմավարության միջանկյալ և վերջնական նպատակի միջև կապը: Վերոնշյալը պայմանավորված է մի կողմից ՀՀ տնտեսությունում փողի տոկոսադրույքների սահմանման ոչ ճիշտ հիերարխիայով, մյուս կողմից՝ ներկրվող ապրանքների գնաճի բարձր տեմպերով և ներքին տնտեսությունում սպառողական գների ձևավորման անառողջ մրցակցային միջավայրով: ՀՀ Կենտրոնական բանկը միջնաժամկետ հեռանկարում պետք է վերանայի դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքում կիրառվող գործիքակազմը հետազայում գնաճային ճնշումների առավել արդյունավետ կառավարման նպատակով:

Հիմնաբառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Կենտրոնական բանկ, դրամավարկային քաղաքականություն, գնաճ, գնաճային ճնշումներ, դրամավարկային գործիքներ, փողի զանգված:

* Հոդվածը ներկայացվել է 20.11.2022թ., գրախոսվել՝ 10.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

Ներածություն

Կենտրոնական բանկերի կարևոր դերը տնտեսությունում արդյունավետ դրամավարկային քաղաքականության իրականացումն է գնաճի կայուն մակարդակի և ֆինանսական կայունության ապահովման նպատակով: Դրամավարկային քաղաքականությունը կոչված է նաև նպաստելու տնտեսական տատանումների կառավարման գործընթացի արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Վերջին տասնամյակների ընթացքում ստանդարտները, որոնց շրջանակներում կենտրոնական բանկերը վարում էին դրամավարկային քաղաքականություն, փոփոխության են ենթարկվել:

Դրամավարկային քաղաքականության ներկայիս դրսևորումները

1980-ական թվականներից սկսած գնաճի նպատակադրման ռազմավարությունը դարձել է դրամավարկային քաղաքականության առաջատար ռազմավարությունը: Աշխարհի առաջատար երկրների կենտրոնական բանկերը անցում կատարեցին գնաճի նպատակադրման ռազմավարությանը: Հետագայում նաև զարգացող երկրների մի մասը փոփոխեց ազդեցատների նպատակադրման ռազմավարությունից անցում կատարեց գնաճի նպատակադրման ռազմավարությանը:

Կենտրոնական բանկերը դրամավարկային քաղաքականությունը իրականացնում են տնտեսությունում փողի առաջարկի ճշգրտման ճանապարհով, որն ապահովվում է դրամավարկային քաղաքականության գործիքակազմի միջոցով:

Դրամավարկային քաղաքականության գործիքակազմում կարևոր դերակատարություն ունեն բաց շուկայական գործառնությունները: Վերջիններիս միջոցով կենտրոնական բանկերը ազդում են կարճաժամկետ տոկոսադրույքների վրա, որոնք էլ, իրենց հերթին, ազդեցություն են ունենում երկարաժամկետ տոկոսադրույքների տնտեսական ակտիվության վրա: Տոկոսադրույքների փոփոխության ազդեցության մեխանիզմները տնտեսության վրա ընդունված է անվանել փողի փոխանցումային մեխանիզմ:

Աշխարհի մի շարք երկրներում, հատկապես զարգացող երկրներում փողի փոխանցումային մեխանիզմներն արդյունավետ չեն գործում: Դրամավարկային քաղաքականության արդյունավետ իրականացման նպատակով կենտրոնական բանկերը իրենց տրամադրության տակ պետք է ունենան կարճաժամկետ տոկոսադրույքների վրա ազդեցության արդյունավետ մեխանիզմներ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո աշխարհի զարգացած երկրների կենտրոնական բանկերը սկսել են թուլացնել դրամավարկային քաղաքականության գործիքակազմը՝ կարճաժամկետ տոկոսադրույքը հասցնելով գրեթե զրոյական մակարդակի, ինչը սահմանափակել է տոկոսադրույքների իջեցման հետագա հնարավորությունը:

Գնանկման վտանգը հաշվի առնելով՝ կենտրոնական բանկերը սկսեցին կիրառել դրամավարկային կարգավորման ոչ ստանդարտ մեխանիզմներ, մասնավորապես՝ երկարաժամկետ պարտատոմսերի գնման ճանապարհով (այսպիսի փորձ կիրառվեց ԱՄՆ-ում, Միացյալ Թագավորություններում, Եվրոգոնայում, Ճապոնիայում և այլն): Այս մեխանիզմների կիրառումը նպատակ ուներ իջեցնել երկարաժամկետ տոկոսադրույքները և թուլացնել դրամավարկային քաղաքականության պայմանները:

COVID-19 համաճարակի բացասական ազդեցություններին դիմակայելու նպատակով ամբողջ աշխարհի կենտրոնական բանկերի դրամավարկային քաղաքականությունը կրում էր ընդլայնողական բնույթ, որը դրսևորվում էր տնտեսությանը անհրաժեշտ իրացվելի միջոցներ ներարկելով. նպատակը նաև վարկավորման անհրաժեշտ ծավալների ապահովումն էր: Կրժուկային և

պարտատոմսերի շուկաներում ձևավորված շուկերի մեղմացման նպատակով զարգացող երկրների կենտրոնական բանկերը սկսեցին կիրառել արտարժութային ինտերվենցիաներ:

Դրամավարկային քաղաքականության այս կամ այն ռեժիմի ընտրությունը պայմանավորված է նաև տվյալ երկրի արժութային քաղաքականությամբ: Այն երկրներում, որտեղ վարվում է ֆիքսված փոխարժեքի քաղաքականություն, կենտրոնական բանկերն ունեն դրամավարկային քաղաքականության անկախության ավելի նեղ շրջանակներ, քան այն երկրների կենտրոնական բանկերը, որտեղ իրականացվում է լողացող փոխարժեքի քաղաքականություն: Որոշ երկրներում, անկախ կիրառվող լողացող փոխարժեքի քաղաքականությունից, կենտրոնական բանկերը փորձում են կառավարել փոխարժեքը գնաճային ճնշումներից խուսափելու նպատակով: Սակայն պետք է նշել, որ կենտրոնական բանկերի նշված ռազմավարությունը գնաճի զսպման վրա ունենում է կարճաժամկետ ազդեցություն: Արդյունքում միայն լրիվ լողացող փոխարժեքի քաղաքականության ապահովման պարագայում է հնարավոր կենտրոնական բանկերի կողմից գնաճի ռազմավարության իրականացման բարձր արդյունավետությունը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաճամբ ցույց տվեց, որ երկրները կարիք ունեն զսպելու ֆինանսական շուկաներին բնորոշ ռիսկերը նպատակաուղղված ֆինանսական քաղաքականության իրականացման միջոցով: Տնտեսությունում ֆինանսական կայունության ապահովման նպատակով որոշ երկրների կենտրոնական բանկեր մշակել և իրականացնում են մակրոպոլիտեխնիկալ քաղաքականություն: Մակրոպոլիտեխնիկալ քաղաքականության արդյունավետ իրականացման տեսանկյունից կարևորվում է ինստիտուցիոնալ անհրաժեշտ հիմքերի առկայությունը: Կենտրոնական բանկերն օժտված են արդյունավետ մակրոպոլիտեխնիկալ քաղաքականության իրականացման անհրաժեշտ պայմաններով. նախ վերջիններս հնարավորություն ունեն վերլուծության ենթարկել տնտեսության համակարգային ռիսկը, և երկրորդ՝ կենտրոնական բանկերը ունեն անկախության բավարար և անհրաժեշտ մակարդակ:


COVID-19 համաճարակի հետևանքով առաջացած տնտեսական դժվարություններին դիմակայելու նպատակով կենտրոնական բանկերը թուլացրել են իրենց տրամադրության տակ եղած մակրոպոլիտեխնիկալ պահուստները՝ նպատակ ունենալով մեղմելու ֆինանսական շուկաներում ի հայտ եկած շուկերը և աջակցելու տնտեսության վարկավորման գործընթացին:

Ճգնաճամային իրավիճակներում կենտրոնական բանկերի քաղաքականությունը հիմնականում միտված է տնտեսությանը լրացուցիչ իրացվելիության միջոցներ ներարկելուն, վարկավորման խթանմանը, դրանով իսկ գործազրկության մակարդակի նվազեցմանը: Սակայն տնտեսական ցիկլերի տեսությանը բնորոշ են տատանումները. տնտեսության առջև ծառայած որևէ խնդրի լուծմանը հաջորդում է մյուս խնդրի ի հայտ գալը, մասնավորապես՝ տնտեսության խթանման նպատակով իրացվելի միջոցների ներարկումը հետագայում հանգեցնում է գնաճային ճնշումների:

ՀՀ դրամավարկային քաղաքականության գործիքների և ցուցանիշների վարքագիծը 2015-2022 թթ.


Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում, վերջին տարիներին նկատելի են գնաճային ճնշումները, որ դրսևորվում են հիմնականում սպառողական գների աճով: Վերջինս պայմանավորված է ինչպես ներկրվող ապրանքների գնաճով, այնպես էլ ՀՀ

տնտեսությանը բնորոշ գների ձևավորման անառողջ մրցակցային միջավայրով:



Գծապատկեր 1. Գնաճի դրսևորումները ՀՀ-ում 2015-2021 թթ.¹

Գծապատկերում դիտարկված ժամանակահատվածում գնաճային ճնշումները առավել ցայտուն են դրսևորվել վերջին երեք տարիներին: 2015-2019 թթ. ընկած ժամանակահատվածում բնականոն գնաճի միջին տարեկան մակարդակը կազմել է 1.8 %, իսկ 2020-2022 թթ. (ներառյալ 2022 թ. կանխատեսումները) այն կկազմի մոտ 5.7 %: Սպառողական գների ինդեքսի միջին տարեկան գնաճը 2015-2019 թթ. ընկած ժամանակահատվածում կազմել է 1.5 %, իսկ 2020-2022 թթ. (ներառյալ 2022 թ. կանխատեսումները)՝ 5.6 %: Դիտարկվող ժամանակաշրջանում 2016 թվականը համարվում է գնանկումային տարի, իսկ 2021 թվականին արձանագրվեց գնաճի ամենաբարձր մակարդակը:




Գծապատկեր 2. ՀՆԱ-ի դինամիկան 2015-2022 թթ. ՀՀ-ում²

¹ www.cba/հրապարակումներ

² www.cba/հրապարակումներ


2015-2021 թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում ՀՆԱ-ի միջին տարեկան աճը կազմել է 3.1 %, 2020 թվականին տնտեսությունը գրանցեց 7.4 % տնտեսական անկում, որից հետո արձանագրվեց 5.7 % տնտեսական աճ, իսկ 2022 թվականին կանխատեսվում է, որ տնտեսական աճը կկազմի մոտ 13 %: Ընդհանուր առմամբ, տնտեսական աճի դինամիկան համահունչ է գնաճի դինամիկային, բացառություն է կազմում 2020 թվականը, որը պայմանավորված էր պատերազմական գործողություններով:



Գծապատկեր 3. Դրամավարկային քաղաքականության գործիքների դինամիկան ՀՀ-ում 2020-2022 թթ.¹

ՀՀ Կենտրոնական բանկը, նպատակ ունենալով զսպել տնտեսությունում արձանագրված գնաճի բարձր մակարդակը, 2020-2022 թթ. ընթացքում սկսել է պարբերաբար բարձրացնել դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները: Եթե 2020 թվականի վերջին վերաֆինանսավորման տոկոսադրույքը կազմում էր 5.25 %, ապա 2022 թվականի հոկտեմբերին այն 2 անգամ բարձր էր՝ 10.5 %: 2021 թվականի դեկտեմբերից մինչև 2022 թվականի նոյեմբերը վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել է 2.75 տոկոսային կետով կամ 35 %-ով: Լուծարդային ռեպո տոկոսադրույքը 2020 թվականի վերջին 6.75 % ցուցանիշից բարձրացել է և 2022 թվականի նոյեմբերին կազմել է 12 %: 2021 թվականի դեկտեմբերից մինչև 2022 թվականի նոյեմբերը լուծարդային ռեպոյի տոկոսադրույքը բարձրացվել է 2.75 տոկոսային կետով կամ 30 %-ով: Դրամական միջոցների ներգրավման տոկոսադրույքը վերջին երկու տարիներին 3.75 %-ից պարբերաբար բարձրացվել է և 2022 թվականի նոյեմբերին կազմել 9 %, տարեսկզբի համեմատ գործիքի տոկոսադրույքը բարձրացվել է մոտ 44 %-ով (տարեսկզբին այն կազմում էր 6.25 %): Դրամավարկային քաղաքականության նշված երեք գործիքների տոկոսադրույքների բացարձակ աճը նույնն էր՝ 2.75 տոկոսային կետ:

¹ www.cba/հրապարակումներ



Գծապատկեր 4. Դրամավարկային ցուցանիշների դինամիկան 2015-2021 թթ.¹

Ինչպես երևում է գծապատկերից, ի տարբերություն փողի զանգվածի, դրամային զանգվածը դրսևորել է տատանողականության ավելի բարձր մակարդակ: Տնտեսությանը տրված վարկերի դինամիկայի վարքագծին համահունչ՝ դրսևորվել է դրամային զանգվածը: 2015-2017 թթ. ընթացքում դրամավարկային նշված ցուցանիշները դրսևորել են աճի միտում, որը պայմանավորված էր ՀՀ տնտեսությունում այդ տարիներին արձանագրած գնաճի ցածր մակարդակով, ինչի արդյունքում ՀՀ ԿԲ-ը, վարելով ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն, լրացուցիչ իրացվելիություն էր ներարկել տնտեսությանը: Այնուհետև 2018-2019 թթ. ինչպես վարկերը, այնպես էլ փողի զանգվածը դրսևորեցին աճի դինամիկա, իսկ արդեն 2019-2020 թթ. ցուցանիշները դրսևորեցին նվազման դինամիկա, որը պայմանավորված էր համաճարակի բացասական հետևանքների վերացման նպատակով ՀՀ ԿԲ կողմից անուղղակի ձևաչափով տնտեսությանը լրացուցիչ իրացվելիության ներարկմամբ, որն էլ նաև որոշ չափով պատճառ էր հանդիսացել հետագա գնաճային երևույթների ձևավորմանը ՀՀ-ում: 2021 թվականին ՀՀ ԿԲ կողմից սկսեց վարվել զսպողական դրամավարկային քաղաքականություն, ինչի արդյունքում վարկերը և դրամային զանգվածը դրսևորեցին նվազման դինամիկա:

Եզրակացություն

Դրամավարկային քաղաքականության արդյունավետ իրականացմամբ է պայմանավորված տնտեսությունում գնաճի կառավարման գործընթացի արդյունավետությունը: Վերջին տարիներին աշխարհաքաղաքական զարգացումները իրենց բացասական ազդեցությունն են թողնում տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման գործընթացի վրա: Արդյունքում դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմները շատ հաճախ տնտեսությանը համապատասխան ազդակներ չեն հաղորդում: ՀՀ տնտեսությունում գնաճի բարձր

¹ www.cba/հրապարակումներ

մակարդակ է արձանագրվել 2020-2022 թվականներին: Բարձր գնաճային ճնշումներին դիմակայելու նպատակով ՀՀ ԿԲ կողմից սկսեց իրականացվել զսպողական դրամավարկային քաղաքականություն, բարձրացվեցին դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները, որոնց ազդեցությամբ դրամային զանգվածը և փողի ընդհանուր զանգվածը դրսևորեցին նվազման միտում: Սակայն ՀՀ ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության՝ գնաճի վրա ազդեցության մեխանիզմներն արդյունավետ չեն գործում, ինչն էլ թուլացնում է ներկայումս ՀՀ ԿԲ կողմից վարվող գնաճի նպատակադրման ռազմավարության միջանկյալ և վերջնական նպատակի միջև կապը: Վերոնշյալը պայմանավորված է մի կողմից ՀՀ տնտեսությունում փողի տոկոսադրույքների սահմանման ոչ ճիշտ հիերարխիայով, մյուս կողմից՝ ներկրվող ապրանքների գնաճի բարձր տեմպերով և ներքին տնտեսությունում սպառողական գների ձևավորման անառողջ մրցակցային միջավայրով: ՀՀ Կենտրոնական բանկը միջնաժամկետ հեռանկարում պետք է վերանայի դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքում կիրառվող գործիքակազմը՝ հետագայում գնաճային ճնշումների առավել արդյունավետ կառավարման նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Моисеев, Сергей Рустамович, Денежно-кредитная политика: теория и практика: Москва, 2011, стр.156-162
2. IMF Annual Report 2014 (2014). Appendix II Financial Operations and Transactions. Washington: International Monetary Fund.
3. Nekipelov, A., Golovnin M. "Strategy and Tactics of Monetary Policy During Global Economic Crisis": Problems of Economic Transition, 2014, pp.4–20
4. www.cba.am
5. www.IMF.org
6. www.stat.am

WORKS CITED

1. Moiseew, Sergej. Denejno kreditnaja politika: teorija i praktika. Moskva [Credit-Monetary Policy: Theory and Practice. Moscow] 2011. (In Russian)

THE FEATURES OF REPUBLIC ARMENIA MONETARY POLICY IN A HIGH INFLATION ENVIRONMENT

YEVGENYA HAYRIYAN

*Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) Member;
Artsakh State University, Faculty of Economics, Department of Finance and Accounting,
Ph.D. in Economics, Associate Professor,
Stepanakert, the Republic of Artsakh*

The purpose of this article is to present the features of monetary policy in the conditions of high inflation. The objectives are as follows: to present the current trends of monetary policy, to analyze the behavior of RA monetary policy instruments and monetary indicators in 2015-2022.

The research used general (system analysis, synthesis, induction, deduction, verification and tracking of dynamics and trends of macroeconomic indicators) and special (comparative analysis, normative and logical) scientific methods.

The effectiveness of the inflation management process in the economy depends on the effective implementation of the monetary policy. In the current conditions the mechanisms of influence on inflation very often do not work effectively, which weakens the connection between the intermediate and final goal of the inflation targeting strategy conducted by the Central Bank of RA. The above is due to the incorrect hierarchy of money interest rates in the RA economy, on the one hand, and the high rate of inflation of imported goods and the unhealthy competitive environment of consumer price formation in the domestic economy, on the other hand.

In the medium term, the Central Bank of RA should review the tools used during the implementation of the monetary policy in order to manage the inflationary pressures more effectively in the future.

Keywords: *Republic of Armenia, Central Bank, monetary policy, inflation, inflationary pressures, monetary instruments, money supply.*

ПРОЯВЛЕНИЯ ДЕНЕЖНО-КРЕДИТНОЙ ПОЛИТИКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В УСЛОВИЯХ ВЫСОКОЙ ИНФЛЯЦИИ

ЕВГЕНИЯ АЙРИЯН

*член Объединения молодых ученых и специалистов Арцаха (ОМУСА),
преподаватель кафедры финансового учета факультета экономики
Арцахского государственного университета,
кандидат экономических наук, доцент,
г. Степанакерт, Республика Арцах*

Цель данной статьи – представить особенности денежно-кредитной политики государства в условиях высокой инфляции. Из поставленной цели вытекают следующие задачи: представить современные тенденции денежно-кредитной политики, проанализировать поведение инструментов денежно-кредитной политики Республики Армения и монетарных показателей в 2015-2022 гг.

В ходе исследования использовались общие (системный анализ, синтез, индукция, дедукция, проверка и отслеживание динамики и тенденций макроэкономических показателей) и специальные (сравнительный анализ, нормативно-логический) научные методы.

Эффективность процесса управления инфляцией в экономике зависит от эффективной реализации денежно-кредитной политики. В текущих условиях механизмы воздействия на инфляцию очень часто не работают эффективно, что ослабляет связь между промежуточной и конечной целью стратегии таргетирования инфляции, проводимой ЦБ РА. Это связано с неправильной иерархией ставок денежного процента в экономике РА с одной стороны, и высоким уровнем инфляции импортных товаров и нездоровой конкурентной средой формирования потребительских цен в отечественной экономике, с другой стороны.

В среднесрочной перспективе Центральному банку РА следует пересмотреть инструменты, используемые при реализации денежно-кредитной политики, с целью более эффективного управления инфляционным давлением в будущем.

Ключевые слова: *Республика Армения, Центральный банк, денежно-кредитная политика, инфляция, инфляционное давление, монетарные инструменты, денежная масса.*

ՀՀ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ*

ՀՏԴ 631.155:631.115.8 (479.25)

DOI: 10.52063/25792652-2022.4.15-194

ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոքիզնետի կառավարման և քաղաքականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն ashot.voskan@gmail.com

ԱՆՆԱ ՔԱՐՏԱՇՅԱՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոքիզնետի կառավարման և քաղաքականության ամբիոնի ասիստենտ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն gartashyananna@gmail.com

Գյուղատնտեսության կայուն զարգացումը Էապես պայմանավորված է բուսաբուծության և անասնաբուծության ճյուղերում արտադրված արտադրանքի լիարժեք իրացման կազմակերպմամբ և կառավարմամբ: Իրացման դժվարություններով պայմանավորված՝ գյուղացիական տնտեսություններում առկա ներուժը արդյունավետ չի օգտագործվում: Ըստ Էության, գյուղատնտեսական ապրանք արտադրողները գործունեություն են ծավալում ոչ իրենց արտադրական հնարավորություններին համապատասխան:

Հոդվածի նպատակն է գյուղացիական տնտեսությունների հետ հարցումների իրականացման միջոցով պարզել գյուղատնտեսական արտադրանքի իրացման հետ կապված դժվարությունները և առաջարկել դրանց վերացման հնարավոր մոտեցումներ: Խնդիր է դրվել բացահայտելու գյուղատնտեսական արտադրանքի իրացման կազմակերպման առանձնահատկությունները, իրացման գործընթացի խոչընդոտներն ու առաջարկել վերջիններիս հաղթահարման ուղիներ:

Հոդվածում կիրառվել են համեմատական վերլուծության, վիճակագրական, անհատական հարցումների մեթոդները:

Մեր գնահատմամբ՝ գյուղացիական տնտեսություններում գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը գործնականում կարող են նպաստել.

- իրացման կոոպերատիվների, միությունների ձևավորումը, որոնք լիազորագրերի միջոցով կարող են կնքել դեռևս չարտադրված արտադրանքի իրացման մեկ միասնական պայմանագիր,
- գյուղատնտեսական արտադրանքի իրացման շուկաների գործունեության կանոնակարգումը, ինչպես նաև լոգիստիկ, բաշխման կենտրոնների և մեծածախ շուկաների ձևավորումը,
- Երևան քաղաքում գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառային վաճառքի տարածքների ընդլայնումը և փողոցային առևտրի կանոնակարգումը,

* Հոդվածը ներկայացվել է 02.11.2022թ., գրախոսվել՝ 01.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

• վերամշակման նպատակով գյուղատնտեսական հուճքի գնման գնի սահմանման մասնագիտական հաշտարար հանձնաժողովի (արտադրող, վերամշակող ընկերությունների ներկայացուցիչներ, ոլորտի առաջատար մասնագետներ և այլն) ձևավորումը, որի հիմնական գործառույթը, ըստ օրենքի, պետք է հանդիսանա իրացման նվազագույն գնի սահմանումը և պայմանագրերի կնքմանն աջակցելը:

Հիմնաբառեր՝ գյուղատնտեսություն, գյուղացիական տնտեսություններ, հարցաթերթիկ, հեռախոսային հարցում, արտադրանքի իրացում, մեծածախ և մանրածախ շուկա, իրացման կոոպերատիվ:

Ներածություն

Գյուղացիական տնտեսությունների շրջանում իրականացված հարցումներն ու վիճակագրական տվյալների վերլուծությունները վկայում են, որ ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի իրացման կազմակերպումը շարունակում է մնալ գյուղատնտեսության առջև ծառայած և իրատապ լուծում պահանջող կարևորագույն խնդիրներից մեկը:

Գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում վաճառքն իրականացվում է հիմնականում գյուղատնտեսական մթերք արտադրողների և վերավաճառողների միջոցով տարերայնորեն, չկարգավորված սխեմաներով, առանց համապատասխան սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման: Փոքր ծավալներով գյուղատնտեսական արտադրանքի իրացման դեպքում մասնագիտացված բեռնափոխադրման ծառայություններից օգտվելը ծառայության բարձր գների պատճառով տնտեսապես շահավետ չէ, և փոխադրումն իրականացվում է հիմնականում չհարմարեցված տրանսպորտային միջոցներով, որոնք բացի գյուղատնտեսական մթերքներից կարող են տեղափոխել նաև այլ ապրանքներ: Նման դեպքերում իրացման ծավալները միտված չեն ավելացմանը, վաճառքի գները չեն արտացոլում շուկայի իրական պատկերը, որն էլ իր հերթին անդրադառնում է գյուղացիական տնտեսությունների եկամուտների մակարդակի վրա:

Իրացման գործընթացի օպտիմալ կազմակերպմանը խոչընդոտում են նաև հետբերքահավաքային անբավարար պայմանները (պահեստներ, սառնարանային տնտեսություններ, մասնագիտացված մթերող կազմակերպություններ և այլն): Հանրապետությունում հիմնականում առկա են գյուղատնտեսական արտադրանքի իրացման եռամակարդակ և քառամակարդակ արժեչղաներ, գնորդները հիմնականում վերավաճառող միջնորդներն են, որոնք չկանոնակարգված շուկաներում իրականացնում են մեծածախ և մանրածախ առևտուր, որն էլ, իր հերթին, բացասաբար է անդրադառնում գնագոյացման վրա: Շուկաներում մեծածախ առևտրի դեպքում գները հիմնականում ձևավորվում են նախորդ օրվա գների հիման վրա, իսկ մանրածախի դեպքում հմուտ վերավաճառողները, սեփական փորձից ելնելով, կիրառում են այնպիսի գնային քաղաքականություն, որը գնագոյացումը դարձնում է իրենց համար ավելի նպատակահարմար (Թանայան): Մանրածախ առևտուրը հիմնականում իրականացվում է խանութներում կամ սուպերմարկետներում, որտեղ որոշակի լուծվում են փաթեթավորման, տարայավորման և տեսակավորման հետ կապված խնդիրները: Մասնագիտացած վերավաճառողները վաճառքի գործընթացում իրականացնում են մարքեթինգային ռազմավարություն, լրացուցիչ այլ գործառույթներ՝ ապրանքների և ծառայությունների տեսակավորում, գնորդների սպասարկման արդյունավետ միջոցառումների կիրառում, ապրանքների պահպանում և այլն, որոնք էլ ավելացնում են վաճառվող ապրանքների արժեքը: Իրականում վերավաճառող սուբյեկտների մի ստվար մասը հարկման դաշտում չեն, առևտրաշրջանառությունը անվերահսկելի է, ուստի

գյուղատնտեսական արտադրանքի իրացման արժեքը հայտնվում են շահողի դերում:

Վերլուծական մաս

ՀՀ-ում արտադրվող գյուղատնտեսական արտադրանքի զգալի մասը (2017-2021 թթ. միջին տվյալներով հացահատիկի և հատիկաընդեղենի շուրջ 41,6 %-ը, կարտոֆիլի, պտղի և հատապտղի 22-24 %-ը, կաթի և կաթնամթերքի 34,4 %-ը և ձկնի 61,0 %-ը) (Վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ) օգտագործվում է գյուղացիական տնտեսություններում, իսկ որոշ մասն իրացվում է ապրանքափոխանակության սկզբունքով, ինչը խոչընդոտում է տնտեսությունների ապրանքայնության մակարդակի բարձրացմանը:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների՝ ապրանքայնության համեմատաբար բարձր մակարդակ ունեն պարենային բոստանը (94.3 %), խաղողը (90.5 %), միսը (85.0 %), բանջարեղենը (82.5 %), պտուղն ու հատապտուղը (64.6 %), իսկ ցածր մակարդակ՝ հացահատիկն ու հատիկաընդեղենը՝ 30.4%, ձուն՝ 38.8% (տատանվում է 37.0-41.1%-ի սահմաններում), կարտոֆիլը՝ 48.7% (տատանվում է 43.8-57.6% -ի սահմաններում), կաթը՝ 60.7% (տատանվում է 56.8-64.4%-ի սահմաններում) (տե՛ս աղյուսակ 1): Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության միջին կշռված մակարդակը 2017 թ. կազմել է 56.7%, 2018 թ.՝ 56.5%, 2019 թ.՝ 56.3%, 2020 թ.՝ 57.2%, 2021 թ.՝ 57.0% (Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2021 թվականին):

Մեր գնահատմամբ՝ գյուղատնտեսական տարբեր ապրանքատեսակների ապրանքայնության ցածր մակարդակը պայմանավորված է հիմնականում չկանոնակարգված իրացման ուղիների կիրառմամբ, մրցունակությամբ, հետբերքահավաքային կարողությունների անբավարարությամբ, քաղաքակիրթ շուկաների և լոգիստիկ կենտրոնների բացակայությամբ, արտահանման դժվարություններով, վերամշակող ընկերությունների հետ փոխհարաբերությունների անկատարությամբ, վերամշակող ընկերությունների արտադրական հզորությունների ոչ լիարժեք օգտագործմամբ և այլն (Ոսկայան, 55):

Եթե փորձենք արտադրության ծավալների և իրացման ծավալների կապը ներկայացնել ֆունկցիոնալ կախվածության տեսքով, ապա այն կունենա հետևյալ տեսքը՝

$$ԱԾ = f (ԻԾ), որտեղ՝$$

ԱԾ- արտադրության ծավալ

ԻԾ- իրացման ծավալ:

Աղյուսակ 1¹


Գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության մակարդակը 2017 – 2021 թթ. /տոկոսներով/

Արտադրանքի տեսակը	Տարիներ					2017- 2021 թթ. միջին տվյալները
	2017թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.	
Հացահատիկ և հատիկաընդեղեն	35.1	31.4	31	30.8	23.7	30.4
Կարտոֆիլ	57.6	47.8	47.2	47.4	43.8	48.7

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի «Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2017, 2019, 2021 թվականներին» Վիճակագրական տեղեկագրերի հիման վրա:


Բանջարեղեն	80.8	81.6	82.9	84.8	82.2	82.5
Պարենային բուստան	92.3	92.4	95	94.6	97.2	94.3
Պտուղ և հատապտուղ	65.0	70.2	64.3	63.8	59.8	64.6
Խաղող	89.8	90.2	90.8	91	90.7	90.5
Միս	80.8	82.3	86.4	88.7	86.8	85.0
Կաթ	56.8	62.0	60.4	59.7	64.4	60.7
Ձու	41.1	40.4	38.6	37.1	37.0	38.8

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման արժեքը այլու առկա խնդիրները բացահայտելու նպատակով ՀՀ Արարատի, Արմավիր և Տավուշի մարզերի 105 տնտեսավարողների շրջանում նախապես կազմված հարցաթերթիկների հիման վրա իրականացվել է հարցում՝ հարցաթերթիկների լրացման ու հեռախոսային հարցման ձևով: Հարցմանը մասնակցել են 105 տնտեսավարող՝ 38 Արմավիրի մարզից, 39 Արարատի մարզից և 28 Տավուշի մարզից: Հարցմանը մասնակցած տնտեսավարողներից մինչև 1 հա հողատարածք ունեն 44 տնտեսավարող, 1-5 հա 46՝ տնտեսավարող, իսկ 5-10 հա՝ ընդամենը 14 տնտեսավարող (տե՛ս գծապատկեր 1):




Գծապատկեր 1. Հարցմանը մասնակից տնտեսավարողների հողատարածքները

Տնտեսավարողների կողմից արտադրված արտադրանքի իրացման հիմնական ուղիներ են նշվել՝ իրացում տեղում, միջնորդների միջոցով, որոնք իրացնում են ներքին շուկայում, միջնորդներ, որոնք իրացնում են արտաքին շուկայում, մանրամեծածախ կետերում (շուկաներում), վերամշակողներին, առևտրի կետերում (տուպերմարկետներ), ճանապարհներին և Երևանի շուկաներում: Ընդ որում, 43 տնտեսավարող նշել է իրացման միայն 1 ուղի, 58 տնտեսավարող՝ 1-ից ավելի ուղի, իսկ 4 տնտեսավարող ոչինչ չեն նշել: Առավելագույն թվով տնտեսավարողներ գյուղատնտեսական արտադրանքն իրացնում են տեղում և մանրամեծածախ կետերում (շուկաներում) (տե՛ս գծապատկեր 2): Հարցման մասնակիցներից շուրջ 88,6 %-ը արտադրանքն իրացնում է անմիջապես, և միայն 11,4 %-ն է նշել, որ իրացումը կազմակերպում է որոշ ժամանակ պահպանելուց հետո:



Գծապատկեր 2. Գյուղատնտեսական արտադրանքի իրացման հիմնական ուղիները




Գծապատկեր 3. Գյուղատնտեսական արտադրանքի իրացման գործընթացում ծագած դժվարությունները

Իրացման գործընթացում տնտեսավարողների կողմից առաջադրված դժվարությունները կարելի է բաժանել 2 խմբի՝ ներտնտեսային (բերքի ոչ ապրանքային տեսքը, տեղափոխման դժվարությունները) և արտաքին (ընդունման կետերի բացակայությունը, իրացման շուկաների և վերամշակողների հեռու լինելը, թելադրվող ցածր գները, շուկայական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը (ճանապարհներ, տրանսպորտային միջոցներ և այլն), շուկայի հասանելիությունը, պահեստների բացակայությունը, վաճառքի ցածր գինը և այլ)։ Ընդ որում, մեծամասնության՝ շուրջ 32 %-ի համար իրացման հիմնական խոչընդոտ է հանդիսանում շուկայում միջնորդների վաճառքի ցածր գները, իսկ շուրջ 15 %-ի համար՝ վերամշակողների առաջարկած և արդյունքում վճարված ցածր գները (տե՛ս գծապատկեր 3):

Արտադրանքի տեղափոխման հետ կապված դժվարություններ նշել են 30 տնտեսավարող և առանձնացրել են շուկայի, վաճառքի վայրի հեռավորությունը (հիմնականում կաթ իրացնողներ), բեռնատար մեքենա (հիմնականում պտուղ, միս, կարտոֆիլ և ցորեն իրացնողներ), սառնարան-մեքենա (հիմնականում ծիրան, սալոր և խաղող իրացնողներ) գտնելը, անբարեկարգ ճանապարհները (միս և դեղձ իրացնողներ), տեղափոխման վայրի անորոշությունը (միս իրացնողներ), ծառայության գինը, տեղափոխման պարագաների (արկղեր) բարձր գինը (բանջարեղեն և պտուղ իրացնողներ): Գյուղացիական տնտեսությունները հատկապես ընդգծում էին հետբերքահավաքային և իրացման գործընթացային ժամանակաշրջանում արտադրանքի շուրջ 20-25% կորուստների մասին: Չատկանշական է, որ հարցվածներից միայն 19,0%-ը կամ ընդամենը 20 տնտեսավարող է արտադրանքն իրացնում նախօրոք կնքված պայմանագրերով:

Տնտեսությունում արտադրված արտադրանքն արտահանում են 40 տնտեսավարող կամ հարցվածների 38,1 %-ը, ընդ որում՝ արտահանմամբ անձամբ զբաղվում են 6 տնտեսավարող, իսկ միջնորդների միջոցով՝ 34 տնտեսավարող: Արտահանումն իրականացնում են հիմնականում Ռուսաստանի Դաշնություն:

Արտահանման գործընթացում տնտեսավարողները առանձնացրել են այնպիսի խոչընդոտներ, որոնք նույնպես կարելի է բաժանել 2 խմբի՝ ներտնտեսային՝ կապված արտադրանքի ծավալների, ֆինանսական դժվարությունների, մրցունակության, պայմանագրերի բացակայության, տրանսպորտային դժվարությունների, ապրանքային տեսքի, որակի, ստանդարտների կիրառման հետ, և արտաքին՝ Լարսի անցակետի խնդիրները (տե՛ս գծապատկեր 4), ընդ որում՝ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում այն տնտեսավարողները, որոնք որպես արտահանման խոչընդոտ նշել են Լարսի անցակետի շուրջ ծառայած դժվարությունները:



Գծապատկեր 4. Արտահանման խոչընդոտները

Գյուղացիական տնտեսությունները գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելիս հիմնական մրցակիցներ են տեսնում առավել խոշոր տնտեսավարողներին և համանման արտադրանք ներկրողներին:

Արտադրության, հետևաբար նաև իրացման ծավալներն ավելացնել ցանկացել են 72 տնտեսավարողներ կամ հարցվածների 68,6 %-ը՝ հիմնականում շրջանառու

միջոցների մատչելիության ապահովման պայմաններում, իսկ մնացածը նշել են, որ չեն ցանկանում ընդլայնել գործունեությունը առավելապես ոռոգման ջրի սակավության, ինչպես նաև վերջին ժամանակներում ներդրանքների (պարարտանյութ, թունաքիմիկատ, դիզելային վառելիք, սերմեր և այլն) թանկացումների պատճառով:

Հարցման մասնակիցները որպես իրացման գործընթացի բարելավման քայլեր ընդգծել են մի շարք կանոնակարգումների իրականացումը, պետական աջակցության շրջանակների ընդլայնումը, Լարսի անցակետում պարբերաբար առաջացող խաթարումների և տեղափոխման դժվարությունների վերացումը, բեռների ապահովագրությունը, անտոկոս կամ ցածր տոկոսադրույքով վարկերի տրամադրումը, գյուղատնտեսական ապրանքների վաճառքի գների վերահսկումը, կայունացումը, ընդունման և բաշխման կետերի, տարածաշրջանային շուկաների բացումը, ինչպես նաև մթերման երկարատև պայմանագրերի կնքումը՝ հստակ ամրագրելով գնագոյացման պայմանները, որը վստահություն կներշնչի և երաշխիք կհանդիսանա իրացման գործընթացի արդյունավետ կազմակերպման հարցում: Տնտեսավարողները առաջ են քաշում այն միտքը, որ արտադրողը այս չափ չպետք է մտահոգվի և զբաղվի գյուղատնտեսական արտադրանքի իրացման հարցերով, միաժամանակ առաջարկում են իրացնող կազմակերպությունների հետ աշխատել պատվերային սկզբունքով, այդ թվում՝ մինչ բուն արտադրանքի արտադրությունը սկսելը:

Եզրակացություն

ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի իրացման համակարգը կայացման ճանապարհ ունի անցնելու: Իրացման գործընթացում ծառայած ներտնտեսային խնդիրները պայմանավորված են նաև տնտեսավարող սուբյեկտների փոքր չափերով, կոոպերացվածության ցածր մակարդակով, ագրարային օրենսդրության անկատարությամբ, որոնք հանգեցնում են գյուղատնտեսական արտադրանք իրացնող կառույցների հետ հարաբերվելու դժվարությունների, շրջանառու միջոցների պարբերական անբավարարության, արտադրանքի ցածր մրցունակության, իրավապայմանագրային հարաբերությունների անկատարության: Գյուղատնտեսական արտադրանքի իրացման արտաքին խնդիրներից են միջպետական բնույթի կոոպերացիոն միավորումների և պայմանագրերի, կանոնակարգված գործող մեծածախ շուկաների, բաշխման կենտրոնների բացակայությունը, շուկայական ենթակառուցվածքների անկատարությունը, լոգիստիկ և մարքեթինգային ծառայությունների ոչ արդյունավետ աշխատանքը, միջևորդների ու կառույցների ոչ լիարժեք կայացվածությունը և այլն:

ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիրների լուծումը իրավամբ դարձել է ամբողջ ագրոպարենային համակարգի արդյունավետության բարձրացման նախապայման, հետևապես նաև՝ պարենային անվտանգության ապահովման կարևոր գործոն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թանասյան, Ազատ Վոլոդյայի. «Հայաստանի Հանրապետությունում գյուղմթերքների իրացման ներքին շուկայի հիմնախնդիրները և արտահանման ռազմավարությունը», ատենախոսություն, Երևան 2009:

2. Ոսկանյան, Աշոտ Երջանիկի. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի գնման (մթերման) արժեշղթայի կազմակերպման մոդել, ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ Հայաստանի ազգային ագրարային համալսարան N (66) 2/2019, էջ 55:

3. Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2021 թվականին,

Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան-2022, Էջ 4, https://www.armstat.am/file/article/iracum_2021.pdf

4. Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2017, 2019, 2021 թվականներին, Վիճակագրական տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան-2018, 2020, 2022:

5. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքէջ՝ <https://www.armstat.am/>

WORKS CITED

1. Tananyan Azat. «Hayastani Hanrapetutyunum gyuxmterqneri iracman nerqin shukayi himnaxndirneri ev artahanman razmavarutyuny» [Problems of the Internal Market of Sale of Agricultural Products in the Republic of Armenia and Export Strategy] dissertation, Erevan] 2009. (In Armenian)

2. Voskanyan Ashot. Hayastani Hanrapetutyunum gyuxatntesakan artadranqi gnman (mterman) arjeshxtayi kazmakerpman model [A Model for the Organization of the Value Chain of the Purchase (Procurement) of Agricultural Products in the Republic of Armenia, AGRICULTURAL SCIENCE AND TECHNOLOGY National Agrarian University of Armenia] N (66) 2/2019, ej 55 (In Armenian)

3. Gyuxatntesakan artadranqi iracumy (ogtagorcumy) anhatakan (gyuxaciakan) tnayin tntesutyunneri koxmic [Agricultural Products Marketing (utilization) by Individual (rural) Households in 2021] 2021 tvakanin: Vichakagrakan texekagir, HH VK, Erevan-2022, ej 4, https://www.armstat.am/file/article/iracum_2021.pdf (In Armenian)

4. Gyuxatntesakan artadranqi iracumy (ogtagorcumy) anhatakan (gyuxaciakan) tnayin tntesutyunneri koxmic [Agricultural Products Marketing (utilization) by Individual (rural) Households in 2017, 2019, 2021] 2017, 2019, 2021 tvakanerin: Vichakagrakan texekagir, HH VK, Erevan-2018, 2020, 2022 (In Armenian)

5. HH vichakagrakan komitei pashtonakan kayqej [Official website of RA Statistical Committee]՝ <https://www.armstat.am/>, (In Armenian)

PRODUCT REALIZATION PROBLEMS AND WAYS OF SOLUTION IN RURAL HOUSEHOLDS OF RA

ASHOT VOSKANYAN

*National Agrarian University of Armenia,
Chair of Agribusiness Management and Policy,
Ph.D. in Economic Sciences, Associate Professor,
Yerevan, the Republic of Armenia*

ANNA KARTASHYAN

*National Agrarian University of Armenia,
Chair of Agribusiness Management and Policy, Assistant,
Yerevan, the Republic of Armenia*

The sustainable development of agriculture is basically conditioned by the organization and management of the full realization of the products produced in the fields of crop and livestock breeding. Due to realization difficulties, the potential existing in rural households is not used efficiently. Essentially, producers of agricultural products are not operating in accordance with their production capabilities.

The purpose of the article is to find out difficulties related to the realization of agricultural products and offer possible approaches for their elimination through surveys

with rural households. The task was to identify the features of sales organization of agricultural products and implementation process obstacles offering ways to overcome them.

The article used comparative analysis, statistical and individual surveys methods.

According to our estimation, the following factors can practically contribute to improving the efficiency of realization process of agricultural products in rural households:

- The formation of trade cooperatives and unions, which can conclude a single contract for the sale of products not yet produced, through power of attorney,,
- Regulation of agricultural product realization market activity, as well as the formation of logistics, distribution centers and wholesale markets,
- The expansion of areas for fair sale of agricultural products in Yerevan and regulation of street trade,
- The formation of a professional conciliation commission (producer, representatives of processing companies, leading specialists of the field, etc.) to establish purchase prices of agricultural raw materials for processing, the main function of which, according to the legislation, should be to establish a minimum selling price and support the conclusion of contracts..

Keywords: *Agriculture, rural households, questionnaire, telephone survey, product realization, wholesale and retail market, realization cooperative.*

ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ПРОДУКЦИИ В КРЕСТЬЯНСКИХ ХОЗЯЙСТВАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ПУТИ ИХ РЕШЕНИЯ

АШОТ ВОСКАНЯН

*и.о. заведующего кафедрой управления и политики агробизнеса
Национального аграрного университета Армении,
кандидат экономических наук, доцент
г. Ереван, Республика Армения*

АННА КАРТАШЯН

*ассистент кафедры управления и политики агробизнеса
Национального аграрного университета Армении,
г. Ереван, Республика Армения*

Устойчивое развитие сельского хозяйства в значительной степени обусловлено организацией и управлением полноценной реализацией продукции, произведенной в области растениеводства и животноводства. В связи с трудностями в процессе реализации продукции имеющийся потенциал в крестьянских хозяйствах используется неэффективно. По сути, производители сельскохозяйственной продукции осуществляют деятельность, не соответствующую их производственным возможностям.

Цель статьи – путем анкетирования крестьянских хозяйств выявить трудности, связанные с реализацией сельскохозяйственной продукции, и предложить возможные пути их устранения. Поставлена задача выявить особенности организации реализации сельскохозяйственной продукции, препятствия в процессе её реализации и предложить пути их преодоления.

В ходе исследования применялись сравнительного анализа, статистические и индивидуальные опросов методы.

По нашей оценке, повышению эффективности процесса реализации сельскохозяйственной продукции крестьянских хозяйств на практике могут способствовать следующие факторы:

- создание торговых кооперативов, союзов, которые смогут заключать единый договор на реализацию еще не произведенной продукции по доверенности,
- регулирование деятельности рынков реализации сельскохозяйственной продукции, а также формирование логистических, распределительных центров и оптовых рынков,
- расширение площадей для ярмарочной продажи сельскохозяйственной продукции в городе Ереване и регулирование уличной торговли,
- формирование профессиональной согласительной комиссии (представители производителей, перерабатывающих компаний, ведущих специалистов отрасли и др.) по установлению закупочных цен на сельскохозяйственное сырье, с целью переработки, основной функцией которой, согласно законодательству, должно быть установление минимальной цены реализации и поддержка заключения договоров.

Ключевые слова: *сельское хозяйство, крестьянские хозяйства, анкета, телефонный опрос, реализация продукции, оптовый и розничный рынок, торговый кооператив.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ԻՍՊԱՆԻԱՅԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՄԱՍՆԱՎՈՐ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ***

ՀՏԴ 338.23

DOI: 10.52063/25792652-2022.4.15-204

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի
կառավարման ամբիոնի հայցորդ,
Բ. Երևան, Հայաստանի Հանրապետություն
margaryan.anna@mail.ru

Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) արդյունավետ իրագործման առաջնահերթ քայլերից մեկը ՊՄԳ օրենսդրության մշակումն է: ՊՄԳ իրավական կարգավորման միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ ՊՄԳ զարգացումը պետք է հիմնվի որոշակի նորմատիվների վրա, որը թույլ կտա նախագծի մասնակիցներին գործել օրենսդրական դաշտում և «խաղալ» միևնույն կանոններով:

Սույն հոդվածի նպատակն է ենթակառուցվածքային նախագծերի՝ տնտեսության պահանջներին համապատասխան իրագործման համար ՊՄԳ օրենսդրության կատարելագործման անհրաժեշտության հիմնավորվածությունը:

Հոդվածի ուսումնասիրության խնդիրը Հայաստանի Հանրապետությունում և զարգացած երկրներում ՊՄԳ օրենսդրական առանձնահատկությունների և ՀՀ-ում ՊՄԳ օրենսդրության կատարելագործման ուղիների հնարավորությունների վերհանումն է:

Աշխատանքը շարադրված է երկու երկրների ՊՄԳ օրենսդրությունների համալիր վերլուծության և համեմատության մեթոդներով:

Ուսումնասիրության արդյունքում եզրակացրել ենք, որ ՊՄԳ իրավական կարգավորումը կարող է ամրացնել Պետության և մասնավոր ներդրողի միջև փոխվստահությունը և նպաստել մասնավոր ներդրումների ներգրավմանը: ՊՄԳ նախագծերում ներգրավված սուբյեկտների իրավունքների և պարտականությունների հստակ սահմանումը առանցքային կարող է լինել դրանց արդյունավետ իրականացման համար: Հայաստանի Հանրապետության «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի ընդունումը կարևոր քայլ է ենթակառուցվածքների զարգացման տեսանկյունից, այնուհանդերձ, օրենսդրության մեջ փոփոխություններ մտցնելու անհրաժեշտություն կա՝ այն ավելի ճկուն ու մատչելի դարձնելու մասնավոր գործընկերների համար:

Հիմնաբառեր՝ ՊՄԳ, հայտատու, կոնցեսիա, ընթացակարգ, պետական իշխանություն, ենթակառուցվածք, հանրային հատված, մասնավոր հատված:

Նախաբան

ՊՄԳ իրագործման մեջ նշանակալի դեր ունեն պետական կառավարման և կարգավորման կառուցակարգերը: Պետությունը պետք է ստեղծի ինստիտուցիոնալ

* Հոդվածը ներկայացվել է 12.12.2022թ., գրախոսվել՝ 19.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

միջավայր, զբաղվի ՊՄԳ կազմակերպման և կառավարման հարցերով, մշակի ռազմավարություն, որի հիման վրա կառուցվում են պետության և բիզնեսի միջև հարաբերությունները, վերահսկվում գները, եկամուտները, ապրանքների և ծառայությունների որակը: ՊՄԳ կառավարման համակարգերը որոշվում են՝ տվյալ երկրի տնտեսության զարգացման և օրենսդրության յուրահատկություններից ելնելով: Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ իրավական կարգավորումը գտնվում է սկզբնական փուլում: Այնուամենայնիվ, «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքի ընդունումը և դրա հետ կապված կառավարության որոշումների ընդունումը լուրջ քայլ են Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ հետագա զարգացման համար:

ՊՄԳ օրենսդրության կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2017թ. ձեռնամուխ է եղել հետևողական և համակարգված քաղականության մշակմանը Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) նախագծերի իրականացման համար: Կառավարության նպատակն այն է, որ մասնավոր հատվածի ուժերն ու ռեսուրսները մոբիլիզացվեն առավելագույնս բարենպաստ եղանակով՝ լավագույն միջազգային փորձին համապատասխան, և նպաստեն Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական զարգացմանը: Կառավարությունը հանձն է առել ստեղծել բարենպաստ միջավայր՝ խրախուսելու մասնավոր հատվածի մասնակցությունը ՊՄԳ ծրագրերին: Առանձին ՊՄԳ օրենք ունենալու քաղաքականությանն աջակցել են ինչպես մասնավոր հատվածը, այնպես էլ պետական ինստիտուտները: 2019 թ. հունիսին շուրջ 18 ամիս աշխատանքից հետո Ազգային ժողովի կողմից ընդունվեց և 2020 թ. հունվարի մեկից ուժի մեջ մտավ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը (T&K partners):

«Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը /սույն մասում՝ Օրենք/ բաղկացած է ինը գլխից և երեսուն հոդվածից:

Առաջին գլխում սահմանված են ընդհանուր դրույթները՝ կարգավորման առարկան, հիմնական հասկացությունները, նպատակները, ծրագրի չափանիշները և ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները: Երկրորդ գլխում ներկայացված են ՊՄԳ ոլորտի մարմինները և ՊՄԳ ծրագրերի վերահսկումն ու պատրաստումը: Երրորդ գլխում ներկայացված է մասնավոր գործընկերոջ ընտրությունը. սահմանվել են՝ ովքեր կարող են դառնալ հայտատու, չորրորդ գլխում ՊՄԳ պայմանագրերին ներկայացվող պահանջները: Հինգերորդ գլխից նախատեսում է իրավունքների երաշխիքներ մասնավոր գործընկերների համար: Վեցերորդ գլխից սահմանում է ՊՄԳ ծրագրերի տվյալների բազան և հաշվետվությունը, յոթերորդ գլխից՝ պետական աջակցության կառուցակարգերը, ութերորդ գլխից նվիրված է վեճերի լուծմանը, իններորդ՝ անցումային դրույթներին: Աշխատանքում կանոնադաշտանք օրենքի կարգավորման մի շարք հարցերի:

ՊՄԳ ծրագիրը պետք է բավարարի մի շարք չափանիշների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար տնտեսական շահութաբերություն, ֆիսկալ առումով մատչելիություն, ունենա դրական արժեք փողի դիմաց և ապահովի հանրային ու մասնավոր գործընկերների միջև ռիսկերի բաշխում համաձայն ՊՄԳ ընթացակարգի: ՊՄԳ ծրագրի պատրաստումը ենթադրում է նախնական տեխնիկատնտեսական հիմնավորում, նախագծի պատրաստման հաստատում, նախագծի տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացում, ՊՄԳ ծրագրի նախագծի ներկայացում լիազոր մարմնին, ՊՄԳ ծրագրի նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

Մասնավոր գործընկեր դառնալու և հանրային գործընկերոջ հետ պայմանագիր կնքելու նպատակով մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգին

մասնակցող իրավաբանական անձ կամ իրավաբանական անձանց կոնսորցիում, ընդ որում՝ հայտատու, չի կարող հանդիսանալ Հայաստանի Հանրապետության կամ համայնքի բաժնետնամանակցությամբ ընկերությունը: Օտարերկրյա հայտատուների համար հավասար հնարավորություն է սահմանվել մասնավոր գործընկերոջ ընտրությանը մասնակցելու համար: Հայտատուն պետք է համապատասխանի մի շարք չափանիշների՝ մասնագիտական, տեխնիկական փորձառություն, ֆինանսական և տնտեսական կարողություններ:

Մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի երկու ձև գոյություն ունի՝ բաց և փակ: Բաց ընթացակարգի դեպքում մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի հայտարարությունը, որակավորման հարցումը հրապարակային են և հասանելի: Բաց ընթացակարգն իրականացվում է որակավորման հարցման և առաջարկի հարցման փուլերով: Որակավորման հարցմամբ սահմանված կարգով գնահատվում են ներկայացված որակավորման հայտերը, որի արդյունքներով գնահատող հանձնաժողովը կազմում և հաստատում է որակավորված հայտատուների ցանկը: Առաջարկի հարցումը ներառում է մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի գնահատման եղանակը, տեխնիկական և ֆինանսական առաջարկներին ներկայացվող պահանջները, ՊՄԳ պայմանագրի նախագիծը և այլ տեղեկություններ: Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության դեպքում տեխնիկական առաջարկի գնահատման արդյունքում առաջարկի հարցման փուլում նախատեսված շեմը հաղթահարած հայտերը գնահատվում են՝ հիմք ընդունելով լավագույն ֆինանսական առաջարկը: Կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանն ուղղակիորեն առնչվող բացառիկ դեպքերում ՊՄԳ պայմանագիրը կարող է կնքվել առանց մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգի՝ ուղիղ բանակցությունների հիման վրա: Փակ ընթացակարգի կիրառման դեպքում ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ Կառավարության որոշումը ենթակա չէ հրապարակման, իսկ որակավորման հարցումը տրամադրվում է միայն իրավասու մարմնի կողմից նախապես որոշված անձանց:

ՊՄԳ ծրագիրը չպետք է գերազանցի ՊՄԳ պայմանական և ուղղակի պարտավորությունների թույլատրելի սահմանաչափը: Համաձայն Կառավարության 28.04.2022 թ. ընդունված N585 որոշման՝ պայմանական պարտավորությունների պայմանական սահմանաչափը սահմանված է 3 տոկոս հաշվարկի իրականացման տարվա Հայաստանի Հանրապետության ծրագրային համախառն ներքին արդյունքի նկատմամբ և 1 տոկոս՝ հաշվարկի իրականացման տարվա Հայաստանի Հանրապետության ծրագրային համախառն ներքին արդյունքի նկատմամբ:

ՊՄԳ պայմանագիրը պետք է ներառի ՊՄԳ պայմանագրի կողմերը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, ՊՄԳ ռիսկերի բաշխումը, ՊՄԳ պայմանագրի առարկան, հանրային ենթակառուցվածքի նկարագրությունը, մասնավոր գործընկերոջ կողմից մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների գների սահմանման և փոփոխման կամ դրանց առնչվող պայմանները և այլն: ՊՄԳ պայմանագիրը կարող է նախատեսել մասնավոր գործընկերոջ իրավունքը՝ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ երրորդ կողմերին փոխանցելու հանրային ենթակառուցվածքի և դրան առնչվող գույքի նկատմամբ իր բոլոր իրավունքները կամ դրանց մի մասը: Հարկ ենք համարում նշել, որ, ըստ օրենքի, հողամասերը կարող են տրամադրվել մասնավոր գործընկերոջը առանց այդ նպատակով լրացուցիչ մասնավոր գործընկերոջ ընթացակարգի անցկացման՝ առքուվաճառքի, վարձակալության, հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագրի, սերվիտուտի կամ այլ գործարքի հիման վրա:

Եթե մասնավոր գործընկերը վաճառում է ապրանքներ, իրականացնում է աշխատանքներ և մատուցում է ծառայություններ կարգավորվող գներով, և այդ գները

կարգավորող մարմինները մասնավոր գործընկերոջ համար սահմանում են այնպիսի գներ, որոնք չեն ապահովում ՊՄԳ պայմանագրի շրջանակներում մասնավոր գործընկերոջ կատարած տնտեսապես հիմնավորված ներդրումների հատուցումը, ապա հանրային գործընկերը, ՊՄԳ պայմանագրի դրույթներին համապատասխան, կարող է մասնավոր գործընկերոջը փոխհատուցել հատուցման համար չբավարարող գումարը:

Մասնավոր գործընկերոջը կարող են տրամադրվել դրամաշնորհներ, սուբսիդիաներ, վարկեր և ֆինանսավորման այլ ձևեր, բյուջետային երաշխիքներ և այլն:

2022 թ. հուլիսի 28-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է N1183 որոշումը, որը սահմանում է միանգամից ՊՄԳ օրենսդրության մի քանի ասպեկտներ, մասնավորապես՝ ՊՄԳ ընթացակարգը, ՊՄԳ ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները, ՊՄԳ ստորաբաժանումը, ՊՄԳ ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվության ձևը և ներկայացման ժամկետը: Օրենքի հասկացությունների մեջ հանրային ծառայությունը սահմանված էր որպես «հանրային շահերից բխող գործունեություն, որը սովորաբար իրականացվում է պետական մարմինների կողմից և (կամ) վերջիններիս անուկից, և (կամ) որի համար հիմնական պատասխանատվությունը կրում է պետական մարմինը, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի ցանկացած ծառայություն կամ գործունեություն»: N1183 որոշմամբ սահմանվել են հանրային ծառայության կոնկրետ ոլորտները, այն է՝ առողջապահություն, կրթություն, էներգետիկա, ջրային տնտեսություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ և ծառայություններ, կոշտ թափոնների հավաքում, մշակում և հեռացում, փոստային ենթակառուցվածքներ և ծառայություններ, կենսաչափական տվյալներ պարունակող անձնագրերի տրամադրում և էլեկտրոնային նույնականացման համակարգ: N1183 որոշմամբ սահմանված են նաև տնտեսական շահութաբերության ներքին բազային դրույքաչափերը (ՏՇՆԴ): Այսպես՝ սոցիալական ոլորտի (առողջապահություն, կրթություն), ինչպես նաև տարածքային համաչափ զարգացումը թիրախավորող ծրագրերի տնտեսական շահութաբերության ներքին բազային դրույքը 6 տոկոս է: ՏՇՆԴ-ը վեց տոկոս է նաև այն ծրագրերի համար, որոնք էապես նպաստում են այնպիսի բնապահպանական նպատակների, ինչպիսին են՝ կլիմայի փոփոխության մեղմացումը, կլիմայի փոփոխությանը հարմարվողականությունը, ջրային ռեսուրսների կայուն օգտագործումը և պաշտպանությունը, շրջանաձև տնտեսության անցումը, աղտոտման կանխարգելումը, կենսաբազմազանությունը և էկոհամակարգերի պաշտպանությունը և վերականգնումը:

N1183 որոշմամբ սահմանված է ՊՄԳ ծրագրերի մշտադիտարկման կարգը: Մշտադիտարկող խումբը և լիազոր մարմինը պետք է մշտադիտարկեն ՊՄԳ պայմանագրի հետ կապված այն հանգամանքները, որոնք կարող են հանգեցնել Հայաստանի Հանրապետության կառավարության ստանձնած պայմանական պարտավորությունների՝ ուղիղ պարտավորությունների վերածվելուն: Նշված հանգամանքներին կարող են դասվել, օրինակ, վերջնական սպառողների քանակի կանխատեսվածից ցածր լինելը, ՊՄԳ ծրագրի կապիտալ շահագործման և պահպանման ծախսերի փոփոխությունը, անկանխատեսելի հանգամանքները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ՊՄԳ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վրա: Հարկ ենք համարում նշել, որ որոշմամբ նաև ՊՄԳ ծրագրի ռիսկերը՝ մասնավոր գործընկերոջ կողմից ստանձնվող ռիսկեր, հանրային գերծընկերոջ կողմից ստանձնվող ռիսկեր, համատեղ ստանձնվող ռիսկեր: Սահմանվել է ժամանակացույց ՊՄԳ քաղաքականություն մշակող մարմնի կողմից ՊՄԳ ծրագրի մշակման և իրականացման գործընթացների նկատմամբ կիրառելի ուղեցույցները սահմանելու համար: Ուղեցույցը ներառում է ՊՄԳ ծրագրի փուլերը

վերլուծությունից, հիմնավորումից մինչև ծրագրի գնահատման փաստացի արդյունքների ուղեցույց:

ՊՄԳ իրավական կարգավորումը Իսպանիայի Թագավորությունում

Համաշխարհային տնտեսության մեջ ՊՄԳ առումով հետաքրքրություն ներկայացնող երկրներից կարող է լինել Իսպանիան: Իսպանիայում կառուցվել է բավականին բարդ, բայց արդյունավետ ՊՄԳ համակարգ, որի հիմքում դրված է պետության կողմից բիզնեսին օգնություն տրամադրելու սկզբունքը երկրի տնտեսության զարգացման և միջազգային շուկայում ազգային ընկերությունների մրցունակության ապահովման համար: Իսպանիայի ՊՄԳ կառուցակարգը հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ պատճառներով.


- Իսպանիան ռեկորդային ժամանակում իր առողջապահական համակարգը վերածում է միջինից օրինակելիի, ընդ որում՝ հաջողության ամենակարևոր գործոններից մեկը ՊՄԳ մոդելի հաջող կիրառումն էր, գոյություն ունեցող և մասնավոր նոր հիվանդանոցների օգտագործումը հանրային օգտագործման ցանցի համար, որն ապահովում է համակարգի ամենաբարձր արդյունավետությունը:


- Իսպանիան ունի ՊՄԳ կոնցեսիոն պայմանագրերի ձևերի ավելի քան 40 տարվա փորձ: ՊՄԳ հիմքում ընկած է կոնցեսիայի ինստիտուտը, կոնցեսիոն համաձայնագրերի իրավական կարգավորմամբ տեղի է ունենում մասնավոր և հանրային շահերի համընկնում: ՊՄԳ օրենսդրությամբ սահմանված են կոնցեսիայի տեսակները և դրանց իրավական կարգավորումը:


- Իսպանիայի ՊՄԳ օրենսդրությունը, ունենալով հստակ արտահայտված ազգային բնույթ, իր հիմքում ունի արտասահմանյան ինստիտուտների՝ մասնավորապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), Միացյալ ազգերի կազմակերպության և Եվրամիության նորմերն ու սկզբունքները: Իսպանիայի ազգային օրենսդրության հարմարեցումը վերը նշված նորմերին վերջին երեսուն տարվա ընթացքում հանգեցրել է նորմատիվաիրավական ակտերի մեծ մասի վերափոխմանը: Օրենսդրական կարգավորումը իրենից ներկայացնում է բազմա շերտ (Uria Menendez) համակարգ, որը իր մեջ ներառում է եվրոպական իրավական ակտերը, պետական և համայնքային օրենսդրությունը:

Իսպանիայի «Պետական գնումների մասին» օրենքում մինչև 2018 թ. մարտի 9-ը առանձնացված էին ՊՄԳ պայմանագրերի երեք հիմնական ձև՝ «Հանրային աշխատանքների կոնցեսիոն պայմանագրեր», «Հանրային ծառայությունների կառավարման պայմանագրեր» և «Հանրային ու մասնավոր հատվածների միջև համագործակցության համաձայնագրեր»: 2018 թ. մարտից հետո փոխվեց այս դասակարգումը, սակայն ՊՄԳ շատ պայմանագրեր, որոնք գործում էին նախկին օրենքի շրջանակներում, դեռևս շարունակում են մնալ ուժի մեջ (Իսպանիայի օրենքը հանրային հատվածի պայմանագրերի մասին): Իսպանիայի ՊՄԳ-ը կարգավորող նոր օրենքը («Հանրային հատվածի պայմանագրերի մասին» օրենքը, այսուհետ սույն մասում՝ Օրենք) ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 9-ին: Նոր դասակարգմամբ պահպանվեց «Հանրային աշխատանքների կոնցեսիոն պայմանագիրը», սակայն «Հանրային ծառայությունների կառավարման պայմանագիրը» փոխարինվեց «ծառայությունների կոնցեսիայով», «Հանրային ու մասնավոր հատվածների միջև համագործակցության համաձայնագիրը» նույնպես հանվեց որպես պայմանագրի ձև: Իսպանիայի «Հանրային հատվածի պայմանագրերի մասին» օրենքը բաղկացած է 347 հոդվածից և ունի բարդ կառուցվածք, այն համառոտ ներկայացնում ենք Գծապատկեր N1-ում:

Գծապատկեր N1
Իսպանիայի «Հանրային հատվածի պայմանագրերի մասին» օրենքի կառուցվածքը







Կոնցեսիոն համաձայնագրերի օբյեկտներ են այն ենթակառուցվածքները, որոնք պետական մոնոպոլիաներ էին, և որոնք տարբեր պատճառներով չեն կարող գործել մրցակցային հիմունքներով, սակայն հանրության համար դրանք ունեն կարևոր նշանակություն: Օրենքը ենթադրում է կոնցեսիոն համաձայնագրի օբյեկտի պետական սեփականության պահպանում: Իսպանիայում, ինչպես և այլ զարգացած երկրներում, պետությունը յուրաքանչյուր միակողմանի գործողությունների դեպքում, որոնք ուղղված են կոնցեսիայի դադարեցմանը, պահպանում է կողմերի ֆինանսական հավասարակշռությունը՝ հատուցելով նրանց դադարեցման հետևանքով կրած

վնասները: Իսպանիայի օրենսդրությունը նախատեսում է 2 տեսակի ՊՄԳ՝ ինստիտուցիոնալ (խառը կապիտալով ձեռնարկության ստեղծում հասարակական նշանակության ծառայությունների մատուցման համար) և պայմանագրային (պետական օբյեկտի աշխատանքների կատարման պայմանագիր, հասարակական նշանակության ծառայությունների կառավարման պայմանագիր, մատակարարման պայմանագիր և այլն): Իսպանիայում ՊՄԳ-ը ոչ այնքան իրավական հայեցակարգ է, որքան հանրային քաղաքականություն կամ մենեջմենթ, որը հանգեցնում է հանրային հատվածի և մասնավոր գործընկերոջ միջև համագործակցության: Այդ համագործակցությունը նպատակ է հետապնդում ֆինանսավորել հանրային ենթակառուցվածքները:

Օրենքով սահմանված են հայտատուների լայն շրջանակ. որպես հայտատու կարող են հանդես գալ քաղաքական կուսակցությունները, արհմիությունները, բիզնես կազմակերպությունները, հիմնադրամները և ասոցիացիաները: Օրենքը նաև տալիս է հայտատուներին առաջադրվող պահանջների մանրամասն կարգավորումները, կարգավորում է ներքին գնումները և տարանջատում է մտցնում պայմանագրի կողմ հանդիսացող սուբյեկտների և այլ սուբյեկտներին ներկայացվող պահանջների միջև:

Պայմանագրի կողմ հանդիսացող սուբյեկտները պետք է բավարարեն խիստ պահանջների: Դրա նպատակը ներքին անպատշաճ գնումները կանխելն է:

Սուբյեկտը ներքին մատակարար համարվելու համար պետք է բավարարի հետևյալ պահանջները.

- Պետք է ունենա բավարար անձնակազմ և նյութական ռեսուրսներ պայմանագիրն իրականացնելու համար, ընդ որում՝ սահմանված է տոկոսային սահմանափակում սուբյեկտի կողմից կնքվող ենթապայմանագրերի վրա,
- Պետք է չունենա մասնավոր կապիտալում մասնակցություն
- Իր գործունեության 20 տոկոսից ավելին պետք է չձավալի բաց շուկայում,
- Այլ պայմանագրերի նկատմամբ քանակական և որակական առավելությունների հիմնավորվածություն,
- Կոնցեսիոների ներդրումների զուտ ներկա արժեքը, եկամուտները և գործառնական ռիսկերը ծածկելու համար անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև դիսկոնտավորման դրույքի գնահատման չափանիշները,
- Կոնցեսիայի ազդեցությունը բյուջեի կայունության վրա:

Օրենքը կարևորում է պետական պայմանագրերի սոցիալական և էկոլոգիական ուղղվածությունը: Դրա համար կարող են սահմանվել որակ-գին հարաբերակցության որակական չափանիշներ կամ պայմանագրերի իրագործման հատուկ պայմաններ, օրինակ՝ դրանք պետք է չհամարվեն խտրական, համատեղելի լինեն օրենսդրության հետ, համապատասխանեն գնման փաստաթղթավորմանը: Սահմանվում է չափանիշների ընտրության և կիրառման մանրամասն ու համալիր կարգավորում պայմանագրերի կնքման համար: Պայմանագրերի կնքման չափանիշը գին-որակ լավագույն հարաբերակցությունն է: Հենվել միայն մեկ չափանիշի վրա հնարավոր չէ, դրանք միշտ էլ պետք է ուղեկցվեն ծախսերի, գնի, հատուցման և նախագծի կյանքի ցիկի հետ կապված չափանիշներով: Ինչ վերաբերում է մասնավոր գործընկերոջ ընտրության ընթացակարգերին, օրենքը սահմանում է պարզեցված բաց ընթացակարգ, ինովացիոն գործընկերության ընթացակարգ, բանակցությունների միջոցով մրցակցային ընթացակարգ: Պարզեցված ընթացակարգերը կիրառելի են այն աշխատանքների ծառայությունների և մատակարարման պայմանագրերի վրա, որոնք չեն գերազանցում պայմանագրերի սահմանված որոշակի շեմերը, դրանք չեն ներառում որևէ չափանիշ, որը ենթադրում է արժեքային դատողություն: Ընթացակարգային քայլերը պարզեցված են, ժամկետները՝ կրճատված, փաստաթղթերը ներկայացվում են մեկ ծրարով, ոչ մի ժամանակավոր երաշխիք չի

պահանջվում, և հայտատուները պետք է գրանցված լինեն մրցույթի մասնակիցների համապատասխան ռեգիստրում:

Ինովացիոն գործընկերության ընթացակարգը սահմանվում է այն դեպքերի համար, երբ անհրաժեշտ է հետազոտության և մշակման աշխատանքներ իրականացնել՝ նորարարական աշխատանքների, ծառայությունների և ապրանքների հետ կապված, որոնք հետագայում պետք է գնվեն պետական իշխանությունների կողմից: Մրցույթի մասնակցության հայտերի ներկայացումից հետո պատվիրատու մարմինն ընտրում է այն թեկնածուներին, որոնք կարող են մասնակցել տեղերին: Պատվիրատու մարմինը այնուհետև ստեղծում է գործընկերություն մեկ կամ մի քանի գործընկերների հետ, որոնք իրականացնում են առանձին հետազոտության և մշակման աշխատանքներ: Այս նորարարական գործընկերությունը կկառուցվի հաջորդական փուլերով, որը կարող է հանգեցնել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնմանը:

Բանակցությունների միջոցով մրցակցային ընթացակարգը կիրառելի կլինի այն դեպքերում, երբ հայտատուները պետք է կատարեն նախնական աշխատանք՝ ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը որոշակի մակարդակի հասցնելու համար, պայմանագրի կատարումը պահանջում է ինովացիոն նախագծեր կամ լուծումներ, առկա են հատուկ իրավիճակներ, որոնք կարող են կապված լինել բնության կամ իրավական ու ֆինանսական տարբեր ասպեկտների հետ, որոնք պահանջում են բանակցություններ: Հրավիրված տեղերի մասնակիցները հնարավորություն կունենան մասնակցել ընթացակարգին, որից հետո կկարգվեն բանակցությունները: Պետական պատվիրատուները կարող են թեկնածուներից պահանջել ասպացուցել իրենց վճարունակությունը, որ անհրաժեշտության դեպքում նրանք պարտավոր են պայմանագրի կատարման համար ներդնել իրենց անձնական ակտիվները (Իսպանիայի օրենքը հանրային հատվածի պայմանագրերի մասին):

Օրենքով՝ մասնավոր գործընկերոջ ստանձնած ռիսկը համատեղելի է ֆինանսատնտեսական հավասարակշռությունը վերականգնելու երաշխիքի հետ, երբ մասնավոր գործընկերոջ տնտեսական անհավասարակշռությունը պատճառված է պետական իշխանությունների կողմից կամ առաջացել է նրանց կողմից ՊՄԳ պայմանագիրը փոփոխելու հետևանքով: Սակայն տնտեսական հավասարակշռությունը կարող է խաթարվել նաև մասնավոր գործընկերոջից և պետական իշխանություններից անկախ պատճառներով, մասնավորապես ֆորսմաժորային և անսպասելի ռիսկային իրադարձությունների դեպքում: Օրենքը կարգավորում է նաև այս դեպքը: Եթե ֆորս մաժորը զգալի խաթարող ազդեցություն է թողնում պայմանագրի տնտեսական կողմի վրա, այն իրավունք է տալիս վերականգնելու դրա տնտեսական հավասարակշռությունը, իսկ եթե պայմանագիրն արդեն հնարավոր չէ կատարել, մասնավոր գործընկերոջը թույլատրվում է դադարեցնել այն, և երաշխավորվում է նրա ներդրումների փոխհատուցումը: Պետական իշխանությունները ունեն արտոնություններ մասնավոր գործընկերոջ նկատմամբ, մասնավորապես՝ միակողմանիորեն փոփոխել պայմանագիրը հանրային շահերից ելնելով, տույժեր կիրառել, միակողմանիորեն լուծել պայմանագիրը օրենքով և պայմանագրով սահմանված որոշակի հանգամանքներում և հաստատել այդ դադարեցման հետևանքները: Այս իրավասություններից ելնելով՝ պետությունը կկիրառի հանրային շահից ելնելով պայմանագիրը փոխելու իրավունքը՝ պայմանով, որ մասնավոր գործընկերոջը փոխհատուցում կտրվի:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետությունում ՊՄԳ մասին օրենքի ընդունումը կարևոր քայլ էր համաշխարհային տնտեսության նոր միտումների հետ զուգընթաց քայլելու, ենթակառուցվածքների զարգացման, նոր ենթակառուցվածքների կառուցման, շահագործման, դրանց գործունեության թափանցիկության ապահովման և

վերահսկողության տեսանկյունից: Սակայն օրենսդրության մեջ դեռևս փոփոխություններ և լրացումներ մտցնելու անհրաժեշտություն կա:

Կառավարության որոշմամբ սահմանված են ՊՄԳ կիրառության ոլորտները, որոնց զգալի մասը վերաբերում է ծառայությունների ոլորտին: ՊՄԳ մասին օրենքով նույնպես հանրային ծառայությունը սահմանված է որպես գործունեություն, սակայն խոսքը չի վերաբերում հանրային նշանակության ապրանքներին: Ուստի կարևոր ենք համարում ՊՄԳ կիրառության ոլորտների մեջ ներառել նաև հանրային կամ հասարակական նշանակության ապրանքների կամ արտադրության ոլորտները, օրինակ՝ ռազմական արտադրությունը: Հատկանշական է նաև, որ ոլորտների շարքում նշված չէ գյուղատնտեսությունը, ինչը կարևոր նշանակություն ունի երկրի տնտեսության համար:

Իսպանիայի ՊՄԳ օրենսդրության առանձնահատկություններից կարևոր ենք համարում նաև ՊՄԳ մասին Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանել ծառայությունների մատուցման կոնցեսիայի պայմանագրերը, աշխատանքների կատարման կոնցեսիայի պայմանագրերը և մատակարարման պայմանագրերը մյուս օրենքներից ՊՄԳ օրենսդրությունը առանձնացնելու և ամբողջական դարձնելու համար:

Կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև ՊՄԳ պայմանագրերի դադարեցման դեպքում և ֆորսմաժորային իրավիճակներում մասնավոր գործընկերներին երաշխիքների տրամադրումը, որը հնարավորություն կտա ավելի շատ մասնավոր ներդրողներ ներգրավել:

ՀՀ ՊՄԳ մասին օրենքով սահմանվել է, որ մասնավոր գործընկերը կարող է երրորդ կողմին փոխանցել հանրային ենթակառուցվածքի նկատմամբ բոլոր իրավունքները: Ֆինանսական անբարենպաստ հետևանքներից խուսափելու համար այստեղ նույնպես առաջարկում ենք ներդնել Իսպանիայի փորձը, որի համաձայն՝ ենթապայմանագիրը պետք է լինի մասնակի, և դրա բաժինը չպետք է գերազանցի պայմանագրի ընդհանուր արժեքի 50 տոկոսը:

ՀՀ ՊՄԳ օրենսդրությամբ հայտատուների պահանջները ներկայացված են միայն սահմանման մեջ, այն է՝ հայտատու չի կարող հանդիսանալ պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցությամբ ընկերությունը: Կիրառելով Իսպանիայի օրենսդրության հայտատուներին ներկայացվող պահանջները՝ կարող են նաև սահմանվել հայտատուների որոշակի չափանիշներ՝ սահմանափակում այլ մասնավոր կապիտալներում մասնակցության վրա, սահմանափակում ազատ շուկայական գործունեության վրա, անձնակազմի և նյութական ռեսուրսների նվազագույն քանակի սահմանում:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետությունը, ունենալով հանրային ենթակառուցվածքների ստեղծման և շահագործման մեծ փորձ, զարգացած երկրների օրենսդրությունը և փորձը որպես օրինակ վերցնելով, կարող է ունենալ մեծ պոտենցիալ ՊՄԳ զարգացման ոլորտում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իսպանիայի կառավարական խորհուրդ. N09/2017. «Հանրային հատվածի պայմանագրերի մասին», օրենք. 08.11.2017, <https://www.boe.es/buscar/doc.php?id=BOE-A-2017-12902>:
2. ՀՀ կառավարություն. N585-Ն որոշում. 28.04.2022. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=162421>:
3. ՀՀ կառավարություն. N1785-L որոշում. 06.11.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=147343>:
4. ՀՀ կառավարություն. N1183-Ն որոշում. 28.07.2022. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166779>:

5. ՀՀ ազգային ժողով. «Պետություն-Մասնավոր գործընկերության մասին», ՀՀ օրենք. 28.06.2019. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=132596>:
6. «О государственном партнерстве в Испании». <https://studylib.ru/doc/2262986/o-gosudarstvenno-chastnom-partnerstve-v-ispanii-v-poslednie>, Досупно 15.01.23.
7. Bruno, Werneck and Mario Saadi. "PPP law review, Fourth edition", Great Britain, Apr.2018, https://www.uria.com/documentos/colaboraciones/2212/documento/Spain.pdf?id=7640_es. Accessed 15.01.2023.
8. Manuel, Velez Fraga and Anna Maria Sabiote Ortiz. "The Public-Private Partnership Law Review: Spain", 25 March 2022, <https://thelawreviews.co.uk/title/the-public-private-partnership-law-review/spain>. Accessed 15.01.2023.
9. "PPP SAGA - BETTER LATE THAN NEVER." TK & Partners, <https://www.tk.partners/publication/ppp-saga-better-late-than-never>. Accessed 15.01.2023.

WORKS CITED

1. HH karavarutyun. N585-N voroshum. 28.04.2022. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=162421>: (RA Government. Decision N585-N) (In Armenian)
2. HH karavarutyun. N1785-L voroshum. 06.11.2020. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=147343>: (RA Government. Decision N1785-L) (In Armenian)
3. HH karavarutyun. N1183-N voroshum. 28.07.2022. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166779>: (RA Government. Decision N1183-N) (In Armenian)
4. HH azgayin joghov. «Petutyun-Masnavor gortsynkerutyun masin», HH օրենք. 28.06.2019. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=132596>.; (RA National Assembly. "Law on Public-Private Partnership") (In Armenian)
5. Ispaniyai karavarakan xorhurd. N09/2017. «Hanrayin hatvaci paymanagreri masin», օրենք. 08.11.2017. <https://www.boe.es/buscar/doc.php?id=BOE-A-2017-12902>: (Government Council of Spain. N09/2017. Law "On Public Sector Contracts") (In Armenian)
6. «О государственном партнерстве в Испании». <https://studylib.ru/doc/2262986/o-gosudarstvenno-chastnom-partnerstve-v-ispanii-v-poslednie>, ("On Public-Private Partnership in Spain") (In Russian).

PUBLIC-PRIVATE PARTNERSHIP LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE KINGDOM OF SPAIN AND ITS FUNDAMENTAL ISSUES IN REPUBLIC OF ARMENIA

ANNA MARGARYAN

*Public Administration Academy of the Republic of Armenia,
Chair of Management, Ph.D. Student,
Yerevan, Republic of Armenia*

One of the priority steps for the effective implementation of Public-Private Partnership (PPP) is the development of PPP legislation. The international practice of PPP legal regulation

shows that PPP development should be based on certain norms, which will allow project participants to operate in the legal field and "play" by the same rules.

The purpose of this article is the justification of the need to improve PPP legislation for the implementation of infrastructure projects in accordance with the needs of the economy.

The issue of the study of the article is to highlight the legislative features of PPP in the Republic of Armenia and developed countries and the ways to improve PPP legislation in Armenia.

The work is written with the methods of complex analysis and comparison of PPP legislations of the two countries.

As a result of the study, we concluded that PPP legal regulation can strengthen mutual trust between the State and the private investor and contribute to the attraction of private investments. The adoption of the Law of the Republic of Armenia "On Public-Private Partnership" is an important step from the point of view of infrastructure development, however, there is a need to introduce changes in the legislation to make it more flexible and accessible to private partners.

Keywords: *PPP, applicant, concession, procedure, state authority, infrastructure, public sector, private sector*

ЗАКОНОДАТЕЛЬСТВО РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И КОРОЛЕВСТВА ИСПАНИЯ О ГОСУДАРСТВЕННО-ЧАСТНОМ ПАРТНЕРСТВЕ И ЕГО ОСНОВНЫЕ ВОПРОСЫ В РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АННА МАРГАРЯН

Соискатель кафедры управления

Академии государственного управления Республики Армения,

г. Ереван, Республика Армения

Одним из приоритетных шагов для эффективной реализации государственно-частного партнерства (ГЧП) является разработка законодательства о ГЧП. Международная практика правового регулирования ГЧП показывает, что развитие ГЧП должно основываться на определенных нормах, что позволит участникам проекта действовать в правовом поле и «играть» по единым правилам.

Целью данной статьи является обоснование необходимости совершенствования законодательства о ГЧП для реализации инфраструктурных проектов в соответствии с потребностями экономики.

Задача исследования заключается в освещении законодательных особенностей ГЧП в Республике Армения и развитых странах и путей совершенствования законодательства о ГЧП в Армении.

Работа написана с использованием методов комплексного анализа и сравнения законодательств о ГЧП двух стран.

В результате исследования мы пришли к выводу о том, что правовое регулирование ГЧП может укрепить взаимное доверие между государством и частным инвестором и способствовать привлечению частных инвестиций. Принятие Закона Республики Армения «О государственно-частном партнерстве» является важным шагом с точки зрения развития инфраструктуры, однако необходимо внести изменения в законодательство, чтобы сделать его более гибким и доступным для частных партнеров.

Ключевые слова: *ГЧП, заявитель, концессия, процедура, государственный орган, инфраструктура, государственный сектор, частный сектор.*

ՀՀ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ*

ՀՏԴ 336, 336.1/2

DOI: 10.52063/25792652-2022.4.15-217

ՄԵՐԻ ՓԱՆՈՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
panosyan.m@ysu.am

Յուրաքանչյուր երկրի հարկային համակարգը եկամուտների բաշխման համակարգ է ֆիզիկական/իրավաբանական անձանց ու պետության միջև: Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, որ ՀՀ-ում ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը պետության սոցիալական քաղաքականության գործիքներից մեկն է, այլ կերպ ասած՝ սոցիալական անհավասարության մեղմման միջոց: Հոդվածում խնդիր է դրվել համակողմանիորեն վերլուծել եկամտային հարկի համահարթ դրույքաչափով հարկման տնտեսական ու սոցիալական հետևանքները, եկամուտների անհավասարության, բնակչության բարեկեցության, եկամտի ու սպառման, աղքատության ու անհամաչափ հարկման տնտեսական կապերն ու դրա հիման վրա կատարել առաջարկություններ, որոնք կօգնեն հաղթահարել թվարկված խնդիրները: Հոդվածում վերհանված խնդիրները լուծելու նպատակով կիրառվել են տնտեսական ցուցանիշների համադրման, վիճակագրական տվյալների հարաբերակցության, ինչպես նաև ստացված տվյալների համեմատական վերլուծության մեթոդներ: Կատարված ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ սոցիալական անհավասարության ու եկամտային հարկի անհամաչափ հարկման միջև գոյություն ունի պատճառահետևանքային կապ, քանի որ եկամուտների բևեռացումը հանգեցնում է ամբողջական պահանջարկի կրճատմանը, ինչն էլ, իր հերթին, զսպում է տնտեսական ակտիվությունն ու բնակչության կենսամակարդակի բարձրացումը: Հարկման սոցիալական արդարության գաղափարը վերհանելով՝ առաջարկվել են պետական քաղաքականության անուղղակի գործիքներ, որոնք սոցիալական պաշտպանության ծրագրերի միջոցով կապահովեն տնտեսական արդյունավետության ու սոցիալական արդարության հաշվեկշռվածություն:

Հիմնաբառեր՝ եկամտային հարկ, սոցիալական արդարություն, համահարթ դրույքաչափ, եկամուտ, սպառում, բարեկեցություն, ամբողջական պահանջարկ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երկրի հարկային համակարգի գործունեության շնորհիվ ձևավորվում են պետական գործառույթների իրականացման համար ֆինանսական ռեսուրսներ, ինչն էլ, իր հերթին, հնարավորություն է տալիս իրականացնել սոցիալական տարբեր ծրագրեր ու նպաստել տնտեսության ճյուղային զարգացմանն ու սոցիալական ապահովության խնդիրների լուծմանը: Առանց հարկային

* Հոդվածը ներկայացվել է 15.11.2022թ., գրախոսվել՝ 20.12.2022թ., տպագրության ընդունվել՝ 30.12.2022թ.:

համակարգի՝ պետության կողմից իրականացվող հարկային քաղաքականության իրագործման արդյունավետ ուղիների անհնարին կլինի սոցիալ-տնտեսական մի շարք կարևոր ծրագրերի իրագործումը, քանի որ հարկային քաղաքականության համապատասխան գործիքների կիրառման միջոցով պետությունը կարողանում է հաշվեկշռել հարկային-իրավական և ֆինանսական, հանրային-իրավական ու մասնավոր-իրավական շահերի տարբերությունը: Այսինքն՝ հարկային համակարգը եկամուտների բաշխման համակարգ է ֆիզիկական (իրավաբանական) անձանց ու պետության միջև:

Վերլուծելով ՀՀ բյուջետային եկամուտների կառուցվածքի դինամիկան՝ պարզ է դառնում, որ ՀՀ-ում պետական բյուջեի համալրման հիմնական աղբյուրը միշտ էլ եղել են հարկային եկամուտները: Հարկային եկամուտների ձևավորման գործում առանցքային նշանակություն ունի եկամտային հարկը, որը մեծությամբ երկրորդն է, և որի հաշվին տարբեր տարիներին ձևավորվել է համախառն հարկային եկամուտների 22-28 %-ը:

Աղյուսակ 1. 2018-2022 թթ. եկամտային հարկի տեսակարար կշիռը համախառն հարկային եկամուտներում (%)¹

Ժամանակահատվածը	Տեսակարար կշիռը (%)
2018	28 %
2019	26.6 %
2020	28.2 %
2021	26.9 %
2022	24.7 %

Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի՝ եկամտային հարկը ՀՀ պետական բյուջե վճարվող պետական հարկ է, իսկ եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք (եկամտային հարկը 1): Եկամտային հարկի կիրառման միջոցով ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը բացի ֆիսկալ գործառույթից ունի նաև բաշխիչ գործառույթ, սոցիալական անհավասարության մեղմման միջոց է: Հարկման բաշխիչ գործառույթը կրում է ընդգծված սոցիալական բնույթ ու հարկման արդարության սկզբունքի պահպանման համար ամենաանհրաժեշտ գործիքներից մեկն է: Այն արտահայտում է հարկի՝ որպես տնտեսական հարաբերությունների առանձնահատուկ լծակի տնտեսական էությունը, դրա հիման վրա ձևավորված հարկային համակարգի հաղորդում սոցիալական ուղղվածություն: Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում բաշխիչ գործառույթի իրագործմամբ պահանջվում է հարկային ծանրություն կրող հարկատուների միջոցների (հարկերի տեսքով) մի մասի փոխանցում սոցիալական ու տնտեսապես այդ միջոցների կարիքն ունեցողների օգտին կամ նյութական արտադրության ոլորտից դեպի ոչ արտադրական ոլորտ (Բաղդասարյան 18):

Տնտեսական հարաբերություններում սոցիալական արդարությունը համընդհանուր արժեք է, բայց այն ունի իր ազգային առանձնահատկությունները: Սոցիալական արդարության մակարդակը կարող է հանդես գալ որպես երկրի զարգացման չափանիշ:

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տրամադրած տվյալների:

Ըստ ռուս տնտեսագետ Ա. Իսանի՝ հարկման արդարության տեսությունը պետք է պատասխանի հետևյալ երկու հարցերին (Пышкарева 14)՝

- Ո՞վքեր պետք է վճարեն հարկեր:
- Ինչպե՞ս հավասար բաշխել հարկերը հարկատուների միջև, հարկման ո՞ր սկզբունքը կիրառել՝ պրոգրեսիվ թե՛ համահարթ:

Իսնդրի այս ձևակերպումն արդիական է նաև այսօր, քանի որ մինչև 2020 թ. հունվարի 1-ը եկամտային հարկը ՀՀ-ում հարկվում էր պրոգրեսիվ սանդղակով, իսկ 2020 թ. հունվարի 1-ից անցում է կատարվել եկամտային հարկի համահարթ հարկման, այսինքն՝ մեկ միասնական դրույքաչափի՝ սահմանելով այն 23 %, այնուհետև եկամտային հարկի դրույքաչափը մինչև 2023 թ. աստիճանաբար նվազելու է մինչև 20 %:

Եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես համախառն եկամտի և նվազեցվող եկամուտների դրական տարբերություն: Հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով (Եկամտային հարկը 1)՝

Աղյուսակ 2. ՀՀ եկամտային հարկի դրույքաչափերը

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թ. հունվարի 1-ից	23 %
2021 թ. հունվարի 1-ից	22 %
2022 թ. հունվարի 1-ից	21 %
2023 թ. հունվարի 1-ից	20 %

Չնայած այն հանգամանքին, որ եկամտային հարկի դրույքաչափը 2022 թ. համար նվազել է, փոխարենը բարձրացել է կուտակային կենսաթոշակային ֆոնդեր ուղղվող գումարը՝ սոցիալական վճարը: Մինչև 500000 դրամ աշխատավարձ ստացողների համար սոցիալական վճարի դրույքաչափը 3.5 %-ից դարձել է 4.5 %, իսկ 2023 թ. դառնալու է 5 %:

$$\text{Եկամտահարկ} + \text{Սոցիալական վճարներ} = \text{Եկամտային հարկ}^1$$

Այսինքն, չնայած 2022 թ. եկամտային հարկի դրույքաչափը մեկ տոկոսային կետով նվազել է, սոցիալական վճարի դրույքաչափը բարձրացել է մեկ տոկոսային կետով, ինչը նշանակում է, որ բնակչության համար նվազեցվող եկամուտները չեն կրճատվել: Հարկ է նաև նշել, որ ՀՀ գրանցված աշխատողները բացի եկամտային հարկից և սոցիալական վճարից վճարում են նաև դրոշմանիշային վճար², որոնք ուղղվում են «Չինժամայողների ապահովագրության հիմնադրամ»:

Վերոնշյալ փոփոխություններին համակողմանի գնահատական տալու համար դիտարկենք հետևյալ օրինակը. ենթադրենք ՀՀ-ում գրանցված 2 աշխատողների ամսական եկամուտները համապատասխանաբար 100000 և 300000 ՀՀ դրամ է:

¹ Այս փոփոխությունը տեղի է ունեցել 2013 թ., երբ ուժի մեջ մտավ ՏԵկամտային հարկի մասին՝ նոր օրենքը, որով էլ ուժը կորցրած ճանաչվեցին ՏԵկամտահարկի մասին՝ և ՏՊարտադիր սոցիալական ապահովության մասին՝ ՀՀ օրենքները:

² Դրոշմանիշային վճարների դրույքաչափերը սահմանված են ՀՀ պաշտպանության ժամանակ զինժամայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին՝ ՀՀ օրենքով:

Հաշվենք նրանց աշխատավարձի մեծությունը եկամտային հարկով հարկումից հետո՝ 2021-2022 թթ. համար (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3. ՀՀ եկամտային հարկի հաշվարկը տարբեր եկամուտներ¹ ունեցող անձանց համար, 2021-2022 թթ.

	2021 թ.	2022 թ.	2021 թ.	2022 թ.
Աշխատավարձ	100 000	100 000	300 000	300 000
Եկամտային հարկ	22 000 (100000 x 22 %)	21 000 (100000 x 21 %)	63 000 (300000 x 21 %)	60 000 (300000 x 21 %)
Սոցիալական վճար	3500 (100000 x 3.5 %)	4500 (100000 x 4.5 %)	10 500 (300000 x 3.5 %)	13 500 (300000 x 4.5 %)
Դրոշմանիշային վճար	1500	1500	5000	5000
Աշխատավարձը հարկումից հետո	73000	73000	221500	221500

Աղյուսակ 3-ի տվյալներից պարզ է դառնում, որ չնայած 2022 թ. 2021 թ.-ի համեմատ եկամտային հարկի դրույքաչափը նվազել է 1 տոկոսային կետով, այնուամենայնիվ միևնույն աշխատավարձի դեպքում հարկվող եկամտի և նվազեցվող եկամուտների տարբերությունը շարունակում է մնալ նույնը (ինչպես 2021 թ.-ի համար, այնպես էլ 2022 թ.-ի համար նույն մարդու աշխատավարձը հարկումից հետո կազմել է համապատասխանաբար 73000 և 221500 ՀՀ դրամ): Նույն տրամաբանությամբ, պետության տեսանկյունից էլ ֆիսկալ փոփոխություններ չեն եղել, այսինքն՝ եկամտային հարկի ցածր դրույքաչափի պատճառով պետական բյուջե քիչ ֆինանսական ռեսուրսներ հավաքագրվելը չեզոքացվել է սոցիալական վճարի դրույքաչափի բարձրացմամբ: Մյուս կողմից, ինչպես երևում է աղյուսակից, բացարձակ թվերի առումով՝ բարձր աշխատավարձ ստացողը վճարում է ավելի մեծ չափով եկամտային հարկ, քան ցածր աշխատավարձ ստացողը, բայց տարբեր սոցիալական վիճակում գտնվող անձինք հարկվում են հավասար տոկոսադրույքով: Այս համատեքստում եկամտային հարկը նպաստում է եկամուտների անհավասարության խորացմանը, քանի որ այստեղ եկամտային հարկը դիտարկվում է որպես սոցիալական վիճակի չափման միավոր: Բնակչության կենսամակարդակի և բարեկեցության ապահովման տեսանկյունից համահարթ հարկման նույն մասնաբաժինը տարբեր նշանակություն ունի բարձր և ցածր եկամուտ ստացողների համար:

Ամփոփելով դիտարկված օրինակը՝ կարելի է պնդել, որ եկամտային հարկի մասով բարեփոխումներ իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե

¹ Հաշվարկը պարզեցնելու նպատակով եկամուտները դիտարկվել են աշխատավարձի տեսքով:

պետությունը ցանկացած քաղաքացու ինչպիսի հնարավորություններ է տալիս հարկման համահարթ դրույքաչափի հետ: Նաև անհրաժեշտ է համակողմանիորեն վերլուծել ինչպես քաղաքացու, այնպես էլ պետության շահը, եկամուտների հնարավոր բևեռացման մակարդակը, հարկային մուտքերի բացթողնված եկամուտները, սոցիալական տարբեր ծրագրերի միջոցով հարկման արդարության սկզբունքի պահպանումը և այլն: Տնտեսական հարաբերություններում հարկման սոցիալական արդարության ապահովման խնդիրը սոցիալական արդարության ընդհանուր խնդիրներից միայն մի մասն է: Հարկային համակարգում արդարության գաղափարը առաջացել է հենց հարկերի ի հայտ գալու պահից: Հարկային արդարության գաղափարի հետ կապված խնդիրները պայմանավորված են արդարության գաղափարի սուբյեկտիվ ընկալումներով ընդհանրապես և բարձր ու ցածր եկամուտներ ունեցող բնակչության տարբեր ընկալումներով: Ըստ 19-20-րդ դարի ռուս տնտեսագետ Մ. Ալեքսեևիչի՝ «Արդարությունը, ինչպես բոլոր բարոյական բաները, հարաբերական հասկացություն է և կախված է ժողովրդի բնակության վայրից, ժամանակաշրջանից ու մշակույթից» (Пыкарева 109): Հարկման պատմության գրեթե ողջ ընթացքում արդարության խնդիրը դիտարկվել է ֆիզիկական անձ-հարկատու տեսանկյունից:

Անհամաչափ հարկումը երբեմն հանգեցնում է նրան, որ աշխատունակ տարիքի և աշխատել ցանկացող անձինք չեն կարողանում ապահովել իրենց և իրենց ընտանիքների բարեկեցությունը: Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ագրեգացված ցուցանիշը: Միջազգային փորձից ելնելով՝ ընդունված է, որ սպառումը եկամտի համեմատ ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում բարեկեցության մակարդակի վերաբերյալ, քանզի տնային տնտեսության սպառման ագրեգատը սովորաբար ավելի ճշգրիտ տեղեկատվություն է պարունակում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը, հատկապես՝ ցածր և միջին եկամուտներ ունեցող երկրներում: Եկամուտների մասին տեղեկատվությունը պակաս վստահելի է, քանի որ եկամուտները հաճախ թաքցվում կամ ավելի պակաս են նշվում հարցվողների կողմից, ինչպես նաև եկամուտների որոշ տեսակների բնորոշ է սեզոնայնության նշանակալիությունը (Սոցիալական պատկերը 30):

Աղյուսակ 4. ՀՀ սպառման ագրեգատի և եկամուտների անհավասարությունը, 2019-2020 թթ. (Սոցիալական պատկերը 42)

Ձևիկի գործակից	Սպառում		Եկամուտ	
	2019	2020	2019	2020
	0.279	0.221	0.381	0.363

2019-2020 թթ. համար Ձևիկի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները վկայում են, որ Հայաստանում բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի ավելի խորն է սպառման ագրեգատի ցուցանիշի համեմատ:

Ընդունված մոտեցում կա, որ աշխատանքն ապահովում է եկամուտ, հետևաբար նաև՝ աղքատության ցածր մակարդակ, բայց աղյուսակ 4-ի տվյալները երևում է, որ ՀՀ-ում 3 և ավելի զբաղված անդամներ ունեցող տնային տնտեսություններում 15-75 տարեկան բնակչության 30.6 %-ը, իսկ 15-75 տարեկան աղքատների մեջ 38.3 %-ն աղքատ է, այսինքն՝ աշխատունակ բնակչության և աշխատանք ունեցող տնտեսվարող սուբյեկտների մեկ երրորդը համարվում է աղքատ: Սրա պատճառներից մեկը հարկային բեռի ծանրությունն է, ինչը ԵՄ երկրներում փորձ է արվում լուծել սոցիալական պաշտպանության ծրագրի՝

համընդհանուր նվազագույն եկամտի (անգլ.՝ General Minimum Income-GMI) կիրառման միջոցով: ԵՄ երկրներում կիրառվող համընդհանուր նվազագույն եկամուտը մի շարք երկրներում ուժի մեջ է մտել որպես սոցիալական պաշտպանության մաս: ԵՄ անդամ պետությունները, բացառությամբ Հունաստանի, աջակցության այս տեսակը կիրառում են՝ կախված պետության ֆինանսական հնարավորություններից: Երաշխավորված նվազագույն եկամուտը ֆինանսավորվում է հարկերի հաշվին և տրամադրվում է անհատներին՝ անկախ աշխատանքային ստաժի տևողությունից: Հարկ է ընդգծել, որ վերոնշյալ նպաստները, թեև տրվում են անհատներին, սակայն կախված են տնային տնտեսության կազմից և եկամուտների մակարդակից (Eurofound 65): Չնայած այն հանգամանքին, որ զարգացած երկրներում սոցիալական աջակցության տարբեր ծրագրերի միջոցով փորձ է արվում լուծել բարեկեցության խնդիրը, զարգացող քիչ երկրների է հաջողվում վարել սոցիալական նման քաղաքականություն:

ՀՀ-ում առկա նմանատիպ խնդիրների լուծման առումով սոցիալապես խոցելի որոշ խմբերի համար անհրաժեշտ է կիրառել համանման սոցիալական ծրագրեր՝ նպաստների տրամադրման, մասնագիտական պատրաստման և վերապատրաստման ծառայությունների մատուցման, երեխաների խնամքի ծառայությունների մատչելիության ապահովման և այլ պետական քաղաքականության անուղղակի գործիքների կիրառմամբ:

Աղյուսակ 5. Հայաստան. Աղքատության մակարդակը՝ ըստ տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակի, 2020թ. (15 -75 տարիքի բնակչություն, %) (SSYԱՀ, 2020)

Տնային տնտեսությունում զբաղված անդամների թվաքանակը	2020			
	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	%-ով 15-75 տարեկան աղքատների մեջ	%-ով 15-75 տարեկան բնակչության մեջ
Ոչ ոք զբաղված չէ	1.7	26.8	9.5	9.0
Չբաղված է մեկ անդամ	0.8	20.0	17.9	22.8
Չբաղված է 2 անդամ	0.3	23.3	34.3	37.6
Չբաղված է 3 և ավելի անդամ	0.7	31.9	38.3	30.6
Ընդամենը	0.7	25.5	100	100

Այս առումով սոցիալական անհավասարության ու եկամտային հարկի անհամաչափ հարկման միջև առկա է պատճառահետևանքային կապ: Հարկային բեռի անհամաչափ բաշխումը հանգեցնում է եկամուտների բևեռացմանը, իսկ դրա տնտեսական հետևանքն այն է, որ ողջ բնակչության ավելի հարուստ շերտերը սկսում են սպառել իրենց եկամտի ավելի փոքր մասնաբաժինը, ինչն էլ հանգեցնում է ամբողջական պահանջարկի կրճատմանը: Այլ կերպ ասած, եկամուտների բևեռացումը հանգեցնում է ամբողջական պահանջարկի կրճատմանը, ինչը բխում է

Քեյնսյան սպառման ֆունկցիայից (Бечканов 74): Քեյնսյան ֆունկցիայի ամենապարզ մոդելը սպառման գծային ֆունկցիան է՝

$$C = a + b \times Y_d, \text{ որտեղ՝}$$

a -ն ավտոնոմ սպառումն է, այսինքն՝ այն սպառումը, որը կախված չէ տնօրինվող եկամտից (սպառումը, երբ եկամուտը հավասար է զրոյի),

$b \times Y_d$ - ն՝ նվազեցվող սպառումն է, որը կախված է եկամտի մակարդակից,

b - ն սպառման սահմանային հակումն է, որը ցույց է տալիս, թե որքանով է ավելանում սպառումը՝ տնօրինվող եկամտի աճին զուգընթաց:

Այսինքն, սպառման սահմանային հակումը ցույց է տալիս, թե որքան սպառում է բաժին ընկնում մեկ միավոր եկամտին: Աղյուսակ 4-ից պարզ է դառնում, որ սպառման սահմանային հակումը նվազում է եկամտի աճին (կամ հաստատուն եկամտին) զուգընթաց՝ կրճատելով ամբողջական պահանջարկը: Մյուս կողմից՝ ամբողջական պահանջարկի կրճատումը զսպում է տնտեսական ակտիվությունը, քանի որ տնտեսվարողները քիչ պահանջարկի պատճառով ստիպված են լինում կրճատել իրենց տնտեսական գործունեությունը (օրինակ՝ իրենց արտադրանքը իրացնել չկարողանալու պատճառով դադարեցնում են արտադրությունը): Այսպիսով, սոցիալական անհավասարության խորացումը հանգեցնում է ամբողջական պահանջարկի կրճատմանը, որն էլ զսպում է տնտեսական ակտիվությունը: Վերոնշյալ դիտարկումների համադրմամբ կարող ենք պնդել, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը պետության սոցիալական քաղաքականության գործիք է սոցիալական արդարության պահպանման տեսանկյունից: Տնտեսական արդյունավետության և սոցիալական արդարության հաշվեկշռվածության պահպանումը կհանգեցնի բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանն ու հասարակության տարբեր խավերի շահերի պաշտպանությանը:

Եզրակացություններ

Ամփոփելով հոդվածի շրջանակներում կատարած վերլուծության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ հարկային բարեփոխումներ իրականացնելիս ու եկամուտների հարկման դրույքաչափեր սահմանելիս խիստ կարևոր է, որ պետությունը հաշվի առնի, թե տնտեսվարող սուբյեկտների գործունեության իրականացման համար ինչպիսի հնարավորություններ ու սպառնալիքներ է այն առաջացնում յուրաքանչյուր անձի մակարդակով, ինչ չափով է նպաստում տնտեսական վարքի օրինաչափությունների պահպանմանը՝ նախևառաջ թիրախավորելով սոցիալական արդարության պահանջները: Այս առումով եկամուտների համաչափ հարկումն ու սոցիալական արդարության իրական գնահատականը կարելի է կանխել եկամուտների անհավասարության ու աղքատության խորացումը, եկամտի ու սպառման մակարդակի ճիշտ հարաբերակցության բևեռացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաղդասարյան, Վահան, *ՀՀ ուղղակի հարկերը*, 2008, էջ 18:
2. *Եկամտային հարկը և եկամտային հարկ վճարողները*, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIncomeTaxCurrent> (հղումը կատարվել է՝ 30.09.2022):
3. *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2009-2020 թթ.*, ՀՀ վիճակագրական կոմիտե, էջեր 30, 42

https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf (հղումը կատարվել է՝ 30.09.2022):

4. Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (SSԿԱՀ), 2020 թ., ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/am/?nid=15> (հղումը կատարվել է՝ 30.09.2022):

5. Вечканов, Григорий и Вечканова Галина, *Макроэкономика: учебник для вузов*, СПб.: Питер, 2011, стр. 74.

6. Пушкарева, Валентина, *История финансовой мысли и политики налогов*, М.: Финансы и статистика, 2001, стр. 256.

7. Eurofound, 2002, pp. 65-66, <https://www.eurofound.europa.eu> (accessed: 29.09.2022).

WORKS CITED

1. Baghdasaryan, Vahan, *HH ughghaki harkery'*, 2008, e'j 18: [Direct Taxes of RA] 2008. (In Armenian)

2. *Ekamtayin harky' ev ekamtayin hark vtwaroghneri'*, HH petakan ekamutneri komite, [Official Website of RA State Revenue Committee, *Income Tax and Income Tax Payers*. <https://www.petekamutner.am/Content.aspx?itn=tsTIncomeTaxCurrent> (accessed: 30.09.2022)]. (In Armenian)

3. *Hayastani socialakan patkery' ev aghqatut'yuny'*, [Social Image and Poverty of Armenia. 2009-2020 t't., e'jer 30, 42. https://armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf (accessed: 30.09.2022)]. (In Armenian)

4. *Tnayin intesut'yunneri kensapaymanneri amboghjacvac' Hetazotut'yun (TTKAH)*, [Comprehensive Survey of Living Conditions of Households (CCHS),] 2020 t'. <https://www.armstat.am/am/?nid=15> (accessed: 30.09.2022)]. (In Armenian)

5. Vechkanov, Grigori i Vechkanova Galina, *Макроэкономика: учебник длja вузов*, [Macroeconomics: a Textbook for Universities, St. Petersburg: Peter] SPB.: Piter, 2011, str. 74. (In Russian)

6. Pushkareva, Valentina, *Istorija finansovoj mysli i politiki nalogov*, M.: Finansy i statistika, [History of Financial Thought and Tax Policy, M.: Finance and statistics] 2001, str. 256. (In Russian)

THE ECONOMIC AND SOCIAL ROLE OF RA PHYSICAL PERSON'S INCOME TAXATION IN MODERN CONDITIONS

MERI PANOSYAN

Yerevan State University, Chair of Finance and Accounting,

Ph.D. Student,

Yerevan, the Republic of Armenia

The taxation system of each country is considered a system of income distribution between physical / legal entities and the state.

The purpose of this article is to show that income taxation of individuals is one of the tools of the state's social policy in Armenia, in other words, it is a means of alleviating social inequality. The economic and social consequences of taxation with a flat rate of income tax, the economic connections between income inequality, population welfare, income and consumption, poverty and disproportionate taxation and based on that, make recommendations that will help overcome the enumerated problems were comprehensively analyzed in the given article.

In order to solve the tasks set in the article, methods of combination of economic indicators, correlation of statistical data, as well as methods of comparative analysis of the obtained data were used.

As a result of the study, it becomes clear that there is a causal connection between social inequality and disproportionate taxation of income tax, as the polarization of income leads to a reduction in complete demand, which, in turn, restrains economic activity and increasing of the standard of living of the population. Bringing up the idea of social justice of taxation, indirect tools of state policy have been proposed, which will ensure a balance of economic efficiency and social justice through social protection programs.

Keywords: *income tax, social justice, flat rate, income, consumption, welfare, complete demand.*

ЭКОНОМИЧЕСКАЯ И СОЦИАЛЬНАЯ РОЛЬ ПОДОХОДНОГО НАЛОГООБЛОЖЕНИЯ ФИЗИЧЕСКИХ ЛИЦ РА В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

МЕРИ ПАНОСЯН

*аспирантка кафедры финансового учета
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Налоговая система каждой страны представляет собой систему распределения доходов между физическими / юридическими лицами и государством.

Цель данной статьи показать, что налогообложение доходов физических лиц в РА является одним из инструментов социальной политики государства, иными словами, является средством смягчения социального неравенства. В статье была поставлена задача комплексно проанализировать экономические и социальные последствия налогообложения пропорциональной ставкой подоходного налога, а так же экономические связи неравенства доходов, благосостояния населения, доходов и потребления, бедности и непропорционального налогообложения и исходя из этого дать рекомендации, которые помогут преодолеть перечисленные проблемы. Для решения поставленных в статье задач использовались методы сравнения экономических показателей, корреляции статистических данных, а также сравнительного анализа полученных данных. В результате исследования становится ясно, что между социальным неравенством и непропорциональным налогообложением подоходного налога существует причинно-следственная связь, так как поляризация доходов приводит к сокращению общего спроса, что, в свою очередь, сдерживает экономическую активность и увеличение уровня жизни населения. На основе выдвинутой идеи социальной справедливости налогообложения предложены косвенные инструменты государственной политики, которые обеспечат баланс экономической эффективности и социальной справедливости через программы социальной защиты.

Ключевые слова: *подоходный налог, социальная справедливость, пропорциональная ставка, доход, потребление, благосостояние, общий спрос.*

«ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ» պարբերականի հոդվածների ձևավորման պահանջները

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպության «Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական հրատարակությունների» ցանկում: Պարբերականը, որի հիմնադիրը Երևանի պետական համալսարանն է, լույս է տեսնում տարեկան 4 անգամ:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

Պարբերականում տպագրության են ընդունվում նախկինում տպագիր կամ էլեկտրոնային պարբերականներում չհրատարակված բարձրորակ աշխատանքներ (գիտական հոդվածներ, գրախոսություններ), որոնք համապատասխանում են պարբերականի ուղղվածությանը (հասարակական գիտություններ), ունեն գիտական նորույթ և արդիականություն:

Բոլոր նյութերը գրախոսվում են: Գիտական աստիճան չունեցող հեղինակները պետք է հոդվածին կից ներկայացնեն գիտական ղեկավարի կարծիքը՝ ստորագրված կամ ամբիոնի երաշխավորությունը՝ ստորագրված և կնքված (անպայմանորեն պետք է նշված լինի, որ տպագրության է երաշխավորվում «Գիտական Արցախ» պարբերականում):

Նախքան հոդված ուղարկելը հեղինակները պարտավոր են www.scientificartsakh.com կայքում ծանոթանան «Գիտական Արցախ» պարբերականի գիտական հրատարակումների էթիկային և խստորեն հետևել դրան:

Խմբագրության կողմից հոդվածն ընդունվելու դեպքում հեղինակը պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում վճարել հոդվածի տպագրության համար նախատեսված գումարը, իսկ վճարման անդորրագրի սկանավորված տարբերակն ուղարկել խմբագրության էլեկտրոնային փոստին: Նյութի հրատարակման և հեղինակին «Գիտական Արցախ» պարբերականի 1 անվճար օրինակի տրամադրման համար գանձվող գումարը կազմում է՝ 1 էջը 2,000 ՀՀ դրամ:

Բոլոր հոդվածներն ունենալու են DOI միջազգային ստանդարտ համարներ:

1-ին համարը լույս է տեսնում ապրիլին (հոդվածներն ընդունվում են մինչև փետրվարի 15-ը), 2-րդ համարը՝ հուլիսին (հոդվածներն ընդունվում են մինչև մայիսի 15-ը), 3-րդը՝ հոկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև հուլիսի 15-ը), իսկ 4-րդ համարը՝ դեկտեմբերին (հոդվածներն ընդունվում են մինչև հոկտեմբերի 1-ը):

«Գիտական Արցախ» պարբերականում տպագրված հոդվածները տեղադրվում են ԱԵԳՄՄ-ի նախագիծ հանդիսացող Արցախի էլեկտրոնային գրադարանի կայքում (www.artsakhlib.am), որից հետո հղումներն ուղարկվում են հեղինակներին:

Հոդվածները պետք է ուղարկել www.scientificartsakh.com կայքի միջոցով կամ scientific.artsakh@gmail.com էլեկտրոնային փոստին, որին պետք է կցել նաև հեղինակի բջջային հեռախոսահամարը և բնակության հասցեն՝ ինդեքսի նշումով:

Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.

Համակարգչային շարվածքը՝ MS Word 2003-2010 ծրագիր:

Էջի ֆորմատը՝ 170*240 մմ, լուսանցքները բոլոր կողմերից՝ 20 մմ:

Ճավալը՝ 7-20 էջ՝ ներառյալ ամփոփագրերը:

Տեքստի տառատեսակը՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ Arial:

Հոդվածի ներկայացման լեզուն՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն:

Առաջին էջի վերին տողում (մեջտեղում) 13 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է հոդվածի վերնագիրը: Մեկ տող բաց թողնելով՝ տողի ձախ

կողմում նշվում է հոդվածի ՉՏԴ-ն: Մեկ տող բաց թողնելով՝ տողի մեջտեղում 12 pt տառաչափով, գլխատառերով, թավ (Bold) գրվում է (են) հեղինակ(ներ)ի անուն ազգանուն(ներ)ը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով, շեղատառ (Italic) նշվում են աշխատավայրը, բուհը կամ գիտահետազոտական կենտրոնը, ֆակուլտետը, գիտական աստիճանը, կոչումը, քաղաքը և երկիրը: Մեկ տող ներքև տողի մեջտեղում 12 pt տառաչափով տրվում է հեղինակի էլեկտրոնային փոստի հասցեն:

Մեկ տող բաց թողնելով՝ 12 pt տառաչափով, շեղատառ (Italic), թավ (Bold) ներկայացվում է հոդվածի ամփոփագիրը (аннотация, abstract), որտեղ 120-170 բառի սահմաններում պետք է արտացոլվեն հետազոտության նպատակները, խնդիրները, մեթոդները, ինչպես նաև հեղինակի հիմնական եզրահանգումները: Ամփոփագիրը պետք է լինի ինքնուրույն տեքստ, որը կնկարագրի հետազոտության հիմնական արդյունքներն առանց հոդվածն ընթերցելու: Ամփոփագրում պետք չէ բառացիորեն կրկնել հոդվածի նախադասությունները:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է գրել «**Չիմնաբառեր**» և նշել 7-10 հիմնաբառ:

Մեկ տող բաց թողնելով՝ անհրաժեշտ է ներկայացնել աշխատանքի հիմնական տեքստը, որը պետք է ունենա ենթավերնագրեր: Տեքստի տառաչափը 12 pt է, տողերի հեռավորությունը՝ 1: Տեքստը պետք է հավասարեցված լինի երկու կողմերից (Alignment: Justify): Պարբերությունները սկսել 1 սմ խորքից՝ TAB-ի կիրառմամբ:

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագրեր:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը և լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Չոդվածի լեզվից տարբերվող մյուս 2 լեզուներով ամփոփագրերը պարտադիր են, որոնք պետք է լինեն հոդվածի սկզբնական մասի (վերնագրից մինչև բանալի բառերը ներառյալ) թարգմանությունը և տրվում են հիմնական տեքստից հետո:

Չղումները պարտադիր են:

MLA ձևաչափում կիրառվում է ներտեքստային հղումների հեղինակ-էջ եղանակը: Չամաձայն վերջինիս՝ հեղինակի ազգանունն ու համապատասխան աշխատանքի էջ(եր)ի համար(ներ)ը արտացոլվում են տեքստում, իսկ ամբողջական հղումը գետնվում է գրականության (հղված աշխատանքների) ցանկի մեջ:

Չիմնական տեքստից հետո «WORKS CITED» բառակապակցության ներքո պարտադիր անհրաժեշտ է կցել օգտագործված ոչ լատինատառ գրականության լատինական տառադարձումով տարբերակը՝ դասավորելով այբբենական կարգով, [...] փակագծերում թարգմանել աշխատության վերնագիրը և հրատարակության վայրը, որից հետո (...) փակագծերում նշել բնագրի լեզուն, օրինակ.

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahan. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. "Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Տառադարձումը կարող էք կատարել՝ օգտվելով www.translit.ru կայքից:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող էք կապվել «Գիտական Արցախ» պարբերականի գլխավոր խմբագիր, ի.գ.թ., դոցենտ **Ավետիք Չարությունյանի** հետ՝ գրելով avetiq.hh@gmail.com էլեկտրոնային փոստին կամ զանգահարելով +37497277770, (+374) 55277755 հեռախոսահամարներին:

The requirements for the journal «SCIENTIFIC ARTSAKH»

The journal «**Scientific Artsakh**» of the «Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)» NGO is included in the list of «Scientific publications acceptable for the publication of the main results and provisions of theses» approved by the RA HAC. The journal, founded by Yerevan State University, is published 4 times a year.

The journal «**Scientific Artsakh**» is posted on www.elibrary.ru website.

High-quality works that are not previously published in printed or electronic journals (scientific articles, reviews), which correspond to the orientation of the journal (Social Sciences) and have scientific novelty and relevance, are accepted for publication in the journal.

All materials are reviewed. The authors, without academic degrees, along with the article represent the opinion of the supervisor, certified by the signature, or the recommendation of the Department, certified by signature and seal (it should be noted that the article is recommended for publication in the Journal «Scientific Artsakh»).

Before sending the article, the authors are obliged to familiarize themselves with the ethics of scientific publications of the journal «Scientific Artsakh» on the www.scientificartsakh.com website and strictly comply with it.

Once the article is accepted by the Editorial Board, the author is obliged to pay the amount provided for the publication of the article within 3 working days and send the scan of the payment order to the the Editorial Board e-mail. The cost of publishing and providing the author with one copy of the journal «Scientific Artsakh» is 2,000 AMD per 1 page.

All articles will have DOI International Standard Numbers.

The 1st issue is published in April (articles are accepted until February 15), the 2nd issue – in July (articles are accepted until May 15), the 3rd issue – in October (articles are accepted until July 15), and the 4th issue – in December (articles are accepted until October 1).

The articles published in the journal «Scientific Artsakh» are placed on Artsakh E-Library website (www.artsakhlib.am), which is the UYSSA project, after which the links are sent to the authors.

Articles should be sent via the www.scientificartsakh.com website or to the scientific.artsakh@gmail.com e-mail, the mobile phone number and the address of the author's residence, indicating the index should also be stated.

Technical requirements for works:

Computer typing: program MS Word 2003-2010.

Page format: 170*240 mm, margins (left, right, top, bottom) 20 mm.

Volume: 7-20 pages (summary inclusive).

Text font: Armenian, English and Russian – Arial.

Language of articles: Armenian, Russian, English.

On the top line of the first page (center alignment) in capital letters, bold, font size – 13 pt the title of the article is written. The UDC of the article is indicated in the left-aligned line a line down. Over the line, in the center of the line, font size – 12 pt, capital letters, bold the name(s) of the author(s) is indicated. In the center of the line below, font size 12 pt, italicized the place of work, University or research center, faculty, scientific degree,

title, city and country are indicated. On the line below in the center, font size 12pt the author's email is provided.

Over a line, font size 12, bold, italic an abstract (ամփոփում, аннотация), in the 120-170 words amount including forth goals, objectives, research methods, and main conclusions of the author must be set. The abstract should be a separate text describing the main results of the study without reading the article.

Over a line the word «Keywords» must be written and 7-10 words must be specified.

Over a line, the main text of the work containing subtitles with the font size of 12 pt, line spacing of 1 pt must be submitted. The text should be aligned on both sides (Alignment: Justify). The paragraph should be started with an indentation of 1 cm, using the TAB.

Tables should be numbered and have titles.

Diagrams, diagrams, drawings and drawings must be clear and printable.

Abstracts in two languages other than the language of writing are required, which are the translation of the initial part of the article (from the title to the keywords inclusive) and are indicated after the main text.

References are required.

In the MLA format, the author-page method of intra-text links is used. According to the latter, the author's surname and the corresponding page(s) of the work are displayed in the text, and the full link is placed in the list of references (referenced works).

After the main text, under the phrase «WORKS CITED», it is mandatory to attach a Latin transliteration of the used literature presented in non-Latin letters, placing it in alphabetical order, in square brackets [...] indicate the name of the work and the place of publication, after which in round brackets (...) the original language, for example:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. "Jetrnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, ["Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Transliteration can be done by using www.translit.ru website.

For more information, please contact the Editor-in-chief of the journal «Scientific Artsakh», Ph.D in Law, Associate Professor **Avetik Harutyunyan**, e-mail at avetiq.hh@gmail.com or by phone +37497277770, (+374) 55277755.

Требования к оформлению статей журнала «НАУЧНЫЙ АРЦАХ»

Журнал «Научный Арцах» общественной организации «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) включен в список «Научных изданий, приемлемых для публикации основных результатов и положений диссертаций», утвержденных ВАК Республики Армения. Журнал, учредителем которого является Ереванский государственный университет, издается 4 раза в год.

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

К публикации в журнале принимаются высококачественные работы, не публиковавшиеся ранее в печатных или электронных журналах (научные статьи,

рецензии), которые соответствуют направленности журнала (общественные науки) и имеют научную новизну и актуальность.

Все материалы рецензируются. Авторы, не имеющие ученой степени, должны представить вместе со статьей отзыв научного руководителя, заверенный подписью, или рекомендацию кафедры, заверенную подписью и печатью (обязательно должно быть отмечено, что статья рекомендуется к печати в журнале «Научный Арцах»).

Перед подачей статьи авторам предлагается ознакомиться с этикой научных публикаций журнала «Научный Арцах» на сайте www.scientificartsakh.com и неукоснительно следовать ей.

После принятия статьи редколлегией, автор обязан в течение 3 рабочих дней уплатить сумму, предусмотренную для публикации статьи, и выслать на электронный адрес редакции скан платежного поручения. Стоимость публикации и предоставления автору одного экземпляра журнала «Научный Арцах» составляет 2,000 драммов за 1 страницу.

Все статьи получат международные стандартные номера DOI.

1-ый номер публикуется в апреле (статьи принимаются до 15-го февраля), 2-ой номер – в июле (статьи принимаются до 15-го мая), 3-ий номер – в октябре (статьи принимаются до 15-го июля), а 4-ый номер – в декабре (статьи принимаются до 1-го октября).

Статьи, опубликованные в журнале «Научный Арцах», размещаются на сайте Электронной библиотеки Арцаха (www.artsakhib.am), являющемся проектом ОМУСА, после чего ссылки отправляются авторам.

Статьи следует присылать через сайт на адрес www.scientificartsakh.com или на электронную почту scientific.artsakh@gmail.com, при этом должен быть указан номер мобильного телефона автора и адрес проживания (с индексом).

Технические требования к оформлению работ:

Компьютерный набор: программа MS Word 2003-2010.

Формат страницы: 170*240 мм, поля (левое, правое, верхнее, нижнее) 20 мм.

Объем: 7-20 страниц (резюме включительно).

Шрифт текста: армянский, английский и русский – Arial.

Язык представления статей: армянский, английский, русский.

На верхней строке первой строки (выравнивание по центру) прописными буквами, полужирным (Bold) шрифтом, размер – 13 кегль пишется заголовок статьи. Через строку с выравниванием по левому краю указывается УДК статьи. Через строку, по центру строки кеглем 12, прописными буквами, полужирным шрифтом указывается имя и фамилия (фамилии) автора (авторов). На строке ниже по центру кеглем 12, курсивом (Italic) указывается место работы, вуз или научно-исследовательский центр, факультет, ученая степень, звание, город и страна. На строке ниже по центру кеглем 12 предоставляется электронный адрес автора.

Через строку кеглем 12, полужирным шрифтом (Bold) и курсивом (Italic) предоставляется аннотация (առաջադրույթ, abstract), в которой в объеме 120-170 слов должны быть изложены цели, задачи, методы исследования, а также основные выводы автора. Аннотация должна представлять собой самостоятельный текст, дающий представление о нем без прочтения статьи.

Через строку необходимо написать «Ключевые слова» и указать 7-10 слов.

Пропустив одну строку, необходимо представить основной текст работы с подзаголовками кеглем 12 с межстрочным интервалом – 1 пт. Текст должен быть

выровнен с двух сторон (Alignment: Justify). Абзац необходимо начинать с отступом в 1 см, используя TAB.

Таблицы должны быть пронумерованы и иметь заголовки.

Диаграммы, схемы, чертежи и рисунки должны быть четкими, подлежащими печати.

Резюме на двух языках, отличных от языка написания статьи, обязательны, представляют собой перевод начальной части статьи (от заголовка до ключевых слов включительно) и указываются после основного текста.

Ссылки обязательны.

В формате MLA используется способ внутритекстовых ссылок автор-страница. При этом фамилия автора и страница (страницы) соответствующей работы (страниц) отображаются в тексте, а полная ссылка помещается в список цитируемых работ в конце статьи.

После основного текста под наименованием «WORKS CITED» обязательно приложить латинскую версию использованной литературы в латинской транслитерации и в алфавитном порядке, в скобках [...] поместить переведенные на армянский язык название работы и место ее публикации, затем в скобках (...) обозначить язык оригинала, например:

WORKS CITED

1. Mkrtchyan, Shahen. Ler'nayin Gharabagh. Adrbejani irakanacrac' ceghaspanut'yan anatomian. Step'anakert, [Nagorno-Karabakh: Anatomy of the Genocide Carried out by Azerbaijan. Stepanakert] 2003. (In Armenian)

2. Avetisjan, Grant. «Jetnicheskie i regional'nye konflikty v Evrazii. Kn. 1. Central'naja Azija i Kavkaz, Moskva, [«Ethnic and Regional Conflicts in Eurasia. Book 1. Central Asia and the Caucasus, Moscow,] 1997. (In Russian)

Транслитерацию можете осуществить, используя сайт www.translit.ru.

За дополнительной информацией можно обратиться к главному редактору журнала «Научный Арцах», к.ю.н., доценту **Аветику Арутюняну**, написав по электронному адресу avetiq.hh@gmail.com или позвонив по телефону +37497277770, (+374) 55277755.

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ SCIENTIFIC ARTSAKH НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(15), 2022

«Գիտական Արցախ» պարբերականը լույս է տեսնում տարեկան 4 անգամ:
Հրատարակվում է 2018 թվականից:

The journal «Scientific Artsakh» is published four times a year. It has been published since 2018.

Журнал «Научный Арцах» выходит четыре раза в год. Издается с 2018 года.

Գլխավոր խմբագիր՝
Editor-in-Chief:
Главный редактор:

Ավետիգ Զարուբյունյան
Avetik Harutyunyan
Аветик Арутюнян

Հայերենի պատասխանատու
Responsible for Armenian
Ответственный за армянский язык

Սիրանուշ Փարսադանյան
Siranush Parsadanyan
Сирануш Парсаданян

Անգլերենի պատասխանատու՝
Responsible for English
Ответственный за английский язык

Ալվինա Ներսեսյան
Alvina Nersesyan
Альвина Нерсесян

Ռուսերենի պատասխանատու՝
Responsible for Russian
Ответственный за русский язык

Ռուզաննա Սարգսյան
Ruzanna Sargsyan
Рузанна Саркисян

Պատասխանատու քարտուղար՝
Executive Secretary
Ответственный секретарь

Միեր Շահինյան
Mher Shahinyan
Мгер Шагинян

Համակարգչային շարվածքը, ոճը,
տառաձևերը և էջադրումը՝
Computer set, style, font and layout
Компьютерный набор, стиль, шрифт
и верстка

«Արցախ» հրատարակչության
«Artsakh» Publishing House

Издательство «Арцах»

Շապիկի ձևավորումը՝
Cover design
Дизайн обложки

Արմինե Քոչարյանի
Armine Kocharyan
Армине Кочарян

Website: www.scientificartsakh.com;

www.aegmm.org, www.artsakhinstitute.org.

E-mail: scientific.artsakh@gmail.com, aveti.q.hh@gmail.com.

Tel. (+374) 97277770, (+374) 55277755.

Ստորագրված է տպագրության՝ 30.12.2022 թ.:

Չափսը՝ 70*100/16: Թուղթը՝ օֆսետ:

Ծավալը՝ 14,5 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 120 օրինակ:

Տպագրված է «ՄՅՍ ԳՐԱՏՈՒՆ» ՍՊԸ տպագրատանը: